

Գ. Հ. Գյուրջիս

ԱՄԵՆՆ ԱՄԵՆԱՅՆԻՎ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Մարդու կյանքի օբյեկտիվ-անաչառ քննություն
կամ
Բեհեդգերուդի պատմածներն իր թոռանը

(թարգմանություն ռուսերենից՝ անգլերենի համեմատությամբ)

2014

Տասը գիրք՝ երեք մասից

Առաջին մաս – Մարդու կյանքի օբյեկտիվ-անաչառ քննություն կամ Բեհեդգեբուդի պատմածներն իր թոռանը՝ երեք գրքով

Երկրորդ մաս – Հանդիպումներ հիշարժան մարդկանց հետ՝ երկու գրքով

Երրորդ մաս – Կյանքն իրական է միայն այնժամ, երբ ԵՍ կամ՝ հինգ գրքով

ԱՄԵՆ-ը գրված է տրամաբանական դատողության բոլորովին նոր սկզբունքների հիման վրա և նպատակ ունի լուծելու հետևյալ երեք հիմնարար խնդիրները.

Առաջին մասում՝ ավերել, անխնա կերպով և առանց որևէ զիջողականության, աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի վերաբերյալ ընթերցողի մտածողության մեջ ու զգացմունքներում առկա հավատալիքներն ու հայացքները, որոնք նրա մեջ բույն են դրել բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում:

Երկրորդ մասում՝ ընթերցողին ծանոթացնել արարչության նոր նյութի և ապացուցել, որ այն ավելի խելամիտ է ու լավորակ:

Երրորդ մասում՝ նպաստել, որ ընթերցողի մտածողության մեջ ու զգացմունքներում գոյանան իրական, ոչ երևակայական պատկերացումներ ոչ այն պատրանքային աշխարհի վերաբերյալ, որ նա զգում է իր շուրջ, այլ իրականում գոյություն ունեցողի:

*«Որն է մեկը նրանցից, ովքեր հետաքրքրվում են իմ գրվածքներով,
չպետք է նույնիսկ փորձի դրանք կարդալ այլ հերթականությամբ,
քան նշված է. այլ կերպ ասած, երբեք չպետք է կարդա իմ որևէ գրվածքը՝
առանց լավ ուսումնասիրած լինելու իմ նախորդ գործերը»:*
Գ. Հ. Գյուրջին

Ընկերական խորհուրդ

(հանպատրաստից գրված է հեղինակի կողմից,
երբ արդեն տպագրության պատրաստ գիրքը
հանձնվում էր հրատարակման)

Իրենց ամբողջ կարդացածի կամ լսածի նկատմամբ ժամանակակից մարդկանց ընկալման արդյունավետության վերաբերյալ արված բազմաթիվ հետևությունների և եզրահանգումների հիման վրա, որոնց հանգել եմ իմ փորձարարական պրպտումների ընթացքում, նաև ելնելով հնուց եկած մի իմաստուն ասույթի գաղափարից, որը հենց նոր մտքիս եկավ, այն է՝ «Ամեն մի աղոթք կարող է լսելի դառնալ Վերին Ուժերին և համապատասխան արձագանքի արժանանալ, եթե այն արտաբերվում է եռակի.

առաջին անգամ՝ ի ողջություն ծնողների կամ նրանց հոգու հանգստության համար,

երկրորդ անգամ՝ ի ողջություն մերձավորի,

և միայն երրորդ անգամ՝ հանուն քեզ»,

անհրաժեշտ եմ համարում լիովին հրատարակման պատրաստ այս գրքի հենց առաջին էջում տալու հետևյալ խորհուրդը. «Իմ յուրաքանչյուր գրավոր շարադրանքը կարդացեք եռակի.

առաջին անգամ՝ հենց այնպես, ինչպես սովոր եք կարդալ բոլոր ժամանակակից գրքերն ու թերթերը,

երկրորդ անգամ՝ այնպես, կարծես բարձրաձայն կարդում եք ուրիշ մեկի համար,

և միայն երրորդ անգամ ջանացեք հասկանալ գրվածքիս բուն էությունը»:

Միայն այդ դեպքում կարող եք ակնկալել, որ ձեր սեփական, միայն ձեզ հատուկ անաչառ կարծիքը կկազմեք իմ գրվածքների վերաբերյալ: Եվ միայն այդ դեպքում կիրականանա իմ հույսը, որ դուք, ձեր ըմբռնմանը համապատասխան, կքաղեք այն առանձնահատուկ օգուտը, որը ես ակնկալում եմ և կամենում ձեզ իմ ողջ էությամբ:

Հեղինակ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խ – Բեհեդգեբուղը պատմում է, թե ինչպես մարդիկ իմացան և ապա կրկին մոռացան Յոթնապարապարշինոդ հիմնական տիեզերական օրենքի մասին

ԽԱ – Բուխարացի դերվիշ Հաջի Աստվածատուրը

ԽԲ – Բեհեդգեբուղը Ամերիկայում

ԽԳ – Մարդկանց պարբերական փոխոչնչացման բեհեդգեբուղյան ամփոփ նկարագրությունը կամ Բեհեդգեբուղի կարծիքը պատերազմի մասին

ԽԴ – Ըստ Բեհեդգեբուղի կարծիքի՝ արդարության մասին մարդկային պատկերացումը մարդկության համար օբյեկտիվ իմաստով նգովյալ տեսլախաբկանք է

ԽԵ – Ըստ Բեհեդգեբուղի կարծիքի՝ մարդու կողմից բնությունից էլեկտրականություն կորզելն ու օգտագործման ընթացքում դրա ոչնչացումը մարդու կյանքի տևողության կրճատման գլխավոր պատճառներից մեկն է

ԽԶ – Բեհեդգեբուղը թոռանը բացատրում է մարդկանց վերաբերյալ տեղեկատվության շարադրանքի հերթականության իր ընտրած ձևի իմաստը

ԽԷ – Անաչառ մտածողության անխուսափելի արդյունքը

ԽԸ – Հեղինակի կողմից

Առաջին դասախոսություն

ԳԼՈՒԽ Խ
Բեհեղգեբուղը պատմում է, թե ինչպես մարդիկ իմացան
և ապա կրկին մոռացան Յոթնապարապարշինոդ
հիմնական տիեզերական օրենքի մասին

Երբ Բեհեղգեբուղն ավարտեց իրեն հասցեագրված «Լեյտուչանբրոսը» լսելը, նրա թոռ Հասեինը կրկին դիմեց նրան հետևյալ խոսքերով.

- Իմ սիրելի ու բարի՝ պապիկ, օգնի՛ր խնդրեմ, որ պարզեմ մի հակասություն, որն ինձ համար անհասկանալի է և չի համաձայնեցվում իմ տրամաբանական համադրությունների հետ:

Երբ դու սկսեցիր տալ սուրբ Քավարան մոլորակի մասին քո բացատրությունները, ինձ հանձնարարեցիր, որ ջանամ, ոչինչ բաց չթողնելով, խորամուխ լինել քո բոլոր ասածների մեջ և իմ «ակտիվ մտածողությունն» այնպիսի ինտենսիվ լարվածության մեջ պահեմ, որ իմ ներսում լրիվ բյուրեղացվեն այն հասկացության ձևավորման համապատասխան նախադրյալները, որը կապված է այն բոլոր հարցերի հետ, որոնցով բացատրվում են երկու հիմնական նախասկզբնական տիեզերական օրենքների մանրամասները: Քո բացատրությունները լսելուս ամբողջ ընթացքում ես իրոք ջանում էի դա անել և, ինչպես ինձ է թվում, այնքան շատ բան պարզեցի ինձ համար այդ երկու տիեզերական օրենքների մասին, որ, հավանաբար, նույնիսկ կարող եմ ազատորեն դրանք բացատրել ուրիշ մեկին:

Համենայն դեպս, ես արդեն կարողանում եմ շատ լավ պատկերացնել Եռամասիկապող սրբազան օրենքը՝ իր բոլոր երեք սրբազան ու անկախ ուժերի առանձնահատկություններով հանդերձ, և լիովին բավարար կերպով դրանք հասանելի դարձնել իմ անձնական էությանը. սակայն, ինչ վերաբերում է Յոթնապարապարշինոդ սրբազան օրենքին, ապա թեև իմ բանականությամբ դեռևս ամբողջությամբ չեմ պարզել դրա, իմ կարծիքով, ոչ այնքան կարևոր մանրամասները, այնուամենայնիվ հույս ունեմ, որ մի փոքր ավելի ակտիվ խորհրդածությունների օգնությամբ ես դրանք ևս կհասկանամ:

Այժմ սակայն, այն բանից հետո, երբ, փորձելով լավ յուրացնել այդ սրբազան օրենքները, հստակորեն զգացի և գիտակցեցի, որ դրանք շատ բարդ են և ընդհանուր առմամբ խրթին «լիակատար ըմբռնման» համար, ես հանկարծակի խիստ զարմացա և շարունակում եմ զարմանալ ու հետաքրքրվել, թե ինչպես են Երկրի վրա ծնվող ու գոյատևող եռուղեղ էակները կարողացել ոչ միայն հասկանալ այդ սրբազան տիեզերական օրենքները, այլև դրանք առանձնացնել շրջակա տիեզերական հետևանքներից, քանզի քո պատմածներից ես այնպիսի ամբողջական տպավորություն ունեմ, որ այնտեղ, երկրորդ տիեզերական խոտորումից սկսած, երբ նրանցից ծնունդ առածներից յուրաքանչյուրը դառնում է պատասխանատու էակ, աննորմալ *ոսկիհանողի* հետևանքով միայն «*մեխանիկական բանականության*» կրող է դառնում:

Իսկ որ նման բանականությամբ հնարավոր չէ հասկանալ այդ երկու սրբազան տիեզերական օրենքները. ես համոզվեցի իմ ամբողջ էությամբ, երբ ինքս փորձեցի դա անել:

Այսքանն ասելով՝ Հասեինն իր հարցական ու քննախույզ հայացքը հառեց սիրելի պապիկին:

Մի փոքր մտածելով՝ Բեհեղգեբուղն ասաց հետևյալը.

«Շատ լավ, զավակս, ես կփորձեմ փարատել նաև այդ բնական տարակուսանքը, որն արդարացիորեն ծագել է քո ներսում:

Ինձ թվում է, որ արդեն մի անգամ քեզ ասել եմ, որ թեև քո նշած ժամանակից սկսած՝ այդ մոլորակի համարյա բոլոր եռուղեղ էակները միայն «*մեխանիկական բանականության*» կրողներ են դարձել սովորական *լինելիական գոյատևման* հաստատված աննորմալ պայմանների պատճառով, այնուամենայնիվ այնտեղ երբեմն նրանցից ոմանք պատահաբար խուսափում են իրենց այդ ընդհանուր ճակատագրից և *մեխանիկական բանականության* փոխարեն, որն այնտեղ սովորական բան է դարձել, իրենց ներսում ձևավորում են անեղծ ու օրյեկտիվ «*լինելիական բանականություն*», ինչպես դա տեղի է ունենում մեր մեծ Մեգալակոսմոսի մնացած բոլոր եռուղեղ էակների մեջ:

Չնայած այդպիսի բացառությունները, հատկապես վերջին դարերում, այնտեղ շատ հազվադեպ են, բայց, կրկնում եմ, դրանք այնուամենայնիվ լինում են:

Որպեսզի դու կարողանաս մոտավորապես պատկերացնել ու հասկանալ, թե նրանց մեջ հատկապես ինչպես կարող են նման բացառություններ ի հայտ գալ, նախ և առաջ պետք է իմանաս, որ չնայած այն բանին, որ կունդաբուֆեր օրգանի հատկությունների բոլոր դրսևորումների բյուրեղանալու

Ժամանակներից սկսած նրանց բնորոշ է դարձել իրենց պատասխանատու գոյատևման ընթացքում *մեխանիկական բանականություն* ունենալը, այնուամենայնիվ մշտապես՝ ընդհուպ մինչև ներկա ժամանակները, ծնվելիս և կազմավորման սկզբնական շրջանում նրանցից յուրաքանչյուրի ներկայությունում առկա են լինում բյուրեղացման բոլոր հնարավորությունների սաղմերը, մինչև որ ավարտին հասնի որպես պատասխանատու էակ նրանց կազմավորումը՝ այն *լինելիական նախադրյալներին* համապատասխան, որոնք ավելի ուշ՝ պատասխանատու գոյատևման ընթացքում, կարող են հիմք ծառայել այնպիսի *օբյեկտիվ բանականության* առաջացման ու գործունեության համար, ինչպիսին հարկ է, որ առկա լինի տարբեր բնույթ ու արտաքին տեսք ունեցող եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ, այսպես ասած, *«Աստվածության Բուն Էության ներկայացուցիչներ»*:

Օբյեկտիվ իմաստով նրանց ծայրահեղ դժբախտությունը, որի վերաբերյալ դու արդեն *«տարակուսական բնագրական կասկածներ»* ունես, ինչը ես տեսա քո հարցի ձևակերպման մեջ, մանավանդ երբ հիշատակեցիր ոսկիհանողը. հենց այն է, որ նրանք, իրենց սկզբնավորման պահին, հիրավի, նույնպես ունենալով այդ հնարավորությունները, իրենց մոր արգանդից դուրս գալուց անմիջապես հետո հենց առաջին օրերից ընկնում են (սոսկ այն աննորմալությունների պատճառով, որոնք հաստատվել են իրենց շրջապատի՝ արդեն պատասխանատու տարիքին հասած էակների սովորական *լինելիական գոյատևման* ընթացքում) այն կործանարար միջոցների համառ ազդեցության տակ, որոնք հենց իրենք են հորինել իրենց համար և, ինչպես քեզ արդեն ասել եմ, ոսկիհանողին նմանվող ինչ-որ բան են դարձել, որն իրենք «դաստիարակություն» են անվանում:

Եվ, հետևաբար, այսպես ասած, *«դեռևս կատարելապես անմեղ»* վիճակում այդ նոր ծնված էակներն իրենց, ինչպես ասում են, «նախապատրաստական տարիքի» ընթացքում այդ եղանակով աստիճանաբար հետընթաց են ապրում, և նրանց ներսում ի վերջո չքանում են բոլոր հնարավորությունները, որպեսզի ազատորեն կազմավորվի այն ամենը, ինչն անհրաժեշտ է օբյեկտիվ *լինելիական բանականության* առաջանալու համար. արդյունքում, երբ այդ նոր սկզբնավորված էակներն ավելի ուշ դառնում են պատասխանատու էակներ, նրանք իրենց, այսպես ասած, *«Հաբանական ծանրության կենտրոնում»* դառնում են ոչ թե այն *օբյեկտիվ բանականության* կրողը, որը պետք է ունենան, այլ կրողը այն մեխանիկորեն ընկալված արհեստական, նույնիսկ խաբուսիկ, տպավորությունների համակցության, որոնք, ոչ մի ընդհանուր բան չունենալով նրանց *ռզեկոչված լինելիական մասերի* տեղայնացման հետ, այնուհանդերձ կապվում են նրանց ընդհանուր ներկայության առանձին գործառությունների հետ: Դրա հետևանքով ոչ միայն նրանց գոյատևման ամբողջ գործընթացն է դառնում մեխանիկական, այլև նրանց մոլորակային մարմնի ամբողջ գործունեությունն է կախման մեջ ընկնում միայն պատահական, մեխանիկորեն ընկալված արտաքին տպավորություններից:

Շատ հազվադեպ, քո սիրելիներից ոմանք, հասնելով իրենց պատասխանատու տարիքին, կրողն են դառնում անեղծ *մաքուր բանականության*, որը վայել է պատասխանատու եռուղեղ էակին: Դա սովորաբար տեղի է ունենում այսպես: Օրինակ՝ պատահում է, որ մայրական արգանդից նոր ծնված էակներից մեկն իր հետագա կազմավորման ընթացքում հայտնվում է շրջակա այնպիսի պայմաններում, որոնցում այս կամ այն պատճառով նրան չեն առնչվում և նրա վրա վնասակար մեխանիկական ազդեցություն չեն թողնում այն ամեն տեսակի աննորմալությունները, որոնցով արդեն բերնեբերան լցված է այդ թշվառ մոլորակի վրա բազմացող եռուղեղ էակների արտաքին *լինելիական գոյատևման* ամբողջ գործընթացը, և, դրա շնորհիվ այդ էակի ներսում առկա՝ *մաքուր բանականություն* ձեռք բերելու հնարավորությունների սաղմերը չեն հասցնում ընդհուպ մինչև արմատը հետաձ ապրել նրա հետագա կազմավորման ընթացքում: Եվ բացի այդ՝ երբեմն նաև այնպես է պատահում, որ նոր ծնված և նշված համեմատաբար նորմալ պայմաններում հայտնված այդպիսի եռուղեղ էակի հետագա վերջնական կազմավորման և պատասխանատու էակ դառնալու նախապատրաստական տարիքում նրա պատասխանատու ղեկավարն է դառնում այնպիսի եռուղեղ էակ, որը նույնպես մինչ այդ, իհարկե, կրկին պատահաբար, արդեն ամբողջովին նույն ձևով է կազմավորվել, և նրա արթմնի վիճակի գիտակցության մեջ, շնորհիվ իր ներկայության մեջ *լինելիական պարտք-պարտականության* հաճախակի իրականացման, մասնակցություն են ունեցել նրա ենթագիտակության մեջ պահպանված այն նախադրյալները, որոնք «Խիղճ» կոչվող Աստվածային ազդակ են ծնում:

Եվ ահա այդ դեկավարը, իր ողջ էությունը գիտակցելով այն պատասխանատվության կարևոր նշանակությունը, որն ստանձնել է այդ նոր էակի նկատմամբ, որը վերը նշված ձևով դեռ նոր է հասել իր նախապատրաստական տարիքին, սկսում է խղճի մտքը և անկողմնակալ կերպով նրա ոսկյա հանդիպման համար ստեղծել համապատասխան տպավորությունների ընկալման ամեն տեսակի, այսպես կոչված, «ներքին ու արտաքին գործոններ», որպեսզի նրա ընդհանուր ներկայության մեջ բյուրեղացնի բոլոր այն նախադրյալները, որոնց համակցությունը միայն պատասխանատու տարիքին հասած եռուղեղ էակին կարող է ուժ տալ «սվոլիբրոոնոլյան»¹ լինելու, կամ, ինչպես կասեին երկրային քո սիրելիները, «ուժ՝ չնայնաճալու արտաքինի հետ և իրեն հատուկ անխուսափելի կրքերի պատճառով չընկնելու դրա ազդեցության տակ»։ և միայն տվյալ էակի ներսում այդ նախադրյալներով գոյացած *լինելիական ազդակն*² է, որ նրան կարող է օգնել՝ ձեռք բերելու շրջակա միջավայրում դրսևորվող տիեզերական արդյունքներում եղած բոլոր իրական երևույթները ազատորեն ու անաչառ արձանագրելու կարողություն։

Այստեղ տեղին կլինի ևս մեկ անգամ կրկնել, որ մեր Մեգալոկոսմոսի մոլորակների մեծ մասում, որոնցում սկզբնավորվում և գոյատևում են եռուղեղ էակներ, կա հաճախ կրկնվող մի արտահայտություն.

«ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴՆԱՆՈՒՐ ՀԱՅՐԸ եռուղեղ էակի համար միայն Արարիչ է։ Բայց նրա էության իսկական կերտողը նախապատրաստական գոյատևման ընթացքում նրա «ոսկյահանիչն»² է, այսինքն նա, ում քո սիրելիները խրատատու կամ ուսուցիչ են անվանում»։

Ահա և հենց վերջին հարյուրամյակում երբեմն այնպես էր լինում, որ արդեն իր պատասխանատու տարիքին հասած քո սիրելիներից որևէ մեկը, որը նշված եղանակով լրիվ կազմավորվել և նախապատրաստվել էր արտաքին ընկալումներին, շրջակա տիեզերական արդյունքների մեջ պատահաբար նկատելով ինչ-որ օրինաչափ առանձնահատկություն, սկսում էր մանրամասնորեն և համակողմանի ուսումնասիրել այն և, երկարատև համառ ջանքերից հետո վերջապես հասնում դառնալով այս կամ այն օբյեկտիվ ճշմարտությանը, այդ ճշմարտությունը փոխանցում էր նաև իր շրջապատում եղած մյուս իր նման էակներին։

Այժմ, գալիս կա, լսիր այն մասին, թե այդ յուրօրինակ եռուղեղ էակներն ինչպես են առաջին անգամ իմացել այդ Յոթնապարապարշինող սրբազան հիմնական տիեզերական օրենքը, և թե այնտեղ ինչպես է գոյացել դրա զանազան այն մանրամասներին վերաբերող ամբողջ տեղեկատվության համակցությունը, որոնք մանրակրկիտ կերպով ճանաչվել են իրենց նախորդների կողմից և, փոխանցվելով այդ մոլորակի հետագա եռուղեղ էակներին, դարձել նրանց համար ճանաչելի տեղեկատվություն։ Լսիր նաև այն մասին, թե իրենց հոգեկառույցի նույն այդ տարօրինակության հետևանքով այդ ամենից երբ և ինչ է ստացվել։

Ես ուզում եմ քեզ հնարավորինս մանրամասնորեն բացատրել զարգացման պատմական ուղու ամբողջ այն հաջորդականությունը, որը կապված է ինչպես այդ սրբազան օրենքի՝ որպես գիտելիք ընդունման, այնպես էլ դրա աստիճանական մոռացության հետ, քանի որ այդ ամենին վերաբերող տեղեկատվությունը շատ կօգնի քեզ, որպեսզի, նախ՝ քեզ համար պարզ դառնան այդ սրբազան օրենքի, ինչպես դու արտահայտվեցիր, «ոչ այնքան կարևոր մանրամասները», որոնք դու դեռևս չես նախագոյացրել քո բանականության մեջ, և երկրորդ՝ իմ այս բացատրությունների շնորհիվ դու նաև կիմանաս, որ քո սիրելիների միջավայրում, նույնիսկ ժամանակակիցների մեջ, երբեմն նման պատասխանատու էակներ են ի հայտ գալիս ճշմարտապես գիտուն էակների շրջապատում. և եթե այնտեղի մյուս եռուղեղ էակները քիչ թե շատ նորմալ գոյատևելիս լինեին, ապա նման էակների անկողմնակալ ու համեստ ջանքերի շնորհիվ այդ չարաղետ մոլորակում ևս կծագեր և աստիճանաբար կզարգանար ճշմարիտ օբյեկտիվ գիտելիքը, ինչի արդյունքում նրանք կկարողանային հասնել այն բարեկեցությանը, որից մեր Մեծ Մեգալոկոսմոսի բոլոր մյուս մոլորակների եռուղեղ էակներն արժանիորեն վաղուց են օգտվում։

Սկզբում՝ այն ժամանակաշրջանում, երբ այդ մոլորակի եռուղեղ էակները դեռ իրենց ներսում ունեին կունդաբուֆեր օրգանը, բնական է, որ խոսք անգամ չէր կարող լինել այն մասին, որ Երկրի էակները կարող են ճանաչել որևէ տիեզերական ճշմարտություն։

¹ ռուս. տարբերակում՝ *сволибрунольным*, անգլ. տարբերակում՝ *svolibroonolian*

² ռուս. տարբերակում՝ *оскианоцнер*, անգլ. տարբերակում՝ *oskianotsner*

Բայց հետո, երբ նրանց ներկայություններում եղած այդ վնասաբեր օրգանի գործունեությունը դադարացվեց, և դրա հետևանքով նրանց հոգեկառույցը դարձավ ազատ և, ասպես ասած, իրենց սեփականն ու «անհատականը», ահա այդ ժամանակվանից սկսած, տարբեր տեսակի պատմություններ ծագեցին՝ կապված նրանց «համեմատաբար առողջ» *լինելիական մտածողության* հետ:

Յոթնապարապարշինոդ հիմնական տիեզերական սրբազան օրենքի ըմբռնումն ու գիտակցումը քեզ դուր եկած եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում առաջին անգամ սկսվեց Ատլանտիդա աշխարհամասում, այն ժամանակահատվածում, երբ, ինչպես հիշում ես իմ պատմածներից, այնտեղի մի քանի էակներ ինքնուրույնաբար հասկացան, որ իրենց ներսում տեղի է ունենում ինչ-որ «*ոչ այնքան ճիշտ բան*», և երբ նաև ինքնուրույն կերպով բացահայտեցին, որ իրենք դեռևս որոշակի հնարավորություններ ունեն այդ ինչ-որ «*ոչ այնքան ճիշտ բանը*» ոչնչացնելու և դառնալու այնպիսին, ինչպիսին հարկ է, որ լինեն:

«Ժամանակի հոսքի» հենց այդ հատվածում է եղել, որ նրանցից ոմանք սկսել են նկատել իրենց ընդհանուր ներկայության մեջ ընթացող առողջ *լինելիական մտածողության* տեսակետից «աննորմալ այդ գործունեությունը», փնտրել այդ աննորմալությունների պատճառները և ամեն կերպ ձգտել միջոցներ գտնել իրենց ներսից դրանք հեռացնելու համար. և երբ իրական գիտության շատ ճյուղեր այնտեղ հասան զարգացման բարձր աստիճանի, նրանց շարքում, ովքեր լրջորեն հետաքրքրված էին այդ, ինչպես այն ժամանակ էին ասում, «*բանականության առավել անհրաժեշտ գործունեությամբ*», ի հայտ եկավ Թեոփանոս անունով մի եռուղեղ էակ, որն առաջին անգամ բանական հիմքի վրա դրեց այդ ամբողջ ճշմարիտ գիտության հետագա զարգացումը:

Ինչպես հետագայում ինձ վիճակվեց իմանալ, այդ Թեոփանոսը մի անգամ, երբ մարմարե տախտակի վրա ուզում էր մի խառնուրդ չորացնել, որը կազմված էր այն ժամանակ «պատատուկ» կոչվող բույսի մզվածքից, որից խեժ էին ստանում, և այն ժամանակ լավ հայտնի, այսպես կոչված, «*խենիոնյան³ այծի*» կաթի սերուցքից, որպեսզի այդ խառնուրդի պնդանալուց հետո դրանից մաստակ ստանա, որն այնտեղ օգտագործվում էր ուտելուց հետո ծամելու համար, առաջին անգամ նկատեց, որ ինչ ձևով և ինչ քանակությամբ էլ այդ խառնուրդը լցնում է մարմարե տախտակի վրա, այն միշտ, նույն կերպ պնդանալով, ստանում էր նույն տեսքը՝ կազմված յոթ հարթ մակերևույթներից:

Թեոփանոսին շատ զարմացրեց իր կողմից հանակարծակի հայտնաբերված այդ փաստը, և նրա ընդհանուր ներկայության մեջ ցանկություն առաջացավ իր բանականության համար պարզելու այդ դեռևս իրեն անհայտ օրինաչափության հիմնական պատճառները, ուստի, այդ ժամանակից սկսած, նա իր այդ փորձը սկսեց կրկնել արդեն գիտակցական նպատակով:

Դրանից շատ չանցած՝ Թեոփանոսի ձեռնարկած հետազոտությունների սկզբնական շրջանում, նրա ընկերները՝ այդ ժամանակվա ուրիշ գիտուն էակները, որոնց նա հայտնեց իր գյուտը պարզաբանող զանազան փորձերի ելակետային տվյալները, նույնպես հետաքրքրվեցին դրանով և սկսեցին մասնակցել նրա հետագա հետազոտություններին:

Այդպիսով, տևական ու մանրագնի հետազոտություններից հետո քո այդ մոլորակի գիտուն եռուղեղ էակների այդ խումբն առաջին անգամ գիտակցեց և հաստատ համոզվեց, որ իրենց շրջապատում դիտվող համարյա բոլոր այն տիեզերական արդյունքները, որոնք իրենց դրսևորման ընթացքում իրականանում են արտաքին անցողիկ վիճակներում և այս կամ այն կոնկրետ ձևով ընկալվում զգայարանների միջոցով, միշտ բաղկացած են լինում յոթ ինքնուրույն ասպեկտներից:

Քո մոլորակի այդ մի քանի գիտուն եռուղեղ էակների գործադրած գիտակցական ջանքերի արդյունքում հենց այդ ժամանակ էլ Ատլանտիդա աշխարհամասում սկսեց զարգանալ համարյա նորմալ գիտության այդ ճյուղը՝ «Թագալուրիոնոդ⁴» անունով, որը նշանակում է «*ցանկացած ամբողջական երևույթի յոթկողմականություն*»:

Սակայն երբ այդ աշխարհամասը կործանվեց և ճշմարիտ գիտության այդ ճյուղն իսպառ մոռացվեց, նորից շատ դարերի ընթացքում այդ մոլորակի էակները ոչինչ չգիտեին այդ սրբազան տիեզերական օրենքի մասին:

³ ռուս. տարբերակում՝ хенионских, անգլ. տարբերակում՝ Khenionan

⁴ ռուս. տարբերակում՝ Тазалуриноно, անգլ. տարբերակում՝ tazaloorinono

Հավանաբար գիտության այդ ճյուղն այնքան էր հայտնի դարձել Ատլանտիդա աշխարհամասում, որ հարկ չէին համարել դրանից ինչ-որ բան լեզոմինիզմի վերածել, ինչպես սովորաբար վարվում էին Ատլանտիդա աշխարհամասի գիտուն էակաները, ինչպես արդեն ասել եմ քեզ, բոլոր այն հասկացությունների նկատմամբ, որոնք անփոփոխ կերպով կամենում էին փոխանցել ապագա սերունդների էականերին:

Եթե գիտության այդ բնագավառի վերաբերյալ նույնպես լեզոմինիզմ գոյություն ունենար, ապա այդ գիտելիքից ինչ-որ բան, իհարկե, կպահպանվեր, ինչպես որոշ բաներ պահպանվեցին Ատլանտիդայի էակաների ստացած ուրիշ գիտելիքներից, որոնք փոխանցվեցին այդ աշխարհամասի կործանման ժամանակ պատահաբար կենդանի մնացածների միջոցով:

Սրբազան Յոթնապարապարշինողի վերաբերյալ գիտելիքները կրկին հայտնի դարձան միայն շատ ու շատ հարյուրամյակներ հետո՝ շնորհիվ երկրային երկու մեծ գիտուն էակաների՝ եղբայրներ «*Չուն Կիլ Տեզ*» և «*Չուն Տրո Պել*», որոնք հետագայում սրբեր դարձան և հիմա գտնվում են հենց այն սուրբ Քավարան մոլորակում որտեղ վերջերս մենք եղանք:

Հիշում ես, ես արդեն քեզ ասել եմ, որ մի ժամանակ Ասիա աշխարհամասում Պախրակարան կոչվող երկիր կար, և այնտեղ գոյություն է ունեցել Կոնյուցիոն անունով մի թագավոր՝ Ախալդան ընկերության այն գիտուն անդամներից մեկի սերնդից, որն Ատլանտիդայից այնտեղ էր հասել, որպեսզի հետազոտեր իրենց մոլորակում տեղի ունեցող զանազան բնական երևույթները. խոսքս այն թագավորի մասին է, որն իր հպատակների համար հորինեց իմ կողմից արդեն հիշատակված «իմաստուն պատմությունը», որպեսզի նրանց փրկի «ցուլցուլյան» ծաղկի սերմերը ծամելու կործանարար սովորությունից:

Ահա, այդ Կոնյուցիոն թագավորի թոռը ժառանգ ունենալուց հետո, որն էլ հետագայում սկսեց թագավորել այդ խմբավորման մեջ գոյատևողներին, ունեցավ ևս երկու արական սեռի երկվորյակ-պտուղներ, որոնցից ավագին անվանեցին «*Չուն Կիլ Տեզ*», իսկ կրտսերին՝ «*Չուն Տրո Պել*»: «Չուն» բառն այն ժամանակ Պախրակարանում «արքայազն» էր նշանակում:

Շնորհիվ այն բանի, որ, մի կողմից՝ մեծ գիտական ընկերության գիտուն անդամներից մեկի անմիջական հետնորդ հանդիսացող այդ երկու եղբայրների շրջապատը համապատասխան ձևով կազմակերպված էր նրանց «նախապատրաստական տարիքի» համար, և մյուս կողմից՝ հենց իրենք էլ ջանում էին չկորցնել իրենց մեջ առկա այն ժառանգված հատկությունները (որոնցից ունենում են այդ մոլորակի ընդհանրապես բոլոր նոր ծնված եռուղեղ էակաները), և բյուրեղացնել նախադրյալներ, որոնք անհրաժեշտ են իրենց ներսում լինելիական պարտք-պարտականության իրականացման ուժ ծնելու համար, նաև այն բանի հետևանքով, որ իրենց սկզբնավորման «հաստատող աղբյուրը» իրենց, այսպես կոչված, հայրը, որոշեց նրանց պատասխանատու գոյատևումը հատկացնել ճանաչողության բնագավառին և անհրաժեշտ միջոցներ ձեռք առավ, որ նրանց նախապատրաստի դրան, ապա այդ պատասխանատու տարիքի հենց սկզբից նրանք համարյա այնպիսին էին դարձել, ինչպիսին ամենուրեք դառնում են մեր մեծ Մեգալոկոսմոսի եռուղեղ էակաները, որոնք նույն նպատակն են ընտրում, այսինքն՝ այնպիսին էին դարձել, որ իրենց նպատակադրած բոլոր ուսումնառությունները կատարում էին ոչ թե հագուրդ տալու համար իրենց, այսպես կոչված, թուլություններին՝ «փառասիրությանը», «սնապարծությանը» և «եսասիրությանը» (ինչպես վարվում են այնտեղի մնացած էակաները, հատկապես ժամանակակիցները, որոնք գործունեության նույն դաշտն են ընտրած լինում), այլ որպեսզի հասնեն Լինելիության ավելի բարձր աստիճանի:

Սկզբում նրանք դարձան, ինչպես այնտեղ են ասում, «բժշկության բնագավառի մասնագետ» գիտնականներ, իսկ դրանից հետո՝ ընդհանրապես գիտնականներ:

Իրենց նախապատրաստական տարիքի շրջանն ու պատասխանատու գոյատևման առաջին տարիները նրանք անցկացրին Պախրակարան երկրի Հոր քաղաքում, բայց երբ քո մոլորակի մակերևույթի այդ մասը սկսեց ծածկվել ավազով, նրանք երկուսով այն փախստականների խմբում էին, որոնք շարժվեցին դեպի արևելք:

Պախրակարան երկրից տարագրված եռուղեղ էակաների այդ խումբը, որի կազմում էին նաև հետագայում մեծ գիտուն էականեր դարձած այդ երկվորյակ եղբայրները, հատեց Պախրակարանի արևելյան բարձրությունները և ապա հանգրվանեց մեծ ջրային տարածքի ափերին:

Հետագայում նրանցից կազմավորվեց առ այսօր գոյատևող երկրային եռուղեղ էակաների կայուն մի խմբավորում, որին այժմ «Չինաստան» են անվանում:

Այսպիսով, իրենց մշտական գոյատևման նոր վայրում Ատլանտիդա աշխարհամասի կործանումից հետո առաջին անգամ այդ երկու եղբայրները փաստեցին և ճանաչեցին սրբազան Յոթնապարապարշինող հիմնական տիեզերական օրենքը:

Վերին աստիճանի հետաքրքիր ու հետաքրքրաշարժ է այն հանգամանքը, որ նրանց այդ փաստումների համար սկզբնաղբյուր ծառայեց տիեզերական նյութերի մի համակցություն, որը հենց այն վերմոլորակային գոյացության բաղադրության մեջ է մտնում, որն այժմ անվանում են «պապավերուն» կամ կակաչ, որի սերմերը ծամելու արմատացած սովորության դեմ իրենց ապուպապը՝ մեծն արքա Կոնյուցիոնը, առաջինը հորինեց իմ կողմից արդեն հիշատակված «կրոնական ուսմունքը»:

Ակներևաբար, այդ երկրային երկու մեծ գիտուն էակներին իենց ապուպապից՝ մեծն արքա Կոնյուցիոնից, ժառանգաբար փոխանցվել էին ոչ միայն շրջապատի իրենց նման էակների նկատմամբ սեփական *լինելիական պարտքը* լավ կշռադատելու և հասկանալու ունակություններ, այլ նաև այն բնամթերքն ուսումնասիրելու կիրքն ու հետաքրքրությունը, որը մշտապես քո սիրելիների համար եղել է բազմաթիվ վնասակար միջոցներից մեկը, որոնք նրանց առանց այդ էլ թուլացած հոգեկառույցը վերջնականապես այլասերեցին:

Որպեսզի դու առավել լավ պատկերացնես և ավելի լավ հասկանաս, թե ինչու այդ իմ կողմից հիշատակված պապավերուն կամ կակաչ կոչվող ոչ մեծ մոլորակային գոյացությունը պատճառ դարձավ, որ երկրային այդ մեծ գիտուն էակները փաստեն այդ մեծագույն տիեզերական օրենքի գոյությունը, նախ և առաջ պետք է իմանաս, որ բոլոր մոլորակներում, *իրանիրանումանգալի* գործընթացով համատիեզերական նյութերի փոխակերպության նպատակով, ինչպես ընդհանրապես ամեն տեսակի վերմոլորակային և ներմոլորակային գոյացությունների շարքում, այնպես էլ, մասնավորապես, «Ֆլորա» կոչվող գոյացությունների շարքում առաջանում են երեք դասի գոյացություններ:

Առաջին դասին պատկանող գոյացությունները կոչվում են «*ունաստրալային⁵ կազմավորումներ*», երկրորդ դասին պատկանողները՝ «*օխտաստրալային⁶ կազմավորումներ*», և երրորդ դասին պատկանողները՝ «*բոլորմիտեղդնային⁷ կազմավորումներ*»:

Իրենց էվոլյուցիայի և ինվոլյուցիայի ընթացքում *ունաստրալային կազմավորումները* փոխակերպվում են այնպիսի տիեզերական բյուրեղացումների, որոնք գոյանում են միայն այն նյութերից, որոնք փոխակերպվում են հենց այն մոլորակի միջավայրում, որտեղ համատիեզերական իրանիրանումանգալի նպատակներով կազմավորվում է վերմոլորակային կամ արտամոլորակային գոյացության այդ տեսակը:

Օխտաստրալային կազմավորումների միջոցով, բացի վերը հիշատակվածներից, փոխակերպվում են նաև այն ակտիվ տարրերը, որոնք նախապես կազմավորվում են այն նյութերից, որոնք փոխակերպվում են տվյալ համակարգության արևի ու մյուս մոլորակների կողմից:

Երրորդ դասի կազմավորումների, այն է՝ *բոլորմիտեղդնային* միջոցով, առաջին երկու դասերի տարրերից բացի, փոխակերպվում են նաև այն ակտիվ տարրերը, որոնք նախապես առաջանում են մեր ընդհանուր Մեգալոկոսմոսի այլ «*արևային համակարգերի*» պատկանող տարրեր տիեզերական խտացումներում ընթացող նյութերի փոխակերպման արդյունքում:

Վերմոլորակային ֆլորայի իմ հիշատակած գոյացությունը, որին քո այդ մոլորակի վրա պապավերուն են ասում, պատկանում է բոլորմիտեղդնային դասին, և դրա միջոցով ընթանում է բոլոր մյուս տիեզերական «*ծանրակենտրոն խտացումների*», այսպես կոչված, «*փոխակերպման արդյունքների համակցության*» էվոլյուցիան, որը քո այդ մոլորակի մթնոլորտի կազմի մեջ է մտնում, այսպես կոչված, «բոլոր տեսակի տիեզերական խտացումների ճառագումների ամենաթափանց ցրման» համատիեզերական գործընթացի միջոցով:

Այսպիսով, զավակս, երբ երկրային այդ երկու մեծ գիտուն էակները՝ Չուն Կիլ Տեզն ու Չուն Տրո Պելը, քիչ թե շատ հարմարվեցին այն ժամանակ դեռևս նորաստեղծ Չինաստանում իրենց մշտական բնակության վայրին, սկսեցին շարունակել իրենց ընդհանուր ներկայություններում ոչ իրենց մեղքով

⁵ ռուս. տարբերակում՝ унастральными, անգլ. տարբերակում՝ oonastralnian

⁶ ռուս. տարբերակում՝ охтатральными, անգլ. տարբերակում՝ okhtastralnian

⁷ ռուս. տարբերակում՝ полормедехтными, անգլ. տարբերակում՝ polormedtkhtic

ընդհատված լինելիական պարտք-պարտականության միտումնավոր իրականացումը այն մասնագիտական բնագավառում, որն ընտրել էին իրենց պատասխանատու գոյատևման համար, այն է՝ շարունակեցին իրենց «գիտական հետազոտությունները» «բժշկություն» կոչվող բնագավառում:

Այն ժամանակ նրանք սկսեցին հետազոտել տիեզերական նյութերի այն համակցությունը, որը մինչ այդ քո սիրելիները սովորել էին ստանալ հիշյալ բոլորմիտեղոնային բույսից և այն կոչել էին ափիոն, ինչն այդ խմբի էակների լեզվով «քնաբեր» էր նշանակում:

Այդ երկու ականավոր եղբայրներն սկսեցին հետազոտել այդ ափիոնն այն բանի հետևանքով, որ այն ժամանակվա շատ եռուղեղ էակների պես նկատել էին, որ դրա որոշակի տեսակի որոշ քանակություն ընդունելուց հետո ցավի բոլոր զգացումները ժամանակավորապես վերանում են:

Նախ և առաջ նրանք ձեռնամուխ եղան դրա բոլոր հատկությունների ազդեցության պարզաբանմանը, հավանաբար որպեսզի դրա հատկություններից որևէ մեկի օգնությամբ վերացնեն կամ ամոքեն «հոգեկան հիվանդության» մի հատուկ տեսակ, որը լայն տարածում էր գտել իրենց նման փախստական եռուղեղ էակների միջավայրում:

Իրենց այդ հետազոտությունների ընթացքում նախ նրանք նկատեցին, որ այդ ափիոնը բաղկացած է որոշակի առանձին հատկություններ ունեցող յոթ ինքնուրույն բյուրեղացումներից:

Իսկ հետագա առավել մանրակրկիտ հետազոտություններով նրանք փաստեցին, որ այդ «ընդհանրական ամբողջի» յոթ ինքնուրույն բյուրեղացումներից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած է եւ յոթ նույնպես որոշակի բյուրեղացումներից՝ իրենց յոթ ինքնուրույն առանձին հատկություններով, և դրանցից յուրաքանչյուրն էլ յոթի է բաժանված և այդպես՝ համարյա անվերջ:

Այս փաստը նրանց այնքան խիստ զարմացրեց և հետաքրքրեց, որ նրանք մի կողմ դրեցին իրենց առջև դրված բոլոր մյուս խնդիրները և, այդ ժամանակից սկսած, զբաղվեցին բացառապես համառ կերպով ուսումնասիրելով այդ ապշեցուցիչ փաստը, որն իրենք առաջինը հայտնաբերեցին, և ի վերջո հասան այնպիսի արդյունքների, որոնք իրենց նախադեպը չունեին քո այդ մոլորակի եռուղեղ էակների համար ինչպես նախկինում՝ դեռևս Ատլանտիդա աշխարհամասի գոյության ժամանակաշրջանում, այնպես էլ իրենցից հետո ընկած ցանկացած ուրիշ ժամանակաշրջանում:

Երկրային երկու ականավոր գիտուն էակների՝ ներկայումս սուրբ Չուն Կիլ Տեգի և Չուն Տրո Պելի, մոլորակային գոյատևման ժամանակներից շատ դարեր անց, երբ իմ ուսումնասիրություններից մեկի ժամանակ ինձ վիճակվեց մանրամասն ծանոթանալ նրանց գործունեության պատմությանը, պարզվեց, որ երբ նրանք առանց որևէ կասկածի համոզվել են, որ տիեզերական նյութերի՝ ափիոն կոչվող համակցությունը բաղկացած է միացությունների ամբողջ մի շարքից, որոնք կազմված են յոթ «տարբեր առանձին հատկություններ ունեցող ակտիվ տարրերից», նույն նպատակով սկսել են ուսումնասիրել ուրիշ շատ այլ «տիեզերական արդյունքներ» կամ, ինչպես այնտեղ են ասում, երևույթներ, որոնք տեղի են ունենում շրջակա միջավայրում: Սակայն ավելի ուշ նրանք իրենց հետազոտությունները սահմանափակել են միայն երեքով՝ այդ ափիոնով, այսպես կոչված «սպիտակ ճառագայթով» և «ձայնով»:

Հետազոտելով տիեզերական պրոցեսների հիշյալ երեք իրարից տարբեր դրսևորումներ ունեցող արդյունքները՝ նրանք այնուհետև ամեն ինչից զատ նաև լրիվ որոշակիորեն պարզեցին և առանց կասկած նշույլի համոզվեցին, որ թեև իրենց առաջացման և արտաքին դրսևորման պատճառների առումներով այդ երեք արդյունքներն իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեն, այնուհանդերձ դրանց ներքին կառուցվածքն ու գործունեությունը միանգամայն իրար նման են՝ ընդհուպ մինչև ամենաչնչին մանրամասները:

Կարճ ասած, Ատլանտիդա աշխարհամասի կործանումից հետո դեռևս նոր կազմավորված Չինաստանում այդ երկվորյակ եղբայրները քո այդ մոլորակում կրկին փաստեցին ու որոշակիորեն պարզեցին, որ բոլոր առանձին և արտաքինապես ինքնուրույն երևույթները, եթե դրանցից յուրաքանչյուրը դիտվի մեկ ամբողջություն, իրենց դրսևորումների համակցությամբ կրկին ներկայանում են որպես յոթ երկրորդական, սեփական առանձին հատկություններ ունեցող ինքնուրույն ամբողջություններ, և այդ երկրորդական ինքնուրույն ամբողջություններն էլ իրենց հերթին կազմված են յոթ երրորդական միավորներից և այդպես՝ մինչև անվերջություն. իսկ այդ առաջնային, երկրորդական և երրորդական և այլն ամբողջություններում փոխադարձ կապի և փոխազդեցության գործընթացները, ամենաչնչին մանրամասներով հանդերձ, տեղի են ունենում միանման և ունենում են համանման հետևանքներ:

Ի միջիայլոց, իրենց հետազոտությունների ընթացքում նրանք այն ժամանակ առաջին անգամ առանձին անվանումներ տվեցին ինչպես առաջին յոթ ինքնուրույն ասպեկտներին, որոնք ստացել էին այդ ամենի արդյունքում, այնպես էլ դրանց երկրորդական և երրորդական ածանցյալներին:

Այն է՝ ցանկացած ամբողջի առաջին յոթ հիմնական ասպեկտները նրանք անվանեցին այսպես.

- 1) էրթի-պիկան-ոն
- 2) օրի-պիկան-ոն
- 3) սամի-պիկան-ոն
- 4) օթիսի-պիկան-ոն
- 5) էրթի-նուրա-չակա
- 6) օրի-նուրա-չակա
- 7) սամի-նուրա-չակա

Երկրորդականների անուններն էին.

- 1) օթիսի-նուրա-չակա
- 2) խուրի-պիկան-ոն
- 3) էփսի-պիկան-ոն
- 4) շվիդի-պիկան-ոն
- 5) խուրի-նուրա-չակա
- 6) էփսի-նուրա-չակա
- 7) շվիդի-նուրա-չակա

Իսկ որպեսզի տարբերվի, թե տիեզերական պրոցեսների հիշյալ երեք արդյունքներից որի՛ն է վերաբերում տվյալ անվանումը, ամեն մի անվանումից հետո ավելացնում էին հետևյալը:

Ձայնային նրբերանգներն ընդգծելու համար նրանք տատանումների քանակը նշելուց հետո միշտ հավելում էին «ալիլ» բառը:

«Սպիտակ ճառագայթի» բաղադրության առանձնահատկություններն ընդգծելու համար նրանք անուններին հավելում էին «նար-խրա-նուրա» բառը:

Ափիոն կոչվող բոլորմիտեղոնային բնամթերքի ակտիվ տարրերի նշանակման համար նրանք հավելում էին միայն դրանց, այսպես կոչված, «տեսակարար կշռի» թվային արժեքը:

Իսկ տատանումների տեսակարար հաճախության և տեսակարար կշռի համար երկրային այդ ականավոր գիտուն էակները որպես չափման միավոր ընտրեցին ձայնի տատանման միավորը, որն առաջին անգամ անվանեցին «*նիրիոնոսյան⁸ համաշխարհային ձայն*»:

Մի փոքր ավելի ուշ ես քեզ կբացատրեմ «*նիրիոնոսյան համաշխարհային ձայն*» նշանակման իմաստը, որն այն ժամանակ ընդունեցին Երկրի այդ ականավոր գիտուն էակները, իսկ առայժմ տվյալ առարկային վերաբերող իմ հետագա բացատրությունները հստակեցնելու նպատակով քեզ պետք է հայտնեմ, որ ամենուրեք մոլորակների գիտնականները թրթռանքների տեսակարար կշռի և տեսակարար հաճախության համեմատական հաշվարկների համար որպես չափման միավոր են վերցնում օբյեկտիվ գիտությամբ հաստատված սրբազնագույն Թեոմերտալոգոսի այն մասը, որն իր մեջ դեռևս պարունակում է սրբազան Եռամասիկապողի բոլոր երեք սուրբ ուժերի ամբողջականությունը. բայց քո այդ մոլորակի վրա, ինչպես բոլոր ժամանակների ճշմարիտ գիտնականները, այնպես էլ նոր կերտվածքի գիտուններն այդ նույն նպատակով (այսինքն՝ այս կամ այն ամբողջի տարբեր հատկություններ ունեցող որոշակի մասերի համեմատական հաշվարկների համար, որն իրենց հայտնի է դարձել. ասենք, օրինակ, որպեսզի որոշեն իրենց գոյատևման շրջակա ոլորտներում առկա և իրենց հայտնի դարձած տարրերի տեսակարար կշիռները) ընդունել են և մինչև այժմ որպես այդ չափման միավոր են ընդունում, այսպես կոչված, «ջրածնի ատոմը»՝ անհայտ պատճառներով համարելով, որ այդ ջրածնի ատոմն ընդհանրապես մանրագույնն է և անբաժանելին:

⁸ ռուս. տարբերակում՝ *нириуносийным*, անգլ. տարբերակում՝ *nirioonossian*

Հարկ է նկատել, որ քո սիրելիների մեջ աչքի ընկած այդ վայ-գիտնականները նույնիսկ չեն էլ կասկածում, որ եթե նույնիսկ այդ ջրածնի ատոմն իսկապես մանրագույնն ու անբաժանելին է իրենց մոլորակի բոլոր ոլորտներում, ապա դրանից չի հետևում, թե այն չի կարող բազմակիորեն ճեղքվել այլ արևային համակարգությունների սահմաններում կամ նույնիսկ իրենց սեփական արևային համակարգության որոշ այլ մոլորակների ոլորտներում:

Իմիջիայլոց, հարկ է որ իմանաս, որ իրենց այդ ջրածինը ընդամենն այն յոթ տիեզերական նյութերից մեկն է, որոնք իրենց ընդհանուր համակցության մեջ հատուկ տվյալ արևային համակարգության համար կազմավորում են տիեզերական նյութերի, այսպես կոչված, «*ներքին անսապալային օկտավա*», և այդ ինքնուրույն օկտավան էլ իր հերթին մեկ յոթերորդ ինքնուրույն մասն է կազմում հիմնական «*համատիեզերական անսապալային օկտավայի*»:

Այդպիսի ներքին ինքնուրույն *անսապալային օկտավա* կա նաև այն արևային համակարգությունում, որին պատկանում է մեր սիրելի Քարատակը, և մենք այդ տարբեր հատկություններով օժտված տարատեսակ տիեզերական նյութերն այսպես ենք անվանում.

- 1) պլանեկուրաբ, որը նույն իրենց ջրածինն է,
- 2) ալիլոնոֆարաբ,
- 3) կրիլոնոլնիֆարաբ,
- 4) տալկոպրաֆարաբ,
- 5) խրիտոֆալոնոֆարաբ
- 6) սիրիոնոռիֆարաբ,
- 7) կլանանոյիզոնոֆարաբ:

Իսկ քո այդ մոլորակի ճշմարիտ գիտուն էակները տարբեր ժամանակներում տարբեր կերպ են անվանել տարբեր հատկություններ ունեցող նույն այդ յոթ համեմատաբար ինքնուրույն բյուրեղացումները կամ, ինչպես իրենք են ասում, ակտիվ տարրերը, որոնք իրենց սեփական արևային համակարգության համար *ներքին անսապալային օկտավա* են կազմում. սակայն այնտեղի ներկայիս, այսպես կոչված, «*քիմիկոս-գիտնականները*», որոնք տեղով արդեն «*նոր կերտվածքի գիտնականներ*» են այդ տարրերն այսպես են անվանում.

- 1) ջրածին
- 2) ֆտոր
- 3) քլոր
- 4) բրոմ
- 5) յոդ

Վերջին երկու որոշակի բյուրեղացումների համար նրանք հիմա ոչ մի անվանում չունեն, քանի որ դրանց անվանումներն իրենց նախնիներից իրենց չեն հասել, և ներկայումս նրանց մտքով չի էլ անցնում, որ այդ երկու տիեզերական նյութերն իրենց մոլորակում գոյություն ունեն, թեև դրանք իրենց սեփական գոյատևման համար գլխավոր գործոնների դեր են կատարում:

Այդ վերջին երկու տիեզերական նյութերը, որոնք լիովին զգալի ու մատչելի կարող են լինել իրենց մոլորակի բոլոր ոլորտներում, մոտ երկու դար առաջ դեռևս հայտնի էին այնտեղի այն «գիտուն էակների» շրջանում, որոնք «ալքիմիկոսներ» էին կոչվում, և որոնց ներկայիս «վայ-գիտնականները» պարզապես «*օկուլտային շառլատաններ*» են անվանում՝ նրանց համարելով ընդամենը «մարդկային միամտությունը շահագործողներ»: Նրանք այդ նյութերն անվանում էին «հիդրո-ումիակ»⁹ և «պետրոքարմիակ»¹⁰:

Եվ այսպես, զավակս, երկրային այդ երկու ականավոր գիտուն էակները՝ ներկայումս սուրբ, երկվորյակ եղբայրներ Չուն Կիլ Տեզն *ու* Չուն Տրո Պելը, Ատլանտիդայի կործանումից հետո առաջին անգամ կրկին դրեցին այդ գիտելիքի հիմքը: Նրանք ոչ միայն նորից հիմք դրեցին այդ «*հատուկ բնույթի*

⁹ ռուս. տարբերակում՝ гидро-умиак, անգլ. տարբերակում՝ hedro-oomiak

¹⁰ ռուս. տարբերակում՝ петркармиак, անգլ. տարբերակում՝ piotrarmiak

տեղեկատվական համակցությանը», այլ նաև Երկրում առաջին անգամ փաստեցին այդ մեծ օրենքում եղած երեք գլխավոր օրինաչափ առանձնահատկություններից երկուսը, որոնց մասին արդեն ասել եմ քեզ. այն է՝ հենց նրանք են առաջինը փաստել այդ օրենքի Մտնել-Ին-երից երկուսի գոյությունը. նրանք այն ժամանակ ճշմարիտ գիտելիքի այդ ճյուղն անվանեցին Իննականության օրենք, ինչպես Ատլանտիդա աշխարհամասում ժամանակին դա անվանվել է *«ցանկացած ամբողջական երևույթի յոթասպեկտայնություն»*: Նրանք դա Իննականության օրենք անվանեցին այն պատճառով, որ իրենց կողմից «դուգծակող»¹¹ կոչված այդ մեծ օրենքի յոթ ակնհայտ *«տարբերակող դրսևորումներին»* հավելեցին ևս երկու առանձնահատկություններ, որոնք առաջին անգամ իրենք հայտնաբերեցին և անվանեցին «սուանսո-տուրաբիցո»¹², ինչը նշանակում է *«ամբողջի անընդհատ հոսքի պարտադիր ընդհատություն»*: Նրանք այդ օրենքն այդպես անվանեցին գլխավորապես այն պատճառով, որ իրենց մանրակրկիտ հետազոտությունների ընթացքում առանց որևէ կասկածի համոզվեցին, որ բոլոր իրենց հետազոտած տիեզերական «անցումային արդյունքներում», իրենց կողմից առաջին անգամ հայտնաբերված այդ առանձնահատկությունները պարտադիր կերպով մշտապես տեղի են ունենում այդ մեծ օրենքի ընթացքի որոշակի տեղերում:

Երկրային այդ երկու ականավոր չինացի գիտուն էակները, իրենց պարզաբանիչ փորձերի ընթացքում այն ժամանակ ձեռնարկելով «քիմիական», «ֆիզիկական» և «մեխանիկական» փորձեր, աստիճանաբար ստեղծեցին մի շատ բարդ և վերին աստիճանի ուսանելի փորձարարական սարքավորում, որն անվանեցին «ալեհատթափան»¹³:

Այդ ալեհատթափան կոչված սարքավորման օգնությամբ այնուհետև նրանք թե՛ իրենք իրենց, թե՛ ուրիշներին ապացուցեցին, որ տիեզերական պրոցեսների այդ բոլոր երեք «անցումային արդյունքների» բուն էության մեջ, ինչպես նաև հատկապես այդ ափիոն կոչվող բոլորմիտեղոյան բնամթերքում, սպիտակ ճառագայթում և ձայնում առկա են նույն հատկությունները, այսինքն՝ արտաքնապես իրարից կատարելապես տարբերվող այդ երեք տիեզերական երևույթներում առկա են միևնույն, այսպես կոչված, «իրականացնող կառուցվածքները», այսինքն՝ նրանց դրսևորումներն ունեն միևնույն *«փոխազդող օրինաչափությունները»*, և բոլոր այդ արտաքնապես իրարից պարզորոշ տարբերվող ինքնուրույն դրսևորումների մոտ այդ *«փոխազդող օրինաչափություններն»* իրենց գործունեության ընթացքում իրար հետ փոխազդում են ճիշտ այնպես, ինչպես դա տեղի է ունենում իրենց սեփական դրսևորումներում, այսինքն՝ ցանկացած արդյունքի դուգծակողը մի ուրիշ արդյունքի համապատասխան դուգծակողի վրա ազդում է ճիշտ այնպես, ինչպես դա տեղի է ունենում այն դուգծակողում, որն այդ ամբողջ տիեզերական արդյունքի յոթ ասպեկտներից մեկն է:

Հենց այդ սարքավորումը, որի օգնությամբ ականավոր եղբայրներն իրականացրել էին իրենց պարզաբանիչ փորձերը, ես իմ սեփական աչքերով տեսա նրանց գոյատևման ժամանակներից շատ դարեր անց և շատ լավ ծանոթացա դրա կառուցվածքին:

Քանի որ ալեհատթափան կոչված այդ հրաշալի փորձարարական սարքավորման աշխատանքի և կառուցվածքի բոլոր մանրամասներին իմ անձնական ծանոթության համար պատճառ դարձան պատահական հանգամանքներ, որոնք կապված էին իմ էակից ընկեր գոռնադառ Ղառդառի հետ, և քանի որ այս ամենն, իհարկե, քեզ համար շատ հետաքրքիր և միաժամանակ չափազանց ուսանելի կլինի, ես դա կնկարագրեմ մի փոքր ավելի մանրամասն:

Այդ զարմանահրաշ ալեհատթափան սարքավորման իմ անձնական և համակողմանի ուսումնասիրությունը, որն էլ գոռնադառ Ղառդառի շնորհիվ հայտնի դարձավ մեր ամբողջ Մեգալոկոսմոսի ճշմարիտ գիտնականներին, տեղի ունեցավ հետևյալ պատահական հանգամանքների բերումով:

Հենց այն ժամանակ, երբ մի անգամ Սատուրն մոլորակում գտնվում էի իմ էակից ընկեր գոռնադառ Ղառդառի մոտ, վերջինս, նախապես ինչ-որ ձևով լսած լինելով այդ սարքավորման մասին, զրույցի ընթացքում ինձ խնդրեց Երկրից իր համար բերել այդ փորձարարական սարքավորումներից մեկը, եթե երբևէ ինձ վիճակվի կրկին լինել այնտեղ:

¹¹ ռուս. տարբերակում՝ дусзакo, անգլ. տարբերակում՝ doostzakos

¹² ռուս. տարբերակում՝ суансо-турабицо, անգլ. տարբերակում՝ sooansotoorabitzo

¹³ ռուս. տարբերակում՝ аллааттапан, անգլ. տարբերակում՝ alla-attapan

Եվ երբ հետագայում ես կրկին հայտնվեցի քո այդ մոլորակի մակերևույթի վրա, այդ սարքավորումներից մեկը ձեռք բերեցի և հետո տարա Մարս մոլորակ, որպեսզի այնտեղից մի հարմար առիթով դա ուղարկեմ Մատուրնում ապրող գոռնադառ Ղառղառին:

Ահա այդպես, այն բանի հետևանքով, որ մեր «Պատահար» տիեզերանավը երկար ժամանակ Մատուրն չթափ, այդ ալեհատթափան սարքավորումը մնաց Մարսի իմ տանը և հաճախ հայտնվում էր իմ տեսողության ինքնաբերական զգայարանի առջև, ուստի ակտիվ մտածողությունից հանգստանալուս ժամանակահատվածներում ես ուշադրությամբ զննում էի այն, ինչի արդյունքում ի վերջո ծանոթացա դրա աշխատանքի և կառուցվածքի բոլոր մանրամասներին:

Այդ նշանավոր ալեհատթափան կոչվող փորձարարական սարքավորումը բաղկացած էր երեք ինքնուրույն մասերից: Առջևի մասը կոչվում էր «լույսաչփբանա¹⁴», միջնամասը՝ «ձենտվող¹⁵», իսկ վերջնամասը՝ «ռանգ-փոխադարձ¹⁶»:

Այդ երեք մասերից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած էր մի քանի հատուկ հարմարանքներից:

«Լույսաչփբանա» կոչվող առաջին մասն ուներ հատուկ կոնաձև խողովակ, որի լայն կողմը հերմետիկորեն միացած էր այն սենյակի միակ լուսամուտի շրջանակին, որտեղ անցկացվում էին փորձերը, իսկ երկրորդ՝ նեղ ձեղքով անցք ունեցող ծայրն, այսպես կոչված, «հավաքող ոսպնյակի» տեսք ուներ, որով անցնելով՝ «ցերեկային լույսի ճառագայթները», որ ներթափանցում էին պատուհանից, փոխակերպվում էին, ինչպես կասեին քո սիրելիները, «համակենտրոնացված սպիտակ ճառագայթ»:

Այդ *համակենտրոնացված սպիտակ ճառագայթը* դրանից հետո անցնում էր հատուկ ձև ունեցող բյուրեղի միջով և տրոհվում յոթ տարբեր «գունավոր ճառագայթների», որոնք, այսպես ասած, ընկնում էին փողոսկրից պատրաստված ոչ մեծ մի թիթեղի վրա, որը կոչվում էր «բիրինջիել¹⁷»:

Այդ բիրինջիելն այնպես էր կառուցված ու կարգավորված, որ նրա վրա ընկած գունավոր ճառագայթները կրկին մեկտեղվում էին, սակայն այս անգամ մի փոքր այլ կերպ, և, անցնելով երկրորդ, կրկին հատուկ ձև ունեցող բյուրեղի միջով՝ ընկնում էին մի ուրիշ, ավելի մեծ թիթեղի վրա, որը նույնպես փողոսկրից էր պատրաստված և կոչվում էր «բոլորիցբարդա¹⁸»:

Այդ բոլորիցբարդայի դիմաց կար հատուկ կառուցվածք ունեցող ոչ մեծ մի սարք, որի միջով, կախված դրա տեղաշարժից, կարելի էր ընտրված ցանկացած գունավոր ճառագայթ անցկացնել դեպի ալեհատթափանի երրորդ մասը՝ «ռանգ-փոխադարձը»:

Իմիջիայլոց, այստեղ քեզ պետք է ասել, որ ալեհատթափանի այդ մասի առաջին բյուրեղի պատրաստմանը վերաբերող գիտելիքները հասել են նաև ներկայիս քո սիրելիներին, և հիմա նրանք այդ բյուրեղը «պրիզմա» են կոչում:

Ժամանակակից երկրային գիտուն էակները նույնպես այդ պրիզմայի օգնությամբ սպիտակ լույսը տրոհում են յոթ ճառագայթների և երևակայում են, թե դրա միջոցով կարող են իմանալ մի քանի այլ տիեզերական երևույթների մասին:

Բայց, իհարկե, իրենց այդ երևակայության ու այդ պրիզմայի միջոցով նրանք սպիտակ լույսից միայն, այսպես կոչված, «նեգատիվ ճառագայթներ» են ստանում, իսկ որպեսզի հասկանան որևէ ուրիշ տիեզերական երևույթ՝ կապված սպիտակ լույսի անցումային փոփոխությունների հետ, նրանք անպայման ձեռքի տակ պետք է ունենան, այսպես կոչված, «պոզիտիվ գունավոր ճառագայթներ»:

Սակայն ժամանակակից քո սիրելիները երևակայում են, թե իրենց այդ պրիզմա կոչվող մանկական խաղալիքով ստացված գունավոր ճառագայթները հենց այն նույն «պոզիտիվ ճառագայթներն» են, որոնք ստացել էին այն ականավոր գիտնականները, և միամտորեն կարծում են, թե այդ, ինչպես իրենք են ասում, «սպեկտրը», որն իրենք ստանում են սպիտակ լույսից, արտացոլում է ճառագայթների առաջացման հենց այն նույն կարգը, որով դրանք ճառագայթվում են իրենց աղբյուրներից:

¹⁴ ռուս. տարբերակում՝ лусочепана, անգլ. տարբերակում՝ loosochepana

¹⁵ ռուս. տարբերակում՝ дзевдвох, անգլ. տարբերակում՝ dzendvokh

¹⁶ ռուս. տարբերակում՝ рянк-похортарз, անգլ. տարբերակում՝ riank-pokhotartz

¹⁷ ռուս. տարբերակում՝ пиринджьел, անգլ. տարբերակում՝ pirindjiel

¹⁸ ռուս. տարբերակում՝ полоришбурда, անգլ. տարբերակում՝ polorishboorda

Իսկ առայժմ, տվյալ դեպքում քո սիրելիների միջից ելած այդ նոր կերտվածքի երկրային վայգիտունների հասցեին կարելի է մեջբերել մի արտահայտություն, որը հենց իրենք հաճախ են օգտագործում. «Թո՛ղ կորչեն գրողի ծոցը...»:

Իգուր չէ, որ որոշ Սրբազան Անհատներ քո սիրելիներին այլ կերպ չեն անվանում, քան «ցնդածներ»:

Այսպիսով, շնորհիվ այդ երկու բյուրեղների՝ այդ ականավոր գիտնականները սպիտակ լույսից ստանում էին պոզիտիվ գունավոր ճառագայթներ, որից հետո բոլորիցքարդա կոչվող թիթեղի օգնությամբ, որը լույսաչփրանայի մի մասն էր, այդ գունավոր ճառագայթներից ցանկացածն ուղղում էին իրենց զարմանահրաշ սարքավորման երրորդ և գլխավոր ցուցադրական մասի՝ ռանգփոխադարձի կողմը:

Այդ գլխավոր մասը, սակայն, մի սովորական եռոտանի էր, որի վերնի մասում որոշակի ձևով մեկը մյուսի գլխին հարմարեցված էին երկու գնդեր, որոնք նույնպես փոփոխվում էին պատրաստված, ընդ որում, վերնի գունդն անհամեմատ մեծ էր ներքինից:

Ներքին փոքր գնդի ներսում, ուղիղ լույսաչփրանայի դիմաց, հատուկ ձևի խոռոչ կար, որում փորձի ընթացքում տեղադրվում էր կա՛մ ափիոն կոչվող բոլորմեկտեղոնային բնամթերքն ամբողջությամբ, կա՛մ դրա առանձին ակտիվ տարրերը, որոնք պահանջվում էին տվյալ փորձի համար:

Վերնի գնդի տրամագծով միջանցիկ անցք էր արված լույսաչփրանային զուգահեռ ուղղությամբ, և այդ նույն գնդի վրա, կրկին շառավղով այդ մեծ միջանցիկ անցքին ուղղահայաց ուղղությամբ կար նս մեկ ավելի կարճ անցք, որը հասնում էր մինչև գնդի կենտրոնը և էլի գտնվում էր հենց լույսաչփրանայի դիմաց:

Այդ երկրորդ անցքը, որը ծակված էր գնդի կեսի չափով, այնպես էր արված, որպեսզի գունավոր ճառագայթները հնարավոր լինի ըստ ցանկության ուղղել կա՛մ անմիջապես լույսաչփրանայից, կա՛մ ներքին փոքր գնդի նշված խոռոչից:

Մեծ գնդի բաց անցքով ազատորեն կարող էր շարժվել, այսպես կոչված, «եղեգնիկը», որը նախապես պատրաստվում էր հատուկ եղանակով:

Փորձը սկսելուց շատ առաջ այդ եղեգնիկների բավական մեծ քանակություն թացացվում էր կատարյալ մթության մեջ, կամ, ինչպես այնտեղ՝ Երկրում են ասում, նարնջագույն «լույսի» տակ, որը ստացվում էր, այսպես կոչված, «սիմքալաշի» այրումից. վերջինս ստանում էին որոշակի տեսակի, այսպես կոչված, «կավից», որի հանքաշերտերը քո այդ մոլորակի ընդերքից հանում էին «սալոունիլովյան»¹⁹ թթուների» կուտակումների մերձակայքից, որոնք էլ իրենց հերթին առաջանում են «մագմոլինից»²⁰, կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, «նավթից»:

Այդ եղեգնիկները թացացվում էին մի հեղուկի մեջ, որը կազմված էր.

- 1) մի թռչունի ձվի սպիտակուցից, որին այն ժամանակ անվանում էին «ամերսա-մարսկանարա»²¹,
- 2) մի բույսի հյութից, որին կոչում էին «չիլտունախ»²²,
- 3) մի չորքոտանի կենդանու արտաթորանքից, որին կոչում էին «կովմարալ»²³,
- 4) հատուկ ձևով պատրաստված սնդիկային ամալգամից:

Եղեգնիկները խնամքով թրջելուց հետո դրանք մտցնում էին ավելի հաստ եղեգների մեջ, որոնք նախապես չէին մշակվում նշված եղանակով, և որոնց ծայրերը հերմետիկորեն փակվում էին:

Նշված բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարվում էին, իհարկե, լիակատար մթության մեջ կամ սիմքալաշի նարնջագույն լույսի տակ:

Հետագայում, երբ թրջված եղեգնիկները պետք էին գալիս փորձի համար, ապա ավելի հաստ ու չթրջված եղեգի մի ծայրը հատուկ եղանակով մտցվում էր ռանգփոխադարձի մեծ գնդի հիշյալ միջանցիկ անցքի մեջ և բացվում էր բարակ փայտիկի վրա ամրացված կեռիկի օգնությամբ, որը նաև օգտագործվում էր, որպեսզի թրջված եղեգնիկը տեղաշարժվի ցանկացած հարկ եղած արագությամբ:

¹⁹ ռուս. տարբերակում՝ салониловийных, անգլ. տարբերակում՝ salounilovian

²⁰ ռուս. տարբերակում՝ мамцелин, անգլ. տարբերակում՝ masmolin

²¹ ռուս. տարբերակում՝ амерсамарсканара, անգլ. տարբերակում՝ amersa-marskanara

²² ռուս. տարբերակում՝ чилтунах, անգլ. տարբերակում՝ chiltoonakh

²³ ռուս. տարբերակում՝ коэмарал, անգլ. տարբերակում՝ kezmaral

Հիշյալ հեղուկի ազդեցությունը, որով թրջվում էին եղեգնիկները, այնպիսին էր, որ թրջված եղեգնիկի այն հատվածը, որի վրա անմիջականորեն լույսաչափաձայնից կամ ներքնի փոքր գնդի խոռոչից անդրադառնալուց հետո գունավոր ճառագայթ էր ընկնում, անմիջապես կայուն կերպով գունավորվում էր հենց ընկնող ճառագայթի գույնով:

Հիշյալ եղանակով թրջված այդ եղեգնիկների չծածկված մասերը ստանում էին գունավորումներ, որոնք նմանապես համապատասխանում էին իրենց հասած այն ձայնային տատանումներին, որոնք արձակվում էին սարքավորման միջնամասում գտնվող ձենտվողում տեղադրված լարերից:

Այդ ձենտվողը բաղկացած էր հատուկ ձև ունեցող ամուր շրջանակից, որը պատրաստված էր «մամոնտ» կոչվող կենդանու ժանիքներից, որի վրա ձգված էին տարբեր երկարություն ու հաստություն ունեցող բազմաթիվ լարեր, որոնց մի մասը պատրաստված էր ոլորված, այսպես կոչված, «այծի աղիքներից», իսկ մյուս մասը՝ այնտեղի զանազան արտաքին տեսք ունեցող էակների պոչերի մազերից»:

– Միբեղի՛ պապիկ, ասա՛ ինձ խնդրեմ, ի՞նչ բան է մամոնտը, – հարցրեց Հասեինը:

«Մամոնտը, – պատասխանեց Բեհեղդեբուղը, – երկուդեղ էակ է, որը սկզբնական շրջանում նույնպես բազմանում էր քո այդ մոլորակում և այնտեղի բոլոր տեսակի ուղեղային համակարգ ունեցող էակների համեմատ ուներ ավելի մեծ արտաքին ձև:

Այդ տեսակի էակները ևս զոռ դարձան Երկիր մոլորակից այն մեծ կտորի պոկվելուն, որն այժմ Լուսին է կոչվում և դարձել է, ինչպես արդեն ասել եմ, այդ Արգ կոչվող արևային համակարգի «մոլորակային դուրսաբծուկն» ու քո այդ չարաղետ մոլորակի համար չարիքների գլխավոր աղբյուրը:

Բանն այն է, որ երբ այդ փոքրիկ մոլորակային դուրսաբծուկի վրա սկսեց մթնոլորտ կազմավորվել և աստիճանաբար ներդաշնականալ, Երկիր մոլորակի մթնոլորտում ուժեղ քամիներ բարձրացան, որի հետևանքով (ես այդ մասին քեզ ասել եմ, եթե հիշում ես) նրա մակերևույթի մի շարք տարածքներ թաղվեցին ավազի տակ. դրանից զատ, այդ ժամանակներում նրա մթնոլորտի, այսպես կոչված, «հյուսիսային» և «հարավային» բևեռային շրջաններում մշտապես ձյուն էր տեղում, և դրա արդյունքում այդ մոլորակի մակերևույթի հյուսիսային և հարավային շրջանների բոլոր գոգավորություններն ամբողջովին ձյունածածկ եղան:

Այդպիսի արտաքին ձև ունեցող էակները սովորաբար բազմանում էին քո այդ մոլորակի մակերևույթի հիշյալ շրջաններում. այդ աննախադեպ, ինչպես այնտեղ են ասում, «ձնաբքերի» ժամանակ նրանք նույնպես ձնածածկ եղան, և այդ ժամանակից սկսած, էակների այդ տեսակն այնտեղ այլևս չվերականգնվեց:

Հետաքրքիր կլինի նշել, որ ներկայումս այդ գոգավորություններում, որոնք սկզբից ձյունով ծածկվեցին, իսկ հետո՝ «քաշումանհունով», այսինքն այն նյութերով, որոնցից ընդհանուր առմամբ ցամաքային մակերևույթի «հողն» է կազմավորվում, երբեմն գտնում են մամոնտների նույնիսկ մինչև հիմա լավ պահպանված մոլորակային մարմիններ:

Մամոնտների մոլորակային մարմիններն այդքան երկար ժամանակի ընթացքում լավ պահպանվել են այն պատճառով, որ ձյունածածկ լինելուց հետո շատ շուտով ծածկվել են քաշումանհունի շերտով և հայտնվել «մեկուսապահպան», կամ ինչպես քո սիրելիները կասեին, հերմետիկ փակ միջավայրում, և մամոնտների մոլորակային մարմիններն այդ ժամանակից սկսած չեն ենթարկվել, ինչպես այնտեղ են ասում, «քայքայման», այսինքն՝ ակտիվ տարրերը բոլորովին ինվոլյուցիայով չեն վերածվել իրենց սկզբնաղբյուրին:

Այսպիսով, զավակս, իմ նկարագրած զարմանահրաշ «ալեհատթապան» սարքավորումը ցույց տվեց, որ տիեզերական պրոցեսների բոլոր երեք հիշյալ «անցումային արգասիքները» ոչ միայն միևնույն կերպ են արտահայտվում իրենց ներքին դրսևորումներում, այլև կազմավորվում են միևնույն գործոնների ազդեցությամբ:

Այդ սարքավորման միջոցով հնարավոր եղավ համոզվել, որ համատիեզերական պրոցեսներից առաջացող և արտաքնապես իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող հիշյալ երեք անցումային արգասիքներից յուրաքանչյուրում ոչ միայն տեղի են ունենում կատարելապես միանման, այսպես կոչված, «մեկը մյուսից բխող և մեկ ընդհանուր գործառույթ կազմավորող փոխազդեցություններ», ինչպես և, Յոթնապարապարշինող օրենքի էվոլյուցիոն ու ինվոլյուցիոն յուրահատկությունների իմաստով ասած՝ ամեն մի առանձին միջանկյալ աստիճանի գործողությունն այդ ընդհանուր գործառույթի շրջանակներում ազդում է մյուս առանձին միջանկյալ աստիճանի գործողության վրա

ճիշտ այնպես, ինչպես իր սեփականի, այլև որ նրանց ամբողջությունը կազմող թրթիռների յուրահատկությունների առումով այդ անցումային տիեզերական արգասիքները լիովին միանման են:

Արտաքննապես իրար հետ ոչ մի կապ չունեցող այդ երեք անցումային արգասիքների ներքին փոխհարաբերությունների այդ լիակատար միանմանությունն ապացուցվեց հետևյալ կերպ:

Օրինակ՝ ափիոնի ցանկացած ակտիվ տարրին ուղղված համապատասխան գունավոր ճառագայթը դրան փոխարկում էր մի այլ ակտիվ տարրի, որն իր նոր ձեռք բերած թրթիռներով համապատասխանում էր այն գունավոր ճառագայթի տատանումներին, որն ազդել էր տվյալ ակտիվ տարրի վրա:

Նույն արդյունքն էր ստացվում, եթե գունավոր ճառագայթների փոխարեն այդ նույն ակտիվ տարրի կողմն էին ուղղվում ձենտվողի լարերի համապատասխան տատանումները:

Դրանից զատ, եթե կամայական գունավոր ճառագայթ անցնում էր ափիոնի ցանկացած ակտիվ տարրի միջով, ապա ձեռք էր բերում մի ուրիշ գույն, որի տատանումները համապատասխանում էին հենց այդ ակտիվ տարրին. կամ եթե ցանկացած գունավոր ճառագայթ անցնում էր դրսևորված, այսպես կոչված, «ձայնային տատանումների ալիքի» միջով, որը տվյալ պահին արձակվել էր ձենտվողի համապատասխան լարից, ապա ձեռք էր բերում հենց այն գույնը, որը համապատասխանում էր տվյալ լարի միջոցով դրսևորված տատանումներին:

Վերջապես, եթե որոշակի գույն ունեցող ճառագայթն ու լարերից արձակված որոշակի տատանումները միաժամանակ ուղղվում էին դեպի ափիոնի ակտիվ տարրերից որևէ մեկը, որոնք իրար հետ կազմում են տվյալ բոլորմեկտեղյան գոյացությունը, և ամեն մեկն ունի թրթիռների ավելի փոքր թիվ, քան գունավոր ճառագայթի ու նշված ձայնի թրթիռների համակցությունը, ապա տվյալ ակտիվ տարրը փոխակերպվում էր ափիոնի այն ակտիվ տարրին, որի թրթիռների թիվը ճշտորեն համապատասխանում էր նշված երկու տարբեր աղբյուրներից սկիզբ առած այդ համակցության թրթիռների թվին և այլն, և այլն:

Իր նմանը չունեցող այդ փորձարարական սարքավորումը նաև ցույց տվեց, որ մեկ արգասիքի բոլոր ավելի բարձր թրթիռներն ուղղություն են տալիս մյուս «*տիեզերական անցումային արգասիքների*» բոլոր ավելի ցածր թրթիռներին:

Այսքանը քեզ պատմելուց հետո, զավա՛կս, կարելի է այժմ քեզ հաղորդել մի տեղեկություն, որը քո մտածողության մեջ տվյալներ կբյուրեղացնի պատկերացնելու համար, թե այն ժամանակ Չինաստանում ինչ ընդհանրական արդյունքի հանգեցրեց այդ երկու սուրբ երկվորյակ եղբայրների՝ երկրային մեծ գիտնականների «ջանադիր ու անկողմնակալ գիտակցական աշխատանքը». դեռ ավելին, տվյալներ կստանաս, որպեսզի պատկերացնես նաև երկրային այդ թշվառ եռուղեղ էակների *լինելիական բանականության* հետևողական վատացման աստիճանը:

Եվ այսպես, քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների կյանքը դիտելուս ընթացքում երկրորդ անգամ այդ դեռևս նոր կազմավորված Չինաստանի հիշյալ երկու մեծ գիտնականների՝ երկվորյակ եղբայրների ջանքերի շնորհիվ ծագեց ճշմարիտ գիտության մի ինքնուրույն բնագավառ՝ տեղեկությունների մի ամբողջություն, որը վերաբերում էր նախկինում ապրած եռուղեղ էակների կատարյալ բանականությամբ ամբողջովին բացահայտված մի հատուկ խնդրի, տվյալ դեպքում՝ Յոթնապարապարշինող կոչվող հիմնական տիեզերական սրբազան օրենքին, որն այն ժամանակ «Իննականության» օրենք էին անվանում. գիտության այդ ճյուղը ոչ միայն գրեթե նորմալ ձևով ու անփոփոխ տեսքով մի սերնդից մյուսին փոխանցվեց այդ երկու մեծ երկվորյակ եղբայրների Ռասկուարնոյին հետևած առաջին երկու-երեք դարերի ընթացքում, այլև դրա հետևորդների՝ այդ ժամանակաշրջանի նույնպիսի ճշմարիտ գիտուն էակների շնորհիվ, ինչպես ասում են, «մանրամասն մշակվեց» և մատչելի էր նույնիսկ սովորական էակների համար:

Այն ժամանակ դա հնարավոր դարձավ գլխավորապես այն պատճառով, որ դեռևս գործում էր հաջորդ սերունդներին նման տեղեկատվության փոխանցման՝ Ատլանտիդա աշխարհամասի գիտուն էակների կողմից հաստատված եղանակը, այն է՝ դա անել միայն ճշմարիտ ձեռնադրյալ էակների միջոցով:

Ես անպայման պետք է նշեմ և համոզված ընդունեմ, զավա՛կս, որ իրոք, եթե վաղուց հաստատված այդ եղանակը թեկուզ ինքնաբերական ձևով շարունակվեր քո հետաքրքրությունը շարժած այդ թշվառ եռուղեղ էակների գոյատևման գործընթացում, ապա ճշմարիտ տեղեկատվության հենց այդպիսի համակցությունը, որն ամբողջովին բացահայտվել էր իրենց դեռևս «համեմատաբար նորմալ»

նախնիների բանականությամբ, կարող էր պահպանվել և դառնալ նաև քո ժամանակակից սիրելիների սեփականությունը. և նրանց միջից այն էակները, որոնք մշտապես փորձում են անդառնալիորեն զոհ չդառնալ իրենց համար անեծք դարձած կոնդաբուֆեր օրգանի հետևանքներին, կկարողանային օգտվել այդ տեղեկություններից, որպեսզի դրանով հեշտացնեին իրենց արդեն համարյա աննկարագրելի դարձած, այսպես կոչված, «ներքին պայքարը»:

Ի ավստոսանք մեր Մեգալակոսմոսի բոլոր քիչ թե շատ գիտակից ու «համեմատաբար ինքնուրույն» Անհատականությունների և ի դժբախտություն քո այդ չարաղետ մոլորակի բոլոր գալիք եռուղեղ էակների՝ նշված ժամանակահատվածում, այն է՝ ընդամենը երկու-երեք դարերի ընթացքում, աստիճանաբար սկսեց աղավաղվել և ի վերջո համարյա լրիվ չքացավ գիտակցական աշխատանքով ու կամավոր տառապանքով ստեղծված այն բարեշնորհանքը, որը նրանց թողել էին իրենց նախնիները:

Այդպես եղավ երկու պատճառով:

Առաջին պատճառն այն է, որ իրենց կողմից հաստատված արտաքին *լինելիական գոյատևման* աննորմալ պայմանների հետևանքով նրանցից ոմանք պատասխանատու էակներ էին դառնում այնպիսի «*օրգանական հոգեբանական պահանջմունքով*», որն իրենց լեզվով կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

«Շրջապատի իրենց նման էակների կողմից գիտուն համարվելու անհաղթահարելի ցանկություն». և այդ «հոգե-օրգանական պահանջմունքը» նրանց ներսում սկսեց ծնել այն իրենց հատուկ արտառոց հատկանիշը, որի մասին ես շատ եմ խոսել, և որն իրենք անվանում են «խելքին զոռ տալ»:

Իմիջիայլոց, զավա՛կս, մեկընդմիջտ ի նկատի ունեցիր, որ երբ ես օգտագործում եմ և էլի կօգտագործեմ «նոր կերտվածքի գիտուն էակներ» արտահայտությունը, ես նկատի եմ ունենում քո սիրելիներից նրանց, որոնք նշածս գիտուն էակների շարքին են պատկանում և ունեն այդ առանձնահատուկ հատկանիշը:

Մյուս պատճառն այն էր, որ այդ ժամանակահատվածում, նրանցից անկախ արտաքին հանգամանքների բերումով, որոնք առաջացել էին համատիեզերական գործընթացներից գլխավորապես Սոլիունենսիոս օրենքի ազդեցության հետևանքով, նրանց ներսում բյուրեղացող *լինելիական նախադրյալները*, որոնք այսպես կոչված, «հասկանալու» և «կանխատեսելու» ազդակներ են ծնում, սկսեցին տկարանալ ճշմարիտ ձեռնադրյալ էակների ընդհանուր ներկայություններում, և նրանք սկսեցին ընտրել հենց նոր իմ նկարագրած էակների նոր ձևավորված տիպերին և նրանց հաղորդակից դարձնել միայն իրենց հայտնի ճշմարիտ տեղեկությունների ամբողջ համակցության որոշակի մասերին. դրանց մեջ մտնում էր նաև իմ հիշատակած գիտելիքների համակցությունը, և, այդ ժամանակից սկսած, ճշմարիտ գիտելիքների այդ բնագավառը, նրանց մեծ մասի համար մատչելի դառնալով, սկսեց աստիճանաբար աղավաղվել և ի վերջո համարյա լրիվ մոռացության մատնվեց:

Այդ բարեշնորհանքի վերջնական, համարյա ամբողջական ոչնչացման մասին խոսելիս ես կիրառեցի «համարյա» բառը, քանի որ օբյեկտիվ իմաստով ճշմարտացի ու կարևոր տեղեկությունների այդ համակցության որոշակի դրվագներ, այնուամենայնիվ, նշված ժամանակահատվածի ավարտից հետո, երբ այնտեղ կրկին վերահաստատվեց իրենց *լինելիական գոյատևման* համեմատաբար նորմալ գործընթաց, կրկին սկսեցին փոխանցվել հաջորդ սերունդներին բացառապես միայն «ճշմարիտ» ձեռնադրյալների միջոցով և, հաջորդաբար փոխանցվելով մի սերնդից մյուսին, անփոփոխ տեսքով հասան նույնիսկ ներկայիս քո սիրելիներին, թեկուզ և շատ քչերին:

Սակայն այդ ճշմարիտ գիտելիքների ընդհանուր թվից, որոնք մատչելի ու ճանաչելի էին դարձել իրենց որոշ մեծագույն նախնիների համար, ներկայիս քո սիրելիներին գործնականում մեխանիկորեն հասան միայն մի քանի աննշան դրվագներ, որոնք հիշյալ մոռալ ժամանակահատվածում լայնորեն տարածված էին այն ժամանակ դեռևս նոր կազմավորված Չինաստանի սովորական էակների մեծ մասի միջավայրում:

Ժամանակակից քո սիրելիների մեծ մասին մեխանիկորեն հասած այդ աննշան դրվագների մեջ նախ և առաջ կան մի քանի մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր է ավիոն կոչված բոլորմեկտեղյան գոյացությունից առանձնացնել նրա մի քանի ինքնուրույն ակտիվ տարրերը, երկրորդ՝ դրանց մեջ է «գույների համակցության օրենքը» և երրորդ՝ «յոթոտնային հնչյունային զամման»:

Ինչ վերաբերում է հին Չինաստանի եռուղեղ էակների բանականությանը հասանելի դարձած և ներկայիս քո սիրելիներին հասած թվարկածս երեք դրվագների գործնական արդյունքներից առաջինին, պետք է ասել, որ քանի որ այդ ավիոն կոչված ամբողջական գոյացության որոշակի

բաղկացուցիչ մասեր, այդ ժամանակներից սկսած, էակների հոգեկառույցի հատուկ առանձնահատկության շնորհիվ մշտապես գործածական են եղել նրանց համար, ապա դրա որոշակի առանձին ակտիվ տարրերի ստացման եղանակները փոխանցվել են սերնդեսերունդ և հասել ներկայիս քո սիրելիներին:

Նրանք հիմա էլ են ստանում այդ գոյացության որոշակի շատ մասեր և ազահաբար օգտվում դրանցից, որպեսզի բավարարեն նույն այդ կունդաբուֆեր օրգանի՝ իրենց ներսում բյուրեղացած հատկությունների հետևանքները:

Այդ բոլորմեկտեղության գոյացության ընդհանուր բաղադրությունից առանձնացված մասերին ներկայիս քո սիրելիներն, իհարկե, բոլորովին ուրիշ անուններ են տալիս:

Ժամանակակից «վայ-գիտնական քիմիկոս» ոմն Մենդելեևն նույնիսկ ի մի է բերել ստացված բոլոր ակտիվ տարրերի անվանումները և դասակարգել դրանք, այսպես կոչված, ըստ ատոմական կշիռների:

Թեև այդ դասակարգումը բոլորովին իրականությանը չի համապատասխանում, այնուամենայնիվ ըստ ատոմական կշռի հնարավոր է մոտարկել այն դասակարգումը, որն ստացել էին ապագա Չինաստանի այդ մեծ երկրային գիտուն էակները:

Ափիոնից ստացվող մոտ չորս հարյուր ակտիվ տարրերից, որոնք այն ժամանակ հայտնի էին դարձել այդ մեծ երկվորյակ եղբայրներին, ժամանակակից «երկրային քիմիկոսներին» միայն քառասուներկուսի ստացման մասին են գիտելիքներ հասել, և այդ 42 ակտիվ տարրերն այժմ հետևյալ անուններն են կրում.

- 1) մորֆին
- 2) պրոտոպին
- 3) լանտոպին
- 4) պորֆիրոկսին
- 5) ափիոն կամ նիկոտին
- 6) պարամորֆին կամ տեբաին
- 7) ֆորմին կամ կեղծ ֆորմին
- 8) մետաֆորմին
- 9) գնոսկոպին
- 10) օյյոպին
- 11) ատրոպին
- 12) պիրոտին
- 13) դեֆտերոպին
- 14) տիկտոտին
- 15) կոլոտին
- 16) խայվատին
- 17) գոռոտին
- 18) տրոտոպին
- 19) լաուդանին
- 20) լաուդանոզին
- 21) պոդոտոպին
- 22) արխատոզին
- 23) տոկիտոզին
- 24) լիկտոնոզին
- 25) մականիդին
- 26) պապավերին
- 27) կրիպտոնին
- 28) կոդամին
- 29) կոլոմոնին
- 30) կոյլոնոնին
- 31) կատարնին
- 32) հիդրոկատարնին

- 33) ափիոնին (մեկոնին)
- 34) մեկոնոյոզին
- 35) պիստոտորին
- 36) ֆիխտոնոզին
- 37) կոդեին
- 38) նարցեին
- 39) կեդծ կոդեին
- 40) միկրոպարաին
- 41) միկրոտեբաին
- 42) մեսսաին

Երբ ես վերջին անգամ քո այդ մոլորակում էի, լսեցի, որ Գերմանիա կոչվող հանրության ժամանակակից գիտուն էակները, այսպես կոչված, եղանակներ են գտել ափիոնից ևս մի քանի ինքնուրույն ակտիվ տարրեր առանձնացնելու համար:

Բայց քանի որ նախքան այդ ես արդեն համոզվել էի, որ այդ հանրության ժամանակակից «գիտնականները» նախ և առաջ՝ մեծ մասամբ միայն զոռ են տալիս իրենց երևակայությանը, և երկրորդ՝ հին Հունաստանի էակների նման ոչ մի լավ ու օգտակար բան չեն ստեղծում ապագա սերունդների համար, ապա չհետաքրքրվեցի այդ իրենց ասած նոր «գիտական նվաճումներով», ուստի հիմա չգիտեմ այդ նոր ակտիվ տարրերի անվանումները:

Ինչ վերաբերում է հինավուրց Չինաստանի էակների բանականությանը հասանելի դարձած գիտելիքների այն դրվագի գործնական արդյունքներին, որոնք հասել են ժամանակակից էակներին և առնչվում են «գույների համակցության օրենքին», ապա դրան վերաբերող ամբողջ տեղեկատվությունը թեև համարյա միշտ փոխանցվել է մի սերնդից մյուսին, սակայն տարեցտարի մեծ փոփոխությունների է ենթարկվել դեպի վատը և վերջնականապես մոռացվել ընդամենը երկու դար առաջ:

Ներկայումս այդ օրենքին վերաբերող որոշ տեղեկություններ դեռևս շարունակում են փոխանցվել և հայտնի դառնալ որոշ եռուղեղ էակների, որոնք պատկանում են այնտեղ «պարսիկներ» կոչվող էակների խմբին. բայց հիմա, երբ այսպես կոչված «եվրոպական գեղանկարչությունն» ավելի ու ավելի լայնորեն է տարածվում այդ խմբի էակների միջավայրում, պետք է, անշուշտ, սպասել, որ այդ տեղեկությունները ևս այնտեղ արագորեն ու ամբողջովին, ինչպես ասում է մեր հարգարժան ուսուցիչը, «հօդս կցնդեն»:

Իսկ ինչ վերաբերում է հինավուրց չինացի էակներից իրենց հասած «յոթոտնային հնչյունային գամմային», ապա այդ մասին քեզ պետք է տեղեկություններ հաղորդել հնարավորինս մանրամասն, քանի որ, նախ՝ այդ տեղեկատվության շնորհիվ դու ավելի լավ կհասկանաս տատանումների օրենքը, որի միջոցով հնարավոր է վեր հանել ու ճանաչել սրբազան Յոթնապարապարշինողի բոլոր առանձնահատկությունները, և երկրորդ՝ քանի որ քո հետաքրքրությունը շարժած այդ եռուղեղ էակների կողմից առօրյա գործածության համար միտումնավոր կերպով արտադրված բաների շարքում ես ինձ հետ տուն եմ բերել մի «ձայնարձակիչ գործիք», որն այնտեղ «դաշնամուր» է կոչվում, և որն իր ներսում ունի տատանումներ արձակող «լարեր», որոնք կարելի է դասավորել ճիշտ այնպես, ինչպես ձենսվողում՝ ալեհատթափան կոչված նշանավոր փորձարարական սարքավորման երկրորդ հատուկ մասում, որն ստեղծել էին մեծ երկվորյակ եղբայրները և որի միջոցով, երբ մենք վերադառնանք մեր հարազատ Քարատակը, ես կկարողանամ քեզ պարզորոշ բացատրել, այսպես կոչված, «տատանումների փոխմիահյուսման պրոցեսների հաջորդականությունը»: Այդ գործնական բացատրությունների շնորհիվ դու կկարողանաս հեշտությամբ պատկերացնել և մոտավորապես հասկանալ, թե հատկապես ինչպես և ինչ հաջորդականությամբ է մեր մեծ Մեգալակոսմոսում ընթանում Մեծ Տրոգոավտոեգոկրատի գործընթացը, և ինչպես են առաջանում մեծ ու փոքր տիեզերական խտացումները:

Քեզ պատմելով այն մասին, թե ճշմարիտ հինավուրց գիտելիքի այդ «գործնական արդյունքի» այդպիսի դրվագն ինչպես է պահպանվել և ինքնաբերաբար հասել ներկայիս քո սիրելիներին՝ ես նախ և առաջ մեծ ճշտությամբ քեզ կբացատրեմ տատանումների հենց այդ որոշակի օրենքը, որն առաջին անգամ այդ մեծն երկվորյակ եղբայրները ձևակերպել են որպես «յոթ ծանրակենտրոն ձայնային տատանումների» օրենք:

Ես արդեն ասել եմ, որ երբ ճշմարիտ տեղեկությունների այդ ամբողջությունը կամ «ճշմարիտ գիտելիքների» այդ դրվագն այնտեղ մի սերնդի էականներից միայն իսկական ձեռնադրյալների միջոցով էր փոխանցվում հետագա սերունդների էականներին, այն ոչ միայն չէր կորցնում իր մեջ եղած ճշգրիտ իմաստը, այլև նույնիսկ սկսում էր հետագա սերունդներին պատկանող նույնպիսի իսկական գիտուն էականների շնորհիվ «մանրամասնվել» և մատչելի դառնալ նույնիսկ սովորական եռուղեղ էականների ընկալման համար:

Սուրբ եղբայրների սրբազան Ռասկուարնոյից մեկուկես դար հետո եղավ Քինգ-Տու-Տոգ անունով ոմն իսկական գիտուն էակ, որն ակեհատթափան սարքավորման միջնամասի՝ ձենսվոդի կառուցման սկզբունքի հիման վրա առաջ քաշեց «տատանումների էվոյուցիա և ինվոյուցիա» անվամբ բավականին հանգամանալից մի տեսություն և այդ տեսությունը հաստատելու համար պատրաստեց «լավմեոցնոդ»²⁴ կոչվող հատուկ ցուցադրական մի սարք, որը, իմիջիայլոց, հետագայում լայնորեն հայտնի դարձավ մեր Մեգալակոսմոսի համարյա բոլոր գիտուն էականների միջավայրում:

Հիշյալ լավմեոցնոդ սարքն ակեհատթափանի միջնամասի նման կազմված էր շատ ամուր մի շրջանակից, որի վրա բազմաթիվ ձգված լարեր կային՝ պատրաստված այնտեղի զանազան չորքոտանի էականների աղիքներից ու պոչերի մագերից:

Յուրաքանչյուր լարի մի ծայրն ամրացված էր շրջանակի մի եզրին, իսկ մյուս ծայրը՝ մյուս եզրի վրա հարմարեցված ցցերից մեկին:

Այդ ցցերն այնպիսին էին, որ կարող էին ազատորեն պտտվել իրենց, այսպես կոչված «ցցային անցքերում», և նրանց վրա ամրացված լարերը դրանց միջոցով կարող էին ցանկացած չափով ձգվել կամ թուլանալ այնքան, որքան անհրաժեշտ էր պահանջված քանակի տատանումներ ստանալու համար:

Լավմեոցնոդի վրա ձգված բազմաթիվ լարերից քառասունինը ներկված էին սպիտակ գույնով, իսկ տատանումների համակցությունը, այսինքն՝ որոշակի հնչյունը, որն արձակվում էր դրանցից յուրաքանչյուրից, կոչվում էր «*օկտավայի ամբողջական ծանրության կենտրոն*», և այդ հնչյունները համապատասխանում էին ներկայիս քո սիրելիների ասած «ամբողջ տոներին»:

Այդ «*ծանրակենտրոն հնչյունները*» կամ ամբողջ տոնի նոտաներ հնչեցնող լարերի յուրաքանչյուր յոթնյակն ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա «օկտավա» է կոչվում:

Եվ այսպես, լավմեոցնոդ կոչված այդ սարքի վրա ձգված էին ամբողջ տոների յոթ օտավաներ, որոնց հնչողության ամբողջ համակցությունը տալիս էր, այսպես կոչված, «սրբազան հանգիանո»²⁵, այսինքն հենց այն, ինչ առաջարկում էին մեծն երկվորյակները, և այն, ինչը համարյա համընկնում էր այն ժամանակ նրանց անվանած «*նիրիունոսային համաշխարհային ձայնին*»:

Լավմեոցնոդի լարերի յուրաքանչյուր այդպիս օկտավա տալիս էր տատանումների այն համակցությունը, որն ըստ մեծն երկվորյակների հաշվարկների համապատասխանում է բոլոր այն տիեզերական նյութերի թրթիռների համակցությանը, որոնք, բխելով յոթ առանձին ու անկախ աղբյուրներից, կազմում են «հիմնական համատիեզերական անսապալյան օկտավայի» *յոթ ծանրության կենտրոններից* մեկը:

Լավմեոցնոդի ամեն մի սպիտակ լարն այդ չինացի գիտուն էակ Քինգ-Տու-Տոգը լարում էր այնպես, որ այն ունենա տատանումների հենց այն միջին թիվը, որն ըստ մեծն եղբայրների հաշվարկների պետք է ունենան նաև այն նյութերը, որոնք այն որոշակի նյութերի համակցության յոթ ծանրության կենտրոններից մեկն են, որոնք էլ իրենց հերթին նյութերի հիմնական տիեզերական օկտավայի ծանրության կենտրոններից մեկն են կազմում:

Լավմեոցնոդի ամեն մի օկտավան, ինչպես և դրանց ամեն մի ամբողջ տոնն ունեին իրենց առանձին անվանումները:

Այսպես՝

լարերի ամենաբարձր օկտավան կոչվում էր «առաջիապլմիշ»²⁶,

երկրորդ ամենաբարձր՝ «երկրորդիապան»,

երրորդ ամենաբարձրը՝ «երրորդիապան»,

²⁴ ռուս. տարբերակում՝ лав-мерц-нох, անգլ. տարբերակում՝ lav-mertz-nokh

²⁵ ռուս. տարբերակում՝ ханзиано, անգլ. տարբերակում՝ hanziano

²⁶ ռուս. տարբերակում՝ арачъяплниш(?), անգլ. տարբերակում՝ arachiaplmish(?)

չորրորդ ամենաբարձրը՝ «չորրորդդիապան»,
հինգերորդ ամենաբարձրը՝ «փյանջիապան»²⁷,
վեցերորդ ամենաբարձրը՝ «վեցերորդդիապան»,
յոթերորդ ամենաբարձրը՝ «օխտերորդդիապան»²⁸:

Իսկ բուն սպիտակ գույնի «*ծանրակենտրոն լարերը*» բոլոր օկտավաներում նույն անունն էին կրում, սակայն համապատասխան օկտավայի անվան հավելումով:

Այդ ամբողջ տոներն անվանվում էին հետևյալ կերպ.

առաջին ամենաբարձրը՝ «ադաշտանես»,
երկրորդ ամենաբարձրը՝ «էվոտանես»,
երրորդ ամենաբարձրը՝ «գևորգտանես»,
չորրորդ ամենաբարձրը՝ «մայքլտանես»,
հինգերորդ ամենաբարձրը՝ «միդոտանես»,
վեցերորդ ամենաբարձրը՝ «լուկոտանես»,
յոթերորդ ամենաբարձրը՝ «սոնիտանես»:

Երկրի ներկայիս էակներն այդ յոթ ամբողջ տոները հիմա այսպես են կոչում՝ «դո», «սի», «յա», «սոլ», «ֆա», «մի», «ռե»:

Իմիջիայլոց, զավա՛կս, որպեսզի այդ երկու սուրբ եղբայրների մեծությունը քեզ համար էլ ավելի ակներև դառնա, քո ուշադրությունը հրավիրում եմ այն բանի վրա, որ նրանց հաշվարկներն ու դրանց հիման վրա ստացված, այսպես կոչված, հնչյունի «տատանումների կենսականության» որակը, որն ըստ նրանց ենթադրության պետք է համապատասխաներ նյութերի տիեզերական աղբյուրների կենսականությանը՝ պարզվեց, որ համարյա ճշգրիտ համապատասխանում է իրականությանը:

Նրանց այդ ավանդն այնքանով էր մեծ, որ, լինելով երկրային էակներ, նրանք այդ մասին ճշմարիտ տեղեկություններ չունեին, բայց կարողացան ճիշտ ենթադրություններ անել և համարյա ճշգրիտ հաշվարկներով հասնել տիեզերական օբյեկտիվ շատ ճշմարտությունների՝ հենվելով միայն սեփական գիտակցական աշխատանքի ու կամավոր տառապանքի վրա:

Այդ լավմեղցնող կոչվող սարքի վրա, այդ չինացի գիտուն էակ Քինգ-Տու-Տոգն այնուհետև որոշակի տեղերում՝ յուրաքանչյուր օկտավայի սպիտակ գույնի նոտաների միջև քաշեց ևս հինգական լարեր՝ այս անգամ դրանք ներկելով սև գույնով:

Այդ սև լարերը նա անվանեց «դեմիսադսադսա»²⁹, ինչը Երկրի էակների տերմինաբանությամբ անվանվում է «կես-տոն նոտա», և այդ «կես-տոնի» լարերը լավմեղցնողի վրա ձգված էին ոչ այն ամբողջ տոների լարերի միջև, որոնց միջև, ըստ սուրբ եղբայրների Չուն Կիլ Տեզի ու Չուն Տրո Պելի ցուցումների՝ համաձայն սրբազան Յոթնապարապարշինողի՝ ձայնային տատանումներն անկախ էվոլյուցիայի ու ինվոլյուցիայի հնարավորություն չունեն, և իրենք դրանք կոչել էին «միջակայքեր»:

Եվ ահա օկտավայի հենց այդ մասերում, որտեղ այդ միջակայքերը պետք է լինեին, Քինգ-Տու-Տոգ անունով գիտուն էակն ամբողջ տոների միջև քաշեց հատուկ լարեր, որոնք պատրաստված էին այնտեղ «ծի» կոչվող էակի պոչի մազերից:

Այդ մազե լարերը ոչ միշտ էին միատեսակ տատանումներ առաջացնում, ուստի Քինգ-Տու-Տոգն այդ տատանումներն անվանեց «քառսային»:

Այդ մազե լարերից ստացվող տատանումների քանակը կախված էր ոչ թե լարերի ձգվածությունից, ինչպես մյուս լարերինը, այլ պայմանավորված էր ուրիշ պատճառներով. դրանք գլխավորապես երեքն էին, որոնք բխում էին շրջակա տիեզերական արգասիքներից, որոնք են՝ լավմեղցնողի մյուս լարերից ստացված և դրանց շուրջը ցրվող տատանումները, շրջակա մթնոլորտի՝ տվյալ պահին ունեցած «ջերմաստիճանային վիճակը» և մոտակայքում եղած էակների ճառագայթումները՝ անկախ նրանց ուղեղային համակարգերից:

Լավմեղցնող սարքի ամեն օկտավայի սպիտակ, սև և մազե լարերի միջև ձգվում էին «ոլորված աղիքներից» շինված ևս տասնչորս լարեր, որոնք ներկված էին կարմիր գույնով և կոչվում էին

²⁷ ռուս. տարբերակում՝ пяджапан, անգլ. տարբերակում՝ piannnjiapan

²⁸ ռուս. տարբերակում՝ октерордиapan, անգլ. տարբերակում՝ okhterordiapan

²⁹ ռուս. տարբերակում՝ демисахсахса, անգլ. տարբերակում՝ demisakhsakhsa

«կեսիկեսչուր»³⁰». Եթե Երկրի ներկայիս էակներն օգտվեին այդ լարերից, ապա դրանց կանվանեին «քառորդ տոներ»:

Բացի դրանից, բոլոր այդ քառորդ տոնի լարերը, որոնք տեղաբաշխված էին մազե լարերի երկու կողքերին, ցանկության դեպքում ձգվում կամ թուլացվում էին այնպես, որ դրանցից արձակված տատանումները լսողության համար միաձուլվեին մազե լարերի հաճախակի փոփոխվող տատանումներին:

Այդպես էր արվում, քանի որ մազե լարերի տատանումների թիվը, ինչպես արդեն ասել եմ, դրանց որակի պատճառով հաճախ փոխվում էր՝ կախված մթնոլորտի ջերմաստիճանից, մոտակայքում գտնվող էակների ճառագայթումներից և բազմաթիվ այլ պատճառներից, իսկ «կարմիր լարերի» տատանումներն օժտված էին այնպիսի հատկությամբ, որ եթե դրանք միախառնվեին մազե լարերի տատանումներին, ներկա գտնվող էակների համար կարող էին լինել խառնափնթոյր-վնասակար, հնարավոր է՝ նույնիսկ նրանց լրիվ ոչնչացնելու աստիճանի:

Սակայն կարմիր լարերի ձգվածության հաճախակի փոփոխության դեպքում, երբ դրանց արձակված տատանումները միահյուսվում էին լավմեղնողի արձակված ընդհանուր տատանումներին, դառնում էին անվնաս, այլ կերպ ասած, դրա շնորհիվ լավմեղնողից բխած ընդհանուր տատանումներն ունկնդիրների համար դառնում էին, այսպես ասած, «ներդաշնակորեն հոսող» և ոչ վնասակար:

Եվ ահա, զավա՛կս, ինչպես այդ լավմեղնող կոչված սարքին, այնպես էլ գիտակից էակ Քինգ-Տու-Տոգի հանգամանակից տեսությանը վիճակվեց արժանանալ նույն ճակատագրին, ինչին արժանացել էին նմանը չունեցող ալեհատթափան սարքավորումն ու ճշմարիտ տեղեկությունների այն ամբողջությունը, որոնց հասել էին երկվորյակ եղբայրները:

Անընդհատ շարունակվող և քանակային առումով նույնիսկ աճող քո սիրելիների նշածս նոր տեսակի ձևավորման պատճառով, որոնք օժտված են անգուսպ իմաստակելու ընդգծված հատկությամբ, տեղեկությունների այդ ամբողջությունն այն ժամանակից սկսած լրիվ փոփոխվել է, իսկ դրա ճշմարիտ իմաստն ու նշանակությունը՝ աստիճանաբար մոռացվել:

Իսկ ինչ վերաբերում է նրան, թե ինչպես է լավմեղնող սարքի ու ալեհատթափան սարքավորման ձենավոր մասի լարերի դասավորության ընդհանուր սկզբունքն ինքնաբերաբար հասել ժամանակակից քո սիրելիներին, ապա դա տեղի է ունեցել հետևյալ պատճառներով:

Երբ հիշյալ «խառնակ ժամանակների» սրությունն արդեն անցյալում էր, երբ քո այդ մոլորակի դեռևս «համեմատաբար նորմալ» եռուղեղ էակների բանականության մեծ նվաճումների որոշ պահպանված դրվագներ կրկին սկսեցին հաջորդ սերունդներին փոխանցվել այն նույն եղանակով, որը նախքան այդ ժամանակներն արդեն հաստատվել էր նրանց սովորական գոյատևման գործընթացում, այսինքն՝ միայն այն էակների միջոցով, որոնք արժանացել են ճշմարիտ ձեռնադրյալներ կոչվելուն ու համապատասխան գիտելիքներ ստանալուն, և երբ տարեցտարի վերջիններին շարքերում ավելի ու ավելի էին շատանում վերը նշված հատկությամբ օժտված էակները, ահա հենց այդ ժամանակահատվածում նույն Չինաստանում ի հայտ եկավ «նոր տեսակի գիտունների» թվին պատկանող Չայ-Յու անունը կրող մի եռուղեղ էակ, որն իր պատասխանատու տարիքում պատճառ դարձավ, որ այդ «յոթտոնային հնչյունային գամմային» առնչվող գիտելիքն ու դրա գործնական կիրառությունը հանրամատչելի դարձան և, սերնդեսերունդ փոխանցվելով, ինքնաբերաբար հասան ներկայիս քո սիրելիներին:

Իր պատասխանատու գոյության առաջին տարիներին այդ Չայ-Յուն, շնորհիվ իր անհատական համապատասխան արժանիքների, հավակնում էր «առաջին աստիճանի ձեռնադրյալի» թեկնածության, ուստի և նրան համապատասխան օգնություն ցուցաբերվեց (ինչի մասին նա ինքը չգիտեր՝ համաձայն վաղուց հաստատված ավանդույթի)՝ ճշմարիտ ձեռնադրյալների կողմից, որոնք պետք է դա անեին, որպեսզի համակողմանի տեղեկատվություն ստանալին անցյալում իրենց մոլորակում իրապես տեղի ունեցած զանազան իրադարձությունների վերաբերյալ:

Եվ, ինչպես ցույց տվեցին իմ հետագա մանրագին հետազոտությունները, ամեն ինչից զատ նրան նաև տեղեկություններ են փոխանցվել նշանավոր լավմեղնող սարքի և դրա կառուցվածքի մանրամասների վերաբերյալ:

³⁰ ռուս. տարբերակում՝ кисукечур, անգլ. տարբերակում՝ kiskeschoor

Եվ այնժամ այդ Չայ-Յուն, լինելով առաջինները մեկը «կատարելապես ձևավորված նոր կերտվածքի գիտնականների» շարքում, այսինքն՝ «իմաստակություն բանեցնելու լիովին ձևավորված հատկություն» ունեցող էակ, միայն այն բանի համար, որ շրջապատի իր նման էակներն իրեն «գիտուն» համարեն, ստացված տեղեկությունների հիման վրա, որոնք վերաբերում էին լավմեղմանոց նշանավոր սարքի բաղկացուցիչ մասերին, բացարձակապես ոչինչ չպնդելով ու չհերքելով ոչ միայն «իմաստակեց» իր սեփական տեսությունը տատանումների օրենքի վերաբերյալ, այլ նաև շինեց պարզեցված նոր «ձայնարձակիչ գործիք», որն անվանեց «արքա»:

Նրա պարզեցումն այն եղավ, որ բոլորովին ուշադրություն չդարձնելով լավմեղմանոցում առկա կարմիր ու մազե լարերի վրա՝ իր ձայնարձակիչ սարքում տեղադրեց միայն սպիտակ ու սև լարեր, ընդ որում՝ միայն երկու օկտավա, և դրանք տեղաբաշխեց այնպես, որ մեջտեղում գտնվող մեկ ամբողջական օկտավան, որպես իր էվոլյուցիոն և ինվոլյուցիոն շարունակություններ՝ կես օկտավա ուներ վերևում և կես օկտավա ներքևում:

Այդպիսով, թեև այդ Չայ-Յունի «իմաստակած» տեսությունը նույնպես երկար կյանք չունեցավ, բայց արքա կոչված նրա ձայնարձակիչ գործիքն իր պարզության շնորհիվ հանրամատչելի դարձավ. և քանի որ որ դրա միտումնավոր գործարկման արդյունքը շատ լավ ու պիտանի եղավ, որպեսզի, այսպես ասած, շատ տվյալներ «խտրտացնի», որոնք նրանց ընդհանուր ներկայություններում բյուրեղացել էին կոնկրետ օրգանի հատկությունների հետևանքների պատճառով, ապա այդ գործիքը սկսեց ինքնաբերաբար փոխանցվել մի սերնդից մյուսին:

Թեև այդ ձայնարձակիչ գործիքի արտաքին տեսքն՝ իր շրջանակի կառուցվածքով, լարերի երկարությամբ ու նրանց անուններով հանդերձ, շատ անգամ են փոխվել հետագա սերունդների էակները և այն ի վերջո վերածել ապուշության աստիճանի բարդացված ու ծանրաքաշ ձայնարձակիչ գործիքների, որոնք իրենց հնարավորություններով այլասերվել են մինչև «դեռահասության աստիճանը», ինչպես, օրինակ, «կլավեսինը», «կլավիկորդը», «երգեհոնը», «դաշնամուրը», «ռոյալը», «ֆիսհարմոնիան» և այլն, այնուհանդերձ մինչև այժմ պահպանվել է, այսպես կոչված, «ծանրակենտրոն հնչյունների հերթագայության» հիմնական սկզբունքը, որը սուրբ եղբայրներ Չուն Կիլ Տեգն ու Չին Տրո Պեյն իրականացրել էին ձեռնարկում՝ իրենց ստեղծած և ալեհատթափան կոչված աննման փորձարարական սարքավորման ինքնուրույն գործող միջնամասում:

Ահա թե ինչու, զավա՛կս, այդ, ինչպես հիմա այնտեղ են ասում՝ «հնչյունային օկտավայի չինական յոթոնային բաժանումը», որը պարզեցվել է հիշյալ Չայ-Յունի կողմից, հասել ներկայիս քո սիրելիների և ներկայումս օգտագործվում է իմ թվարկած իրենց բոլոր ձայնարձակիչ գործիքներում, դեռևս կարող էր, ինչպես արդեն ասել եմ, մասամբ ծառայել «գործնական համադրական հետազոտությանն» ու ըմբռնմանը, թե ինչպես են Մեծագույն Տրոգոսկոպիկ գործընթացում, այսպես ասած, «տատանումների փոխադարձ անցումներից» առաջանում տարբեր «խտություն» ու «կենսականություն» ունեցող տիեզերական նյութեր, և թե ինչպես են դրանք միանալով ու տրոհվելով ձևավորում մեծ ու փոքր «համեմատաբար ինքնուրույն» խտացումներ և այդ եղանակով իրականացնում համատիեզերական իրանիքանումանգալը:

Դեռ ավելին՝ դու դրանում ինքդ կհամոզվես, երբ Քարատակ վերադառնալուց հետո, իմ խոստմանը՝ համաձայն, ես քեզ գործնականորեն կբացատրեմ այդ ժամանակակից ձայնարձակիչ գործիքի՝ դաշնամուրի ձայների հնչեցման իմաստը, որն այլ իրերի հետ մեկտեղ քո այդ մոլորակից ես տարել եմ տուն, որպեսզի ազատ ժամանակ այնտեղ փորձնական ճանապարհով ինձ համար պարզեմ դրա առանձնահատկություններից մեկը, որը տեղում պարզելու համար բավարար ժամանակ չունեցա, և որը կապ ունի քո հետաքրքրությունը շարժած էակների արտառոց հոգեկառույցի և նրանց շուրջը ծագող ու տարբեր կենսականություն ունեցող տատանումների հետ:

Եվ եթե դրանից բացի քո սիրելիների արտառոց հոգեկառույցի վերաբերյալ ես հիմա ավելացնեմ նաև այն, ինչը փաստեցի վերջին անգամ նրանց միջավայրում եղածս ժամանակ, այն է՝ որ քո այդ մոլորակի ժամանակակից եռուղեղ էակներից ոչ մեկը (չնայած այն բանին, որ բոլոր իրենց այդ ձայնարձակիչ գործիքների հիմքում դնելով նույն այդ «չինական յոթոնային բաժանումը», համարյա ամեն օր ունկնդրում են դրա հետևանքների արգասիքները) ոչ միայն չի ոգևորվում, ինչպես օբյեկտիվորեն պետք է լիներ, այլև նրանք, առանց խղճի խայթ զգալու և նույնիսկ բավարարվածության ազդակ ապրելով, այդ համահնչունության ազդեցությամբ միտումնավոր կերպով իրենց ներսում պահպանում են իրենց բոլոր ոգեկոչված մասերի այն բոլոր նմանազգացությունների հոսքը, որոնք

իրենց ներկայություններում առաջանում են նրանց համար անիծյալ կոնդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների բյուրեղացված նախադրյալների դրդմամբ, ապա ես վստահ եմ, որ դու այդ դաշնամուրի գործնական ցուցադրությունից հետո ոչ միայն մոտավոր պատկերացում կստանաս բոլոր այդ, այսպես կոչված, «մեկը մյուսից ստացվող և ներդաշնակորեն հոսող ծանրակենտրոն տատանումների» մասին, այլև զարմանքի ազդակով ևս մեկ անգամ քեզ համար կփաստես, թե քո սիրելիների ընդհանուր ներկայություններում ինչ աստիճանի է թուլացած այն *լինելիական նախադրյալների* ազդեցության էությունը, որոնք հարկ է, որ ընդհանրապես բյուրեղանային բոլոր եռուղեղ էակների ներկայություններում, և որոնց ամբողջությունը կոչվում է «*բնագդի արագընթացություն*»:

Այսպիսով, գավա՛կս, քանի որ մի կողմից՝ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում անշեղորեն շարունակում է վատանալ նրանց ներսում առողջ *լինելիական մտածողության* համար բյուրեղացված նախադրյալների գործառությունների որակը, և մյուս կողմից՝ այն պատճառով, որ նրանց մեջ ավելի ու ավելի շատ են նշածս նոր «տեսակին» պատկանող պատասխանատու էակներ ձևավորվում՝ նոր տեսակի գիտուն էակներ, ապա այդ մանրամասն և աստիճանաբար փոփոխվել սկսած «տեղեկատվության ամբողջությունից», որն արդեն յուրացվել է նախկին ժամանակներում գոյատևած իրենց նման էակների բանականությամբ և իր նախադեպը չունի համայն Տիեզերքի բոլոր եռուղեղ էակների մեջ, ճշմարիտ տեղեկությունների այդ ամբողջությունը, որը ներկայումս արդեն ի բարին է գործածվում բոլոր սովորական եռուղեղ էակների համար, բացառությամբ հենց այն մոլորակի էակների, որտեղ ծագել է այդ տեղեկությունների ամբողջությունը, ահա այդ չարաղետ մոլորակի ժամանակակից եռուղեղ էակներին վերջին հաշվով հասել է միայն այն, ինչը մեր հար գարժան մոլլա Նասրեդինը բնութագրում է հետևյալ բառերով. «Փա՛ռքդ շատ, Տե՛ր, որ գայլի ժանիքներն իմ թանկագին գոմեշի պոզի՛ նման չես ստեղծել, և հիմա ես կարող եմ դրանցից մի քանի հրաշալի սանր շինել սիրելի կնոջս համար»:

Իսկ ինչ վերաբերում է ներկայիս քո սիրելիներին հասած «օկտավայի չինական յոթտոնային բաժանմանը», ապա թեև, ինչպես արդեն ասել եմ, նրանք իրենց սովորական գոյատևման ընթացքում դրանից լայնորեն օգտվում են, միաժամանակ չեն էլ կասկածում, որ նման բաժանումը հատուկ է ստեղծված ու կառուցված հնչյունային այնպիսի սկզբունքներով, որոնց վրա է հիմնված մեր Մեծ Մեգալակոսմոսում գոյություն ունեցող ամեն ինչը:

Եթե հաշվի չառնենք Ասիա աշխարհամասում եղած որոշ ոչ մեծ խմբերի սակավաթիվ եռուղեղ էակներին, որոնք բնագդով զգացել են «ամբողջական հնչյունը յոթ որոշակի ծանրության կենտրոնների բաժանելու չինական եղանակի» գաղտնի իմաստը և գործնականում իրականացրել են դա միայն իրենց այնպիսի *լինելիական դրսևորումներում*, որոնք սրբազան էին համարում, ապա համարձակ կարելի է ասել, որ քո այդ մոլորակում վերջին հարյուրամյակների ընթացքում ծնված համարյա բոլոր եռուղեղ էակների ներկայություններում արդեն ամբողջովին դադարել են բյուրեղանալ տվյալները, որոնք անհրաժեշտ են այդ բաժանման մեջ ներդրված մտքի թռիչքն ու նշանակությունը ճանաչելու համար, իսկ ինչպես նույն այդ Ասիա աշխարհամասում, այնպես էլ քո այդ մոլորակի ցամաքային մակերևույթի մնացած մասերում բազմացող ժամանակակից եռուղեղ էակները, իսպառ կորցնելով ցանկացած բնագդական զգացողություն, բոլորն առանց բացառության դրանից օգտվում են, որպեսզի սոսկ բավարարեն իրենց որոշ նպատակներ, որ վայել չեն եռուղեղ էակներին:

Բայց ամենահետաքրքրականն իմ այս ամբողջ պատմության մեջ, որը վերաբերում է քո այդ մոլորակում բազմացող եռուղեղ էակների՝ հատկապես ժամանակակիցների կողմից Յոթնապարապարշինող սրբազան օրենքի ճանաչմանը, այն է, որ թեև ներկայումս նրանց միջավայրում կրկին սկիզբ է առել և, այսպես ասած, «մեխանիկորեն սերտվում է» մասնագիտական տեղեկությունների այլազան հավաքածուների մեծ քանակություն կամ, ինչպես իրենք են արտահայտվում, «գիտական գիտելիքների առանձին բնագավառներ», այնուամենայնիվ բացարձակապես ոչինչ չգիտեն «տատանումների օրենքի»՝ կարևոր մի բնագավառի մասին, որը թեկուզ մոտավոր կերպով, բայց հնարավորություն է տալիս ճանաչելու իրականությունը (եթե, իհարկե, հաշվի չառնենք այն նշանավոր, այսպես կոչված, «ձայնի տեսությունը», որն այնտեղ վերջերս է ծագել ու լրջորեն ուսումնասիրվում է՝ արդեն, այսպես ասած, «հայտնի» դառնալով իրենց, այսպես կոչված, «գիտնական ֆիզիկոսներին» ու «գիտնական երաժիշտներին»):

Որպեսզի դու, այսպես ասած, «հստակ պատկերացնես» ներկայիս քո սիրելիների էությունը, նաև հաշվի առնելով այն, որ գիտելիքների այդ բնագավառին վերաբերող զանազան թյուրիմացությունների առաջացման՝ քո սիրելիներից ոմանց միջավայրում լայնորեն տարածված պատճառները շատ բնորոշ են իրենց և քեզ համար հրաշալի նյութ կարող են ծառայել, որպեսզի պատկերացնես ու գնահատես իրենց, այսպես կոչված, «ձգրիտ գիտության» մնացած բոլոր առանձին բնագավառների իմաստն ու օբյեկտիվ նշանակալիությունը, ես անհրաժեշտ եմ համարում քեզ ավելի մանրամասն բացատրել, թե «ձայնային տատանումներին» վերաբերող ինչպիսի տեսություններ են ուսումնասիրվում հիշյալ ժամանակակից երկրային «վալ-գիտնականների» կողմից և, այսպես ասած, հայտնի են դարձել նրանց:

Բայց, նախքան այդ մասին խոսելը, իմ էությունը կրկին ստիպում է իմ ամբողջ ընդհանուր ներկայությանը, որ իմ անկեղծ ցավակցությունն արտահայտեմ երկրային բոլոր ժամանակակից եռուղեղ էակների ճակատագրի համար, որոնք, շնորհիվ իրենց համառության, իրենց բնորոշ *լինելիական պարտք-պարտականությունը* դրսևորելիս ի վերջո հասնում են բանականության այն աստիճանի վիճակին, որը նրանց համար անխուսափելի է դարձնում իրենց ներկայություններում նաև տատանումների օրենքին վերաբերող ճշմարիտ տեղեկությունների բնագավառից տվյալներ ունենալը:

Նմանազգացորեն այս պահին ես այդ մասին ավստսանքի ազդակով եմ հիշում, քանի որ վերջին անգամ նրանց միջավայրում գտնվելու ժամանակահատվածում շատ է պատահել, որ հանդիպել եմ այնպիսի եռուղեղ էակների, որոնք իրենց, այսպես ասած, «հոգեկան կատարելության» վիճակից ելնելով, հարկ է, որ անպայման կլանեին ու իրենց ներսում մշակեին հատկապես տատանումների օրենքին վերաբերող ճշմարիտ տեղեկություններ. միաժամանակ հստակ հասկանում եմ, որ նրանք ոչ մի տեղից չէին կարող ստանալ այդ տեղեկությունները:

Ճիշտ է, ներկայումս նրանք իրենց ձեռքի տակ ունեն այդպիսի «տեղեկությունների համակցություն», կամ, ինչպես իրենք են անվանում, «տատանումների տեսություն». սակայն նման տեղեկությունների կարիքն ունեցող նշված ժամանակակից էակները, որքան էլ ջանան ու ցանկանան, չեն կարող իրենց որոնումներով ստանալ քիչ թե շատ բավարար արդյունք՝ բացի զանազան սխալ պատկերացումներից ու հակասություններից:

Այսպիսով, զավա՛կս, երկրային նման սխալ պատկերացումների առաջացման հիմքում ընկած է այն, որ «տատանումների օրենքի» հետ առնչվող տեղեկությունների զանազան դրվագները ժամանակակից էակներին են հասել երկու ինքնուրույն աղբյուրներից՝ այդ հին չինացիներից ու այն հին հույներից, որոնց մասին, եթե հիշում ես, ես արդեն պատմել եմ, որ նրանց հանրությունն Ասիա և Եվրոպա աշխարհամասերի միջև կազմավորել էին այն ասիացի ձկնորսները, որոնք վատ եղանակի ժամանակ ձանձրությից հորինում էին զանազան «գիտություններ», որոնց շարքին էր պատկանում նաև հենց այդ «ձայնային տատանումների մասին գիտությունը»:

Եվ նրանց այդ գիտությունը նույնպես, սերնդեսերունդ փոխանցվելով, նշված չինական գիտության հետ համարյա միաժամանակ հասել է ներկայիս քո սիրելիներին:

Բոլոր հետագա թյուրիմացությունները սկիզբ առան այն բանից, որ հին չինացիներից իրենց հասած տեղեկատվության մեջ նշված էր, որ «տատանումների լրիվ օկտավան» պարունակում է յոթ «հենակետային հնչյուններ», այսինքն օկտավան բաղկացած է յոթ «ծանրակենտրոն հնչյուններից». մինչդեռ հունական տեղեկատվության մեջ ասված էր, որ «տատանումների լրիվ օկտավան» ունի ընդամենը հինգ հենակետային հնչյուն, այսինքն օկտավան բաղկացած է հինգ ծանրության կենտրոններից կամ հինգ ամբողջ տոներից:

Այդպիսով, միայն այն բանի պատճառով, որ վերջին դարերի քո սիրելիների ներկայություններում բյուրեղացված «*լինելիական մտածողության*» համար անհրաժեշտ նախադրյալների գործունեությունը սկսել էր ընթանալ, ինչպես այնտեղ են ասում, համարյա «գլխիվայր շուտ եկած», ինչպես նաև այն պատճառով, որ կատարելապես տարբեր աղբյուրներից իրենց հասած այդ երկու տեղեկություններն, ըստ նրանց խղճուկ տրամաբանական մտածողության, հավասարապես ճշմարտանման էին թվում, ժամանակակից քաղաքակրթության այդ էակները, որոնք սկսել էին բլիթների պես նորովի թխել ամեն տեսակի առանձին գիտություններ, մի քանի տարով ընկան, այսպես կոչված, «տանջալից տարակուսանքների» վիճակի մեջ՝ ոչ մի կերպ չկարողանալով որոշել, թե այդ երկու իրար հակասող տեսություններից որին նախապատվություն տան, դրանցից որ մեկն ընդունեն և ընդգրկեն իրենց «պաշտոնական գիտության» բնագավառների շարքում:

Այն բանից հետո, երբ արդեն, ինչպես իրենք են մինչև հիմա երբեմն ասում, «առատորեն լորձունք էին շաղ տվել», նրանք վերջապես որոշեցին, հանուն ոչ մեկին չնեղացնելու և հանուն այդ բնագավառն իրենց գիտության մեջ ունենալու, միավորել հինավուրց ժամանակներից իրենց հասած և իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող այդ երկու տեսությունները մեկի մեջ: Իսկ ավելի ուշ, երբ նրանցից մեկը՝ Գայդարոպուլոն անունով, այդ թյուրիմացության համար հորինեց երկարաշունչ «մաթեմատիկական» բացատրություն այն մասին, թե ինչու է մի տեսության մեջ հիշատակվում օկտավան յոթ «ամբողջ ձայների» բաժանելու մասին, իսկ մյուսում՝ հինգ, և թե ինչպես ու ինչու է նման կարևոր հակասություն ծագել, ապա նրա այդ մաթեմատիկական բացատրությունները միանգամայն հանգստացրին ժամանակակից քաղաքակրթության բոլոր համապատասխան ներկայացուցիչներին, այնպես որ հիմա նրանք հանգիստ խղճով ի կատար են ածում տատանումներին վերաբերող բոլոր իրենց իմաստակությունները՝ դրա համար հիմք ընդունելով այդ հաճկատար Գայդարոպուլոյի «մաթեմատիկական բացատրությունները»:

Այդ մաթեմատիկական բացատրությունները հենված են հետևյալ դատողությունների վրա:

Այդ, այսպես ասած, հաճկատար Գայդարոպուլոն միայն իրեն հայտնի եղանակով հաշվել է բոլոր չինական ամբողջ տոների տատանումների թվերը և փորձել բանը բացատրել այնպես, թե իբր չինական «յոթտոնային օկտավայի» այն ամբողջ տոները, որոնք «մի» և «սի» անուններն են կրում, բոլորովին էլ ամբողջ տոներ չեն, այլ կես տոնի նոտաներ են, քանի որ դրանց տատանումների քանակը մոտավորապես համընկնում է հունական այն կես տոն ունեցող նոտաների տատանումներին, որոնք, համաձայն օկտավայի հունական բաժանման, տեղաբաշխված են չինական «ռե», «ֆա» և «սի», «դո» ամբողջ տոների միջև:

Ապա նա ենթադրել է, որ երևի չինացիներին հարմար է եղել նաև կես տոների համար ունենալ ձայնի հենակետ՝ «ծանրության կենտրոն», դրա համար էլ նրանք ոչ թե հույների նման օկտավան բաժանել են հինգ ամբողջ տոների, այլ յոթի. այնուհետև էլ ինչ-որ բաներ՝ նույն ոգով:

Ինչպես արդեն ասացի, պարոն Գայդարոպուլոյի այդ բացատրություններից հետո մնացած բոլոր նոր կերտվածքի գիտուն էակները լիովին հանգստացան՝ այդ բնագավառի վրա նույնպես կայցնելով պաշտոնական գիտության պիտակ:

Եվ հիմա «տատանումների օրենքի տեսություն» անունը կրող այդ բնագավառը նրանց մոտ ապրում է, ինչպես մեր իմաստուն ուսուցիչ մոլլա Նասրեդինը կասեր, «իր համար հանգիստ շվշվացնելով»:

Այս առիթով ես միշտ հիշում և կամա-ակամա չեմ դիմանում, որ բարձրաձայն չարտաբերեմ մեր հար հարգարժան մոլլա Նասրեդինի նաև այն ասույթը, որը նա ձևակերպել է հետևյալ բառերով. «Հէ յ, դուք, քյաֆուրստանի տխմարնե ր, ձեզ համար մեկ չէ՞, թե ինչ եք լծում գյուղական գործին՝ ջորի՞, թե նապաստակ: Չէ՞ որ այդ երկու կենդանիներն էլ չորքոտանի են...»:

Ներկայիս քո սիրելիներն, իհարկե, չգիտեն և նույնիսկ չեն էլ կասկածում, որ օկտավան ամբողջ տոների բաժանելու այդ երկու եղանակները, որոնք իրենք չինական ու հունական են անվանում, իրենց ծագման հիմքում ունեն բացարձակապես տարբեր պատճառներ. առաջինը՝ չինականը, ինչպես արդեն ասել եմ, արդյունք է հիմնարար և Երկրում մինչ այդ ու դրանից հետո իր նախադեպը չունեցող մի բացահայտման, որը մեծ գիտնականներ երկվորյակ եղբայրներն իրականացրել են Յոթնապարապարշինող օրենքի առումով, իսկ երկրորդը՝ հունականը, արվել է միայն, այսպես կոչված, «ձայնի հենակետային հնչյունների» հիման վրա, որոնք հույների ձայներում առկա էին այն ժամանակաշրջանում, երբ կազմվել է «հինգտոնային հունական օկտավան»:

Ձայնի այդ հենակետային հնչյունները, կամ, ինչպես իրենք են դեռևս երբեմն անվանում, «ձայնի թեթև հնչյունները» կազմավորվել են քո սիրելիների մոտ և էլի շարունակում են կազմավորվել համարյա այնքան ժամանակ, որքան գոյություն ունեն այն ինքնուրույն խմբավորումները, որոնց իրենք բաժանվել են և շարունակում են բաժանվել. և դա տեղի է ունենում այն պատճառով, որ ձայնի այդ թեթև հնչյուններն էականորեն մոտ ընդհանրապես ձևավորվում են արտաքին ու ներքին շատ պայմանների արդյունքում, որոնք իրենցից կախված չեն, ինչպիսիք են, օրինակ, աշխարհագրական, ժառանգական, կրոնական, «սննդի որակի» հետ և «փոխադարձ ազդեցությունների» հետ կապված պայմանները և այլն, և այլն:

Ներկայիս քո սիրելիներն իհարկե չեն կարող հասկանալ, որ այդ հինավուրց հույները որքան էլ ջանային, կամ, այսպես ասած, որքան էլ բարեխիղճ վերաբերմունք ցուցաբերեին այդ «գործին», իրենց

ողջ ցանկությամբ հանդերձ չէին կարողանա հնչյունային օկտավան որոշակի տոների բաժանելիս գտնել ոչ ավել, ոչ պակաս, քան այդ հինգ ամբողջ տոները, քանի որ ներքին ու արտաքին իրենցից անկախ պայմանների ամբողջ համակցությունը նրանց հնարավորություն էր տալիս իրենց երգեցողության համար հենվել միայն իրենց ունեցած ձայնային հինգ հենակետային հնչյունների վրա:

«Հենակետային» կամ ծանրակենտրոն են անվանվում էակների ձայներում առկա այն նոտաները, որոնք, հնչելով էակի համապատասխան ձայնային օրգանների միջոցով, դրսևորում են նրա ներսում արմատացած և նրա ներկայության ընդհանուր գործունեությունից անկախ այն հատկությունները, որոնք իրենց հերթին, ժառանգական և ձեռքբերովի ունակությունների արդյունք լինելով, հնչում են ազատորեն, հեշտորեն ու երկար ժամանակ՝ որևէ լարվածություն չառաջացնելով իրենց առանձին գործառույթների կողմից. այլ կերպ ասած՝ հենակետային հնչյուններն ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ դրանց ի հայտ գալու ռիթմը լիովին ներդաշնակ է լինում էակի ընդհանուր ներկայության այլ գործառույթների հետ, որոնց ռիթմն արդեն նրա ներսում ամրապնդվել է ընդհանուր *լինելիական գոյության* բոլոր ներքին ու արտաքին պայմանների հետևանքով:

Տեղական բնույթի պայմանների տարբերությունների, ինչպես նաև յուրացված ժառանգական հատկությունների շնորհիվ համարյա բոլոր խմբավորումների կամ աշխարհագրական վայրերի էակներն ունենում են իրարից տարբեր «ձայնային հենակետային հնչյուններ» կամ ծանրակենտրոն նոտաներ, ուստի և քո այդ մոլորակի մակերևույթի տարբեր մասերում միանգամայն տարբեր է նաև օկտավայի տոնային բաժանումը:

Ներկայումս քո սիրելիներն ունեն այնպիսի խմբավորումներ, որոնց էակներն ունակ են հնչյունային օկտավան բաժանելու ոչ միայն հինգ կամ յոթ ծանրակենտրոն հնչյունների, այլև նույնիսկ տասներեքից տասնյոթ ամբողջ տոների:

Որպես հենց նոր ասածիս ապացույց կարող է ծառայել Ասիա աշխարհամասում բնակվող էակների ոչ մեծ խմբավորումը, որոնց երգեցողությունն անձամբ ես շատ էի սիրում, և որոնց ֆիզիոլոգիական հնարավորությունները, թեև միայն երեք հենակետային հնչյուններով են դրսևորվում, այնուհանդերձ թույլ են տալիս երգեցողության ընթացքում արտաբերելու մինչև քառասուն առանձին հնչյուններ:

Նրանց երգեցողությունն արտակարգ հիասքանչ էր, և միաժամանակ, որքան էլ նրանք կրքոտ երգեին, այնուհանդերձ հանդարտ ու երկարատև ձայնային տատանումները նրանց մոտ գոյանում էին միայն իրենց այդ երեք «օրգանական հենակետային հնչյուններից» որևէ մեկով:

Նրանց այդ ֆիզիկական յուրահատկությունը, այն է՝ այդ ոչ մեծ խմբավորման էակները հնչյունների ինչպիսի քանակություն էլ որ արտաբերեին, իրենց ձայնի ամբողջ օկտավայից նրանք միշտ ստանում էին, այսպես կոչված, «տատանումների անփոփոխ համակցություն»՝ հիմնված իրենց բնորոշ միայն այդ երեք հենակետային հնչյունների վրա, բայց իրենց դրսևորման ամբողջ ընթացքում այդ հենակետային հնչյուններն օժտված էին լինում էակի ամբողջ ներկայության մեջ առաջացնելու, այսպես կոչված, «կենտրոնացում» ու արձագանք. ես դա ինձ համար շատ լավ հստակեցրի, երբ, նրանց երգեցողությամբ հետաքրքրվելով, սկսեցի քո սիրելիների այդ հազվագյուտ յուրահատկությունն ուսումնասիրել իմ պատվիրած հատուկ, այսպես կոչված, «կամերտոնների» և ձեռքիս տակ եղած մի քանի շատ զգայուն, այսպես կոչված, «թրթիռաչափերի» միջոցով, որոնք անձամբ ինձ համար ստեղծել էր իմ էակից ընկեր գոռնաղառ Ղառղառը:

Օկտավան ամբողջ տոների բաժանելու չինական եղանակում այդ *լինելիական հատկությունը* բոլորովին հաշվի չի առնված:

Օկտավան ամբողջ տոների բաժանելու չինական եղանակի, ինչպես նաև այն ամբողջ տեղեկատվության հիմքում, որը գիտելիքների հատուկ բնագավառ է կազմում՝ կապված Իննականության օրենքի հետ, ընկած են այն գիտակցական աշխատանքների ու կամավոր տառապանքների արգասիքները, որոնք ներդրեցին երկու մեծ երկվորյակ եղբայրները, որի համար նրանց բարձրագույն մարմիններին երանություն է շնորհվել, և հիմա նրանք գտնվում են այն սուրբ մոլորակում, ուր մեզ բախտ վիճակվեց վերջերս այցելել:

Ամեն դեպքում, զավա՛կս, այնուամենայնիվ ներկա պահին ես չատ եմ ցավում, որ դաշնամուր կոչվող ձայնարձակիչ գործիքի օգնությամբ, որը ես տուն եմ տարել քո այդ մոլորակի մակերևույթից, ամբողջությամբ հնարավոր չի լինի քեզ բացատրել համատիեզերական «Անսամբլուհագար» իրականացնող տատանումների բոլոր աղբյուրների օրենքները, ինչը լիովին կարելի էր անել

նշանավոր լավմեղցնող սարքի օգնությամբ, որն ստեղծել էր մեծն երկվորյակ եղբայրների հետևորդ, ոչ պակաս մեծ և նույնպես չինացի գիտուն էակ Քինգ-Տու-Տոգը:

Երկվորյակ եղբայրների կատարած հաշվարկները հիմք ընդունելով՝ Քինգ-Տու-Տոգն այդ հրաշալի լավմեղցնող սարքի վրա տեղադրեց ու լարեց տատանումներ առաջացնող ճիշտ այնքան լարեր, որքան հաջորդական աղբյուրներ կան համայն Տիեզերքում՝ սկսած ցանկացած մոլորակից մինչև Պրոտոկոսմոս, որոնց ներկայություններում տրոգոավտոեգոկրատական պրոցեսների ընթացքում օրինաչափորեն փոփոխվող տիեզերական նյութերի թրթիռները համապատասխան ձևով միախառնվում են՝ հետագա ամեն ինչն իրականացնելու համար:

Մակայն, զավա՛կս, թեև քո այդ մոլորակի մակերևույթից հետո տարած դաշնամուր կոչվող այդ ձայնարձակիչ գործիքը ժամանակակից քո սիրելիների համար շատ տիպական հորինվածք է, այնուհանդերձ այն բանի պատճառով, որ, ինչպես արդեն ասել եմ, դրա ամբողջ և կես տոների հիմնական լարվածքը դեռևս չի փոխվել, դրա լարերի միջոցով այնուամենայնիվ հնարավոր կլինի ծայրահեղ դեպքում փորձնական ճանապարհով ցուցադրել հիմնական համատիեզերական նյութերի որևէ օկտավայի պատկանող այն տատանումների օրենքը, որոնք բխում են աղբյուրների յոթ հիմնական համակցություններից որևէ մեկից. և դրա շնորհիվ հնարավոր կլինի պատկերացնել ու հասկանալ նաև այն բոլոր փոխազդող տատանումները, որոնք բխում են մյուս բոլոր աղբյուրներից, քանի որ, ինչպես արդեն ասել եմ, տարբեր տրամաչափի բոլոր կոսմոսներն ու դրանց ինքնուրույն յոթերորդական մասերը համարյա ճշգրտորեն նման են Մեգալակոսմոսին, և դրանցից յուրաքանչյուրում տատանումների յոթական աղբյուրները նույնպիսի փոխազդեցություններ ունեն, ինչպիսիք Մեգալակոսմոսում են. ուստի և, որևէ մի ծանրության կենտրոնի տատանումների օրենքը հասկանալով, կարելի է մոտավոր կերպով հասկանալ նաև բոլոր ծանրության կենտրոնների տատանումների օրենքները, եթե, իհարկե, հաշվի առնվի մասշտաբային տարբերությունը:

Կրկնում եմ, եթե այդ դաշնամուրի լարերը ճիշտ են լարված, և համապատասխան լարերը ճիշտ տատանումներ են տալիս, ապա դրանք նույնիսկ մաթեմատիկական ճշգրտությամբ համարյա կհամընկնեն նյութերի տատանումների օրինաչափ համակցության հետ, որոնք սրբազան Յոթնապարապարշինողի հիման վրա իրականացնում են համապատասխան տիեզերական աղբյուրները:

Այդ դաշնամուրում ցանկացած օկտավայի ամբողջ և կես տոների տատանումներն անցում են կատարում մեկը մյուսին սրբազան Յոթնապարապարշինող սրբազան օրենքին ճշգրիտ համապատասխան, և այդպիսով, ինչպես ամենուրեք համայն Տիեզերքում է տեղի ունենում, այդ տատանումները փոխադարձաբար իրար օգնում են իրենց էվոլյուցիայի ու ինվոլյուցիայի գործընթացներում:

Այստեղ, իմիջիայլոց, շատ հետաքրիր կլինի նշել, որ եթե երկրային այդ գիտուն էակների հաշվարկներն ու ակնկալիքները համարյա ճշգրիտ էին, ապա դրա համար նրանք պարտական են այն բանին, որ նրանք ստանդարտ միավոր էին ընտրել Թեոմերտմալոգոսի նախանյութի այն մանրագույն մասնիկը, որն ամենուրեք ընդունված է Մեգալակոսմոսում և իր մեջ կարող է պարունակել իրեն հատուկ կենսական ուժի լիարժեք ամբողջականությունը:

Եվ այսպես, հենց այստեղ էլ, իմ խոստման համաձայն, ես քեզ կպատմեմ արդեն հիշատակածս *«նիրիոնոսային համաշխարհային հնչյունի»* մասին:

«Նիրիոնոսային համաշխարհային հնչյունն» այն է, որի տատանումները ձայնարձակիչ գործիքների համար հինավուրց ժամանակներից ընդունված է և հիմա էլ այնտեղ դեռևս ընդունվում է (ճիշտ է, նույն այդ Զինաստանի քո սիրելիներից քչերի կողմից) որպես «դո» նոտայի «բացարձակ տատանումներ»:

Քո այդ մոլորակում այդ հնչյունի գոյության հավաստման պատմությունն այսպիսին է:

Առաջին անգամ դա բացահայտել է Ատլանտիդա աշխարհամասում ստեղծված Ախալդան ընկերության այն անդամը, որը հենց այդ գիտուն երկվորյակ եղբայրների նախահայրն էր, և որը, ինչպես արդեն քեզ ասել եմ, բախտ ունեցավ հանդիպելու Պախրակարան երկրի առաջին վերաբնակների հետ և հետագայում դառնալու նրանց առաջնորդը:

Այն ժամանակ Ախալդան ընկերության այդ անդամը տիեզերական երևույթները դիտելու ընթացքում, որոնք տեղի էին ունենում իրենց մոլորակում և դրանից դուրս, փաստեց, որ այդ երկրի որոշակի տեղանքում՝ հենց այն վայրերում, որտեղ հետո կառուցվեց Գոբ քաղաքը, տարեկան երկու

անգամ, որոշակի մթնոլորտային գրգռումներից հետո հնչում էր հենց այդ որոշակի հնչյունը և լսելի է լինում բավական երկար ժամանակ:

Այդ պատճառով նա այդ վայրում բարձունք կառուցեց, որը պահանջվում էր «երկնային մարմիններ» դիտելու համար. կառուցեց հենց այդ վայրում, քանի որ իր այդ դիտումների ընթացքում ուզում էր ուսումնասիրել նաև այդ «տիեզերական արդյունքը», որը սկզբում իր համար լրիվ անհասկանալի էր:

Իսկ հետո, երբ հետագայում սուրբ դարձած մեծ եղբայրները բացահայտեցին ու սկսեցին հետազոտել Յոթնապարապարշինոդ սրբազան տիեզերական օրենքը, ապա, արդեն տեղյակ լինելով այդ տիեզերական արդյունքի մասին, հաստատվեցին հենց այդ վայրում և հենց այդտեղ նրանց հաջողվեց պարզել այդ տարօրինակ հնչյունի բնույթը և այն ընդհանրապես որպես չափման միավոր ընդունել իրենց բոլոր հաշվարկների համար:

Այդ դաշնամուրի մեջ կողմնակի ծագման տատանումներն առաջանում են զանազան հարվածներից ու ցնցումներից և մեծ մասամբ, այսպես կոչված, օդային իներցիոն տատանումներից, որոնք սովորաբար մթնոլորտային տարածության մեջ առաջանում են արդեն նշածս բնական տատանումներից:

Այստեղ անհրաժեշտ է սրբազան Յոթնապարապարշինոդի հինգերորդ ստոպինդերի իրականացման հետ կապված զուգահեռ տանել արտաքինից իրար հետ ոչ մի կապ չունեցող երկու պրոցեսների միջև. այն է՝, ինչպես *լինելիական սնունդը* չի կարող կենսական ուժ ձեռք բերել, քանի դեռ չի վերածվել *լինելիական փյանջեհարիի*, այնպես էլ այդ դաշնամուրի լարի տատանումները չեն կարող համապատասխան կենսական ուժ ստանալ, քանի դեռ չեն միախառնվել նախկինում արձակված տատանումների հետ՝ սկսած «սոլ» նոտայի տատանումների համակցության ծանրության կենտրոնից:

Յոթնապարապարշինոդ սրբազան օրենքի այս վերջին առանձնահատկությունը տվյալ դեպքում, այսինքն՝ դաշնամուրի պարագայում, բացարձակապես անկասկածելի է, բայց հատկապես այն բանի հետևանքով, որ եթե «մի» և «սի» նոտաների տատանումներն արձակվում են հերմետիկորեն փակ սենյակում, ապա դրանք կամ ակնթարթորեն դադարում են, կամ «մի» և «սի» նոտաներն իրենց առաջացման առաջին իսկ հարվածից ստացած ազդակի հետևանքով ինվոլյուցիա են ապրում ու անմիջապես մարում, այսինքն՝ երբ «մի» նոտան հասնում է «դո» նոտային, իսկ «սի» նոտան՝ ներքևի «ֆա»-ին:

Քո սիրելիների կողմից օկտավան յոթ ամբողջ տոների բաժանելուն նվիրված իմ բացատրության ավարտին ես, ցավոք, պետք է մեկ անգամ ևս ընդգծեմ, որ եթե անգամ այդ գիտելիքներից ինչ-որ բան մնացել ու հասել է իրենց, ապա նրանք բոլոր էական բաները մոռացել են կրկին այն պատճառով, որ նրանց ներկայություններում իսպառ չքացել է *լինելիական պարտք-պարտականության* գործնական իրականացումը, ինչն էլ պատճառ է դարձել եռուղեղ էակին վայել մտածողության աստիճանական վատացման համար:

Իր պատմության այս մասում Բեհեդգեբուղը կրկին խորասուզվեց մտածմունքների մեջ, իսկ հայացքն անշարժ սևեռվեց թոռան քթի ծայրին:

Երկար դադար եղավ, որից հետո նա ասաց հետևյալը.

– Է հ, փոքրի՛կս, հիմա, ուզեմ թե չուզեմ, քեզ պետք է պատմեմ տատանումների օրենքին առնչվող մի փորձի մասին, որին վկա եմ եղել նույն այդ Երկիր մոլորակում: Դեռ ավելին՝ ես դրա մասին կպատմեմ հնարավորինս մանրամասն հետևյալ երկու պատճառներով:

Նախ՝ ես արդեն քեզ շատ եմ պատմել Յոթնապարապարշինոդ կոչվող առաջին հիմնական օրենքի մասին, ուստի շատ կվշտանայի, եթե այս կամ այն պատճառով քեզ չհաջողվեր հստակ պատկերացնել այդ օրենքի առանձնահատկությունները: Այդ պատճառով ինձ պարտավորված եմ զգում այդ փորձերի վերաբերյալ ոչինչ չթաքցնել, քանի որ համոզված եմ, որ դրանք քեզ սպառնալի պատկերացում կազմելու հնարավորություն կտան:

Եվ երկրորդ՝ ես ուզում եմ այդ փորձերին վերաբերող հնարավոր բոլոր մանրամասները քեզ հայտնի դարձնել, քանի որ դրանք իրականացնող երկրային էակը, շնորհիվ տիեզերական թրթիռների վերաբերյալ ստացած իր գիտելիքների, միակ և եզակի էակն էր Երկրում անցկացրած իմ հարյուրամյակների ընթացքում, որ ճանաչեց և ընդունեց իմ իսկական բնույթը:

ԳԼՈՒԽ ԽԱ
Բուխարացի դերվիշ Հաջի Աստվածատուրը³¹

«Քանի որ այդ ժամանակակից երկրային եռուղեղ էակի հետ իմ առաջին հանդիպումը (որի հետ ես վկա եղա հիշյալ փորձերին, և որի շնորհիվ սրբազան Յոթնապարապարշինոդ հիմնական տիեզերական օրենքի մասին տեղեկատվությունը հավանաբար կրկին այնտեղ կհաստատվի և բոլորին՝ նույնիսկ գիտելիքների ձգտում ունեցող սովորական էակներին, մատչելի կդառնա), քեզ համար կարող է շատ հետաքրքիր և ուսանելի լինել, ապա ես այդ հանդիպման մասին քեզ կպատմեմ ամենայն մանրամասնությամբ:

Նրա հետ իմ այդ առաջին հանդիպումը տեղի ունեցավ վերջնականապես այդ արևային համակարգը լքելուցս երեք երկրային տարի առաջ:

Մի անգամ, Ասիա աշխարհամասի այն մասերում ճամփորդելիս, որը «Բուխարա» անունն է կրում, ինձ վիճակվեց ծանոթանալ և ընկերական հարաբերություններ հաստատել մի եռուղեղ էակի հետ, որը պատկանում էր քո այդ մոլորակի մակերևույթի մի մասում բնակվող մի խմբավորման, ուներ, ինչպես այնտեղ են ասում, «դերվիշի» մասնագիտություն և կրում էր «Հաջի Զեփյուր Բոգա Էդդին» անունը:

Նա խիստ տիպական ներկայացուցիչն էր այն երկրային եռուղեղ էակների, որոնք հակում ունեն դեպի, ինչպես այնտեղ են ասում, «բարձր թեմաները» և, չունենալով անհրաժեշտ գիտելիքներ, մշտապես տեղի-անտեղի դրանց շուրջը զրույցի են բռնվում ամեն պատահածի հետ: Ուստի ամեն անգամ, երբ մենք հանդիպում էինք, նա սիրում էր խոսել միայն այդ թեմաների շուրջ:

Մի անգամ մենք սկսեցինք խոսել «շատչայմեռնիս»-ի շուրջ, որն այնտեղ անվանում են *«հին չինական գիտության»*:

Այդ գիտությունը ոչ այլ ինչ է, քան Յոթնապարապարշինոդ սրբազան օրենքին վերաբերող վերը հիշատակածս ճշմարիտ տեղեկությունների համակցության առանձին դրվագներ, որոնք բացահայտվել էին չինացի մեծն երկվորյակ եղբայրների և ուրիշ հինավուրց ճշմարիտ գիտնականների կողմից և այն ժամանակ անվանվել «Բնականության օրենքի մասին ճշմարիտ տեղեկությունների համակցություն»:

Ես արդեն քեզ ասել եմ, որ այդ գիտելիքի որոշ դրվագներ պահպանվել են և այնտեղ սերնդից սերունդ են փոխանցվել սահմանափակ թվով ձեռնադրյալ էակների միջոցով:

Ես պետք է ասեմ, որ եթե այդ պատահաբար պահպանված ու խիստ սակավաթիվ ձեռնադրյալ էակների միջոցով սերնդեսերունդ փոխանցված դրվագները չընկնեն ժամանակակից «գիտնականների» ձեռքը, ապա դա մեծ հաջողություն կլինի քո այդ մոլորակի ապագա եռուղեղ էակների համար:

Իսկ մեծ հաջողություն կլինի այն պատճառով, որ եթե ճշմարիտ գիտելիքների այդ պահպանված դրվագներն ընկնեն ժամանակակից «գիտնականների» ձեռքը, ապա նրանք իրենց բնորոշ իմաստակություն բանեցնելու հետևանքով անպայման ամեն տեսակի «գիտական դատարկաբանություններ» կթխեն այդ դրվագներում պարունակվող իմաստի վերաբերյալ, և դրանով իսկ բոլոր մյուս եռուղեղ էակների հազիվ միացող բանականությունը վերջնականապես կհանգցնեն. բացի այդ՝ իրենց նախնիների վաղեմի մեծ նվաճումների այդ վերջին մնացորդները վերջնականապես իսպառ կջնջվեն այդ չարաղետ մոլորակի երեսից:

Եվ այսպես, զավա՛կս, երբ ես այդ Հաջի Զեփյուր Բոգա Էդդին անունով դերվիշի հետ զրուցում էի շատչայմեռնիս կոչվող հին չինական գիտության թեմայով, զրույցի ընթացքում նա ինձ առաջարկեց միասին այցելել և այդ նույն թեմայով զրուցել մի ուրիշ դերվիշի՝ իր ընկերոջ հետ, որը մեծ հեղինակություն է այդ հին չինական գիտության բնագավառում:

Նա ասաց, որ իր այդ ընկերն ապրում է «Վերին Բուխարայում»՝ բոլորից հեռու, և այնտեղ որոշակի փորձեր է կատարում՝ կապված հենց այդ գիտության հետ:

³¹ ռուս. տարբերակում՝ Хаджи Асвац-Трув, անգլ. տարբերակում՝ Hadji Asvatz Troov

Որևէ առանձնակի գործ չունենալով այդ քաղաքում, որում այն ժամանակ մեզ վիճակվել էր հայտնվել, նաև այն պատճառով, որ այդ ընկերն ապրում էր հենց այն լեռներում, որոնց բնույթն ինձ վաղուց էր հետաքրքրում, ես անմիջապես համաձայնեցի, և հենց հաջորդ օրը մենք ճամփա ընկանք:

Քաղաքից երեք օրվա ճանապարհի անցնելուց հետո մենք վերջապես հասանք Վերին Բուխարայի լեռները և կանգ առանք մի ոչ մեծ կիրճում:

Բուխարայի այդ մասը «Վերին» է կոչվում այն պատճառով, որ այն շատ լեռնոտ է ու անհամեմատ բարձր է Բուխարայի այն մասից, որը «Ներքին Բուխարա» է կոչվում:

Հիշյալ կիրճում իմ ծանոթ դերվիշ Հաջի Ջեփյուր Բոգա Էդդինը խնդրեց իրեն օգնել, որ մի կողմ քաշենք մի ոչ մեծ քարե սալ, որից հետո դրա տակ բացվեց նեղ մի անցք, որի եզրերից դուրս էին ցցված երկու երկաթե ձողեր:

Նա այդ ձողերն իրար միացրեց և սկսեց ականջ դնել:

Շուտով դրանցից տարօրինակ ձայն լսվեց, և, ի զարմանս ինձ, Հաջի Ջեփյուր Բոգա Էդդինը դեպի այդ անցքի ներսն ինչ-որ բան ասաց ինձ անծանոթ լեզվով:

Երբ նա իր խոսելն ավարտեց, մենք քարե սալը նորից իր տեղը քաշեցինք և շարունակեցինք առաջ ընթանալ:

Ահագին ճանապարհի անցնելուց հետո մենք կանգ առանք մի ժայռի առաջ, և Հաջի Ջեփյուր Բոգա Էդդինն սկսեց լարված ինչ-որ բանի սպասել. հանկարծ մեր առջևի հսկա քարաժայռը բացվեց և մենք հայտնվեցինք քարանձավի նմանվող ինչ-որ բանի մուտքում:

Երբ մենք մտանք քարանձավ և շարժվեցինք առաջ, ես նկատեցի, որ մեր ուղին հաջորդաբար լուսավորվում է, այսպես կոչված, գազով ու էլեկտրականությամբ:

Թեև այդ լուսավորությունն ինձ զարմացրեց և մի քանի հարցեր առաջացրեց իմ ներսում, այնուամենայնիվ ես որոշեցի չխախտել իմ ուղեկցի լուրջ կենտրոնացածությունը:

Եվս ահագին հեռավորություն անցնելուց հետո շրջադարձերից մեկը հատելիս մենք նկատեցինք մեզ ընդառաջ եկող մի ուրիշ երկրային եռուղեղ էակի. վերջինս մեզ ողջունեց այնտեղ ընդունված եղանակով և առաջնորդեց մեզ:

Պարզվեց, որ իմ ծանոթ դերվիշի ընկերը հենց նա է:

Երկրային չափանիշներով նա շատ ծեր էր և, մյուսներից ավելի բարձրահասակ լինելով, չափազանց նիհար էր թվում:

Նրա անունը Հաջի Աստվածատուր էր:

Մեզ հետ զրուցելով՝ նա մեզ հասցրեց քարանձավի ոչ մեծ մի բաժանմունք, որտեղ նստեցինք հատակը ծածկող թաղիքի վրա. այնուհետև զրուցելու ընթացքում կավե ամանների միջից սկսեցինք ուտել, այսպես կոչված, բուխարական սառը «շիլա-փլավ», որն այդ տարեց էակը մեզ համար բերեց հարևան բաժանմունքից:

Ուտելու ընթացքում իմ առաջին ծանոթ դերվիշը նրան իմիջիայլոց ասաց, որ ես էլ եմ հետաքրքրվում շատչայմեռնիս գիտությամբ, ապա համառոտ բացատրեց, թե ինչ հարցեր են ինձ լավ հայտնի և թե նախկինում ընդհանրապես ինչի մասին ենք իրար հետ զրուցել:

Դրանից հետո դերվիշ Հաջի Աստվածատուրն ինքը սկսեց ինձ հարցեր տալ, և ես համապատասխան պատասխաններ տվեցի՝ իհարկե, ինձ համար արդեն սովորական դարձած այն ձևով, որով միշտ կարողանում էի ծածուկ պահել իմ իսկական բնույթը:

Քո այդ մոլորակի վրա ես լիովին կարողանում էի ճարակորեն խոսակցությունը վարել այնպես, որ քո սիրելիներն ինձ միշտ դնեն իրենց եղբայրակից-գիտնականներից մեկի տեղ:

Հետագա զրույցից ես հասկացա, որ այդ հարգարժան Հաջի Աստվածատուրը վաղուց է արդեն հետաքրքրվում նշված գիտելիքներով և վերջին տասը տարում դրանք հետազոտում է գործնական միջոցներով:

Ես նաև հասկացա, որ այդ հետազոտություններով նա այնպիսի արդյունքների է հասել, որոնց հասնելը երկրային եռուղեղ էակներին արդեն բնորոշ չէ:

Երբ այդ ամենը պարզեցի, ես շատ զարմացա ու հետաքրքրվեցի, թե այդ ինչպե՞ս է ստացվել, քանի որ արդեն շատ լավ գիտեի, որ այդ գիտելիքները վաղուց են դադարել Երկրի եռուղեղ էակների բանականության մեջ գոյություն ունենալուց, և այդ հարգարժան Հաջին հազիվ թե կարողանար հաճախ լսել դրանց մասին և այդպիսով, ինչպես սովորաբար այնտեղ լինում է, աստիճանաբար դրանցով հետաքրքրվել:

Եվ իրոք, զավա՛կս, քո երևակայությունը գրաված եռուղեղ էակներին արդեն շատ բնորոշ է դարձել միայն այնպիսի բաներով հետաքրքրվելը, ինչ հաճախ են տեսնում կամ լսում, իսկ եթե իսկապես ինչ-որ բանով հետաքրքրվում են, ապա այդ հետաքրքրությունը հետին պլան է մղում բոլոր մյուս բոլոր լինելիական կարիքները, և միշտ նրանց ինքնըստինքյան հասկանալի է թվում, որ այն, ինչ տվյալ պահին իրենց հետաքրքրում է, հենց այն է, «ինչի շնորհիվ պտտվում է ողջ աշխարհը»:

Երբ իմ ու այդ համակրելի դերվիշ Հաջի Աստվածատուրի միջև հաստատվեցին տվյալ իրադրության համար անհրաժեշտ հարաբերություններ, այսինքն երբ նա սկսեց ինձ հետ քիչ թե շատ նորմալ, այսպես ասած, առանց «դիմակի» խոսել (ինչը կրելը բնորոշ է դարձել ժամանակակից էակների համար, երբ նրանք շփվում են իրենց նմանների հետ, հատկապես երբ նոր են ծանոթացել), ես իհարկե, պահպանելով համընդհանուր ընդունված տոնը, նրան հարցրի, թե ինչպես և ինչու է նա հետաքրքրվել ճշմարիտ գիտելիքների այդ բնագավառով:

Ի դեպ, հարկ է, որ իմանաս, որ այնտեղ՝ քո այդ մոլորակի մակերևույթի ամեն մի առանձին հատվածում, այդ արտառոց եռուղեղ էակների սովորական *լինելիական գոյատևման* գործընթացում աստիճանաբար ձևավորվել և մի սերնդից մյուսին են փոխանցվել արտաքին փոխհարաբերությունների իրենց սեփական, առանձնահատուկ ձևերը:

Եվ փոխհարաբերությունների այդ տարբեր ձևերն ինքնըստինքյան ձևավորվել են այն բանից հետո, երբ նրանց հոգեկառույցում ամբողջովին հետաճ է ապրել իրենց նման էակների կողմից իրենց հանդեպ ունեցած ներքին զգացումը հասկանալու *լինելիական հատկությունը*, ինչն անպայման մեր Մեծ Տիեզերքի բոլոր էակները պետք է ունենան՝ անկախ տեսակից ու առաջացման վայրից:

Ներկայումս նրանց լավ կամ վատ փոխհարաբերությունները հաստատվում են բացառապես միայն արտաքին հաշվարկային դրսևորումների հիման վրա՝ գլխավորապես, ինչպես իրենք են ասում, «սիրալիրության», այսինքն բառերի հիման վրա, որոնցում ոչ մի հատիկ չկա, այսպես ասած, «բարյացակամության ներքին ազդակի արդյունքից», ինչը սովորաբար բոլոր էակների ներկայություններում առաջանում է, երբ նրանք անմիջականորեն հաղորդակցվում են «իրենց նմանների» հետ:

Այնտեղ ներկայումս այնպես է, որ եթե մի էակ կարող է ներքուստ բարին կամենալ մի ուրիշին, և այս կամ այն պատճառով այդ բարի կամեցող էակը մյուսին դիմի այնպիսի խոսքերով, որոնք ընդունված չէ լավ համարել, ապա վերջ ամեն ինչին. վերջինիս բոլոր զանազան ոգեկոչված տեղայնացումներում անհապաղ բյուրեղանում են տվյալներ, որոնք նրա ընդհանուր ներկայությունում այնպիսի համոզմունք են ծնում, որ առաջին էակը, որը ներքուստ փաստորեն բարին է կամենում, հենց միայն այն բանի համար գոյություն ունի, որ ամենուրեք ու միշտ իր նկատմամբ ամեն տեսակի, ինչպես այնտեղ են ասում, «կեղտոտ արարքներ» թույլ տա:

Այնտեղ, հատկապես վերջին ժամանակներս, շատ կարևոր է դարձել տարբեր տեսակի «բառային դիմելիքներ» իմանալը, որպեսզի դրանցով ոչ թե «թշնամիներ» վաստակես, այլ ընկերներ ձեռք բերես:

Այդ արտառոց եռուղեղ էակների գոյատևման աննորմալ ընթացքը փչացրել է ոչ միայն իրենց սեփական հոգեկառույցը, այլև իր ազդեցության հետևանքով մյուս համարյա բոլոր միառուղեղ և երկուղեղ էակներին:

Եկրային այն միառուղեղ ու երկուղեղ էակների ներկայություններում, որոնց հետ քո երևակայությունը գրաված եռուղեղ էակները վաղուց ու ի վեր շփումներ ու հարաբերություններ են ունեցել և շարունակում են հաճախակի ունենալ, վերը նշածս ներքին *լինելիական ազդակի* նախադրյալներ դեռ չեն ձևավորվել:

Թեև ուրիշ արտաքին ձևեր ունեցող երկրային միառուղեղ ու երկուղեղ էակներից որոշների ներկայություններում, ինչպիսիք են, այսպես կոչված, «վագրերը», «առյուծները», «արջերը», «բորենիները», «օձերը», «մորմերը», «կարիճները» և այլն, որոնք իրենց կենսակերպի բերումով քո երկոտանի սիրելիների հետ չեն ունեցել և հիմա էլ չունեն ոչ մի շփում ու հարաբերություն, այդ լինելիական տվյալները դեռ նոր են սկսել ձևավորվել, սակայն դրանց ընդհանուր ներկայություններում, իհարկե, քո սիրելիների սովորական գոյատևման հաստատված պայմանների աննորմալության պատճառով արդեն ձևավորվել է մի շատ տարօրինակ և չափազանց հետաքրքիր առանձնահատկություն. այն է՝ վագրերը, առյուծները, արջերը, բորենիները, օձերը, մորմերը, կարիճները և այլն, իրենց դիմաց գտնվող ուրիշ էակների մեջ եղած ներքին վախի զգացումը ընկալում

են որպես իրենց նկատմամբ թշնամաբար տրամադրվածություն, ուստի ձգտում են դրանց ոչնչացնել, որպեսզի «վտանգը» հեռացնեն իրենցից:

Եվ այդպես է ստացվել այն պատճառով, որ քո սիրելիներն իրենց գոյատևման աննորմալ պայմանների հետևանքով աստիճանաբար, ինչպես հենց իրենք են ասում, «ոտից գլուխ վախկոտ» են դարձել, նաև այն պատճառով, որ միևնույն ժամանակ ուրիշներին ոչնչացնելու պահանջը նույնպես «ոտից գլուխ» համակել է նրանց: Եվ այդպիսով, երբ նրանք, արդեն «վերին աստիճանի» վախկոտ լինելով, պատրաստվում են ոչնչացնել այդ ուրիշ արտաքին ունեցող էակներին կամ հանդիպում են այդպիսիների հետ, որոնք, պետք է ասել, ի դժբախտություն իրենց և ի բարեբախտություն մեզ՝ ներկայումս ինչպես ֆիզիկապես, այնպես էլ այլ *լինելիական նվաճումների* առումներով անհամեմատ ուժեղ են իրենցից, ապա նրանք սարսափահար են լինում այն աստիճանի, որ, ինչպես այնտեղ են ասում նման դեպքերում, «տակները թրջում են»:

Միևնույն ժամանակ իրենց մոլորակում բազմացող ուրիշ էակների գոյությանը վերջ տալու՝ իրենց ներկայություններին բնորոշ դարձած պահանջի հետևանքով նման պահերին նրանք իրենց ամբողջ էությամբ էլքեր են որոնում, թե ինչ հնարքով վերջ տան այդ ուրիշ արտաքին տեսք ունեցող էակների գոյությանը:

Այդ ամենի հետևանքով քո այդ սիրելիների յուրօրինակ ներկայություններին բնորոշ ճառագումներից այդ ուրիշ արտաքին ձևեր ունեցող էակների ընդհանուր ներկայություններում, այն տվյալների հետ մեկտեղ, որոնք պետք է նրանց ներսում գոյություն ունենան, որպեսզի մյուս տեսակի էակների նկատմամբ առաջանա վերը նշած «բնագդական հարգանք ու համակրանք դրսևորելու» ազդակը, առաջանում են նաև հատուկ գործառնությամբ տվյալներ, որոնց հետևանքով այլ էակների ներկայություններում դրսևորվող վախի զգացումը, հատկապես քո սիրելիների ներկայություններում, նրանք ընկալում են որպես իրենց իսկ գոյությանը սպառնացող «վտանգ»:

Ահա թե ինչու ամեն անգամ, երբ նշված միաուղեղ ու երկուղեղ երկրային էակները հանդիպում են քո սիրելիներին, իրենց գոյությանը սպառնացող վտանգն իրենցից հեռացնելու միտումով միշտ ձգտում են վերջ տալ նրանց կյանքին:

Սկզբում նաև այնտեղ՝ քո այդ մոլորակի վրա, բոլոր էակները, անկախ իրենց արտաքին ձևից ու ուղեղային համակարգից, իրար հետ գոյատևում էին խաղաղ ու հաշտ. և նույնիսկ հիմա երբեմն քո սիրելիներից որևէ մեկը կարողանում է նախ՝ ինքնակատարելագործվել այն աստիճան, որ իր բոլոր ոգեկոչված մասերով հասկանում է, որ բոլոր էակները, կամ, ինչպես իրենք են ասում, «ամեն մի կենդանի արարած» հավասարապես մոտ ու հարազատ է ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐ ԱՐԱՐԶԻՆ, և երկրորդ՝ իր ներսում *լինելիական պարտք-պարտականության* կենսագործման շնորհիվ հասնում է իր ներկայությունում առկա այն նախադրյալների իսպառ ոչնչացմանը, որոնք վախի ազդակ են ծնում այլ արտաքին ձև ունեցող էակներից, ինչի արդյունքում այդ այլ ձև ունեցող էակները ոչ միայն չեն ձգտում վերջ տալ այդ կատարյալ էակի գոյատևմանը, այլև նրան՝ որպես մեծ օբյեկտիվ հնարավորություններ ունեցող էակի, ցուցաբերում են հարգանք և զանազան ծառայություններ:

Կարճ ասած, բոլոր այդ այլևայլ բազում մանր գործոնները, որոնք նույնպես քո սիրելիների աննորմալ գոյատևումից են բխել, ի վերջո հանգեցրել են այն բանին, որ նրանք ձեռք են բերել փոխհարաբերությունների զանազան ձևեր՝ ինչպես իրենք են արտահայտվում, «հաճոյախոսություններ», և, ինչպես արդեն քեզ ասել եմ, ամեն մի առանձին վայրում դրանք ունեն իրենց սեփական յուրահատուկ ձևը:

Այդ համակրելի եռուղեղ էակ Հաջի Աստվածատուրի վերաբերմունքն իմ նկատմամբ բարեկամական էր գլխավորապես այն պատճառով, որ ես նրա լավ ընկերոջ ընկերն էի:

Այստեղ, իմիջիայլոց, հարկ է նշել, որ միայն եռուղեղ էակները, ինչպես սկզբնական շրջանում եղել է նաև այդ մոլորակում, իրենց ընկեր են համարում ոչ միայն բուն ընկերոջը, այլև նրա մոտ հարազատներին ու նրանց ընկերներին, և նրանց հետ վարվում են ճիշտ այնպես, ինչպես իրենց ընկերոջ հետ:

Քանի որ այն ժամանակ ես ինձ ընկեր էի համարել դերվիշ Հաջի Ջեփյուռ Բոզա Էդդինին, որը Հաջի Աստվածատուրի շատ մոտ ընկերներից էր, ապա վերջինս անմիջապես իմ նկատմամբ շատ բարեկամաբար տրամադրվեց:

Ես կամեցա այդ փոխհարաբերությունն ավելի լավացնել, քանի որ ուզում էի իմանալ, թե նա ինչպես է հետաքրքրվել այդ գիտելիքներով ու հասել այնպիսի գիտական նվաճումների, որոնք

անգերազանցելի էին Երկրի վրա. ուստի մեր գրույցի ընթացքում ես լայնորեն օգտվում էի հաճոյախոսությունների այն տեսակներից, որոնք ընդունված էին այդ տեղերում:

Երբ մեր գրույցի ընթացքում, որը բացառապես վերաբերում էր այնտեղ հիմա շատչայմեռնիս կոչվող գիտելիքների բնագավառին, մենք սկսեցինք խոսել ընդհանրապես տատանումների բնույթի ու նշանակության մասին, և խոսքը հասավ հնչյունային օկտավային, Հաջի Աստվածատուրն ասաց, որ հնչյունային օտավան ոչ միայն ունի յոթ ինքնուրույն ամբողջ դրսևորում, այլև այդ համեմատաբար ինքնուրույն դրսևորումներից յուրաքանչյուրի տատանումները, ինչպես իրենց ծագմամբ, այնպես էլ ուղղությամբ ենթարկվում են միևնույն օրինաչափությանը:

Շարունակելով խոսել հնչյունային տատանումների օրենքների մասին՝ նա ասաց հետևյալը.

– Անձամբ ես շատչայմեռնիսի գիտելիքներով սկսել եմ հետաքրքրվել հնչյունային տատանումների օրենքների կապակցությամբ. հենց դրանք են պատճառ եղել, որ հետագա իմ ամբողջ կյանքը նվիրեմ գիտելիքների այդ բնագավառին:

Մի փոքր մոտրելուց հետո նա պատմեց հետևյալը.

«Նախ պետք է ձեզ ասեմ, ո՛վ, իմ ընկերներ, որ թեև նախքան դերվիշների եղբայրության մեջ մտնելս շատ հարուստ մարդ էի, բայց սիրում էի զբաղվել մի արհեստով. պատրաստում էի զանազան երաժշտական գործիքներ, ինչպիսիք են՝ «սազը», «թառը», «քամանչան», «ցիմբալը» և այլն:

Եվ նույնիսկ եղբայրության մեջ մտնելուցս հետո էլ իմ ամբողջ ազատ ժամանակը ես նվիրում էի այդ գործին. երաժշտական գործիքներ էի պատրաստում գլխավորապես մեր դերվիշների համար:

Իսկ հետագայում տատանումների օրենքներով լրջորեն հետաքրքրվելուս պատճառը հետևյալը եղավ:

Մի անգամ մեր մենաստանի շեյխն ինձ իր մոտ կանչեց և ասաց.

– Հաջի՛, այն մենաստանում, որտեղ ես շարքային դերվիշ էի, ամեն անգամ, երբ որոշ գաղտնածեսների ժամանակ մեր դերվիշ երաժիշտները նվագում էին սրբազան հիմների մեղեդիները, մենք՝ դերվիշներս, այդ սրբազան հիմների մեղեդիներից հատուկ զգացողություններ էինք ունենում, որոնք համապատասխանում էին սրբազան հիմների տեքստերին: Բայց այստեղի իմ երկարատև ու մանրագնին դիտումների ընթացքում ես դեռ ոչ մի անգամ չեմ տեսել, որ այդ նույն սրբազան հիմները որևէ առանձնահատուկ ազդեցություն գործեն մեր դերվիշ եղբայրների վրա: Բանն ի՞նչ է... Ո՞րն է դրա պատճառը: Վերջերս այդ պատճառը գտնելը ես ինձ նպատակ եմ դարձրել, և հիմա քեզ կանչել եմ, որ խոսենք այդ մասին. գուցե դու՝ որպես երաժշտական գործիքներ պատրաստող սիրող-մասնագետ, կարողանա՞ս ինձ օգնել, որ գտնեմ ինձ հետաքրքրող այդ հարցի պատասխանը:

Դրանից հետո մենք սկսեցինք համակողմանի դիտարկել այդ հարցը:

Երկարատև քննարկումներից հետո մենք հանգեցինք այն մտքին, որ երևի դրա պատճառը բուն հնչյունային տատանումների բնույթի մեջ է թաքնված: Դրան հանգեցինք այն պատճառով, որ մեր հետագա գրույցի ընթացքում պարզ դարձավ, որ այն մենաստանում, որտեղ մեր շեյխը շարքային դերվիշ էր եղել, ոչ միայն թմբուկ էին նվագում, այլ նաև լարային գործիքներ, մինչդեռ այստեղ՝ մեր մենաստանում, այդ նույն սրբազան հիմների մեղեդիները հնչեցվում են միայն փողային գործիքներով:

Այնուհետև մենք որոշեցինք անհապաղ մեր վանքի բոլոր փողային գործիքները փոխարինել լարայիններով, սակայն այն ժամանակ մեր առջև մի շատ լուրջ դժվարություն ծագեց. մեր դերվիշների շարքում բավարար քանակի լարային գործիքներ նվագողներ չկային:

Ուստի շեյխը մի փոքր մտածելուց հետո ինձ ասաց հետևյալը.

– Հաջի՛, քանի որ դու լարային գործիքների մասնագետ ես, գուցե փորձե՞ս այնպիսի լարային գործիք ստեղծել, որը կարողանա նվագել ցանկացած դերվիշ. չլինելով այդ գործում մասնագիտացած՝ կարողանա հնչեցնել հարկ եղած մեղեդու հնչյուններն ուղղակի մեխանիկական ազդեցությամբ, օրինակ՝ մի բան պտտելով, խփելով, սեղմելով և այլն:

Մեր շեյխի այդ առաջարկն այն ժամանակ ինձ խիստ հետաքրքրեց, և ես մեծ հաճույքով ձեռնամուխ եղա այդ խնդրի լուծմանը:

Այդ որոշմանը հանգելուց հետո ես վեր կացա և, ստանալով նրա օրհնանքը, գնացի տուն:

Տեղ հասնելով՝ նստեցի և երկար ժամանակով լուրջ մտածումներ էի անում. և այդ մտածումների արդյունքն այն եղավ, որ որոշեցի նախ սովորական ցիմբալ պատրաստել, ապա իմ դերվիշ ընկեր Կերբալայ Ազիզ Նուարանի օգնությամբ փոքրիկ մուրճիկների այնպիսի մեխանիզմ նախագծել, որ դրանց հարվածները համապատասխան հնչյուններ արձակեն:

Նույն օրվա երեկոյան ես գնացի իմ դերվիշ ընկեր Կերբալայ Ազիզ Նուարանի մոտ:

Թեև իմ այդ դերվիշ ընկերն իր ծանոթների ու ընկերների շրջապատում ցնդածի համբավ ուներ, այնուհանդերձ նրան հարգում ու գնահատում էին իր խելացիության ու գիտունության համար, քանի որ հաճախ այնպիսի հարցեր էր բարձրացնում, որ ստիպում էր կամա-ակամա մտորել դրանց շուրջ:

Նախքան դերվիշ ձեռնադրվելը նա եղել էր իսկական մասնագետ ժամագործ:

Եվ մենաստանում ևս նա իր ամբողջ ազատ ժամանակը նվիրում էր իր սիրած արհեստին:

Իմ այդ դերվիշ ընկեր Կերբալայ Ազիզ Նուարանն այդ ժամանակ, իմիջիայլոց, ոգեշնչվել էր մի «ցնդած գաղափարով», այն է՝ փորձում էր մեխանիկական ժամացույց պատրաստել, որը շատ ճշգրիտ ժամ ցույց տար՝ առանց որևէ զսպանակի օգտագործման:

Իր այդ ցնդած գաղափարը նա արտահայտում էր հետևյալ կարճ ու հասարակ ձևակերպմամբ.

– Երկրի վրա ոչ մի բացարձակ անշարժ բան չկա, քանի որ Երկիրը պտտվում է: Երկրի միայն ձգողականությունն է անշարժ, այն էլ միայն իր ծավալով զբաղեցրած տարածության կեսում: Ես ուզում եմ լծակների այնպիսի բացարձակ հավասարակշռություն ստեղծել, որն անհրաժեշտաբար բխի ժամացույցի սլաքների շարժման արագությունից և այլն, և այլն:

Երբ ես եկա իմ այդ «ցնդած» ընկերոջ մոտ և բացատրեցի, թե ինչին եմ ուզում հասնել ու ինչ օգնություն եմ ակնկալում իրենից, նա անմիջապես նույնպես հետաքրքրվեց դրանով և խոստացավ օգնել, ինչով կարող է:

Հենց հաջորդ օրվանից մենք սկսեցինք իրար հետ աշխատել:

Այդ համատեղ աշխատանքի արդյունքում շուտով պատրաստեցինք իմ մտածած մեխանիկական երաժշտական գործիքի հիմնականախքը: Ես ինքս նշեցի համապատասխան լարերի տեղերն ու նրանց միջև եղած հեռավորությունները, իսկ իմ «ցնդած» ընկերը շարունակ աշխատում էր մուրճիկների մեխանիզմը գլուխ բերել:

Եվ հետո, երբ ես ավարտեցի լարերը ձգելու և համապատասխան ձևով դրանք լարելու գործը, հենց այդ ժամանակ պատահեց մի բան, ինչը նոր հետաքրքրություն բորբոքեց իմ ներսում, դրդեց տատանումների օրենքի հետ կապված փորձեր դնելուն, որոնք այն ժամանակ սկսեցի և մինչև հիմա շարունակում եմ:

Կատարվեց հետևյալը:

Նախ պետք է ասեմ, որ մինչ այդ ես շատ լավ գիտեի, որ ցանկացած լարի կեսը տալիս է երկու անգամ ավելի շատ տատանումներ, քան նույնպիսի ծավալ ու խտություն ունեցող ամբողջ լարը, և հենց այդ սկզբունքով էլ ցիմբալի վրա լարերի համար, այսպես կոչված, «կամրջիկներ» հարմարացրի, որից հետո սկսեցի համապատասխան ձևով բոլոր լարերը «ութերորդական տոնի հնչյուններով» լարել մի հինավուրց սրբազան մեղեդու համար՝ դրա համար, իհարկե, օգտագործելով իմ ունեցած «պերամբարսասիդահանը»³², կամ, ինչպես Եվրոպայում են ասում, «կամերտոնը», որի տատանումները համապատասխանում են չինական բացարձակ «դո» նոտային:

Հենց այդ լարելուս ընթացքում ես առաջին անգամ հստակ փաստեցի, որ այն սկզբունքը, թե լարի տատանումների թիվը հակադարձ համեմատական է նրա երկարությանը՝ ոչ միշտ է համընկնում այն բանի ստացման հետ, որն անվանվում է «միահյուս ներդաշնակ համահնչունություն»:

Այդ փաստն ինձ այնքան հետաքրքրեց, որ ես իմ ամբողջ ուշադրությունը կենտրոնացրի միայն դրա հետազոտման վրա և իսպառ դադարացրի հիշյալ ցիմբալներով զբաղվելը:

Հետո այնպես եղավ, որ իմ «ցնդած» ընկերը ևս խիստ հետաքրքրվեց դրանով, և մենք երկուսով սկսեցինք հետազոտել մեր զարմանքը շարժած այդ փաստը:

Միայն մի քանի օր հետո մենք զգացինք, որ անտեսում ենք մեր գլխավոր աշխատանքը, ուստի և որոշեցինք, այդ օրվանից սկսած, մեր ժամանակի կեսը նվիրել ցիմբալի հետ կապված գործն ավարտելուն, իսկ մյուս կեսը՝ նշված հետազոտություններին:

Եվ իրոք, շուտով մեզ հաջողվեց այդ երկու գործերը համատեղել այնպես, որ մեկը մյուսին չխանգարի:

Շատ շուտով մեր հորինած մեխանիկական ցիմբալները պատրաստ էին. դրանք մեզ լիովին բավարարում էին և պետք է ասեմ, որ որոշ չափով նման էին նորհունական ձեռքի երգեհոնին, բայց

³² ռուս. տարբերակում՝ перамбарсасидаан, անգլ. տարբերակում՝ perambarsasidavan

չափսերով մի փոքր ավելի մեծ էին և քառորդ տոնային հնչյուններ արձակելու հնարավորություն ունեին:

Դրանք գործի էին դրվում պտտելով, որի ընթացքում մուրձիկները հարվածում էին համապատասխան լարերին. այդ համապատասխանությունն ապահովվում էր փորվածքներ ունեցող կիսված եղեգների փնջով, որոնց մեջ պտույտի ընթացքում մտնում էին մուրձիկների ծայրերը և ստիպում համապատասխան լարերին թրթռալ:

Ամեն մի առանձին սրբազան մեղեդու համար մենք կիսված ու իրար հետ կապված եղեգների առանձին փնջեր էինք նախապատրաստել, որոնք ցանկության դեպքում կարող էինք փոխել՝ պահանջված մեղեդուն համապատասխան:

Երբ վերջապես մենք մեր եզակի ցիմբալները տարանք մեր շեյխին և նրան պատմեցինք, թե ներկա պահին մեզ ամենից շատ ինչն է հետաքրքրում, նա ոչ միայն օրհնեց այդ գործի հետ կապված մեր հեռանալը մենաստանից, այլև մեզ հետաքրքրած հարցով զբաղվելու համար մեզ մեծ գումար տրամադրեց մենաստանում կուտակված պահուստներից:

Դրանից հետո մենք տեղափոխվեցինք այստեղ և սկսեցինք ապրել մարդկանցից հեռու և մեր մենաստանից դուրս:

Իմ այդ ընկերոջս հետ այստեղ ապրեցինք մշտապես խաղաղ ու հաշտ, և միայն վերջերս ես ընդմիջտ կորցրի իմ անմոռանալի ու անփոխարինելի ընկերոջը:

Այդ կորուստը ես ունեցա հետևյալ ողբալի հանգամանքներում:

Մի քանի շաբաթ առաջ նա իջավ Ամուդարյայի ափերում գտնվող X քաղաքը, որպեսզի զանազան գործիքներ ու նյութեր հայթայթի:

Երբ լքել է այդ քաղաքը և բռնել հետդարձի ճանապարհը, մի «կույր գնդակ», որն արձակվել է ռուսների ու անգլո- աֆղանների փոխհրաձգության ժամանակ խոցել ու տեղում սպանել է նրան. ինձ այդ դժբախտության մասին տեղյակ պահեց մեր ընդհանուր ծանոթ սարտը, ով պատահաբար այդ տեղերով անցնելիս է եղել:

Մի քանի օր հետո ես նրա աճյունը բերեցի և ամփոփեցի ահա այնտեղ»,-ավելացրեց նա՝ ցույց տալով անձավի անկյունը, որտեղ յուրատեսակ մի թումբ էր նշմարվում:

Այսքանն ասելուց հետո Հաջի Աստվածատուրը տեղից բարձրացավ և մի շարժում արեց՝ հավանաբար իր հանգուցյալ ընկերոջ հոգու հանգստության համար, որից հետո գլխի շարժումով մեզ առաջարկեց հետևել իրեն:

Մենք նրա հետ գնացինք և կրկին հայտնվեցինք քարանձավի գլխավոր մուտքի մոտ, որտեղ այդ հարգարժան երկրային էակը կանգ առավ մի ցցվածքի դիմաց և սկսեց ինչ-որ բան փնտրել. հանկարծ ժայռը տեղաշարժվեց և դրա հետևում երևաց քարանձավի մի ուրիշ բաժանմունք տանող մուտքը:

Այդ բաժանմունքը, որ մենք այս անգամ մտանք, բուն Բնության ստեղծածից բացի այնպես լավ ու եզակի ձևով էր կահավորված (համաձայն ներկայիս քո սիրելիների բանականության), որ ես ուզում եմ դրա կառուցվածքը քեզ համար նկարագրել հնարավորինս մանրամասն:

Այդ բաժանմունքի պատերը, առաստաղը և նույնիսկ հատակը ծածկված էին մի քանի շերտ շատ հաստ թաղիքով: Ինչպես հետո ինձ բացատրեցին, այդ պատահական բնական գոյացությունն օգտագործվել ու հարմարեցվել էր այնպես, որ այդտեղ ոչ մի տատանում չթափանցի ո՛չ մյուս բաժանմունքներից, ո՛չ էլ ընդհանրապես դրսից. լինի դա ինչ-որ շարժման, սոսափի, շրշյունի թե անգամ մոտակայքում եղած որևէ մի մեծ կամ փոքր «կենդանի արարածի» շնչառությունից առաջացած տատանում:

Այդ արտասովոր սենյակում կային տարօրինակ տեսքի մի քանի «փորձարարական սարքավորումներ», որոնց մեջ կար նաև այն ձայնարձակիչ գործիքի մի նմուշ, որը ես ինձ հետ տուն էի տարել քո այդ մոլորակի մակերևույթից, հենց այն ժամանակակից երկրային ծագում ունեցող ձայնարձակիչ գործիքից, որին քո սիրելիները դաշնամուր են անվանում:

Այդ դաշնամուրի կափարիչը բարձրացված էր, և դրա տակ երևացող լարերի յուրաքանչյուր շարքին լրացուցիչ ինքնուրույն սարք էր կցված, որը ծառայում է տարբեր աղբյուրներից բխած թրթիռների կենսականությունը չափելու համար և կոչվում է «վիբրոմետր»:

Երբ ես այնտեղ այդքան շատ վիբրոմետրեր տեսա, իմ ընդհանուր ներկայությունում զարմանքի լինելիական ազդակն այն աստիճանին հասավ, որը մեր մոլլա Նասրեդինն արտահայտում է այսպես. «Լրիվ հագնալու սահմանն այն է, երբ պայթում ես»:

Զարմանքի այդ ազդակն իմ ներսում ծագեց և ավելի մեծացավ այն պահից սկսած, երբ քարանձավի միջանցքներում ես տեսա գազային և էլեկտրական լուսավորություն:

Դեռ այդ ժամանակվանից ես զարմացած էի, թե որտեղի՞ց և ինչպե՞ս են դրանք այդտեղ հայտնվել:

Ես նախկինում էլ արդեն լավ գիտեի, որ թեև այդ արտառոց եռուղեղ էակներն այնտեղ կրկին սովորել են տիեզերական գոյացությունների այդպիսի աղբյուրներ օգտագործել իրենց, ինչպես իրենք են ասում, «լուսավորության» համար, այնուամենայնիվ իրենց լուսավորության այդ միջոցները միայն շատ բարդ հարմարանքների օգտագործմամբ էին ստանում, որոնք մատչելի են լինում միայն այնպիսի վայրերում, որտեղ իրենց մեծ խմբավորումներն են գտնվում:

Եվ հանկարծ այստեղ՝ բոլոր խմբավորումներից այսքան հեռու, նման լուսավորություն կար և, որ ամենակարևորն է, այս վայրի շուրջ չկային այնպիսի նշաններ, որոնք սովորաբար ուղեկցում են ժամանակակից երկրային էակների նման հնարավորությանը:

Իսկ երբ տեսա վերոհիշյալ վիբրումները, որոնցով «տատանումների կենսականության աստիճանն» են չափում, ապա զարմանքի ազդակը, ինչպես ասացի, իմ ներսում աճեց ու հասավ գերագույն աստիճանի:

Ես առավել ևս զարմացած էի, քանի որ դրա վերաբերյալ ես արդեն շատ լավ գիտեի, որ այդ ժամանակաշրջանում այնտեղ որևէ տեղ այդպիսի չափիչ սարք գոյություն չունի, որով հնարավոր լինի ինչ-որ թրթռոններ հաշվել, ուստի զարմացել էի, թե այդ վայրի սարերում բոլոր քաղաքակիրթ էակներից հեռու ապրող այդ պատվարժան ծերուկը որտեղի՞ց է գտել այդպիսի չափիչ սարք:

Զնայած իմ հետաքրքրությանը՝ ես ձեռնպահ մնացի հարգարժան Հաջի Աստվածատուրին հենց տեղում այդ մասին հարցնելուց: Ձեռնպահ մնացի այն պատճառով, որ վախենում էի, թե թեմայից շեղող այդ հարցով կարող եմ փոխել արդեն սկսված զրույցի ուղղությունը, որից ակնկալում էի ինձ հետաքրքրող գլխավոր հարցի պատասխանը:

Քարանձավի այդ բաժանմունքում դեռևս ինձ անհայտ շատ ուրիշ սարքավորումներ կային, որոնց շարքում կար շատ տարօրինակ մի սարքավորում, որի վրա ամրացված էին մի քանի, այսպես կոչված, «դիմակներ», որոնցից դեպի առաստաղն էին ձգվում կովի խոչակից պատրաստված ինչ-որ խողովակներ:

Այդ խողովակների միջոցով, ինչպես հետագայում ես նույնպես իմացա, դրսից կարող էր օդ ներս թափանցել, որն անհրաժեշտ էր փորձերին ներկա գտնվող էակների շնչառության համար, քանի որ այդ շինությունը բոլոր կողմերից հերմետիկորեն փակ էր:

Փորձերին մասնակցող էակները հագնում էին այդ տարօրինակ սարքի վրայի դիմակները:

Երբ բոլորս նստեցինք քարանձավի այդ բաժանմունքի հատակին, պատվարժան Հաջի Աստվածատուրն իմիջայլոց ասաց, որ իրենց հետազոտությունների ընթացքում ինքն ու իր դերվիշ-ընկեր Քերբալայ Ազիզ Նուարանը նաև հնարավորություն են ունեցել շատ մանրակրկիտ ուսումնասիրելու Երկրի վրա գոյություն ունեցող բոլոր այն տատանումների տեսությունները, որոնք երբևէ ստեղծվել են երկրային լուրջ գիտնականների կողմից:

Նա ասաց.

«Մենք ուսումնասիրեցինք մեծն Մելնանեշիի ասորական տեսությունը, նշանավոր Մելնեհ Էհ Ավազի արաբական տեսությունը և փիլիսոփա Պյութագորասի հունական տեսությունը, նաև, իհարկե, բոլոր չինական տեսությունները:

Եվ մենք պատրաստեցինք սարքեր, որոնք հար և նման էին այն սարքերին, որոնցով փորձեր էին արել բոլոր այդ հինավուրց իմաստունները. նույնիսկ հավելում կատարեցինք այդ սարքերից մեկի վրա, որն այժմ իմ փորձերի գլխավոր սարքն է:

Նման սարքով Պյութագորասն է կատարել իր փորձերը և այն կոչել մոնոխորդ: Հիմա ես դա մի փոքր ձևափոխել եմ և կոչել «վիբրաշո³³»:

Այս ասելով՝ նա մի ձեռքով հատակին ինչ-որ բան սեղմեց, իսկ մյուսով շատ տարօրինակ տեսք ունեցող և հենց այդտեղ գտնվող մի սարք ցույց տվեց, ապա ավելացրեց, որ հենց դա է իր ձևափոխած «մոնոխորդը»:

³³ անգլ. տարբերակում՝ vibrosho

Նրա ցույց տված սարքը բաղկացած էր երկու մետրանոց տախտակից, որի ամբողջ առջևի կեսը բաժանված էր առանձին մասերի՝ այսպես կոչված, «լադերի», ինչպես «կիթառ» կոչվող ձայնարձակիչ սարքի գրիֆն է ունենում, բայց այդ տախտակի վրա միայն մի լար էր ձգված:

Տախտակի մյուս կեսին բազմաթիվ վիբրոմետրեր էին ամրացված, ինչպես դաշնամուրի լարերի շարքերն ունենին: Դրանք հարմարեցված էին այնպես, որ դրանց ցուցիչ սլաքները լինեն հենց տախտակի առջևի կողմի հիշյալ լադերի վրա:

Տախտակի հետնամասին միացված էր զանազան մետաղյա ու ապակյա խողովակների մի ամբողջ ցանց, որոնք նույնպես նախատեսված էին ձայներ արձակելու համար, բայց այս անգամ այն տատանումներից, որոնք ծագում էին սովորական, արհեստականորեն սեղմված կամ նոսրացված օդի որոշակի շարժումներից ու հոսքերից: Իսկ այդ հնչյունների տատանումների թիվը չափելու համար ծառայում էին նույն այն վիբրոմետրերը, որոնք կիրառվում էին լարերից առաջացած տատանումները չափելու համար:

Պատվարժան Հաջի Աստվածատուրն ուզում էր էլի ինչ-որ բան ասել, երբ քարանձավի մի այլ բաժանմունքից այսպես կոչված ուզբեկական տիպին պատկանող մի տղա դուրս եկավ, որը սկուտեղի վրա մեզ համար թեյի պարագաներ ու կանաչ թեյ բերեց:

Երբ նա սկուտեղը դրեց մեր առջև ու գնաց, պատվարժան Հաջի Աստվածատուրն սկսեց թեյ լցնել գավաթների մեջ, ապա շրջվելով դեպի մեզ՝ կատակով արտաբերեց նման դեպքերում այդ վայրերում ընդունված հետևյալ ասույթը.

«Ընպե՛նք Բնության այս պարզն այն բարեպաշտ հույսով, որ դրանով կբազմապատկվի նրա փառքը...»

Ապա նա շարունակեց.

«Արդեն զգում եմ, որ ինձ պահպանող ուժերը թուլանում են, ուստի հարկ եղած չափով այս բարիքից պիտի խմեմ, որպեսզի իմ ներսում ամեն ինչ կենդանանա մինչև հաջորդ չափաբաժինն ընդունելս»:

Եվ մեղմ ժպիտով նա սկսեց ըմպել իր թեյը: Քանի դեռ խմում էր, ես որոշեցի, առիթից օգտվելով, մի քանի հարց տալ նրան, որ ամբողջ այդ ընթացքում հուզում էին ինձ:

Նախ և առաջ ես հարցրի.

«Մեծարգո՛ Հաջի, մինչև հիմա ես լիովին համոզված էի, թե Երկրի վրա ոչ մի տեղ տատանումների թիվը ճշգրիտ չափող սարք գոյություն չունի: Սակայն այստեղ այդ չափիչ սարքերից շատ եմ տեսնում: Ինչպե՞ս հասկանալ դա: Որտեղի՞ց եք դրանք գտել...»

Իմ այս հարցին պատվարժան Հաջի Աստվածատուրը պատասխանեց հետևյալ կերպ.

«Մեր փորձերի համար նախատեսված այդ սարքերը պատրաստել է իմ հանգուցյալ ընկեր Քերբալայ Ազիզ Նուարանը, և գլխավորապես դրանց եմ ես պարտական տատանումների օրենքների ճանաչողության բնագավառի իմ բոլոր նվաճումների համար:

Իսկապես, - շարունակեց նա, - Երկրի վրա մի անգամ արդեն գոյություն ունեցել են նման սարքերի բոլոր տեսակները, և դա եղել է մեծ Թիքյամիշի ծաղկման շրջանում: Բայց ներկայումս այդ սարքերից ոչ մեկը չի մնացել, եթե չհաշվենք այն, այսպես ասած, «մանկական խաղալիքը», որը հիմա կա Եվրոպայում, և որի միջոցով իբր կարելի տատանումների թիվը հաշվել ու այնտեղ «սիրենա» է կոչվում: Ես էլ եմ ունեցել այդպիսի սիրենա, երբ նոր էի սկսում իմ լուսաբանիչ փորձերը:

Այդ սիրենա կոչվածը Ձեհրեկ անունով մի գիտուն բժիշկ է հորինել երկու դար առաջ, որից հետո, վերջին հարյուրամյակի կեսերին այն կատարելագործվել է ոմն Կոնյար դե-լա Տուրի կողմից:

Այդ երեխայական խաղալիքի կառուցվածքն այնպիսին է, որ խողովակով սեղմված օդ է փչվում պտտվող սկավառակի վրա, որի վրա ոչ մեծ անցքեր են արված, ընդ որում ամեն մի անցքն իր չափերով ճշտորեն համապատասխանում է գլխավոր օղային խողովակի անցքերից մեկին. սկավառակի պտույտի ժամանակ գլխավոր խողովակից եկող օդի ճանապարհն այդ անցքերով հաջորդաբար բացվում ու փակվում է:

Այդպիսով, այդ սկավառակի արագ պտույտի ժամանակ անցքերի վրա օդի հաջորդական հրումներ են տեղի ունենում և դրանցից արձակվում է տոնի միևնույն բարձրությամբ հնչյուն, իսկ եթե ժամացույցային մեխանիզմով չափվող պտույտների թիվը բազմապատկվի սկավառակի վրա եղած անցքերի թվով, ապա կստացվի տվյալ ժամանակահատվածում առաջացած ձայնային տատանումների թիվը:

Ի դժբախտություն եվրոպացիների՝ այդ սիրենայի ո՛չ առաջին գյուտարարը, ո՛չ էլ դրա կատարելագործողը չգիտեին, որ հնչյունը կարող է արձակվել ոչ միայն իրական տատանումների ազդեցությամբ, այլև ուղղակի օդի հոսքից. իսկ քանի որ այդ սիրենան հնչում է միայն օդի հոսքերի և բոլորովին ոչ սեփական տատանումների ազդեցությամբ, ապա խոսք անգամ լինել չի կարող դրա ցուցմունքների միջոցով տատանումների ճշգրիտ թիվ ստանալու մասին:

Իսկ այն, որ հնչյուն կարող է առաջանալ երկու պատճառով՝ բուն բնական համաշխարհային տատանումներով և ուղղակի օդի հոսքով, շատ համոզիչ ու հետաքրքիր փաստ է, և ես հիմա գործնականորեն ցույց կտամ դա»:

Այսքանն ասելուց հետո պատվարժան Հաջին վեր կացավ տեղից և քարանձավի մի ուրիշ բաժանմունքից բերեց ծաղկած ծաղիկներով մի ծաղկաման, դրեց անձավի այդ բաժանմունքի կենտրոնում և ինքը նստեց նշանավոր Պյութագորասի նախկին մոնոխորդի առջև:

Շրջվելով դեպի մեր կողմը՝ նա ասաց.

– Ես հիմա խողովակների այս համակցությունից կհնչեցնեմ ընդամենը հինգ տոների հնչյուններ, իսկ դուք, խնդրում եմ, ուշադիր դիտեք այս ծաղկամանի ծաղիկները և ձեր ժամացույցներով նշեք, թե որքան ժամանակ ես կհնչեցնեմ այդ հնչյունները. նաև մտապահեք այն թվերը, որոնք այդ հնչյունների համար ցույց կտան վիբրոմետրերի սլաքները:

Այնուհետև նա փոքրիկ փութերի օգնությամբ սկսեց օդ մղել դեպի համապատասխան խողովակները, որոնցից հնչեց հինգ տոներից բաղկացած միօրինակ մի մեղեդի:

Այդ միօրինակ մեղեդին շարունակվեց տասը րոպե, իսկ մենք ոչ միայն մտապահեցինք վիբրոմետրերի սլաքների ցույց տված թվերը, այլև այդ հինգ հնչյունային տոները շատ լավ տպավորվեցին մեր լսողության օրգաններում:

Երբ Հաջին ավարտեց այդ միօրինակ մեղեդու հնչեցումը, ծաղկամանի ծաղիկներն առաջվա պես նույն ծաղկած վիճակում էին:

Հետո Հաջին այդ նախկին մոնոխորդից անցում կատարեց ձայնարձակիչ դաշնամուրին և, կրկին մեր ուշադրությունը հրավիրելով վիբրոմետրերի սլաքների վրա, սկսեց հաջորդաբար զարկել դաշնամուրի համապատասխան ստեղներին և հնչեցրեց նույն հինգ տոներից բաղկացած նույն միօրինակ մեղեդին:

Այս անգամ նույնպես վիբրոմետրերի սլաքները նույն թվերը ցույց տվեցին:

Դեռ հինգ րոպե էլ չէր անցել, երբ Հաջին նշանացի մեզ հասկացրեց, որ նայենք ծաղկամանին. մենք տեսանք, որ ծաղիկները որոշակիորեն սկսել են թռչնել: Իսկ երբ տասը րոպե անցնելուց հետո Հաջին կրկին ավարտեց իր նվագը, ծաղկամանում մնացել էին միայն լրիվ թռչնած ծաղիկների կնճռոտված ցողունները:

Հաջին կրկին նստեց մեր կողքին և ասաց.

«Իմ երկարատև հետազոտություններով ես համոզվել եմ, և շատ չայմեռնիս գիտությունն էլ նույնն է պնդում, որ աշխարհում գոյություն ունեն երկու տիպի տատանումներ. դրանք են՝ այսպես ասած, «ստեղծարար տատանումները» և «իմպուլսային տատանումները»:

Ինչպես պարզել եմ փորձնական ճանապարհով, նշված ստեղծարար տատանումներն առաջացնող ամենալավ լարերը պետք է պատրաստված լինեն մի որոշակի մետաղից կամ այծի աղիքներից:

Իսկ այլ նյութերից պատրաստված լարերն այդ հատկությամբ օժտված չեն լինում:

Դրանցից պատրաստված լարերի տատանումները, ինչպես նաև օդի հոսքերով առաջացողները զուտ իմպուլսային տատանումներ են լինում: Այդ դեպքերում հնչյուններն առաջանում են այն տատանումներից, որ ծագում են իրենց ստեղծած ազդակի մեխանիկական ազդեցությունից և օդի դրա հետևանքով առաջացած շփումից»:

Հաջի Աստվածատուրն այնուհետև ասաց.

«Սկզբնական շրջանում մենք մեր փորձերը կատարում էինք միայն այդ վիբրաշողով: Բայց մի անգամ, երբ իմ ընկեր Քերբալայ Ազիզ Նուարանը գործով գնացել էր բուխարական X. քաղաքը, այնտեղ աճուրդի հանված իրերի թվում մի դաշնամուր էր տեսել, որը պատկանել էր քաղաքից հեռացած մի ռուս գեներալի. պատահաբար նկատելով, որ դրա լարերը հենց այն մետաղից են պատրաստված, որը պետք է մեր փորձերի համար՝ նա գնել էր այդ դաշնամուրը և, իհարկե, մեծ դժվարությամբ հասցրել այստեղ՝ մեր սարերը:

Այդ դաշնամուրն այստեղ տեղավորելով, մենք դրա լարերը լարեցինք ճիշտ տատանումների այն օրենքներին համապատասխան, որոնք շարադրված են հին չինական շատչայմեոնիս գիտության մեջ:

Դաշնամուրը ճիշտ լարելու համար մենք ոչ միայն հիմք ընդունեցինք հին չինական «դո» նոտայի բացարձակ հնչյունը, այլև, ինչպես հանձնարարում է այդ գիտությունը, հաշվի առանք տեղի աշխարհագրական պայմանները, մթնոլորտի ճնշումը, շինության ձևն ու չափերը և շրջակա միջավայրի ու բուն շինության ներսի միջին ջերմաստիճանները և այլն. մենք նաև այն հաշվի առանք, թե որքան մարդկանց ճառագումներ կլինեն շինության ներսում, երբ մենք կկատարենք մեր նախատեսած փորձերը:

Եվ երբ մենք այդ եղանակով լարեցինք այդ դաշնամուրը, տառացիորեն հենց այդ պահից սկսած՝ դրանից բխող տատանումները ձեռք բերեցին բոլոր այն հատկությունները, որոնք հիշատակված են այդ մեծ գիտության մեջ:

Հիմա ես կցուցադրեմ, թե ինչեր կարելի է անել մարդկային գիտելիքներով ճանաչված այն տատանումների օրենքներով, որոնք արձակվում են այս սովորական դաշնամուրից»:

Այսքանն ասելուց հետո նա կրկին վեր կացավ տեղից:

Անձավի մյուս բաժանմունքից այս անգամ նա բերեց ծրար, թուղթ և մատիտ:

Բերված թղթի վրա նա ինչ-որ բան գրեց, գրվածը դրեց ծրարում, ծրարը կախեց կեռիկից, որը կախված էր առաստաղի կենտրոնական մասից, կրկին նստեց դաշնամուրի մոտ և ոչինչ չասելով՝ սկսեց առաջվա պես հարվածել որոշակի ստեղծերի՝ կրկին հնչեցնելով ինչ-որ միապաղաղ մեղեդի:

Բայց այս անգամ այդ մեղեդու մեջ հավասարաչափ ու կանոնավոր կերպով կրկնվում էին դաշնամուրի ամենացածր օկտավայի երկու հնչյուններ:

Որոշ ժամանակ անց ես նկատեցի, որ իմ դերվիշ-ընկեր Հաջի Բոգա Էդդինը տեղում չի կարողանում հանգիստ նստել, քանի որ նրա ձախ ոտքը սկսել էր ցնցվել:

Հետո նա սկսեց շփել իր այդ ոտքը, իսկ դեմքի արտահայտությունից երևում էր, որ նրա ոտքը ցավում է:

Պատվարժան Հաջի Աստվածատուրը, դրան ոչ մի ուշադրություն չդարձնելով, շարունակում էր խփել ստեղծերին:

Երբ վերջապես ավարտեց իր նվագը, նա շրջվեց դեպի ինձ և ասաց.

–Ո՛վ, իմ ընկերոջ ընկե՛ր, բարի եղեք խնդրեմ, վե՛ր կացեք, հանե՛ք ծրարը կեռիկից և կարդացեք, թե ինչ կա գրված թղթի վրա:

Ես վեր կացա վերցրի ծրարը, բացեցի և կարդացի հետևյալը.

«Դաշնամուրից հնչած տատանումների հետևանքով, ձեզնից յուրաքանչյուրի ձախ ոտքի վրա՝ ծնկից մեկ դյույմ ցած և ոտքի մեջտեղից կես դյույմ դեպի ձախ, պետք է, այսպես կոչված, «թարախապալար» առաջացած լինի»:

Երբ ես դա կարդացի, պատվարժան Հաջին երկուսիս խնդրեց մերկացնել մեր ձախ ոտքի նշված մասը:

Երբ մերկացրինք, տեսանք, որ դերվիշ Բոգա Էդդինի ձախ ոտքի հենց այդ մասում իսկական թարախապալար է առաջացել. սակայն, ի մեծագույն զարմանք պատվարժան Հաջի Աստվածատուրի, իմ ոտքի այդ մասում ոչ մի նման բան չէր երևում:

Երբ Հաջի Աստվածատուրը համոզվեց դրանում, հանկարծ մանկան պես տեղից վեր թռավ և մեծ գրգռվածությամբ բացականչեց. «Չի՛ կարող նման բան լինել...», որից հետո խելակորույս աչքերը հառեց իմ ոտին:

Այդպես հինգ րոպե անցավ: Խոստովանում եմ՝ այդ մոլորակում եղածս ամբողջ ընթացքում առաջին անգամ ես ինձ կորցրի և չէի կարողանում ելք գտնել ստեղծված կացությունից:

Վերջապես նա կիպ մոտեցավ ինձ և փորձեց ինչ-որ բան ասել, բայց այդ պահին հուզմունքից նրա ոտքերը սկսեցին նկատելիորեն դողալ, ուստի նա նստեց հատակին և նշան արեց, որ ես էլ նստեմ:

Հատակին նստելուց հետո նա ինձ նայեց թախծոտ աչքերով և հուզիչ անկեղծությամբ ասաց հետևյալը.

«Ո՛վ, իմ ընկերոջ ընկե՛ր, ջահել ժամանակ ես անչափ հարուստ էի՝ այնքան հարուստ, որ տասից ավելի քարավաններս, որոնցից յուրաքանչյուրում հազարից ավելի ուղտ կար, մշտապես քայլում էին մեր մեծ Ասիայի բոլոր ուղղություններով:

Նրանք, ովքեր գիտեին իմ հարեմի մասին, այն ամենահարուստն ու լավագույնն էին համարում Երկրի վրա, և իմ ունեցվածքի մնացած մասերը նույնպիսի մասշտաբներ ունեին. կարճ ասած՝ ես առատությամբ ունեի այն ամենից, ինչ կարող է տալ մեր սովորական կյանքը:

Բայց այդ ամենն աստիճանաբար այնքան հոգնեցրեց ու հագեցրեց ինձ, որ երբ երեկոյան պառկում էի քնելու, սարսափով էի մտածում այն մասին, որ վաղը նույնն է կրկնվելու, և ես ստիպված եմ լինելու կրել իմ ուսերին այդ ձանձրալի «բեռը»:

Վերջապես ինձ համար լրիվ անտանելի դարձավ նման ներքին կացությամբ ապրելը:

Եվ ահա մի անգամ, երբ ես առանձնապես ուժեղ էի զգում առօրյա կյանքի ունայնությունը, իմ գլխում միտք ծագեց ինքնասպանություն գործել:

Մի քանի օր ես այդ մասին սառնասրտորեն մտորեցի և արդյունքում վերջնականապես որոշեցի ի կատար ածել մտքովս անցածը:

Վերջին երեկոյան, մտնելով այն սենյակը, որտեղ պատրաստվում էի ի կատար ածել որոշումս, ես հանկարծ հիշեցի, որ վերջին անգամ չեմ այցելել նրան, ով իմ կյանքի ծագման ու իմ կազմավորման պատճառի մի կեսն էր եղել:

Այսինքն՝ հիշեցի մորս, որն այն ժամանակ դեռ կենդանի էր: Եվ նրան հիշելն իմ ներսում շուտ տվեց ամեն ինչ:

Ես հանկարծ պատկերացրի, թե ինչպես նա կտառապի, երբ իմանա իմ վախճանի մասին, այն էլ այդ ձևով տեղի ունեցած:

Հիշեցի ու պատկերացրի սիրելի մորս վիճակը, թե ինչպես նա կկոտորվի լրիվ մենակությունից ու անսփռփ վշտից, պատկերացրի նրա անլուր հառաչանքները, և այդ ամենից այնպիսի խղճահարություն ծագեց իմ ներսում, որ հազիվ չխեղդվեցի այդ խղճահարությունից ծագած հեկեկանքներից:

Եվ միայն այդ ժամանակ իմ ողջ Էությանմբ ես հասկացա, թե ինչ է մայրս ինձ համար, և թե ինչպիսի անմար զգացում պետք է իմ ներսում ունենամ նրա նկատմամբ:

Այդ ժամանակից սկսած, իմ մայրն ինձ համար կյանքի աղբյուրի վերածվեց:

Դրանից հետո երբ էլ լինեմ՝ գիշեր թե ցերեկ, հենց որ հիշում էի նրա սիրելի դեմքը, նոր կենսական ուժեր էի ստանում. իմ ներսում կրկին արթնանում էր ցանկությունը՝ ապրելու և անելու ամեն ինչ, որ մորս հետագա կյանքը հաճելի լինի իր համար:

Այդպես անցավ տասը տարի, որից հետո նա վախճանվեց մի ահավոր հիվանդությունից, և ես կրկին մենակ մնացի:

Նրա մահից հետո ներքին դատարկությունը կրկին սկսեց օրեցօր ավելի ու ավելի ուժեղ տանջել ինձ»:

Իր պատմության այս մասում պատվարժան Հաջի Աստվածատուրի հայացքն ընկավ դերվիշ Բոզա Էդդինի վրա, և նա, կրկին տեղից վեր թռչելով, դիմեց նրան.

–Ա՛խ, սիրելի՛ ընկեր, հանուն մեր ընկերության ների՛ր ինձ՝ ծերուկիս, որ մոռացա վերջ տալ քեզ տանջող այն ցավին, որն առաջացրին դաշնամուրի չարանենգ տատանումները...

Այսպես ասելով՝ նա մոտեցավ դաշնամուրին և կրկին սկսեց զարկել ստեղներին. այս անգամ նա հաջորդաբար հնչեցնում էր միայն երկու նոտա՝ առաջինը դաշնամուրի ավելի բարձր օկտավայից, իսկ մյուսը՝ ավելի ցածր: Այդ ընթացքում նա համարյա գոչելով ասաց.

– Թո՛ղ որ դաշնամուրից հնչող, այս անգամ բարեբար հնչյունների շնորհիվ իմ հին ընկերոջ ոտքի ցավը դադարի...

Եվ իրոք, դեռ հինգ րոպե չանցած, դերվիշ Բոզա Էդդինի դեմքը կրկին պարզվեց, և այն ահավոր մեծ թարախապալարից, որը մինչ այդ զարդարում էր նրա ձախ ոտքը, հետք անգամ չմնաց:

Այնուհետև դերվիշ Հաջի Աստվածատուրը կրկին եկավ և նստեց մեր կողքին, ապա արտաքինից լիովին հանգիստ շարունակեց իր պատմությունը.

«Իմ սիրելի մոր մահից չորս օր անց ես անելանելիության զգացումով նստել էի իմ սենյակում և մտածում էի, թե հետո ինչ կլինի ինձ հետ:

Հենց այդ ժամանակ իմ պատուհանի տակ՝ փողոցում, սկսեց սրբազան հիմներ երգել ինչ-որ թափառական դերվիշ:

Իմ պատուհանից նայելով ու տեսնելով, որ այդ դերվիշը շատ ծեր է ու հեզ դեմք ունի՝ ես հանկարծ որոշեցի նրանից խորհուրդ հարցնել և անմիջապես ծառայիս ուղարկեցի, որ ներս հրավիրի նրան:

Երբ նա ներս մտավ և սովորական ողջույնի խոսքերից հետո նստեց «մինդարի» վրա, ես, բացարձակապես ոչինչ չթաքցնելով, նրան նկարագրեցի իմ հոգեկան վիճակը:

Իմ խոսքերից հետո թափառաշրջիկ դերվիշը խոր մտածմունքների մեջ ընկավ, ապա, տեղից վեր կենալով, ակնդետ նայեց ինձ ու ասաց.

– Դու միայն մի ելք ունես՝ նվիրվել կրոնին:

Այս ասելուց հետո նա, ինչ-որ աղոթք մրմնջալով, դուրս եկավ ու ընդմիջտ լքեց իմ տունը:

Նրա հեռանալուց հետո ես կրկին մտքերի մեջ ընկա:

Այս անգամվա իմ մտորումներից հետո հենց նույն օրը ես անդառնալիորեն որոշեցի որևէ մի «դերվիշական եղբայրության» անդամ դառնալ, բայց ոչ իմ հարազատ երկրում, այլ ինչ-որ հեռու մի տեղ:

Հաջորդ օրը ես իմ ամբողջ հարստությունը սկսեցի մաս-մաս անել ու բաժանել հարազատներին ու աղքատների միջև, իսկ երկու շաբաթ հետո ընդմիջտ լքեցի իմ հայրենիքը և եկա այստեղ՝ Բուխարա:

Այստեղ ընտրեցի բազմաթիվ դերվիշական եղբայրություններից մեկը և դարձա դրա անդամ. ընտրեցի հենց այն եղբայրությունը, որի դերվիշները ժողովրդի մեջ հայտնի էին իրենց խստակյաց կյանքով:

Բայց, դժբախտաբար, այդ եղբայրության դերվիշները շուտով ինձ հուսախաբ արեցին, ուստի ես փոխադրվեցի մի ուրիշ եղբայրություն. այստեղ ևս նույն բանը կատարվեց, մինչև որ վերջապես ես այն մենաստանի եղբայրության դերվիշներից մեկը դարձա, որի շեյխն ինձ հանձնարարեց մեխանիկական լարային երաժշտական գործիք պատրաստել, ինչի մասին արդեն պատմել եմ ձեզ:

Պատմել եմ նաև, թե դրանից հետո ինչպես տարվեցի տատանումների օրենքների գիտությամբ և առ այսօր զբաղվում եմ այդ գործով:

Բայց այսօր այդ գիտության պատճառով ես կրկին հայտնվեցի այն նույն հոգեկան վիճակում, որն առաջին անգամ ինձ վիճակվեց ապրել իմ մոր մահվան նախօրյակին, ում սերն ինձ համար ջերմության միակ աղբյուրն էր, որն ինձ այդքան շատ էր օգնել իմ դատարկ ու ծանր կյանքի ընթացքում:

Առ այսօր չեմ կարողանում առանց ցնցվելու հիշել այն պահը, երբ մեր բժիշկներն ինձ ասացին, որ իմ մորը մի օրվա կյանք է մնացել:

Այն ժամանակ առաջին հարցը, որ ծագեց ահավոր մտատանջությանս վիճակում, այն էր, թե ինչպե՞ս եմ ապրելու դրանից հետո...

Իսկ թե հետո ինչ եղավ ինձ հետ, և ինչեր տեղի ունեցան, ես արդեն քիչ թե շատ պատմել եմ ձեզ:

Մի խոսքով, երբ ես տարվեցի տատանումների գիտությամբ, աստիճանաբար ինձ համար մի նոր հարստություն գտա:

Այն ինձ համար մոր տեղ գրավեց և շատ տարիների ընթացքում նույնպիսի նվիրված ու հավատարիմ օժանդակություն էր ինձ համար, ինչպիսին ինձ տալիս էր իմ մայրը, ուստի մինչև այսօր ես ապրում ու ոգեշնչվում էի միայն դրա ճշմարտություններով:

Մինչև հիմա ոչ մի այնպիսի դեպք չէր եղել, որ տատանումների օրենքներին վերաբերող իմ բացահայտած ճշմարտությունները չտային հենց այն արդյունքները, որոնք ես ակնկալում էի:

Իսկ այսօր այն արդյունքները, որոնք ես վստահաբար ակնկալում էի ստանալ՝ չստացա...

Ահավորն այն է, որ ես այսօր ավելի քան երբևէ բժախնդիր էի հաշվարկել այն տատանումները, որոնք պետք են տվյալ դեպքի համար. ես ճշգրիտ հաշվել էի, որ ենթադրյալ թարախաբշտիկը պետք է գոյանա ձեր մարմնի հենց այդ նշված մասում, և ոչ՝ որևէ մի այլ տեղ:

Եվ ահա ստացվեց չտեսնված մի բան. այն չառաջացավ ո՛չ նշված մասում, ո՛չ էլ ձեր մարմնի որևէ այլ մասում:

Իմ կյանքում հարազատ մոր տեղն զբաղեցրած այդ գիտությունն այսօր առաջին անգամ դավաճանեց ինձ, և հիմա իմ ներսում աննկարագրելի մի վիշտ է տիրում:

Քանզի այսօր դեռ կարողանում եմ համակերպվել այդ մեծ վշտին, բայց թե ինչ կլինի վաղը, չեմ կարող պատկերացնել:

Եվ եթե այսօր դեռ կարողանում եմ համակերպվել, ապա միայն այն պատճառով, որ շատ լավ հիշում եմ մեր մեծ մարզարե «Եսայի Նուրի» այն խոսքը, որն ասում է՝ անհատը պատասխանատու չէ իր արարքների համար միայն այնժամ, երբ հոգեվարքի մեջ է:

Երևի թե իմ գիտությունը՝ իմ աստվածությունն ու իմ երկրորդ մայրը, նույնպես «հոգեվարքի մեջ» է, եթե այսօր դավաճանում է ինձ:

Ես շատ լավ գիտեմ, որ հոգեվարքին մահն է հաջորդում:

Եվ Դուք, սիրելի իմ ընկերոջ ընկե՛ր, այսօր ակամա նմանվեցիք այն բժիշկներին, որոնք մորս մահվան նախօրյակին ինձ հայտնեցին, որ նրան ընդամենը մեկ օրվա կյանք է մնացել:

Դուք այսօր ինձ գուժեցիք, որ վաղն իմ այս նոր օջախը նույնպես կմարի:

Նույն այն ահավոր ապրումներն ու զգացումները, որոնք ես ունեցա մորս անխուսափելի մահվան լուրը բժիշկներից լսելուց հետո մինչև նրա մահը, այսօր նորից կրկնվում են իմ ներսում:

Բայց ինչպես այն ժամանակ, երբ այդ ահավոր ապրումների ու զգացումների մեջ կար աղոտ մի հույս, որ գուցե նա չի մեռնի, այնպես էլ հիմա է իմ ներսում նման մի հույս թրթռում:

Ա՛խ, իմ ընկերոջ ընկե՛ր, հիմա երբ արդեն գիտեք իմ հոգեկան վիճակը, թախանձագին խնդրում եմ ձեզ. կարո՞ղ եք արդյոք բացատրել, թե ի՞նչ գերբնական ուժ կա այստեղ խառնված, որ այն թարախաբշտիկը, որն անխուսափելիորեն պետք է գոյանար ձեր ձախ ոտքի վրա, չգոյացավ:»

Քանզի հավատն առ այն, որ այդ բշտիկն անխուսափելիորեն պետք է առաջանա, վաղուց է իմ մեջ ամրապնդված, ինչպես «*տուկունյան քարը*»:

Եվ այդ հավատն այդպես ամուր ու անասան է դարձել այն պատճառով, որ համարյա քառասուն տարի օր ու գիշեր ես համառորեն ուսումնասիրել եմ համաշխարհային տատանումների այդ մեծ օրենքները, մինչև որ դրանց նշանակության ըմբռնումը դարձել է ինձ համար, այսպես ասած, «երկրորդ բնություն»:

Իր խոսքն այսպես ավարտելով՝ գուցե թե Երկրի վերջին մեծագույն իմաստունը հույսով լի իր հայացքով նայեց իմ աչքերի մեջ:

Կարո՞ղ ես արդյոք պատկերացնել այն ժամանակվա իմ վիճակը, սիրելի՛ զավակս... Ի՞նչ կարող էի նրան ասել:

Նույն օրվա մեջ երկրորդ անգամ այդ երկրային էակի պատճառով ես ելք չէի տեսնում ստեղծված կացությունից:

Այս անգամ, ինձ համար այդքան անսովոր վիճակին խառնվեց իմ «*լինելիական խիղճնապարի*³⁴», կամ, ինչպես քո սիրելիներն են ասում «խղճահարության» զգացումն այդ երկրային եռուղեղ էակի նկատմամբ՝ գլխավորապես որովհետև նա իմ պատճառով էր տառապում:

Եվ այդպես եղավ, քանի որ ես այն ժամանակ հստակ գիտակցում էի, որ բավական է մի երկու խոսք ասեմ, և նա ոչ միայն կհանդարտվի, այլև դրանց շնորհիվ նույնիսկ կհասկանա, որ իմ ձախ ոտքի վրա թարախապալար չառաջանալն էլ ավելի է ապացուցում նրա պաշտած գիտության ճշմարտացիությունն ու ճշգրտությունը:

Ես լիակատար բարոյական իրավունք ունեի նրան իմ մասին ճշմարտությունն ասելու, քանի որ իր արժանիքներով նա արդեն «կալմանոիդի»³⁵ աստիճանին էր հասել, այսինքն այդ մոլորակի այնպիսի եռուղեղ էակ էր, որի հետ բաց խոսելը Վերևից արգելված չէր:

Բայց այդ պահին ես ոչ մի կերպ չէի կարող այդպես վարվել, քանի որ այնտեղ ներկա էր նաև Հաջի Բոգա Էդդինը, որը դեռևս այնպիսի սովորական երկրային եռուղեղ էակներից էր, որոնց, մեր ցեղի էակներին երդմամբ, Վերևից արգելված էր ցանկացած հանգամանքներում որևէ ճշմարտացի տեղեկատվություն հաղորդել:

Մեր ցեղի էակների վրա դրված այդ արգելքը հավանաբար դրվել է Սրբազնագույն Աշիաթա Շիեմաշի նախաձեռնությամբ:

Այդ արգելքը մեր ցեղի էակների վրա դրվել է գլխավորապես այն պատճառով, որ քո այդ մոլորակի էակներին անհրաժեշտ է ունենալ «*լինելիության իմացություն*»:

Իսկ ցանկացած, նույնիսկ ճշմարտացի տեղեկատվություն այդ էակներին ընդհանրապես տալիս է միայն «մտավոր գիտելիք», իսկ այդ մտավոր գիտելիքը, ինչպես մի անգամ արդեն քեզ ասել եմ, միշտ միայն փոքրացնում է *լինելիության իմացություն* ձեռք բերելու նրանց հնարավորությունները:

Իսկ քանի որ կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքներից լիովին ազատվելու միակ միջոցը քո այդ մոլորակի տարաբախտ եռուղեղ էակների համար միայն հենց այդ *լինելիության*

³⁴ ռուս. տարբերակում՝ хихджнапары, անգլ. տարբերակում՝ hikhjnapar

³⁵ ռուս. տարբերակում՝ калмениор, անգլ. տարբերակում՝ kalmanuor

իմացությունն է մնացել, ապա Երկրի էակներին վերաբերող այդ հրամանը մեր ցեղի էակներին տրվել է երդումով:

Ահա այս պատճառով, սիրելի՛ զավակս, ես այն ժամանակ հանձն չառա դերվիշ Բոգա Էդդինի ներկայությամբ այդ երկրային իմաստուն Հաջի Աստվածատուրին հայտնել նրա անհաջողության իսկական պատճառը:

Սակայն, քանի որ երկու դերվիշներն էլ սպասում էին իմ պատասխանին, ես ամեն դեպքում պետք է նրանց ինչ-որ բան ասեի. ուստի, դիմելով Հաջի Աստվածատուրին, ասացի միայն հետևյալը.

– Մեծարգո՛ Հաջի Աստվածատուր, եթե համաձայնեք իմ պատասխանը լսել ոչ թե հիմա, այլ մի փոքր ավելի ուշ, ապա երդվում եմ ինձ կյանք պարգևող պատճառով, որ կասեմ իմ պատասխանը, որը ձեզ լիովին կբավարարի: Դուք ոչ միայն կհամոզվեք, որ ձեր սիրած գիտությունն ամենաճշմարիտն է բոլոր գիտությունների մեջ, այլև որ սուրբ մեծ գիտնականներ Չուն Կիլ Տեզի և Չուն Տրո Պելի ժամանակներից հետո դուք Երկրի մեծագույն գիտնականն եք:

Իմ այս պատասխանը լսելուց հետո պատվարժան դերվիշ Հաջի Աստվածատուրն իր աջ ձեռքը դրեց մարմնի այն մասի վրա, որտեղ երկրային էակների սիրտն է գտնվում. իսկ դա նշան էր այն բանի, որ նա ասում է. «Հավատամ և հուսամ առանց կասկածի որևէ նշույլի»:

Այնուհետև նա շրջվեց դերվիշ Բոգա Էդդինի կողմը և սկսեց նրա հետ կրկին շատչայմենիս գիտության թեմայով զրուցել այնպես, կարծես ոչինչ չէր պատահել:

Նախորդ շփոթմունքն ամբողջովին հարթելու նպատակով ես կրկին դիմեցի նրան և, ցույց տալով քարանձավի այն խորշը, որտեղ մետաքսե գունավոր կտորներ էին կախված, հարցրի նրան.

– Մեծարգո՛ Հաջի, իսկ ի՞նչ կտորներ են կախված այն խորշում:

Այդ հարցին նա պատասխանեց, որ այդ գունավոր կտորները նույնպես օգտագործվում են տատանումների հետ կապված փորձերի ընթացքում, որից հետո շարունակեց այսպես.

– Վերջերս ես ինձ համար պարզեցի, թե ինչ գույնի կտորներն ու ինչ աստիճանի վնաս են հասցնում մարդկանց ու կենդանիներին իրենց թրթռանքով: Եթե ուզում եք, ես ձեզ համար կցուցադրեմ նաև այդ բավականին հետաքրքիր փորձը:

Այս ասելով՝ նա նորից վեր կացավ ու գնաց հարևան բաժանմունքը, որտեղից այս անգամ մի տղայի օգնությամբ ներս բերեց երեք երկրային չորքոտանի էակներ՝ «շուն», «ոչխար» և «այծ». բերեց նաև տարօրինակ տեսքի մի քանի սարքեր, որոնք ապարանջան էին հիշեցնում:

Այդ հատուկ ապարանջաններից մեկը նա հազգրեց դերվիշ Բոգա Էդդինի ձեռքին, իսկ մյուսը՝ իր ձեռքին և այդ ընթացքում, իմիջիայլոց, ինձ ասաց հետևյալը.

– Ես այս սարքից ձեր ձեռքին չեմ հազցնում, քանի որ դրա համար բավականին ծանրակշիռ հիմքեր ունեմ...

Այնուհետև նա այդ տարօրինակ փականակերպ սարքերից հազգրեց վերոհիշյալ այծի, ոչխարի ու շան վզերին և, ցույց տալով արտաքինով տարբերվող այդ էակների վզերին հազգրած այդ տարօրինակ սարքերի վրա եղած վիբրոմետրերը, մեզ խնդրեց գրի առնել դրանց սլաքների ցուցմունքները:

Մենք նայեցինք ու «բլոկնոտներում», կամ, ինչպես սովորաբար նրանք են ասում, «նոթատետրերում», որոնք մեզ համար բերեց պատանին, գրի առանք բոլոր այդ հինգ վիբրոմետրերի ցուցմունքները:

Դրանից հետո դերվիշ Աստվածատուրը կրկին նստեց թաղիքի վրա և մեզ ասաց հետևյալը.

««Կյանքի» ցանկացած ձև ունի միայն իրեն հատուկ սեփական թրթիռների «համակցություն», որը կազմավորվում է կյանքի տվյալ ձևի զանազան որոշակի օրգաններից առաջացող տատանումներով: Այդ համակցությունը ժամանակի ընթացքում փոխվում է և կախված է այն բանից, թե որքան ինտենսիվ են այդ տարբեր պատճառներից ծնված տատանումները ձևափոխության ենթարկվում իրենց համապատասխան աղբյուրներով կամ օրգաններով:

Եվ ահա, բոլոր այդ տարասեռ ու տարբեր պատճառներով առաջացած թրթիռներն ամբողջական կյանքի սահմաններում մշտապես միախառնվում են մի ընդհանուր սուբյեկտիվ, այսպես կոչված, «թրթիռների ակորդի» մեջ, որը համապատասխանում է կյանքի տվյալ ձևին:

Որպես օրինակ՝ վերցնենք իմ ընկեր Բոգա Էդդինին և ինձ:

Տեսնո՞ւմ եք,– նա ցույց տվեց իր ձեռքի վրայի վիբրոմետրի թվերը և շարունակեց,– ես ունեմ ընդհանուր հաշվով այսքան տատանումների թիվ, իսկ իմ ընկեր Բոգա Էդդինն ահա այսքանով ավելի շատ:

Դրա պատճառն այն է, որ նա անհամեմատ ջահել է ինձնից, և նրա որոշ օրգաններ անհամեմատ ավելի եռանդուն են գործում, քան իմոնք, և այդպիսով նրա համապատասխան տատանումներն ավելի մեծ ինտենսիվության «արդյունքներ են տալիս», քան իմ տատանումները:

Իսկ հիմա նայեք շան, ոչխարի ու այծի վրա եղած վիրբումետրերի թվերին: Շան թրթիռների ընդհանուր գումարը երեք անգամ գերազանցում է ոչխարի թրթիռներին և երկու անգամ պակաս է այծի թրթիռներից, նաև շան թրթիռների ընդհանուր ակորդում թրթիռների քանակը մի փոքր է զիջում իմ ընկերոջ և իմ ունեցածին:

Հարկ է նշել, որ մարդկանց մեջ՝ հատկապես վերջին ժամանակներին պատկանողների, շատ կարելի է հանդիպել այնպիսիների, որոնց թրթիռների սուբյեկտիվ ակորդում եղած թրթիռների քանակն ավելի քիչ է ստացվում, քան ցույց է տալիս այս շան ներկայությունը:

Այդպես է ստացվել այն պատճառով, որ հենց նոր հիշատակածս մարդկանց մեծ մասի մի գործառույթը՝ զգացականը, որից ստացվում է սուբյեկտիվ թրթիռների գերակշիռ մասը, արդեն ամբողջովին հետաձգ է ապրել, ուստի նրանց թրթիռների ընդհանուր գումարն ավելի փոքր է ստացվում, քան այս շանը:

Այսքանն ասելուց հետո պատվարժան Հաջի Աստվածատուրը կրկին տեղից վեր կացավ և գնաց դեպի քարանձավի այն մասը, որտեղ բազմագույն կտորներ կային:

Հետո նա գույն առ գույն առանձնացրեց այդ կտորները, որոնք, այսպես կոչված, «բուխարական մետաքսից» էին պատրաստված. ապա հատուկ պատրաստված գլանիկի օգնությամբ ամեն անգամ նույն գույնի կտորներով նա պատում էր քարանձավի այդ բաժանմունքի ոչ միայն բոլոր պատերն ու առաստաղը, այլև նույնիսկ հատակը, որից հետո թվում էր, թե ամբողջ տարածքը երեսապատված է նույն գույնի կտորով: Եվ այդ գունավոր կտորներից յուրաքանչյուրն ամեն անգամ փոխում էր «կյանքի» բոլոր ձևերի տատանումների թիվը:

Գունավոր կտորներով արված փորձերից հետո վերջին ժամանակների այդ մեծ երկրային գիտնականը խնդրեց հետևել իրեն, և մենք, քարանձավի այդ բաժանմունքից դուրս գալով գլխավոր միջանցք, մուտք գործեցինք դրանից ճյուղավորվող մի ուրիշ, ավելի փոքր միջանցք:

Իրենց հանպատրաստից սարքած վզնոցներով մեր հետևից գալիս էին այծը, ոչխարը և շունը:

Մենք երկար քայլեցինք, մինչև որ հասանք այդ ստորգետնյա կառույցների գլխավոր բաժանմունքին:

Այդտեղ պատվարժան դերվիշ Հաջի Աստվածատուրը կրկին մտավ այդ բաժանմունքի խորշերից մեկի մեջ և, ցույց տալով այնտեղ դրված շատ տարօրինակ գույն ունեցող կտորի մի թուփ, ասաց.

«Այս կտորը հատուկ հյուսված է «չալտանդր» կոչվող բույսի թելիկներից և ունի իր բնական գույնը:

Այդ չալտանդր կոչվող բույսը Երկրի հազվադեպ գոյացություններից մեկն է, որի գույնն ունակ է ոչ միայն փոխելու մոտակայքում եղած ուրիշ աղբյուրների թրթիռները, այլև հենց ինքը բոլորովին չի արձագանքում ամեն տեսակի այլ թրթիռների:

Ահա հենց այդ պատճառով, ոչ թե գույնից, այլ ուրիշ պատճառներով առաջացող թրթիռների հետ կապված իմ փորձերի համար ես հատուկ պատվիրել եմ հենց այս կտորը և դրանից այս ամբողջ ստորգետնյա կառույցի համար պատրաստել եմ մեծ «վրանի» պես մի բան և հարմարացրել այնպես, որ այն կարող եմ տեղափոխել ցանկացած ուղղությամբ և նրան տալ իմ ուզած ձևը:

Այժմ ես այդ յուրահատուկ վրանի օգնությամբ փորձեմ եմ անում, որոնք կոչում եմ «ճարտարապետական»: Այդ ճարտարապետական փորձերով ես ինձ համար բացահայտում եմ, թե հատկապես ինչպիսի կառույցները և ինչ չափով են վնասակար ազդում մարդկանց ու կենդանիների վրա:

Այդ ճարտարապետական փորձերով ես արդեն լրիվ համոզվել եմ, որ ոչ միայն չափսերն ու տեղի ընդհանուր ներքին ձևն են իրոք հսկայական ազդեցություն ունենում մարդկանց ու կենդանիների վրա, այլև նույնիսկ պատերի վրա եղած բոլոր ներքին, այսպես կոչված, «կորացումները», «անկյունները», «ցցվածքները», «որմնախորշերը» և շատ ուրիշ բաները, փոփոխելով այդ տեղի մթնոլորտում տեղի ունեցող տատանումները, մշտապես նպաստում են այնտեղ եղած մարդկանց ու կենդանիների սուբյեկտիվ թրթիռների դեպի լավը կամ վատը փոխվելուն:

Երբ նա ձեռնամուխ եղավ այդ մեծ վրանի հետ կապված իր փորձերին, ես այլ բաների շարքում նաև նկատեցի, որ շրջակա թրթիռները, որոնք փոփոխության էին ենթարկվում մոտակայքում եղած տարբեր պատճառների ազդեցությամբ, քո երևակայությունը շարժած այդ եռուղեղ էակների

ընդհանուր ներկայության վրա անհամեմատ ավելի ուժեղ էին ազդում, քան երկրային միառուղեղ և երկուղեղ էակների վրա:

Ակներևաբար, դա նույնպես նրանց սովորական *լինելիական գոյատևման* աննորմալ ներքին ու արտաքին պայմանների հետևանքն է:

Այդ ճարտարապետական փորձերն ավարտելուց հետո նա մեզ տարավ էլի ուրիշ ոչ մեծ բաժանմունքներ, որոնցում մեզ ցուցադրեց ուրիշ շատ փորձեր, որոնք տեսնելով կարելի էր հեշտությամբ հասկանալ, թե տարբեր ծագում ունեցող թրթիռներից հատկապես որոնք և ինչպես են ազդում քո սիրելիների թրթիռների սուբյեկտիվ ակորդների վրա:

Այդ փորձերի ընթացքում ցուցադրվեցին նաև այնպիսի արդյունքներ, որոնք բխում են տարբեր տիպերի պատկանող երկրային ուրիշ, ինչպես իրենց նման, այնպես էլ երկուղեղ ու միառուղեղ էակների ճառագումներից գոյացող թրթիռներից, ինչպես նաև իրենց ձայներից և բազմաթիվ այլ պատճառային ազդեցություններով պայմանավորված տատանումներից:

Այլ բաների շարքում նա ցուցադրեց և բացատրեց նաև մի քանի փորձեր, որոնք ապացուցում էին ժամանակակից երկրային էակների վրա այն պատճառների վնասակար ազդեցությունը, որոնք հենց իրենք, կարծես դիտմամբ, հատկապես վերջին ժամանակներում արտադրում են վիրթուսարի քանակությամբ՝ այսինքն՝ նրա, ինչը նրանք անվանում են «արվեստի ստեղծագործություններ»:

Վերջիններիս թվում էին «նկարները», «արձանները» և, իհարկե, իրենց նշանավոր «երաժշտությունը»:

Այդ իմաստունի ցուցադրած փորձերը հստակ դարձրին, որ ժամանակակից երկրային եռուղեղ էակների համար առավել վնասակար են այն թրթիռները, որոնք գոյանում են իրենց, այսպես կոչված, «դեղամիջոցներից»:

Այդ երկրային ճշմարիտ գիտուն էակի ստորգետնյա կալվածքում ես մնացի չորս երկրային օր, որից հետո դերվիշ Բոգա Էդդինի հետ կրկին վերադարձա այն բուխարական քաղաքը, որտեղից դուրս էինք եկել. այդպես ավարտվեց նրա հետ իմ առաջին հանդիպումը:

Այդ չորս օրերի ընթացքում նա շարունակ փորձում էր մեզ հնարավորինս շատ բան ցուցադրել ու բացատրել «տատանումների օրենքների» վերաբերյալ. սակայն անձամբ ինձ համար ամենահետաքրքրականը նրա վերջին բացատրությունն էր այն մասին, թե ինչու և ինչպես էին այդ վայրի տեղանքում՝ ժամանակակից երկրային էակների բոլոր կուտակումներից այդքան հեռու, այդ ստորգետնյա կալվածքում հայտնվել գազային ու էլեկտրական լուսավորությունները:

Այդ փաստը լուսաբանող իր պատմության մեջ չափազանց համակրելի այդ երկրային եռուղեղ էակը չկարողացավ զսպել աչքերից հորդացող իր անկեղծ արցունքները, ինչն այն ժամանակ այնպես հուզեց ինձ, որ անգամ հիմա չեմ կարողանում դա մոռանալ:

Նրա այդ լուսաբանիչ պատմության որոշ տվյալներին առնչվող տեղեկատվությունը քո հետագա գոյատևման ընթացքում կարող է լավ նյութ ծառայել, որպեսզի համապատասխան ձևով համադրես ու պարզես, այսպես կոչված, «սուբյեկտիվ ճակատագրի» բոլոր հետևանքները, այսինքն այն արգասիքները, որոնք սովորաբար մեր Մեծ Մեգալակոսմոսում ի հայտ են գալիս այնտեղ, որտեղ ծագում ու համատեղ գոյատևում են մեծ թվով համեմատաբար ինքնուրույն առանձին անհատներ:

Հաճախ այնպես է պատահում, որ համատեղ գոյատևման ընթացքում մի որևէ առանձին անհատի ճակատագիրն իր անձնական գոյատևման ընթացքում անձամբ իր համար բացարձակապես անարդար է լինում, բայց նրա հետ գոյատևող բոլոր մյուսների համար օբյեկտիվ իմաստով դա առատորեն արդար պտուղներ է տալիս: Ահա այդ պատճառով է, որ քեզ այդ մասին ուզում եմ առավել մանրամասն պատմել և նույնիսկ կփորձեմ, ոչինչ չփոխելով, քեզ համար բառացի կրկնել նրա պատմածը:

Դա եղավ հենց այն ժամանակ, երբ արդեն ուզում էինք հեռանալ այդ ստորգետնյա կալվածքից՝ քո այդ մոլորակի այն վայրից, որն ամեն ինչից զատ նաև ինձ համոզեց, որ ներկայիս եռուղեղ էակների նախնիների բանական նվաճումները նույնիսկ այնտեղ լրիվ կորսված չեն: Նույնիսկ եթե այդ արտառոտ մոլորակում ապրող էակների հետագա սերունդները դադարեցնեն իրենց նախնիների բացահայտած տիեզերական ճշմարտություններն իրենց ներսում փոխակերպելը (թեև այդ բացահայտված ճշմարտությունները նրանց աննորմալ լինելիական գոյատևման պատճառով այլևս զարգացում չեն ապրել, ինչպես ամենուրեք է լինում), այնուամենայնիվ նրանք արդեն իսկ

ինքնաբերաբար կենտրոնացել են քո այդ մոլորակի տարօրինակ ստորգետնյա թագավորությունում և սպասում են հետագա կատարելագործման ու նոր մշակումների հետագա եռուղեղ էակների համար:

Եվ այսպես, երբ ես հարց տվեցի այդ ստորգետնյա թագավորությունում կիրառվող գազային ու էլեկտրական լուսավորությունների վերաբերյալ, նա ինձ պատմեց հետևյալը.

«Այդ երկու տեսակի լուսավորությունների պատճառները միանգամայն տարբեր են իրարից, և դրանցից յուրաքանչյուրն իր առանձին պատմությունն ունի:

Գազային լուսավորությունն այստեղ եղել է ի սկզբանե և այստեղ տեղակայվել է իմ և իմ հին ընկեր դերվիշ Քերբալայ Ազիզ Նուարանի նախաձեռնությամբ:

Իսկ ինչ վերաբերում է էլեկտրական լուսավորությանը, ապա այն բոլորովին վերջերս է հայտնվել այստեղ, իսկ դրա նախաձեռնողը նույնպես եղել է իմ ընկերներից մեկը՝ դեռևս ջահել մի եվրոպացի:

Կարծում եմ՝ լավ կլինի, եթե լուսավորության այդ երկու տեսակների պատմություններն իրարից առանձին պատմեմ:

Սկսեմ գազային լուսավորությունից:

Երբ մենք առաջին անգամ այստեղ եկանք, այստեղից ոչ շատ հեռու մի սրբավայր կար, որը «սուրբ քարանձավ» էր կոչվում և դեպի ուր ամբողջ Թուրքեստանից եկած զանազան «ուխտավորների» ու «հավատացյալների» ամբոխներ էին ձգվում:

Ըստ ժողովրդական ավանդության՝ այդ քարանձավում երբևէ ապրել էր նշանավոր «խղրայլազը», որը հետագայում «կենդանի վիճակում» Երկինք էր տարվել:

Այդ ավանդապատման մեջ այնուհետև ասվում էր, որ նա Երկինք է հանվել այնպես հանկարծակի, որ նույնիսկ չի հասցրել հանգցնել իր քարանձավը լուսավորող կրակը:

Այդ վերջին պնդումը հաստատում էր այն փաստը, որ այդ քարանձավում իրոք «անմար կրակ» կար:

Ահա այդպես, ո՛վ, իմ ընկերոջ ընկեր...

Քանի որ ո՛չ ես, ո՛չ իմ ընկեր դերվիշ Քերբալայ Ազիզ Նուարանը չէինք կարող հավատ ընծայել այդ ժողովրդական ավանդապատմանը, ապա որոշեցինք հետազոտել այդ տարօրինակ երևույթի իրական պատճառը:

Այդ ժամանակ մեր տրամադրության տակ ունենալով բավարար նյութական միջոցներ ու հնարավորություններ, որոնք անհրաժեշտ էին առանց որևէ մեկի կողմից արգելքի հանդիպելու այդ երևույթն ուսումնասիրելու համար, ապա մենք սկսեցինք փնտրել այդ լուսավորության ծագման աղբյուրը:

Պարզվեց, որ այդ քարանձավից ոչ հեռու գետնի տակով մի գետակ է հոսում, որը ոռոգում է այնպիսի հանքաքարերից կազմված մի միջավայր, որոնց համակցության ազդեցությունը ջրի վրա հանգեցնում էր վառվող գազի անջատման, որն էլ, գետնի պատահական ճեղքերով անցնելով, թափանցում էր քարանձավի ներսը:

Իսկ այդ գազի որևէ պատահական բռնկումն էլ հենց կարող էր անշուշտ լինել այնտեղի այդ անմար կրակի առաջացման պատճառը:

Երբ ընկերոջս հետ պարզեցինք այդ պատճառը և միաժամանակ գտանք, որ նշված գազի աղբյուրը մեր քարանձավից հեռու չէ, որոշեցինք կավե խողովակների միջոցով այդ գազը քաշել մինչև մեր քարանձավի գլխավոր բաժանմունքը, իսկ այնտեղից էլ «եղեգնավորների» օգնությամբ այն ուղղորդում էինք մեր համապատասխան կարիքների համար:

Իսկ մեր քարանձավում էլեկտրական լուսավորության հայտնվելու պատմությունն այսպիսին է:

Մի անգամ՝ այդ քարանձավում մեր տեղավորվելուց որոշ ժամանակ անց, իմ շատ հին դերվիշ-ընկերներից մեկի կողմից ինձ մոտ եկավ դեռևս շատ ջահել մի եվրոպացի ճանապարհորդ, որը փափագում էր ինձ հետ ծանոթանալ՝ կապված տատանումների օրենքի ազդեցության հետ, որն ինձ էլ էր հետաքրքրում:

Շուտով մենք մոտ ընկերներ դարձանք, քանի որ պարզվեց, որ նախ՝ նա շատ լրջորեն էր ճշմարտություն փնտրում, և երկրորդ՝ շատ բարի էր և զգայուն՝ առանց բացառության բոլորի թուլությունների հանդեպ:

Թեև նա ուսումնասիրում էր տատանումների օրենքներն ընդհանրապես, բայց գլխավորապես զբաղվում էր այն թրթիռներով, որոնք մարդկանց համար զանազան հիվանդությունների պատճառ են դառնում:

Իր այդ հետազոտություններով ամեն ինչից գատ նա պարզել էր նաև այնտեղ գոյություն ունեցող և «քաղցկեղ» կոչվող հիվանդության առաջացման պատճառը և մարդկանց մոտ այդ չարորակ գոյացությունը վերացնելու հնար էր գտել:

Նա այն ժամանակ փաստել և կարողացել էր գործնականում կիրառել այդ հնարավորությանը այնպես, որ որոշակի կենսակերպի և որոշակի նախապատրաստվածության առկայության դեպքում ցանկացած մարդ կարող էր իր ներսում այնպիսի թրթիռներ առաջ բերել, որոնցով եթե նա որոշակի ձևով և որոշակի ժամանակային հաջորդականությամբ հագեցներ այդ ահավոր հիվանդությամբ վարակված որևէ մեկին, ապա կարող էր լրիվ վերացնել այդ հիվանդությունը:

Թեև իրարից բաժանվելուց հետո մենք երկար ժամանակով իրար չէինք հանդիպում, բայց միշտ տեղեկություններ էինք ստանում մեկս մյուսի մասին:

Ես գիտեի, որ, մեր բաժանումից շատ չանցած, իմ այդ ջախել ընկերն ամուսնացել է և իր կնոջ հետ, ինչպես այստեղ՝ Ասիայում ենք ասում, «սիրով ու համերաշխ» ապրում է իր հայրենիքում:

Ինձ առանձնապես հետաքրքրում էին այն նորությունները, որոնք վերաբերում էին մարդկանց մոտ այդ անիծյալ հիվանդության վերացման համար միջոցներ գտնելու նրա ձեռքբերումներին, քանի որ հատկապես այդ թրթիռների առաջացման պատճառները, որոնցից նախադրյալներ են գոյանում այդ հիվանդության համար, սերտորեն կապված էին այն պատճառների հետ, որոնք վերջին ժամանակներում դարձել էին իմ կյանքի գլխավոր հետաքրքրությունը:

Ես արդեն գիտեի, որ թեև նա դեռ չի գտել այդ հիվանդությունը բուժելու հանրամատչելի միջոցը, սակայն, համաձայն հաճախակի ինձ հասնող հավաստի տեղեկությունների, նա այդ հիվանդությամբ տառապողների նկատմամբ կիրառում էր իր գտած, ոչ բոլորին հասանելի, իրական միջոցներն ու գործնական բուժումները և միշտ հասնում էր մարդկության համար չարիք դարձած այդ ահավոր հիվանդության լիակատար ոչնչացմանը:

Ես միանգամայն հավաստի տեղեկություններ էի ստացել այն մասին, որ մի քանի տասնյակ դեպքերում նա դրական արդյունքների է հասել:

Հետո այնպես եղավ, որ, ինձնից ու իրենից անկախ պատճառների բերումով, համարյա ամբողջ տասը տարի ես ոչ մի տեղեկություն չէի ստանում այդ երիտասարդ եվրոպացուց:

Ես արդեն սկսել էի բոլորվի՛ն մոռանալ նրա գոյության մասին, երբ մի անգամ, առանձնապես կլանված լինելով իմ աշխատանքով, ես լսեցի, որ ինչ-որ մեկը պայմանական ազդանշան է ուղարկում մեզ. երբ արձագանքեցի և հարցրի, թե ով է, անմիջապես ճանաչեցի նրա ձայնը. նա խնդրում էր թույլ տալ մուտք գործել մեր ստորգետնյա կալվածքը:

Ասել անգամ պետք չէ, թե երկուսով որքան էինք ուրախ կրկին հանդիպելու և մեկ անգամ ևս մեր սիրած «տատանումների օրենքների» գիտության վերաբերյալ կարծիքներ փոխանակելու առիթով:

Երբ մեր նոր հանդիպան հետ կապված հուզմունքը մարեց, և մենք բեռնաթափեցինք ուղտերով իմ ջախել ընկերոջ բերած բոլոր բեռները (որոնց մեջ, իմիջիայլոց, կային մի քանի ժամանակակից եվրոպական, այսպես կոչված, «ռենտգենյան սարքավորումներ», մոտ հիսուն հատ «Բունզենի էլեմենտներ», մի քանի «մարտկոցներ» և մի քանի տարբեր նյութեր «էլեկտրալարանցումների» համար), մենք սկսեցինք խաղաղ գրուցել, և նրա պատմածներից ես մեծ ցավով իմացա հետևյալը:

Մեր այդ նոր հանդիպումից մի քանի տարի առաջ, երբ վերին Համաշխարհային օրենքների ազդեցության հետևանքով շրջակա պայմաններն ու հանգամանքները դարձել էին այնպիսին, որ Երկրում համարյա ոչ մի տեղ մարդիկ ոչ վաղվա օրվա հանդեպ վստահություն ունեին և ոչ մշտական բնակության վայր, նա հանկարծ իր սիրելի կնոջ մոտ հայտնաբերում է հենց այն ահավոր հիվանդության նշանները, որի բուժման գործը վերջին ժամանակներում եղել էր նրա գոյության գլխավոր նպատակներից մեկը:

Այդ փաստը նրան սարսափեցրել էր հատկապես այն պատճառով, որ ծագած շրջակա պայմանների պատճառով նա հնարավորություն չունեի այդ ահավոր հիվանդությունը կանխելու համար կիրառել իր գտած միջոցը, որն առայժմ միայն ինքը կարող էր կիրառել:

Եվ երբ այդ փաստն իմանալուց հետո նրա հուզմունքը մի փոքր անցել էր, ընդունել էր միակ հնարավոր որոշումը՝ համբերատար սպասել հարմար ժամանակի, իսկ մինչ այդ փորձել կնոջ համար ստեղծել կյանքի այնպիսի պայմաններ, որ այդ ահավոր հիվանդության զարգացումն ընթանա հնարավորինս դանդաղ:

Ավելի քան երկու տարի անցնելուց հետո շրջակա պայմաններն արդեն փոխվել էին դեպի լավը, և իմ այդ ջախել ընկերը վերջապես հնարավորություն ուներ այդ ահավոր հիվանդության դեմ կիրառելու բուժման այն եղանակը, որը հայտնի էր միայն իրեն:

Եվ երբ նա պատրաստվում էր կիրառել այդ եղանակը, իր համար ցավալի մի օր եվրոպական խոշոր քաղաքներից մեկում ցույցերի պատճառով առաջացած հրմշտոցի հետևանքով նա «վրաերթի է ենթարկվում» և, թեև չի գոհվում, բայց շատ ծանր մարմնական վնասվածքներ է ստանում:

Այդ վնասվածքների պատճառով, նախ՝ նրա սեփական կյանքը մի քանի ամիս անցնում է «ուշագնաց» վիճակում, և երկրորդ՝ քանի որ այդ ընթացքում նա գիտակցաբար ու միտումնավոր չի ղեկավարում կնոջ առօրյա կյանքը, ապա այդ ահավոր հիվանդությունը նրա մոտ ընթանում է արագացված տեմպով՝ գլխավորապես այն պատճառով, որ հիվանդության ընթացքում կինը, իրեն չխնայելով, նրան մշտապես անխոնջ կերպով խնամում էր:

Այդպիսով, երբ իմ այդ տարաբախտ ընկերը վերջապես ուշքի է գալիս, շատ շուտով սարսափով տեսնում է, որ կնոջ հիվանդության ընթացքն արդեն հասել է իր վերջին փուլերին:

Ի՞նչ կարող էր անել նա... Ի՞նչ էր հնարավոր անել, եթե իր ստացած վնասվածքների հետևանքով զրկվել էր ինքն իրեն նախապատրաստելու և իր մեջ այն հատկության թրթիռների ապահովման ամեն մի հնարավորությունից, որն անհրաժեշտ էր որևէ մեկի մոտ ի հայտ եկած այդ ահավոր հիվանդությունը վերացնելու համար:

Այդ ամենից ելնելով և որևէ այլ ելք չգտնելով՝ նա այն ժամանակ որոշում է դիմել այդ հիվանդության բուժման այն միջոցին, որը կիրառում էին ժամանակակից եվրոպական բժշկության ներկայացուցիչները, որի շնորհիվ, համաձայն նրանց պնդման, հնարավոր է, այսպես ասած, մարդու ներսում ոչնչացնել այդ հիվանդությունը:

Այն է՝ նա որոշում է դիմել, այսպես կոչված, ռենտգենյան ճառագայթների օգնությանը և սկսում է դրանցով կնոջը բուժել:

Այդ բուժման ընթացքում նա նկատում է, որ թեև կնոջ մարմնում այդ հիվանդության «կենտրոնացման տեղը կամ ծանրության կենտրոնը», այսպես ասած, «հետ է աճել», սակայն միևնույն ժամանակ նման «կենտրոնացում» է սկսել առաջանալ այս անգամ արդեն մարմնի բոլորովին այլ մասում:

Մի քանի ամիս, ինչպես Եվրոպայում են ասում, «բուժման սեանսներ» անցկացնելուց հետո նման ինքնուրույն կենտրոնացման տեղ է ի հայտ գալիս կնոջ մարմնի ևս մի նոր՝ երրորդ մասում:

Եվ այդ ամենի արդյունքում մի տխուր օր պարզ է դառնում, որ հիվանդի օրերը հաշված են:

Այդ սարսափն արձանագրելուց հետո իմ ջախել ընկերը որոշում է դեն նետել ժամանակակից եվրոպական բժշկության այդ ամբողջ իմաստակությունը և, հաշվի չառնելով իր սեփական վիճակը, սկսում է անհրաժեշտ թրթիռներ ձևավորել իր ներսում և դրանցով հագեցնել հիվանդի մարմինը:

Թեև նրան հաջողվում է, իր վիճակի համար համարյա անհաղթահարելի դժվարությունները հաղթահարելով, իր կնոջ կյանքը երկարացնել համարյա երկու տարով, այնուհանդերձ ի վերջո կինը դառնում է այդ ահավոր մարդկային հիվանդության գոհր:

Հարկ է այնուհետև նշել, որ հիվանդության վերջին փուլում, երբ նա արդեն դադարել էր եվրոպական բժշկության իմաստակությունից օգտվել, նրա կնոջ մարմնում արդեն գոյացել էին այդ հիվանդության ևս երկու ինքնուրույն կենտրոնացման տեղեր:

Երբ իմ ջախել ընկերը կնոջ ահավոր մահից հետո քիչ թե շատ հանդարտվում է և կրկին սկսում է իր ազատ ժամանակի մի մասը նվիրել իր սիրած զբաղմունքին ու Համաշխարհային մեծ օրենքների հետազոտությանը, այդ ժամանակ, իմիջայլոց, շատ է հետաքրքրվում այն հարցով, թե ինչու՞ են ռենտգենյան ճառագայթներով բուժման ընթացքում իր կնոջ մարմնում առաջացել իր փաստած այդ ինքնուրույն կենտրոնացումները, որոնք սովորաբար այդ հիվանդության դեպքում չեն առաջանում, և հենց ինքն իր նախորդ դիտումների շատ տարիների ընթացքում երբեք նման բան չէր նկատել:

Քանի որ նրա հետաքրքրությունը շարժած այ հարցի պարզաբանումը նրան շատ բարդ էր, և նրա բնակվելու վայրի շրջակա պայմաններն այն դարձնում էին գործնականում անհնարին, նա որոշել էր գալ ինձ մոտ և իմ օգնությամբ փորձնական ճանապարհով պարզել այդ հարցը:

Ահա թե ինչու էր նա իր հետ բերել պարզաբանիչ փորձերի համար պահանջվող բոլոր նյութերը:

Նրա գալու հենց հաջորդ օրը եւ նրան հատկացրի ստորգետնյա կալվածքի մի բաժանմունքը, մի քանի, այսպէս կոչված «սալմամուրյան»³⁶ այծ և ընդհանրապէս այն ամենը ինչ անհրաժեշտ էր պարզաբանիչ փորձերի համար:

Այլ նախապատրաստությունների շարքում նա նախ Բունգենի էլեմենտների միջոցով գործի գցեց ռենտգենյան սարքավորումը:

Իսկ նրա գալուց հետո արդեն երրորդ օրն սկսվեց այն, ինչը պատճառ դարձավ մեր քարանձավներում մշտական էլեկտրական լուսավորության առկայության համար:

Իսկ դա այսպէս եղավ. երբ իմ վիբրոմետրերի օգնությամբ մենք որոշ փորձեր էինք դնում և հաշվարկում ռենտգենյան ճառագայթներ արձակող ռենտգենյան սարքի էլեկտրական հոսանքի տատանումները, նկատեցինք, որ Բունգենի էլեմենտներից ստացվող էլեկտրական հոսանքի տատանումների թիվն անընդհատ մեծանում կամ փոքրանում է: Եվ քանի որ էլեկտրական հոսանքի անցման որոշակի ժամանակահատվածում այդ տատանումների թիվը չափազանց կարևոր էր մեր պարզաբանումների համար, ապա մեզ համար պարզ դարձավ, որ նման էլեկտրական հոսանքը բոլորովին պիտանի չէ մեր այդ պարզաբանումների համար:

Այդ փաստը խիստ վրդովեց ու վհատեցրեց իմ ջահել ընկերոջը:

Նա անմիջապէս դադարեցրեց փորձերն ու սկսեց մտորել:

Հաջորդ երկու օրերին նա անընդհատ, նույնիսկ սնվելու ընթացքում, այդ մասին էր մտածում:

Երրորդ օրվա վերջում, երբ մենք գնում էինք դեպի քարանձավի այն հատվածը, որտեղ սովորաբար սնվում էինք, և ոչ մեծ կամրջակով անցնում էինք քարանձավի՝ ստորգետնյա գետակի վերևում կառուցված գլխավոր մասը, նա հանկարծ կանգ առավ և ճակատին զարկելով հուզված բացականչեց. «Է՛վրիկա...»:

Այդ բացականչության արդյունքն այն եղավ, որ հաջորդ օրը մի քանի վարձված տաջիկների օգնությամբ մոտակայքում գտնվող տարբեր հին ու լքված հանքերից բերվեցին երեք տեսակի հանքանյութի հնարավորին չափ խոշոր բեկորներ և որոշակի հերթականությամբ տեղադրվեցին մեր ստորգետնյա գետակի հունի մեջ:

Այնուհետև՝ հանքաքարերը գետակի հունում տեղադրելուց հետո, նա շատ հասարակ ձևով գետակից երկուսական լարեր հասցրեց թույլ լիցքավորված մարտկոցներին, որոնք ինքն էր բերել իր հետ, որից հետո դրանք սկսեցին լիցքավորվել էլեկտրական հոսանքի, այսպէս կոչված, հարկ եղած «ամպերածով»:

Եվ երբ քանչորս ժամ անց հիշյալ մարտկոցներում կուտակված էլեկտրական հոսանքը մենք անցկացրինք մեր վիբրոմետրերի միջով, ապա պարզվեց, որ թէև ամպերածը չի բավականացնում, այնուամենայնիվ էլեկտրական հոսանքից ստացվող տատանումների թիվը բացարձակապէս անփոփոխ է մնում մեր վիբրոմետրերով այդ հոսանքի անցման ամբողջ ընթացքում:

Որպեսզի մեծացնի այդ անսովոր եղանակով ստացված էլեկտրական հոսանքի ուժը, նա «կոնդենսատորներ» պատրաստեց ձեռքի տակ եղած զանազան նյութերից՝ այծի կաշվից, «կավի» որոշակի տարատեսակից, մանրացված «ցինկի հանքանյութից» և «կեչու խեժից», և այդ եղանակով հարկ եղած ամպերածի էլեկտրական հոսանք ու լարում ստացավ իր բերած ռենտգենյան սարքավորումն աշխատեցնելու համար:

Էլեկտրական հոսանքի այդ անսովոր աղբյուրի միջոցով մենք ի վերջո հստակորեն ապացուցեցինք հետևյալը:

Թէև այդ ժամանակակից սարքավորման կիրառությամբ այդ ահավոր հիվանդության բուժման ընթացքում մարդու ամբողջ մարմնում հիվանդության ծանրության կենտրոնը հետ է քաշվում, այնուհանդերձ դա հեշտացնում է, այսպէս կոչված, «մետաստազների» առաջացումը, նպաստում դրա ցրմանն ու մարմնի նոր տեղերում դրա հաջող զարգացմանը:

Եվ այսպէս, ո՛վ, իմ ընկերոջ ընկե՛ր, երբ իմ ջահել ընկերն այդ բացատրությամբ բավարարվեց, կորցրեց իր հետաքրքրությունն այդ հարցի նկատմամբ, որով մինչ այդ կլանված էր, և, վերադառնալով Եվրոպա, մեր հետագա օգտագործմանը թողեց իր ստեղծած աղբյուրը, որը ո՛չ խնամք է պահանջում, ո՛չ էլ արտաքին ինչ-որ նյութեր: Դրանից հետո մենք քարանձավի հարկ եղած տեղերում աստճանաբար տեղադրեցինք էլեկտրական լամպեր:

³⁶ ռուս. տարբերակում՝ салкамурских, անգլ. տարբերակում՝ Salmamoorian

Թեև մեր այդ անսովոր աղբյուրը բավարար քանակի էներգիա չէր տալիս մեր քարանձավի բոլոր լամպերի համար, սակայն, տեղադրելով անջատիչներ և էներգիայից օգտվելով միայն անհրաժեշտության դեպքում, մենք այն իզուր չէինք ծախսում, այլ կամաց-կամաց կուտակում էինք մարտկոցների մեջ՝ երբեմն նույնիսկ այնքան, որ դրա ավելցուկն օգտագործում էինք զանազան տնտեսական նպատակներով»:

Բեհեդգեբուղի պատմության այս մասում «Քարնակ» միջհամակարգային տիեզերանավի բոլոր ուղևորներն ինչ-որ քաղցր-թթու համ զգացին իրենց բերանների խոռոչներում:

Դա նշանակում էր, որ «Քարնակ» նավն արդեն մոտենում է ինչ-որ մոլորակի, այն է՝ իրենց չնախատեսված կանգառի վայրին:

Դա Դեսկալդինո կոչվող մոլորակն էր:

Ուստի Բեհեդգեբուղն ընդհատեց իր պատմությունը, և ինչպես նա, այնպես էլ Ահունն ու Հասեինը անցան իրենց «կեսշահները»³⁷, որպեսզի նախապատրաստվեն Դեսկալդինո մոլորակի վրա վայրէջք կատարելուն:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

Եթե որևէ մեկին կհետաքրքրեն այս գլխում շարադրված մտքերը, ապա խորհուրդ եմ տալիս անպայման կարդալ իմ պլանավորած «Ափիոնամոլները» վերնագրով գիրքը, եթե, իհարկե, ֆրանսիական արմանյակն ու խազարական բաստուման բավականացնեն այն գրի առնելու համար:

ԳԼՈՒԽ ԽԲ

Բեհեդգեբուղը Ամերիկայում

Երկու «դիոնոսկ» անց, երբ միջհամակարգային «Քարնակ» տիեզերանավը վերսկսեց իր անկումը, և մեր հարգարժան մոլլա Նասրեդինի համոզված հետևորդները կրկին զբաղեցրին իրենց սովորական տեղերը, Հասեինը կրկին դիմեց Բեհեդգեբուղին հետևյալ խոսքերով.

– Մի՞րելի՛ պապիկ, կարո՞ղ եմ քեզ հիշեցնել, ինչպես ինձ հանձնարարել ես, որ պատմես այն... եռուղեղ էակների մասին... ինչպես էին կոչվում... Երկիր մոլորակի այն էակների մասին, որոնք բազմանում ու գոյատևում են մոլորակի այն վայրի տրամագծորեն հակառակ կողմում, որտեղ ծաղկում է ներկայիս երկրային քաղաքակրթությունը... Այն եռուղեղ էակների մասին եմ ասում, որոնք, ինչպես դու ասացիր, «ֆոքստրոտի» մեծ սիրահարներ են:

– Ա՛, ամերիկացիների մասի՞ն ես ասում:

– Այո, ճիշտ է, ամերիկացիների մասին, – ուրախ բացականչեց Հասեինը:

– Իհարկե, հիշեցի: Ես իսկապես քեզ խոստացել էի մի փոքր պատմել այնտեղի այդ ժամանակակից ցնդածների մասին:

Եվ Բեհեդգեբուղը սկսեց պատմել.

«Քո այդ մոլորակի մակերևույթի այդ՝ ներկայումս Հյուսիսային Ամերիկա կոչվող մասում ես եղա այդ արևային համակարգը վերջնականապես լքելուցս անմիջապես առաջ:

Ես այնտեղ մեկնեցի այդ մոլորակի վրա ունեցած իմ վերջին բնակության վայրից՝ Եվրոպա աշխարհամասի Փարիզ քաղաքից:

Եվրոպա աշխարհամասից ես այնտեղ մեկնեցի շոգենավով՝ հետևելով այնտեղի բոլոր, այսպես կոչված, «դոլարատերերի» օրինակին, և ժամանեցի «Հյուսիսային Ամերիկայի» գլխավոր քաղաքը՝ Նյու-Յորք, կամ, ինչպես այնտեղ են երբեմն անվանում, «Երկրի ազգերին միաձուլող» քաղաքը:

Հետևելով փարիզյան իմ ծանոթներից մեկի խորհրդին՝ նավահանգստից ես անմիջապես գնացի «Մաջեստիկ» կոչվող հյուրանոցը, որն ինչ-ինչ պատճառներով ոչ պաշտոնապես դեռևս «հրեական» էր կոչվում:

³⁷ ռուս. տարբերակում՝ кесшахи, անգլ. տարբերակում՝ kessshah

Հենց «Մաջեստիկ» հյուրանոցում տեղավորվելու օրը ես գնացի հանդիպելու մի «միստրի» հետ, ինչն ինձ նույնպես խորհուրդ էր տվել փարիզյան իմ մի ուրիշ ծանոթ:

Այդ աշխարհամասում «միստր» են ասում արական սեռի ամեն մի էակի, ով, այսպես կոչված, «փեշ» չի հագնում:

Երբ ես գտա այդ միստրին, որին ուղղված հանձնարարական նամակ ունեի, նա, ինչպես վայել է յուրաքանչյուր իսկական ամերիկյան գործարարին, մինչև ականջները խրված էր անհաշիվ, ինչպես այնտեղ են ասում, «դոլարային գործերի մեջ»:

Կարծում եմ, որ այստեղ՝ այդ ամերիկացիներին վերաբերող իմ լուսաբանումների ամենասկզբում, պետք է նշեմ, որ այն եռուղեղ էակները, հատկապես ժամանակակիցները, որոնք քո այդ մոլորակի մակերևույթի այդ մասի հիմնական բնակչությունն են կազմում, համարյա անխտիր բոլորն զբաղվում են միայն դոլարային գործերով:

Մյուս կողմից, *լինելիական գոյատևման* համար անհրաժեշտ արհեստներով ու «մասնագիտություններով» զբաղվում են բացառապես այն էակները, որոնք ուրիշ աշխարհամասերից ժամանակավորապես են այդտեղ հասել, ինչպես ասում են, «փող աշխատելու» նպատակով:

Ներկայիս քո սիրելիների, գլխավորապես այդ աշխարհամասում բազմացողների *լինելիական գոյատևման* շրջակա պայմանները նույնիսկ այդ իմաստով են վերածվել «տրայալայա-օլայա-լայա»-ի, կամ, ինչպես մեր հարգարժան մոլլա Նասրեդինն է գնահատական տալիս՝ «օճառի պղպջակի, որին չպայթելու համար հանգիստ միջավայր է պետք»:

Ներկայումս այնտեղ նրանց սովորական համակեցության շրջակա պայմաններն արդեն այնպիսին են դարձել, որ եթե իրենց լինելիական գոյատևման համար անհրաժեշտ և ուրիշ աշխարհամասերից եկող արհեստավարժ մասնագետները դադարեն փող աշխատելու նպատակով այնտեղ գնալ, ապա լիովին կարելի է ասել, որ այնտեղ հաստատված կարգն ու նրանց սովորական գոյատևումը միանգամայն կփլվի ընդամենը մեկ ամսվա ընթացքում, քանի որ նրանց մեջ չի գտնվի գոնե մեկը, ով կկարողանա գոնե հաց թխել:

Այնտեղ աստիճանաբար այդ աննորմալ վիճակին հասցնող գլխավոր պատճառն այն է, որ մի կողմից՝ հենց իրենք օրենք են ընդունել, որի սահմանափակում է ծնողների իրավունքներն իրենց զավակների նկատմամբ, և մյուս կողմից՝ դպրոցներում երեխաների համար մտցրել են, այսպես կոչված, «դոլարային խնայողամարկդ»՝ դա համատեղելով դոլարի նկատմամբ երեխաների մեջ սեր սերմանելու սկզբունքի հետ:

Ինչպես այդ, այնպես էլ սովորական գոյատևման, կրկին իրենց կողմից հաստատված, ուրիշ շատ այլազան արտառոց արտաքին պայմանների պատճառով «դոլարային բիզնեսի» և հենց դոլարի նկատմամբ այդ սերն այդ աշխարհամասի ամեն բնիկ բնակչի ընդհանուր ներկայության համար դառնում է տիրապետող ձգտում, հենց որ նա հասնում է իր, այսպես կոչված, «տենդագին գոյատևման» պատասխանատու տարիքին:

Ահա թե ինչու է նրանցից ամեն մեկը միշտ զբաղվում «դոլարային բիզնեսով» և, դեռ ավելին, միշտ միանգամից դրա մի քանի տեսակով:

Թեև վերոհիշյալ «միստրը», որին ուղղված հանձնարարական նամակ ունեի, նույնպես խիստ զբաղված էր իր «դոլարային գործերով», այնուհանդերձ ինձ շատ սրտաբաց ընդունեց: Երբ կարդաց իմ հանձնած հանձնարարական նամակը, նրա ներսում միանգամից սկսվեց այն տարօրինակ պրոցեսը, որն արդեն նկատել են նույնիսկ քո սիրելիներից ոմանք, քանի որ դա նույնպես բնորոշ է դարձել ընդհանրապես ներկայիս բոլոր քո սիրելիներին և իրենց կողմից անվանվում է «մեծամտացում»:

Եվ այդ պրոցեսը նրա ներսում ընթացք ստացավ այն պատճառով, որ իմ հանձնած նամակում հիշատակված էր իմ մի ուրիշ ծանոթի՝ նույնպես «միստրի», ազգանունը, որը շատերի ու նաև նամակը կարդացող «միստրի» կարծիքով համարվում էր «սատանի պես ճարպիկ», ինչպես նրա մասին խոսում էին թիկունքից. այսինքն՝ «դոլարներ դիզելու մասնագետ էր»:

Չնայած նա ամբողջովին համակված էր ներկայիս քո սիրելիներին բնորոշ նշածս յուրահատկությամբ՝ այնուհանդերձ ինձ հետ խոսելու ընթացքում աստիճանաբար հանդարտվեց և վերջ ի վերջո հայտնեց ինձ, որ «ամբողջովին իմ տրամադրության տակ է»: Բայց հանկարծ ինչ-որ բան հիշեց, որից հետո ավելացրեց, որ խորապես ցավում է, քանի որ իր կամքից անկախ հանգամանքների բերումով չի կարող այդ օրն ինձ հատկացնել, այլ միայն հաջորդ օրը, որովհետև չափազանց զբաղված է կարևոր գործերով:

Եվ իրոք, եթե անգամ շատ ուզենար, նա այլ կերպ չէր կարող վարվել, քանի որ մշտապես դուրսարային գործերի տակ կքած այդ տարաբախտ ամերիկացիներն իրենց ուզած բանը կարող են անել միայն կիրակի օրերին, այնինչ այն օրը, երբ ես այցելել էի նրան, ամենևին կիրակի չէր:

Այդտեղ՝ այդ աշխարհամասում, բոլոր դուրսարային և այլ գործերը երբեք կախված չեն էականների կամքից, այլ ճիշտ հակառակն է՝ քո սիրելիներն իրենք են ամբողջովին կախված իրենց այդ գործերից:

Կարճ ասած, քանի որ օրը կիրակի չէր, այդ իսկական ամերիկացի միստրը չկարողացավ վարվել այնպես, ինչպես ուզում էր. չկարողացավ ինձ հետ գալ և ինձ ներկայացնել ինձ պետք եղած մարդկանց, որի պատճառով ստիպված եղանք պայմանավորվել, որ կհանդիպենք հաջորդ առավոտյան «Բրոդվեյ» կոչվող նշանավոր փողոցի որոշակի տեղում:

Այդ Բրոդվեյ փողոցը ոչ միայն Նյու-Յորքի ամենաառաջին ու գլխավոր փողոցն է, այլև, ինչպես այնտեղ են պնդում, քո այդ մոլորակի բոլոր խոշոր քաղաքների փողոցների մեջ ամենաերկարն է:

Եվ այսպես, հաջորդ առավոտյան ես գնացի նշանակված վայրը:

Քանի որ «տաքսի ամվտոմենթենան», որով ես գնացի այնտեղ, միստր Ֆորդի գործարանի արտադրանք չէր, ապա տեղ հասա շատ շուտ, և, հետևաբար, այն «միստրը» դեռ այնտեղ չէր:

Սպասելով նրան՝ ես սկսեցի զբոսնել, բայց քանի որ նյու-յորքյան, այսպես կոչված, «բորսայական միջնորդներն» իրենց «շարժը» իրենց նշանավոր «արագ նախաճաշից» առաջ իրագործում են հենց Բրոդվեյի այդ մասում, ապա այդտեղ հավաքվածներն այնպիսի մի խցկոց էին սարքել, որ դրանից խույս տալու համար ես որոշեցի գնալ և նստել մի այնպիսի վայրում, որտեղից նկատելի կլինեի իմ սպասած միստրի գալուստը:

Այդպիսի հարմար տեղ, երևի, մոտակա ռեստորանն էր, որի պատուհաններից կարելի էր տեսնել բոլոր անցորդներին:

Իմիջիայլոց պետք է ասեմ, որ քո սիրելիների ոչ մի ուրիշ խմբավորման գոյատևման վայրերում այդքան շատ ռեստորաններ չկան, որքան այդ Նյու-Յորքում:

Դրանցից առանձնապես շատ կան գլխավոր մասում, իսկ դրանց տերերը մեծ մասամբ «հայեր» են, «հույներ» և «ռուսաստանցի հրեաներ»:

Իսկ հիմա, զավա՛կս, որպեսզի կարողանաս մի փոքր հանգստանալ ակտիվ մտածողությունից, ես ուզում եմ սահմանափակվել բացառապես մեր սիրելի ուսուցիչ մոլլա Նասրեդինի մտածողության ձևով և պատմել մի վերին աստիճանի յուրօրինակ սովորույթի մասին, որը վերջին տարիներին մեծ տարածում է գտել այդ ժամանակակից նյու-յորքյան ռեստորաններում:

Քանի որ այսպես կոչված «ալկահոլային խմիչքների» արտադրությունը, ներկրումն ու սպառումն այդ խմբավորման իշխանավորները ոչ շատ վաղուց խստիվ արգելել են սովորական էականներին, որոնց հետ իշխանավորներն իրենց սեփական բարեկեցության հույսերն են կապում, ապա ենթադրվում էր, որ սովորական էակի համար այնտեղ հիմա համարյա անհնարին է այդպիսի խմիչքներ ստանալը: Մինևույն ժամանակ այդ նյույորքյան ռեստորաններում կարելի է գտնել ցանկացած քանակությամբ ցանկացած տեսակի ալկոհոլային խմիչք՝ «արաղ», «դուսիկո», «շոտլանդական վիսկի», «Բենեդիկտին», «օղի», «Գրանդ Մարնիեր» և այլն, որոնք ամենատարբեր պիտակներ ունեն և պատրաստված են բացառապես միայն այդ աշխարհամասի ամերիկացի մոտ ընկած, այսպես կոչված, «հին բեռնանավերում»:

Նշված գործի բուն «ցիմենս» այն է, որ եթե վեր տնկես մատնեմատդ և աջ ձեռքիդ ավով բերանիդ կեսը ծածկելով արտաբերես քո ուզած խմիչքի անունը, ապա անմիջապես, առանց մի ավելորդ խոսքի, այդ խմիչքը կհայտնվի քո սեղանին, բայց, իհարկե, լիմոնադի կամ նշանավոր «ֆրանսիական վիշիի» շշով:

Իսկ հիմա ամբողջ ուժով աշխատիր լարել կամքդ և քո ընդհանուր ներկայության մեջ այնպես համակենտրոնացնել «զգայարաններդ», որ, բացարձակապես ոչինչ բաց չթողնելով, կարողանաս ընկալել ու քո ներսում նախագոյացնել այն ամենը, ինչ վերաբերում է նրան, թե այդ աշխարհամասի ամերիկացի մոտ ընկած բեռնանավերում ինչպես են պատրաստվում թվարկածս ալկոհոլային խմիչքները:

Ես խիստ ամոքում եմ, որ բաց թողեցի այդ ժամանակակից երկրային «գիտության» բոլոր մանրամասներին հարկ եղած չափով ծանոթանալու հնարավորությունս:

Այն ամենը, ինչ ինձ հաջողվեց իմանալ, այն է, որ այդ պատրաստուկների բոլոր բաղադրատոմսերը պարունակում են հետևյալ թթուները՝ «ծծմբականը», «ազոտականը» և «աղայինը». իսկ այդ գործում ամենակարևորը ժամանակակից նշանավոր գերմանացի պրոֆեսոր Քիշմանհոֆի «հմայական խոսքն» է:

Այդ վերջին բաղադրամասը՝ պրոֆեսոր Քիշմանհոֆի հմայական խոսքը, որը հատուկ նախատեսված է ակոհոլային խմիչքների համար, ուղղակի զարմանահրաշ է, և ասում են, թե գործում է հետևյալ կերպ.

Նախ և առաջ, այդ գործի մասնագետներին արդեն հայտնի որևէ հին բաղադրատոմսով պետք է պատրաստել հազար շիշ խմիչք. անպայման հազար շիշ, քանի որ մի շիշ ավել կամ պակաս լինելու դեպքում կախարդանքը չի ազդի:

Այդ հազար շիշը պետք է շարել հատակին, ապա դրանց արանքում զգուշորեն դնել այնտեղ գոյություն ունեցող որևէ իսկական ակոհոլային խմիչքի մի շիշ և սպասել տասը րոպե: Դրանից հետո ձախ ձեռքով պետք է տրորել աջ ականջը և շատ դանդաղ, որոշակի ընդմիջումներով արտասանել նշված սպիրտային կախարդանքի խոսքերը:

Այդ ամենի արդյունքում ոչ միայն բոլոր հազար շիշերի պարունակություններն են վերածվում այդ մեկ շիշ իսկական ակոհոլային խմիչքին, այլև բոլոր հազար շիշերի վրա նույնիսկ հայտնվում է այն նույն պիտակը, որը կա իսկական ակոհոլային խմիչք պարունակող միակ շիշ վրա:

Այդ աննման գերմանացի պրոֆեսոր Քիշմանհոֆի աճապարարությունների շարքում, ինչպես իմացա, կան մի քանիսը, որոնք իսկապես զարմանահրաշ են:

Տվյալ բնագավառի մասնագետ այդ նշանավոր գերմանացի պրոֆեսորն իր այդ զարմանահրաշ աճապարարությունները սկսել է, ինչպես ասում են, «հորինել» բոլորովին վերջերս՝ փոխադարձ ոչնչացման համաեվրոպական վերջին գործընթացի առաջին տարիներին:

Երբ նրա հայրենիքում՝ Գերմանիայում, սննդամթերքի ճգնաժամ սկսվեց, նա, իր հայրենակիցների դժվարին կացության նկատմամբ ցավակցությունից դրդված, հորինեց իր առաջին աճապարարությունը, որով շատ էժան ու խնայողական «հավի արգանակ» էր պատրաստում:

Նրա այդ առաջին աճապարարությունը կոչվում է գերմանական հավի արգանակ, և դրա պատրաստման եղանակը ևս չափազանց հետաքրքրական է:

Օջախի վրա դրված շատ տարողունակ կաթսայի մեջ սովորական ջուր է լցվում, որին ավելացվում են շատ բարակ կտրտված մաղադանոսի տերևներ:

Այնուհետև պետք է լայն բացել խոհանոցի դռները (եթե մեկ դուռ է, ապա պետք լայն բացել նաև պատուհանը), որից հետո, շատ բարձր ձայնով արտասանելով հմայական խոսքերը, մեծ արագությամբ խոհանոցով մեկ քշել որևէ հավի:

Այդքանն անելուց հետո կաթսայի մեջ արտակարգ համեղ «հավի արգանակը» պատրաստ է:

Հետո ես լսեցի, որ փոխադարձ ոչնչացման այդ մեծ գործընթացի ժամանակ Գերմանիայի էակներն այդ աճապարարությունը կիրառել են վիթխարի մասշտաբով, քանի որ հավի արգանակ պատրաստելու այդ եղանակն, այսպես ասած, շատ լավ կամ, նվազագույնը՝ չափազանց խնայողական դուրս եկավ:

Պատճառն այն է, որ մի հավը կարող է իր այդ պարտականությունը կատարել բավական երկար ժամանակ, քանի որ նրան կարելի է խոհանոցով մեկ հա քշել ու քշել, քանի դեռ «գործադուլ չի արել» ու չի հրաժարվել շնչելու գործից:

Իսկ եթե հավը, քո սիրելիների միջավայրում գոյատևելով հանդերձ, չի վարակվել կեղծավորությամբ և իսկապես է կորցրել շնչելու ցանկությունը, ապա այդ չնախատեսված դեպքի համար, ինչպես ես հետո իմացա, Գերմանիա կոչվող հանրության էակներն ընդհանուր սովորույթ ունենին:

Այն է՝ երբ հավը գործադուլ էր անում, նրա տերերը շատ հանդիսավոր կերպով նրան տապակում էին վառարանի մեջ և այդ հանդիսավոր առիթով անպայման ճաշի էին հրավիրում իրենց բոլոր ազգականներին:

Հետաքրքիր կլինի նաև նշել, որ նրանց մի ուրիշ ոչ պակաս նշանավոր պրոֆեսոր՝ Շթայներ ազգանվամբ, իր, այսպես կոչված, «գերբնական երևույթների գիտական հետազոտությունների» ընթացքում մաթեմատիկորեն գտավ, որ այն դեպքում, երբ հավերը մատուցվում են այդպիսի «ճաշկերույթների» ժամանակ, դրանց տերերը միշտ միննույն բանը պետք է արտասանեն:

Այն է՝ տանտիրուհին աչքերը պետք է հառի երկնքին և, հավը ցույց տալով, մեծ հուզմունքով ասի, որ դա «նշանավոր պամիրյան փասիան է», որը Պամիրից ուղարկել էր իրենց շատ սիրելի ազգականը, որն այնտեղ իրենց մեծ «Ֆադերլանդի» հյուպատոսն է:

Ընդհանրապես այդ մոլորակում աճապարարություններ գոյություն ունեն բոլոր հնարավոր նպատակների համար:

Այդ աճապարարությունները հատկապես սկսեցին թափով բազմանալ, երբ այդ յուրօրինակ մոլորակի շատ էակներ գերբնական երևույթների մասնագետներ դարձան՝ կոչվելով «օկուլտիստներ», «սպիրիտուալիստներ», «թեոսոֆներ», «մանուշակագույն մոգեր», «խիրմանտներ» և այլն:

Բացի այն, որ նրանք կարողանում են «գերբնական երևույթներ» առաջացնել, այդ «մասնագետները» նաև շատ լավ կարողանում են այնպես անել, որ անթափանց թափանցիկ թվա:

Ալկոհոլի օգտագործման այդ ամերիկյան արգելքը կարող է ևս մի օրինակ ծառայել՝ հրաշալի լուսաբանելով այն, թե այնտեղի ժամանակակից պատասխանատու իշխանավորների մոտ ինչ աստիճանի հետաճ է ապրել *լինելիական մտածողության* նախադրյալներ բյուրեղացնելու հնարավորությունը՝ այն իմաստով, որ նման անհեթեթությունն այնտեղ փաստորեն կրկնվում է:

Այնտեղ՝ այդ աշխարհամասում, այդ արգելքի պատճառով հիմա առանց բացառության բոլորն են ալկոհոլ օգտագործում, նույնիսկ նրանք, ովքեր այլ պայմաններում հավանաբար երբեք չէին օգտագործի:

Այդ Ամերիկա աշխարհամասում ալկոհոլի օգտագործման հետ կապված հիմա տեղի է ունենում այն, ինչ տեղի ունեցավ Պախրակարանի էակների հետ՝ կապված կակաչի սերմեր ծամելու սովորության հետ:

Տարբերությունը միայն այն է, որ Պախրակարանի էակներն այն ժամանակ գոնե տարվել էին իսկական կակաչի սերմերով, իսկ ամերիկացի էակներն այժմ օգտագործում են ձեռքներն ընկած ցանկացած հեղուկ, եթե միայն դա իրենց մոլորակում գոյություն ունեցող որևէ ալկոհոլային խմիչքի անունն է կրում:

Իսկ մյուս տարբերությունն այն է, որ այդ արգելված ապրանքի սպառումը կառավարության աչքից թաքցնելու գործում ներկայիս Ամերիկա աշխարհամասում բազմացող էակները բոլորովին էլ այնպես միամիտ չեն, ինչպես Պախրակարանի դարաշրջանի էակները:

Թե այդ առումով որքան հեռուն են գնացել ներկայիս քո սիրելիները, դու կարող ես շատ լավ հասկանալ հետևյալ օրինակներից:

Ներկայումս այնտեղ՝ այդ աշխարհամասում, ամեն մի ջահել դեղնակտուց, որի շուրթերին «մայրական կաթը» դեռ նոր է չորացել, անպայման իր հետ ունի այն, ինչն արտաքին տեսքից սովորական անշառ «պորտսիգար» կամ ծխախոտատուփ է թվում. և ահա, նստելով ռեստորանում կամ որևէ նշանավոր պարասրահում, նա անփութորեն գրպանից հանում է այդ պորտսիգարը կամ ծխախոտատուփը, և շրջապատում բոլորը երևակայում են, իհարկե, որ նա պատրաստվում է ծխել:

Ոչ մի նման բան... նա այդ պորտսիգարը կամ ծխախոտատուփը պարզապես ձեռքում մի փոքր պտտեցնում է և, հո՛ւ պ-յա, նրա ձախ ձեռքին հայտնվում է մի փոքրիկ բաժակ. այնուհետև աջ ձեռքով նա շա տ հանգիստ պորտսիգարից կամ ծխախոտատուփից այդ փոքրիկ բաժակի մեջ լցնում է ինչ-որ մի խմիչք, հնարավոր է՝ շոտլանդական վիսկի, բայց, իհարկե, պատրաստված այնպես, ինչպես արդեն ասել եմ, ամերիկյան առափնյա մի որևէ բեռնանավում:

Այն ժամանակվա այնտեղի իմ դիտումների ընթացքում ես ականատես դարձա նաև այսպիսի մի տեսարանի:

Նշված ռեստորաններից մեկում՝ իմ սեղանից մի փոքր հեռու, նստել էին երկու ջահել ամերիկուհիներ:

Ռեստորանի աշխատողը, կամ, ինչպես իրենք են ասում, «մատուցողը» նրանց համար բերեց մի շիշ ինչ-որ հանքային ջուր և մի գույգ բաժակ:

Կանանցից մեկը հատուկ եղանակով պտտեց իր նորաձև հովանոցի պոչը, որից հետո ինչ-որ մի հեղուկ՝ հավանաբար էլի շոտլանդական վիսկի կամ նման մի բան, սկսեց նույն կերպ հանգի ստ հոսել կոթից դեպի բաժակները:

Կարճ ասած, տղա՛ս, այդ Ամերիկա աշխարհամասում կրկնվում է ճիշտ այն, ինչը դրանից ոչ շատ վաղ տեղի ունեցավ Ռուսաստան կոչվող մեծ հանրությունում: Այնտեղի պատասխանատու իշխանավոր էակները նույնպես արգելեցին իրենց նշանավոր «ռուսական օդու» օգտագործումը, ինչի արդյունքում էակները շատ արագ այդ «օդու» փոխարեն սկսեցին օգտագործել ոչ պակաս հայտնի «հանջա», ինչի հետևանքով մինչև այժմ այնտեղ օրական հազարավոր դժբախտ էակներ են մահանում:

Բայց տվյալ դեպքում մենք արժանին պետք է մատուցենք ժամանակակից ամերիկացի էակներին. իրենց նշանավոր ալկոհոլի օգտագործումն իշխանություններից թաքցնելու արվեստում նրանք անսահման ավելի «քաղաքակիրթ» են քան Ռուսաստան կոչվող հանրության էակները:

Եվ այսպես, զավա՛կս, որպեսզի խույս տամ այդ փողոցային իրարանցումից, ես մտա մի տիպիկ նյույորքյան ռեստորան և այնտեղ նստելով սեղաններից մեկի մոտ՝ սկսեցի պատուհանից նայել ամբոխին:

Քանի որ այնտեղ՝ քո այդ մոլորակում, ընդունված է, որ ռեստորանում կամ դրա նման վայրում նստող մարդիկ պետք է անպայման ինչ-որ բանի համար, այսպես կոչված, «փող» վճարեն այդ հաստատության տիրոջ օգտին, ապա ես նույն կերպ վարվեցի և պատվիրեցի իրենց նշանավոր «օրանժադից»:

Այդ նշանավոր ամերիկյան խմիչքը բաղկացած է հյութից, որը քամվում է նարինջից կամ նրանց նշանավոր, այսպես կոչված, «թուրինջից», և այդ աշխարհամասի էակները դրանից աննկարագրելի քանակությամբ խմում են միշտ և ամենուրեք:

Պետք է խոստովանել, որ իրենց այդ նշանավոր օրանժադն իրոք երբեմն շոգ եղանակին թարմացնում է նրանց, բայց մյուս կողմից՝ այսպես կոչված, ստամոքսի ու աղիքների «լորձաթաղանթների» վրա թողած իր ազդեցությամբ այդ խմիչքն այն բազմաթիվ գործոններից մեկն է, որոնք, միասին վերցրած, աստիճանաբար, թեև դանդաղ, բայց կատարելապես անդառնալիորեն ավերածություն են առաջացնում իրենց «ոչ պետքական» ու «անտեսվող» մի գործառույթում, որը կոչվում է «ստամոքսի մարսողական գործառույթ»:

Եվ այսպես, այդ նշանավոր օրանժադը ձեռքիս նստած հիշյալ ռեստորանում, ես դիտում էի անցորդներին այն հույսով, որ նրանց մեջ կտեսնեմ իմ սպասած միստրին, միաժամանակ նայում էի ռեստորանում իմ շուրջը եղած առարկաներին:

Սեղանի վրա, որի մոտ նստած էի, այլ բաների շարքում ես տեսա այդ ռեստորանի, այսպես կոչված, «կերակրացանկը»:

Քո այդ մոլորակում «կերակրացանկ» են անվանում այն թուղթը, որի վրա գրված են տարատեսակ կերակուրների ու խմիչքների անուններ, որոնք կան տվյալ ռեստորանում:

Այդ թղթի բովանդակությունը կարդալիս, իմիջիայլոց, ես նկատեցի, որ այդ օրը այդտեղ կարելի էր պատվիրել ոչ պակաս քան յոթանասունուր տարբեր կերակուրներ:

Դա ինձ զարմացրեց, և ես հետաքրքրվեցի, թե իրենց խոհանոցում այդ ի՞նչ չափսերի օջախ պետք է ունենան այդ ամերիկացիները, որ կարողանան ընդամենը մեկ օրվա ընթացքում պատրաստել յոթանասունուր տարբեր տեսակի կերակուրներ:

Ասեմ նաև, որ ես այնտեղ եղել եմ բոլոր աշխարհամասերում և հյուրընկալվել տարբեր կաստաների պատկանող շատ էակների կողմից:

Ես նաև իմ սեփական կացարաններում եմ անհաշիվ անգամ տեսել, թե ինչպես են կերակուր եփում: Այնպես որ արդեն քիչ թե շատ գիտեի, որ մի կերակուր եփելու համար պահանջվում է ամենաքիչը երկու-երեք կաթսա. և անմիջապես հաշվեցի, որ իրենց խոհանոցում յոթանասունուր տեսակի կերակուր պատրաստելու համար այդ ամերիկացիներն, իհարկե, ձեռքի տակ պետք է ունենան մոտավորապես երեք հարյուր կաթսա ու թավա:

Ուստի իմ գլխում միտք ծագեց անձամբ գնալ և տեսնել, թե ինչպես է հնարավոր մի օջախի վրա տեղավորել երեք հարյուր կաթսա. դրա համար որոշեցի, այսպես կոչված, «լավ թեյավճար» տալ ինձ օրանժադ բերած մատուցողին, որպեսզի ինձ թույլատրեն սեփական աչքերով տեսնել ռեստորանի խոհանոցը:

Մատուցողն այդ գործն ինչ-որ կերպ դասավորեց, և ես մտա խոհանոց:

Երբ ես այնտեղ հայտնվեցի, ի՞նչ ես կարծում... Ի՞նչպիսի տեսարան բացվեց իմ առաջ... Հարյուրավոր կաթսաներով ու թավաներով բեռնված վառարա՞ն...

Ոչ մի նման բան:

Ես միայն մի փոքրիկ, այսպես կոչված, «գազօջախ» տեսա՝ այնպիսին, ինչպիսին ունենում են, այսպես կոչված, «ծեր ամուրիներն» ու «մարդատյաց աղջիկները», այսինքն՝ «բոլորովին անպետք պառաված օրիորդները»:

Այդ «պատիկ գազօջախի» մոտ նստած էր «շոտլանդական ծագումով» չափազանց հաստիկ խոհարարը և թերթ էր կարդում, ինչն անբաժան է ամեն մի ամերիկացուց. կարծես թե «Թայմս» էր ձեռքին:

Ես զարմացական հայացքս պտտեցրի չորս կողմ, անգամ այդ խոհարարի ծոծրակը զննեցի:

Քանի դեռ այդպես նայում էի, ռեստորանի սրահից խոհանոց մտավ մատուցողը և իր յուրահատուկ անգլերենով մի բավականին բարդ կերակուրի անուն ասաց հաստավիզ խոհարարին:

Պետք է ասեմ, որ այդ դժվարահունչ կերակուրը պատվիրող մատուցողի ակցենտից ես գլխի ընկա նաև, որ նա բոլորվին վերջերս է Եվրոպա աշխարհամասից եկել՝ ակներևաբար երագելով գրպանները լցնել ամերիկյան դոլարներով, այսինքն՝ այն նույն երագանքով, որն իրոք ունենում է երբևէ Ամերիկայում չեղած ամեն մի եվրոպացի, և որը հիմա Եվրոպայում ոչ մեկին չի թողնում հանգիստ քնել:

Երբ «ամերիկյան մուլտիմիլիոնատիրոջ» այդ հավակնորդը հաստավիզ խոհարարին պատվիրեց վերոհիշյալ ընտիր կերակուրը, վերջինս անշտապ ու ծանրորեն տեղից վեր կացավ և ամենից առաջ ձեռքը մեկնեց պատից կախված «ամուրիական թավայի» կողմը:

Այնուհետև վառեց իր «թզուկական գազօջախը», թավան տեղավորեց դրա վրա և նույնպիսի ծանրաշարժությամբ մոտեցավ բազմաթիվ պահարաններից մեկին. այնտեղից ինչ-որ պահածոյի տուփ հանեց, բաց արեց և դրա պարունակությունը շուտ տվեց հիշյալ թավայի մեջ:

Դրանից հետո նույն ձևով մոտեցավ մի ուրիշ պահարանի և մի ուրիշ պահածոյի տուփ հանեց. բայց այս անգամ թավայի մեջ լցրեց դրա պարունակության միայն մի փոքր մասը և, խառնելով ստացված զանգվածը, զգուշորեն այդ ամենը լցրեց սեղանի վրա դրված ափսեի մեջ. այնուհետև կրկին նստեց իր նախկին տեղը և շարունակեց թերթի ընդհատված ընթերցանությունը:

Այդ «ընտիր կերակուրը» պատվիրող մատուցողը շուտով վերադարձավ խոհանոց՝ ձեռքին ունենալով շատ մեծ, այսպես կոչված, «պղնձյա սկուտեղ», որի վրա արդեն մեծ քանակությամբ սնամեջ մետաղի կտորներ կային, որոնց պղնձյա դանակներ ու պատառաքաղներ են ասում. նա այդ տարօրինակ ճաշատեսակը դրեց հիշյալ սկուտեղի վրա և տարավ ռեստորանի սրահը:

Երբ վերադարձա և նստեցի սեղանիս մոտ, ինձնից ոչ շատ հեռու տեսա մի միստրի, որը, շուրթերը ծածկացնելով, ուտում էր հենց այն կերակուրը, որի պատրաստմանն ինձ վիճակվեց ականատես լինել:

Պատուհանից փողոցի կողմը նայելով՝ ես վերջապես ամբոխի մեջ տեսա այն միստրին, որին սպասում էի, և անմիջապես հաշիվը փակելով՝ դուրս եկա ռեստորանից:

Իսկ հիմա, զավակս, պահպանելով մեր սիրելի ուսուցչի մտածելակերպը, երևի թե արժե քեզ մի փոքր պատմել նաև այդ ամերիկացիների «խոսակցական լեզվի» մասին:

Հարկ է, որ իմանաս, որ մինչև այդ աշխարհամաս մուտք գործելս ես արդեն կարողանում էի խոսել այդ աշխարհամասի էակների լեզով՝ այսպես կոչված, «անգլերեն»:

Սակայն այդ Հյուսիսային Ամերիկայի գլխավոր քաղաքը հասնելուս հենց առաջին օրվանից սկսած, ես արդեն մեծ անհարմարություններ էի զգում իմ «խոսակցական հաղորդակցության» ժամանակ, քանի որ, ինչպես պարզվեց, թեև այդ էակներն իրար հետ հաղորդակցվում են անգլերենով, բայց նրանց անգլերենը բավականին առանձնահատկություններ ունի և, հիրավի, միանգամայն յուրահատուկ է:

Այդպիսով, այդ անհարմարությունը զգալով, ես որոշեցի սերտել նաև նրանց այդ յուրահատուկ «խոսակցական անգլերենը»:

Այնտեղ հասնելուս երրորդ օրը, իմ նոր ծանոթ միստրի մոտ գնալու ճանապարհին, որին հատուկ էի այցելում, որպեսզի ինձ համար այդ «անգլերենի» ուսուցիչ ճարի, հանկարծ երկնքում լուսարձակներով արտացոլված «ամերիկյան գովազդ» տեսա, որում գրված էր.

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ Մ-Ը. ՉԱՏԵՐԼԻՑԻ ՄԵԹՈՂՈՎ

293-րդ Հյուսիսային փողոց, 13

Նշված էին նաև ուսուցանվող լեզուներն ու դրանց ժամկետները. մասնավորապես, այդ «ամերիկյան անգլերենի» վերաբերյալ ասվում էր, որ այն կարելի է յուրացնել հինգ րոպեից մինչև քսանչորս ժամվա ընթացքում:

Սկզբում ոչինչ չկարողացա հասկանալ, այնուհանդերձ որոշեցի հաջորդ առավոտյան գնալ նշված հասցեով:

Երբ հաջորդ օրը գտա այդ միստր Չատերլիցին, նա ինձ անձամբ ընդունեց և լսելով, որ ուզում եմ իր մեթոդով ուսումնասիրել «ամերիկյան անգլերենը», նախ և առաջ ինձ բացատրեց, որ իր մեթոդով

այդ լեզուն կարելի է սովորել երեք տարբեր ձևերով, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է յուրահատուկ պահանջների:

«Առաջին ձևը,– ասաց նա,– այն մարդու խոսակցական լեզուն է, որն ստիպված է մեզ մոտ վաստակել մեր ամերիկյան դուլարներից:

Երկրորդ ձևն այն մարդու համար է, որը թեև մեր դուլարների կարիքը չունի, այնուամենայնիվ զբաղվում է դուլարային բիզնեսով և, բացի այդ, ուզում է, որ աշխարհիկ հարաբերությունների ընթացքում մեր ամերիկացիները կարծեն, թե ինքը ոչ թե պատահական «ինչ-որ մեկն» է, այլ անգլիական դաստիարակություն ստացած իսկական «ջենտլմեն»:

Իսկ ինչ վերաբերում է ամերիկյան անգլերենի երրորդ ձևին, ապա դրան պետք է տիրապետի յուրաքանչյուր ոք, ով ուզում է ամեն տեղ և ցանկացած ժամանակ շոտլանդական վիսկի ճարել»:

Քանի որ նրա ուսուցանման համակարգի երկրորդ ձևի տևողությունն ամենահարմարն էր ինձ համար, ես որոշեցի նրան անմիջապես վճարել պահանջվող դուլարները, որպեսզի իմանամ այդ համակարգի գաղտնիքը:

Երբ պահանջվող դուլարները վճարեցի, և նա արտաքինից կատարելապես անտարբեր, բայց իրականում քո այդ մոլորակի բոլոր էակներին արդեն բնորոշ դարձած ազահությամբ իմ տված դուլարները տեղավորեց գրպանում, ինձ բացատրեց, որ երկրորդ ձևը սովորելու համար հարկավոր է հիշել միայն հինգ բառ՝

1. maybe (գուցե, կարող է պատահել),
2. perhaps (հնարավոր է,),
3. tomorrow (վաղը),
4. oh, I see (հա, հասկացա),
5. all right (հրաշալի է):

Նաև ավելացրեց, որ եթե վիճակվի գրուցել մեկ կամ մի քանի միաստրների հետ, ապա պետք է ժամանակ առ ժամանակ արտասանեմ այդ հինգ բառերից ցանկացածը:

«Այդքանը միանգամայն բավարար կլինի,– ասաց նա,– որ ամեն ոք համոզվի, որ նախ՝ դուք հրաշալի տիրապետում եք անգլերենին, և երկրորդ՝ որ դուք դուլարային բիզնեսում սկսնակ չեք»:

Թեև հարգարժան Չատերլիցի համակարգը շատ յուրօրինակ էր և գովեստի արժանի, այնուամենայնիվ գործնականում այն կիրառելու ոչ մի առիթ չունեցա:

Իսկ առիթ չեղավ այն պատճառով, որ հաջորդ օրը պատահաբար փողոցում հանդիպեցի իմ հին ծանոթին՝ Եվրոպայից եկած, այսպես կոչված, «խմբագրին», որը մեր գրույցի ընթացքում ինձ վստահեց ամերիկյան լեզվի ավելի կատարյալ մի գաղտնիք:

«Գտե՛ք ինչ, իմ սիրելի դոկտոր, քանի որ դուք այնտեղի իմ թերթի բաժանորդն եք, ապա չեմ կարող ձեզ համար չբացել այստեղի լեզվի գաղտնիքներից մեկը»:

Այնուհետև նա ասաց.

«Ծանոթ լինելով մեր եվրոպական մի քանի լեզուներին՝ դուք կարող եք իմ այս գաղտնիքը կիրառել և կատարելապես տիրապետել այստեղի լեզվին և իրոք խոսել ամեն ինչի մասին, և ոչ թե ուրիշների ստիպել, որ կարծեն, թե դուք տիրապետում եք անգլերենին, որի համար, չեմ ժխտում, Չատերլիցի համակարգն իսկապես հրաշալի է գործում»:

Հետո նա բացատրեց, որ եթե արտաբերեմ եվրոպական որևէ լեզվի պատկանող որևէ բառ և միաժամանակ երևակայեմ, թե բերանիս մեջ տաք-տաք կարտոֆիլ կա, ապա արդյունքում կստացվի անգլերեն լեզվի որևէ բառ:

Իսկ եթե միաժամանակ պատկերացնեմ նաև, որ տաք-տաք լինելուց բացի այդ կարտոֆիլի վրա նաև ծեծած «կարմիր պղպեղ» է շաղ տված, ապա իմ առողջանությունը կատարելապես կհամընկնի ամերիկյան անգլերենի առողջանությանը:

Դրանից բացի, նա ինձ խորհուրդ տվեց, որ չամաչեմ եվրոպական լեզուներից բառեր ընտրելուց, քանի որ անգլերենն ընդհանրապես գոյացել է համարյա բոլոր եվրոպական լեզուների պատահական խառնուրդից, և քանի որ այդ լեզուն ամեն մի պարզ հասկացության համար մի քանի բառ ունի, ապա դրա արդյունքում «դուք միշտ կգտնեք հարկ եղած բառը»:

«Իսկ եթե հանկարծ արտաբերեք մի այնպիսի բառ, որն այդ լեզվում լրիվ բացակայում է, ապա մեծ դժբախտություն չի լինի, քանի որ վատագույն դեպքում ձեր գրուցակիցը կմտածի, թե ուղղակի ինքը չգիտի այդ բառը:

Այն ամենը, ինչ պետք է անեք, մշտապես տաք-տաք կարտոֆիլի մասին հիշելն է, և... էլ չարժե «գլուխ ցավեցնել» այդ հարցով:

Վստահեցնում եմ, որ այդ գաղտնիքը կաշխատի, և առանց վախի կարող եմ ասել, որ եթե իմ խորհրդին ճշտորեն հետևելու դեպքում ձեր «լեզուն» այստեղ կատարյալ չհամարվի, ապա կարող եք հրաժարվել իմ թերթի բաժանորդը լինելուց:

Մի քանի օր հետո ինձ հարկ եղավ գնալ Չիկագո քաղաքը:

Իր մեծությամբ դա այդ աշխարհամասի երկրորդ քաղաքն է և, այսպես ասած, «Հյուսիսային Ամերիկայի» երկրորդ գլխավոր քաղաքը:

Ինձ ճանապարհ դնելիս իմ նյույորքյան ծանոթ միստրը երաշխավորական նամակ տվեց ինձ, որ հանձնեմ Չիկագոյում ապրող մի ուրիշ միստրի:

Չիկագո քաղաքը հասնելուն պես ես ուղիղ գնացի հիշյալ միստրի մոտ:

Չիկագոյի այդ միստրը բավական սիրալիր ու քաղաքավարի դուրս եկավ:

Նրան կոչում էին «միստր Բելիքատոն»:

Այդ սիրալիր ու քաղաքավարի միստր Բելիքատոնը նույն օրվա երեկոյան ինձ առաջարկեց միասին գնալ իր ինչ-որ ընկերների տունը, որպեսզի ես, իր խոսքով ասած, «չձանձրանամ» օտար քաղաքում:

Ես իհարկե համաձայնեցի:

Տեղ հասնելով՝ մենք այնտեղ գտանք բավական մեծ թվով երիտասարդ ամերիկացի էակների՝ մեզ նման հյուրերի:

Բոլոր հյուրերը չափազանց ուրախ էին և բավականին «գինովցած»:

Նրանք հերթով «ծիծաղաշարժ պատմություններ» էին պատմում, և դրանց առաջացրած ծիծաղը սենյակում կախվում էր այն օրերի ծխի պես, երբ ամերիկյան «հոթ դոգ» արտադրող ամերիկյան գործարանների ծնելույզների վերևում փչում է հարավային քամին:

Քանի որ ծիծաղաշարժ պատմություններն ինձ էլ են գրավում, ապա Չիկագոյում անցկացրած իմ առաջին երեկոն իսկապես շատ ուրախ անցավ:

Այդ ամենը միանգամայն խելամիտ ու շատ հաճելի կարող էր լինել, եթե այդ առաջին երեկոյի ընթացքում լսածս պատմությունները մի «առանձնահատկություն» չունենային, որն ինձ շատ զարմացրեց ու շփոթմունքի մեջ գցեց:

Այն է՝ ինձ զարմացրեց դրանց, այսպես կոչված, «երկիմաստությունն» ու «անպատկառությունը»:

Այդ պատմությունների երկիմաստությունն ու անպատկառությունն այն աստիճանի էին, որ դրանց ամերիկացի հեղինակներից յուրաքանչյուրը կարող էր մի դյուծին միավորներով առաջ անցնել «Բոկաչչոյից», որի անունը լավ հայտնի է Երկիր մոլորակում:

Բոկաչչոն այն հեղինակի անունն է, որը Երկրի էակների համար «Դեկամերոն» անունով գիրք է գրել. այն լայնորեն այնտեղ ընթերցվում է նաև հիմա և բոլոր աշխարհամասերի համարյա բոլոր հանրություններում բազմացող ժամանակակից էակների սիրելի գիրքն է:

Հաջորդ օրը, նույնպես երեկոյան, այդ սիրալիր միստր Բելիքատոնը կրկին ինձ տարավ իր ընկերների մի ուրիշ խմբի հյուր:

Այստեղ նույնպես շատ ամերիկացի երիտասարդ էակներ կային՝ ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, որոնք նստոտել էին շատ մեծ սենյակի տարբեր անկյուններում և խաղաղ ու անվրդով գրուցում էին:

Երբ մենք էլ նստեցինք, շուտով ինձ մոտեցավ մի լավիկ ջահել ամերիկուհի, նստեց իմ կողքին և սկսեց լեզվին տալ:

Ես արձագանքում էի այնտեղ ընդունված կարգով, և մենք շատախոսեցինք ամեն ինչի մասին, ընդ որում, իմիջիպայոց, նա ինձ շատ հարցեր էր տալիս Փարիզ քաղաքի վերաբերյալ:

Զրույցի կեսից այդ ամերիկացի, ինչպես իրենք են ասում, «երիտասարդ լեդին» հանկարծ, առանց որևէ տեսանելի պատճառի, սկսեց շոյել իմ վիզը:

Ես անմիջապես մտածեցի. «Ուրքա՛ն բարեհոգի է... Նա, իհարկե, վզիս վրա «ոջիլ» է նկատել, և հիմա վզիս այդ մասը շոյում է, որպեսզի գրգիռն անցնի»:

Բայց երբ շուտով նկատեցի, որ ներկա եղող բոլոր ամերիկացի երիտասարդ էակները նմանապես շոյում են մեկը մյուսին, շատ զարմացա և չկարողացա հասկանալ, թե բանն ինչ է:

«Ոջիլի» մասին իմ առաջին ենթադրությունն արդեն տեղին չէր, քանի որ դժվար էր ենթադրել, թե բոլորի վզերին ոջիլ կա:

Ես սկսեցի մտորել և, որքան էլ ջանացի, ոչ մի բացատրություն չգտա:

Միայն հետո, երբ տնից դուրս էինք եկել և արդեն փողոցում էինք, ես միստր Բելիքատոնին խնդրեցի ինձ բացատրել այդ առեղծվածը: Նա անմիջապես սկսեց քրքջալ անգուսպ ծիծաղով և ինձ անվանեց «միամիտ գեղջի»: Այնուհետև մի փոքր հանգստանալուց հետո նա ասաց.

«Ա՛յ թե տարօրինակն եք. չէ՞ որ մենք քիչ առաջ ներկա էինք զույգերի գրկախառնվելու ու պաշպչվելու երեկույթին»:

Հետո, շարունակելով ծիծաղել իմ միամտության վրա, նա բացատրեց, որ նախորդ օրը նույնպես երեկույթ էր, բայց՝ «անեկոդոսների երեկույթ»:

«Իսկ վաղը,– շարունակեց նա,– ես պատրաստվում եմ ձեզ տանել «լոգանքի երեկույթի», որտեղ երիտասարդները միասին լոգանք են ընդունում, իհարկե, հատուկ լողազգեստներ հագած»:

Տեսնելով, որ իմ դեմքին դեռևս զարմանք ու տարակուսանք կա, նա ասաց.

«Բայց եթե ձեզ ինչ-որ պատճառով դուր չեն գալիս այդպիսի «անհամ զվարճությունները», ապա մենք կարող ենք գնալ և մասնակցել այնպիսի զվարճությունների, որոնք ոչ բոլորին են մատչելի: Այստեղ այդպիսի շատ «ընկերություններ» կան, և ես դրանցից մի քանիսի անդամ եմ: Այդ երեկույթների ժամանակ, որոնք ոչ բոլորի համար են բաց, մենք կարող, եթե ուզում եք, ավելի «շոշափելի» բաների հասնել»:

Սակայն ես չօգտվեցի այդ հաճոյակատար ու չափազանց «դուրեկան» միստր Բելիքատոնի սիրալիրությունից, քանի որ հաջորդ առավոտյան մի հեռագիր ստացա, որն ինձ ստիպեց վերադառնալ Նյու-Յորք»:

Իր պատմության այս մասում Բեհեդգեբուդը հանկարծ մտորումների մեջ ընկավ: Երկարատև լռությունից հետո նա խոր թառանչ արձակեց և շարունակեց պատմել.

«Հաջորդ օրը ես չմեկնեցի առավոտյան գնացքով, ինչպես որոշել էի հեռագիրը ստանալուց հետո, այլ մեկնելու հետաձգեցի մինչև երեկոյան գնացքի ժամը:

Քանի որ մեկնելու հետաձգելու պատճառը կարող է լավագույնս քեզ ցուցադրել այն չարիքը, որն այդ ամերիկացի էակների մի գյուտի արդյունքն է, որը շատ լայն տարածում է գտել ամբողջ մոլորակում և քո այդ դժբախտ մոլորակի մնացած բոլոր եռուղեղ էակների, այսպես ասած, «հոգեկառույցների շարունակական այլասերման» գլխավոր պատճառներից մեկն է, ապա ես այդ մասին կպատմեմ մի փոքր ավելի մանրամասն:

Այդ աշխարհամասի էակների հենց այդ վնասակար գյուտը, որը հիմա ուզում եմ պարզաբանել քեզ համար, ոչ միայն քո այդ դժբախտ մոլորակում բազմացող բոլոր եռուղեղ էակների հոգեկառույցների ավելի շատ «այլասերման» տեմպի արագացման պատճառն էր, այլև եղել է ու մնում է այն բանի պատճառը, որ մյուս բոլոր աշխարհամասերի ժամանակակից էակների մոտ արդեն ամբողջովին ավերվել է մի *լինելիական գործառույթ*, որից հարկ է, որ ունենան բոլոր եռուղեղ էակները, և այն միակ գործառույթն է, որը մինչև վերջին հարյուրամյակը դեռևս ծագում էր նրանց ներկայություններում. խոսքս վերաբերում է այն *լինելիական գործառույթին*, որն ամենուրեք կոչվում է «իրականության նկատմամբ հավատի առողջ բնագդ»:

Ամեն մի եռուղեղ էակի համար խիստ անհրաժեշտ այդ գործառույթի փոխարեն աստիճանաբար բյուրեղացվել է մի ուրիշ հատուկ, միանգամայն որոշակի գործառույթ, որն իր կրողին ստիպում է մշտապես կասկածել ամեն ինչին:

Այդ վնասակար գյուտը կոչվում է «գովազդ»:

Որպեսզի մնացած ասելիքս ավելի հասկանալի լինի, ես պետք է նախ պատմեմ քեզ, որ մի անգամ, Ամերիկա մեկնելուց մի քանի տարի առաջ, երբ ճանապարհորդում էի Եվրոպա աշխարհամասում, մի քանի գիրք գնեցի գնացքում կարդալու համար, որպեսզի կարճեմ սպասվելիք երկար ու հոգնեցուցիչ ճանապարհը: Գրքերից մեկում, որի հեղինակն այնտեղ շատ հայտնի մի գրող էր, ես հոդված կարդացի այդ Ամերիկայի մասին, որում շատ էր խոսվում այդ նույն Զիկագո քաղաքի, այսպես կոչված, «սպանդանոցների» մասին:

Այնտեղ «սպանդանոց» են անվանում այն հատուկ վայրը, որտեղ երկրային եռուղեղ էակները վերջ են տալիս այլ արտաքին տեսք ունեցող տարբեր էակների գոյությանը, քանի որ սովորություն ունեն

դրանց մոլորակային մարմիններն օգտագործել որպես առաջին լինելիական սնունդ՝ կրկին իրենց սովորական լինելիական գոյատևման աննորմալ ձևով հաստատված պայմանների պատճառով:

Դեռ ավելին, իրենց այդ գործողությունը կատարելով հատուկ հաստատություններում, նրանք նույնիսկ ասում ու երևակայում են, թե դա անում են անհրաժեշտությունից դրդված և, այսպես ասած, կատարելապես, ինչպես իրենք են ասում, «մարդասիրաբար»:

Հիշյալ ժամանակակից երկրային շատ հայտնի գրողը՝ այդ գրքի հեղինակը, հիացմունքով, որպես «ականատես», նկարագրում էր այդ նույն Չիկագո քաղաքի՝ իր կարծիքով հիանալի կազմակերպված սպանդանոցը:

Նա նկարագրում էր դրա զանազան մեքենաների կատարելությունն ու արտակարգ մաքրությունը: Ոչ միայն, գրում էր նա, այդ ուրիշ տեսակի էակների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքն է այդ սպանդանոցում հասնում «աստվածայնության» աստիճանի, այլև մեքենաներն այնքան կատարյալ են, որ համարյա այնպես է ստացվում, որ ցուլին մի դռնից մտնում են, և ընդամենը տասը րոպե անց հաստատության մյուս ծայրում գտնվող դռնից, եթե ուզում եք, կարող եք ստանալ ուտելու համար արդեն պատրաստ տաք նրբերշիկներ: Վերջում նա հատուկ ընդգծում էր, որ այդ ամենը կատարվում է բացառապես միայն «ժամանակակից» մեքենաներով՝ առանց մարդու ձեռքի մասնակցության, ինչի հետևանքով, ինչպես նա էր պնդում, այնտեղ ամեն ինչն այնքան մաքուր ու հավաք է, որ դրանից ավելի մաքուր ու հավաք դժվար է պատկերացնել:

Այդ գիրքը կարդալուցս մի քանի տարի անց ինձ վիճակվեց այդ չիկագոյական սպանդանոցի մասին կրկին կարդալ համարյա նույն բանը՝ այս անգամ նույնքան լուրջ ռուսական ամսագրի էջերում, որտեղ նմանապես գովաբանվում էր այդ սպանդանոցը:

Եվ հետո այդ չիկագոյական սպանդանոցի մասին լսեցի հարյուրավոր տարբեր էակներից, որոնք իբր իրենց նկարագրած հրաշքների ականատեսներն էին եղել:

Կարճ ասած, դեռևս նախքան Չիկագո հասնելս ես արդեն լիովին համոզված էի, որ այդտեղ Երկրում իր նախադեպը չունեցող մի «հրաշք» կա:

Այստեղ պետք է հիշեցնեմ, որ ինձ միշտ հետաքրքրում էին նրանց այդ հաստատությունները՝ հենց այն վայրերը, որոնցում քո սիրելիները վերջ են տալիս տարբեր արտաքին տեսք ունեցող երկրային էակների գոյությանը. դեռ ավելին, այն ժամանակից սկսած, երբ ես Մարսի վրա կազմակերպեցի իմ աստղադիտարանը և պետք է գործ ունենայի դրա համար անհրաժեշտ զանազան մեքենաների հետ, ես միշտ և ամենուրեք շատ էի հետաքրքրվում նաև ուրիշ ամեն տեսակի մեքենաներով:

Այդպիսով, երբ ինձ վիճակվեց լինել հենց այդ Չիկագո քաղաքում, ես մտածեցի, որ իմ կողմից աններելի արարք կլինի, եթե չօգտվեմ առիթից և չտեսնեմ այդ նշանավոր «չիկագոյական սպանդանոցը»: Եվ ահա այն օրվա առավոտյան, երբ պետք է հեռանայի այդ քաղաքից, ես որոշեցի չիկագոյի իմ նոր ծանոթներից մեկի ուղեկցությամբ գնալ և տեսնել քո սիրելիների այդ հազվագյուտ կառույցը:

Երբ տեղ հասանք, գլխավոր տնօրենի օգնականներից մեկի խորհրդով մենք որպես ուղեկցորդ ընտրեցինք այնտեղի բանկի ծառայողներից մեկին, որը կապ ուներ այդ սպանդանոցի հետ, և նրա հետ միասին մտանք սպանդանոցը տեսնելու:

Վերջինիս ուղեկցությամբ մենք նախ անցանք այն տեղով, որտեղ այդ դժբախտ չորքոտանի էակներին բերում և պահում են նախքան մորթելը:

Այդ տեղը ոչնչով չէր տարբերվում քո այդ մոլորակում եղած բոլոր նմանատիպ հաստատություններից՝ այն տարբերությամբ, որ այստեղ այն անհամեմատ ավելի մեծ տարածք էր զբաղեցնում: Մյուս կողմից՝ այն անհամեմատ ավելի կեղտոտ էր, քան նախկինում ուրիշ երկրներում տեսածս սպանդանոցները:

Այնուհետև մենք անցանք ևս մի քանի, այսպես կոչված, «օժանդակ շինություններով»: Դրանցից մեկը պատրաստի մսի «սառնարանային պահեստն էր», մյուսը նախատեսված էր ուղղակի մուրճի օգնությամբ չորքոտանի էակների կյանքին վերջ տալու և դրանց կաշիները քերթելու համար՝ կրկին ճիշտ այնպես, ինչպես սովորաբար արվում է ուրիշ սպանդանոցներում:

Իմիջայլոց, երբ անցնում էինք այդ վերջին օժանդակ շինությունով, հիշում եմ, որ մտածեցի՝ այս տեղը հավանաբար նախատեսված է հատուկ հրեաների համար նախատեսված կենդանիներ մորթելու համար, որոնք, ինչպես արդեն գիտեի, չորքոտանի էակներին սպանում են հատուկ եղանակով՝ համաձայն իրենց կրոնում նշված օրենքի:

Հիշյալ օժանդակ շինություններով անցնելը բավական երկար տևեց, և այդ ամբողջ ընթացքում ես սպասում էի այն պահին, երբ վերջապես կհասնենք այն բաժանմունքը, որի մասին շատ էի լսել և որոշել էի անպայման տեսնել:

Բայց երբ ուղեկցորդին հայտնեցի այդ բաժանմունքը հնարավորին չափ շուտ հասնելու իմ ցանկությունը, իմացա, որ մենք արդեն այդ նշանավոր չիկագոյական սպանդանոցում եղած ամեն ինչը տեսել ենք, և այլևս ոչ մի ուրիշ բաժանմունք չկա: Այդպիսով, սիրելի՛ զավակս, ես այնտեղ ոչ մի տեղ մեքենաներ չտեսա, եթե չհաշվենք ռելսերի վրայի վագոնները, որոնցից կան բոլոր սպանդանոցներում՝ մտեղիքը տեղափոխելու համար. իսկ ինչ վերաբերում է կեղտոտությանը, ապա այդ չիկագոյական սպանդանոցում ամենուրեք ինչքան ասես կեղտ կար սփռված:

Թիֆլիս քաղաքի սպանդանոցը, որը ես տեսել էի դրանից երկու տարի առաջ, իր մաքրությամբ ու կազմակերպվածությամբ շատ միավորներով առաջ էր Չիկագո քաղաքի այդ սպանդանոցից:

Օրինակ՝ Թիֆլիսի սպանդանոցում ոչ մի տեղ հատակին մի կաթիլ արյուն չէի տեսնի, այն դեպքում, երբ չիկագոյական սպանդանոցում ամենուրեք ամեն քայլափոխի արյան ամբողջ լճակներ կային:

Ակներևաբար, ամերիկյան գործարարների ինչ-որ մի ընկերություն, որն ընդհանրապես զբաղվում է բիզնեսի ամեն մի բնագավառը «գովազդելու» գործով, պետք է գովազդեր նաև այդ չիկագոյական սպանդանոցը, որպեսզի դրա մասին մոլորակով մեկ իրականությանը բոլորվին չհամապատասխանող կեղծ պատկերացում տարածեր:

Ինչպես այնտեղ ընդհանրապես ընդունված է, նրանք, իհարկե, դուրսեր չեն խնայել նաև այդ դեպքում, և քանի որ ներկայիս, այսպես կոչված, «լրագրողների» ու «թղթակիցների» սրբազան «խղճի» *լինելիական գործառույթը* լրիվ հետաձգել է ապրել, ապա այդ ամենի արդյունքում բոլոր աշխարհամասերում բազմացող քո բոլոր սիրելիների մոտ բյուրեղացել է հենց այդ որոշակի, հրեշավոր կերպով չափազանցված պատկերացումը Չիկագո քաղաքի սպանդանոցի վերաբերյալ:

Եվ իսկապես կարելի է ասել, որ նրանք այդ գործը կատարել են իսկական ամերիկյան ձևով:

Ամերիկա աշխարհամասի եռուղեղ էակներն այնպես են վարպետացել իրենց այդ գովազդային գործում, որ նրանց վերաբերյալ լիովին կարելի է կիրառել մեր սիրելի մոլլա Նասրեդինի մի ասույթը. «Միայն նա կարող է կճղակավորների ընկերը դառնալ, ով այնքան կկատարելագործի իր բանականությունն ու լինելիությունը, որ կարողանա լուր ուղտ սարքել»:

Իսկապես, նրանք այնքան են հմտացել «լուր ուղտ սարքելու» գործում և այնքան հաճախ են դա անում, որ արդեն ներկա ժամանակներում իսկական ամերիկյան ուղտ տեսնելիս մարդ «իր ողջ էությամբ պետք է ուշքը գլխին պահի», որպեսզի այն տպավորությունը չստանա, թե իր տեսածն ընդամենը լու է:

Չիկագոյից ես կրկին վերադարձա Նյու-Յորք, և քանի որ իմ բոլոր պլանները, որոնց իրականացման համար ես եկել էի այդ աշխարհամասը, այն ժամանակ անսպասելի արագ և բավական հաջող իրականացան, նաև տեսնելով, որ շրջակա հանգամանքներն ու այդ քաղաքի եռուղեղ էակների սովորական գոյատևման պայմանները համապատասխանում են նրան, ինչ պետք էր իմ պարբերական լիակատար հանգստի համար, որն ինձ համար սովորական էր դարձել քո այդ մոլորակի մակերևույթին վերջին անգամ անձնապես գտնվելու ընթացքում, ես որոշեցի մնալ այդտեղ և այդ էակների հետ ուղղակի գոյատևել իմ ներսում անխուսափելիորեն ընթացող *լինելիական նմանագագություններին* համապատասխան:

Հիշյալ եղանակով գոյատևելով արարածներիայդ մեծ ժամանակակից խմբավորման կենտրոնական վայրում և տարբեր առիթներով հաղորդակցվելով նրանց մեջ եղած զանազան տիպերի հետ՝ ես հենց այդ ժամանակառանց որևէ նախնական մտադրության, այլ միայն, այսպես ասած, «ընթացքում» իմ վիճակագրական նյութերը հավաքելու արդեն ձեռք բերած սովորությանս շնորհիվ, որոնք, ինչպես արդեն ասել եմ քեզ, հավաքում էի վերջին անգամ քո սիրելիների միջավայրում անձամբ լինելուս ողջ ընթացքում՝ գլխավորապես նպատակ ունենալով համեմատել, թե որքան են տարածված բոլոր հիվանդություններն ու բոլոր արտառոց, այսպես կոչված, «լինելիական սուբյեկտիվ արատները» էակների տարբեր խմբավորումներում, ես արձանագրեցի մի փաստ, որն ինձ շատ հետաքրքրեց. այն է՝ այնտեղ իմ հանդիպած եռուղեղ էակների կեսից ավելիի ընդհանուր ներկայություններում առաջին *լինելիական սննդի* փոխակերպության տեղի ունեցող գործառույթն աններդաշնակացված է, այսինքն, ինչպես հենց իրենք կասեին, նրանց մարսողական օրգանները

փչացած են, և նրանց համարյա քառորդ մասն ունեն կամ հավակնում են ունենալու այդ էակներին բնորոշ այն հիվանդությունը, որն իրենք «իմպոտենցիա» են անվանում, և որի հետևանքով քո այդ մոլորակի բավական մեծ քանակությամբ ժամանակակից էակներ ընդմիշտ գրկված են իրենց ցեղը շարունակելու հնարավորությունից:

Երբ պատահաբար արձանագրեցի այդ փաստը, իմ ներսում մեջ հետաքրքրություն ծագեց հատկապես այդ նոր խմբավորման էակների նկատմամբ, ուստիս փոխեցի նրանց հետ գոյատևելու նախկինում իմ նախատեսած կերպը և իմ անձնական հանգստի ժամանակի կեսը հատկացրի ինձ համար տարօրինակ և նրանց համար ողբալի այդ փաստի պատճառների դիտմանն ու հետազոտմանը: Այդ նպատակը հետապնդելուս ընթացքում ես նույնիսկ, առիթից օգտվելով, այցելեցի այդ նոր ժամանակակից խմբավորման էակների տարբեր գավառական բնակավայրեր. դրանցից ոչ մեկում երկու օրից ավելի չմնացի, բացառությամբ «Բոստոն» քաղաքի, կամ, ինչպես իրենք են երբեմն կոչում, «այն մարդկանց քաղաքի, որոնք խուսափել են ռասայական այլասերվածությունից»: Այդտեղ ես մնացի մի ամբողջ շաբաթ:

Եվ ահա, իմ դիտումների ու վիճակագրական հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ վերը նշված երկու հիվանդությունները, որոնք հայտնի չափերով տարածված են ընդհանրապես բոլոր աշխարհամասերում բազմացող ժամանակակից էակների միջավայրերում, այդ աշխարհամասում այնքան չափից դուրս են տարածված, որ դրանց վերահաս հետևանքներն ինձ համար անմիջապես ակնհայտ դարձան. այն է՝ եթե այդտեղ դրանք շարունակեն տարածվել նույն արագությամբ, ապա քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների այդ ժամանակակից մեծ ու անկախ խմբավորումը կարժանանա նույն ճակատագրին, որին ոչ վաղ անցյալում արժանացել է այն մեծ հանրությունը, որին «միապետական Ռուսաստան» էին կոչում, այսինքն՝ այդ նոր խմբավորումը նույնպես կոչնչանա:

Ոչնչացումը կտարբերվի սոսկ բուն գործընթացով: «Միապետական Ռուսաստանի» ոչնչացման գործընթացը տեղի ունեցավ այնտեղի, այսպես կոչված, իշխանավոր էակների բանականության աննորմալությունների հետևանքով, այն դեպքում, երբ այդ Ամերիկայի հանրության ոչնչացման գործընթացը տեղի կունենա օրգանական աննորմալությունների հետևանքով: Այլ կերպ ասած՝ առաջին հանրության «մահը» տեղի ունեցավ, ինչպես ասում են, «իրենց խելքից», իսկ երկրորդի մահը վրա կհասնի այդ հանրության էակների «ստամոքսից ու սեքսից»:

Բանն այն է, որ արդեն վաղուց է հաստատվել, որ ընդհանրապես քո այդ մոլորակի եռուղեղ էակների երկարաժամկետ գոյատևման հնարավորությունը ներկայումս կախված է բացառապես այդ երկու վերոհիշյալ *լինելիական գործառույթների* նորմալ գործունեությունից, այն է՝ նրանց, ինչպես իրենք են ասում, «մարտողությունից» և «սեռական օրգանների» գործունեությունից:

Բայց նրանց ընդհանուր ներկայության համար անհրաժեշտ հենց այդ երկու գործառույթներն են, որ ներկայումս գնում են լիակատար հետաճի ուղղությամբ, և դեռ ավելին՝ արագացված տեմպերով:

Այդ Ամերիկա կոչվող հանրությունը ներկայումս դեռ շատ երիտասարդ է. այն դեռևս, ինչպես քո այդ մոլորակում են ասում «թմբլիկ պստիկի» է նման:

Այսպիսով, եթե իրենց գոյատևման այդ երկու գլխավոր շարժիչ ուժերի նկատմամբ այդ դեռևս այդքան երիտասարդ էակները դեպի հետ են շեղվել, ապա իմ կարծիքով այդ դեպքում, ինչպես ընդհանրապես լինում է Մեզալակոսմոսում, կրկին Անսահմանին միախառնվելու նպատակով հետագա առաջխաղացման աստիճանը կախված կլինի սկզբնական ազդակից ստացած ուժերի ուղղությունից և աստիճանից:

Մեր Մեծ Մեզալակոսմոսում բանականությամբ օժտված բոլոր էակների համար նույնիսկ գործում է, այսպես ասած, օրենք, համաձայն որի՝ միշտ և ամենուրեք հատկապես պետք է զգուշանալ սկզբնական ազդակից, քանի որ էներգիա ձեռք բերելով՝ այն վերածվում է ուժի, որը Տիեզերքի ամբողջ գոյի հիմնական շարժիչն է և ամեն ինչը տանում է դեպի Ելակետային Լինելիություն»:

Պատմության այս մասում Բեհեդգեբուդին «Լեյտուչանբրոս» բերեցին, որի բովանդակությանն ականջ դնելուց հետո նա կրկին շրջվեց Հասեինի կողմը և ասաց.

«Ես կարծում եմ, զավա՛կս, որ ընդհանրապես Երկրում ծնունդ առնող և քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների հոգեկառույցի տարօրինակությունն առավել մանրամասն պատկերացնելու և հասկանալու առումով քեզ համար ահագին օգտակար կլինի, եթե ես մի փոքր ավելի մանրամասն

քեզ բացատրեմ այն պատճառները, որոնք ամերիկյան եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում այդ երկու հիմնական գործառնությունները դարձնում են աններդաշնակ:

Շարադրանքի հարմարության համար այդ երկու հիմնական գործառնություններից յուրաքանչյուրի աններդաշնակության պատճառները ես քեզ կբացատրեմ առանձին-առանձին և կսկսեմ նրանց առաջին *լինելիական սննդի* փոխակերպության գործառնության աններդաշնակացման, կամ, ինչպես հենց իրենք կասեին, ստամոքսների փչացման պատճառները բացատրելուց:

Նրանց այդ գործառնության աններդաշնակացման համար եղել են և հիմա նույնպես կան մի քանի որոշակի պատճառներ, որոնք հասկանալի են նույնիսկ սովորական նորմալ եռուղեղ էակների բանականության համար, բայց գլխավոր և հիմնական պատճառն այն է, որ նրանց հանրության կազմավորման հենց ամենասկզբից, աննորմալ ձևով կազմավորված իշխանությունից բխող ամեն տեսակի շրջակա պայմանների ու ազդեցությունների հետևանքով նրանք աստիճանաբար վարժվեցին, և հիմա արդեն վերջնականապես են վարժվել այն բանին, որ որպես առաջին *լինելիական սննունդ* երբեք բացարձակապես ոչ մի թարմ մթերք չեն օգտագործում, այլ օգտագործում են բացառապես արդեն քայքայված մթերքներ:

Ներկայումս այդ հանրության էակներն իրենց առաջին լինելիական սննդառության համար համարյա երբեք չեն օգտագործում որևէ ուտելիք, որը դեռևս իր մեջ պարունակում է բոլոր այն ակտիվ տարրերը, որոնք ամեն մի էակի մեջ մտցրել է Բուն Մեծ Բնությունը, և որոնք անհրաժեշտ են ներսում ուժեր կուտակելու և նորմալ գոյատևելու համար. դրա փոխարեն նրանք բոլոր այդ մթերքները նախապես «պահածոյացնում», «սառեցնում» և «առանձնացնում» են և դրանք օգտագործում միայն այն ժամանակ, երբ նորմալ գոյատևման համար անհրաժեշտ ակտիվ տարրերի մեծ մասն արդեն ցնդած է լինում:

Եվ այդ աննորմալությունը կայացել է քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների, տվյալ դեպքում՝ այդ նոր խմբավորման էակների *լինելիական գոյատևման* սովորական գործընթացում և այնտեղ ամենուրեք շարունակում է տարածվել ու հաստատվել, իհարկե, նաև այն բանի հետևանքով, որ այն ժամանակից սկսած, երբ նրանք՝ քո այդ մոլորակի ընդհանրապես բոլոր եռուղեղ էակները, դադարեցին իրենց ներսում պարտադիր *լինելիական ջանքեր* գործադրել, նրանց ընդհանուր ներկայություններում աստիճանաբար ի չիք դարձավ այն *լինելիական նախադրյալների* բյուրեղացման հնարավորությունը, որոնց շնորհիվ, նույնիսկ ճշմարիտ գիտելիքներով առաջնորդվելու բացակայության պայմաններում, սեփական դրսևորումներով իրենց իսկ վնաս հասցնելը կարող բնագործեն գիտակցվել:

Տվյալ դեպքում, եթե այդ դժբախտներից գոնե մի քանիսն օժտված լինեին եռուղեղ էակներին բնորոշ բնագոյով, ապա կարող էին, թեկուզ պարզապես սովորական պատահական *լինելիական նմանագագությունների* և համադրումների շնորհիվ սկզբում հենց իրենք գիտակցել, որից հետո նաև բոլոր մյուսներին տեղեկացնել այն մասին, որ հենց որ առաջին *լինելիական սննդի* համար պիտանի ընդհանրապես ցանկացած սննդամթերքի մեջ առկա սկզբնական կապն ընդհանուր Բնությունից կտրվում է, ապա անկախ այն բանից, թե որքան կատարյալ է տվյալ մթերքը մեկուսացվում, այսինքն՝ «հերմետիկորեն պահածոյացվում» կամ «առանձնացվում», այն պետք է, ինչպես Տիեզերքում ամեն ինչը, փոփոխվի և քայքայվի՝ այն նույն սկզբունքին ու կարգին համապատասխան, որոնցով ի սկզբանե կազմավորվել է:

Այստեղ հարկ է, որ իմանաս ակտիվ տարրերի վերաբերյալ, որոնցից Բնությունը կազմավորել է բոլոր տիեզերական գոյացությունները (ինչպես Տետարդակոսմոսներով փոխակերպվողները, այնպես էլ էակների համար առաջին սնունդ ծառայող մթերքները, ինչպես նաև ընդհանրապես բոլոր մյուս ամբողջովին ոգեկոչված ու կիսաոգեկոչված գոյացությունները), որ երբ համապատասխան ժամը հասնում է, այդ ակտիվ տարրերը, ինչպիսի պայմաններում էլ դրանք գտնվելիս լինեն, պարտադիր կերպով սկսում են որոշակի հաջորդականությամբ առանձնանալ այն զանգվածներից, որոնց մեջ միաձուլվել էին տրոգոավտոէգոկրատական գործընթացի ժամանակ:

Նույն բանն, իհարկե, տեղի է ունենում ամերիկացի էակների համար արժեքավոր այն սննդամթերքների հետ, որոնք նրանք պահպանում են, այսպես կոչված, «հերմետիկորեն փակ պահածոյի տուփերում»:

Որքան էլ «հերմետիկորեն» այդ մթերքները փակված լինեն, հենց որ վրա է հասնում, այսպես ասած, «տարբաժանման» ժամը, համապատասխան ակտիվ տարրերը անխուսափելիորեն սկսում են

առանձնաճանաչելով ընդհանուր զանգվածից: Եվ ընդհանուր զանգվածից այդ եղանակով առանձնացած ակտիվ տարրերն այդ հերմետիկորեն փակ տուփերում խմբավորվում են իրենց ծագմանը համապատասխան, որպես կանոն, «կաթիլների» ու «պղպջակների» տեսքով, որոնք, այսպես ասած, անմիջապես ցնդում են, հենց որ տուփերը բացվում են օգտագործման համար, և գոլորշանալով ցրվում տարածության մեջ դեպի իրենց համապատասխան տեղերը:

Այդ աշխարհամասի էակներն այնուամենայնիվ երբեմն թարմ պտուղներ են օգտագործում, բայց իրականում դրանք պտուղներ չեն, այլ, ինչպես կասեր մեր սիրելի ուսուցիչը, պարզապես «այլանդակներ»:

Ծառերը մշակելու եղանակով, որոնցից առատորեն կան այդ աշխարհամասում, զանազան «նոր տեսակի» գիտնականներն իրենց «իմաստակություններով» կամաց-կամաց հասել են նրան, որ ներկայումս այդ ամերիկյան պտուղները *լինելիական սննդի* տեսակից վերածվել են միայն, այսպես ասած, «աչք շոյող տեսարանների»:

Հիմա արդեն այնտեղի պտուղներն այնպիսին են, որ համարյա ոչ մի ընդհանուր բան չունեն այն ամենի հետ, ինչ Մեծ Բնությունն նախատեսել է այդ էակների նորմալ *լինելիական գոյատևման* ընթացքում որպես սնունդ օգտագործելու համար:

Այնտեղի այդ նոր տեսակի գիտնականները, իհարկե, շատ հեռու են հասկանալուց, որ երբ որևէ վերմոնթական գոյացություն որևէ այդպիսի եղանակով արհեստականորեն պատվաստվում ու մշակվում է, անցում է կատարում մի վիճակի, որին Օբյեկտիվ Գիտությունը «աբսոլյուտ»³⁸ է անվանում, և որում այդ գոյացությունը շրջակա միջավայրից կլանում է այնպիսի նյութեր, որոնք պիտանի են միայն, այսպես ասած, «ինքնաբերական ինքնարտադրվող սուբյեկտիվ ներկայությունը» ծածկելու համար:

Բանն այն է, որ նրանց այդ ներկայիս վերջին քաղաքակրթության հենց ամենասկզբում բոլոր անհաշիվ առանձին խմբավորումների էակների հետ ինչ-որ ձևով այնպես է պատահել, որ եռուղեղ էակներին Վերից տրված հիմնական պատվիրանի յոթ ասպեկտներից, որն ասում է. «ձգտիր ներքին ու արտաքին մաքրության հասնել»՝ միակ ասպեկտը, որի աղավաղված տարբերակն իրենց իդեալն են դարձրել, այն է, որն արտահայտվում է հետևյալ բառերով.

«Օգնիր, որ քո շրջապատի ամեն ինչը՝ ինչպես շնչավոր, այնպես էլ դեռևս անշունչ, ձեռք բերի գեղեցիկ տեսք»:

Եվ իրոք, հատկապես վերջին երկու դարերում նրանք այնտեղ ձգտել են հասնել «գեղեցիկ արտաքինի», բայց, իհարկե, միայն իրենցից դուրս գտնվող այն տարատեսակ իրեղենի առումով, որոնց բախտ է վիճակվել այդ ժամանակաշրջանում, ինչպես իրենք են ասում, «մոդայիկ» դառնալ:

Նշված ժամանակաշրջանում նրանց բոլորվին չի հետաքրքրել, թե այս կամ այն արտաքին իրն ընդհանրապես ունի՝ արդյոք որևէ բովանդակություն. միակ բանը, որ պահանջվել է՝ դրա «զարմանահրաշ արտաքինն» է:

Իսկ ինչ վերաբերում է այդ պտուղների «արտաքին գեղեցկությունն» ապահովող՝ այդ աշխարհամասի ժամանակակից էակների նվաճումներին, ապա իսկապես, զավա՛կս, ես այդպիսի գեղեցիկ արտաքինով պտուղներ, ինչպիսիք ներկայումս կան այդ Ամերիկա աշխարհամասում, երբեք չեմ տեսել ոչ միայն այդ մոլորակի մյուս աշխարհամասերում, այլև այդ արևային համակարգի մյուս մոլորակներում. մյուս կողմից՝ ինչ վերաբերում է այդ պտուղների ներքին պարունակությանը, ապա այդ առումով կիրառելի է միայն մեր սիրելի ուսուցչի սիրած արտահայտությունը, որը կազմված է հետևյալ բառերից.

«Մարդու համար բոլոր *լինելիական բարերարություններից* մեծագույնը գերչակի յուղի ազդեցությունն է»:

Իսկ թե ինչ բարձունքների է հասել այդ պտուղներից պահածոներ պատրաստելու նրանց արվեստը, ինչպես ասում են, «ոչ հեքիաթում կպատմվի, ոչ էլ գրչով կգրվի»: Պետք է դրանք անձամբ տեսնես, որ քո ընդհանուր ներկայությունում ապրես «հիացմունքի» ազդակի այն աստիճանը, որին կարելի է հասնել՝ տեսողական օրգանով ընկալելով այդ ամերիկյան մրգային պահածոների արտաքին գեղեցկությունը:

³⁸ ռուս տարբերակում՝ абсоизомос, անգլ. տարբերակում՝ absoizomosa

Երբ անցնում ես այդ աշխարհամասի էակների քաղաքների՝ հատկապես Նյու-Յորքի գլխավոր փողոցներով և դիտում մրգեղենի որևէ խանութի ցուցափեղկերը, ապա դժվար է լինում անմիջապես ասել, թե աչքդ ինչ է տեսնում: Ոչ այն է՝ Եվրոպա աշխարհամասի Բեռլին քաղաքի ապագայապաշտների նկարների ցուցահանդեսն է, ոչ այն է՝ «աշխարհի մայրաքաղաքում», այսինքն Փարիզ քաղաքում օտարերկրացիների համար բացված օժանելիքների խանութների ցուցափեղկերը:

Միայն որոշակի ժամանակ ացնելուց հետո, երբ վերջապես հաջողվում է որսալ այդ ցուցափեղկերի արտաքին տեսքի զանազան մանրամասներ և կրկին ինչ-որ կերպ դատողություններ անել, դու կարող ես հստակ արձանագրել, թե գույներով ու տուփերի ձևերով որքան ավելի բազմազան են այդ ամերիկյան ցուցափեղկերի մրգային պահածոները՝ համեմատած Եվրոպա աշխարհամասի հիշյալ ցուցափեղկերի հետ. և դա հավանաբար բացատրվում է նրանով, որ այդ նոր խմբավորման էակների ընդհանրական հոգեկառույցի այն համակցությունը, որը գոյացել է նախկին ինքնուրույն ժողովուրդների խառնուրդից, պարզվում է, ավելի լրիվ է համապատասխանում բանականության նվաճումների իմաստի ու բարիքի ավելի լավ ընկալմանն ու ավելի խոր ճանաչողությանը՝ ինչպես ժամանակակից Գերմանիա կոչվող հանրության էակների հայտնաբերած և այնտեղ «անիլին» ու «ալիզարին» կոչվող քիմիական նյութերի, այնպես էլ Ֆրանսիա կոչվող հանրության էակների «օժանելիքների» առումներով:

Ես ինքս, երբ այնտեղ առաջին անգամ այդպիսի մի ցուցահանդես տեսա, չդիմացա և խանութ մտնելով՝ գնեցի բոլոր գույների մրգային պահածոներ պարունակող ավելի քան քառասուն տարբեր ձևի տուփ:

Ես դրանք գնեցի, որպեսզի հաճույք պատճառեմ այդ ժամանակ ինձ ուղեկցող եվրոպացի և ասիացի էակներին, որոնց աշխարհամասերում այդպիսի հազվագյուտ գեղեցկությամբ պտուղներ չկան: Երբ իմ գնումները բերեցի տուն և բաժանեցի նրանց, այդ էակները սկզբում դրանց տեսքով զարմացած ու հիացած էին ոչ պակաս, քան ես, բայց հետո, երբ դրանք ճաշակեցին որպես առաջին *լինեյիական սնունդ*, հենց միայն նրանց դեմքերի արտահայտություններն ու երեսների գույները տեսնելով կարելի էր հասկանալ, թե այդ պտուղներն ընդհանրապես ինչպիսի ազդեցություն են գործում էակների օրգանիզմի վրա:

Այդ աշխարհամասում ավելի վատ վիճակում է այն մթերքը, որն ինչպես իրենց, այնպես էլ համայն Տիեզերքի համարյա բոլոր եռուղեղ էակների համար ամենակարևոր առաջին *լինեյիական սնունդն* է՝ հենց այն, որը «պրոսֆորա»³⁹ է կոչվում, իսկ իրենք անվանում են «հաց»:

Նախքան այդ ամերիկյան հացի բախտը նկարագրելը ես պետք է ասեմ քեզ, որ քո այդ մոլորակի ցամաքային մակերևույթի այն մասը, որը «Հյուսիսային և Հարավային Ամերիկա» է կոչվում, կազմավորվել է տարբեր պատահական համակցությունների շնորհիվ, որոնք առաջացել են նախ՝ այդ դժբախտ մոլորակի հետ պատահած երկրորդ մեծ «ոչ օրինաչափ արհավիրքով» և երկրորդ՝ այն աշխարհագրական դիրքով, որն այդ ցամաքը զբաղեցնում է «համահամակարգային շարժման» պրոցեսի նկատմամբ՝ ունենալով, այսպես կոչված, «հողաշերտ», որը հարմար է եղել և հիմա էլ է հարմար այն «աստվածային հատիկի» մշակության համար, որից պատրաստվում է հենց այդ «պրոսֆորան»: Գիտակցված ձևով օգտագործվելու դեպքում այդ աշխարհամասերի հողային մակերևույթն ընդամենը մեկ, ինչպես ասում են, «բարենպաստ եղանակի» ընթացքում կարող է տալ «սրբազան Յոթնապարապարշինողի գործընթացի լիակատար ավարտ», կամ, այլ խոսքով ասած, «քառասնիննապատիկ բերք», և նույնիսկ դրա կիսագիտակցական օգտագործման դեպքում, ինչը չի իրականացվում, այդտեղի հողն անհամեմատ ավելի մեծ քանակությամբ «աստվածային հատիկ» է տալիս, քան մնացած աշխարհամասերում:

Այսպիսով, զավա՛կս, երբ զանազան բարենպաստ հանգամանքների բերումով այդ աշխարհամասի էակները շատ ունեցան այն առարկայից, որը քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների ժամանակակից ներկայացուցիչների արտառոց հոգեկառույցի համար երազանքների առարկա է և այնտեղ ամենուրեք «դոլար» է կոչվում, ինչի հետևանքով նրանք այնտեղ վաղուց հաստատում գտած ավանդույթով իրենց «պատկերացումներում», այսպես կոչված, «գերազանցության զգացում» ձեռք բերեցին բոլոր մյուս աշխարհամասերի էակների նկատմամբ, որի արդյունքում էլ, ինչը նույնպես հիմա այնտեղ սովորական բան է, նրանք սկսեցին բոլոր առիթներով խելքներին գոռ տալ, որպեսզի

³⁹ ռուս. տարբերակում՝ просфора, անգլ. տարբերակում՝ prosphora

հասնեն իրենց ժամանակակից իդեալին, սկսեցին ամբողջ ուժով իմաստակություն բանեցնել նաև այդ աստվածային հատիկի հետ, որից պրոսֆորա են պատրաստում:

Նրանք սկսեցին ամեն տեսակ հնարքներ բանեցնել այդ աստվածային հատիկը, այսպես ասած, այլանդակելու համար, որպեսզի դրանից ստացվող մթերքին տան «գեղեցիկ ու զարմանահրաշ արտաքին տեսք»:

Այդ նպատակով նրանք բազմաթիվ մեքենաներ հորինեցին, որոնց օգնությամբ «քերում», «սանրում», «հարթում» ու «փայլեցնում» են այն ցորենը, որը դժբախտություն է ունենում աճելու իրենց աշխարհամասում, և նման գործերը շարունակում են այնքան, մինչև լրիվ ոչնչացնում են բոլոր այն ակտիվ տարրերը, որոնք կենտրոնացված են հատիկի մակերեսին՝ անմիջապես, այսպես կոչված, «թեփուկների» տակ, և հատկապես որոնք Մեծ Բնության կողմից նախատեսված են էակների ընդհանուր ներկայություններում վերականգնելու համար այն, ինչը նրանք լրիվ սպառել են՝ արժանավայել կերպով ծառայելով Նրան:

Այդ պատճառով, զավա՛կս, այնտեղ ներկայումս արտադրվող պրոսֆորան, կամ հացը, որի համար որպես հումք է ծառայում այդ աշխարհամասում առատորեն աճող ցորենը, այն օգտագործող էակների համար ոչ մի օգտակար բան չի պարունակում, և դրա օգտագործումից նրանց ներկայություններում ոչինչ չի առաջանում, բացի վնասակար գազերից ու, ինչպես այնտեղ են ասում, «ճիճուներից»:

Սակայն հանուն արդարության հարկ է նշել, որ եթե նրանք իրենց համար այդ ցորենից չեն ստանում որևէ բան, որը նրանց թույլ կտար ավելի լավ ու ավելի գիտակցաբար ծառայելու Մեծ Բնությանը, այնուհանդերձ, իրենց ներսում ստեղծելով այդ «ճիճուներին»՝ նրանք իսկապես, թեև անգիտակցաբար, շատ մեծ օգուտ են տալիս իրենց մոլորակին համատիեզերական Մեծ Տրոգոավտոեգոկրատին ծառայելու գործում. չէ՞ որ ճիճուները նույնպես էակներ են, որոնց միջոցով տիեզերական նյութերը փոխակերպության են ենթարկվում:

Ամեն դեպքում՝ այդ աշխարհամասում բազմացող էակներն իրենց հացի նկատմամբ իմաստակություն բանեցնելով արդեն հասել են այն բանին, ինչին ահավոր շատ էին ձգտում հասնել, այն է՝ մյուս բոլոր աշխարհամասերի էակները երբեք չեն զլանա նրանց հասցեին ասել, ինչպես օրինակ այս դեպքում, մոտավորապես այսպիսի բան.

«Զարմանալի զիլ տղերք են այդ ամերիկացիները. նույնիսկ նրանց հացն է ինչ-որ անսովոր տեսակի՝ այնպես «հրաշալի», այնպես սպիտակ... Ուղղակի հրաշք է, ժամանակակից քաղաքակրթության հրաշքների հրաշքը»:

Բայց նրանց «հեշ վեջը չի լինի», որ ցորենի այդ այլանդակումից հետո նրանց հացը դարձել է ոչ միայն «անօգուտ», այլև նրանց ստամոքսները փչացնող անհաշիվ գործոններից մեկը: Զե՞ որ նրանք էլ իրենց հերթին կանգնած են ժամանակակից, այսպես կոչված, «եվրոպական քաղաքակրթության» առաջին շարքերում...

Նրանց ամբողջ այդ միամտության մեջ ամենահետաքրքրականն այն է, որ նրանց նորմալ գոյատևման համար Բնության կողմից այդ աստվածային հատիկի մեջ կազմավորած ամենալավ ու ամենաօգտակար բաները նրանք տալիս են իրենց խոզերին կամ պարզապես վառում են, իսկ իրենք օգտագործում են միայն այն նյութը, որը ցորենի մեջ Բնությունը դրել է միայն այն ակտիվ տարրերի փոխադարձ կապն ապահովելու համար, որոնք հիմնականում գտնվում են, ինչպես արդեն ասացի, հենց հասկի թեփուկների տակ:

Այդ թշվառ ամերիկացի եռուղեղ էակների մարսողական գործառույթն աններդաշնակեցնող երկրորդ և նույնպես բավականին կարևոր գործոնն այն համակարգն է, որը վերջերս նրանք հորինել են առաջնային սննդի մնացորդներն իրենց ներսից հեռացնելու համար. նկատի ունեմ նրանց, այսպես կոչված, «արտաքնոցների», այսպես ասած, «հարմարավետ նստելատեղերը»:

Ի հավելումն այն բանի, որ այդ չարանենգ հորինվածքը եղել և մնում է նշված աններդաշնակացման գլխավոր գործոններից մեկը (որն այժմ ընթանում է ինչպես հենց իրենց, այնպես էլ մյուս աշխարհամասերի համարյա բոլոր էակների ներսում, որոնք, իմիջիայլոց, վերջերս արդեն սկսել են շատ նախանձախնդիր կերպով ամերիկացիներին ընդօրինակել իրենց գործառույթների ձևափոխությանն «օգնող» բոլոր յուրօրինակ մեթոդներում), քո սիրելիները, որոնք հիմա էլ ձգտում են նույնիսկ իրենց այդ անխուսափելի լիեղական գործառույթն ի կատար ածել հնարավորին չափ հաճելի հանգստության զգացողությամբ, այդ հորինվածքի պատճառով ստացան,

այսպես կոչված, նոր խթան, որպեսզի ավելի նախանձախնդիր ձևով ծառայեն «Ինքնասփոփանք» կոչվող իրենց աստծուն, որը, ինչպես բազմիցս ասել եմ, եղել և մնում է համարյա թե այն գլխավոր չարիքը, որը նրանց ինչպես հոգեկառույցում, այնպես էլ սովորական լինելիական գոյատևման գործընթացում եղած բոլոր աննորմալությունների ծնողն ու ստեղծողն է:

Քեզ համար որպես լավ օրինակ և նույնիսկ, այսպես ասած, «լուսավորչական-ուսուցողական» նկար, որպեսզի լինելիական պատկերացում ունենաս այն մասին, թե ապագայի համար ինչպիսի անսովոր հեռանկարներ է բացում նրանց այդ հորինվածքը, այն փաստը կարող է լինել, որ այդ ժամանակակից ամերիկացի էակներից ոմանք, որոնք, իհարկե, մի շարք պատահականությունների բերումով իրենց նշանավոր դուրսերի որոշակի քանակություն են ձեռք բերել, հիմա արդեն իրենց «հարմարավետ նստելատեղերով արտաքնոցներում» տեղադրում են նաև այնպիսի լրացուցիչ հարմարանքներ, ինչպիսիք են սեղանիկը, հեռախոսն ու այսպես կոչված «ռադիոընդունիչը», որպեսզի այնտեղ նստած ժամանակ կարողանան զբաղվել իրենց «նամակագրությամբ», ծանոթների հետ հեռախոսով քննարկեն իրենց դուրարային գործերը, հանգիստ թերթ կարդան, մի բան, որ անհրաժեշտություն է դարձել նրանց համար, կամ, վերջապես, լսեն այն երաժշտական ստեղծագործությունները՝ այնտեղի զանազան տիասնամուսների արտադրությունը, որոնք քանի որ արդեն, ինչպես ասում են, «մոդայիկ» են դարձել, ապա ամեն մի ամերիկյան գործարար դրանք նույնպես պարտավոր է լսած լինել:

Քո այդ մոլորակի բոլոր ժամանակակից եռուղեղ էակների մարսողական գործառույթն աններաշնակացնելու իմաստով գլխավոր վնասը, որը պատճառում է այդ ամերիկյան հորինվածքը, առաջանում է հետևյալ պատճառներով:

Նախկին ժամանակներում, երբ քո սիրելիների ընդհանուր ներկայություններում դեռևս բյուրեղանում էին օբյեկտիվ բանականություն ծնող քիչ թե շատ նորմալ նախադրյալներ, և հենց իրենք կարողանում էին մտորել ու հասկանալ, երբ իրենց նման, բայց արդեն լուսավորյալ էակները դա իրենց բացատրում էին, նրանք ընդունում էին այն դիրքը, որը պահանջվում է դրա համար. բայց հետագայում, երբ նրանց ներսում դադարեցին բյուրեղանալ հիշյալ *լինելիական նախադրյալները*, և նրանք սկսեցին իրենց այդ գործառույթը նույնպես կատարել սոսկ ինքնաբերաբար, ապա այն համակարգի շնորհիվ, որը տիրապետող էր նախքան այդ ամերիկյան հորինվածքի լույս աշխարհ գալը, հենց ինքը՝ մոլորակային մարմինը կարող էր ինքնաբերաբար, շնորհիվ միայն, այսպես կոչված, «կենդանական բնագոյի», ընդունել հարկ եղած որոշակի դիրքը: Իսկ հիմա, երբ այդ ամերիկացի էակները հորինել են այդ «հարմարավետ նստելատեղերը» և նրանք բոլորը միահամուռ սկսել են դրանցից օգտվել իրենց անկասելի գործառույթի ընթացքում, նրանց մոլորակային մարմինն արդեն ոչ մի կերպ, թեկուզ բնագոյաբար, չի կարող ընդունել հարկ եղած դիրքը, ինչի արդյունքում բոլոր քո սիրելիները, որոնք օգտվում են այդ ամերիկյան հարմարավետ նստելատեղերից, աստիճանաբար իրենց մարմնում ոչ միայն որոշ, այսպես կոչված, «մկանների» հետաձգում են ստանում, որոնցով իրականացվում է այդ անխուսափելի *լինելիական գործառույթը*, ինչն էլ նրանց ներսում առաջացնում է, այսպես կոչված, փորկապություն, այլև, ի հավելումն դրա, մի քանի նոր, առանձնահատուկ հիվանդությունների պատճառներ են առաջանում, որոնք մեր համայն Մեծ Տիեզերքում ծագում են բացառապես միայն այդ տարօրինակ եռուղեղ էակների ներկայություններում:

Տարբեր առաջնային և երկրորդական պատճառների շարքում, որոնց համախումբը քո՝ Հյուսիսային Ամերիկա կոչվող աշխարհամասում բազմացող ժամանակակից սիրելիների ընդհանուր ներկայություններում աստիճանաբար հանգեցնում է այդ հիմնական գործառույթի աններդաշնակացմանը, գոյություն ունի ևս մի չափազանց յուրահատուկ պատճառ, որը թեև «ճշուն ակնհայտ է», այնուհանդերձ նրանց ունեցած «հավի ուղեղի» պատճառով եսասիրական հաճույքի ազդակով ծաղկում է ապրում բոլորի աչքի համար անտեսանելի:

Այդ յուրօրինակ պատճառը ծագել և նույնպես սկսել է դանդաղ ու աննկատ, բայց անշեղորեն նրանց ներսում աններդաշնակացնել այդ գործառույթը պարզապես այն բանի հետևանքով, որ այդ նոր մեծ խմբավորման էակների տարօրինակ ներկայություններում «գերակշռող մոլուցք» է տարածվել հնարավորին չափ հաճախ լինելու Եվրոպա աշխարհամասում:

Այդ յուրօրինակ պատճառի մասին հարկավոր էր քեզ հայտնել գլխավորապես նրա համար, որ դրանից դու կիմանաս քո սիրելիների համար վնասակար ևս մի արդյունքի՝ նրանց ժամանակակից «գիտնականների» «չարանենգ իմաստակությունների» մասին:

Որպեսզի դու ավելի լավ պատկերացնես ու հասկանաս ամերիկացի էակների ընդհանուր ներկայություններում այդ անխուսափելի լինելիական գործառույթի աստիճանական աններդաշնակացման այդ պատճառը, դու նախ պետք է ծանոթանաս նրանց հենց այն օրգանների մի դետալին, որոնք նրանց ներկայություններում իրականացնում են այդ գործառույթը:

Առաջնային սննդի լիակատար փոխակերպմանը ծառայող նրանց օրգանների մեջ կա մեկը, որը համարյա ամենուրեք գոյություն ունի «դուրսփսխող»⁴⁰ անվամբ, բայց նրանք դրան «կույր աղիք» են ասում, իսկ գիտական տերմինաբանությամբ՝ «ապենդիքս»:

Ըստ Մեծ Բնության մտահղացման՝ այդ օրգանի գործն այն է, որ դրանում կուտակվեն զանազան տիեզերական կապող նյութեր, որոնք առանձնանում են առաջին լինելիական սնունդ հանդիսացող տարբեր վերմոլորակային բյուրեղացումներից և ստանում, այսպես կոչված, «գազերի» տեսք, որպեսզի էակների ընդհանուր ներկայություններից նշված սննդի անպետք մնացորդների դուրս գալու ժամանակ այդ գործողությանը նպաստեն իրենց ճնշմամբ:

Այդ օրգանում հավաքվող գազերն իրենց, այսպես ասած, «լիցքաթափվելու» ժամանակ իրականացնում են Բնության նախատեսած մեխանիկական գործողությունը՝ անկախ էակների ներսում ընթացող ընդհանուր փոխակերպությունների գործառույթներից, ընդ որում՝ միայն ժամանակի որոշակի հատվածների ընթացքում, որոնք ամեն մի էակի համար տարբեր են՝ նրանց սուբյեկտիվ սովորություններին համապատասխան:

Եվ ահա, զավակս, դեպի Եվրոպա աշխարհամաս իրենց հաճախակի ուղևորությունների ընթացքում, որ տևում է 12 օրից մինչև մի ամիս, պայմաններ են ստեղծվում այդ հաստատված գործառույթի իրականացման ժամկետների փոփոխության համար, ինչի արդյունքում լուրջ գործոն է առաջանում նրանց ընդհանուր հիմնական փոխակերպային գործառույթների աններդաշնակեցման համար: Այսինքն՝ երբ շատ օրերի ընթացքում, սահմանված ժամանակի փոփոխությանների պատճառով նրանք չեն իրականացնում իրենց անխուսափելի գործառույթը, և այդ օրգանում կուտակված գազերը, նշված նպատակով չիրականացնելով իրենց ինքնաբերական գործողությունը և չկատարելով Մեծ Բնության կողմից իրենց հատկացված դերը, անարդյունավետ կերպով են նրանց ներկայություններից դուրս գալիս բաց տարածություն (դրանց դրսևորման համակացությունն, իմիջիայլոց, հոտառության նորմալ զգայարաններ ունեցող էակի համար նրանց այդ ուղևորատար նավերում գտնվելը համարյա անտանելի է դարձնում), այնժամ այդ ամենի արդյունքում նրանց ներսում հաճախ, այսպես կոչված, «մեխանիկական փորկապություն» է առաջանում, որն էլ իր հերթին հանգեցնում է նրանց հիմնական փոխակերպային գործառույթի աստիճանական աններդաշնակացմանը:

Երբ ես սկսեցի քեզ բացատրել, զավակս, այդ ամերիկացի էակների ներկայություններում առաջին *լինելիական սննդի* փոխակերպության գործառույթի խանգարումների պատճառները և հիշատակեցի նրանց հորինած «հարմարավետ նստելատեղերը», նաև ասացի, իմիջիայլոց, որ Երկիր մոլորակի վրա բազմացող և քո հետաքրքրությունը շարժած այդ տարօրինակ եռուղեղ էակները կրկին նույնիսկ իրենց այդ անխուսափելի *լինելիական գործառույթն* են ձգտում իրականացնել իրենց համար հնարավոր ամենամեծ ինքնաբավարարվածության զգացումով: Ես ասացի՝ «կրկին», քանի որ նախկինում նույնպես՝ ժամանակի հոսքի տարբեր հատվածներում, քո հետաքրքրությունը շարժած այդ եռուղեղ էակներն արդեն մի քանի անգամ իրենց սովորական գոյատևման մեջ կիրառել են նմանատիպ բաներ:

Ես շատ լավ հիշում եմ այդ ժամանակահատվածներից մեկը, որում ապրող էակները, որոնք, իմիջիայլոց, ներկայիս քո սիրելիների պատկերացմամբ ընդամենը հինավուրց «վայրենիներ» էին, ամենատարբեր հարմարություններ էին հորինել իրենց այդ, թեկուզ ոչ լիրիկական, բայց անհրաժեշտ *լինելիական կարիքը* բավարարելու համար, հանուն որի՝ նաև այդ ժամանակակից ամերիկացիները, որոնք իրենց միամտության պատճառով իրենց այնքան քաղաքակրթված են համարում, որ էլ տեղ չկա, այդպիսի հարմարավետ նստելատեղեր են հորինել իրենց ուղղաթիռներում:

Հիշածս այն ժամանակներին է վերաբերում, երբ քո այդ ամբողջ մոլորակի գլխավոր կուլտուրական կենտրոնն այդ ժամանակներում ծաղկում ապրող Թիբլյամիշ երկիրն էր:

Թիբլյամիշ երկրի էակներն այդ *լինելիական գործառույթի* իրականացման համար հորինել էին ներկայիս ամերիկացիների հորինած հարմարավետ նստելատեղերի նման ինչ-որ բան, և այդ

⁴⁰ ռուս. տարբերակում՝ туспысхox, անգլ. տարբերակում՝ toospooshokh

չարանենգ հորինվածքը նույնպես ամենուրեք լայն տարածում էր գտել այդ չարադետ մոլորակի բոլոր մյուս էակների միջավայրերում:

Եթե թիքյամիշյան քաղաքակրթության էակների հիշյալ հայտնագործությունը համեմատենք այդ ժամանակակից ամերիկացիների հայտնագործության հետ, ապա, իրենց իսկ բառերով ասած, վերջինը կարելի է «մանկական խաղալիք» համարել:

Թիքյամիշյան քաղաքակրթության էակները հորինել էին «հարմարավետ բազմոց-մահճակալի» պես ինչ-որ բան, որը կարելի էր օգտագործել ինչպես քնելու համար, այնպես էլ՝ որ դրա վրա «փովեն» այնպես, որ այդ «գարմանալի հորինվածքի» վրա պառկած վիճակում, առանց որևէ *լինելիական ճիգ* գործադրելու, կարողանան ի կատար ածել իրենց այդ անխուսափելի լինելիական պահանջը, որի բավարարման համար Ամերիկա աշխարհամասի ժամանակակից էակները «հարմարավետ նստելատեղեր» են հորինել:

Այդ «հրաշք-մահճակալներն» այդ նպատակի համար այնպես էին հարմարեցված, որ դրա կողային մասում գտնվող լծակին մի թեթև հպվելը բավարար էր լինում, որ ակնթարթորեն, հենց մահճակալում, այդ անխուսափելի պահանջը բավարարվի հեշտությամբ և, իհարկե, «հարմար», ինչպես նաև, այսպես ասած, մեծագույն «ճոխությամբ»:

Ավելորդ չի լինի, զավա՛կս, որ իմիջիայլոց իմանաս նաև, որ հենց այդ նշանավոր «մահճակալները» նրանց սովորական գոյատևման գործընթացում պատճառ դարձան մեծ ու կարևոր իրադարձությունների:

Քանի դեռ այդ էակների միջավայրում այդ *լինելիական գործառույթի* բավարարման գործում գերակշռում էր նախկին համեմատաբար նորմալ համակարգը, ամեն ինչ խաղաղ ու հանգիստ էր ընթանում, բայց հենց որ այն ժամանակվա որոշ, այսպես կոչված, *իշխանություն ունեցող* և *հարստություն ունեցող* էակներ այդ նպատակի համար հորինեցին հիշյալ «հարմարավետ մահճակալները», որոնց սկսեցին անվանել «հաճույքը շրխկոցով վայելել», այն ժամանակվա հասարակ էակների միջավայրում սկիզբ առավ հենց այն, ինչը հանգեցրեց նշածս լուրջ ու ողբալի հետևանքներին:

Պետք է քեզ ասեմ, որ հենց այն տարիներին, երբ Թիքյամիշ երկրի էակները հորինեցին այդ «հրաշք-մահճակալները», քո այդ մոլորակը ենթարկվում էր համատիեզերական «չիրնուանով»⁴¹ կոչվող պրոցեսի ազդեցությանը, այն է՝ շարժման համատիեզերական ներդաշնակության պայմաններում այդ արևային համակարգի ծանրության կենտրոնի տեղաշարժն ուղեկցվում էր նաև բուն այդ մոլորակի ծանրության կենտրոնի տեղաշարժով:

Այդպիսի տարիներին, ինչպես արդեն քեզ հայտնի է, այդ տիեզերական երևույթի շնորհիվ ամենուրեք բոլոր մոլորակներում, չիրնուանովոյի ենթարկվող ցանկացած մոլորակի վրա ապրող էակների հոգեկառույցներում ուժեղանում է «*բլագոնուարիյան զգացողությունը*»⁴², կամ, այլ կերպ ասած, «խղճի խայթը»՝ անցյալում կատարած այն արարքների հետ կապված, որոնք հակառակ են եղել իրենց սեփական համոզմունքներին:

Սակայն այնտեղ՝ քո այդ մոլորակում, քանի որ քո սիրելիների ընդհանուր ներկայություններն ինչպես արտաքինից եկած, այնպես էլ սեփական մեղքերից ծագած մի շարք պատճառներով այդքան արտառոց էին դարձել, ապա այդ համատիեզերական երևույթի ազդեցությունը նրանց մոլորակում այնպիսին չի լինում, ինչպիսին այդ նույն չիրնուանովոյի ընթացքում լինում է մյուս մոլորակներում բնակվող եռուղեղ էակների ներկայություններում. այն է՝ խղճի խայթի փոխարեն դրանցում առաջանում ու լայնորեն տարածվում են առանձնահատուկ պրոցեսներ, որոնք կոչվում են «Տետարդեկոսմոսում Միկրոկոսմոսների փոխադարձ ոչնչացում». իսկ երբ դրանք նրանց միջավայրում տեղի են ունենում, իրենք դրանք համարում են «համաճարակներ», որոնք հին ժամանակներում հայտնի էին «կալիոնոմ»⁴³, «մարկրոզ»⁴⁴, «սելնոանո»⁴⁵ և այլ անուններով, իսկ ներկայումս կոչվում են «սև մահ», «խուլերա», «իսպանկա» և այլն:

⁴¹ ռուս. տարբերակում՝ чирнуаново, անգլ. տարբերակում՝ chirnooanovo

⁴² ռուս. տարբերակում՝ благоуарирное, անգլ. տարբերակում՝ blagonoairnian

⁴³ ռուս. տարբերակում՝ калуюм, անգլ. տարբերակում՝ kaliunium

⁴⁴ ռուս. տարբերակում՝ маркроз, անգլ. տարբերակում՝ morkrokx

⁴⁵ ռուս. տարբերակում՝ сельноано, անգլ. տարբերակում՝ selnoano

Այսպիսով, այն բանի հետևանքով, որ շատ հիվանդություններ, որոնք այն ժամանակ «կոլբանա»⁴⁶, «տիրդիանկ»⁴⁷, «մոյասուլ»⁴⁸, «չամպարնախ»⁴⁹ և այլ անուններ էին կրում իսկ ներկայիս էակները կոչում են «սմբախտ», «ցրված սկլերոզ», «թուրք», «իշիաս» «կաթված» և այլն, լայնորեն տարածված էին էակներից շատերի մոտ, որոնք օգտվում էին այդ չափազանց հարմարավետ «բազմոց-մահճակալներից», նրանց մեջ եղած այն էակները, որոնց ընդհանուր ներկայություններում *լինելիական պարտք-պարտականության* կատարման իսպառ բացակայության պատճառով ավելի շուտ էին սկսել բյուրեղանալ տհասնամուսական հատկություններ, քան սովորաբար լինում է (այդպիսիների շարքում էին նաև, այսպես կոչված, «հեղափոխականները»), նկատելով այդ առանձնահատկությունը, որոշեցին դա օգտագործել ի շահ իրենց. այն է՝ այդ տիպերն այն ժամանակվա էակների մեջ կեղծ լուր տարածեցին, թե իբր վերը նշված բոլոր համաճարակային վարակիչ հիվանդությունները տարածվում են այն պատճառով, որ այդ «հաճույքը շրխկոցով վայելել» մահճակալներից օգտվող «ձրիակեր բուրժուաները» զանազան հիվանդություններ են ստացել, որոնք էլ վարակի ձևով փոխանցվել են զանգվածներին:

Նախկինում իմ հիշատակած՝ նրանց ներկայությանը բնորոշ «ներշնչվողականության» հետևանքով շրջապատի բոլոր էակներն, իհարկե, հավատում էին նրանց այդ, ինչպես իրենք են ասում, «քարոզչությանը», և քանի որ նման դեպքերում քիչ չեն լինում խոսք ու զրույցները, ապա նրանցից ամեն մեկի ներսում աստիճանաբար բյուրեղանում էր պարբերաբար ի հայտ եկող մի գործոն, որը նրանց հոգեկառույցներում գոյացնում է այն տարօրինակ ու բավականին երկար տևող «հոգեկան վիճակը», որը ես կանվանեի «ինքնագագացության կորուստ», ինչի արդյունքում նրանք ձեռնամուխ եղան, ինչպես հաճախ է այնտեղ պատահում, ամենուրեք ոչ միայն այդ «հրաշք-մահճակալները», այլև դրանցից օգտվող էակներին ամենուրեք ոչնչացնելու գործին:

Թեև այդ ժամանակաշրջանի սովորական էակներից մեծ մասի ներկայություններում այդ, այսպես ասած, տխմարության սրված փուլը շուտով անցավ, այնուհանդերձ ինչպես այդ մահճակալների, այնպես էլ դրանցից օգտվող էակների «կատաղի ոչնչացման» գործընթացն ինտեգրացվելով շարունակվեց մի քանի երկրային տարի: Վերջիվերջո այդ չարանենգ հորինվածքը կիրառությունից լրիվ դուրս եկավ, և բոլորը շուտով նույնիսկ մոռացան, որ երբևէ այդ մոլորակում նման մահճակալներ են եղել:

Ամեն դեպքում կարելի է վստահաբար ասել, որ եթե Ամերիկա աշխարհամասում ներկայումս բազմացող էակների «քաղաքակրթությունը» զարգանա ներկայիս ոգով ու արագությամբ, ապա անկասկած այդ «քաղաքակրթվելը» նույնպես կհասնի այն աստիճանին, որ նման զարմանալի «բազմոց-մահճակալների» և «շրխկոցով հաճույք վայելել» մահճակալների կարիք կզգացվի:

Այժմ տեղին կլինի, գավա կս, օրինակի համար նաև ասել մթերքների պահածոյացման գյուտի և որպես առաջին *լինելիական սնունդ* դրանք օգտագործելու մասին, որի հեղինակն այդ ժամանակակից խմբավորման էակներն են, որոնք բոլոր մյուս աշխարհամասերի էակների տարօրինակ բանականության համար վերջերս դարձել են «նմանակման առարկաներ»՝ գլխավորապես միայն այն պատճառով, որ, ենթադրաբար, նրանք իրենց մոլորակում առաջինն են հորինել այդպիսի օգտակար ու հարմարավետ *լինելիական սովորույթներ*, այսինքն՝ տվյալ դեպքում պահածոյացված մթերքներով սնվելու եղանակը, որի շնորհիվ, այսպես ասած, ժամանակ են խնայում:

Քո այդ մոլորակում բազմացող այդ թշվառ ժամանակակից եռուղեղ էակներն, իհարկե, ընդհանրապես չգիտեն և քեզ արդեն բացատրածս պատճառներով ունակ չեն մտորելու այն մասին, որ անցյալի տարբեր դարաշրջաններում իրենց հեռավոր նախնիները, որոնք անհամեմատ ավելի նորմալ էին ձևավորվում որպես պատասխանատու էակներ, պետք է որ, ինչպես ասում են, «այնքան էլ քիչ գլուխ ջարդած չլինեին», որպեսզի միջոցներ գտնեին այն ժամանակը նվազագույնի հասցնելու համար, որը ծախսվում է մթերքներով սնվելու պարտադիր *լինելիական անհրաժեշտության* վրա. և գտնելով այդպիսի կարծես թե արդյունավետ միջոցներ և ամեն անգամ կարճ ժամանակահատվածներում դրանք փորձարկելով՝ նրանք ի վերջո համոզվում էին, որ ինչ մթերք էլ որ լինի և ինչ եղանակով էլ այն պահածոյացվի, ժամանակի ընթացքում կորցնում է իր որակը և դառնում ոչ պիտանի առաջին

⁴⁶ ռուս. տարբերակում՝ колбана, անգլ. տարբերակում՝ kolbana

⁴⁷ ռուս. տարբերակում՝ тирдианк, անգլ. տարբերակում՝ tirdiank

⁴⁸ ռուս. տարբերակում՝ мойясул, անգլ. տարբերակում՝ moyasul

⁴⁹ ռուս. տարբերակում՝ чампарнах, անգլ. տարբերակում՝ champarnakh

լինելիական սնունդ. ուստի և նրանք իրենց սովորական գոյատևման ընթացքում հրաժարվում էին այդ մեթոդները կիրառելուց:

Որպեսզի համեմատելու բան լինի հերմետիկ փակ անոթներում առաջին լինելիական սննդի մթերքների պահածոյացման ժամանակակից մեթոդի հետ, որպես օրինակ դիտարկենք պահածոյացման այն եղանակը, որը ես անձամբ տեսել եմ Պախրակարան երկրում:

Դա այն ժամանակ էր, երբ Պախրակարան կոչվող երկրում ապրող էակներն ամեն ինչով մրցում էին Թիքլամիշ կոչվող երկրի էակների հետ: Դաժան մրցակցություն էր գնում այն բանի համար, որ բոլոր մյուս երկրների էակները հենց իրենց երկիրը համարեն «կուլտուրայի առաջին ու գլխավոր կենտրոն»:

Հենց այդ ժամանակ էլ պախրակարանցիներն այլ բաների շարքում հորինեցին նաև այդ ամերիկացիների պահածոների պես ինչ-որ բան:

Սակայն Պախրակարանի էակներն իրենց սննդամթերքները հերմետիկ փակում էին ոչ թե այնպիսի «թունաբեր թիթեղյա տուփերում», ինչպես վարվում են Ամերիկա աշխարհամասի ժամանակակից էակները, այլ, ինչպես այն ժամանակ էին ասում, «սիխարենոնյան»⁵⁰ անոթներում:

Պախրակարանում այդ սիխարենոնյան անոթները պատրաստվում էին շատ մանրացված, այսպես կոչված, «սադափից», «հավի ձվի դեղնուցից» և «չուզնայի»⁵¹ թառափ» կոչվող ձկից ստացվող սոսնձից:

Այդ անոթներն ունեին քո այդ մոլորակում ներկայումս գոյություն ունեցող չհղկված ապակյա տարաների տեսքն ու հասկությունները:

Չնայած այդպիսի անոթներում մթերքները պահածոյացնելու ակնհայտ առավելություններին՝ այնուհանդերձ, երբ Պախրակարանի որոշ բանականություն ունեցող էակներ արձանագրեցին, որ այդ ձևով պահածոյացված մթերքներից մշտապես օգտվող էակներն աստիճանաբար կորցնում են այն, ինչը «օրգանական ամոթ» է կոչվում, և այն բանից հետո, երբ իրենց նկատած այդ փաստի մասին տեղեկությունը տարածեցին սովորական էակների միջավայրում, աստիճանաբար շրջակա տի բոլոր մյուս իրենց նման էակները հրաժարվեցին այդ մեթոդը կիրառելուց, և վերջիվերջո այն այնքան դուրս եկավ ընդհանուր գործածությունից, որ դրա երբևէ գոյություն ունեցած լինելու մասին նույնիսկ որևէ գիտելիք չհասավ իրենցից հետո եկած հինգերորդ կամ վեցերորդ սերնդին:

Այդ Ասիա աշխարհամասում համարյա բոլոր դարաշրջաններում սննդամթերքների երկարաժամկետ պահպանման զանազան մեթոդներ են գոյություն ունեցել, և նույնիսկ հիմա էլ այնտեղ կան մի քանի այդպիսի մեթոդներ, որոնք ժամանակակից էակներին են հասել իրենց հեռավոր նախնիներից:

Բայց այդ բոլոր մեթոդների մեջ ոչ մեկն այնքան վնասակար չի եղել էակների համար, որքան այն մեթոդը, որը հորինել են Ամերիկա աշխարհամասի այդ ժամանակակից էակները. այն է՝ մթերքները պահել թունաբեր թիթեղյա տուփերի մեջ:

Թեև այդ եղանակը, որը նպատակ է հետապնդում մթերքները «հերմետիկ փակել» այնպես, որ դրանք, չենթարկվելով մթնոլորտի ազդեցությանը, զերծ մնան քայքայումից, գոյություն ունի նաև որոշ ժամանակակից ասիական խմբավորումներում, բայց նրանցից ոչ բոլորն են այդ նպատակի համար օգտվում ամերիկյան այդ թունաբեր տուփերից:

Ներկայումս Ասիա աշխարհամասում այդ նպատակի համար օգտագործում են միայն, այսպես կոչված, «դմակի յուղը»:

Այդ «դմակի յուղը» մի մթերք է, որից մեծ քանակությամբ առաջանում է Ասիա աշխարհամասում ամենուրեք բազմացող և «ոչխար» կոչվող որոշակի տեսակի երկուդեղ չորքոտանի էակի պոչի շրջակայքում:

«Դմակի յուղում» չեն լինում տիեզերական բյուրեղացումներ, որոնք վնասակար են եռուդեղ էակի ընդհանուր ներկայության համար, և ինքնին դա Ասիա աշխարհամասի այդ ընդհանուր խմբավորումների էակների մեծ մասի առաջին *լինելիական սննդի* գլխավոր մթերքներից մեկն է: Իսկ ինչ վերաբերում է այն մետաղին, որից Ամերիկա աշխարհամասի ժամանակակից էակները տուփեր են պատրաստում իրենց մթերքները պահածոյացնելու համար, ապա, որքան էլ դրանք ներսից լրիվ մեկուսացված լինեն մթնոլորտի ազդեցությունից, միևնույն է՝ որոշակի ժամանակ անցնելուց հետո

⁵⁰ ռուս. տարբերակում՝ сихаренённые, անգլ. տարբերակում՝ sikharenionian

⁵¹ ռուս. տարբերակում՝ чужамский, անգլ. տարբերակում՝ Choozna

այդ մետաղից ու դրանից պատրաստված տուփերի պարունակությունից արտագատվում են շատ ակտիվ տարրեր, որոնց մի մասը, ինչպես հենց իրենք են արտահայտվում, «թունավոր են» ընդհանրապես բոլոր էակների ընդհանուր ներկայությունների համար:

Անագից ու դրա նման մետաղներից արտագատվող թունավոր ակտիվ տարրերը, փակված մնալով հերմետիկ տուփերում, չեն կարող ցնդել դեպի բաց տարածություն և, ժամանակի ընթացքում հանդիպելով տուփերում եղած մթերքի որոշակի տարրերի, որոնք ունեն «նույն դասին պատկանող թրթիռների քանակ», «Միախառնում» կոչվող տիեզերական օրենքով խառնվում են դրանց հետ և մնում դրանց մեջ, որից հետո, իհարկե, դրանց հետ միասին մուտք գործում այդ պահածոյացված մթերքն օգտագործող էակների ընդհանուր օրգանիզմների մեջ:

Այն բանից զատ, որ Ամերիկա աշխարհամասում խմբավորում կազմած ներկայիս քո սիրելիներն իրենց մթերքները պահում են իրենց համար այդքան վնասակար, թունաբեր մետաղյա տուփերում, նրանք նաև այդ մթերքները պահում են առավելապես հում վիճակում:

Ասիա աշխարհամասի էակներն իրենց սննդամթերքները միշտ պահում են նախապես եփելուց հետո, քանի որ ըստ հեռավոր նախնիներից իրենց հասած ավանդույթի՝ այդ եղանակով պահպանվող մթերքներն այնպես արագ չեն քայքայվում, ինչպես հում մթերքները:

Դրա բացատրությունն այն է, որ եփվելու կամ տապակվելու ընթացքում մթերքի մեջ տեղի է ունենում այդ մթերքի հիմնական զանգվածը կազմող մի քանի ակտիվ տարրերի արհեստական, այսպես կոչված, «քիմիական միախառնում», և այդ միախառնման շնորհիվ՝ էակների համար օգտակար շատ ակտիվ տարրեր այդ մթերքում մնում են անհամեմատ ավելի երկար ժամանակ:

Ես մեկ անգամ ևս խորհուրդ եմ տալիս քեզ, որ հարկ եղած չափով ծանոթանաս ինչպես քիմիական, այնպես էլ մեխանիկական բոլոր տեսակի միախառնումներին, որոնք տեղի են ունենում Մեզալակոսմոսում:

Այդ տիեզերական օրենքի իմացությունը շատ կօգնի քեզ, իմիջիայլոց, որ պատկերացնես և հարկ եղած չափով հասկանաս, թե ինչու և ինչպես են Բնության մեջ արտադրվում այդ բազում ու բազմապիսի կազմավորումները:

Իսկ թե ինչպես է եփումից ու տապակումից ստացվում, այսպես կոչված, «տարրերի երկարաժամկետ միախառնում», դու հարկ եղած չափով կհասկանաս, եթե միայն մտորելով ըմբռնես այն գործընթացը, որը տեղի է ունենում «պրոսֆորայի» արհեստական պատրաստման ժամանակ:

Պրոսֆորան կամ հացը ընդհանրապես ամենուրեք պատրաստում են այն էակները, որոնք գիտակցում են դրա սրբազան նշանակությունը: Միայն թե ներկայիս քո սիրելիները դրա պատրաստմանը վերաբերվում են առանց դրա գործողությունը հասկանալու, այլ դիտարկում են որպես մի գործ, որն ինքնաբերաբար իրենց է հասել որպես ժառանգություն:

Այդ հացում նույնպես տիեզերական նյութերի բյուրեղացումը ստացվում է Եռամասիկապող օրենքին համապատասխան. ընդ որում, այդ սրբազան օրենքի երեք սուրբ ուժեր են ծառայում հետևյալ երեք համեմատաբար անկախ աղբյուրներից ծագած նյութերը. այն է՝ սուրբ հաստատող կամ ակտիվ սկզբունքը այն տիեզերական նյութերն են կազմում, որոնք ձևավորում են այն, ինչին քո սիրելիները «ջուր» են անվանում. բացասող կամ պասսիվ սկզբունքը այն նյութերի համակցությունն է, որոնք գոյացնում են այն, ինչին քո սիրելիներն «այուր» են անվանում և դա ստանում աստվածային ցորենի հատիկներից. և վերջապես, սուրբ հաշտեցնող կամ չեզոք սկզբունքը այն նյութն է, որը դուրս է հորդում կամ ստացվում է այրման արդյունքում, կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, «կրակից»:

Որպեսզի ավելի պարզ դառնա իմ արտահայտած միտքը, որը վերաբերում է տարբեր աղբյուրներ ունեցող տիեզերական նյութերի երկարաժամկետ միախառնմանը, որպես օրինակ դիտարկենք նյութերի վերոհիշյալ հարաբերական անկախ համակցությունը, որն այդ պրոսֆորայի կամ հացի կազմավորման ժամանակ որպես ակտիվ սկզբունք է հանդես գալիս, այսինքն՝ այն հարաբերական անկախ համակցությունը, որին քո սիրելիները «ջուր» են անվանում:

Տիեզերական նյութերի՝ Երկրում ջուր կոչվող հարաբերական անկախ այդ համակցությունն ինքնին, կարելի է ասել, «Բնական մեխանիկական խառնուրդ» լինելով հանդերձ, կարող է պահպանվել բացառապես միայն ընդհանուր Բնության հետ ունեցած կապի պայմաններում: Եթե ընդհանուր Բնության հետ ջրի կապը կտրվում է, ասենք՝ գետից վերցրած ջուրը լցվում ու պահվում է առանձին անոթում, ապա որոշ ժամանակ անցնելուց հետո այդ անոթի ջուրն աստիճանաբար սկսում է

քայքայվել կամ, այլ կերպ ասած, նեխվել, և էակների հոտառության զգայարանի համար այն սկսում է «գարշահոտ» արձակել, կամ, եթե քո սիրելիների լեզվով ասենք, այդ ջուրը շուտով սկսում է «հոտել»:

Տվյալ դեպքում նույնը տեղի կունենա նաև այդ հիշյալ ջրի և այլուրի խառնուրդի դեպքում: Կստացվի սոսկ ժամանակավոր մեխանիկական խառնուրդ, կամ, այսպես կոչված, «խմոր», որում եղած ջուրը համեմատաբար ավելի կարճ ժամանակից հետո կրկին անխուսափելիորեն կսկսի քայքայվել:

Այնուհետև, եթե այդ խմորը կամ ջրի ու այլուրի խառնուրդը եփվի կրակի վրա, ապա, շնորհիվ այդ կրակից ելնող կամ դրանից առաջացած նյութերի, որոնք տվյալ դեպքում սրբազան Եռամասիկապող օրենքի երրորդ՝ սուրբ չեզոքացնող ուժի դերն են կատարում, այդ դեպքում տեղի կունենա քիմիական միախառնում, այսինքն՝ «նյութերի երկարաժամկետ միախառնում», որի արդյունքում ստացված նյութերի նոր համակցությունը՝ պրոսֆորան կամ հացը, արդեն կսկսի դիմադրել անխիղճ Հերոպասին, այսինքն չի փչանա անհամեմատ ավելի երկար ժամանակ:

Այդ ձևով պատրաստված հացը կարող է «չորանալ», «փշուր-փշուր լինել», կամ նույնիսկ, ըստ երևույթին, աստիճանաբար ամբողջովին քանդվել, այնուհանդերձ փոխակերպությունների այդ գործընթացից ջրի տարրերը բավականին երկար ժամանակ այլևս չեն քայքայվի, այլ նշված երկար ժամանակի ընթացքում կմնան, այսպես կոչված, «կայուն պրոսֆորային ակտիվ տարրերի» շարքում:

Նաև այս դեպքում, զավա՛կս, ես կրկին ասում եմ, որ եթե Ասիա աշխարհամասում բազմացող ժամանակակից էակներն իրենց սննդամթերքը պահում են բացառապես տապակած կամ եփած վիճակում, այլ ոչ թե հում, ինչպես գերադասում են անել ժամանակակից ամերիկացի էակները, ապա դա այնտեղ տեղի է ունենում կրկին այն բանի հետևանքով, որ այդ սովորույթները Ասիայի էակներին հասել են իրենց այն նախնիներից, որոնց հանրությունների գոյությունը շատ դարեր է տևել, և հետևաբար նրանք երկարատև փորձառություն են անցել. մինչդեռ այդ ամերիկացի էակների հանրությունների գոյության տևողությունը, ինչպես մեր իմաստուն ուսուցիչը կասեր, «եղած-չեղած օր ու կես է»:

Որպեսզի դու կարողանաս ավելի լավ գնահատել Ամերիկա աշխարհամասում բազմացող ժամանակակից էակների այդ հորինվածքի նշանակությունը, ինչը ժամանակակից քաղաքակրթության իսկական արդյունքն է, ավելորդ չեմ համարում քեզ տեղեկացնելու նաև որոշ այլ մթերքների երկարատև պահպանման մեթոդների մասին, որոնցից օգտվում են Ասիա աշխարհամասի էակները:

Դրանցից է, օրինակ, այսպես կոչված «դավուրմա» պատրաստելու մեթոդը՝ մի սննդամթերք, որն առանձնապես շատ են սիրում Ասիա աշխարհամասի շատ խմբավորումների էակները:

Ասիա աշխարհամասում այդ դավուրման շատ հասարակ ձևով է պատրաստվում. այն է՝ լավ տապակված մսի կտորները խիտ դասավորվում են «կավե կճուճներում»՝ կամ այծի մորթուց պատրաստված «տկճորներում»: (Տկճորը «այծ» կոչվող կենդանու՝ հատուկ ձևով քերթված մորթին է): Այնուհետև այդ տապակված մսի կտորների վրա լցվում է հալած դմակի յուղ:

Թեև հատուկ ձևով յուղածածկ արած մսի տապակված կտորները նույնպես ժամանակի ընթացքում փչանում են, այնուամենայնիվ համեմատաբար երկար ժամանակահատվածի ընթացքում դրանց մեջ ոչ մի թույն չի առաջանում:

Ասիա աշխարհամասի էակներն այդ դավուրման օգտագործում են կամ սառը, կամ տաքացված վիճակում:

Վերջին դեպքում տպավորությունն այնպիսին է լինում, կարծես այդ միսը նոր մորթված կենդանուց է վերցված:

Այնտեղի շատ երկար պահպանված և նույնպես շատ սիրված կերակուրներից է, այսպես կոչված, «յաղլի-եմիշը»⁵², որի մեջ զանազան մրգերից բացի ուրիշ ոչինչ չկա:

Այն պատրաստելու համար ծառից նոր պոկված պտուղներն ուլունքի պես անմիջապես շարում են թելի վրա, որից հետո լավ եփում են ջրում. երբ այդ անսովոր ուլունքները սառչում են, դրանք ևս մի քանի անգամ թաթախում են հալած դմակի յուղի մեջ, ապա կախում այնպիսի տեղ, որ դրանք ենթարկվեն օդի հոսանքի ազդեցությանը:

Այդ եղանակով պատրաստված պտուղները, որքան էլ կախված մնան, երբեք չեն փչանում, իսկ երբ այդ անսովոր ուլունքները որպես կերակուր են օգտագործում, դրանք կարճ ժամանակով մտցնում են

⁵² ռուս. տարբերակում՝ яглийеммиш, անգլ. տարբերակում՝ yaghli-yemish

տաք ջրի մեջ, և ամբողջ յուրը հավելելով առանձնանում է պտուղներից, որոնք այնպիսի համ են ունենում, կարծես հենց նոր են քաղվել ծառից:

Թեև այդ ձևով պահպանված մրգերի համը քիչ է տարբերվում թարմից, և դրանք շատ երկար են պահպանվում, այնուհանդերձ Ասիա աշխարհամասի բոլոր բարեկեցիկ էակները գերադասում են թարմ մրգեր ուտել:

Ակներևաբար դրա պատճառն այն է, որ նրանց մեծ մասը, լինելով երկար փորձառություն անցած հինավուրց հանրությունների էակների անմիջական հետնորդներ, շնորհիվ ժառանգաբար իրենց հասած կարողությունների, իրենց ներսում անհամեմատ ավելի ինտենսիվ են նախադրյալներ բյուրեղացնում իրականությունը հասկանալու համար, քան ներկայիս քո սիրելիների մեծ մասը:

Կրկնում եմ, զավա՛կս. այնտեղ՝ քո այդ մոլորակի վրա, նախորդ դարաշրջանների էակները, հատկապես Ասիա աշխարհամասում բազմացողները, շատ անգամ են երկար ժամանակով մթերք պահելու զանազան մեթոդներ փորձել, և այդ ամենը միշտ ավարտվել է հետևյալ կերպ. սկզբում որոշ անձնավորություններ իրենց գիտակցական կամ պատահական դիտարկումների շնորհիվ նկատել են նման գործառության անցանկալի կամ վնասակար հետևանքներն ինչպես հենց իրենց, այնպես էլ իրենց մերձավորների վրա, որից հետո այդ մասին հայտնել են մյուս բոլոր էակներին, որոնք իրենց վրա հնարավոր առավելագույն անկողմնակալությամբ դիտումներ անելուց հետո նույնպես համոզվել են այդ եզրակացությունների ճշմարտացիության մեջ. և վերջիվերջո նրանք բոլորը դադարացրել են իրենց գոյատևման ընթացքում այդ գործառությունը կիրառելը:

Նույնիսկ բոլորովին վերջերս նույն այդ Ասիա աշխարհամասում որոշ էակներ կրկին փորձեցին ոչ միայն մեթոդ գտնել, որ դրա միջոցով կարողանան իսկապես երկար ժամանակով չփչացող սննդամթերք պահել, այլև նույնիսկ փորձեցին ինչ-որ կատարելապես նոր միջոցներ կիրառել այն ժամանակը հնարավորին չափ կրճատելու համար, որը ծախսվում է առաջին *լինելիական սնունդ* ընդունելու անխուսափելի *լինելիական անհրաժեշտության* վրա. և այս անգամ նրանք համարյա այդ նպատակին շատ հարմար մի մեթոդի հայտնագործման շեմին էին:

Ես կարող եմ քեզ համոզիչ մանրամասներ հաղորդել, որոնք վերաբերում են այդ բնագավառում նրանց կատարած նոր հետազոտությունների արդյունքներին, քանի որ ես ոչ միայն անձամբ ճանաչում եմ այն երկրային եռուղեղ էակին, որն իր գիտակցական ջանքերով բացահայտեց նշված մեթոդը, այլև անձամբ վկա եմ եղել էակների նկատմամբ այդ մեթոդի կիրառությունը պարզաբանող մի քանի փորձերի, որոնք կատարում էր այդ, այսպես ասած, «նոր հետազոտությունների» բուն նախաձեռնողը:

Նրա անունը Ասիման էր, և նա ասիական ժամանակակից այն եռուղեղ էակների խմբակցության անդամ էր, որոնք, տեսնելով իրենց ներսում եղած որոշ պատճառներից իրենց ունեցած ստրկական կախվածությունը, համատեղ գոյատևում էին կազմակերպել՝ նպատակ ունենալով ներքին ստրկությունից ազատվելու համար աշխատել իրենց վրա:

Հետաքրքիր կլինի նշել, որ ժամանակակից երկրային եռուղեղ էակների այդ խմբակցությունը, որի անդամներից էր եղբայր Ասիմանը, նախկինում ապրում էր մի երկրում, որին առաջ Մարգարիտների Երկիր կամ Գաղտակուրիհանդա էին ասում, իսկ հիմա՝ Հնդստան. բայց հետո, երբ Եվրոպա աշխարհամասից այնտեղ էակներ հայտնվեցին, որոնք նրանց սկսեցին անհանգստացնել ու խանգարել նրանց խաղաղ աշխատանքը, նրանք բոլորը միասին գաղթեցին՝ անցնելով այն լեռները, որոնց ներկայումս «Հիմալայան լեռներ» են ասում, և բնակվեցին մասամբ Տիբեթ կոչվող երկրում, մասամբ էլ, այսպես կոչված, «Հինդուկուշի հարթավայրերում»:

Եղբայր Ասիմանը նրանցից էր, ովքեր բնակություն էին հաստատել «Հինդուկուշի հարթավայրերում»:

Քանի որ այդ եղբայրության՝ ինքնակատարելագործմամբ զբաղվող անդամների համար ժամանակը թանկ էր, իսկ սնվելու գործը շատ ժամանակ էր խլում, ապա այդ եղբայր Ասիմանը, քաջատեղյակ լինելով այդ ժամանակ «ալքիմիա» կոչվող գիտությանը, սկսեց խիստ ջանադիր կերպով աշխատել, այսպես կոչված, «քիմիական պատրաստուկ» գտնելու հույսով, որը կույ տալու դեպքում էակը կարողանար գոյատևել՝ այդքան շատ ժամանակ չծախսելով առաջին *լինելիական սննդի* համար անհրաժեշտ ամեն տեսակի մթերքներ պատրաստելու և դրանք կլանելու վրա:

Երկարատև ու լարված աշխատանքից հետո եղբայր Ասիմանը այդ նպատակի համար գտավ քիմիական նյութերի՝ «փոշու» տեսք ունեցող մի համակցություն, որից օրական մի անգամ կույ տալու

դեպքում էակը հնարավորություն էր ստանում գոյատևելու՝ ջրից բացի ոչ մի ուրիշ կերակուր չօգտագործելով և կատարելով իր բոլոր *լինելիական պարտականությունները*:

Երբ ինձ վիճակվեց այցելել այն մենաստանը, որտեղ քո սիրելիների այդ հիշյալ փոքրիկ խմբակցության անդամների հետ ապրում էր եղբայր Ասիմանը, այդ պատրաստուկից բոլոր եղբայրներն օգտվում էին արդեն հինգ ամիս, և եղբայր Ասիմանն այդ հարցին քաջաձանթ մյուս եղբայրների հետ միասին եռանդուն կերպով զբաղվում էր մեծ քանակությամբ պարզաբանիչ փորձեր կատարելով:

Եվ հենց այդ փորձերն էլ ցույց տվեցին նրանց, որ վերջին հաշվով այդ պատրաստուկը բավարար չէ նորմալ *լինելիական գոյատևման* համար:

Դա փաստելուց հետո նրանք ոչ միայն լրիվ դադարեցրին այդ պատրաստուկն օգտագործելը, այլ նույնիսկ ոչնչացրին դրա պատրաստման բանաձևը, որը գտել էր եղբայր Ասիմանը:

Մի քանի ամիս անց ես կրկին հայտնվեցի այդ մենաստանում և անձամբ ծանոթացա այդ եղբայրության այն փաստաթղթին, որը կազմվել էր հենց այն օրը, երբ նրանք վերջնականապես հրաժարվել էին այդ իսկապես զարմանալի պատրաստուկն օգտագործելուց:

Այդ փաստաթուղթն, ամեն ինչից զատ, մի քանի շատ հետաքրքիր մանրամասներ էր պարունակում Ասիմանի հիշյալ պատրաստուկի ազդեցության մասին: Դրանցում ասված էր, որ այդ պատրաստուկն էակի ներկայության մեջ անցնելուց հետո նրան կշտացնելու հատկություն ունենալուց բացի նաև առանձնահատուկ ազդեցություն էր թողնում, այսպես կոչված, «ստամոքսի թափառող նյարդերի վրա»։ այդ ազդեցության հետևանքով ոչ միայն էակը դադարում էր սննդի պահանջ զգալ, այլև, դեռ ավելին, կատարելապես չքանում էր որևէ ուրիշ սննդամթերք ներս ընդունելու ամեն մի ցանկություն: Իսկ եթե ստիպողաբար էր ինչ-որ բան ներս մտցվում, ապա երկար ժամանակ էր պահանջվում, մինչև վերանում էին դրա հետևանքով առաջացած տհաճ զգացողությունն ու վիճակը:

Ասված էր նաև, որ այդ պատրաստուկով սնվող էակների ներկայություններում սկզբնական շրջանում ոչ մի փոփոխություն չէր նկատվում:

Նույնիսկ նրանց քաշը չէր ընկնում: Միայն հինգ ամիս հետո է էակների ընդհանուր ներկայություններում սկսել նկատվել վնասակար ազդեցություն, որն արտահայտվել էր որոշ զգայարանների, այսպես ասած, ունակության ու զգայնության թուլացմամբ: Օրինակ՝ ձայնը տկարանում էր, տեսողությունն ու լսողությունը՝ վատանում: Բացի այդ, էակներից ոմանց մոտ այդ լինելիական գործառույթների խանգարման սկզբում փոփոխություններ էին նկատվում նաև ընդհանուր հոգեկան վիճակում:

Այդ եղբայրների թողած փաստաթղթում այլ բաներից զատ կային նաև էակների բնավորությունների փոփոխության երկարաշունչ նկարագրություններ, որոնք առաջացել էին Ասիմանի այդ հրաշալի պատրաստուկը հինգ ամիս օգտագործելուց հետո, և դրանց ցուցադրության համար բերված էին մի քանի անգերազանցելի ու հաջող համեմատություններ:

Թեև այդ փաստաթղթում համեմատության համար բերված բուն օրինակները չեն մնացել իմ հիշողության մեջ, բայց դրանցից իմ մեջ մնացած «բույրի» շնորհիվ ես հիմա կարող եմ քեզ փոխանցել դրանց իմաստը՝ օգտվելով մեր հարգելի մոլլա Նասրեդինի լեզվից:

Օրինակ՝ ինչպես նրանք են ասում, «հրեշտակային» բնավորություն ունեցող սովորական լավ տղան հանկարծ բարկացկոտ է դառնում նրանց պես, որոնց մասին մեր սիրելի մոլլա Նասրեդինը մի անգամ ասաց հետևյալը.

«Նա բարկացկոտ է այն մարդու պես, որը հենց նոր է բուժման լրիվ կուրս անցել եվրոպացի հայտնի նյարդաբանի մոտ»:

Կամ էակները, որոնք այսօր խոնարհ են այն «կաթնակեր գառնուկների» պես, որոնց ազնվաբարո մարդիկ մատուցում են սեղանին իրենց ամենանշանավոր կրոնական տոների ժամանակ, վաղը կարող են ափերից դուրս գալ, ինչպես գերմանացի պրոֆեսորը, երբ մի ուրիշ, բայց ֆրանսիացի պրոֆեսոր ինչ-որ նոր բացահատում է անում ժամանակակից գիտության մեջ:

Կամ էակը, որը սիրում է այնպես, ինչպես ժամանակակից երկրային երկրպագուն է սիրում հարուստ այրուն (իհարկե, քանի դեռ նրանից ոչ մի կոպեկ չի ստացել), հանկարծ այնպես խայթող է դառնում, ինչպես այն չարամիտ անձինք, որոնք փրփուրը բերաններին կվատաբանեն այն խեղճ հեղինակին, որն այս պահին գրում է իմ ու քո մասին իր այն աշխատությունում, որը կոչվում է «Մարդու կյանքի օբյեկտիվ-անաչառ քննություն»:

Այդ խեղճ դուրսպրծուկ հեղինակին, իմիջիայլոց, կատեն ինչպես «թունդ մատերիալիստները», այնպես էլ «ինստունվեց հարգի դեիստները». և նույնիսկ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակներից նրանք, որոնք, երբ փորները կուշտ են, իսկ «սիրեցյալներն» այս պահին «տեսարան» չեն սարքում, ապա «անուղղելի լավատեսներ» են, իսկ եթե ստամոքսները դատարկ են՝ «անհուսալի հոռետեսներ»:

Իսկ հիմա, զավա՛կս, մեկ որ խոսեցինք այդ «տարօրինակ դուրսպրծուկ հեղինակի» մասին, ապա ստիպված եմ քեզ պատմել նաև իմ ներսում արդեն վաղուց առաջացած և անընդհատ աճող որոշ տարակուսանքի մասին՝ կապված նրա միամտության հետ:

Պետք է ասեմ, որ իր պատասխանատու գոյատևման հենց սկզբից, ոչ այն է՝ պատահաբար, ոչ այն է՝ ճակատագրի բերումով նա նույնպես դարձավ մեր իմաստուն ու մեծապատիվ մոլլա Նասրեդինի հետևորդը, ընդ որում՝ շատ նախանձախնդիր, և, բացի այդ, իր սովորական *լինելիական գոյատևման* ընթացքում նա երբեք բաց չէր թողնում անգամ ամենաչնչին հնարավորությունը, որ գործի մոլլա Նասրեդինի չտեսնված իմաստուն ու աննման ասույթներին լրիվ համապատասխան: Իսկ հիմա, համաձայն ինձ հասած եթերագրի տեղեկության, հանկարծ պարզվում է, որ նա միշտ գործում է բոլորուսուցիչների այդ ուսուցչի խորիմաստ, բացառիկ գործնական և, իհարկե, ոչ բոլորին հասանելի այն խորհրդի հակառակ, որն արտահայտվում է հետևյալ բառերով.

«Էհ, եղբա՛յրս, եթե այստեղ՝ Երկրի վրա, դու ճշմարտություն ես ասում, ուրեմն տեղը տեղին հիմար ես. իսկ եթե աջ ու ձախ խաբում ես, ապա սոսկ «սրիկա» ես, թեև էլի տեղը տեղին: Ուստի ավելի լավ կլինի, որ ոչինչ չանես, այլ պարզապես թեք ընկնես բազմոցիդ վրա և սովորես երգել դեռևս ամերիկյան դեղձանիկի չվերածված ճնճուկի պես»:

Իսկ հիմա, զավա՛կս, հարկ է, որ մի լավ յուրացնես այն տեղեկատվությունը, որը վերաբերում է Ամերիկա աշխարհամասի այդ ժամանակակից էակների ներկայություններում երկրորդ հիմնական *լինելիական գործառույթի* սեռականի աստիճանական աններդաշնակացման պատճառներին:

Նրանց այդ գործառույթի աններդաշնակությունը նույնպես պայմանավորված է մի քանի տարաբնույթ պատճառներով, սակայն դրանց մեջ հիմնականը, իմ կարծիքով, իրենց սեռական օրգանները մաքուր պահելու անհրաժեշտության՝ «նրանց էության մեջ ծնված և արդեն ամբողջովին նրանց բնույթի հետ միախառնված» անտեսումն է:

Ինչպես Եվրոպա աշխարհամասի էակների, այնպես էլ նրանց կողմից իրենց դեմքին ու, այսպես կոչված, «դիմահարդարանքին» հատկացվող ուշադրությունը հավասար է նշված օրգանների նկատմամբ նրանց անտարբերությանը. մինչդեռ քիչ թե շատ գիտակից եռուղեղ էակներից պահանջվում է խիստ մաքուր պահել հատկապես այդ օրգանները:

Սակայն դրա համար չի կարելի ամբողջ մեղքը գցել ամերիկացիների վրա, քանի որ դրանում ավելի շատ մեղավոր են Եվրոպա աշխարհամասի էակները՝ իրենց սովորական *լինելիական գոյատևման* ընթացքում գործող իրենց սովորույթներով:

Բանն այն է, որ այդ վերջերս կազմավորված ժամանակակից մեծ խմբավորումը համարյա ամբողջությամբ բաղկացած է Եվրոպա աշխարհամասում բնակվող ուրիշ տաբեր մեծ ու փոքր խմբավորումների էակներից, և շարունակում է համալրվել նրանցով:

Արդյունքում, թեև այդ վերջերս կազմավորված մեծ խմբավորման բնակչությունը կազմող ներկայիս եռուղեղ էակների մեծամասնությունը ոչ թե իրենք են արտագաղթել Եվրոպա աշխարհամասից, այլ իրենց հայրերն ու պապերը, բայց հայտնվելով Ամերիկա աշխարհամասում՝ նրանք իրենց հետ բերել են նաև իրենց եվրոպական սովորույթները, որոնց մեջ են նաև սեռական օրգանների նկատմամբ անմաքրասեր վերաբերմունքի պատճառ հանդիսացողները:

Այնպես որ, տղա՛ս, երբ ես քեզ պատմում եմ, թե ամերիկացիների մոտ ինչպես են գործերը սեռական հարցում, ի նկատի ունեցիր, որ բոլոր ասածներս վերաբերում են նաև Եվրոպա աշխարհամասի էակներին:

Երկիր մոլորակի Եվրոպա և Ամերիկա աշխարհամասերում բնակվող՝ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների ժամանակակից ներկայացուցիչների այդպիսի անմաքրասիրության արգասիքները շատ հստակ երևում են իմ վիճակագրության մեջ:

Դիտարկենք, օրինակ, այն, ինչն այնտեղ «վեներական հիվանդություններ» է կոչվում: Այդ հիվանդություններն այնքան շատ են տարածված Եվրոպա և Ամերիկա աշխարհամասերում, որ

ներկայումս դրանցում համարյա հնարավոր չէ հանդիպել էակի, որը չունենա այդ հիվանդություններից որևէ մեկը:

Ոչ մի վատ բան չի լինի, եթե ամեն ինչից զատ նաև իմանաս իմ վիճակագրության մեջ եղած որոշ հետաքրքիր ու յուրահատուկ տվյալներ, որոնք թվային տեսքով ցույց են տալիս, թե այդ հիվանդությունները որքան ավելի շատ են Ամերիկա և Եվրոպա աշխարհամասերի էակների մոտ, քան Ասիա աշխարհամասում:

Այդ վեներական հիվանդություններից շատերն իսպառ բացակայում են Ասիա աշխարհամասի հինավուրց հանրություններում ներկայումս ապրող էակների միջավայրում, մինչդեռ Եվրոպա և Ամերիկա աշխարհամասերում բնակվող էակների միջավայրերում այդ հիվանդությունները համարյա համաճարակային բնույթ ունեն:

Վերցնենք, օրինակ, «տրիպերը», կամ, ինչպես այնտեղի գիտնականներն են անվանում, «հոնորեան»: Եվրոպա և Ամերիկա աշխարհամասերի համարյա բոլոր արական ու իգական սեռի էակները տառապում են այդ հիվանդության այս կամ այն փուլով, իսկ Ասիա աշխարհամասում այդ հիվանդությունը հանդիպում է միայն այն սահմանամերձ շրջաններում, որտեղ շփում կա Եվրոպա աշխարհամասի էակների հետ:

Հենց նոր ասածիս լավ օրինակ են այն էակները, որոնք պատկանում են այնտեղ Պարսկաստան կոչվող և Ասիա աշխարհամասում համեմատաբար մեծ տարածք զբաղեցնող խմբավորմանը:

Այդ համեմատաբար մեծ տարածքի կենտրոնական, արևելյան, հարավային ու արևմտյան շրջաններում բնակվող էակների միջավայրում հիշյալ հիվանդությունները բոլորովին չեն հանդիպում:

Բայց հյուսիսային մասում՝ հատկապես դրա Ադրբեջան կոչվող հատվածում, որն անմիջական շփում ունի կիսաեվրոպական-կիսասիական այն հանրության հետ, որը Ռուսաստան է կոչվում, այդ հիվանդություններով վարակվածների թիվն ավելի ու ավելի է աճում՝ այդ Ռուսաստանին մոտիկ լինելուն համապատասխան:

Եվ նույն բանը տեղի է ունենում նաև Ասիա աշխարհամասի մյուս արևելյան երկրներում. այդ հիվանդության տոկոսն աճում է Եվրոպա աշխարհամասի էակների հետ հաղորդակցվելուն ուղիղ համեմատական: Օրինակ՝ «Հնդկաստան» կոչվող երկրում և մասամբ Չինաստանում վերջին ժամանակներում տեղացի էակների միջավայրում այդ հիվանդությունը լայնորեն տարածվել է գլխավորապես այն վայրերում, որտեղ նրանք շփումներ են ունենում «Անգլիա» կոչվող հանրության եվրոպացի էակների հետ:

Այսպիսով, կարելի է ասել, որ Ասիա աշխարհամասի էակների միջավայրում այդ հիվանդության գլխավոր տարածողները հյուսիս-արևմուտքից Ռուսաստան կոչվող մեծ խմբավորման էակներն են, իսկ արևելքից՝ Անգլիա կոչվող հանրության էակները:

Ասիա աշխարհամասի նշված մասերում ինչպես այդ հիվանդության, այնպես էլ բազմաթիվ այլ չարիքների բացակայության պատճառն, իմ կարծիքով այն է, որ Ասիա աշխարհամասի էակների մեծամասնության առօրյա գոյատևման մեջ առկա են մի քանի լավ սովորույթներ, որոնք նույնպես նրանց են հասել իրենց հեռավոր նախնիներից:

Կրոնն այդ սովորույթներն այնքան խորն է մտցրել նրանց սովորական գոյատևման մեջ, որ ներկայումս, առանց ինքներին գոռ տալու դրանք մեխանիկորեն պահպանելով, դրանով իսկ էակները քիչ թե շատ պաշտպանված են լինում այդ չարիքներից մի քանիսից, որոնք *լինելիական գոյատևման* հաստատված պայմանների աննորմալության հետևանքով արդեն աստիճանաբար ձևավորվել են և դեռ շարունակում են անհաշիվ քանակությամբ ձևավորվել այդ չարաղետ մոլորակում:

Ասիա աշխարհամասի խմբավորումներից մեծ մասի էակները պաշտպանված են ինչպես շատ վեներական հիվանդություններից, այնպես էլ ուրիշ շատ «սեռական աննորմալություններից», օրինակ, այնպիսի սովորույթներով որոնք այնտեղ հայտնի են «սունաթ» ու «աբդասթ» անուններով:

Այդ սովորույթներից առաջինը՝ սունաթը, կամ ինչպես նաև կոչում են, «թլփատումը», ոչ միայն պատասխանատու տարիքում գտնվող շատ ասիացի էակների փրկում է շատ վեներական հիվանդություններից, այլև շատ երեխաների ու պատանիների հեռու է պահում այն «աղետից», որը Եվրոպա և Ամերիկա աշխարհամասերում գոյություն ունի «ձեռնաշարժություն» անվամբ:

Այդ սովորույթին հետևելով՝ Ասիա աշխարհամասի ժամանակակից խմբավորումներից մեծ մասում պատասխանատու տարիքին հասած էակներն իրենց «պտուղների», այսինքն՝ զավակների

հետ նրանց որոշակի տարիքում կատարում են մի ծես, որի ժամանակ կտրում են տղա երեխաների, այսպես կոչված, «սանձակապն» ու «առնանդամի թլիփը»:

Եվ հիմա քո սիրելիների այն երեխաները, որոնք, իհարկե, ինքնաբերաբար ենթարկվում են այդ ծեսին, համարյա լրիվ պաշտպանված են լինում մի քանի չարիքների արգասիքներից, որոնք որոշակիորեն արդեն ամրապնդվել են քո սիրելիների գոյատևման գործընթացում:

Օրինակ՝ համաձայն իմ վիճակագրության, նշածս «աղետը», այսինքն՝ «մանկական ձեռնաշարժությունը», համարյա չի հանդիպում այն եռուղեղ էակների երեխաների մոտ, որոնք հետևում են «թլփատման» այդ սովորույթին, մինչդեռ այն էակների երեխաներն ու պատանիները, որոնք այդ սովորույթին չեն հետևում, բոլորն առանց բացառության պաշտպանված չեն այդ սեռական աննորմալությունից:

Հիշատակածս մյուս սովորույթը՝ աբդասթը, որն, իմիջայլոց, Ասիա աշխարհամասի էակների տարբեր խմբավորումներում տարբեր անուններ է կրում, ոչ այլ ինչ է, քան ամեն անգամ, այսպես կոչված, «զուգարանից» օգտվելուց հետո սեռական օրգանները պարտադիր լվանալը:

Գլխավորապես հենց այդ երկրորդ սովորույթի շնորհիվ՝ Ասիա աշխարհամասում բազմացող քո սիրելիների մեծ մասը պաշտպանված է այնտեղ գոյություն ունեցող շատ վեներական հիվանդություններից և այլ սեռական աննորմալություններից:

Այս ասելուց հետո Բեհեդգեբուղը մտորումների մեջ ընկավ և երկար լռելուց հետո շարունակեց.

«Մեր ներկա գրույցի թեման ինձ հիշեցրեց մի շատ հետաքրքիր խոսակցություն, որը Ֆրանսիայում գտնվելիս ես ունեցա մի երիտասարդ ու համակրելի եռուղեղ էակի հետ: Կարծում եմ, որ, որպեսզի դու հասկանաս ամբողջ ասվածը, երևի թե լավ կլինի հիմա քեզ համար կրկնել այդ խոսակցությունն ամբողջությամբ, մանավանդ որ այդ աբդասթ կամ լվացում կոչվող սովորույթի իմաստը բացատրելուց զատ՝ այդ խոսակցությունը քեզ համար ուրիշ շատ հարցեր կլուսաբանի, որոնք առնչվում են քո այդ սիրելիների յուրօրինակ հոգեկառույցի հետ:

Այդ էակը, որի հետ ունեցածս խոսակցությունը ես հիշեցի և հիմա պատրաստվում եմ քեզ համար կրկնել, հենց այն երիտասարդ պարսիկն էր, որը, հիշում եմ, ես արդեն քեզ ասել եմ, մեր ընդհանուր ծանոթի խնդրանքով իմ «ուղեկցորդն» էր դարձել Փարիզ քաղաքում, որտեղ ես գտնվում էի, ինչպես արդեն պատմել եմ քեզ, այդ Ամերիկա աշխարհամասը մեկնելուցս անմիջապես առաջ:

Մի անգամ ես սպասում էի այդ պարսիկ երիտասարդին, ինչպես միշտ, Փարիզ քաղաքի նույն այն «Գրանդ Կաֆեում»:

Երբ նա հայտնվեց, աչքերից նկատեցի, որ այս անգամ նա ավելի, ինչպես այնտեղ են ասում, «հարբած» է, քան սովորաբար:

Ընդհանրապես նա միշտ չափից ավելի շատ էր խմում այնտեղ եղած «ալկոհոլային խմիչքներից», և երբ Փարիզում մեզ վիճակվեց միասին այցելել Մոնմարտրի ռեստորանները, որոնցում ընդունված է անպայման շամպայն պատվիրել, որից խմել ես չէի սիրում, նա մեծ հաճույքով խմում էր ամբողջը:

Նա ոչ միայն մշտապես խմիչք էր օգտագործում, այլև, ինչպես այնտեղ են ասում, «կանանց սիրահետելու մեծ վարպետ» էր:

Հենց որ նա տեսնում էր իգական սեռին պատկանող որևէ էակի, ինչպես այնտեղ են ասում, «լավիկ մոռթիկը», անմիջապես նրա ամբողջ մարմինն ու նույնիսկ շնչառությունը փոխվում էին:

Երբ ես նկատեցի, որ այս անգամ նա սովորականից ավելի շատ է հարբած, նաև այն բանից հետո, որ կողքիս նստելով, այսպես կոչված, «ապերիտիվով» սուրճ պատվիրեց, նրան հարցրի.

– Բացատրի՞ր ինձ խնդրեմ, իմ ջահել բարեկամ, ինչու՞ ես միշտ խմում այդ «թույնից»:

Այդ հարցին նա այսպես պատասխանեց.

«Է՛հ, սիրելի դոկտոր, ես այդ «թույնից» խմում եմ նախ և առաջ այն պատճառով, որ այնքան եմ վարժվել դրան, որ հիմա չեմ կարող խմելը թողնել, և երկրորդ՝ խմում եմ այն պատճառով, որ միայն ալկոհոլի ազդեցության շնորհիվ կարող եմ հանգիստ տանել այստեղ տիրող անամոթությունը, – ավելացրեց նա՝ ձեռքով օդում շրջան գծելով:

Ես սկսեցի խմել այդ, ինչպես դուք եք ասում, թույնից այն պատճառով, որ պատահաբար իմ կյանքի անհաջող ու դժբախտ հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ ստիպված եղա գալ և երկար ժամանակով ապրել այս կործանարար Եվրոպայում:

Սկզբում սկսեցի խմել, քանի որ այստեղ ում հանդիպում էի, բոլորը նույնպես խմում էին. եթե չխմես, քեզ զանազան խոցող անուններ կկպցնեն՝ «կնիկարմատ», «աղջնակ», «տիկնիկ»,

«փափկասուն», «մամայի բալիկ», «գեղացի» և այլն: Չուզենալով, որ իմ գործարար ծանոթներն ինձ նմանատիպ վիրավորական անուններ կպցնեն՝ ես նույնպես սկսեցի խմել:

Նաև այն պատճառով, որ երբ առաջին անգամ Եվրոպա եկա, այստեղի կյանքի պայմանները բարոյականության ու նահապետական բարքերի առումով տրամագծորեն հակառակն էր այն վայրում ընդունված վերաբերմունքին, որտեղ ես ծնվել ու դաստիարակվել էի, և տեսնելով ու ընկալելով այդ ամենը՝ ես տանջալից ամոթի զգացում ու անբացատրելի շփոթմունք էի ապրում: Միաժամանակ նկատեցի, որ խմածս ակոհողի ազդեցությամբ ոչ միայն նվազում է իմ ճնշվածությունը, այլև կարողանում էի լիակատար հանգստությամբ նայել և նույնիսկ այս աննորմալ կյանքին մասնակից դառնալու ցանկություն ունենալ, որն այդպես հակասում էր իմ բնույթին ու հաստատված հայացքներին:

Եվ ստացվեց այնպես, որ ամեն անգամ, երբ սկսում էի ապրել ահա այդ տհաճ զգացողությունը, այդ ակոհողն օգտագործում էի նույնիսկ որոշակի ինքնարդարացման զգացումով, և այդ եղանակով աստիճանաբար վարժվեցի այդ, ինչպես դուք իրավացիորեն անվանեցիք, թույնին:

Անկեղծ վշտի պոթելումով այդքանն ասելուց հետո նա դադար առավ, որ ներս քաշի «ծխածոտախառն» սիգարի ծուխը, և այդ դադարից օգտվելով՝ ես նրան հարցրի.

«Լավ, ասենք թե... Ենթադրենք, որ ես քիչ թե շատ հասկացա աններելի հարբեցողությանը վերաբերող քո բացատրությունը և կարող եմ ինձ պատկերացնել քո վիճակում. իսկ ի՞նչ կասես մի ուրիշ, իմ տեսակետից նույնպես աններելի արատի՝ կանացի սեռի նկատմամբ ունեցած քո թուլության մասին:

Չէ՞ որ վազում ես ամեն մի փեշի հետևից, հենց որ տեսնում ես, որ այն երկարամազ էակի հագին է...»:

Իմ այդ հարցը լսելուց հետո նա խոր հառաչեց ու շարունակեց այսպես.

«Ինձ թվում է որ ես այդ սովորությունը ձեռք եմ բերել մասամբ նույն պատճառով, բայց նաև կարծում եմ, որ իմ այդ թուլությունը կարելի է բացատրել ևս մեկ շատ հետաքրքիր հոգեբանական պատճառով»:

Բնականաբար ես ցանկություն հայտնեցի լսելու նրան, բայց նախ առաջարկեցի մտնել այդ «Գրանդ Կաֆեի» բուն ռեստորանի դահլիճը, քանի որ փողոցում խոնավ էր:

Երբ նստեցինք ռեստորանի դահլիճում և իրենց «նշանավոր շամպայնից» պատվիրեցինք, նա շարունակեց.

«Երբ Դուք ապրում էիք մեր Պարսկաստանում, սիրելի՛ դոկտոր, հավանաբար պատահել է, որ տեսնեք, այնտեղի տղամարդկանց վերաբերմունքը կանանց նկատմամբ, որը խիստ բնորոշ է մեզ՝ պարսիկներին:

Մեզ մոտ՝ Պարսկաստանում տղամարդիկ կանանց նկատմամբ ունեն երկու տեսակի, կարելի է ասել, «օրգանական վերաբերմունք», որոնց համապատասխան էլ մեզ՝ տղամարդկանցս համար, նույնիսկ առանց մեր գիտակցության մասնակցության, կանայք շատ հստակ բաժանվում են երկու տարատեսակի:

Առաջին վերաբերմունքն այն կանանց նկատմամբ է, որոնք մայրացել են կամ պատրաստվում են մայրանալ, իսկ երկրորդը վերաբերմունքն է էգի նկատմամբ:

Պարսիկ տղամարդկանց այդ հատկանիշը, որն իր բնույթում նախադրյալներ է պարունակում այդ երկու իրարից անկախ վերաբերմունքների և այդ բնագծական զգացողության համար, սկսել է ձևավորվել միայն վերջերս՝ մոտավորապես երկուսուկես դար առաջ:

Համաձայն այն բացատրությունների, որոնք ես մի անգամ ստացա իմ «քեռի մոլլայից» որին շրջապատում բոլորը հետևից «հին դպրոցի մոլլա» էին անվանում, երկու թե երեք դար առաջ, հավանաբար որոշակի բարձրագույն օրենքների գործունեության հետ կապված պատճառներով, ամբողջ Երկրում և հատկապես մեզ մոտ՝ Ասիայում, մարդիկ սկսել են սովորականից ավելի եռանդուն պատերազմել, և միաժամանակ մարդկանց մեծ մասի մոտ սկսել է նվազել հավատի զգացումը, իսկ որոշների մոտ այդ զգացումն իսպառ է չքացել:

Եվ հենց այդ ժամանակաշրջանում տղամարդկանց մեջ ինչ-որ մի հոգեկան հիվանդություն է տարածվել, որով վարակվածներից շատերը վերջիվերջո կամ լրիվ անմեղսունակ են դարձել, կամ ինքնասպանություն են գործել:

Այնժամ Ասիա աշխարհամասի տարբեր անկախ խմբավորումների որոշ իմաստուն մարդիկ, օգտվելով այն մարդկանց ծառայությունից, որոնք այն ժամանակվա բժշկությունն էին ներկայացնում, որն, իմիջիայլոց, անհամեմատ ավելի բարձր էր ժամանակակից բժշկությունից, սկսեցին շատ ջանադիր կերպով փնտրել մարդկային այդ դժբախտության պատճառները:

Երկարատև անկողնակալ աշխատանքների արդյունքում նրանք բացահայտեցին նախ այն, որ այդ հիվանդությամբ վարակվում էին բացառապես այն տղամարդիկ, որոնց ենթագիտակցության մեջ, այս կամ այն պատճառով, երբեք հավատի ազդակ չի առաջանում որևէ մեկի կամ ինչ-որ բանի նկատմամբ. և երկրորդ՝ այն չափահաս տղամարդիկ, որոնք պարբերաբար նորմալ ծեսով կենակցում էին կնոջ հետ, երբեք չէին ենթարկվում այդ հիվանդության ազդեցությանը:

Երբ նրանց այդ եզրակացության մասին լուրը տարածվեց ամբողջ Ասիա աշխարհամասում, այդ ժամանակվա առանձին ասիական խմբավորումների բոլոր ղեկավարներն ու առաջնորդները տազնապեցին, քանի որ նրանց ենթակայության տակ գտնվող համարյա բոլոր կանոնավոր գորքերը կազմված էին չափահաս տղամարդկանցից, իսկ մշտական պատերազմները նրանցից ոչ մեկին իրենց ընտանիքներում նորմալ ձևով ապրելու հնարավորություն չէին տալիս:

Քանի որ այդ ժամանակաշրջանում անկախ ասիական երկրների բոլոր կառավարությունները կարիք ունեին և ուզում էին ունենալ առողջ և ուժեղ բանակներ, ապա ստիպված էին զինադադար կնքել և կամ հենց իրենք կռվել, կամ էլ ներկայացուցիչներ ուղարկել, այսպես կոչված, «Քիլմանթուշի»⁵³ խանության» մայրաքաղաքը, որպեսզի համատեղ ուժերով ելք գտնեն ստեղծված դրությունից:

Լուրջ մտորումներից ու քննարկումներից հետո ասիական ժողովուրդների տարբեր անկախ խմբավորումների կառավարիչներն ու նրանց ներկայացուցիչները, իհարկե, այն ժամանակվա բժշկության ներկայացուցիչների հետ միասին հանգեցին այն եզրակացությանը, որ ստեղծված իրավիճակից կարելի է գլուխ հանել, եթե միայն ամբողջ Ասիա աշխարհամասում, այսպես կոչված, պոռնկություն հաստատեն, ինչպես հիմա Եվրոպա աշխարհամասում է հաստատված, և եթե իշխանավորները միտումնավոր կերպով քաջալերեն դրա զարգացումը և նպաստեն այդ գործի հաջողությանը:

Այն ժամանակվա համարյա բոլոր տիրակալները լրիվ համաձայնեցին Քիլմանթուշի խանության մայրաքաղաքում հավաքված՝ Ասիա աշխարհամասի բոլոր ժողովուրդների ներկայացուցիչների այդ համատեղ եզրակացությանը և, առանց խղճի որևէ խայթ զգալու, այդ ժամանակից սկսած ոչ միայն քաջալերում ու օգնում էին ընդհանրապես բոլոր կանանց (բացառությամբ իրենց դուստրերի), որ զբաղվեն ամեն նորմալ մարդու էության համար այդքան «հրեշավոր զգվելի» այդ գործով, , այլ նաև, առանց կաստանների ու կրոնների միջև խտրականություն դնելու, ցուցաբերում էին (այն էլ՝ ամենայն բարյացակամությամբ, կարծես դա լինե՞ր մարդկային հոգատարության բարձրագույն դրսևորումը) հնարավոր ամեն տեսակի աջակցություն այն կանանց, որոնք այդ կեղտոտ նպատակով ցանկություն էին հայտնում գնալու կամ մեկնելու որևէ վայր:

Մեկ որ շոշափեցինք այս թեման, հարգելի՛ դոկտոր, թույլ տվեք շեղվել և այստեղ ձեզ ներկայացնել այդ նույն մոլլայի՝ իմ քեռու, իմ կարծիքով, շատ հետաքրքիր և իմաստուն դատողություններն ընդհանրապես ժամանակակից քաղաքակրթության այդ չարիքի ու պատուհասի ծագման պատճառների վերաբերյալ:

Մի անգամ՝ «Ռամագանի» օրերից մեկում, երբ մենք սովորականի պես գրուցում էինք՝ սպասելով մեր տեղական մոլլայի՝ ճաշի ժամն ավետող կանչին, և հենց խոսում էինք մարդկային այդ «պատուհասի» մասին, նա, իմիջիայլոց, ասաց հետևյալը:

«Ձեր կողմից ճիշտ և արդար չէ այդ զբաղմունքի տեր բոլոր կանանց մեղադրելն ու արհամարհելը:

Նրանց մեծ մասը մեղավոր չէ իրենց տխուր ճակատագրի համար. մեղավոր են բացառապես միայն նրանց ծնողները, ամուսիններն ու խնամարկուները:

Հարկ է մեղադրել ու արհամարհել հենց նրանց այդ ծնողներին, ամուսիններին ու խնամարկուներին, որոնք թույլ են տվել, որ նախապատրաստական տարիքում, երբ դեռ նրանք հասուն մարդիկ չեն և սեփական ողջամտություն չունեն, նրանց մոտ ձևավորվի ծուլություն կոչվող հատկությունը:

⁵³ ռուս. տարբերակում՝ Килмантушского, անգլ. տարբերակում՝ Kilmantoosh

Թեև այդ տարիքում նրանց այդ ծուլությունը մեխանիկական բնույթ է կրում, և ջահել մարդկանց համար այն հաղթահարելն առանձապես մեծ ջանքեր չի պահանջում, և հետևաբար, սեփական ողջամտություն ձեռք բերելով, նրանք կարող են թույլ չտալ, որ ծուլությունն իրենց ներսում գլուխ բարձրացնի, սակայն, ինչ վերաբերում է կանացի հոգեկառույցի ձևավորմանը, ապա մեր կամքից անկախ արգասիքների հետևանքով, որոնք բխում են Համաշխարհային օրենքներից, ակտիվ սկզբունքը պետք է անպայման մասնակցություն ունենա նրանց բոլոր նախաձեռնողական ու լավ դրսևորումներում:

Եվ ժամանակակից այդ տարաբախտ ապագա կին-մայրերի հասունացման հենց առաջին տարիներին է, որ զանազան, հիմա արդեն Երկրում ամենուրեք տարածված գաղափարների պատճառով, որոնք արտահայտվում են «հավասար իրավունքներ», «հավասար հնարավորություններ» և այլ կարգախոսներով, և որոնք պարզունակ են թվում նորմալ ապրող մարդկանց պատկերացումների համար և ենթագիտակցաբար են ընկալվում նաև ժամանակակից տղամարդկանց մեծ մասի կողմից, ներկայիս այդ դեռևս լրիվ չձևավորված ապագա կին-մայրերը, մի կողմից՝ իրենց կողքին չունենալով ակտիվ սկզբունքի անհրաժեշտ օրինաչափ աղբյուրներ (ինչպիսիք նրանց ծնողներն են, ամուսինները կամ խնամարկուները, որոնք, ամուսնության պահից սկսած, պատասխանատվություն են կրում նրանց համար), և մյուս կողմից՝ նրանց ներսում առկա երևակայության ու հանդիսավորության ինտենսիվ գործընթացի հետևանքով, ինչը նույնպես Բնության կողմից այդ անցումային տարիքի համար նախատեսված է, որպեսզի լավագույն ձևով զարգանա նրանց ողջամտությունը, նրանք, այսպես ասած, աստիճանաբար նշված մեխանիկական ծուլությունը ներծծում են իրենց էության մեջ, և այդ ծուլությունը նրանց բնույթում այդպես էլ մնում է՝ որպես զարգացում ապրող ու պարտադիր պահանջմունք»:

Նման բնույթ ունեցող կինը, պարզ է, չի ուզենա կատարել իսկական կին-մոր պարտականությունները. և քանի որ պոռնիկ լինելով նա հնարավորություն ունի ոչինչ չանել և մեծ հաճույք ստանալ, ապա ինչպես նրա ներքին էության, այնպես էլ նրան բնորոշ «պասսիվ գիտակցության» մեջ աստիճանաբար ձևավորվում է եզ-կին դառնալու անհաղթահարելի ցանկության գործոնը:

Բայց քանի որ բոլոր կանանց բնորոշ «ամոթի» ազդակի նախադրյալներն ամեն մի այդպիսի կնոջ բնագոյում կորսվում են ոչ հանկարծակի և ոչ միանգամից, և քանի որ նրանցից յուրաքանչյուրի համար, նույնիսկ ամենամեծ մտավոր ցանկության դեպքում, հարազատ երկրում այդպիսի կին դառնալն ուղղակի անտանելի է, ապա բոլոր նրանք, բնագոյաբար ու կիսագիտակցաբար, միշտ ձգտում են հեռանալ մի որևէ ուրիշ երկիր, որտեղ՝ հայրենիքից հեռու, ոչ մի ներքին անհարմարություն չեն զգում և ուրիշ ոչինչ չանելով՝ կարող են ամբողջովին տրվել այդ մասնագիտությանը, որը նրանց համար հաճելի է համարյա բոլոր առումներով:

Իսկ ինչ վերաբերում է ներկայումս Երկրում ամենուրեք այդ մարդկային դժբախտության տարածվածությանը, ապա, իմ կարծիքով, դրա պատճառը միայն ժամանակակից տղամարդիկ են, որոնց ներսում նույնպես, ինչպես հետագայում պոռնիկներ դարձող երիտասարդ կանանց մոտ, առաջանում է նմանատիպ, այսպես կոչված, «հաճույք ստանալուց զատ ոչինչ չանելու օրգանական էաբուխ պահանջ», և ժամանակակից երիտասարդ մարդկանց այդ «խոցերի» հանցավոր պահանջը բավարարելու ձևերից մեկը տվյալ դեպքում այն է լինում, որ հրապուրեն այդպիսի կանանց և նրանց օգնեն իրենց հայրենիքից հեռանալու ինչ-որ մի օտար երկիր:

Ժամանակակից խելացի մարդկանցից շատերն արդեն նկատել են, որ երկու սեռերի ներկայացուցիչներն էլ, միևնույն հիվանդության գոհերը լինելով, գիտակցաբար ու բնագոյաբար փնտրում և գտնում են մեկը մյուսին. և տվյալ նրանք միայն հաստատում են վաղուց գոյություն ունեցող առածի ճշտությունը. «պուտուկը գլորվեց, խուփը գտավ»:

Այսպիսով, հարգելի դոկտոր, իմ քեռու կողմից իմաստուն կերպով մեկնաբանված հենց այդ նշված պատճառների հետևանքով է, որ մեզ մոտ՝ Պարսկաստանում, մի քանի տարի հետո զանազան ուրիշ երկրներից եկած այդքան շատ պոռնիկներ հավաքվեցին այն ժամանակ:

Իսկ բնագոյական հարաբերությունների պատճառով, որոնք, ինչպես արդեն ասել եմ, Պարսկաստանի տեղացի կանայք դարեդար ձեռք են բերել, նահապետական ընտանեկան ավանդույթների ու բարոյական նորմերի նկատմամբ կրոնի վերաբերմունքից անկախ, այդ

օտարուհիները չէին կարող միախառնվել պարսիկ կանանց ընդհանուր զանգվածին, ինչն այդ ժամանակվանից հանգեցրել է նրան, որ մեզ մոտ հիմա կան իմ հիշատակած երկու տեսակի կանայք:

Այդպիսով, այն բանի հետևանքով, որ այդ օտարուհիների մեծ մասը, ապրելով մեր Պարսկաստանում և ամենուրեք երևալով շուկաներում ու այլ հասարակական վայրերում, հաճախ մեր պարսիկ-տղամարդկանց համար վերածվում էին այք անհայտ օբյեկտների՝ վերջիններիս մոտ աստիճանաբար և, իհարկե, անգիտակցաբար, կանանց որպես մայրերի վերաբերվելուց զատ ձևավորվել է կանանց նկատմամբ էլի մի ուրիշ վերաբերմունք՝ պարզապես որպես կին-եգի:

Կանանց նկատմամբ որոշակի երկու տեսակի վերաբերմունք ունենալու հատկությունը ժառանգաբար փոխանցվել է մի սերնդից մյուսին և ի վերջո այնքան է արմատներ ձգել, որ ներկայումս մեր տղամարդիկ ոչ միայն արտաքինով հեշտությամբ իրարից ջոկում են այդ երկու տեսակի կանանց, ինչպես մարդուն ջոկում են ոչխարից, շնից, ավանակից և այլն, այլ նաև նրանց ներսում նույնիսկ կազմավորվել է ինչ-որ բան, որը բնագոյրեն նրանց արգելում է մի տեսակին պատկանող կնոջը ընդունել մյուս տեսակին պատկանող կնոջ տեղ:

Նույնիսկ ես էի միշտ կարողանում հեռվից-հեռու անսխալ որոշել, թե ինչ տեսակի կին է մոտենում ինձ: Ինչպե՞ս էի ես դա իմանում՝ քայլվածքի ձևի՞ց, թե՞ որևէ այլ հատկանիշից, անգամ ամենամեծ ցանկության դեպքում ես հիմա չեմ կարող բացատրել, բայց դա փաստ է, և ես երբեք չէի սխալվում, թեև, ինչպես արդեն ասել եմ ձեզ, երկու տեսակի կանայք էլ նույն ծածկոցներն էին կրում:

Եվ ամեն մի նորմալ պարսիկ (նորմալ այն իմաստով, որ չի գտնվում ծխախոտի, ալկոհոլի կամ ամփոփի ազդեցության տակ, որոնք վերջին ժամանակներս ավելի ու ավելի շատ են տարածվում մեզ մոտ) միշտ կարող է անսխալ ասել, թե ո՞ր կինն է «կին-մայր», և ո՞րը՝ «կին-եգ» կամ պոռնիկ:

Ամեն մի նորմալ պարսիկ կին-մորը, անկախ կրոնական պատկանելությունից, ընտանեկան և անձնական դրությունից, քրոջ պես է ընդունում, իսկ երկրորդ տեսակին պատկանող կանանց՝ անասունի տեղ, որը նրա ներսում նողկանքի զգացում է առաջացնում:

Կանանց նկատմամբ վերաբերմունքի այդ բնագոյական հատկությունը շատ ուժեղ է մեր տղամարդկանց մոտ և ամեննին կախված չէ մեր գիտակցությունից:

Օրինակ՝ նույնիսկ եթե ինչ-որ ձևով ստացվեր այնպես, որ որևէ շրջանի ամենաջահել ու ամենագեղեցիկ կինը հայտնվեր նույն շրջանի որևէ պարսիկ տղամարդու անկողնում, ապա այդ պարսիկը, անգամ ամենամեծ ցանկության դեպքում (պայմանով, որ, կրկնում եմ, նա չի գտնվում ամփոփի կամ ալկոհոլի ազդեցության տակ) օրգանապես ունակ չի լինի նրա հետ վարվելու այնպես, ինչպես կվարվեր եգի հետ:

Նա այդ կնոջ հետ կվարվեր սեփական քրոջ պես. և նույնիսկ եթե այդ կինն ինքը օրգանական գործողություն կատարեր նրա նկատմամբ, ապա նա առավել ևս նրան կիղձար և կհամարեր, որ «չարքն է նրան զարկել», ուստիև կձգտեր հնարավոր ամեն ինչ անել, որ նրան օգնի փրկվելու այդ դժբախտությունից:

Եվ նույն այդ պարսիկ տղամարդը նորմալ պայմաններում երկրորդ տեսակի կնոջ, այսինքն՝ պոռնիկի հետ կվարվի, ինչպես եգի հետ, քանի որ, որքան էլ նա ջահել ու գեղեցիկ լինի, ինքը նրա նկատմամբ անխուսափելիորեն օրգանական նողկանք կզգա և չի կարողանա նրա հետ վարվել ինչպես կնոջ հետ, եթե նրա օրգանիզմ մուտք չեն գործել իմ թվարկած մարդու համար վնասակար թունավոր նյութերը:

Եվ այսպես, հարգելի դոկտոր, մինչև քսան տարեկանս, որպես սովորական նորմալ պարսիկ, ես ապրել եմ Պարսկաստանում՝ այդ բարոյական նորմերի ու ավանդույթների պայմաններում:

Քսան տարեկան հասակում, շնորհիվ ժառանգություն ստացած բաժնետոմսերի, ես դարձա մի մեծ ֆիրմայի բաժնետեր, որը պարսկական չիր էր արտահանում տարբեր եվրոպական հանրություններ:

Այդ ֆիրմայում իմ գրաված դիրքի և ինձնից անկախ տարբեր հանգամանքների բերումով ինձ վիճակվում էր գլխավոր տեղական ներկայացուցչի դեր կատարել Եվրոպա աշխարհամասի այն երկրներում, ուր արտահանվում էր այդ չիրը:

Ինչպես արդեն ձեզ ասել եմ, սկզբում ես մեկնեցի Ռուսաստան, հետո Գերմանիա, Իտալիա և այլ եվրոպական երկրներ, որից հետո վերջապես հայտնվեցի Ֆրանսիայում, որտեղ արդեն յոթ տարի է, ինչ ապրում եմ:

Բոլոր այս օտար երկրների կյանքում գոյություն չունի կանանց երկու տիպերի՝ կին-մոր և կին-պոռնիկի միջև այնպիսի հստակ զանազանում, ինչպիսին իմ պատանության տարիներին ես տեսել ու զգացել եմ իմ հարազատ երկրում:

Այս երկրներում ամենուրեք կանանց նկատմամբ վերաբերմունքը զուտ մտավոր է, այսինքն՝ միայն դատողական է, այլ ոչ օրգանական:

Օրինակ՝ այստեղ կինը որքան էլ անհավատարիմ լինի, ամուսինն այդ մասին երբեք չի իմանում, քանի դեռ չի տեսել, կամ չի լսել այդ մասին:

Իսկ մեզ մոտ՝ Պարսկաստանում, առանց աչքով տեսնելու կամ բամբասանք լսելու, ամուսինը կարող է բնագոյով ասել՝ կինը հավատարիմ է իրեն, թե ոչ. նույնը վերաբերում է նաև մեր կանանց, որոնք զգում են իրենց ամուսինների ամեն մի դավաճանությունը:

Ինչ վերաբերում է մարդկանց այդ առանձնահատուկ բնագոյական զգացողությանը, ապա Եվրոպա աշխարհամասի մի քանի գիտնականներ նույնիսկ այդ թեմայով շատ լուրջ հատուկ հետազոտություններ են կատարել մեզ մոտ:

Ինչպես պատահաբար բախտ ունեցա իմանալու, նրանք հանգել էին այն հստակ եզրակացությանը, որ ընդհանրապես այն վայրերում, որտեղ ընդունված է «բազմամուսնություն» կամ «բազմակնություն», այսինքն՝ տեղական կանոններով մի հոգուն թույլատրվում է «մեկից ավելի կին» կամ «մեկից ավելի ամուսին» ունենալ մարդիկ տղամարդկանց ու կանանց փոխհարաբերություններում ձեռք են բերում յուրահատուկ «հոգե-օրգանական» առանձնահատկություն:

Այդ հոգե-օրգանական գիծը նաև մեր պարսիկներն ունեն, քանի որ, ինչպես գիտեք, լինելով մահմեդական կրոնի հետևորդներ, մենք բազմակնության կողմնակից ենք, այսինքն՝ մեր օրենքը ամեն մի տղամարդու թույլ է տալիս ունենալ մինչև յոթ կին:

Իսկ մեր պարսիկների այդ հոգե-օրգանական գիծն այն է, որ նրա օրինական կանանցից ոչ մեկը դավաճանություն չի համարում, եթե իր ամուսինը կենակցում է իր մյուս կանանց հետ, այլ դավաճանություն է համարում այն, երբ ամուսինը դավաճանում է օտար կնոջ հետ:

Միայն հիմա է, հարգելի դոկտոր, որ, ապրելով այստեղ՝ Եվրոպայում, և տեսնելով այն ամենը, ինչ տեղի է ունենում ամուսինների ու կանանց միջև, ես լիարժեքորեն գնահատեցի մեր բազմակնությունը՝ որպես չափազանց խելամիտ մի սովորույթ, որը բարերար ազդեցություն է թողնում ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց վրա:

Թեև մեզ մոտ ամեն տղամարդու թույլատրվում է մի քանի կին ունենալ, այլ ոչ թե ընդամենը մեկը, ինչպես Եվրոպայում, որտեղ տիրապետող է քրիստոնեական կրոնը, որը թույլատրում է միայն մեկ կին ունենալ, սակայն մեր տղամարդկանց օրինապահությունն ու ազնվությունն իրենց կանաց նկատմամբ բոլորովին համեմատելի չէ այն օրինապահության ու ազնվության հետ, որոնք այստեղի տղամարդիկ դրսևորում են իրենց միակ կնոջ և ընդհանրապես իրենց ընտանիքի նկատմամբ:

Բավական է միայն, որ նայեք ձեր շուրջը և կտեսնեք, թե այստեղ ամենուրեք ինչեր են կատարվում:

Նայեցեք թեկուզ «Գրանդ Կաֆեի» այս դահլիճներին, որոնցում մշտապես ներկա գտնվող սովորական արհեստավարժ պոռնիկների ու «վարձու պարընկերների» հարևանությամբ սեղանների շուրջ նստած ուրախ զրուցում են հարյուրավոր տղամարդիկ և կանայք:

Այդ տղամարդկանց ու կանանց նայելով՝ երևի կասեք, թե դրանք ամուսնական գույգեր են, որոնք միասին եկել են այստեղ կամ Փարիզը տեսնելու համար, կամ էլ ինչ-որ ընտանեկան առիթով:

Բայց իրականում, ամենայն հավանականությամբ, «Գրանդ Կաֆեի» այս դահլիճներում իրար հետ ուրախ զրուցող այդ տղամարդկանց ու կանանց մեջ, որոնք պատրաստ են իրար հետ առանձնանալու մի որևէ հյուրանոցում, չկա մի գույգ, որ օրինական մարդ ու կին լինեն, թեև, հնարավոր է, որ նրանցից յուրաքանչյուրը թղթի վրա ունի օրինական ամուսին կամ կին:

Այստեղ եկած տղամարդու կամ կնոջ «օրինական կեսը» հավանաբար մնացել է գավառական իր տանը և հիմա մտածում ու հանգիստ ասում է իր ծանոթներին, թե իր «օրինական կինը» կամ օրինական «ամուսինը» գնացել է աշխարհի մայրաքաղաք Փարիզ, որ ընտանիքի համար կարևոր գնումներ անի, այնտեղ հանդիպում ունենա իրենց ընտանիքի համար շատ կարևոր մեկի հետ կամ դրա պես էլի ինչ-որ մի բան:

Բայց իրականում, որպեսզի հայտնվեին այստեղ, այդ չվող թռչունները մի ամբողջ տարի խարդավանքների են դիմել և մոգոնել ամեն տեսակի պատմություններ, որ իրենց օրինական կեսին համոզեն իրենց մեկնելու անհրաժեշտության մեջ. և հիմա այստեղ՝ իրենց նման խաբեբաների ու

խարդախների շրջապատում, հանուն և ի փառս «հարսանեկան բանաստեղծության» իմաստի, ներկայիս այս մեծ քաղաքակրթության նվաճած ամբողջ արտիստականությամբ նրանք տանը թողած իրենց «օրինական կեսերի» ձակատները զարդարում են «արտիստական վարպետությամբ կերտված եղջյուրներով»:

Ընտանեկան կյանքի՝ Եվրոպայում հաստատված կարգի հետևանքով հիմա արդեն այնպես է ստացվում, որ եթե տղամարդուն ու կնոջը միասին եք տեսնում և նկատում, որ նրանց զրույցում ուրախ նոտաներ են հնչում, իսկ դեմքերին ժպիտն է փայլում, ապա կարող եք լիովին համոզված լինել, որ շատ շուտով, եթե արդեն չեն արել, նրանք շատ մեծ հաջողությամբ իրենց օրինական կեսերի ձակատին մի գույգ մեծ ու հրաշալի պոզեր կկայցնեն:

Հետևաբար, այստեղ ամեն մի փոքր-ինչ խորամանկություն ունեցող մարդ արդեն կարող է համարվել «հարգարժան մարդ» և «նահապետական ընտանիքի հայր»:

Նրա շրջապատում ոչ մեկի հոգը չէ, որ այդ «հարգարժան» և «նահապետական ընտանիքի հայր» կոչվածը միևնույն ժամանակ, եթե, իհարկե, միջոցները թույլ են տալիս, կողքից ուզածիդ չափ սիրուհիներ ունի. ընդհակառակը՝ շրջապատիներն այստեղ սովորաբար ավելի շատ են հարգում նման մարդուն, քան նրան, ով բոլորովին չի կարող «սիրուհիներ» ունենալ:

Այստեղի այդ միջոցներ ունեցող «հարգարժան ամուսիններն» իրենց օրինական կնոջից բացի կողքից ունեն ոչ թե յոթ, այլ երբեմն յոթ անգամ յոթ «անօրինական կին»:

Իսկ այն եվրոպացի ամուսինները, որոնք միջոցներ չունեն իրենց օրինական կնոջից բացի ևս մի քանի անօրինական կանայք ունենալու համար, համարյա միշտ, ինչպես ասում են, «թուքները կուլ են տալիս», այսինքն՝ ամբողջ օրերով աչք են ածում ամեն հանդիպած կնոջը և, այսպես ասած, «աչքերով ուտում են» նրան:

Այլ կերպ ասած՝ նրանք իրենց օրինական կնոջն անհաշիվ անգամ դավաճանում են իրենց մտքերով ու զգացմունքներով:

Սակայն Պարսկաստանում, թեև տղամարդը կարող է մինչև յոթ կին ունենալ, նրա մտքերն ու զգացմունքներն օր ու գիշեր զբաղված են լինում նրանով, որ կարողանա լավագույն ձևով դասավորել իր ունեցած օրինական կանանց ներքին ու արտաքին կյանքը. իսկ վերջիններս էլ իրենց հերթին նրանով են տարված և նմանապես օր ու գիշեր ջանում են հնարավոր ամեն ինչ անել, որ նրան օգնեն կատարելու իր կենսական պարտականությունները:

Իսկ այստեղ կնոջ և ամուսնու ներքին փոխհարաբերությունները միատեսակ են. ինչպես ամուսնու համարյա ամբողջ ներքին կյանքն է ծախսվում այն բանի վրա, որ անհավատարիմ լինի իր միակ կնոջը, այնպես էլ նրա միակ կնոջ ներքին կյանքն է ամուսնության հենց առաջին օրվանից մշտապես շեղվում ընտանիքից դեպի դուրս:

Որպես կանոն, եվրոպացի կինը հենց որ ամուսնանում է, նրա ներքին կյանքի համար ամուսինը դառնում է, ինչպես իրենք են ասում, «նրա սեփականությունը»:

Առաջին գիշերվանից հետո, վստահ լինելով իր այդ սեփականության հարցում, կինը սկսում է իր ներքին կյանքը նվիրել «ինչ-որ բանի» որոնմանը, այսինքն՝ այն անորոշ «իդեալի» որոնմանը, որը վաղ հասակից աստիճանաբար ձևավորվում է ամեն մի եվրոպացի աղջկա ներսում այն նշանավոր «դաստիարակության» հետևանքով, որը նրանց համար անընդհատ հորինում են ժամանակակից անամոթ գրողները:

Եվրոպական այդ երկրներում գտնվելուս ընթացքում ես նկատել եմ, որ այնտեղ կնոջ էության մեջ երբեք չի կազմավորվում այն «ինչ-որ բանը», որը նրա ներսում, ինչպես մեր կանանց մեջ, կպահպաներ, այսպես կոչված, «օրգանական ամոթը», կամ ծայրահեղ դեպքում՝ գոնե դրա նկատմամբ հակվածությունը, որի վրա, ինչպես ես եմ կարծում, հիմնված է այն, ինչը «կնոջ պարտք» է անվանվում, և հենց որն էլ նրան օգնում է ձեռնպահ մնալ այն արարքներից, որոնք կնոջը անբարո են դարձնում:

Ահա թե ինչու այստեղ ամեն մի կին կարող է շատ հասարակ ձևով ամեն պահի, առանց տառապելու ու խղճի խայթ զգալու, դավաճանել իր օրինական ամուսնուն:

Իմ կարծիքով՝ հենց այդ ամոթի բացակայության պատճառով է, որ այստեղ՝ Եվրոպայում, կին-մորն ու կին-պոռնիկին բաժանող գիծն աստիճանաբար դադարել է գոյություն ունենալ, և այդ երկու տեսակի կանայք արդեն վաղուց ձուլվել են մեկի մեջ. այնպես որ ներկայումս այստեղի տղամարդկանց ո՛չ մտքերում, ո՛չ զգացմունքներում չի պահպանվել կանանց երկու տեսակի բաժանելու այն կարողությունը, որով օժտված է համարյա յուրաքանչյուր պարսիկ:

Այստեղ կին-մորն ու կին-եգին կարող են իրարից տարբերել միայն այն բանից հետո, երբ նրանց արարմունքները տեսնում են սեփական աչքերով:

Ընտանեկան կյանքի եվրոպական պայմաններում բազմակնության ինստիտուտի բացակայության պատճառով (որն, իմ կարծիքով, վաղուց պետք է այստեղ մտցված լիներ, թեկուզև այն պարզ պատճառով, որ, ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, կանանց թվաքանակը զգալիորեն գերազանցում է տղամարդկանց թվաքանակին) առաջացել են հազարավոր այլ անհարմարություններ ու անվայելչություններ, որոնք կարող էին և բոլորովին չառաջանալ:

Այսպիսով, հարգելի դոկտոր, իմ երկրորդ արատի գլխավոր պատճառը եղել է այն, որ ես՝ բարոյական ավանդույթներով ծնված ու մեծացած, որոնք կատարելապես հակառակ են այստեղ տիրող բարքերին, այստեղ եմ եկել մի տարիքում, երբ առանձնապես ուժեղ են արտահայտվում տղամարդու կենդանական բնագոյները: Այդտեղից բխող դժբախտությունն անձամբ ինձ համար ի հայտ է եկել գլխավորապես այն բանի պատճառով, որ ես այստեղ եմ եկել դեռևս շատ ջահել տարիքում և այստեղի չափանիշներով գեղեցիկ էի համարվում. և շնորհիվ իմ իսկական հարավային խառնվածքի՝ այստեղի շատ կանայք, որոնց համար ես նոր ու յուրօրինակ տեսակի արու էի, իսկական որս սկսեցին հանուն ինձ:

Նրանք ինձ հետապնդում էին՝ որպես «խոշոր թռչնի»:

Եվ ես նրանց համար խոշոր թռչուն էի ոչ միայն որպես իսկական հարավցու առանձնահատուկ տեսակ, այլ նաև այն պատճառով, որ աչքի էի ընկնում կանանց նկատմամբ ունեցած մեղմությամբ ու փափկանկատությամբ՝ որակներ, որոնք վաղ մանկությունից ներմուծվել էին իմ մեջ մեր պարսիկ կին-մայրերի հետ շփվելիս:

Երբ ես եկա այստեղ և սկսեցի ծանոթանալ կանանց հետ, ես, իհարկե, թեև ինքս չէի գիտակցում դա, փափուկ ու նրբանկատ էի նաև նրանց նկատմամբ:

Այդպիսով, ծանոթանալով այստեղի կանանց հետ և նրանց հետ սկզբնական շրջանում զրուցելով գլխավորապես ժամանակակից քաղաքակրթության և, այսպես ասած, նրանց երկրների համեմատությամբ մեր Պարսկաստանի հետամնացության թեմաներով, այնուհետև, իհարկե, ալկոհոլի ազդեցության տակ, ինչն օգտագործում էի բավական մեծ քանակությամբ, ստորացա առաջին անգամ, այսինքն, որպես ընտանիքի ապագա հայր՝ ստորություն գործեցի:

Թեև այն ժամանակ դա ինձ մեծ տառապանքներ ու խղճի խայթոցներ պատճառեց, սակայն շրջապատի և կրկին նույն այդ ալկոհոլի ազդեցությունը ստիպեցին ստորություն գործել երկրորդ անգամ, և դրանից հետո ամեն ինչը, ինչպես ասում են, թեք հարթությամբ ցած սահելով, հանգեց նրան, որ ես հիմա, ըստ էության, այդ առումով բավականին կեղտոտ անասուն եմ դարձել:

Ներկայումս, հատկապես այն ժամանակ, երբ լրիվ ազատ եմ լինում ալկոհոլի ազդեցությունից, ես բարոյապես տառապում եմ և իմ ողջ էությամբ արհամարհում ինքս ինձ. այդպիսի պահերին ես ավելի եմ շտապում կրկին ընկնել ալկոհոլի ազդեցության տակ, որպեսզի մոռացության մեջ ընկնեմ և այդ եղանակով վերջ տամ իմ տառապանքներին:

Այն բանից հետո, երբ այդպիսի կյանքով ապրեցի իմ թվարկած եվրոպական երկրներում, ես վերջիվերջո հանգրվանեցի Փարիզում՝ հենց այն եվրոպական քաղաքում, ուր կանայք մեկնում են Եվրոպայի բոլոր ծայրերից և մյուս աշխարհամասերից՝ ակնհայտորեն մտադրություն ունենալով «եղջյուրներ դնել» իրենց օրինական երկրորդ կեսերի ճակատներին: Եվ հենց այստեղ՝ Փարիզում, ես վերջնականապես հանձնվեցի մարդկային այդ երկու արատներին՝ ալկոհոլին և, ինչպես Դուք ասացիք, փեշերի հետևից վազելուն, և անիմաստ թրև եմ գալիս աջ ու ձախ: Եվ հիմա այդ երկու արատներին հազուրդ տալն ինձ համար ավելի անհրաժեշտ է դարձել, քան քաղցը հագեցնելը:

Ահա այսպես է եղել ամեն ինչ մինչև հիմա, իսկ թե հետո ինչ կլինի, ես չգիտեմ ու չեմ ուզում իմանալ:

Անգամ ես ինքս ինձ հետ միշտ կռիվ եմ տալիս և հնարավոր ամեն ինչ անում, որ այդ մասին չմտածեմ»:

Այս վերջին բառերն ասելուց հետո նա անկեղծ թառանչ քաշեց ու շվարած կախեց գլուխը: Իսկ ես, նրան հարցրի.

«Բայց, ասա՛ ինձ խնդրեմ, դու իրո՞ք չես վախենում այն ահավոր հիվանդություններով վարակվելուց, որոնցով սովորաբար տառապում են այն կանայք, որոնց հետևից քարշ են քալիս քեզ նմանները, որոնք թուլություն ունեն կանանց նկատմամբ»:

Իմ այդ հարցից հետո նա կրկին խոր հառաչեց և ոչ մեծ լռությունից հետո ինձ պատմեց հետևյալը.

«Է՛հ, պատվարժա՛ն դոկտոր... Վերջին տարիներին ես շատ երկար եմ մտածել այդ հարցի շուրջ: Այն վաղուց է ինձ համար այնպիսի հետաքրքրության առարկա դարձել, որ որոշակի իմաստով մի բարեշնորհ միջոցի է վերածվել, որի ազդեցությամբ իմ ներքին «զգվելի կյանքը», անկախ ամեն ինչից, ընթացել է քիչ թե շատ տանելի կերպով:

Քանի որ բժիշկ եք, հավանաբար Ձեզ համար շատ հետաքրքիր կլինի իմանալը, թե ինչպես և ինչու է մի քանի տարի առաջ այդ հարցն այդքան շատ հետաքրքրել ինձ, և թե ես ինչ եզրակացության հանգեցի այն բանից հետո, երբ, համեմատաբար նորմալ վիճակում գտնվելով, լրջորեն զննեցի և ուսումնասիրեցի այն:

Մոտ ինը տարի առաջ ես մի այնպիսի ճնշվածության նոպայի մեջ ընկա, որ նույնիսկ ակոհողը չէր ազդում ու չէր հանգստացնում իմ հոգեկան վիճակը:

Եվ այնպես պատահեց, որ հենց այդ ժամանակ ես հաճախ էի հանդիպում իմ որոշ ծանոթների ու ընկերների, որոնք շատ էին խոսում այդ կեղտոտ հիվանդությունների ու դրանցով հեշտությամբ վարակվելու վտանգի մասին:

Այդ խոսակցություններից հետո ես ինքս էլ սկսեցի բավական հաճախ մտածել իմ մասին և կամաց-կամաց սկսեցի համարյա հիստերիկ կնոջ պես անհանգստանալ սեփական առողջությանս համար:

Ես հաճախ էի մտորում այն մասին, որ համարյա միշտ հարբած լինելով և գործ բռնելով այդպիսի վարակված կանաց հետ՝ ակներևաբար, եթե նույնիսկ առայժմ այդ հիվանդությունների հստակ ախտանիշները չունեմ, ամենայն հավանականությամբ պիտի որ արդեն վարակված լինեմ դրանցից մեկով:

Այդ մտորումներից հետո ես նախ խորհրդակցեցի տարբեր մասնագետների հետ, որպեսզի պարզեմ, թե ինչպիսի վաղ ախտանշաններ են ունենում այն հիվանդությունները, որոնցից մեկով գուցե արդեն վարակվել եմ:

Թեև տեղացի մասնագետներից ոչ մեկն ինձ մոտ նման բան չգտավ, այնուամենայնիվ ես շարունակում էի կասկածել, քանի որ մի կողմից՝ անհանգստացած էի առողջությանս համար, և մյուս կողմից՝ սեփական առողջ դատողությունս շարունակում էր ինձ համոզել, թե անկասկած ես արդեն վարակված եմ այդ ահավոր հիվանդություններից որևէ մեկով:

Այդ ամենն ինձ բերեց այն մտքին, որ ամեն գնով այստեղ՝ Փարիզում խորհրդակցեմ այս անգամ արդեն Եվրոպայի առաջատար մասնագետների հետ: Ես կարող էի ինձ նման բան թույլ տալ, քանի որ ընթացող Համաշխարհային պատերազմի պատճառով, երբ ամենուրեք տրանսպորտի միջոցները շարքից դուրս էին եկել, և բոլոր սննդամթերքների գները բարձրացել էին, մեր ֆիրման, ամեն տեղ իր պահեստներում չրի մեծ պաշարներ ունենալով, այդ տարի զգալիորեն ավելի մեծ շահույթ ստացավ, որի բավական մեծ մասը բաժին հասավ ինձ:

Երբ ես կանչեցի եվրոպացի այդ նշանավոր մասնագետներին, նրանք իրենց մանրակրկիտ հետազոտություններից և միայն իրենց հայտնի, այսպես կոչված, «քիմիական անալիզներից» հետո միաձայն հայտարարեցին, որ իմ օրգանիզմում որևէ վնասակար հիվանդության ամենափոքր նշույլ անգամ չկա:

Թեև նրանց այդ եզրակացությունը վերջ տվեց առողջությանս համար իմ խրոնիկական անհանգստությանը, սակայն այնպես խթանեց իմ հետաքրքրասիրության զգացումը և ցանկությունը, որ պարզեմ այդ հարցը, որ դրանից հետո այն ինձ համար մի տեսակ մոլուցք դարձավ, յուրահատուկ «սևեռուն գաղափար»:

Եվ այդ ժամանակից սկսած՝ այդ հիվանդություններին վերաբերող ամեն ինչի լուրջ դիտարկումներն ու հետազոտությունները վերակենդանացրին ու արդարացրին այն, ինչը ես անվանում էի «իմ զգվելի կյանք»:

Իմ կյանքի այդ շրջանում իմ բոլոր այդ դիտումներն ու հետազոտությունները ես միշտ կատարում էի իմ ամբողջ ներքին «Ես»-ով՝ հարբած, կիսահարբած, ինչպես և սթափ վիճակում:

Ամեն ինչից զատ, ես այն ժամանակ նաև եռանդուն կերպով կարդում էի այդ հիվանդություններին վերաբերող այստեղ՝ Եվրոպայում առկա ամեն տեսակի գրականություն, ընդ որում այդ հարցին նվիրված գրքերի մեծ մասը գրված էին ֆրանսերեն և գերմաներեն:

Դա ինձ համար դժվար չէր, քանի որ, ինչպես տեսնում եք, ես ֆրանսերենին տիրապետում եմ այնպես, որ հազիվ թե որևէ մեկը գլխի ընկնի, որ ես իսկական ֆրանսիացի մտավորական չեմ, իսկ

գերմաներենին նույնպես լավ եմ տիրապետում, քանի որ բավական երկար ժամանակ ապրել եմ Գերմանիայում և միշտ, անելիք չունենալով, ազատ ժամանակս նվիրում էի նրանց լեզուն ու գրականությունն ուսումնասիրելուն:

Այնպես որ այդ հարցով իմ հետաքրքրությունը բավարարելու համար ես կարող էի ծանոթանալ այն ամբողջ գիտելիքին, որ ժամանակակից քաղաքակրթությունն ունի այդ վեներական հիվանդությունների վերաբերյալ:

Թվում էր, այդ գրականության մեջ հարյուրավոր տեսություններ ու վարկածներ կան այդ վեներական հիվանդություններով վարակվելու պատճառների վերաբերյալ, սակայն դրանց մեջ ես չկարողացա ոչ մի համոզիչ բացատրություն գտնել, թե ինչպես և ինչու են որոշ մարդիկ վարակվում այդ հիվանդություններով, իսկ մյուսները՝ ոչ, և շուտով համոզվեցի, որ ներկայումս այդ հարցի վերաբերյալ Եվրոպայում եղած գիտելիքների օգնությամբ ես չեմ կարող դա պարզել:

Ամբողջ այդ գրականությունից (իհարկե, եթե մի կողմ թողնենք և նույնիսկ չհիշատակենք այն հաստատվող «գիտական աշխատությունների» բազմությունը, որոնց բովանդակությունից ամեն մի քիչ թե շատ նորմալ մարդու համար պարզ է դառնում, որ դրանք գրել են այնպիսի մարդիկ, որոնք այդ հարցում, ինչպես ասում են, «լրիվ անգետ են», այսինքն՝ ամեննին մարդկային հիվանդությունների մասնագետ չեն) ես ընդհանուր տպավորություն ստացա, որ մարդիկ վարակվում և հիվանդանում են վեներական հիվանդություններով միայն իրենց անմաքրասիրության պատճառով:

Երբ ես հանգեցի այդ վերջնական եզրակացությանը, ինձ այլ բան չէր մնում, քան իմ ուշադրությունը կենտրոնացնել այն բանի վրա, որ պարզեմ, թե իրապես ինչով է արտահայտվում իմ մաքրասիրությունը, որը մինչև հիմա ինձ պաշտպանել է այդ վարակից:

Այն ժամանակ ես սկսեցի դատել հետևյալ կերպ:

Ես ավելի մաքուր չեմ հագնվում, քան այստեղ՝ Եվրոպայում ապրող մյուսները. բոլոր մյուսների պես առավոտյան լվանում եմ ձեռքերս ու երեսս. Շաբաթը մեկ անգամ բոլորի նման անպայման գնում եմ համամ: Այդպես մոտիկ ես շատ բան գցեցի-բռնեցի և արդյունքում չգտա մի բան, որով ես բացառություն լինեի, և միայն փաստը մնում էր փաստ, որ իմ նողկալի կյանքի պայմաններում, իհարկե, ես ավելի մեծ հավանականություն եմ ունեցել վարակվելու, քան ուրիշ որևէ մեկը:

Այդ ժամանակից սկսած՝ իմ մտքերն առաջնորդվում էին երկու որոշակի համոզմունքներով, որոնք լիովին հաստատված էի համարում. նախ՝ ամեն ոք, ով կենակցում է այդպիսի կականց հետ, վաղ թե ուշ անխուսափելիորեն պետք է վարակվի, և երկրորդ՝ միայն մաքրակենցաղությունը կարող է պաշտպանել այդ հիվանդություններից:

Այդ ոգով ես շարունակեցի մտորել մի ամբողջ շաբաթ մինչև հիշեցի իմ մի սովորության մասին, որն այստեղ՝ Եվրոպայում, ես խնամքով թաքցնում էի իմ ծանոթներից. այն է՝ ես հիշեցի իմ այն սովորությունը, որը մեզ մոտ՝ Պարսկաստանում, աբդասթ են անվանում:

Աբդասթի սովորույթը, որն այստեղի տերմիններով կարելի է լվացում անվանել, մեզ մոտ՝ Պարսկաստանում, գլխավոր սովորույթներից մեկն է:

Խիստ ասած՝ մահմեդական կրոնի ամեն մի հետևորդ պետք է պահպանի այդ սովորույթը, թեև խստորեն այն պահպանում են միայն շիիթական աղանդի մուսուլմանները. և քանի որ Պարսկաստանում հիմնականում շիիթներ են բնակվում, ապա այդ սովորույթը ոչ մի տեղ այնքան լայնորեն տարածված չէ, ինչքան մեզ մոտ՝ Պարսկաստանում:

Համաձայն այդ սովորույթի՝ շիիթական աղանդի յուրաքանչյուր հետևորդ՝ լինի դա կին, թե տղամարդ, «գուգարանից» օգտվելուց հետո պետք է լվանա իր սեռական օրգանները: Այդ նպատակով յուրաքանչյուր ընտանիք ունի իր պիտույքները, որոնք մեզ մոտ նույնիսկ ամենակարևորներն են համարվում. դրանցից մեկը հատուկ մի աման է՝ կուժ, որն «իբրիկ» է կոչվում: Որքան ընտանիքը հարուստ է, այնքան այդ կժերից շատ պետք է ունենա, քանի որ տուն մտած յուրաքանչյուր նոր հյուրի պետք է անմիջապես դրանից մի հատ անպայման հատկացվի:

Վաղ մանկությունից ես ինքս էլ եմ վարժվել այդ սովորույթին, և աստիճանաբար այն այնքան է ամրացել իմ առօրյա կյանքում, որ նույնիսկ երբ եկա այստեղ՝ Եվրոպա, որտեղ նման սովորույթ չկա, ես մի օր անգամ չէի կարողանում դիմանալ առանց այդ լվացումը կատարելու:

Օրինակ՝ ինձ համար անհամեմատ հեշտ էր երեսս չլվանալն ու նույնիսկ կոնծաբանությամբ չգրադվելը, քան թե գուգարանից օգտվելուց հետո իմ մարմնի որոշակի մասերը սառը ջրով չլվանալը:

Ներկայումս ապրելով այստեղ՝ Եվրոպայում՝ ես ոչ միայն ստիպված եմ հաշտվել իմ այդ սովորության հետ կապված շատ անհարմարությունների հետ, այլև նույնիսկ ստիպված եմ հրաժարվել որոշ ժամանակակից հարմարավետություններից, որոնք հեշտությամբ կարող էի ինձ թույլ տալ:

Օրինակ՝ ես հիմա ապրում եմ Փարիզում, որտեղ իմ միջոցներն ինձ թույլ են տալիս ապրելու բոլոր ժամանակակից հարմարավետություններն ունեցող լավագույն հյուրանոցում, սակայն իմ այդ սովորության պատճառով ես չեմ կարող դա անել, այլ պետք է ապրեմ ինչ-որ մի կեղտոտ հյուրանոցում, որը հեռու է գտնվում «կենտրոնից» ու բոլոր այն վայրերից, որտեղ համարյա ամեն օր պետք է լինեմ:

Այն հյուրանոցում, որտեղ հիմա ես ապրում եմ, ոչ մի հարմարություն չկա, բացի մեկից, որն ինձ համար ամենակարևորն է. բանն այն է, որ քանի որ այդ հյուրանոցը հին տիպի կառույց է, ապա դրա «արտաքնոցները» նույնպես հին տիպի են, այլ ոչ թե ժամանակակից ամերիկացների նոր հորինվածքի տիպի, և այդ հին համակարգն առավել հարմար է իմ սովորությանը:

Միանգամայն հնարավոր է, որ ես նույնիսկ կհսագիտակցաբար հենց Ֆրանսիան եմ ընտրել որպես իմ մշտական բնակության գլխավոր վայր այն պատճառով, որ այստեղ ամենուրեք, հատկապես գավառներում, դեռևս կարելի է գտնել հին համակարգի այնպիսի գուգարաններ, ինչպիսիք կան մեզ մոտ՝ Պարսկաստանում:

Եվրոպայի մյուս երկրներում այդպիսի, ինչպես հիմա են ասում, «ասիական համակարգ» արդեն համարյա գոյություն չունի: Այն համարյա ամենուրեք փոխարինվել է ամերիկյան համակարգի հարմարավետ ու ողորկ «բազկաթոռներով», որոնց վրա անձամբ ես միայն կարող եմ հանգստանալ և «Դեկամերոն» կարդալ:

Եվ ահա, իմ հարգելի՛ դոկտոր, երբ ես հանկարծ հիշեցի իմ այդ սովորության մասին, անմիջապես առանց որևէ կասկածի հասկացա, որ եթե մինչև այժմ ես խուսափել եմ որևէ կեղտոտ հիվանդությամբ վարակվելուց, ապա բացառապես այն պատճառով, որ ես իմ սեռական օրգանները հաճախակի լվանում եմ սառը ջրով:

Այս վերջին բառերն ասելուց հետո այդ համակրելի պարսիկ երիտասարդը ձեռքերը վեր տնկեց և իր ողջ էությանբ բացականչեց.

«Թող հավերժ օրհնյալ լինեն նրանք, ովքեր մեր մեջ հաստատել են այդ բարի սովորությունը»:

Դրանից հետո նա երկար ժամանակ ոչինչ չէր խոսում՝ մտածկոտ նայելով ոչ հեռու նստած ամերիկացիների խմբին, որոնք այդ պահին քննարկում էին այն հարցը, թե Ամերիկայում են կանայք ավելի լավ հագնվում, թե՞ Եվրոպայում. հետո հանկարծ շրջվեց իմ կողմը և ասաց հետևյալը.

«Մեծարգո՛ և պատվելի՛ դոկտոր... Ձեզ հետ ունեցած իմ ծանոթության ընթացքում ես լիովին համոզվեցի, որ Դուք շատ կրթված եք և, ինչպես ասում են, բավական կարդացած:

Ուրեմն բարի եղեք հայտնել ինձ Ձեր հեղինակավոր կարծիքը, որպեսզի վերջապես ես կարողանամ հասկանալ և լուծել մի խնդիր, որը վերջին տարիներին շատ է գրգռում իմ հետաքրքրասիրությունը, և որը, երբ ես համեմատաբար սթափ եմ լինում, հաճախ ծագում է իմ մեջ և խանգարում իմ մտքերին:

Բանն այն է, որ, ապրելով այստեղ՝ Եվրոպայում, որտեղ հաստատված կրոնի հետևորդները աշխարհի կեսն են զբաղեցնում, ես մինչև հիմա նրանց սովորական կյանքում ոչ մի լավ սովորությո՜ն չեմ տեսել, մինչդեռ մենք՝ մահմեդական կրոնի հետևորդներս, դրանցից շատ ունենք:

Բանն ի՞նչ է, ո՞րն է դրա պատճառը: Մի՞թե այդ մեծ կրոնի Հիմնադիրը համապատասխան ցուցումներ չի նախատեսել իր հետևորդների սովորական կյանքի համար...»:

Եվ ահա, զավա՛կս, քանի որ այդ պարսիկ երիտասարդը մեր ծանոթության ընթացքում շահել էր իմ համակրանքը, ապա ես չէի կարող նրա խնդրանքը մերժել և որոշեցի նրան բացատրել դա, բայց, իհարկե, այնպես, որ նա գլխի չընկնի, թե ով եմ ես, և ինչպիսին է իմ իրական բնույթը:

Ես նրան ասացի.

«Դու ասում ես, թե այն կրոնում, որի հետևորդները աշխարհի կեսն են կազմում, և հավանաբար ի նկատի ունես «քրիստոնեությունը», չկան այնպիսի լավ սովորությո՜ներ, ինչպես ձեր մուսուլմանական կրոնում:

Արդյո՞ք իրականում այդպես է. ընդհակառակը՝ այդ կրոնում անհամեմատ ավելի շատ լավ սովորությո՜ներ կային, քան ներկայիս մյուս կրոններից որևէ մեկում: Ոչ մի ուրիշ հին կրոնական

ուսմունքում այնքան շատ լավ ցուցումներ չեն տրված սովորական առօրյա կյանքի համար, որքան հենց այդ ուսմունքում, որի վրա հիմնվել է այդ քրիստոնեական կրոնը:

Իսկ որ այդ մեծ կրոնի հետևորդները, հատկապես միջնադարյան «եկեղեցու հայրերը», աստիճանաբար այդ կրոնի հետ սկսել են վարվել այնպես, ինչպես «Կապույտ Սորունքն» իր կանանց հետ, որը ծաղրի առարկա էր դարձնում նրանց և փչացնում նրանց ամբողջ գեղեցկությունն ու հմայքը, դա արդեն բոլորովին ուրիշ բան է:

Ընդհանուր առմամբ դու պետք է իմանաս, որ բոլոր մեծ կրոնները, որոնք մինչև այժմ գոյություն ունեն և ստեղծված են, ինչպես պատմությունն է վկայում, իրենց *մաքուր բանականության* կատարելագործման առումով հավասար բարձրության հասած մարդկանց կողմից, միշտ հիմնված են միևնույն ճշմարտությունների վրա: Այդ կրոնների տարբերությունը միայն նրանց սահմանած որոշակի մասնավոր բաների ու, այսպես կոչված, ծեսերի պահպանման կանոնների մեջ է, իսկ այդ տարբերությունն այդ կանոնները հիմնադրողների կողմից միտումնավոր հարմարեցման արդյունքն են, որպեսզի դրանք համապատասխանեն տվյալ դարաշրջանում ապրող մարդկանց մտավոր կատարելության աստիճանին:

Բոլոր նոր ուսմունքների հիմքում, որի վրա հիմնվում է կրոնը, միշտ կարելի է գտնել կարծրատիպեր, որոնք փոխ են առնված նախկին կրոններից և արդեն լավ ամրապնդված են ժողովրդի կյանքում:

Եվ այդ առումով լիովին ճիշտ է վաղուց ի վեր ժողովրդի մեջ տարածում գտած այն ասացվածքը, որ «աշխարհիս երեսին ոչ մի նոր բան չկա»:

Այդ կրոնական ուսմունքներում նոր են լինում, ինչպես ասացի, միայն ոչ մեծ մանրամասներ, որոնք կրոնների մեծ հիմնադիրները միտումնավոր կերպով հարմարեցնում են տվյալ դարաշրջանի մարդկանց մտավոր կատարելության աստիճանին: Այդպիսով, այն վարդապետության հիմքում, որի վրա կառուցված է քրիստոնեական կրոնը, ընկած է ավելի վաղ գոյություն ունեցած մի մեծ ուսմունք, որին ներկայումս հուդաիզմ են ասում, և որի հետևորդները նույնպես իր ժամանակին, ինչպես ասում են, «աշխարհի կեսն էին կազմում»:

Այդ հուդայական ուսմունքը որպես հիմք վերցնելով՝ քրիստոնեական կրոնի հիմնադիրները փոխել են միայն դրա արտաքին որոշ մանրամասներ, որ դրանք ավելի լավ համապատասխանեն Հիսուս Քրիստոսի ժամանակակիցների մտավոր զարգացածության աստիճանին, և դրանցում հաջողությամբ նախատեսել են ժողովրդի բարօրության համար անհրաժեշտ ամեն ինչը:

Ամեն ինչ նախատեսված էր, ինչպես ասում են, և՛ հոգու, և՛ մարմնի համար. և այդ կրոնը նույնիսկ բոլոր անհրաժեշտ կանոններն էր տալիս մարդկանց խաղաղ ու երջանիկ գոյատևման համար: Եվ այդ ամենը չափազանց իմաստուն կերպով այնպես էր նախատեսված, որ այդ կրոնը պիտանի լինի նաև անհամեմատ ավելի ուշ դարաշրջանների մարդկանց համար:

Եթե այդ կրոնի վարդապետությունն անփոփոխ մնար, ապա հավանաբար այն պիտանի կլիներ նաև ժամանակակից մարդկանց համար, որոնց, իմիջայլոց, մեր մոլլա Նասրեդինը բնորոշում է այսպես. «չի թարթի, մինչև գերանը աչքը չմտցնես»:

Սկզբնավորման շրջանում, բացի սովորական գոյատևման համար հատուկ սահմանված կանոններից, որոնք համապատասխանում էին Հիսուս Քրիստոսի ժամանակակիցների պահանջմունքներին, քրիստոնեական կրոնի մեջ մտցվել են նաև շատ հրաշալի սովորույթներ, որոնք արդեն կային և շատ լավ ամրապնդվել էին հուդայական կրոնին հետևող մարդկանց կյանքում:

Նույնիսկ այն լավ սովորույթները, որոնք հիմա կան ձեր մահմեդական կրոնում, ձեզ են անցել հուդայական կրոնից: Թեկուզ վերցնենք, օրինակ, քո հիշատակած «սունաթը» կամ թլփատումը: Այդ սովորույթը քրիստոնեական կրոնում նույնպես սկզբում կար, պարտադիր էր համարվում և խստորեն պահպանվում դրա բոլոր հետևորդների կողմից: Միայն հետագայում է այդ սովորույթը շատ արագ ու հանկարծակի չքացել քրիստոնեական կրոնից:

Եթե ուզում ես, իմ ջահել՝ ընկեր, ես քեզ մանրամասն կպատմեմ այդ սովորույթի ծագման մասին, և դու կհասկանաս, թե ինչու է մարդկանց առողջության ու նորմալ կյանքի համար օգտակար այդ սովորույթը մտցվել հուդայական կրոնի մեջ, որի վարդապետությունն էլ իր հերթին հիմք է ծառայել քրիստոնեական կրոնի համար:

Այդ սովորույթը, որը դուք հիմա սունիաթ եք անվանում, առաջինը ստեղծել և հուդայական կրոնական վարդապետության մեջ է մտցրել մեծն Մովսեսը:

Իսկ թե ինչու է մեծն Մովսեսն այդ սովորույթը մտցրել հուդայական ժողովրդի կրոնի մեջ, ես իմացա մի շատ հինավուրց հալդական ձեռագիր մատյանից:

Այդ հալդական ձեռագիր մատյանում ասված էր, որ երբ մեծն Մովսեսը հուդայական ժողովրդի առաջնորդն էր և նրան Եգիպտոսից առաջնորդում էր դեպի Քանանի երկիրը, ճանապարհին պարզեց, որ Վերսից իրեն վստահված ժողովրդի պատանիների ու երեխաների միջավայրում շատ է տարածվել մի հիվանդություն, որն այն ժամանակ «մուռտառդեն» էին կոչում, իսկ ժամանակակից մարդիկ դա կոչում են ձեռնաշարժություն:

Այնուհետև այդ ձեռագիր մատյանում ասված էր, որ այդ փաստն արձանագրելուց հետո մեծն Մովսեսը շատ է անհանգստացել և դրանից հետո սկսել է ուշադիր դիտարկումներ անել, որպեսզի պարզի այդ չարիքի պատճառը և մի միջոց գտնի այն արմատախիլ անելու համար:

Այդ դիտարկումների արդյունքում իր նմանը չունեցող այդ իմաստունը հետագայում գիրք է գրել «Տղունը Տես Նալու Բան»⁵⁴ վերնագրով, որը ժամանակակից լեզվով նշանակում է «Իմ մտորումների Բուն էությունը»:

Այդ հրաշալի գրքի բովանդակությանը ևս ինձ մի անգամ բախտ է վիճակվել ծանոթանալու:

Այդ մուռտառդեն կոչվող հիվանդության բացատրության սկզբում ամեն ինչից զատ նաև ասված էր, որ Մեծ Բնությունը մարդու օրգանիզմն այնպիսի կատարելության է հասցրել, որ բացարձակապես բոլոր օրգանները պաշտպանված են ամեն տեսակի արտաքին աղտեղություններից, և, հետևաբար, եթե մարդկանց ինչ-որ մի օրգանը ճիշտ չի գործում, ապա դրանում հենց մարդիկ են մեղավոր՝ առօրյա կյանքի իրենց իսկ հաստատած պայմանների հետևանքով:

Իսկ ինչ վերաբերում է երեխաների մոտ այդ մուռտառդեն հիվանդության առաջացման բուն պատճառներին, ապա այդ աննման գրքի 6-րդ գլխի 11-րդ պրակում ասված է, որ այդ հիվանդությունը երեխաների մոտ առաջանում է հետևյալ պատճառներով:

Մարդկային օրգանիզմում առաջացող և աստիճանաբար դրանից արտագատվող որոշակի նյութերի շարքում կա մեկը, որը «կուլնաբո»⁵⁵ է կոչվում:

Ընդհանրապես էակների օրգանիզմներում այդ նյութն առաջանում է, որպեսզի չեզոքացնի ուրիշ, նույնպես որոշակի նյութեր, որոնք անհրաժեշտ են սեռական օրգանների աշխատանքի համար. այդ նյութը առաջանում և մասնակցում է նշված օրգանների աշխատանքին երկու սեռի էակների կազմավորման հենց սկզբից, այսինքն՝ մանկությունից:

Մեծ Բնությունն այնպես է կարգավորել, որ օգտագործվելուց հետո այդ նյութի մնացորդները տղաների օրգանիզմից դուրս են մղվում «թուլխտիտանո»⁵⁶ և «սարնուոնինո»⁵⁷ անդամների, իսկ աղջիկների օրգանիզմից՝ «քարթոթախյան»⁵⁸ թմբիկների՝ միջև ընկած մասից:

Տղաների օրգանիզմի այն մասերը, որոնք տեղակայված են, այսպես կոչված, «զավակածնության անդամի» ծայրամասում, որոնք այդ աննման գրքում անվանված են «թուլխտիտանո» և «սարնուոնինո», ժամանակակից բժշկությունն անվանում է համապատասխանաբար *glans penis* և *prepuce penis*, իսկ աղջիկների, այսպես կոչված, ծլիկը ծածկող «քարթոթախյան թմբիկները»՝ *labia majora* և *labia minora*, կամ, սովորական լեզվով ասած, «մեծ ու փոքր ամոթաշրթեր»:

«Կուլնաբո» նյութի համար ժամանակակից բժշկությունն ընդհանրապես անուն չունի, քանի որ նրան այդ ինքնությունն նյութը կատարելապես անհայտ է:

Ժամանակակից բժշկությունն անուն ունի միայն այն նյութերի ընդհանուր զանգվածի համար, որոնց կազմում կա նաև այդ կուլնաբո նյութը:

Իսկ այդ զանգվածը, որին «սմեզմա» անունն են տվել, տարաբնույթ նյութերի խառնուրդ է, որոնք արտագատվում են տարբեր, այսպես կոչված, «զեղձերից», որոնք իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեն. օրինակ՝ «ճարպագեղձը», «բարտոլինայինը», «կուլպերայինը», «նոլնիոնայինը» և այլն:

⁵⁴ ռուս. տարբերակում՝ Туха тес налул пан, անգլ. տարբերակում՝ Tookha Tess Nalool Pan

⁵⁵ ռուս. տարբերակում՝ кулнабо, անգլ. տարբերակում՝ kulnabo

⁵⁶ ռուս. տարբերակում՝ тулхтотано, անգլ. տարբերակում՝ toolkhtotino

⁵⁷ ռուս. տարբերակում՝ сарнуонино, անգլ. տարբերակում՝ sarnuonino

⁵⁸ ռուս. տարբերակում՝ картотакными, անգլ. տարբերակում՝ kartotakhnian

Իրենց գործն ավարտած այդ նյութերի արտագատումն ու գոլորշիացումը, ըստ Մեծ Բնության նախատեսածի, նշված տեղերից պետք է տեղի ունենա մթնոլորտում ու շրջապատում տեղի ունեցող զանազան պատահական հպումների ու տարբեր շարժումների ազդեցությամբ:

Սակայն Բնության կողմից չնախատեսված այն հագուստը, որը մարդիկ են հորինել, նշված գործոններին խանգարում է, որ իրականացնեն այդ նյութերի արտագատումն ու գոլորշացումը, ինչի արդյունքում այդ կուլնաբոն, երկար ժամանակ մնալով այդ տեղերում, քրտնարտադրություն է առաջացնում. դեռ ավելին՝ այդ նյութն ընդհանրապես ամենալավ միջավայրն է, այսպես կոչված, «մանրէներ» բազմացնելու համար, որոնք կան մթնոլորտում, ինչպես նաև ամեն տեսակի նյութերի, այսպես կոչված, «սուբյեկտիվ ոլորտներում», որոնց հետ երեխաներն անմիջական շփում են ունենում. ուստի նրանց օրգանիզմի նշված մասերում մանրէների այդ բազմացումը հանգեցնում է մի պրոցեսի, որը «քոր» է կոչվում:

Այդ քորի պատճառով երեխաները, սկզբում անգիտակցաբար, սկսում են տրորել ու քորել այդ մասերը: Հետո, քանի որ օրգանիզմի այդ մասերում կենտրոնացված են այն նյարդերի վերջույթները, որոնք Բնությունը նախատեսել է այն հատուկ զգացողության համար, որն անհրաժեշտ է սրբազան էլմուտոնող գործընթացի ավարտման համար, որը նորմալ կերպով տեղի է ունենում հասուն մարդկանց, այսպես կոչված, կենսակցման ավարտին, և քանի որ Մեծ Բնությունը նախատեսել է նաև, որ երեխաների այդ օրգաններում, հատկապես որոշակի տարիքային շրջանում, նախապատրաստական գործընթացներ տեղի ունենան ապագա սեռական կյանքի համար, ապա այդ քորելու ու տրորելու ընթացքում նրանք առանձնահատուկ հաճելի զգացողություն են ունենում, որից հետո, բնագդաբար գլխի ընկնելով, թե ինչ գործողությունից հետո է դա առաջանում, սկսում են դրանով զբաղվել նաև այն դեպքում, երբ քոր չի գալիս. և ահա այդ եղանակով երկրի վրա մշտապես արագորեն համալրվում են փոքրիկ «մուտատաղենականների» շարքերը:

Իսկ ինչ վերաբերում է այն միջոցներին, որոնց մեծն Մովսեսը ձեռնամուխ է եղել այդ չարիքն արմատախիլ անելու նպատակով, ապա դրանց մասին ես իմացա ոչ թե վերոհիշյալ «Տղունը տես նալու բան» գրքից, այլ մի ուրիշ նույնպես շատ հինավուրց պապիրուսից:

Այդ պապիրուսի բովանդակությունը պարզորոշ ցույց էր տալիս, որ մեծն Մովսեսը գործնականում իրականացրել է այն գաղափարները, որոնք նա այդ հարցի վերաբերյալ շարադրել էր իր «Տղունը տես նալու բան» գրքում՝ իր ժողովրդի համար ստեղծելով այն երկու կրոնական ծեսերը, որոնցից մեկը կոչվում է «սիքտ ներ չոր»⁵⁹, իսկ մյուսը՝ «ցել պուց կան»⁶⁰:

Սրբազան «սիքտ ներ չորը» հատուկ ստեղծեց տղաների համար, իսկ սրբազան «ցել պուց կանը»՝ աղջիկների, և դրանք պետք է պարտադիր կերպով ի կատար ածվեին երկու սեռերին պատկանող բոլոր երեխաների նկատմամբ:

«Սիքտ ներ չոր» ծեսն, օրինակ, նույնպիսին էր, ինչպիսին ձեր սունաթն է: Տղաների, այսպես կոչված, «ռոջիհանողը»⁶¹, կամ՝ frenum penis-ը կտրելով վերացվում է գլխիկի և այն ծածկող մաշկի կապը և դրա արդյունքում այդ մաշկը, կամ, ինչպես ասում են, «prepuce penis»-ը ազատ էտ ու առաջ շարժվելու հնարավորություն է ստանում:

Համաձայն հինավուրց ժամանակներից մեզ հասած տեղեկությունների, ինչպես նաև մեր իսկ առողջ բանականության՝ պարզ է դառնում, որ մեծն Մովսեսը, որի մասին մի ուրիշ աղբյուրից գիտենք, որ մեծ հեղինակություն է եղել բժշկության բնագավառում, այդ եղանակով ցանկացել է այնպես անել, որ նշված տեղերում կուտակվող նյութերի համակցությունը կարողանա ինքնուրույնաբար դուրս գալ օրգանիզմից զանազան պատահական շփումների արդյունքում և դադարի գործոն հանդիսանալ նշված վնասաբեր քորի համար: Ինչ վերաբերում է բժշկության բնագավառին մեծն Մովսեսի քաջատեղյակ լինելուն, ապա բազմաթիվ տարբեր պատմական աղբյուրներ համընկնում են նրանում, որ իր բժշկական գիտելիքները նա ստացել է Եգիպտոսում՝ լինելով եգիպտական բարձրագույն քրմերի աշակերտը, որոնց էլ այդ գիտելիքները փոխանցվել են Ատլանտիդա աշխարհամասի իրենց նախնիներից՝ Երկրի առաջին ու վերջին իսկապես գիտուն էակներից՝ այն ժամանակ Ախալդան կոչված ընկերության անդամներից:

⁵⁹ ռուս. տարբերակում՝ сикт нер чорн, անգլ. տարբերակում՝ sikt ner tchorn

⁶⁰ ռուս. տարբերակում՝ цел пуч кан, անգլ. տարբերակում՝ tziel pootz kann

⁶¹ ռուս. տարբերակում՝ воджиано, անգլ. տարբերակում՝ vojiano

Այն ժամանակ մեծն Մովսեսի ստեղծած սովորությունների բարերար արդյունքները նույնիսկ հիմա են լավ երևում գործնականում:

Եթե մասնավորապես խոսենք, օրինակ, թլփատման սովորույթի մասին, ապա լինելով լավ ախտորոշող, որը, միայն մեկ անգամ մարդու երեսին նայելով, կարող է որոշել, թե նրա օրգանիզմում ինչն է խանգարված՝ ես կարող եմ վստահորեն ասել, որ ձեռնաշարժություն կոչվող այդ ահավոր մանկական հիվանդությունը հազիվ թե հանդիպի այն երեխաների մոտ, որոնք ենթարկվել են թլփատման ծեսի, մինչդեռ այն ծնողների երեխաները, որոնք այդ սովորույթը չեն պահպանում, համարյա բոլորը ենթակա են դրան:

Այդ առումով բացառություն կարող են լինել այն ծնողների երեխաները, որոնք իսկապես կուլտուրական են այդ բառի ամբողջ իմաստով և հստակ հասկանում են, որ իրենց երեխաների ապագա մտավոր գործունեությունը կախված է բացառապես այն բանից, թե մանկության կամ պատանեկության տարիներին նրանք այդ հիվանդությամբ տառապե՞լ են, թե՞ ոչ:

Այդպիսի կուլտուրական ծնողները շատ լավ գիտեն, որ եթե նախքան չափահաս տարիքին հասնելն իրենց երեխան թեկուզ մեկ անգամ իր, այսպես կոչված, «նյարդային համակարգում» ունենա, այսպես կոչված, «ուամոնվանոսինյան գործընթացի» գազաթնակետի զգացողությունը, ապա նա այլևս երբեք չի ունենա նորմալ մտածողության լիակատար հնարավորություն, երբ արդեն չափահաս մարդ լինի. ուստի և այդպիսի կուլտուրական ծնողներն իրենց երեխաների նկատմամբ իրենց առաջին և գլխավոր պարտքն են համարում այն, որ այդ առումով դաստիարակեն նրանց:

Ժամանակակից շատ ծնողների պես նրանք չեն համարում, թե երեխաների դաստիարակությունը միայն այն է, որ նրանց ստիպեն հնարավորինս շատ բանաստեղծություններ անգիր անել այդ «մուտառդենիստ- հոգեգարների» հորինածներից, կամ էլ սովորեցնեն, որ իրենց ծանոթների առջև «ճարպկորեն դոփեն կրունկներով». արժանիքներ, որոնցից է, դժբախտաբար, կազմված, ներկայիս մարդկանց պատկերացմամբ, երեխաների ամբողջ դաստիարակվածությունը:

Ահա այդպե՛ս է, ո՛վ, իմ սիրելի, թեկուզ շատ փչացած, բայց համակրելի երիտասարդ ընկեր:

Մեծն Մովսեսը այդ երկու ծեսը ստեղծել և ներդրել է այն ժամանակվա հրեա ժողովրդի սովորական կյանքում, որպեսզի չեզոքացնի հագուստի կործանանար գյուտի ազդեցությունը, ինչի պատճառով ոչնչացվել են այդ օրգաններից արտազատվող նյութերի վնասակար ազդեցությունից այդ օրգանները պաշտպանելու համար Բնության նախատեսած գործոնները: Եվ այդ ծեսերը սերնդեսերունդ փոխանցվել են ինչպես հուդայական կրոնի հետևորդների, այնպես էլ նրանց կողմից, ովքեր այդ երկու օգտակար ծեսերը փոխառել են համարյա առանց փոփոխության: Միայն «մեծ արքա Մոդոմոնի» մահից հետո է, որ ինչ-ինչ պատճառներով «ցել պուց կան» ծեսը չեն պահպանել նույնիսկ հուդայական կրոնի հետևորդները, իսկ «սիքսո ներ չոր» ծեսի պահպանումն ինքնաբերաբար շարունակվել և հասել է այդ ժողովրդի ժամանակակից ներկայացուցիչներին:

Հուդայական մյուս հինավուրց սովորությունների հետ միասին այդ սովորույթը նույնպես անցել է քրիստոնեական կրոնի հետևորդներին, որոնք սկզբնական շրջանում այն շատ խիստ կերպով էին պահպանում. բայց շատ շուտով և՛ այդ սովորույթը, և՛ անգամ դրա յուրացմանը վերաբերող տեղեկությունները նույն արագությամբ կորսվեցին դեռևս երիտասարդ այդ կրոնի հետևորդների կողմից:

Այո՛, սիրելի ընկեր, եթե միայն Աստվածային Հիսուս Քրիստոսի ուսմունքն ի կատար ածվեր իր սկզբնաղբյուրին ճշտորեն համապատասխան, ապա արտակարգ իմաստնաբար դրա վրա հիմնված կրոնը լավագույնը կլիներ ինչպես արդեն ստեղծված, այնպես էլ ապագայում ստեղծվելիք բոլոր կրոնների մեջ:

Բացառությամբ բազմակնության սովորույթի՝ մանեմեդական կրոնի մեջ չկա մի այնպիսի բան, որն իր նախատիպը չունենա ինչպես հուդայական, այնպես էլ քրիստոնեական ուսմունքներում:

Բազմակնության սովորույթը, որը հաստատվել է ժամանակին հայտնի արաբ գիտնական Նաուլանա էլ Աուլի գիտական եզրակացությունների հիման վրա, ժողովրդի առօրյա կյանք է մտցվել ընդհանրապես քրիստոնեական կրոնի հիմնադրման դարաշրջանից հետո:

Ձեր կրոնը ծագել է անհամեմատ ավելի ուշ, և դրա բովանդակությունը միտումնավոր կերպով սահմանափակել են դրա մեծ հիմնադիրները, որոնք ձգտում էին առավել ընդգծել ամենօրյա գործածություն ունեցող որոշ սովորությունների նշանակությունը:

Նրանք այդպես են վարվել այն պատճառով, որ այդ ժամանակներում արդեն հստակ դրսևորվել են ինչպես քրիստոնեական կրոնի անկումը, այնպես էլ սովորական մարդկանց մտասևեռվելու ունակության կորուստը՝ այն վիճակի, որում գտնվելու դեպքում է միայն հնարավոր հասկանալ ճշմարիտ կրոնական ուսմունքների մատնանշած ճշմարտությունները:

Այդ ամենը նկատելով՝ մահմեդական կրոնի հիմնադիրները որոշեցին մի կողմից՝ հեշտացնել բուն ուսմունքը, մյուս կողմից՝ ընդգծել որոշ սովորույթներ, որպեսզի այդ նոր ուսմունքի հետևորդները, որոնք արդեն կորցրել են մտասևեռվելու ունակությունը և հետևաբար նաև ճշմարտությունները հասկանալու հնարավորությունը, կարողանան ծայրահեղ դեպքում գոնե իրենց առօրյա կյանքը քիչ թե շատ տանելի դարձնել:

Հենց այդ ժամանակներում էր, որ այլ սովորույթների հետ միասին նրանք մտցրին և հատուկ ընդգծեցին քո նշած սունիաթ, աբդասթ և բազմակնություն սովորույթները, որոնց բարերար արդյունքները գործնականում մենք տեսնում ենք նույնիսկ հիմա:

Օրինակ, ինչպես արդարացիորեն դու ինքդ նկատեցիր, թվատման ու լվացման սովորույթների շնորհիվ այդ կրոնի հետևորդների միջավայրում հազվադեպ են նկատվում ինչպես ձեռնաշարժությունը, այնպես էլ որոշ վնեռական հիվանդություններ. իսկ բազմակնության շնորհիվ այդ կրոնի հետևորդների միջավայրում մենք տեսնում ենք ընտանեկան կյանքի հիմքերի այնպիսի փոխադարձ, այսպես ասած, հոգե-օրգանական պահպանություն, որը համարյա իսպառ բացակայում է քրիստոնեական կրոնի հետևորդների միջավայրում:

Սկզբնական շրջանում քրիստոնեական կրոնի մեջ առկա և երջանիկ կյանքի համար անհրաժեշտ առողջությունն ու բարոյական նորմերը պահպանող օգտակար սովորույթներից, որոնք այդ կրոնն ստեղծողների կողմից մտցվել էին առօրյա կյանք, հիմա ոչինչ չի մնացել, բացառությամբ պարբերաբար պաս պահելու սովորույթի, այն է՝ տարվա որոշակի ժամանակահատվածներում որոշ անդամաբեռներ օգտագործելուց հրաժարվելուց:

Եվ նույնիսկ այդ հազիվ կենդանի մնացած օգտակար սովորույթն է արդեն կա՛մ լրիվ անհետանում այդ կրոնի հետևորդների սովորական կյանքից, կա՛մ էլ տարեցտարի դրա պահպանման կերպն այնպես է փոխվում, որ պաս պահողը դրանից ոչ մի խթան չի ստանում, թեև այդ «պաս» կոչվածը մտցվել է հենց այդ խթանը տալու համար:

Պաս պահելու քրիստոնեական այդ սովորույթի մեջ ներկայումս տեղի ունեցող փոփոխությունները շատ բնորոշ ու հրաշալի օրինակ կարող են ծառայել հասկանալու համար, թե ընդհանրապես ինչպես են բոլոր «քրիստոնեական լավ սովորույթները», կամաց-կամաց փոխվելով, ի վերջո իսպառ չքացել:

Ցուցադրական լավ օրինակ է այն, թե ինչպես են պաս պահում, այսպես կոչված, ռուս «ուղղափառ քրիստոնյաները»:

Այդ ռուս ուղղափառ քրիստոնյաներն իրենց կրոնը փոխառել են, այսպես կոչված, «ուղղափառ հույներից», որոնցից էլ ուրիշ շատ քրիստոնեական սովորույթների հետ միասին նրանց է անցել «պաս պահելու» այդ սովորույթը:

Միլիոնավոր ռուս ուղղափառ քրիստոնյաների մեծ մասը դեռևս շարունակում է, այսպես ասած, «խստորեն» պաս պահել՝ համաձայն այնտեղ ներկայումս գոյություն ունեցող, այսպես կոչված, «ուղղափառ կանոնադրության»:

Բայց ինչ վերաբերում է նրան, թե ինչպես են նրանք պաս պահում, ապա այդ առթիվ հնարավոր չէ չհիշել մեր սիրելի մոլլա Նասրեդինի՝ նմանատիպ դեպքերի համար ասված մի ասույթը.

«Ի՞նչ կարևոր է, թե գոռում եմ էշի պես, եթե բոլորը ինձ սոխակ են անվանում»:

Այդ ռուս ուղղափառ քրիստոնյաների պաս պահելը հենց նմանատիպ մի բան է:

Մեկ որ քրիստոնյա են կոչվում, այն էլ՝ ուղղափառ, էլ ի՞նչ կարևոր է, որ այդ պասից ոչ մի խթան չեն ստանում:

Ինչպես արդեն ասացի, այդ ռուս ուղղափառ քրիստոնյաները նույնիսկ հիմա են շատ խստորեն պահպանում պասի այն ժամկետներն ու օրերը, որոնք նշված են հիշյալ «կանոնադրության» մեջ:

Իսկ, թե ի՞նչ ուտել և ի՞նչ չուտել պասի ժամամանկ՝ ահա այստեղ է, որ թաղված է «փոխկանցելը Վիլհելմի փռչոտ շան ձախ թաթը»:

Դու հստակ կհասկանաս, թե ինչպես են պաս պահում ժամանակակից ռուս ուղղափառ քրիստոնյաները, եթե ես նույնությամբ կրկնեմ մի իսկական ռուս ուղղափառ քրիստոնյայի խոսքերը, որոնք ես նրանից վերջերս լսեցի այնտեղ՝ Ռուսաստանում:

Ես այդ ռուսի հետ հանդիպեցի մի գործի բերումով և նույնիսկ նրա հետ ընկերացա ու լինում էի նրա տանը:

Իր շրջապատում նա ուներ շատ լավ քրիստոնյայի և նահապետական ընտանիքի հոր համբավ. ծագումով նա, այսպես կոչված, «հնադավաններից» էր:

Այստեղ, տղա՛ս, երևի թե հարկ է, որ իմանաս, որ Ռուսաստան կոչվող այդ մեծ խմբավորման որոշ էակների մնացածները «հնադավան» են անվանում:

Հնադավան են կոչում այն ուղղափառ քրիստոնյաներին, որոնց նախնիները մի քանի դար առաջ հրաժարվել են ընդունել այն նոր կանոնները, որ ինչ-որ մեկը մտցրել է ռուս ուղղափառ քրիստոնյաների համար. նրանք հավատարիմ են մնացել մինչ այդ հաստատված կանոններին, որոնք մի ուրիշն այնտեղ հաստատել է այդ «կրոնական պառակտումից» ընդամենը մեկ կամ երկու հարյուրամյակ առաջ, ինչպիսիք ժամանակ առ ժամանակ նրանց մոտ տեղի են ունենում:

Եվ այսպես, այդ արժանապատիվ ռուս հնադավանը,– շարունակեցի պատմել պարսիկ երիտասարդին,– մի անգամ, երբ նրա տանը ճաշում էինք ևս մի քանի ուղղափառ քրիստոնյա ռուսների ընկերակցությամբ, շրջվեց իմ կողմը և ասաց.

«Է՛հ, ծերուկ...»

Իմիջիայլոց, պետք է ասել, որ երբ այդ խմբավորման էակներն իսկական ռուսական օդու երկրորդ բաժակը խմում են, սովորաբար իրենց ծանոթներին սկսում են զանազան քնքուշ անուններ կպցնել, ինչպես օրինակ՝ «ծերուկս», «ցմփորիկս», «աղավնյակս», «հաստիկս» և այլն, և այլն:

Այսպիսով, այդ արժանապատիվ իսկական ուղղափառ քրիստոնյան, ինձ «ծերուկս» անվանելով, ասաց հետևյալը.

«Ոչի՛նչ, ծերու՛կս, շուտով Մեծ պասն է գալիս, և մենք միասին կհյուրասիրվենք իսկական ռուսական կերակուրներով:

Որ ճիշտն ասենք, մենք այստեղ՝ Ռուսաստանում, «մսակերության» ընթացքում համարյա միշտ նույն բանն ենք ուտում:

Բայց բանը լրիվ ուրիշ է պասերի ժամանակ, հատկապես՝ Մեծ պասի:

Չի անցնում մի օր, որ մեզ չերջանկացնեն որևէ շատ համեղ կերակուրով:

Գիտե՛ս, ինչ, ծերու՛կս, այդ թեմայով վերջերս ես մի շատ հետաքրքիր «հայտնագործություն» եմ արել:

Իմ այդ նոր հայտնագործությունը մի ամբողջ վերստ բարձր է ծեր ցնդած Կոպեռնիկոսի հայտնաբերածից, որը մեռածի պես հարբած պառկել է գետնին և երևի հստակ զգացել, որ Երկիրը պտտվում է:

Ա՛յ, հրաշք եմ ասել, ա՛յ քեզ հայտնագործություն...

Ախր, հենց միայն մեր հարազատ Մոսկվայում, գուցե ամեն օր, հազարավոր այդպիսի հայտնագործություններ են արվում:

Բայց դա հե՛ջ: Ա՛յ, իմ գտածն իսկական հայտնագործություն է՝ չափազանց ուսանելի ու կարևոր:

Այդ հայտնագործությունն այն է, որ մենք բոլորս հիմարից էլ հիմար ու անհուսալի ապուշ ենք եղել, քանի որ երևակայել ենք և կատարելապես համոզված ենք եղել, թե պասի օրերին մեզ մատուցվող ընտիր, տարատեսակ ու համեղ կերակուրների բազմության համար մենք պարտական ենք մեր խոհարարների ու խոհարարուհիների նշանավոր արվեստին:

Իմ մերձավորների համար հատկապես օրինյալ այդ օրը, երբ ես արժանացա այդ ճշմարտությունը հասկանալու բախտին, այսինքն՝ այն օրը, երբ մեր աննման Դունյաշան վերջապես կարողացավ կաքավկրկուտով ու վահանաձկան լյարդով պատրաստված ձկնապուրի հետ մատուցվող թխվածքի վրա ավելացնել ևս մի քանի լրացուցիչ շերտ, ես իմ ամբողջ էությամբ հասկացա, որ դա մեր մեծ սխալն է:

Սկզբում ես ինքս դա հասկացա, որից հետո ապացուցեցի իմ տնեցիներին, որ եթե Մեծ պասի ժամանակ մենք այդքան շատ տարատեսակ համեղ կերակուրներ ենք ունենում, ապա դրա համար մենք պարտական ենք միայն մեր օրինյալ ու փառապանծ ձկներին:

Պասերի, հատկապես՝ Մեծ պասի օրերին, մեր օջախները երջանկանում են՝

Պատվելի Թառափի,

Մեծարգո Ստերլետի,

Հարգարժան Բալիկի,

Անմոռանալի Վահանաձկան,
Նորին պայծառափայլություն Սաղմոնի,
Երաժշտասեր Սպիտակ Օսետրինի,
Անվրդով ու ճկուն Թյունիկի,
Հավերժ Զայրացած Գայլաձկան,
Միշտ Ծանրաբարո Միգի,
Կենսաթրթիո Իշխանի,
Գեղեցկուհի Պերկեսիկի,
Հպարտ Շամայկայի,
Պատվարժան Բրամի

և մյուս բոլոր նույնպիսի բարերարների ու պահապանների հաճախակի այցելություններով:

Հենց միայն մեր այդ բարիք և ուրախություն բերողների անունները Աստվածային մեծագույն պարզ և արդեն մեզ համար:

Երբ լսում ենք այդ անունները, սիրտներս նվաղում է:

Դրանք ոչ միայն անուններ են, այլև իսկական երաժշտություն: Եվ իրոք, կարելի՞ է արդյոք այդ զանազան բեթովենների, շոպենների և մյուս մոդայիկ դատարկաբանների հորինած երաժշտության հնչյունները համեմատել այդ օրհնյալ ձկների անունների հնչյունների հետ:

Ամեն անգամ, երբ մենք լսում ենք այդ փառապանձ արարածների անունները, երանությունը լցվում է մեր ներսը և հոսում մեր երակներով ու նյարդերով:

Ա՛խ, Օրհնյալ Ձկնե՛ր, որ առաջին անգամ արարվեցիք Մեր Արարչի կողմից... Խղճացե՛ք մեզ և պահպանե՛ք մեզ նաև այդ «մասկերության օրերին»: Ամեն:

Այս աղոթքն արտասանելուց հետո այդ արժանապատիվ ռուս ուղղափառ քրիստոնյան գլուխը քաշեց մի ահավոր բաժակ իսկական մաքուր քաշած ռուսական օղի և գործվանքով աչքերը հառեց մոտակայքում կանգնեցված «Վեներան և Փսիխեան» անունով արձանիկին:

Եվ իսկապես, բարեկա՛մս, համարյա թե ամեն մի ռուս ուղղափառ քրիստոնյա պասի մասին նույնպիսի պատկերացում ու դրա հանդեպ նույնպիսի վերաբերմունք ունի:

Այդ «քրիստոնեական պասերի» ընթացքում, որոնք փոխառել են ուղղափառ հույներից, նրանք բոլորը ձկան միս են ուտում:

Նրանք «մեղք» չեն համարում ձկան միս ուտելը և մեծ ախորժակով այն ուտում են որպես պասուց կերակուր:

Անձամբ ես չեմ կարողանում հասկանալ միայն մի բան. ինչի՞ց են այդ ռուս «վայ-ուղղափառները» վերցրել, որ քրիստոնեական պասերի, հատկապես՝ Մեծ պասի ընթացքում կարելի է ձկան միս ուտել:

Ինձ համար դա անըմբռնելի է, քանի որ այն ուղղափառ քրիստոնյաները, որոնցից նրանք փոխառել են այդ կրոնը, հենց իրենք՝ հույները, ոչ անցյալում, ոչ էլ ներկայումս երբեք պասերի ժամանակ չեն կերել և չեն ուտում ձկան միս:

Նույնիսկ ժամանակակից հույները ձուկ են ուտում Մեծ պասի միայն մեկ օրը՝ այն օրվա հիշատակին, որը, համաձայն ուղղափառ եկեղեցու կանոնադրության, կապված է Աստվածային Հիսուս Քրիստոսի հետ:

Այն պասի արդյունքը, որը թույլատրում է ձկան միս ուտելը, ոչ միայն պաս պահողին ոչ մի խթան չի տալիս, այլ նաև հակասում է այն բանին, ինչ հրահանգել և ուսուցանել է Աստվածային Հիսուս Քրիստոսը, և ինչի համար քրիստոնեական կրոնի մեծ ստեղծողները մտցրել են այդ սովորույթը:

Ի հաստատումն հենց նոր ասածիս, ո՛վ, իմ ջահել ընկեր, օգտակար կլինեիր, եթե լսեիր, թե մի անգամ այդ քրիստոնեական պասի մասին ինչ վիճակվեց ինձ կարդալ մի հուղա-եսսեական ձեռագիր մատյանում:

Այդ հինավորոց ձեռագիր մատյանում ասված էր, որ Հիսուս Քրիստոսի ուսմունքի հետևորդների համար հաստատված այդ սովորույթը՝ տարվա որոշակի շրջաններում պաս պահելը, մտցվել է Նրա մահից շատ ժամանակ անց՝ Նրա Ծննդից հաշված՝ 214 թվականին:

Պաս պահելու սովորույթը հաստատվել և քրիստոնեական կրոնի մեջ մտցվել է Քելնուկյան մեծ գաղտնի Համաժողովի ժամանակ:

Այդ Քելնուկյան Համաժողովը հրավիրել էին Հիսուս Քրիստոսի՝ այն ժամանակ դեռևս նոր ուսմունքի հետևորդները Քելնուկ կոչվող վայրում, որը գտնվում է Մեոյալ ծովի ափին: Դրա համար էլ այն քրիստոնեության պատմության մեջ հայտնի է Քելնուկյան Համաժողով անունով:

Այն գաղտնի անցկացվեց, քանի որ այդ ժամանակ ամենուրեք իշխանավորները դաժանորեն հետապնդում էին Հիսուս Քրիստոսի հետևորդներին:

Իշխանավորները նրանց հալածում էին, քանի որ շատ էին վախենում, որ եթե մարդիկ ապրեն այդ ուսմունքին հետևելով, ապա, թեև իրենք՝ իշխանավորները, էլի կկարողանան լավ ապրել, բայց այդ դեպքում կվերանան իշանությունն Բանեցնելու բոլոր շարժառիթները, և դրանով իսկ կվերանան այն խթանները, որոնց բավարարումը գոհունակություն է պատճառում իրենց ներքին, «Եսասիրություն» կոչվող աստծուն:

Հենց այդ Քելնուկյան Համաժողովի ժամանակ էր, որ դրա մասնակիցներն առաջին անգամ մի կանոն հաստատեցին առ այն, որ Հիսուս Քրիստոսի ուսմունքի հետևորդները որոշակի օրերի պես է ձեռնպահ մնան կերակուրների մեջ որոշ սննդամթերքներ օգտագործելուց:

Իսկ այդ պասը մտցնելու համար սկզբնական պատճառ հանդիսացավ Քելնուկյան Համաժողովի մի վիճաբանություն, որը ծագեց երկու այն ժամանակ նշանավոր գիտնականների՝ մեծն Հեռտունհանի⁶² և հույն մեծ փիլիսոփա Վիգենձյաձի⁶³ միջև:

Մեծն Հեռտունհանը ներկայացնում էր Հիսուս Քրիստոսի ուսմունքի այն հետևորդներին, որոնք հաստատվել էին Կարմիր ծովի ափերին, իսկ փիլիսոփա Վիգենձյաձը՝ այդ ուսմունքի այն ժամանակվա Հունաստանում ապրող հետևորդներին:

Փիլիսոփա Վիգենձյաձը իր գիտությունամբ փայլել էր միայն իր երկրում, իսկ Հեռտունհանը հայտնի էր ամբողջ Երկրում: Նա մեծագույն հեղինակություն էր համարվում մարդու ներքին կազմակերպության օրենքների, ինչպես և այն գիտության բնագավառում, որն այն ժամանակ ալքիմիա էր կոչվում, իհարկե, ոչ այն ալքիմիան, որի վերաբերյալ ժամանակակից մարդիկ այլ պատկերացումներ ունեն:

Մեծն Հեռտունհանի և Վիգենձյաձի միջև այդ նշանավոր վեճը ծագեց հետևյալ առիթով:

Փիլիսոփա Վիգենձյաձը ամբողջ երկու օր ծախսեց, որպեսզի հաստատի և ապացուցի, որ Հիսուսի ուսմունքի բոլոր հետևորդների միջավայրում անհրաժեշտ է տարածել այն պատկերացումը, որ կերակուրների մեջ կենդանիների միսն օգտագործելու նպատակով դրանց սպանելը մեծագույն մեղք է, և բացի այդ՝ այդ միսը շատ վնասակար է առողջության համար և այլն:

Փիլիսոփա Վիգենձյաձից հետո ամբիոն բարձրացան ևս մի քանի ներկայացուցիչներ, որոնք կողմ կամ դեմ արտահայտվեցին նրա կարծիքին:

Վերջապես, ինչպես ասված է այդ ձեռագիր մատյանում, դանդաղորեն ու զսպված արժանապատվությամբ ամբիոն բարձրացավ մեծն Հեռտունհանը և ելույթ ունեցավ իրեն հատուկ պարզությամբ ու հանդարտությամբ:

Համաձայն ձեռագրի մատյանի՝ նա ասել է հետևյալը.

«Ես լրիվ համաձայն եմ բոլոր այն փաստերի ու փաստարկների հետ, որոնք այստեղ ներկայացրեց Քրիստոսով մեր եղբայր, փիլիսոփա Վիգենձյաձը:

Իմ կողմից նրա ամբողջ ասածին կհավելեմ նաև, որ սեփական փորը կշտացնելու նպատակով այլ էակների կյանքն ընդհատելը խայտառակությունների խայտառակությունն է, որոնին ընդունակ է մարդը:

Եթե ես ինքս էլ այդ հարցով երկար տարիներ զբաղված չլինեի և հանգած չլինեի որոշ կատարելապես տարբեր կոնկրետ եզրակացությունների, ապա այն ամենից հետո, ինչ այստեղ ասաց Քրիստոսով մեր եղբայր Վիգենձյաձը, ես առանց մի վայրկյան տատանվելու կսկսեի համոզել ու թախանձել բոլորին, որ վաղվան չհետաձգելով՝ բոլորս շտապենք մեր քաղաքները և դրանց հասարակական հրապարակներում բարձրաձայն գոչենք. «Կա՛նգ առեք, կա՛նգ առեք, մարդի՛կ, այլևս միս մի՛ կերեք: Ձեր այդ արարմունքը ոչ միայն հակասում է Աստծո բոլոր պատվիրաններին, այլ նաև ձեր բոլոր հիվանդությունների պատճառն է»:

⁶² ռուս. տարբերակում՝ Хертуnano, անգլ. տարբերակում՝ Hertoonano

⁶³ ռուս. տարբերակում՝ Бергендиadi, անգլ. տարբերակում՝ Veggendiadi

Ինչպես տեսնում եք, ես հիմա չեմ անում դա: Եվ այդպես չեմ վարվում այն պատճառով, որ երկար տարիների իմ անխոնջ հետազոտությունների արդյունքում ես այդ հարցի վերաբերյալ հանգել եմ կատարելապես այլ կոնկրետ եզրակացության:

Այդ կոնկրետ եզրակացության վերաբերյալ ես հիմա միայն ձեզ կարող եմ ասել, որ երբեք այնպես չի ստացվի, որ Երկրի բոլոր մարդիկ միևնույն կրոնը դավանեն: Հետևաբար, մեր քրիստոնեական կրոնից բացի միշտ գոյություն կունենան նաև ուրիշ կրոններ: Եվ մենք վստահ չենք կարող լինել, որ այդ կրոնների հետևորդները նույնպես ձեռնպահ կմնան մսեղեն օգտագործելուց:

Բայց եթե մենք վստահություն չունենք, թե երբևէ Երկրում բոլոր մարդիկ ձեռնպահ կմնան մսեղեն օգտագործելուց, ապա հիմա այդ հարցի վերաբերյալ այստեղ պիտի ընդունենք բոլորովին այլ՝ ավելի գործնական միջոցներ, քանի որ եթե մարդկության մի մասը միս օգտագործի, իսկ մյուս մասը՝ ոչ, ապա, համաձայն իմ փորձարարական հետազոտությունների, միս չօգտագործող մարդկանց գլխին կգա մի այնպիսի մեծագույն չարիք, որից վատը չի կարող լինել:

Հիրավի, ինչպես ցույց տվեցին իմ սեփական հետազոտությունները, այն մարդկանց մոտ, որոնք միս չեն օգտագործում, բայց, այնուամենայնիվ, ապրում են միս օգտագործողների շրջապատում, դադարում է, այսպես կոչված, «կամքի ուժի» կազմավորումը:

Իմ փորձերն ինձ ապացուցեցին, որ թեև մսից հրաժարվելու դեպքում մարդկանց մարմնական առողջությունը բարելավվում է, այնուհանդերձ, երբ այդ հրաժարվողները հայտնվում են միս օգտագործողների միջավայրում, նրանց հոգեկան վիճակն անխուսափելիորեն վատանում է՝ չնայած այն բանին, որ նրանց օրգանիզմի վիճակը միևնույն ժամանակ երբեմն լավանում է:

Այսպիսով, մսից հրաժարվող մարդիկ կարող են լավ արդյունքի հասնել միայն այն դեպքում, եթե մշտապես ապրում են լրիվ մեկուսացվածության պայմաններում:

Ինչ վերաբերում է այն մարդկանց, որոնք մշտապես միս կամ այնպիսի մթերքներ են օգտագործում, որոնք իրենց մեջ «էգնող»⁶⁴ կոչվող տարրն են պարունակում, ապա, թեև նրանց օրգանիզմի վիճակը տեսանելի փոփոխությունների չի ենթարկվում, այնուհանդերձ նրանց հոգեկառույցը, հատկապես դրա գլխավոր գիծը, որը երբեմն անվանում են մարդու «բնավորություն» ընդհանուր բառով, դրականի ու բարոյականի իմաստով աստիճանաբար փոխվում է դեպի վատը և հասնում անճանաչելիության աստիճանի:

Ես պետք է ձեզ ասեմ, որ այդ եզրակացություններին ես հանգեցի այն փորձերի արդյունքում, որոնք երկար տարիների ընթացքում պատիվ ունեցա անցկացնելու երկու բարի մարդասերների շնորհիվ: Նրանք են հարուստ հովիվ Ալա Էգ-Լինոդան⁶⁵, որն ինձ փողով ապահովեց, և Էլ Քունա Նասան⁶⁶, իր հրաշալի գյուտով՝ «արոստոդոսոտղ»⁶⁷ կոչվող սարքավորումով:

Նշածս արոստոդոսոտղ կոչվող հրաշալի սարքավորման օգնությամբ ես մի քանի տարի հնարավորություն ունեցա ամենօրյա քնության ենթարկել բոլոր այն հազարավոր մարդկանց օրգանիզմի ընդհանուր վիճակը, որոնք փորձարարական պայմաններում ապրում էին իմ բարի հովիվ Ալա Էգ Լինոդայի հաշվին:

Թո՛ղ որ ՄԵՐ ԱՐԱՐԻՉԸ բազմացնի նրա հոտերը...

Եվ ահա, երբ իմ փորձարարական հետազոտությունների շնորհիվ ես հստակ համոզվեցի, որ եթե մարդիկ շարունակեն իրենց կերակուրների մեջ միս օգտագործել, ապա դա նրանց համար շատ վնասակար կլինի, և մյուս կողմից՝ եթե միայն նրանց մի մասը մսից հրաժարվի, ապա դրանից նույնպես ոչ մի լավ բան չի ստացվի, ես որոշ ժամանակով նվիրվեցի այն հարցը պարզելուն, թե այնուամենայնիվ ի՞նչ կարելի է նախաձեռնել մարդկանց մեծամասնության հետագա բարեկեցության համար:

Այդ ժամանակ սկզբում ես ինձ համար երկու աներկբա դրույթ ձևակերպեցի. առաջինն այն էր, որ մարդիկ, որոնք այդքան դարերի ընթացքում վարժվել են կերակուրների մեջ միս օգտագործելուն, իրենց թույլ կամքի պատճառով երբեք իրենք իրենց չեն ստիպի դադարեցնել դրա օգտագործումը, որպեսզի հաղթահարեն իրենց այդ հանցավոր միտումը, իսկ երկրորդն այն էր, որ եթե նույնիսկ

⁶⁴ ռուս. տարբերակում՝ экнох, անգլ. տարբերակում՝ eknokh

⁶⁵ ռուս. տարբերակում՝ Алла Эк Линаха, անգլ. տարբերակում՝ Alla Ek Linokha

⁶⁶ ռուս. տարբերակում՝ Эль-Куна-Насса, անգլ. տարբերակում՝ El Koona Nassa

⁶⁷ ռուս. տարբերակում՝ аrostодесох, անգլ. տարբերակում՝ arostodossokh

մարդիկ որոշեն միս չուտել, իրոք մի որոշ ժամանակ հետևեն այդ որոշմանը և նույնիսկ կորցնեն միս ուտելու սովորությունը, նրանք, այնուամենայնիվ, չեն կարողանա բավարար երկար ժամանակով ձեռնպահ մնալ միս օգտագործելուց, որպեսզի լիկատար նողկանք զգան դրա նկատմամբ: Նրանք դա չեն կարող անել, քանի որ Երկրի վրա երբեք այնպես չի ստացվի, որ բոլոր մարդիկ միևնույն կրոնն ունենան կամ միացյալ կառավարություն ստեղծեն. իսկ առանց այդպիսի պայմանների չի կարող լինել բոլորի համար ընդհանուր որևէ հիպոթսական, արգելող, պատժիչ կամ այլ տեսակի ստիպողական գործողություն, որի շնորհիվ մարդիկ, որոնց ընդհանրապես հատուկ են ընդօրինակելու, նախանձից զրգովելու և մոգական ազդեցության ենթարկվելու հատկանիշները, հնարավորություն ստանան միշտ հետևելու մեկ անգամ կայացրած որոշմանը:

Չնայած իմ կարծիքով անառարկելի պարզ այդ երկու փաստին՝ այնուամենայնիվ, դրանք հիմք ընդունելով իմ հաջորդ հետազոտությունների համար, ես համառորեն շարունակեցի մարդկանց առջև կանգնած այդ դժբախտ իրավիճակից խույս տալու որևէ հնարավորություն փնտրել:

Իհարկե, իմ բոլոր մեծամասշտաբ հետազոտությունները կրկին իրականացվում էին Ալա Էգ Լինդոլայի անսպառ հարստության և իմաստուն Էլ Քունա Նասայի հրաշալի սարքավորման օգնությամբ:

Իմ այդ վերջին հետազոտություններից ինձ համար պարզ դարձավ, որ թեև մարդկանց հոգեկառույցն ընդհանուր առմամբ իրոք վատանում է էգնող կոչվող նյութը շարունակաբար օրգանիզմ մտցնելուց, սակայն այդ նյութն առանաձնապես վնասակար ազդեցություն է ունենում միայն տարվա որոշակի ժամանակահատվածներում:

Այնպես որ, ո՛վ, Քրիստոսով իմ եղբայրնե՛ր, իմ այս ամբողջ ասածի և, գլխավորապես, իմ այն փորձարարական դիտումների հիման վրա, որոնք մարդկանց վրա ես անցկացրել եմ մի ամբողջ տարվա ընթացքում ու դրանց օգնությամբ հստակ տեսել, որ էգնող նյութի վնասակար ազդեցությունը նվազում է տարվա որոշակի ժամանակահատվածների ընթացքում, ես հիմա կարող եմ վստահորեն արտահայտել իմ անձնական կարծիքն առ այն, որ եթե Հիսուս Քրիստոսի ուսմունքի հետևորդների շրջանում տարածենք ու ամրապնդենք թեկուզ տարվա որոշակի ժամանակահատվածների ընթացքում այն մթերքներն օգտագործելուց ձեռնպահ մնալու սովորույթը, որոնց կազմավորմանը էգնող կոչվող նյութը հատուկ մասնակցություն է ունենում, ապա, եթե իհարկե այդպիսի միջոցառումն ընդհանրապես իրականանալի է, այն կարող է մարդկանց որոշակի օգուտ բերել:

Ինչպես ինձ ցույց տվեցին իմ բազմաթիվ ալքիմիական հետազոտությունները, էգնող կոչվող նյութը մասնակցություն է ունենում ինչպես Երկրի մակերևույթին այնպես էլ նրա տարբեր ոլորտներում՝ ընդերքում, ջրում, մթնոլորտում և այլն, բազմացող առանց բացառության բոլոր կենդանի էակների օրգանիզմների կազմավորմանը:

Այդ նյութն առկա է նաև այն ամենում, ինչից կազմավորվում են նշված օրգանիզմները, ինչպես օրինակ՝ կենդանիների ամեն մի տեսակի պատկանող էգերի անոթային հեղուկում և այնպիսի մթերքներում, ինչպիսիք են՝ կաթը, ձուն, խավիարը և այլն...»:

Մեծն Հեռտունհանի արտահայտած գաղափարներն այնքան են ցնցել ու հուզել Քելնուկյան Համաժողովի բոլոր անդամներին, որ աղմուկը հնարավորություն չի տվել Հեռտունհանին շարունակելու իր խոսքը. ուստի նա ստիպված է եղել ընդհատելու իր ճառը և ամբիոնից հեռանալու:

Այնուհետև ձեռագիր մատյանում ասվում էր, որ այդ օրվա արդյունքը եղել է այն, որ Քելնուկյան Համաժողովի անդամները միաձայն որոշել են մեծն Հեռտունհանի օգնությամբ սահմանել տարվա այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում էգնող նյութն ավելի վնասակար ազդեցություն է թողնում մարդկանց վրա, ապա Հիսուս Քրիստոսի հետևորդների շրջանում լայնորեն տարածել այդ ժամանակահատվածների ընթացքում պաս պահելու սովորույթը. այն է՝ այդ ժամանակահատվածների ընթացքում ձեռնպահ մնալ այն մթերքներն օգտագործելուց, որոնք պարունակում են իրենց համար վնասակար էգնող նյութից:

Այդքանով այդ հուդա-եսսեական ձեռագիր մատյանն ավարտվում էր:

Ինչպես դրանից կարելի տեսնել, այդ սովորույթը ներդնողները նկատի են ունեցել այն, որ այդ կրոնի հետևորդները նշված ժամանակահատվածներում պետք է խուսափեն այն մթերքներն օգտագործելուց, որոնք իրենց առողջության և հատկապես հոգեկառույցի համար շատ վնասակար նյութ են պարունակում:

Իսկ ռուս վայ-ուղղափառները, որոնք իրենց այդ մեծ կրոնի հավատարիմ հետևորդներ են համարում, նույնպես պաս են պահում, բայց այդ պասի ընթացքում ձկան միս են ուտում, այսինքն հենց այն օրգանիզմներից, որոնք, ըստ մեծն Հեռտունհանի հետազոտությունների, պարունակում են իրենց մեջ այն վնասակար էգնոդ նյութից, որից ազատվելու համար էլ հենց մտցվել է այդ իմաստուն և առողջարար սովորույթը»:

Այս խոսքերով, զավա՛կս, ես այն ժամանակ ավարտեցի իմ զրույցն այդ համակրելի պարսիկ երիտասարդի հետ:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ժամանակակից էակները ոչնչացնում կամ ձևափոխում են իրենց իմաստուն նախնիներից տարբեր դարաշրջաններում իրենց անցած այդ լավ սովորույթները, ապա այդ առթիվ ևս մեր աննման մոլլա Նասրեդինը մի շատ դիպուկ և իմաստուն ասույթ ունի.

«Է՛հ, մարդի՛կ, մարդի՛կ... Ախր ինչու՞ եք դուք մարդիկ: Եթե մարդիկ չլինեիք, ապա գուցե ավելի խելացի կլինեիք»:

Ամերիկացի քեռի Սեմի սիրած ասացվածքը նույնպես շատ հարմար է գալիս նույն միտքն արտահայտելու համար:

Ասում են, որ երբ ամերիկացի քեռի Սեմը սովորականից մի քիչ շատ է ջին խմած լինում, ապա ամեն դադար առնելիս միշտ ասում է. «Երբ ոչ մի ճիշտ բան չկա, միայն այդ ժամանակ է ամեն ինչ ճիշտ»:

Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա այս դեպքում ես միան կասեմ. «Ախ, անպիտան Լուսին»:

Ամեն դեպքում, սիրելի՛ զավակս, ես պետք է խոստովանեմ, որ հինավուրց ժամանակներից ներկայիս քո սիրելիներին հասած և այնտեղ գոյություն ունեցող որոշ սովորույթներ չափազանց օգտակար են այնտեղի որոշ հանրությունների էակների սովորական գոյատևման համար:

Օգտակար են այն պատճառով, որ դրանք հայտնաբերվել և էակների գոյատևման գործընթացում ներդրվել են այնպիսի եռուղեղ էակների կողմից, որոնք իրենց բանականության կատարելագործումը հասցրել են այնպիսի բարձր աստիճանի, որին, ցավոք, այնտեղի ժամանակակից էակներից ոչ մեկն այլևս չի հասնում:

Ներկայիս մարդկային էակներն ունակ են միայն այնպիսի սովորույթներ ստեղծելու, որոնք էլ ավելի են վատացնում իրենց իսկ հոգեկառույցի որակը:

Օրինակ՝ վերջերս նրանք իրենց համար կանոն են դարձրել ամեն տեղ և միշտ մի պար պարելը, որը «ֆոքստրոտ» է կոչվում:

Ներկայումս այդ ֆոքստրոտն ամենուրեք հրապուրանքի առարկա է, որն օր ու գիշեր պարում են ոչ միայն երիտասարդներն ու դեռևս չկազմավորված, դեռևս իրենց ծագման ու գոյատևման իմաստն ու նպատակը չգիտակցած էակները, այլ նաև այնպիսիները, որոնց դեմքերից պարզորոշ կարելի է տեսնել (և դա կարող է վկայել ամեն մի նորմալ եռուղեղ էակ), որ իրենց գոյատևման մնացած ժամանակի առումով, ինչպես կասեր մեր ուսուցիչը՝ «ոչ թե նրանց մի ոտն է գերեզմանում, այլ արդեն երկուսը»: Բանն այն է, սակայն, որ էակներն այդ ֆոքստրոտի ժամանակ ապրում են մի գործընթաց, որը լիովին նման է նրան, ինչը տեղի է ունենում այն մանկական հիվանդության ժամանակ, որը մեծն Մովսեսը «մուտտառդեն» է անվանել:

Այդ հիվանդությունը, որը երեխաների միջից արմատախիլ անելուն մեծն Մովսեսը նվիրել է իր կյանքի կեսը, պատասխանատու տարիքին հասած ներկայիս քո սիրելիների բազմությունը համարյա միտումնավոր կերպով կրկին վերածնել ու տարածել է ոչ միայն երեխաների միջավայրում ու տարեցների ընդհանուր զանգվածում, այլև նույնիսկ ծերերի միջավայրում:

Սովորական գոյատևման համար օգտակար այդ սովորույթները ներկայիս քո սիրելիներին են փոխանցվել քո այդ մոլորակի հինավուրց եռուղեղ էակներից, և այդ սովորույթներից շատ շատերը հիմա գոյություն ունեն Ասիա աշխարհամասի տարբեր հանրություններում:

Այդ սովորույթներից որոշները, որոնք դեռևս այնտեղ գոյություն ունեն, առաջին հայացքից թվում են անհեթեթության աստիճանի տարօրինակ ու բարբարոսական, սակայն դրանցից ցանկացածի ներքին իմաստի ուշադիր ու անաչառ քննության դեպքում կարելի է տեսնել, թե ինչպիսի վարպետությամբ է դրանց մեջ ներդրվել այս կամ այն բարոյական կամ հիգիենիկ օգուտն այն մարդկանց համար, որոնք կպահպանեն դրանք:

Վերցրու, օրինակ, այնտեղի արտաքնապես անիմաստ սովորույթներից մեկը, որը պահպանվել է «կոլենյան լուրիներ» կամ «կոլենյան գնչուներ» կոչվող ասիացի էակների մի ցեղախմբի մոտ, որոնք

բնակվում են Պարսկաստանի ու Աֆղանստանի միջև. այդ սովորույթն այնտեղի մյուս էակներն անվանում են «գնչուական ինքնաձխահարություն»:

Այդ արտաքինից տխմար թվացող սովորույթը ճշտորեն նույն նպատակին է ծառայում, ինչին ծառայում է պարսկական լվացման սովորույթը կամ արդասթը: Գնչուական այդ ցեղախումբը համարվում է Երկրի երեսին գոյություն ունեցող ցեղախմբերից ամենափնթին, և իրոք՝ նրանք այնքան փնթի են, որ նրանց հագուստներում մշտապես վիստում են, այսպես կոչված, ոջիլները:

Նրանց այդ «ինքնաձխահարության» սովորույթն, իմիջիայլոց, ծառայում է նաև այդ միջատների ոչնչացման գործին:

Թեև այդ ցեղախմբին պատկանող մարդկային էակներն իսկապես չափազանց փնթի են, սակայն նրանց միջավայրում ոչ միայն վներական հիվանդություններ չկան, այլև նրանք նույնիսկ չգիտեն ու երբեք չեն լսել, թե կարելի է հիվանդանալ նման հիվանդություններով:

Իմ կարծիքով, դա ամբողջովին ու լիովին նրանց այդ սովորության արդյունքն է, ոն այնտեղ ինչ-որ մի հին էակ հորինել է իր դարաշրջանի մարդկանց բարօրության համար, և այն, փոխանցվելով սերնդեսերունդ, վերջիվերջո հասել է կոլենյան գնչուների ցեղախմբի ներկայիս այդ փնթի էակներին:

Ինքնաձխահարության այդ արարողակարգի համար ամեն մի գնչուական ընտանիք ունի իր, այսպես կոչված, «աթեշկային⁶⁸», այսինքն՝ հատուկ ձևի աթոռը, որն իրենք սրբազան են համարում. և ամբողջ այդ ծեսը նրանք կատարում են այդ սրբազան աթոռի օգնությամբ:

Այդ գնչուների ամեն մի ընտանիք ունի նաև իր «թունդիրը⁶⁹», որը հատուկ հողաշեն փոս է, ինչպիսին ամենուրեք կարելի է հանդիպել Ասիա աշխարհամասում, և որը սովորաբար օջախ է ծառայում հաց թխելու և կերակուր պատրաստելու համար:

Ասիական երկրներում այդ թունդիրում գլխավորապես «աթար» են վառում՝ մի վառելիք, որը բաղկացած է չորքոտանի կենդանիների թրիքից:

Բուն ծեսն այսպես է կատարվում. երբ գնչուների ընտանիքը երեկոյան տուն է վերադառնում, նրանք նախ հանում են իրենց հագուստը և թափ տալիս այդ թունդիրի վրա:

Թունդիրը միշտ կեծ է լինում, քանի որ աթարը շատ դանդաղ է վառվում, իսկ նրա շուրջ գոյացած մոխիրը երկար ժամանակ պահում է կրակը:

Ի դեպ, հետաքրքիր կլինի նշել, որ երբ այդ գնչուները թունդիրի վրա թափ են տալիս իրենց հագուստները, նրանց այդ գործողությունն ուղեկցվում է հետաքրքիր երևույթով. այն է՝ հագուստից դուրս եկած և կրակի մեջ հայտնված ոջիլները նախքան բոցավառվելը պայթում են, և մեծ ու փոքր այդ ոջիլների պայթյունների տարբեր հնչյուններն իրար հետ մի զարմանալի «երաժշտական համանվագ» են ստեղծում:

Հիշյալ ոջիլների պայթյունները լսողը երբեմն այնպիսի տպավորություն է ստանում, կարծես հեռվում ինչ-որ տեղ մի քանի դյուժին, այսպես կոչված, գնդացիներից կրակելիս լինեն:

Եվ այսպես, այն բանից հետո, երբ այդ «արժանավոր գնչուները» թափ են տալիս իրենց ոչ պակաս արժանավոր հագուստները, նրանք անցնում են սրբազան ծեսին:

Նախ և առաջ նրանք հանդիսավոր կերպով և որոշակի հանդիսավորությամբ իրենց սրբազան աթոռն իջեցնում են թունդիրի մեջ և հերթով՝ մեծից փոքր, իջնում ու կանգնում են այդ աթոռի վրա:

Սրբազան աթոռի եղած-չեղածը մի ոչ մեծ տախտակ է, որին չորս երկաթե ոտքեր են ամրացված, այնպես որ կարելի է թունդիրի մեջ կանգնել դրա վրա՝ տաք մոխրով չվառելով ոտքերը:

Մինչ ընտանիքի անդամները հերթով կանգնում են սրբազան աթոռի վրա, այդ ընթացքում ընտանիքի մյուս անդամները սրբազան երգ են երգում, իսկ աթոռի վրա գտնվող դանդաղ ու հանդիսավոր կերպով ծնկները ծալելով կքանստումներ է անում և միաժամանակ աղոթում: Սովորույթը պահանջում է, որ նա այդպես վարվի այնքան ժամանակ, քանի դեռ թունդիրը չի տաքացրել նրա սեռական անդամների բոլոր մասերը:

Մի ուրիշ սովորույթ, որը դրան նման է և արտաքինապես նույնքան տխմար, ես տեսել եմ մի ուրիշ ոչ մեծ ցեղախմբի մարդկանց մոտ, որոնց «տուսուլի քրդեր» են ասում, և որոնք ապրում են Անդրկովկասում՝ Արարատ լեռան մոտակայքում:

⁶⁸ ռուս. տարբերակում՝ атешкайни, անգլ. տարբերակում՝ ateshkam

⁶⁹ ռուս. տարբերակում՝ тандур, անգլ. տարբերակում՝ tandoor

Այդ ցեղախումբն այնքան փնթի չէ, որքան կոլենյան գնչուները: Ընդհակառակը, նրանք ամեն օր լողանում են Արաքս գետում և հիմնականում ապրում թարմ օդ շնչելով, քանի որ հիմնականում հովիվներ են. նրանք այնքան մաքուր են, որ նրանցից չի զգացվում այն առանձնահատուկ հոտը, որը բնորոշ է այդ հսկայական Ասիա աշխարհամասում բնակվող համարյա բոլոր ոչ մեծ ցեղախմբերին:

Այդ ցեղախմբի յուրաքանչյուր ընտանիք ունի իր սեփական, այսպես կոչված, «խրճիթը», որը և՛ ապրելու, և՛ հյուրեր ընդունելու համար է, քանի որ մեկը մեկին հյուր գնալու սովորույթը շատ զարգացած է այդ ցեղախմբի առանձին ընտանիքներում:

Սովորաբար ամեն մի խրճիթի մուտքի որևէ անկյունում, այսպես կոչված, «սրբազան մանդալ» է տեղադրված լինում, այսինքն՝ օջախ, որում մշտապես վառ է պահվում մխացող փայտածուխի կամ հիշյալ աթարի կրակը, իսկ ամեն մի այդպիսի սրբազան մանդալի կողքին կախված է լինում ոչ մեծ փայտե մի արկղ, որին «քթալնոց⁷⁰» են ասում, և որի մեջ միշտ որոշակի բույսի արմատներ են լինում:

Այստեղ «ինքնածխահարման ծեսը» կատարվում է հետևյալ կերպ. երկու սեռերին պատկանող բոլոր տնեցիներն ու հյուրերը, նախքան խրճիթի գլխավոր մասը հասնելը, պետք է անցնեն սրբազան մանդալով, որպեսզի, ինչպես իրենք են ասում, մաքրվեն այն չար ոգիների ազդեցությունից, որոնք շրջապատում են մարդուն, երբ նա զբաղված է լինում ազնիվ աշխատանքով:

Այդ մաքրագործումը կատարվում է այսպես. ամեն մի խրճիթ մտնող պետք է մոտենա և, արկղից մի քանի արմատի կտոր հանելով, դրանք զգի կրակի մեջ, ապա դրանց ծխով ծխահարի իր սեռական անդամները: Եթե նա կին է, ապա պարզապես վեր է քշտում շրջազգեստը և կանգնում ծխացող մանդալի դիմաց: Իսկ եթե տղամարդ է, ապա հանում կամ իջեցնում է շալվարը և նույնպես կանգնում նշված ծխի դիմաց:

Միայն այդպես մաքրվելուց հետո նրանք կարող են մտնել խրճիթի գլխավոր սրահը, այլապես, ինչպես իրենք են պնդում, տուն կբերվեն ոչ միայն չար ազդեցություններ, այլև դրանց կուտակվելու դեպքում մարդիկ կարող են հիվանդանալ շատ վատ հիվանդություններով:

Այդ սրբազան մանդալները սովորաբար սահմանազատվում են ամենալավ «ջեջիմներով», այսինքն հատուկ գործվածքի կտորներով, որոնք միայն քրդերն են հյուսում:

Կրկնում եմ, զավա՛կս, ներկայումս այդ Ասիա աշխարհամասում նմանատիպ շատ սովորույթներ կան:

Անձամբ ես դրանցից տեսել եմ հարյուրներով, որոնք առաջին հայացքից թվացել են ոչ պակաս տարօրինակ ու բարբարոսական, բայց նրանց թաքուն իմաստի լուրջ և անաչառ քննության դեպքում միշտ ի հայտ է եկել միևնույն նպատակը. այն է՝ կա՛մ ոչնչացնել տարբեր հիվանդությունների վնասակար հարուցիչներին, կա՛մ ամրապնդել բարոյական ամոթի զգացումը:

Իսկ Եվրոպա աշխարհամասում ես համարյա թե չգտա ոչ մի սովորույթ, որը հատուկ ստեղծված լիներ կամ հիգիենայի, կամ էլ զանգվածների մեջ բարոյականություն պատվաստելու նպատակներով:

Չի կարելի ժխտել, որ Եվրոպա աշխարհամասում նույնպես կան տարբեր սովորույթներ, որոնց թիվը նույնիսկ հազարների է հասնում. սակայն դրանք բոլորը հաստատվել են միայն այն բանի համար, որ էակները կարողանան մեկմեկու հաճույք պատճառել կամ թաքցնել գործերի իրական վիճակը, այսինքն քողարկել իրենց արտաքինի անցանկալի (հիարկե, միայն իրենց սուբյեկտիվ հասկացողության առումով) ձևերը և թաքցնել իրենց ներքին ոչնչությունը:

Այնտեղ գոյություն ունեցող սովորույթները տարեցտարի ավելի ու ավելի են մեծացնում այնտեղի էակների անձնական ու մտավոր «երկդիմությունը»:

Բայց գլխավոր չարիքն այն է, որ այնտեղ ներկայումս աճող սերնդի բոլոր «ոսկիանողները», կամ երեխաների դաստիարակությունը հասցված է սոսկ իրենց մոտ գոյություն ունեցող բազմաթիվ սովորույթների յուրացմանը, որոնք միայն անբարոյականություն են ծնում: Դրա հետևանքով, տարեցտարի այն տվյալները, որոնք տասնյակ դարերով բյուրեղացել են իրենց ներսում «Աստծո պատկերն ու նմանությունն ունեցող» էակ, այլ ոչ թե պարզապես, ինչպես հենց իրենք են ասում, «կենդանի» կազմավորելու համար, մի կողմից՝ ապաբյուրեղացվում են, իսկ մյուս կողմից՝ նրանց հոգեկառույցն արդեն համարյա այնպիսին է դառնում, որը մեր թանկագին Ուսուցիչը բնորոշում է հետևյալ բառերով.

«Նրա ներսում կա ամեն ինչ, բացի հենց իրենից»:

⁷⁰ ռուս. տարբերակում՝ ктульнец, անգլ. տարբերակում՝ ktalnotz

Եվ իսկապես, զավա՛կս, նահապետական լավ սովորությունների իսպառ բացակայության և իրենց նշանավոր «դաստիարակության» հետևանքով այդ աշխարհամասի ժամանակակից էակներն արդեն լրիվ վերածվել են, այսպես կոչված, «ավտոմատների» կամ կենդանի մեխանիկական տիկնիկների:

Ներկայումս նրանցից յուրաքանչյուրը կարող է կենդանանալ և արտաքնապես դրսևորել իրեն միայն այն դեպքում, եթե պատահաբար սեղմվեն նրա ներսում արդեն առկա այն տպավորությունների, այսպես ասած, «կոճակները», որոնք նա մեքենայաբար ընկալել է իր ողջ նախապատրաստական տարիքի ընթացքում:

Բայց եթե այդ կոճակները սեղմող չկա, ապա էակներն այնտեղ ոչ այլ ինչ են, քան, ինչպես կրկին բնորոշում է մեր մեծապատիվ մոլլա Նաբեդինը, սոսկ «մամլված մսի կտորներ» են:

Այստեղ անպայման պետք է նշել, որ ժամանակակից քաղաքակրթության էակների այդպիսի վիճակի գլխավոր պատճառներից մեկը նաև հենց այդ ձեռնաշարժությունն է՝ մի հիվանդություն, որը վերջին ժամանակներս այնտեղ համարյա համաճարակի է վերածվել, և որն էլ իր հերթին նույնպես իրենց երեխաների դաստիարակության արդյունքն է, որն իրականացվում է ըստ իրենց տիրակալների միջավայրում ամրապնդված մի չարաղետ գաղափարի, այն է՝ «բոլորովին պարկեշտ բան չէ երեխայի հետ սեռական հարցերի շուրջ խոսելը»:

Եվ ապա, ես նորից եմ ընդգծում, որ հենց այդ, ըստ իրենց միամիտ դատողության, աննշան գաղափարը, որի նշանակությանը ոչ ոք ուշադրություն չի դարձնում, այն համարելով սոսկ «պարկեշտության-անպարկեշտության» հարց, գլխավոր պատճառներից մեկն է, որ նրանք հասել են նման բացառիկ, այսպես ասած, «հոգեկան մեքենայացվածության»:

Որոշակի պատկերացումների համախմբության մեջ, որն իրենք «դաստիարակություն» են անվանում, կա նույնիսկ առանձին բաժին, որտեղ բացատրվում ու մատնանշվում է, թե հատկապես ինչը երեխաներին ասելն է, ինչպես իրենք են արտահայտվում, «պարկեշտ» և ինչը՝ «ոչ պարկեշտ»:

Հարկ է, որ իմանաս, որ վերջին անգամ քո այդ մոլորակի մակերևութին լինելուս ամենավերջում ինձ վիճակվեց այդ չարանենգ երկրային հարցը դարձնել իմ հատուկ դիտումների առարկան և մանրամասն հետազոտել այն:

Որպեսզի մոտավոր կերպով իմանաս, թե ինչպիսի արդյունքների է հանգեցնում երեխաների ժամանակակից երկրային դաստիարակությունը, ես քեզ կպատմեմ հենց այն դեպքի մասին, որն առաջինը պատճառ դարձավ այդ երկրային թյուրիմացության նկատմամբ իմ հետագա հատուկ հետաքրքրության համար:

Թեև այդ դեպքը տեղի է ունեցել Ռուսաստան կոչվող մեծ հանրությունում, այնուհանդերձ այդ «պատմությունը», որը հիմա քեզ կպատմեմ, բավական բնութագրական է և շատ լավ է նկարագրում նրանց ժամանակակից քաղաքակրթությանը պատկանող երեխաների դաստիարակությունն ընդհանրապես:

Բնութագրական է այնքանով, որ այդ Ռուսաստան կոչվող մեծ հանրությունում ևս ժամանակակից պատասխանատու էակները, հատկապես, այսպես կոչված, «ամենավերին իշխող դասի» էակները, իրենց երեխաներին դաստիարակում են ճիշտ այնպես, ինչպես Եվրոպա և Ամերիկա աշխարհամասերի այլ հանրություններում բազմացող ժամանակակից պատասխանատու էակներն են դաստիարակում իրենց երեխաներին:

Երեխաների երկրային դաստիարակության հարցին հատուկ ծանոթանալու նկատմամբ իմ մեջ հետաքրքրության ազդակ առաջացրած այդ դեպքի իմ նկարագրությունը ես կնախաբանեմ՝ պատմելով այն մասին, ինչ տեղի ունեցավ հենց այդ դեպքից առաջ և ինչը հրաշալի կերպով ցուցադրում է նրանց այդ դաստիարակության նշանակությունը, ինչպես նաև այդ հարցի նկատմամբ իմ հետաքրքրության աճի, այսպես ասած, «մի օղակն է»:

Մի առիթով ինձ վիճակվեց մի քանի ամիս գտնվել այդ հանրության մայրաքաղաքում՝ «Մանկտ-Պետերբուրգում»:

Այնտեղ գտնվելուս ընթացքում ես ծանոթացա մի տարեց զոյգի հետ:

Ամուսինը, այսպես կոչված, «սենատոր» էր, իսկ նրա կինը՝ «նրբակիրթ կին», որը մի քանի «բարեգործական հաստատությունների» հովանավորն էր:

Ես հաճախ էի լինում նրանց տանը և այդ սենատորի հետ զբաղվում էի շախմատ խաղալով, ինչպես ընդունված է այնտեղի, այսպես կոչված, «օրինապահ մարդկանց» մոտ:

Այդ տարեց զոյգը մի քանի դուստր ուներ:

Բոլոր ավագ դուստրերն արդեն կարգված, այսինքն՝ ամուսնացած էին, և միայն նրանց տասներկու տարեկան կրտսեր դուստրն էր տանը մնացել:

Քանի որ այդ գույզն արդեն պարտավորություններ չունեի ամուսնացած դուստրերի նկատմամբ, նրանք որոշել էին իրենց կրտսեր դստերը տալ այն ժամանակվա պատկերացումներով ամենալավ դաստիարակությունը, և այդ նպատակով նրան տեղավորել էին «ինստիտուտ» կոչվող բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ հատուկ «գիշերօթիկում»:

Նրանց այդ կրտսեր դուստրը միայն կիրակի օրերին և գլխավոր տոներին էր տուն գալիս, իսկ շաբաթվա որոշակի օրերին հայրն ու մայրն էին նրան այցելում գիշերօթիկում:

Տոն օրերին ես համարյա միշտ այցելում էի նրանց և հանդիպում այդ գրավիչ ու դեռևս անաղարտ աղջկան. երբեմն միասին զբոսնում էինք մոտակա, այսպես կոչված, «զբոսայգում»:

Այդ զբոսանքների ժամանակ կամ կատակում էինք, կամ էլ նա պատմում էր իր պարապմունքների ու նոր տպավորությունների մասին:

Այդ հանդիպումների ու զրույցների ընթացքում մեր միջև կամաց-կամաց ընկերության պես մի կապ հաստատվեց:

Նրա ընկալումներն ու դրսևորումները շատ արագընթաց էին, կամ, ինչպես քո սիրելիներն են իրենց մոտ բնորոշում նման մարդկանց, նա «կենսախինդ ու խոհուն» աղջնակ էր:

Իմ այդ սենատոր ծանոթն, ինչպես այնտեղ են ասում, «վերահսկողական գործուղումով» ուղարկվեց հեռավոր Սիբիրի ինչ-որ վայր:

Կինը որոշեց ուղեկցել նրան, քանի որ սենատորը տառապում էր «լյարդի հիվանդությամբ» և մշտական խնամքի կարիք ուներ: Սակայն իրենց կրտսեր դստեր պատճառով նրանք չէին կարող իրականացնել այդ համատեղ ճամփորդությունը, քանի որ չկար մեկը, որ նրան այցի գնար ինստիտուտ և տոն օրերին նրան տուն բերեր:

Եվ ահա մի անգամ՝ առավոտյան, ծնողները՝ իմ այդ տարեց ծանոթները, եկան իմ բնակարանը և հարցրին, թե չե՞մ համաձայնի արդյոք իրենց բացակայության ընթացքում ամեն շաբաթ այցելելու ինստիտուտում սովորող իրենց աղջկան և տոն օրերին նրան տուն բերելու:

Ես, իհարկե, անմիջապես համաձայնություն տվի նրանց առաջարկին, և երբ շուտով այդ սենատորն ու իր կինը մեկնեցին Սիբիր, ես սկսեցի ճշգրտորեն կատարել նրանց դստեր նկատմամբ ստանձնած պարտավորություններս, որն այդ ժամանակ արդեն իմ սիրելին էր դարձել:

Երեխաների դաստիարակության նպատակով հատուկ գոյություն ունեցող այդ ուսումնական հաստատություն կատարած առաջին իսկ այցի ժամանակ ես նկատեցի մի տարօրինակ բան, որը նույնպես պատճառ հանդիսացավ ներկայիս քո սիրելիների կողմից հորինված այդ «աղետի» հենց իրենց վրա ունեցած ազդեցության իմ հետագա հետազոտությունների ու դիտումների համար:

Այդ, ինչպես իրենք են ասում, «ազնվաբարո հաստատություն» կատարած այցելությանս օրը այն ընդունարանում, որտեղ ծնողները կամ խնամարկուները հանդիպում էին իրենց զավակների կամ խնամարկյալների հետ, կային շատ այցելուներ:

Մեկ-երկու ծնող կամ խնամարկու հենց նոր էին ներս մտել, ուրիշներն արդեն զրուցում էին իրենց երեխաների կամ խնամարկյալների հետ, որոշներն էլ դեռ սպասում էին իրենց երեխաների երևալուն, և նրանց ամբողջ ուշադրությունը սևեռված էր այն դռան վրա, որով սովորաբար ներս էին մտնում այդ հաստատության աշակերտուհիները: Ես նույնպես, երբ մտա ընդունարան և հերթապահ վերահսկողուհուն բացատրեցի, թե ում եմ ուզում տեսնել, նստեցի այնտեղ և սկսեցի սպասել պատահաբար ինձ բաժին հասած խնամարկյալին: Սպասելուս ընթացքում ես դիտում էի չորսբլորս: Այդ «ազնվաբարո հաստատության» բոլոր աշակերտուհիները միատեսակ էին հագնված, բոլորն իրենց մագերը հյուսել էին երկու ծամով, որոնք՝ ծայրերը ժապավեններով կապած, իջնում էին նրանց մեջքի երկայնքով:

Սակայն իմ աչքից չվրիպեց այդ ժապավենների ու ծամերի մի առանձնահատկություն: Աշակերտուհիներից մեկի ծամերի ժապավենները հենց այնպես կախված էին նրա մեջքի վրա, իսկ մյուսների մոտ այդ ժապավենները կապված էին հատուկ ձևով:

Հաջորդ տոն օրը, երբ իմ խնամարկյալին բերեցի տուն, և մենք արդեն զրուցում էինք, այսպես կոչված, ինքնաեղի շուրջ, ես նրան հարցրի.

«Մո'նյա, ասա՛ ինձ խնդրեմ, եթե ձեր հաստատության բոլոր աշակերտուհիներն ամեն ինչն այդպես միատեսակ են հագնում, հապա ինչու՞ ծամերի ծայրերն ունեն այդպիսի առանձնահատկություն»:

Նա միանգամից շիկնեց և, իմ հարցին չպատասխանելով, մտածկոտ հայացքը հառեց իր թեյին. միայն որոշ ժամանակ անցնելուց հետո նա հուզմունքով պատասխանեց.

«Դա հենց այնպես չէ... Թեև դա մեր ինստիտուտի մեծ գաղտնիքն է, բայց ես չեմ կարող ձեզ չպատմել դրա մասին, քանի որ կատարելապես վստահ եմ, որ դուք մեր այդ մեծ գաղտնիքն ուրիշ ոչ մեկին չեք հայտնի»:

Եվ նա անկեղծորեն սկսեց ինձ պատմել հետևյալը.

«Ժապավենները կապելու այդ ձևը մեր աշակերտուհիները միտումնավոր կերպով հորինել են, որպեսզի մենք ճանաչենք իրար, այսինքն՝ իմանանք, թե որ ակումբին է պատկանում այս կամ այն աշակերտուհին, բայց որ միաժամանակ դասատուներն ու վերահսկիչները, և ընդհանրապես՝ ոչ ինստիտուտականուհիները դրա մասին չիմանան և մեր գաղտնիքը չբացահայտեն:

Մեր ինստիտուտի բոլոր աշակերտուհիները բաժանված են երկու տեսակի, որոնցից մեկը «արական ակումբի» ներկայացուցիչներն են, իսկ մյուսը՝ «իգական ակումբի», և մենք իրար տարբերում ենք հենց նրանով, թե ինչպես են կապված այդ ժապավենները»:

Հետո նա ինձ մանրամասն բացատրեց, թե հատկապես ինչով են տարբերվում իրարից այդ երկու ակումբները:

Նա ասաց, որ, որպես կանոն՝ բոլոր ինստիտուտ նոր ընդունվածները սկզբում դառնում են իգական ակումբի անդամ, և միայն հետո, եթե աշակերտուհին իրեն համարձակ է պահում դասատուների մոտ կամ շատ ակտիվ է լինում այս կամ այն առումով, ապա բոլոր աշակերտուհիների համաձայնությամբ նա ընտրվում է արական ակումբի անդամ և, այդ պահից սկսած, նա իր ծամերի ժապավենների ծայրերը միացնում է իրար:

«Մովորաբար մեր ակումբի համար հանդիպման վայր են ծառայում որևէ ազատ դասասենյակ կամ ննջարանը, բայց առավել հաճախ՝ զուգարանները:

Արական ակումբի անդամներն ընդհանրապես ունեն հետևյալ արտոնությունները. նրանք իրավունք ունեն իգական ակումբի անդամներից ինչքան ասես և ում ասես ընտրելու, որ հետո հրամաններ տան նրանց. իսկ վերջիններս միշտ պարտավոր են բավարարել արական ակումբի անդամի բոլոր ցանկությունները և անել հնարավոր ամեն ինչ, որ թեթևացնեն գիշերօթիկային նրա կյանքը. օրինակ՝ առավոտյան հարդարել նրա անկողինը, արտագրել նրա դասերը, տնից ստացած նվերները կիսել նրա հետ և այլն, և այլն:

Ակումբների գլխավոր զբաղմունքը միասին արգելված գրքեր կարդալն է, որոնք հայթայթում է աշակերտուհիներից որևէ մեկը: Նրանք գլխավորապես կարդում են մի շատ հազվագյուտ ձեռագիր, որը գնվել է ինստիտուտի ընդհանուր բաժանորդագրության փողերով: Դրանում շարդրված է նշանավոր բանաստեղծուհի Սաֆոյի ամբողջ ուսմունքը»:

Ես պետք է քեզ ասեմ, զավա՛կս, որ Սաֆոն հույն բանաստեղծուհի է, որը քո այդ մոլորակում առաջինն է «իսկական երջանկության ճանապարհ» բացել հունահռոմեական, ինչպես նաև ժամանակակից քաղաքակրթություններին պատկանող կանանց համար:

«Կանացի երջանկության» այդ մեծ ստեղծարարի բնակության վայրը եղել է «Լեսբոս» կղզին, որից էլ ծագել է այն կանանց անվանումը, որոնք իրենց գոյատևման գործընթացում արդեն հասցրել են հասկանալ ու իրականություն դարձնել այդ նշանավոր կնոջ ուսմունքը և ներկայումս «լեսբուհիներ» են կոչվում:

Իմ այդ խնամարկյալուհին, որը դեպքերի բերումով իմ լուսավորիչը դարձավ քո այդ մոլորակի իգական սեռի էակների հոգեկառույցի նրբությունների առումով, այնուհետև ինձ բացատրեց, որ ինստիտուտի ամեն մի աշակերտուհի, որն արական ակումբի անդամ է, կարող է իր համար ցանկացած քանակի ընկերակցուհիներ ընտրել համատեղ ժամանակ անցկացնելու համար. դա, իհարկե, տեղի է ունենում բանաստեղծուհի Սաֆոյի ուսմունքին լրիվ համապատասխան:

Կարծում եմ, որ միայն այդ փաստով, որը ես քեզ պատմեցի իմ հազարավոր դիտարկումների շարքից, դու արդեն կկարողանաս հստակ պատկերացնել, որ նման բացառիկ այլանդակությունը չէր կարող տեղ գտնել աճող սերնդի միջավայրում, եթե այնտեղ տարածում չգտներ այն ըմբռնումը, թե երեխաների հետ «սեռական հարցի» մասին խոսելը «արտակարգ անպարկեշտություն» է:

«Պարկեշտության» այդ ըմբռնումը ժառանգաբար ժամանակակից քաղաքակրթությանն է փոխանցվել «միջնադար» կոչվող դարաշրջանի էակներից:

Տիասնամուտության այդ միջնադարյան թեկնածուները՝ Աստվածային Ուսուցիչ Հիսուս Քրիստոսի ուսմունքի ճշմարիտ իմաստը ոչնչացնող գլխավոր գործիչներից ոմանք, այն ժամանակ հորինեցին և առօրեական գոյատևման համար կանոն դարձրին մի չարանենգ հորինվածք, որն անվանեցին «*լավ պահվածք*»: Եվ դրանից հետո այդ չարանենգ հորինվածքն այնքան ամուր նստեց մեծամասնության հոգեկառույցում, որ նրանց համար օրգանական դարձավ ու սկսեց ժառանգաբար փոխանցվել մի սերնդից մյուսին. այնպես որ հիմա ներկայիս քո սիրելիները, որոնք լիովին թուլակամ են դարձել, որքան էլ ջանան, չեն կարողանա հաղթահարել այնպիսի մի հոգեկան բարդույթ, ինչպիսին տվյալ դեպքում այն պատկերացումն է, որ աննրբանկատություն է երեխաների հետ «սեռական հարցի» մասին խոսելը:

Ինչպե՞ս թե... Երեխաների հետ խոսել սեռի մասի՞ն... Միթե՞ դա «պարկեշտ բան» է...

Ներկայումս ժամանակակից քաղաքակրթության ներկայացուցիչներն իրենց երեխաների հետ խոսում են միայն այն մասին և խրատում են միայն այն, ինչ հորինվել ու շարունակում է հորինվել «*տիասնամուտական անհատականություններ*» զանազան թեկնածուների դասագրքերում՝ համաձայն «լավ պահվածք» վերնագրի պահանջի:

Եվ քանի որ բոլոր այդ դասագրքերում համարվում է, որ «սեռական հարցի» մասին խոսելը շատ անպարկեշտ բան է, իսկ երեխաների հետ՝ նույնիսկ «անբարոյականություն», ապա եթե նույնիսկ ժամանակակից մարդիկ տեսնում են, որ իրենց սիրելի տղան կամ աղջիկը փչանում է, նրանք ուղղակի չեն կարող և նույնիսկ, ինչպես արդեն քեզ ասել եմ, անգամ մտավոր ամբողջ ցանկության դեպքում քաջություն չեն ունենա, որ իրենց երեխաներին բացատրեն այդ հանցավոր սովորությունների վնասն ու մեղսականությունը:

Եվ այսպես, զավա՛կս, երբ իմ բարի ծանոթները՝ սենսատորն ու իր կինը, Միքիից վերադարձան, և ես ազատվեցի իմ սիրելու՝ իրենց դստեր նկատմամբ ինձ վրա վերցրած պարտականություններից, հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ վերոհիշյալ իրադարձությունը, որը սկիզբ դրեց նրանց համար կործանարար այդ ժամանակակից երկրային հարցի իմ հատուկ դիտարկումներին ու հետազոտություններին:

Այդ տխուր իրադարձությունը, որը տեղի ունեցավ բուն Սանկտ-Պետերբուրգի մի ուրիշ նմանատիպ ուսումնական հաստատությունում, հետևյալն էր: Այդ հաստատության տնօրինուհին, համարելով, որ իր աշակերտուհիներից մեկը կոպտորեն խախտել է «պարկեշտության» իրենց նշանավոր կանոնները՝ նրան հանդիմանել էր այնքան խիստ ու անարդարացի, որ դրա արդյունքում մեղադրյալն ու նրա ընկերուհին՝ նորմալ կին-մայրեր դառնալու նախադրյալներ ունեցող երկու մատաղ աղջնակներ, կախվել էին:

Այդ դեպքի իմ քննությունից պարզվեց հետևյալը:

Նշված ուսումնական հաստատության աշակերտուհիների մեջ կար Ելիզավետա անունով մի աղջնակ, որին հեռավոր կալվածքի տեր ծնողները բերել էին մայրաքաղաք, որ այնտեղ՝ հատուկ ուսումնական հաստատությունում, նա ստանա իրենց այդ նույն ժամանակակից «դաստիարակությունը»:

Սանկտ-Պետերբուրգի այդ հիշյալ գիշերօթիկում այնպես է ստացվել, որ տասներեքամյա այդ աղջնակը՝ Ելիզավետան, ջերմորեն ընկերացել է մի ուրիշ աղջնակի՝ Մարիայի հետ, որն իր նման դեռևս չէր հասունացել:

Այդ տարի, «գարնանային տոնի», կամ, ինչպես այնտեղ նաև ասում են, «մայիսյան» օրը, այդ ուսումնական հաստատության բոլոր աշակերտուհիներին, ավանդույթի համաձայն, արշավ են տանում քաղաքից դուրս, և այդ երկու «մտերիմ ընկերուհիները» հայտնվում են տարբեր խմբերում, որոնք իրարից որոշակի հեռավորությամբ էին գնում:

Այնպես է պատահել, որ դաշտում Ելիզավետան տեսել է մի «չորքոտանի կենդանի», որին այնտեղ «ցուլ» են ասում, և այս կամ այն պատճառով շատ ցանկանալով, որ իր մտերիմ ընկերուհի Մարիայի աչքից ևս չլրիպի այդ սիրուն չորքոտանին, բացականչել է. «Մարի՛ ա, Մարի՛ ա, նայի՛ր, ահա ցուլն է գալիս...»:

Այդ ցուլ բառը հազիվ հնչած՝ այսպես կոչված, «դաստիարակչուհիները» խոնվել են այդ Ելիզավետայի շուրջը և նրա գլխին թափել ամեն տեսակի կտրուկ խրատներ:

Ինչպե՞ս կարելի է «ցուլ» բառն արտասանել... Չէ՞ որ այդ կենդանին զբաղվում է մի բանով, որի մասին ոչ մի դաստիարակված մարդ ոչ մի դեպքում չպետք է խոսի, առավել ևս՝ այդպիսի «բարեկիրթ հաստատության» աշակերտուհին:

Մինչ դաստիարակչուհիները գգում էին խեղճ Ելիզավետային, ինստիտուտի ողջ ժողովուրդը հավաքվում է այդտեղ. շուտով երևում է նաև տնօրինուհին, որը, իմանալով պատահածի մասին, սկսում է իր հերթին կշտամբանքներ տեղալ Ելիզավետայի գլխին:

– Ինչպե՞ս չես ամաչում,– ճչացել է նա,– այդպիսի անպարկեշտ բա՞ռ ես ասել...

Ի վերջո Ելիզավետան այլևս չի դիմացել և հարցրել է արցունքների միջից.

– Ուրիշ ինչպե՞ս կոչելի ես այդ չորքոտանուն, եթե նա իսկապես ցուլ է...

«Այդ բառը,– բացատրել է տնօրինուհին,– որով դու կոչել ես այդ կենդանուն, օգտագործում է ամեն մի անկիրթ մարդ. բայց դու, քանի որ մեր ինստիտուտում ես սովորում, ուրեմն անկիրթ չես և պետք է կարողանաս անպարկեշտ բաներն այնպիսի անուններով կոչել, որ դրանք ականջի համար անպարկեշտ չհնչեն:

Օրինակ՝ եթե դու տեսել ես այդ անպարկեշտ կենդանուն և ցանկացել ես, որ քո ընկերուհին էլ տեսնի, ապա կարող էիր բացականչել. «Մարի ա, տե՛ս, ահա բիֆշտեքսն է գալիս», կամ՝ «Մարի՛ ա, հապա նայի՛ր, մի բան է մոտենում, որը շատ հարմար է կերակուր եփելու համար, երբ մենք սոված ենք լինում» և այլն»:

Այդ ամենից խեղճ Ելիզավետան սաստիկ նյարդայնացել է, հատկապես այն պատճառով, որ այդ «խիստ նկատողությունները» արվել են իր բոլոր ընկերների ներկայությամբ. ուստի չի դիմացել և ճչացել է ամբողջ ուժով.

– Ա՛խ, դու՛ք, թշվառ պառաված օրիորդներ, շերտավոր խրտվիլակնե՛ր, դժոխքի ծնունդնե՛ր... Միայն այն բանի համար, որ ինչ-որ բան իր անունով եմ կոչել, իսկույն սկսում եք արյունս խմե՛լ: Երիցս անիծյա՛լ լինեք...

Այդ վերջին բառերն ասելուց հետո նա, ինչպես այնտեղ են ասում, «ուշագնաց է եղել», և նրանից հետո ուշքները կորցրել են նաև ինքը՝ տնօրինուհին, ինչպես նաև մի քանի վերակացուհիներ ու դաստիարակչուհիներ:

Իսկ այն «վերակացուհիներն» ու «դաստիարակչուհիները», որոնք ուշքները չեն կորցրել, այնպիսի «ժխոր» են բարձրացրել, ինչպիսին գուցե թե միայն այն, այսպես կոչված, շուկայում է լինում, որտեղ բացառապես Բերդիչև քաղաքից եկած «հրեուհիներն» են առևտուր անում:

Այդ ամենի արդյունքը լինում է այն, որ երբ ուշքները կորցրած «վերակացուհիներն» ու «դաստիարակչուհիները» ուշքի են գալիս, անմիջապես հենց դաշտում, այսպես կոչված, «մանկխորհուրդ» են հրավիրում հաստատության նույն այդ տնօրինուհու նախագահությամբ, որով այսպիսի դատավճիռ են կայացնում՝ քաղաք վերադառնալուն պես անհապաղ՝ հեռագրել Ելիզավետայի հորը, որ նա գա իր աղջկա հետևից, քանի որ նա հեռացվում է ինստիտուտից՝ զրկվելով Ռուսաստանի կայսրության որևէ ուրիշ ինստիտուտ ընդունվելու հնարավորությունից:

Հենց նույն օրը՝ բոլոր աշակերտուհիներին իրենց տներն ուղարկելուց մեկ ժամ հետո ինստիտուտի, այսպես կոչված, «դռնապաններից» մեկը պատահաբար «փայտանոցում» հայտնաբերում է, որ երկու դեռևս դեռատի ապագա մայրեր կախվել են գերաններից կապված պարանների օգնությամբ:

Մարիայի գրպանում այսպիսի գրություն էին գտել.

«Ես իմ թանկագին ընկերուհի Ելիզավետայի հետ այլևս չեմ ուզում ապրել այնպիսի ոչնչությունների հետ, ինչպիսին դուք եք, դրա համար էլ գնում եմ ավելի լավ աշխարհ»:

Այդ դեպքն այն ժամանակ ինձ այնքան հետաքրքրեց, որ սկսեցի, իհարկե, մասնավոր կերպով, հոգեվերլուծական համակողմանի հետազոտության ենթարկել այդ տխուր պատմության բոլոր մասնակիցների հոգեկառույցները: Այլ բաների շարքում մասնավորապես պարզեցի, որ Ելիզավետայի հախուռն բռնկման պահին նրա հոգեկառույցում այն վիճակն է եղել, որն այնտեղ «քառս» են անվանում:

Եվ իսկապես, զարմանալի կլինեք, եթե այդպիսի «քառս» չառաջանար այդ դեռևս ինքնագիտակցության չհասած տասներեքամյա աղջնակի հոգեկառույցում, որն այդ դժբախտ իրադարձությունից առաջ միշտ ապրել էր իր հոր մեծ կալվածքում, որտեղ մշտապես բնության

այնպիսի ճոխություն էր տեսել ու զգացել, ինչպիսին տեսել էր նաև այդ օրը Սանկտ-Պետերբուրգ քաղաքի մերձակա դաշտում:

Նրան տեղափոխել են այդ աղմկոտ Սանկտ-Պետերբուրգ քաղաքը և երկար ժամանակ պահել հանպատրաստից պատրաստված տուփի մեջ: Եվ դրանից հետո նա հանկարծակի հայտնվել է մի միջավայրում, որտեղից ստացված ամեն մի արտաքին տպավորություն նրա ներսում արթնացրել է նախկինում իր ապրած հաճելի զգացողությունների հիշողությունները:

Քո այդ մոլորակում, այսպես կոչված, «վաղ գարնանը» իրոք երբեմն այնպիսի տեսարաններ են բացվում, որոնց հմայքին դժվար է չենթարկվել:

Պատկերացրո՛ւ՝ հեռվում արածում են կովերը, կողքիդ՝ ոտքերիդ մոտ, հեզորեն գլուխները դուրս են հանել ձնծաղիկները, ականջիդ կիպ կողքով մի թռչնակ է անցնում. աջ կողմից լսվում է ինչ-որ անծանոթ թռչնակի դայլայլը. ձախ կողմից իր բույրն է տարածել նույնպես անծանոթ մի ծաղիկ:

Կարճ ասած, նմանատիպ պահերն այնտեղի էակների ներսում, հատկապես՝ Ելիզավետայի նման ջահելների, որոնք գարշահոտ քաղաքում երկար ժամանակ ճնշված կյանքով ապրելուց հետո հայտնվում են ամեն տեսակի անսովոր տպավորություններով լի միջավայրում, բնական *լինելիական ուրախությունից* ծագող մտավոր նմանազգացությունները բնականորեն ինքնաբերական կերպով առաջանում են ընկալված ամեն մի արտաքին բանից:

Ելիզավետան պետք է որ դա հատկապես ուժեղ զգար, քանի որ նախքան ինստիտուտ բերվելը, ինչպես արդեն ասացի, ապրել էր իր հոր մեծ կալվածքում, որը հեռու էր գտնվում քաղաքային իրարանցման չափազանց աննորմալ պայմաններից:

Դրա շնորհիվ նրա ընկալված ամեն մի նոր տպավորությունը բնականորեն նրա մեջ արթնացնում էր մանկության նախկին հիշողությունները, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին կապվում էր ուրիշ տարբեր հաճելի դեպքերի հետ:

Այնպես որ դժվար չէ պատկերացնել, որ «ցուլ» կոչվող այդ չորքոտանի կենդանու անսպասելի հայտնվելը, որից նա տեսել էր իրենց կալվածքում, և որը գուցե եղել է բոլոր երեխաների սիրելին՝ այնքան, որ նույնիսկ սեղանից թաքուն հաց են փախցրել նրան տալու համար, այդ դեռևս չձևավորված ու տպավորվող աղջնակի ներսում խթանել է համապատասխան նմանազգացություններ, որոնց ազդեցությամբ էլ, համակված լինելով անկեղծ ուրախության զգացումով, որը դեռ չէր հասցրել փչանալ լինելիական գոյատևման հաստատված աննորմալ պայմաններից, կամեցել է այդ ուրախությունը կիսել իրենից որոշակի հեռավորության վրա գտնվող ընկերուհու հետ, ուստի և ձայն է տվել նրան, որ նայի այդ սիրուն ցուլին:

Եվ ահա, հարց եմ տալիս քեզ՝ ի՞նչ անուն տար նա այդ չորքոտանի էակին, որն իսկապես ցուլ էր եղել:

«Բիֆշտե՞քս» կոչեր, ինչպես խրատում էր այդ «հարգարժան բարձրագույն ուսումնական հաստատության» «հարգարժան» տնօրինուհին, որի ղեկավարած հաստատությունն այնտեղ հատուկ գոյություն ուներ, որ «երեխաների դաստիարակությունն» իրականացնի այն բարբարոսական համակարգով, որը, դժբախտաբար, այնտեղ գործում է մինչև հիմա:

Ինչպես տեսնում ես, զավա՛կս, մտադրվելով քեզ մի քիչ էլ պատմել քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակներից նրանց մասին, որոնք բազմանում են Ամերիկա աշխարհամասում, ես, իմիջիայլոց, շատ բաներ ասացի ընդհանրապես այդ յուրահատուկ մոլորակի բոլոր աշխարհամասերում ծնվող ու գոյատևող եռուղեղ էակների մասին:

Չեմ կարծում, թե դրա համար դու ինձ կհանդիմանես, քանի որ միևնույն ժամանակ այդ ընթացքում քեզ հաջողվեց շատ փաստեր իմանալ, որոնք լուսաբանում են նրանց տարօրինակ հոգեկառույցի մանրամասները:

Եթե ընդհանրապես եռուղեղ էակներին բնորոշ նորմալ Լինելիությանը մոտ Լինելիություն ձեռք բերելու հնարավորության կորստի առումով անդրադառնամ Ամերիկա աշխարհամասի այդ խոշոր խմբավորման էակների ընդհանուր ներկայությունների, այսպես կոչված, «ծնունդ առնելու աստիճանին», ապա կարող եմ քեզ որոշ բաներ ասել, որոնք որոշակի աստիճանով մխիթարական են նրանց համար. այն է՝ իմ կարծիքով, նրանց միջավայրում դեռևս այնպիսի էակների որոշակի տոկոս կա, որոնց ներկայություններում նշված հնարավորությունը դեռ լրիվ կորսված չէ:

Թեև այդ նոր խմբավորումը բաղկացած է և շարունակում է համալրվել այն եռուղեղ էակներով, որոնք բազմանում են Եվրոպա աշխարհամասում, որտեղ նշված հնարավորությունն ունեցող

էականերին, հատկապես վերջին ժամանակներում, հարկավոր է, ինչպես նման դեպքերում մեր իմաստուն մոլլա Նասրեդինն է ասում, «փնտրել ամենահզոր էլեկտրական լամպերով», այնուհանդերձ, կրկնում եմ, այդ մեծ խմբավորման ներսում նման էակաների ավելի մեծ տոկոս կա, քան Եվրոպա աշխարհամասում:

Ինձ թվում է, որ այդպես է ստացվել այն պատճառով, որ Եվրոպա աշխարհամասից այնտեղ են գաղթել և շարունակում են գաղթել գլխավորապես, այսպես կոչված, «հասարակ էակաները», որոնք չեն հանդիսանում, այսպես ասած, «իշխող դասին» պատկանող եվրոպացի էակաների «ցեղական սերունդները», որոնց մեջ շատ դարերի ընթացքում ժառանգաբար սերնդեսերունդ փոխանցված տհասամուսական հատկությունների նկատմամբ հակվածությունը ներկայումս այնքան շատ, այսպես կոչված, «ներքին սնապարծություն» է ի հայտ բերել, որ դա երբեք թույլ չի տա, որ նրանք միաձուլվեն այնտեղի ընդհանուր զանգվածի հետ, որպեսզի ընդհանուր ջանքերով վերածվեն այնպիսի եռուղեղ էակաների, ինչպիսին հարկ է, որ լինեն:

Միայն այն բանի շնորհիվ, որ այդ աշխարհամասում բազմացող եռուղեղ էակաների մեջ շատ քչերն էին «իշխող խավի սերունդներից», և էակաների ընդհանուր զանգվածն ինքնին այնպիսի միջավայր էր, որտեղ «մեր եղբայրը» դեռ կարող էր գոյատևել ու չենթարկվել տեղական ճառագայթումների ազդեցությանը, որոնք առաջանում են շրջապատում եղած էականերից ու վնասակար ազդում ամեն մի էակի, այսպես կոչված, «սուբյեկտիվ-բնական ներքին ուժերի» վրա, ուստի և ես կարողանում էի նրանց միջավայրում լինելուս ընթացքում հանգստանալ իմ ուզածի պես:

Այժմ, զավակս, մեկ որ այսքան ժամանակ ծախսեցի, որպեսզի քեզ բացատրեմ այդ խոշոր խմբավորման էակաների այն նախկին կործանարար սովորությունների ամենատարբեր նորացումների ու վերածնությունների իմաստը, որոնք շատ անգամ են գոյություն ունեցել նրանց մոլորակում և ներկայումս օբյեկտիվ իմաստով արդեն դարձել են վնասակար ոչ միայն իրենց, այլ նաև մյուս աշխարհամասերում բազմացող և քո հետաքրքրությունը շարժած բոլոր մյուս եռուղեղ էակաների համար, ապա իմ կարծիքով արդեն լիովին անհրաժեշտ է, այսպես ասած, որպես «ավարտական ակորդ», քեզ իրազեկ դարձնել նաև իմ այն մտքերին, որոնք իմ մտածողության մեջ սկիզբ առան Նյու-Յորք քաղաքում գտնվելուս վերջին օրը և ավարտվեցին շոգենավում, որն այդ աշխարհամասից ուղղություն էր վերցրել դեպի արևելք:

Այդ օրը ես այնտեղ նստած էի «Չայլոս» կոչվող մի տիպիկ տեղական սրճարանում, որը գտնվում էր, այսպես կոչված, «Կոլումբոսի շրջան» հրապարակում, և սպասում էի ինձ հետ Եվրոպա աշխարհամասից այդ աշխարհամասը եկած էականերին, որպեսզի նրանց հետ միասին գնայի այն նավամատույցը, որտեղից պետք է մեկնեի շոգենավը. այդ ընթացքում պատուհանից դիտում էի անցնող էականերին, որոնք այդ քաղաքի բնակիչներից էին ու, թեև այդ օրն իրենց արտաքին տեսքով մեխանիկորեն ընկալելի ու ճանաչելի էին (գլխավորապես, իհարկե, նույն այն սովորույթի շնորհիվ, որը նրանց մոտ վերջին ժամանակներում ամրապնդվել է ավելի շատ, քան ցանկացած ուրիշ աշխարհամասի էակաների մոտ, այն է՝ «ստրուկները» դառնալ նույն այն չարաղետ հորինվածքի, որը «մոդա» է կոչվում), սակայն իրենց ներքին բովանդակության առումով, չգիտես ինչու, ինձ հատկապես միանման էին թվում:

Նրանց դիտելով՝ ես մտածում էի նախօրեին իմ կատարած վերջնական եզրակացության մասին, որ Հերոպասի հոսքի ներկա ժամանակահատվածում այդ ընդհանուր առմամբ տարօրինակ եռուղեղ էակաների սովորական գոյատևման համամոլորակային գործընթացում նրանց արտառոց հոգեկառույցի ընդհանրական համախմբության արդեն վաղուց հաստատում գտած առանձնահատկության եռանդուն դրսևորման աղբյուրը, որը բարձրագույն սրբազան Անհատականություններից մեկը մի անգամ բնութագրել է որպես «աննորմալության նոր պատճառների տարածման հիմնական պարբերական աղբյուր», ներկայացնում են հենց այդ նոր խմբավորման էակաները:

Այս անգամ նմանազգացությունների սկզբնավորման և իմ հետագա ակտիվ մտորումների համար խթան ծառայեց այն փաստի իմ արձանագրումը, որ այն ամենը, ինչով գոյանում է նրանցից յուրաքանչյուրի, այսպես կոչված, «սուբյեկտիվ արտաքին տեսքի համակցությունը», այսինքն՝ հագուստը, շարժուձևը և ընդհանրապես բոլոր ամրապնդված սովորությունները, որոնք բոլոր այդ եռուղեղ էակաները ձեռք են բերում իրենց համատեղ գոյատևման սովորական գործընթացում, բացարձակ ճշգրիտ նմանակումն է այն ամենի, ինչ առկա է այլ աշխարհամասերում գտնվող ուրիշ

տարբեր ինքնություն խմբավորումների էակների միջավայրերում. նմանակում են հենց այն, ինչը այլ խմբավորումների ազատ էակները (այսինքն՝ նրանք, ովքեր փորձարկել են այն ամենը, ինչ կարող է տալ սովորական լինելիական գոյատևման գործընթացը և, հետևաբար, արդեն հիասթափվել են դրանցից) անվայել բան են համարում իրենց նման էակների համար:

Այդ փաստի պատահական արձանագրումն ինձ անմիջապես շատ զարմացրեց գլխավորապես այն պատճառով, որ ես արդեն համակողմանի տեղեկացված ու կատարելապես համոզված էի, որ տվյալ ժամանակաշրջանում այդ մոլորակում ամենուրեք համարյա բոլոր մյուս խմբավորումների էակները՝ ինչպես վերջերս ձևավորվածները, այնպես էլ իրենց հանրության բարձր զարգացածության փուլում գտնվողները, ամբողջովին ընդօրինակում են այդ բոլորովին վերջերս կազմավորված խմբավորման էակների բոլոր նորարարությունները և իրենց սովորական գոյատևման ընթացքում եռանդուն կերպով հետաքրքրվում են այդ նորարարություններով, և, միևնույն ժամանակ, նմանակում են այդ նոր խմբավորման էակների բոլոր արտաքին դրսևորումները. հետևաբար, «ներքին սուբյեկտիվ նշանակությունը», որից ծնվում են այդ արտաքին դրսևորումները, բաղկացած է միայն այն բանից, որը, ինչպես արդեն ասել եմ, ի դժբախտություն մյուս ինքնություն խմբավորումների ազատ էակների, ամրապնդվել և բնորոշ է դարձել այդ խմբավորումների սովորական էակների ընդհանուր ներկայություններին:

Իմ այդ անսպասելի փաստման հետևանքով իմ ներսում հետաքրքրասիրության շատ ուժեղ ազդակ առաջացավ, որ պարզեմ այն տրամաբանական պատճառները, որոնք հանգեցրել են այդ երկրային անհամապատասխանությանը:

Այդ ամբողջ օրվա ընթացքում՝ ինչպես «Չայլոսում» նստած ժամանակ Եվրոպա աշխարհամասից ինձ ուղեկցող էակներին սպասելիս, այնպես էլ «տաքսի մեքենայով» և շոգենավով ուղևորվելիս, ես շարունակում էի շատ եռանդուն կերպով մտածել այդ հարցի լուծման վրա՝ կողմնակի մարդկանց, իհարկե, ներկայանալով որպես պարզապես շրջապատում տեղի ունեցող ամեն ինչը մեքենայորեն դիտող, իսկ արտաքինապես այդպես երևալու իմ ունակությամբ (որպեսզի կարողանամ շփվել նրանց հետ և միաժամանակ կասկածներ չհարուցեմ կամ, ինչպես այնտեղ են ասում, «աչքի չընկնեմ») ես այնտեղ՝ Երկրում, կատարելության էի հասել, կամ դարձել էի, ինչպես հենց իրենք կասեին, «հմուտ դերասան»:

Տախտակամածին նստելով և դիտելով այդ աշխարհամասի առափնյա թաթոթղ լույսերը, որն աստիճանաբար հեռանում էր շոգենավի դեպի արևելք գնալուն զուգընթաց, ես խորհրդածում և տրամաբանորեն համեմատում էի մեկը մյուսից բխող փաստերը և արդյունքում ինձ համար համարյա լիովին պարզեցի, թե ինչու և ինչպես է այդ չարաղետ մոլորակում ծագել նշված անհամապատասխանությունը:

Այդ խորհրդածություններիս սկզբում ես բազմաթիվ փաստեր գտա, որոնք նպաստել են դրան, բայց հետո, երբ սկսեցի հերթականությամբ բացառել, ինչպես նման դեպքերում արվում է, անխուսափելիորեն ծագողները, արդյունքում ունեցա նույնիսկ իմ զարմանքը հարուցող մի փաստ, որը թեև առաջին հայացքից աննշան է թվում, բայց, ինչպես պարզվեց, մշտապես եղել և շարունակում է մնալ այդ աննորմալությունը ծնող պատճառը:

Այն է՝ պարզվեց, որ իմ կողմից այդքան հաճախ հիշատակվող նրանց այդ նշանավոր «դաստիարակության» հետևանքով ընդհանրապես նրանցից յուրաքանչյուրի ընդհանուր ներկայության մեջ, անկախ այն բանից, թե ո՞ր ինքնություն խմբավորմանն են նրանք պատկանում, պատասխանատու տարիքին նախորդող նախապատրաստական շրջանում անխուսափելիորեն նախադրյալներ են ծագում այն որոշակի համոզմունքի առաջացման համար, թե իբր նախկին դարաշրջաններում իրենց մոլորակում իրենց նման էակներն իրենց ինքնակատարելագործումը երբեք չեն հասցրել բանականության այն մակարդակին, որին հասել են իրենց ժամանակակիցները և դեռ շարունակում են ինքնակատարելագործվել:

Երբ իմ մտքերը կենտրոնացան դրա վրա, և ես սկսեցի հիշել այդ հարցին վերաբերող իմ նախկին տպավորությունները, որոնք ընկալել էի ինչպես գիտակցաբար, այնպես էլ իմ նախկին դիտումների ընթացքում ընդհանուր առմամբ մեքենայաբար, ես աստիճանաբար հանգեցի նրան, որ բոլոր քո սիրելիները հատկապես վերջին երեսուն դարերում իսկապես իրենց պատասխանատու գոյատևման ընթացքում միշտ համոզված են եղել, թե իրենց ժամանակակից, այսպես կոչված,

քաղաքակրթությունն ուղղակի բանականության՝ իրենց մոլորակում եռուղեղ էակների ծագման ամենասկզբում սկիզբ առած զարգացումը շարունակելու անմիջական արդյունքն է :

Ուստի և, երբ այդ էակները՝ ցանկացած խմբավորման իրենց ժամանակակիցները, դեռևս նախապատրաստական տարիքում այդ կեղծ համոզմունքի գոյացման համար նորանոր տվյալներ ստանալու պատճառով, երբ պատահաբար տեր են դառնում ինչ-որ բանի, որը տվյալ պահին իրենց համար ցանկալի է, և դրանով իսկ հեղինակություն են ձեռք բերում, և միևնույն ժամանակ, իհարկե, պատահաբար իմանում են նախորդ դարաշրջանների էակների արդեն շատ անգամ գոյություն ունեցած որևէ գաղափարի մասին և տարածում են այն՝ որպես իրենց հորինածը, ապա ուրիշ խմբավորումների էակները, ոչ ճիշտ դաստիարակության հետևանքով իրենց ընդհանուր ներկայության մեջ չունենալով այնպիսի տվյալներ, որոնք հարկ է, որ լինեն պատասխանատու տարիքին հասած բոլոր եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում, և որոնք ծնում են, այսպես կոչված, «իրականության բնագրական զգացողություն» և «լայն մտահորիզոն», հավատում են, որ նախ՝ այդ գաղափարն իրենց մոլորակում առաջին անգամ է ծագել, և երկրորդ՝ որ եթե դրա գործնական կիրառությունն իրականացրել են նրանք, որոնք արդեն տեր են դարձել նշված «ինչ-որ ցանկալի բանին», ապա դա պետք է որ իսկապես շատ լավ բան լինի, և իսկույն նեթ սկսում են եռանդուն կերպով նմանակել ամեն ինչը՝ թե՛ իսկապես լավը, թե՛ վատը, եթե նույնիսկ դա ամբողջովին հակառակ է այնտեղ գոյություն ունեցող ամեն ինչին և իրենց սովորական գոյատևման մեջ լավ ամրապնդված բաներին, հենց միայն նրա համար, , որ ունենան այն, ինչը այսօրվա դրությամբ ցանկալի բան է համարվում:

Ես այն ժամանակ նույնիսկ մտաբերեցի, որ դրանից շատ առաջ մի անգամ արդեն շատ լուրջ կերպով խորհրդածել եմ այդ նույն հարցի շուրջ. դա եղել էր այդ մոլորակի մակերևույթին հինգերորդ անգամ անձնապես լինելուս ընթացքում, երբ այդ արտառոց եռուղեղ էակների կուլտուրական կենտրոնը Բաբելոն քաղաքն էր համարվում, և ես պետք է նույնպիսի հարցի շուրջ «տրամաբանական վերլուծություն» կատարեի այդ յուրահատուկ եռուղեղ էակների հոգեկառույցի հենց այդ տարօրինակ գծի առնչությամբ:

Այն ժամանակ, ամեն ինչից գատ, ես նաև դատում էի հետևյալ կերպ:

Այն, որ նրանք այդպես են մտածում, գուցե թե կարելի է արդարացնել այն ենթադրական դատողությամբ, որ անցյալ դարաշրջաններում հաստատված սովորական գոյատևման աննորմալ պայմանների պատճառով նրանց ճշգրիտ տեղեկություններ չեն հասել այն իրադարձությունների մասին, որոնք անցյալում տեղի են ունեցել իրենցից առաջ մոլորակում ապրած եռուղեղ էակների գոյատևման ընթացքում. Բայց ինչպե՞ս կարելի է կարծել, թե մինչև իրենց ժամանակները ոչ ոքի մոտ, որոնց ներսում, ինչպես արդեն հայտնի է դարձել, նույնիսկ ամենամոտ ժամանակներում այնուամենայնիվ տեղի է ունենում «ինչ-որ բան», որը նման է «համեմատական տրամաբանության» գործընթացին, մտածողության մեջ չի ծագել, այսպիսի առնվազն հասարակ, կամ, ինչպես հենց իրենք կասեին, «մանկական գաղափար»:

Եվ իսկապես, եթե, ինչպես իրենք են ասում և նույնիսկ համոզված են, որ իրենց մոլորակն իրենց տեսակով հանդերձ, այսինքն՝ իրենց նման այնպիսի էակներով, որոնք մտածելու կարողությամբ են օժտված, գոյություն ունի արդեն բազմաթիվ դարեր, և իրենցից առաջ պետք է որ ծնված ու գոյատևած լինեն իրենց նման միլիոնավորները, հապա ինչու՞ այդ շատ ու շատ միլիոնների մեջ չեն գտնվել թեկուզ մի քանի էակներ, որոնք ևս ի վիճակի լինեին իրենց ժամանակակիցների բարօրության համար ստեղծելու ամեն տեսակի հարմարություններ՝ այնպիսիք, ինչպիսիք տվյալ դեպքում ներկայումս հորինում են այդ ժամանակակից ամերիկացի էակները, իսկ բոլոր մնացածները առանց քննադատական վերաբերմունք ցուցաբերելու և նույնիսկ մեծագույն ոգևորությամբ դրանք փոխառնում են, ինչպես օրինակ՝ զուգարանների «հարմարավետ նստատեղերը», պահածոները և այլն, և այլն:

Այդ անթույլատրելի թերըմբռնումն առավել ևս տարօրինակ է այն պատճառով, որ նրանք ընդունում են բազմաթիվ, ինչպես հիմա են անվանում, հինավուրց իմաստունների գոյությունը, ինչպես նաև չեն ժխտում այդ իմաստունների բացատրած և իրենց հասած հսկայական, չափազանց բազմազան տեղեկատվությունը բազմաթիվ օբյեկտիվ ճշմարտությունների վերաբերյալ, մի տեղեկատվություն, որն, իմիջիայլոց, քո սիրելիներից ոմանք առանց խղճի խայթ զգալու ներկայացնում են որպես իրենց մտածածը և լայնորեն օգտագործում են իրենց զանազան

եսասիրական նպատակներով՝ բոլորովին չկասկածելով, որ իրենց այդ իմաստակությունների արդյունքների համախմբությունը վաղ թե ուշ անխուսափելիորեն հանգեցնելու է իրենց հետնորդների իսպառ ոչնչացմանը:

Նրանց մտածողության այդ առանձնահատկությունը (ինչը «տրամաբանական վերլուծության» միջոցով հասկանալու ամեն մի նախաձեռնության կանգնեցնում է շատ բարդ խնդրի առաջ), նրանց ներսում ծնելով այդ կեղծ համոզմունքը, իմ դիտումների ամբողջ ընթացքում, դեռևս Ատլասիդա աշխարհամասի գոյության ժամանակներից սկսած, մշտապես եղել է նրանց համատեղ գոյատևման ընթացքում տեղի ունեցած և իրենց համար անբարենպաստ ելք ունեցած համարյա բոլոր մեծ ու փոքր կարևոր իրադարձությունների, այսպես ասած, «ծանրակենտրոն պատճառը»:

Նրանց արտառոց մտածողության արդյունք հանդիսացող այդ կեղծ համոզմունքի, ինչպես նաև նրանց զգացմունքների ձևավորման վրա կոնդաբուֆեր օրգանի հատկությունների ազդեցության հետևանքով, որոնք պատասխանատու տարիքում նրանց ներկայություններում անխուսափելիորեն առաջանում են «նախանձ», «ագահություն», «խանդ» և այլ անուններով, այնտեղ միշտ այնպես է լինում, որ երբ որևէ խմբավորման էակներ տեր են դառնում ինչ որ բանի, որը տվյալ ժամանակահատվածում ցանկալի է համարվում, ապա դեպքերի մեծ մասում իրենց առօրյա գոյատևման մեջ հաստատված վնասակար մի գործառության հետևանքով, որն իրենք արտահայտում են «չդադարեցնել առաջադիմությունը» բառերով, մյուս խմբավորումների բոլոր էակների ընդհանուր ներկայություններում, անկախ այն բանից, թե այդ խմբավորումը ո՞ր աշխարհամասում է գտնվում, հենց որ լուր են ստանում այդ մասին, անհապաղ նույն բանն ունենալու ցանկություն է ծնվում, և, այդ պահից սկսած, նրանցից յուրաքանչյուրի ներսում առաջանում է նախ՝ նրանց նմանակելու պահանջ, և երկրորդ՝ «անառարկելի վստահություն», որ այդ ուրիշ խմբավորման էակները պետք է որ շատ ճիշտ ապրելիս լինեն, եթե կարողացել են ձեռք բերել հենց այն, ինչը տվյալ պահին ցանկալի բան է համարվում:

Դրա հետ կապված՝ քո սիրելիների մտածողության տարօրինակության «նրբին պահն» այն է, որ նրանց մտածողության մեջ երբեք տեղի չի ունենում «կշռադատել» կոչվող գործընթացը, որպեսզի թեկուզ մոտավոր կերպով հասկանան, թե իրականում ինչու են ուրիշները տիրացել այն բանին, որի պատճառով իրենց ներսում առաջանում է «նախանձ», «ագահություն», «խանդ» և այլն:

Այսպիսով, զավա՛կս, չնայած ձեռքբերումների իմաստով այդ նոր խմբավորման էակներն իրենց ներսում չունեն բացարձակապես ոչինչ, որ իրենց փոխանցված լինի իրենց մոլորակում անցյալ դարաշրջաններում ապրած եռուղեղ էակների գիտակցական ջանքերից ու կամավոր տառապանքներից գոյացած արդյունքներից, այլ ինչպես ներքին բովանդակության, այնպես էլ արտաքին դրսևորումների առումներով կազմված են միայն այն ամբողջ վատից, որն առկա է մյուս ինքնուրույն խմբավորումների էակների մոտ, սակայն միայն այն պատճառով, որ վերջին ժամանակներում պատահաբար տեր են դարձել հենց այն բանին, ինչն օբյեկտիվ իմաստով առավել արհամարհելի է, բայց ընդհանրապես ամրապնդված սովորական գոյատևման աննորմալ պայմանների հետևանքով այդ թշվառները ցանկալի բան են համարում, այնուհանդերձ մյուս բոլոր խմբավորումների էակներն այժմ լրիվ ընդօրինակում են այն ամենը, ինչ նրանք հորինում են:

Պատահաբար հեղինակություն վաստակած այդ ժամանակակից խմբավորման էակների կործանարար հորինվածքներից նրանց ընդհանուր ներկայությունների համար ամենավնասակարը, որն ապագայում ուղղելու տեսակետից պատկանում է արդեն իրականություն դարձած չարիքների թվին, կարելի է համարել իրենց գոյատևման մեծ մասը բարձրահարկ շենքերում անցկացնելու՝ նրանց հաստատած գործառությունը:

Որպեսզի դու հստակ կարողանաս պատկերացնել նրանց՝ հատկապես այդ գյուտի ամբողջ վնասի նշանակությունը, ես նախ և առաջ պետք է քեզ բացատրեմ հետևյալը:

Հիշո՞ւմ ես, երբ ես քեզ պատմում էի այնտեղ ներկայումս գոյություն ունեցող մի «կործանարար միջոցի» մասին, որը «սպորտ» անունն է կրում, ես ասացի, որ քո սիրելիների գոյատևման տևողությունը սկզբում նույնպես փուլիհասնիտամային էր, այսինքն՝ նրանք պետք է գոյատևեին այնքան ժամանակ, քանի դեռ լրիվ չէր հանդերձավորվել և բանականության կատարելության պահանջված աստիճանին չէր հասել կեսջան մարմինը, և որ հետո, երբ այնտեղ սկսեցին հաստատվել սովորական *լինելիական գոյատևման* շատ աննորմալ պայմաններ, Մեծ Բնությունն ստիպված եղավ ինչպես նրանց ներկայությունները, այնպես էլ նրանց հետագա գոյատևման գծընթացը կազմակերպել

հիթկլանոցի սկզբունքի հիման վրա, այսինքն՝ որոշակի շրջակա պատճառների արգասիքներին համապատասխան:

Ըստ այդմ, այդպիսի պատճառներից մեկը նաև նրանց «երկրորդ *լինելիական սննդի*» «թրթիռների խտության աստիճանն էր», այսինքն, ինչպես հենց իրենք կասեին, իրենց շնչած օդի «խտացվածության աստիճանը»:

Բանն այն է, որ էակների համար երկրորդ սնունդ հանդիսացող այդ տիեզերական գոյացությունը նույնպես կազմված է երկրորդ հիմնական համատիիեզերական Սրբազան Եռամասիկապող օրենքին համապատասխան և նույնպես իրականացվում է իր երեք տարատեսակ տիեզերական նյութերի միջոցով:

Դրանցից առաջինը այն համակարգի արևի ճառագումներն են, որում այդ որոշակի տիեզերական գոյացությունն էակների համար ծառայում է որպես «երկրորդ սնունդ»:

Երկրորդը այն մոլորակում փոխակերպության ենթարկված նյութերն են, որում գոյատևում են այդ սնունդն օգտագործող էակները:

Եվ երրորդը այն նյութերն են որոնք փոխակերպվում են այդ նույն համակարգի ուրիշ մոլորակների վրա և նրանց ճառագումների միջոցով փոխանցվում այդ մոլորակին:

Եվ այսպես, էակների կազմավորման և գոյատևման համար անհրաժեշտ բոլոր այդ նյութերի միախառնման գործընթացը, որոնք փոխակերպում է բուն մոլորակը, և որոնք կազմում են Սրբազան Եռամասիկապողի երկրորդ սուրբ ուժը, պահանջվող որոշակի չափաբաժիններին համապատասխան կարող է տեղի ունենալ մոլորակի մակերևույթից հաշված՝ մթնոլորտի որոշակի սահմաններում, քանի որ, Տենիկդաո կոչվող երկրորդային տիեզերական օրենքի ազդեցության հետևանքով, որին քո սիրելիներն անվանում են «ձգողականության օրենք», այդ նյութերը չեն կարող թափանցել մթնոլորտի որոշակի բարձրությունից ավելի վեր:

Ըստ իս, հարցի իմ այս լուսաբանումից հետո դու ինքդ կարող ես հասկանալ դրանից բխող բոլոր հետևանքները և քո ներսում տվյալներ կուտակել նրանց այդ գյուտի վերաբերյալ քո սեփական կարծիքն ունենալու համար:

Կարծում եմ, զավա՛կս, որ ես արդեն ամբողջությամբ բավարարեցի քո հետաքրքրասիրությունն այդ, այսպես կոչված, «քրիստոնեական գիտության» «դոլար-ֆոքստրոտային» հետևորդների առնչությամբ:

Հանուն օրելկտիվ արդարության այժմ ինձ մնում է միայն նշել, որ ինչի էլ նրանք վերածվեն ապագայում, այնուհանդերձ նրանց միջավայրում գտնվելուս ընթացքում ես հնարավորություն ունեցա ներքնապես հանգստանալու, և դրա համար ես հիմա նրանց պետք է իմ անկեղծ երախտագիտությունը հայտնեմ:

Իսկ քեզ, հատկապես քեզ, ո՛վ, իմ ժառանգորդ, ում փոխանցվել է և ժառանգաբար կփոխանցվի (իհարկե, այնքանով, որքանով ինքդ արժանի կլինես քո սեփական բարեխիղճ *լինելիական գոյատևմամբ* և ՀԱՄԱՅՆԻ ՊԱՀԱՊԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐԸ՝ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆԸ ազնվորեն ծառայելով) այն ամենը, ինչ ես ձեռք եմ բերել իմ երկարատև գոյատևման ընթացքում, հրամայում եմ. եթե այս կամ այն պատճառով քեզ վիճակվի լինել Երկիր մոլորակում, անպայման այցելիր Նյու Յորք քաղաքը կամ, եթե այդ ժամանակ այդ քաղաքն այլևս գոյություն չունենա, ծայրահեղ դեպքում կանգնիր այն վայրում, որտեղ ժամանակին այդ քաղաքը եղել է և բարձրաձայն արտասանի՛ր.

«Այս վայրում իմ սիրելի պապիկը՝ իմ արդարամիտ Ուսուցիչ Բեհեդգեբուղը, հաճելի է անցկացրել իր գոյատևման մի քանի ակնթարթները»:

Ես նույնիսկ քեզ պարտավորեցնում եմ, կրկին՝ որպես ժառանգորդի, որին սովորաբար ժառանգաբար փոխանցվում է այն պարտականությունների կատարումը, որոնք նրա նախորդն իր վրա է վերցրել, բայց դրանք այս կամ այն պատճառով անկատար են մնացել, որ դու հատուկ ուշադրություն դարձնես և պարզես մի հարց, որն ինձ շատ է հետաքրքրել, բայց անձամբ ես ի վիճակի չեմ եղել պատասխանելու, քանի որ դեռ դրա ժամանակը չէր եկել. այն է՝ ես քեզ պարտավորեցնում եմ, որ քեզ համար պարզես, թե նրանց հետևորդների համար (իհարկե, եթե այդ ժամանակ հետևորդներ դեռևս առաջանալիս լինեն) ինչպիսի «կործանարար ձև» կստանան այնտեղ շատ լայն տարածում գտած մի «հիվանդության» արդյունքները, որն Օնանսոն ազգանունով այնտեղի մի միստր կոչել է «գրողական մարմաջ» անունով:

Եվ իրոք, զավակս, այն ժամանակ՝ այնտեղ գտնվելուս ընթացքում, քիչ թե շատ մոտ հարաբերություններ ունենալով նրանցից շատերի հետ, ես շատ շուտով հայտնաբերեցի, որ նրանցից համարյա ամեն ոք կա՛մ արդեն գիրք էր գրել, կա՛մ այդ ժամանակ գրում էր, կա՛մ էլ պատրաստվում էր արագորեն ասպարեզ ելնել որպես գրող:

Թեև այդ տարօրինակ հիմնադրությունն այն ժամանակ, ինչպես արդեն ասացի, տարածված էր այդ աշխարհամասի բոլոր էակների միջավայրում, դեռ ավելին՝ անկախ տարիքից, երկու սեռերի էակների միջավայրերում, այնուհանդերձ այն էակների միջավայրում, որոնք գտնվում էին իրենց պատասխանատու տարիքի ամենասկզբում, այսինքն՝ ինչպես նրանք են ասում, «երիտասարդության» շրջանում, և հատկապես նրանց շրջանում, որոնց երեսները ծածկված էին պզուկներով, այդ հիվանդությունն այս կամ այն պատճառով, ինչպես ասում են, «համաճարակային» բնույթ էր կրում:

Հենց դրա հետ կապված ես այնուհետև պետք է նշեմ, որ այնտեղ ծաղկում էր ապրում քո հետաքրքրությունը շարժած յուրօրինակ էակների ընդհանուր հոգեկառույցի տարօրինակության այն ինքնատիպ առանձնահատկությունը, որն այնտեղ վաղուց է առկա իրենց համատեղ գոյատևման գործընթացում, և որը ձևապերպվում է հետևյալ բառերով. «հետաքրքրությունների կենտրոնացում այն գաղափարի վրա, որը պատահաբար օրախնդիր է դարձել»:

Եվ ահա նրանցից շատերը (նրանք, ովքեր ավելի, ինչպես այնտեղ են ասում, «խորամանկ» են, և որոնց ներսում ավելի շատ են հետաճ ապրել «բնագղաբար ձեռնպահ մնալ բոլոր այն դրսևորումներից, որոնք կարող են շրջապատի իրենց նման էակներին մոլորեցնել» անունը կրող *լինելիական ազդակի* համար անհրաժեշտ նախադասյալները) կազմակերպել են զանազան, այսպես կոչված, «դպրոցներ» և կազմել ամեն տեսակի «դասագրքեր», որոնցում մեծ ուշադրություն է դարձված այն բանի մանրամասն ցուցադրությանը, թե հատկապես ինչպիսին պետք է լինի բառերի հերթականությունը, որպեսզի ընթերցողը բոլոր շարադրանքներն ընկալի և յուրացնի:

Եվ այդպիսով, այդ «դպրոցների» բոլոր հաճախողները և այդ «դասագրքերի» բոլոր ընթերցողները Լինելիության և իրականության նկատմամբ իրենց տեղեկացվածության առումներով իրենք իսկ լինելով հենց այնպիսի տիպեր, որոնց մեր Ուսուցիչ մոլլա Նասրեդինը բնորոշում էր հետևյալ բառերով. «ոչնչություն՝ անտանելի թրթիռների մթնոլորտով»՝ սկսում էին խելքներին գոռ տալ այդ ցուցումներին համապատասխան. և, քանի որ նախ այդ նոր խմբավորման էակների սովորական գոյատևման պայմաններում ամրապնդված զանազան այլ աննորմալությունների պատճառով ընդհանրապես ընթերցանությունն ավելի վաղ էր դարձել նրանց օրգանական պահանջմունքը, և երկրորդ՝ ցանկացած շարադրանքի բովանդակությունը հնարավոր է գնահատել՝ միայն այն կարդալով, բացի դրանից, այդ աշխարհամասի բոլոր մյուս էակները՝ ի հավելումն հրապուրվելով ամեն տեսակի, ինչպես իրենք են ասում, «բարձրագույն» վերնագրերով, հա՛կարդում ու կարդում էին, ապա դրան զուգահեռ որոշակիորեն նկատվում էր, թե ինչպես է նրանց արդեն իսկ, այսպես ասած, «սկարացած» մտածողությունը շարունակում ավելի ու ավելի «սկարանալ»:

Ես հենց այնպես չասացի՝ «եթե այն ժամանակ դեռևս հետնորդներ ծնվելիս լինեն», որովհետև ես այն ժամանակ ամեն ինչից զատ նաև նկատեցի, որ իզական սեռի էակների մոլորակային մարմիններում նոր գոյացության ձևավորման փոփոխության թողած հետևանքների այն նույն անսովոր առանձնահատկությունը, որ դրանից շատ առաջ մի անգամ նկատել էի այդ արտառոց եռուղեղ էակների սովորական գոյատևման գործընթացում և, զուգահեռաբար, մյուս հատուկ դիտարկումների շարքում, մանրակրկիտ կերպով փաստագրել այդ առանձնահատկությունից բխող հետևանքները:

Այդ անսովոր փաստն ի հայտ եկավ Ատլանտիդա աշխարհամասի կործանումից առաջ այնտեղի ոչ մեծ մի խմբավորման էակների գոյատևման գործընթացում, որոնք այն ժամանակվա տարբեր խոշոր խմբավորումներից հավաքվել և մեկուսի գոյատևում էին Ատլանտիդայի հարավում գտնվող, այն ժամանակ նշանավոր մի կղզում, որը «Բալախանիրա⁷¹» էր կոչվում և բուն Ատլանտիդայի հետ միաժամանակ սուզվեց մոլորակի խորքը:

Այդ փոքրիկ խմբավորման ժողովրդի սերնդատվությունը դադարեց կանացի սեռի էակների մոլորակային մարմնի ձևավորման նույնպիսի տարօրինակ առանձնահատկության պատճառով, և

⁷¹ ռուս. տարբերակում՝ Балаханира, անգլ. տարբերակում՝ Balakhanira

ժողովրդի վերացման այդ տարատեսակն այն ժամանակ Ախալդան ընկերության գիտուն անդամներն անվանեցին «դեզսուբսենտոցիրոսո»⁷²:

Այդ անսովոր առանձնահատկությունն այն էր, որ այդ ժողովրդի վերջնական վերանալուց մի քանի դար առաջ իգական սեռի էակների մոտ աստիճանաբար սկսեց նկատվել, այսպես կոչված, կոնքերի նեղացում:

Այդ նեղացման արագությունն այնպիսին էր, որ այդ ժողովրդի վերանալուց երկու դար առաջ նրանց բոլոր պատահական սաղմնավորումները և նրանց սաղմերի, այսպես ասած, «պատահական» ձևավորումը, ինչպես այնտեղ են ասում, «Աստծո լույս աշխարհ» դուրս գալու համար, արդեն ի կատար էր ածվում մի եղանակով, որն այն ժամանակ «սիտրիկ»⁷³ էին անվանում, իսկ հիմա «կեսարյան հատում» են կոչում են:

Բեհեդգեբուղի պատմության այս մասում «Քարնակ» տիեզերանավի ներսում եղած ամբողջ եթերում սկսեց, այսպես կոչված, «միջանցիկ քամի» կամ «ալեկոծում» առաջանալ: Դա նշանակում էր, որ «Քարնակի» ուղևորները հրավիրվում են «ջրմիջրմիարան»⁷⁴, այսինքն՝ տիեզերանավի ճաշարանը, որտեղ բոլոր ուղևորներն իրար հետ միասին պարբերաբար առաջին և երկրորդ լինելիական սնունդ էին ընդունում:

Ուստի Բեհեդգեբուղը, Հասեինն ու Ահունը ընդհատեցին իրենց գրույցը և շտապեցին դեպի ջրմիջրմիարան:

ԳԼՈՒԽ ԽԳ

Մարդկանց պարբերական փոխոչնչացման բեհեդգեբուղյան ամփոփ նկարագրությունը կամ Բեհեդգեբուղի կարծիքը պատերազմի մասին

Երբ Բեհեդգեբուղը, Հասեինն ու Ահունը վերադարձան ջրմիջրմիարանից և նստեցին իրենց սովորական տեղերում, Հասեինը շրջվեց Բեհեդգեբուղի կողմը և կրկին ասաց.

– Սիրելի՛ պապիկ, թեև Երկիր մոլորակի եռուղեղ էակների գոյատևման գործընթացում տեղի ունեցող զանազան դրվագների վերաբերյալ քո տված սպառիչ բացատրությունների շնորհիվ ես հստակ պատկերացում կազմեցի և համոզվեցի նրանց հոգեկառույցի հակումների տարօրինակության մեջ, այնուհանդերձ իմ ներսում առաջվա պես հարց է առաջանում նրանց հոգեկառույցի մի առանձնահատկության վերաբերյալ, որը ես դեռևս չեմ կարողանում հասկանալ և ինձ անտրամաբանական է թվում՝ նույնիսկ նրանց հոգեկառույցի տարօրինակությունը հաշվի առնելու պարագայում: Իմ մտքերն անընդհատ վերադառնում են այդ անհասկանալի հարցին և դրա վրա էին կենտրոնացած նույնիսկ ջրմիջրմիարանի սրբազնագործության ընթացքում:

Այդ եռուղեղ էակների գոյատևման գործընթացին վերաբերող քո բոլոր բացատրություններից ես ամենայն որոշակիությամբ հասկացա, որ, թեև պատասխանատու գոյատևման ամբողջ ընթացքում՝ հատկապես երրորդ տրանսպալյան խոտորումից հետո, նրանց բանականությունն առավելապես զուտ մեխանիկական է դարձել, այնուամենայնիվ, նույնիսկ այդ մեխանիկական բանականությամբ, նրանք բավական հաճախ կարողանում են մտածել ու դատել այնքան լավ, որ ի վիճակի են լինում իրենց մոլորակում քիչ թե շատ ճշգրիտ կերպով սահմանել Բնության ամեն տեսակի Օրենքներ, որոնց համապատասխան էլ անգամ որոշ բաներ են հորինում:

Միաժամանակ, դրա հետ մեկտեղ, քո բոլոր պատմություններով կարմիր թելի պես անցնում է միայն նրանց հատուկ այն առանձնահատկության հիշատակումը, որը կապված է պարբերաբար իրար ոչնչացնելու նրանց պահանջմունքի հետ:

⁷² ռուս. տարբերակում՝ дезсупсентоциросо, անգլ. տարբերակում՝ dezsoop-sentozirosso

⁷³ ռուս. տարբերակում՝ ситрик, անգլ. տարբերակում՝ sitrik

⁷⁴ ռուս. տարբերակում՝ джамджампал, անգլ. տարբերակում՝ djampjampal

Եվ ահա, սիրելի՛ պապիկ, ես ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե այդ ինչպե՞ս է, որ այդքան երկարատև գոյատևումից հետո նրանք դեռևս չեն գիտակցել ու շարունակում են չգիտակցել իրենց այդ հատկության ամբողջ ահավորությունը:

Մի՞թե նրանք իրոք չեն տեսնում, որ այդ գործընթացներն ավելի ահավոր են այն բոլոր սարսափներից, որոնք կարող են լինել համայն Տիեզերքում, և մի՞թե երբեք չեն մտածում այդ մասին, որ գիտակցեն դրա ահավորությունն ու մի միջոց գտնեն դա արմատախիլ անելու համար:

Խնդրում եմ, պապիկ, բացատրիր ինձ, թե ինչու է դա այդպես, և թե նրանց արտառոց հոգեկառույցի հատկապես ո՞ր կողմերն են իրենց այդ առանձնահատկության պատճառը...

Այսքանն ասելուց հետո Հասեինը կրկին իր սպասողական ու քննախույզ հայացքը հառեց սիրելի պապիկի դեմքին:

Թոռան այդ խնդրանքին ի պատասխան՝ Բեհեդգերուդը որոշ ժամանակ նրան էր նայում, ինչպես ասում են, «ցավակցական ժպիտով», որից հետո խոր թառանչ քաշեց ու ասաց.

– Է՛հ, սիրելի զավակ... Գլխավորապես այդ առանձնահատկությունն ու դրանից բխող բոլոր հետևանքներն են նրանց բոլոր աննորմալությունների և, այսպես ասած, «խառնափնթոր» տրամաբանության պատճառը:

Կրկին մի փոքր լռելուց հետո Բեհեդգերուդը շարունակեց այսպես.

«Շա՛տ լավ, ես կօգնեմ քեզ այդ հարցը պարզելու գործում, մանավանդ որ մի անգամ արդեն քեզ խոստացել եմ մանրամասն լուսաբանել այն:

Իհարկե, տվյալ դեպքում քո ակտիվ մտածողության զարգացման համար ես չեմ շարադրի իմ անձնական կարծիքը, այլ պատմությունս կտանեմ այնպես, որ դու անհրաժեշտ նյութ ունենաս տրամաբանական համադրության համար և, հետևաբար, կարողանաս քո ներսում տվյալներ բյուրեղացնել այդ հարցի վերաբերյալ սեփական անձնական կարծիք ունենալու համար:

Ի դեպ, դու հարցրիր, թե մի՞թե նրանք իսկապես երբեք չեն մտորում իրենց այդ նախատրամադրվածության մասին, որն արտակարգ ահավոր է և հատուկ է բացառապես միայն իրենց:

Իհա՛րկե, մտորում են, իհա՛րկե, տեսնում են...

Նրանցից ոմանք նույնիսկ շատ հաճախ են մտորում և, չնայած նրանց բանականության մեխանիկական լինելուն, լիովին հասկանում են, որ իրենց այդ առանձնահատկությունը՝ փոխադարձաբար իրար ոչնչացնելու պարբերական նախատրամադրվածությունը, այնպիսի մի աներևակայելի սարսափ ու այլանդակություն է, որ անգամ հնարավոր չէ նկարագրել:

Բայց, ցավոք, այդ եռուղեղ էակների նմանատիպ մտորումներից այնտեղ երբեք ոչ մի լավ բան դուրս չի գալիս:

Եվ լավ բան դուրս չի գալիս մասամբ այն պատճառով, որ այդ մասին միայն առանձին էակներ են մտորում, մասամբ էլ այն պատճառով, որ, ինչպես միշտ, այնտեղ բացակայում է գործողությունների միասնական գիծ ապահովող համամոլորակային կազմակերպությունը. ուստի և, եթե անգամ նշված առանձին էակները մտորում են այդ հարցի շուրջ և որևէ խելացի բան են փաստում այդ սարսափելի երևույթի վերաբերյալ, ապա նրանց այդ փաստումը երբեք լայն տարածում չի գտնում և չի թափանցում մյուս էակների գիտակցության մեջ: Ուստի ևս մեկ անգամ կարելի է միայն ավստսանք հայտնել այդպիսի հարցերի շուրջ այդ էակների «անկեղծ մտորումների» կապակցությամբ:

Պետք է ասեմ, որ *լինելիական գոյատևման* այնտեղ հաստատված աննորմալ պայմանների պատճառով նրանցից յուրաքանչյուրի, ինչպես այնտեղ են ասում, «արթմնի վիճակի հոգեկառույցը» պատասխանատու տարիքի հենց սկզբից աստիճանաբար այնպիսին է դառնում, որ նա կարող է «անկեղծ մտածել» և ճշմարիտ լույսի տակ իրերը տեսնել բացառապես միայն այն դեպքում, երբ նրա ստամոքսն այնքան է լցված առաջին *լինելիական սննդով*, որ նրա, այսպես կոչված, «խաղացկուն նյարդերը» կորցրել են շարժունակությունը, կամ, ինչպես իրենք են ասում, «էլ տեղ չկա». նաև այն դեպքում, երբ նրան արդեն բնորոշ դարձած ու նրա ամբողջ ներկայության համար տիրապետող գործոնների վերածված, եռուղեղ էակին ոչ սազական բոլոր պահանջմունքները, իհարկե, միայն տվյալ պահի առումով, լրիվ բավարարված են:

Իսկ քանի որ նույն այդ հաստատված աննորմալ պայմանների պատճառով ոչ բոլոր էակները հնարավորություն ունեն այդպես բավարարված լինելու, ապա այդ և բազմաթիվ այլ պատճառների բերումով, նրանց մեծ մասը, նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում, չի կարող ոչ անկեղծ մտածել,

ո՛չ էլ տեսնել ու ընկալել իրականությունը. ուստի և «անկեղծ մտածողությունն» ու «իրականության գիտակցումը» արդեն վաղուց այդ մոլորակում շատ հազվագյուտ ճոխություն են և նրանց մեծ մասի համար անմատչելի:

Այնտեղ միայն որոշ «կարևոր» էակներ ու իշխանավորներ են կարողանում իրենց պահանջմունքները հագեցնել. իրականում դրանք այն ամենաահավոր էակներն են, որոնք կարծես թե իրենց դիրքի շնորհիվ կարող էին ինչ-որ բան ձեռնարկել այդ չարիքն արմատախիլ անելու կամ էլ գոնե ինչ-որ չափով այն փոքրացնելու համար:

Մակայն հենց այդ «կարևոր» և իշխանություն ունեցող էակները, որոնք հնարավորություն ունեն հագենալ տրաքելու աստիճան և գուցե թե կարող էին այդ նպատակով ինչ-որ բան նախաձեռնել, իրականում բացարձակապես ոչինչ չեն անում՝ այս անգամ արդեն բոլորովին ուրիշ պատճառներով:

Իսկ դրա հիմնական պատճառները բխում են կրկին նույն այն չարաղետ միջոցից, որն ամրապնդվել է նրանց սովորական *լինելիական գործընթացում* և այնտեղ «դաստիարակություն» է կոչվում:

Այդ չարաղետ միջոցն այնտեղ կիրառվում է ամբողջ երիտասարդության նախապատրաստական տարիքի ընթացքում, բայց ամենուրեք դա հատկապես կիրառվում է այն ջահել էակների նկատմամբ, որոնք հետագա կյանքում համարյա միշտ, որպես կանոն, դառնում են իշխանավորներ:

Եվ ահա, երբ այդ ջահել էակները, որոնք համարյա միշտ վերածվում են իշխանավորների, դառնում են պատասխանատու էակներ և սկսում կատարել իրենց պատասխանատու պարտականությունները, նրանք, իհարկե, ընդհանրապես ոչ մի նախադրյալ չեն ունենում, այսպես կոչված, «տրամաբանական մտածողություն» դրսևորելու համար, քանի որ օգտագործած չեն լինում Մեծ Բնության կողմից նախատեսած այն ժամանակը, որի ընթացքում այդ նպատակների արժանավայել իրականացման համար համապատասխան *լինելիական նախադրյալներ* պետք է կուտակելին, այլ այդ ժամանակը ծախսած են լինում միայն այն բանի համար, որ իրենց ներսում զարգացնեն այնպիսի հատկություններ, որոնք բխում են նրանց այդ նշանավոր դաստիարակության արգասիքների համախմբությունից, որը, որպես կանոն, թելադրում է նրանց, թե ինչպես լավագույն ձևով, այսպես կոչված, տրվեն «ինքնասփոփանքի»:

Նրանց այդ աննորմալ դաստիարակությունն է պատճառը, որ նրանց ներսում ոչ միայն չի բյուրեղանում այնպիսի մի բան, որը նրանց հնարավորության կտար խորհելու և գործնականում ինչ-որ օգտակար բան անելու, այլև, ընդհակառակը՝ այդ աննորմալ դաստիարակության հետևանքով նրանց ներսում աստիճանաբար ձևավորվում և օրգանական գործառույթների են վերածվում նրանց համար նգովյալ դարձած այն կունդաբուֆեր օրգանի հատկությունների բազմաթիվ հետևանքները, որը նրանց համար հորինել էր մեծ Հրեշտակ, այժմ՝ արդեն Հրեշտակապետ Լույսոսը, և ահա դրանք, այդպես ժառանգաբար սերնդեսերունդ փոխանցվելով, լիովին բյուրեղանում են այդ թշվառների հոգեկառույցում:

Այլ կերպ ասած՝ նրանց ներսում ձևավորվում են նշված օրգանի հենց այն հետևանքները, որոնք ներկայումս այնտեղ գոյություն ունեն «Էգոիզմ», «Կիրք», «փառասիրություն», «եսասիրություն» և այլ անուններով:

Այդպիսի կարևոր կամ իշխանություն ունեցող էակների վերաբերյալ մեր իմաստուն մոլլա Նասրեդինը ևս ունի մի շատ հետաքրքիր բնորոշում: Նա այսպես է ասում. «Այդ մարդկանց կարևորության աստիճանը որոշվում է միայն նրանց կոշտուկների քանակով»:

Ահա այդպես, զավա՛կս...

Երբ քո այդ մոլորակի այդ եռուղեղ էակները, հատկապես ժամանակակիցները, ովքեր միջոցներ ունեն կուշտ ուտելու և բոլոր մնացած պահանջմունքները բավարարելու համար, և գուցե նաև հնարավորություն ունեն ինչ-որ բան անելու իրենց մոլորակում տարածված այդ բացառիկ չարիքի դեմ պայքարելու նպատակով, արդեն կշտացած և հիշյալ պահանջմունքները բավարարված են լինում, բազմում են իրենց, այսպես կոչված «փափուկ անգլիական բազմոցների վրա», որպեսզի, ինչպես այնտեղ են ասում, «կերածները մարսեն», և նույնիսկ անկեղծ մտածողության համար այդպիսի հարմար ժամանակի ընթացքում նրանք այդ բարենպաստ պայմաններից ոչ մի օգուտ չեն քաղում, այլ դրա փոխարեն տրվում են հանցավոր ինքնասփոփանքի:

Իսկ քանի որ Տիեզերքի բոլոր եռուղեղ էակները և նրանց թվում նաև քո այդ մոլորակի եռուղեղ էակներն առանց մտածողության գործընթացի չեն կարող գոյատևել, և քանի որ միաժամանակ քո

սիրելիներն ուզում են հնարավորություն ունենալ ազատորեն տրվելու իրենց ներսի «Ինքնասփոփանք» կոչվող «չար աստծուն», ապա նրանք աստիճանաբար և շատ արդյունավետ կերպով վարժվում են այն բանին, որ իրենց ներսում գուտ մեխանիկորեն առանց իրենց կողմից որևէ սեփական *լինելիական ճիգի* գործադրման, ինչ-որ մտածողության գործընթաց տեղի ունենա:

Հարկ է արժանին մատուցել նրանց, այդ գործում նրանք արդեն հասել են կատարելության, և ներկայումս, առանց նրանց ներկայության որևէ մասի կողմից գործադրած որևէ միտումնավոր ճիգի, նրանց մտքերը հոսում են բոլոր ուղղություններով:

Օրինակ՝ երբ կշտանալուց ու բավարարվելուց հետո երկրային այդ կարևոր ու իշխանավոր էակները նստում են իրենց հիշյալ բազմոցների վրա, նրանց ուղեղներով անխուսափելիորեն հոսող նմանագագակալան մտքերն ազդակներ են ստանում մարսողական ու սեռական օրգաններից և ազատորեն «սրտի ուզածի չափ» թափառում բոլոր ուղղություններով, և դա տեղի է ունենում այնպես անկաշկանդ ու հեշտ, ինչպես եթե նրանք, այսինքն՝ այդ մտքերը, «երեկոյան ժամին զբոսնելիս լինեն փարիզյան Կապուցինների փողոցում»:

Երբ քո այդ մոլորակի իշխանավոր էակները նստած են լինում իրենց փափուկ բազմոցների վրա, նրանց մտքերով անցնում են, օրինակ, այսպիսի բաներ:

Ինչպե՞ս վրեժ լուծել Ջոն Սմիթ անունով ծանոթից, որը մի քանի օր առաջ նայել է իրեն «դուր եկած» կնոջը՝ այն էլ ոչ թե աջ, այլ ձախ աչքով:

Կամ էլ այդ «մարսողության գործով զբաղված» իշխանավոր կամ կարևոր էակը մտածում է. «Ինչու՞ երեկ ձիարշավարանում ոչ թե իմ ձին առաջ ընկավ, ինչպես սպասում էի, այլ ուրիշը»:

Կամ՝ «Ինչու՞ են այդ բաժնեդրերը, որոնք փաստորեն ոչինչ չարժեն, օր օրի ավելի ու ավելի թանկանում»:

Կամ, վերջապես, նա այսպիսի միտք է ունենում. «Եթե ես Ջոն Սմիթը լինեի, որը ճանճերի բազմացման նոր եղանակ է հորինել, որպեսզի նրանց կմախքներից փողոսկրի արտադրություն կազմակերպի, ապա ստացած շահույթով ես այս-այս բաները կանեի, ոչ թե այն, ինչ այդ հիմարն է անում, ինչպես դեզին պառկած շունը, որ ոչ ինքն է ուտում, ոչ էլ ուրիշին է թույլ տալիս»:

Եվ այդ ոգով՝ էլի շատ բաներ:

Այնուհանդերձ երբեմն այնպես է լինում, որ հանկարծ Երկրի ոմն իշխանավոր կամ կարևոր էակ, ոչ թե ստամոքսի ու սեռական օրգանների ռեֆլեքսները ազդեցության տակ, այլանկեղծորեն ու լիովին լուրջ սկսում է մտորել այս կամ այն կարևոր հարցի շուրջ, հատկապես այդ ահավոր երկրային հարցի շուրջ:

Բայց իշխանավորների նույնիսկ այդ անկեղծ մտորումները մեծ մասամբ նույնպես տեղի են ունենում ամբողջովին մեխանիկորեն՝ նմանատիպ արտաքին պատահական պատճառներով պայմանավորված: Ասենք՝ նրանց մերձավորներից որևէ մեկը բռնի կերպով զրկվում է կյանքից վերջին նմանատիպ իրենց գործընթացի ժամանակ. կամ՝ որևէ մեկը շատ ուժեղ ու ցավագին վիրավորանք է հասցնում. կամ՝ մի ուրիշը նրանց հաճոյանում է՝ մեծ ծառայություն մատուցելով կամ մի այնպիսի բան նվիրելով, որին չէին սպասում. կամ, վերջապես, երբ նրանք իրապես զգում են սեփական գոյատևման մայրամուտը:

Եվ այդպիսի դեպքերում, երբ այնտեղի իշխանավորները խորհրդածում են իրենց մոլորակում տեղի ունեցող այդ բացառիկ ահավոր երևույթի մասին, նրանք միշտ սաստիկ հուզվում են և, իհարկե, այդ վիճակում երդվում են ամեն գնով ձեռնարկել հնարավոր ամեն ինչ, որպեսզի վերջ տան այդ աճող չարիքին:

Բայց դժբախտությունն այն է, որ հենց որ այդ անկեղծորեն հուզված էակների ստամոքսը դատարկվում է, կամ մի փոքր ուշքի են գալիս իրենց «հուսահատեցնող» արտաքին տպավորությունների ազդեցությունից, ոչ միայն ակնթարթորեն մոռանում են իրենց երդումի մասին, այլև հենց իրենք են սկսում, գիտակցաբար կամ անգիտակցաբար, անել հենց այն ամենը, ինչը սովորաբար սկզբնապատճառ է դառնում հանրությունների միջև բռնկվող այդ գործընթացների համար:

Որպես կանոն՝ այն պատճառով, որ այնտեղի այդ իշխանավոր ու կարևոր էակները չեն հատկացնում Մեծ Բնության նախատեսած ժամանակն այն բանին, որ իրենք իրենց նախապատրաստեն արժանավայել պատասխանատու էակ դառնալուն (գլխավորապես հենց այդ պատճառով է, որ նրանց պատասխանատու գոյատևման ժամանակ, նույնիսկ արթմնի վիճակում,

այլազան նմանագագությունները նրանց ընդհանուր ներկայություններում համարյա միշտ մեխանիկորեն են ընթանում) ապա հենց իրենք, առանց որևէ անձնական միտումի, երբեմն էլ՝ կիսագիտակցաբար, ձգտում են ամեն ինչ անել այնպես, որ հաջորդ փոխադարձ ոչնչացման գործընթացն ավելի շուտ վրա հասնի, և նույնիսկ հույս են փայփայում, որ այդ հաջորդ գործընթացն ավելի մեծ մասշտաբներ կընդգրկի:

Նրանց աննորմալ հոգեկառույցում այդպիսի հրեշավոր պահանջմունք առաջանում է այն պատճառով, որ նրանք այդ գործընթացներից անձամբ իրենց կամ իրենց մերձավորների համար որոշակի եսասիրական շահ են ակնկալում, և իրենց հետամնաց մտածողությամբ նույնիսկ հույս են փայփայում, որ որքան մեծամասշտաբ լինի հաջորդ այդպիսի գործընթացը, այնքան իրենք կամ իրենց մերձավորներն ավելի շատ կօգտվեն:

Երբեմն, զավա՛կս, այնտեղ նույնիսկ այնպես է պատահում, որ քո սիրելիների միջից որոշ իշխանավոր կամ կարևոր էակներ միավորվում և հատուկ ընկերություն են ստեղծում, որպեսզի համատեղ ուժերով գտնեն և գործնականում կիրառեն այդ գերհանցավոր հատկությանը վերջ տալու մի որևէ միջոց:

Հենց այն ժամանակ, երբ ես ընդմիշտ լքում էի այդ արևային համակարգը, քո այդ մոլորակում կրկին շատ խոսակցություններ էին պատվում այդպիսի մի ընկերություն հիմնելու շուրջ, որը կարծես թե նրանք մտադիր էին «Ազգերի Լիգա» կոչել:

Ես ասացի «կրկին», քանի որ էլի է եղել, երբ նմանատիպ ընկերություններն իրենց սկզբնավորումից շատ չանցած կնքել են իրենց մահկանացուն՝ առանց, այսպես կոչված, «մահվան տառապանքներ կրելու»:

Շատ լավ հիշում եմ, որ առաջին անգամ այդպիսի մի ընկերություն առաջացավ Թիբլյամիշ երկրի Սամոնիքս քաղաքում հենց այն ժամանակ, երբ այդ երկիրը համարվում էր քո այդ յուրօրինակ մոլորակի բոլոր եռուղեղ էակների կուլտուրական կենտրոնը:

Այն ժամանակ առաջին անգամ Ասիա աշխարհամասի հանրությունների մեծ մասի սովորական էակների շարքերից ելած կարևոր էակները հավաքվեցին նշված վայրում, որպեսզի համատեղ համաձայնության գան առ այն, որ դրանից հետո ասիական տարբեր հանրությունների միջև այլևս որևէ պատճառ չձագի այդպիսի «փոխոչնչացման գործընթացների» համար:

Այն ժամանակվա էակների այդ ընկերությունն իր համար նշանաբան էր ընտրել հետևյալ արտահայտությունը. *«Աստված այնտեղ է, որտեղ մարդկային արյուն չի թափվում»:*

Սակայն, այլազան անձնական եսասիրական ու փառասիրական նպատակների առկայության հետևանքով, այնտեղ այն ժամանակ հավաքված սովորական երկրային կարևոր ու իշխանավոր էակները շատ շուտով գծովեցին ու ցրվեցին իրենց տները՝ այդպես էլ ոչինչ չձեռնարկելով:

Թիբլյամիշի գոյությունից մի քանի դար անց նույն Ասիա աշխարհամասում նորից կազմավորվեց էակների նմանատիպ մի ընկերություն՝ այս անգամ մի երկրում, որն այն ժամանակ կոչվում էր «Մոնղոլականգուրա»⁷⁵:

Այնտեղի այդ ընկերությունն ուներ հետևյալ նշանաբանը. *«Միքեցե՛ք միմյանց, և Աստված կսիրի ձեզ»:*

Այդ ընկերությունը ևս, նույն պատճառով որևէ արդյունքի չհասնելով, նույն ձևով էլ դադարեց գոյություն ունենալ:

Ավելի ուշ նրանք մեկ անգամ ևս նման ընկերություն հիմնեցին՝ այս անգամ մի երկրում, որը հիմա Եգիպտոս է կոչվում, և այդ ընկերությունն իր գոյությունը սկսեց հետևյալ նշանաբանով. *«Միայն այն դեպքում կարող ես մարդ սպանել, եթե սովորել ես լու ստեղծել»:*

Է՛լ ավելի ուշ այդպիսի մի նոր ընկերություն հիմնվեց «Պարսկաստան» կոչվող երկրում, որտեղ այդ նորաստեղծ ընկերության համար նշանաբան ընտրվեց հետևյալ խոսքը. *«Բոլոր մարդիկ աստվածային են, բայց եթե նրանցից մեկը բռնությամբ սպանում է մի ուրիշին, ապա բոլորը ոչնչություն են»:*

Վերջին անգամը բոլորովին վերջերս էր՝ ընդամենը չորս թե հինգ դար առաջ, երբ կրկին այդպիսի ընկերություն հիմնվեց Ասիա աշխարհամասում՝ այս անգամ մի քաղաքում, որը կարծես «Մոսուլոպոլիս» էր կոչվում. այս մեկի նշանաբանն էր՝ *«Երկիրը պատկանում է մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԱՐԶԻՆ և հավասարապես ազատ է բոլորի համար»:*

⁷⁵ ռուս. տարբերակում՝ Монголпланзур, անգլ. տարբերակում՝ Mongolplanzura

Բայց երբ կարճ ժամանակ անց այդ նոր ընկերության անդամների միջև որոշակի տարաձայնություններ ծագեցին, նրանք փոխեցին իրենց ընկերության նշաբանը, և այն իր գոյությունն ավարտեց *«Երկիրը միայն մարդկանց համար է»* նշանաբանով:

«Երկիրը պատկանում է մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԱՐՁԻՆ և հավասարապես ազատ է բոլորի համար» նշանաբանով իր գործունեությունը սկսած այդ վերջին ընկերության անդամները հավանաբար կարող էին ինչ-որ արդյունավետ բան ձեռնարկել, քանի որ, նախ՝ նրանց նպատակների հիմքում իրատեսական ծրագիր էր դրված, և երկրորդ՝ բոլորն առանց բացառության տարեց ու պատվարժան էակներ էին, որոնք իրենց մոլորակային գոյատևման ընթացքում մեծ փորձ էին կուտակել և, հետևաբար, արդեն ձեռքագատվել էին այն ամենի նկատմամբ ունեցած պատրանքներից, ինչ նրանց կարող էր տալ սովորական մոլորակային գոյատևումը:

Եվ դրա շնորհիվ նրանք ավելի քիչ եսասիրական, փառասիրական և այլ հակումներ ունեին, որոնց պատճառով նմանատիպ ընկերություններն այնտեղ սովորաբար կազմալուծվում էին:

Այդ ընկերությունից կարող էր ինչ-որ արդյունավետ բան ստացվել նախ և առաջ այն պատճառով, որ նրանում չկային իշխանավոր էակներ, որոնք հենց այդ եսասիրական և փառասիրական նպատակների պատճառով վաղ թե ուշ ամեն մի համամոլորակային ընկերության բոլոր ձեռքբերումները, որոնց իրենց վիճակվում էր անդամակցել, նետում են, ընդ որում, երաժշտության ուղեկցությամբ, մեր մոլլա Նասրեդինի փառապանծ խոզերի առաջ, որոնք էլ այդ ամբողջ ձեռքբերումները խժոժում են առանց, այսպես կոչված, «ձևականությունների»:

Երկրային այդ իշխանավոր ու կարևոր էակները, հատկապես ժամանակակիցները, երբեմն չեն տապալում այն ազգային միջոցառումները, որոնցից կարող են զգալի շահ ստանալ ինչպես անձամբ իրենց, այնպես էլ իրենց դասին պատկանող էակների համար:

Նման ընկերությունների խնդիրները կարող էին, անկախ դասային պատկանելությունից, օգտակար արդյունքներ տալ նրանց մոլորակի բոլոր էակներին, բայց ամեն անգամ, հենց որ ընկերության գործերը մի փոքր բարդանում են, կամ, ինչպես այնտեղ են ասում, ճգնաժամ է հասունանում, երկրային իշխանավոր էակներին իսկույն ձանձրությոն է պատում, և հենց միայն այդ խնդիրները նրանց հիշեցնելիս, կամ երբ հենց իրենք են նմանազգացությամբ հիշում դրանց մասին, նրանց դեմքերին անմիջապես տառապալից արտահայտություն է դրոշմվում:

Իսկ այն պատճառի մասին, որով *«Երկիրը պատկանում է մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԱՐՁԻՆ և հավասարապես ազատ է բոլորի համար»* նշանաբանն ունեցող ընկերության էակների ջանքերից ոչինչ դուրս չեկավ (թեև նրանք դրա համար արել էին համարյա այն ամենը, ինչ հնարավոր էր անել այն պայմաններում, որոնք համարյա միշտ իշխում են այդ աննման մոլորակում), ես քեզ կպատմեմ մի փոքր ուշ և նույնիսկ բավական մանրամասն, քանի որ այդ մոլորակում առկա այդ գերհանցավոր հատկությունն արմատախիլ անելու կամ գոնե նվազեցնելու նպատակով քո սիրելիների հիմնադրած հատկապես այդ ընկերության կազմալուծման պատճառներին վերաբերող տեղեկատվությունը կրկին շատ էական կլինի, որ քեզ համար ընդհանրապես պարզ դառնա նրանց հոգեկառույցի տարօրինակությունը. միննույն ժամանակ, այդ տեղեկատվությունը որոշակի չափով որպես նյութ կծառայի այն բանի գլխավոր օբյեկտիվ պատճառները հասկանալու համար, թե ինչու են նրանց մոլորակում տեղի ունենում փոխոչնչացման այդ ահավոր գործընթացները:

Իսկ ինչ վերաբերում է ժամանակակից այն ընկերությանը, որի մասին խոսեցի և ասացի քեզ, որ քո մոլորակի եռուղեղ էակները ստեղծում են այն՝ նույն նպատակն ունենալով, որ համատեղ ուժերով պարզեն ու գործնականում համապատասխան միջոցներ ձեռնարկեն իրենց մոլորակում այդ ահավոր գործընթացը լրիվ դադարեցնելու համար, և որը պետք է կոչվի կամ արդեն կոչվում է «Ազգերի Լիգա», ապա, եթե ուզում ես իմանալ իմ անձնական կարծիքը, ես ավելի քան վստահ եմ, որ այս անգամ ևս դրանից ոչ մի լավ բան չի ստացվի հետևյալ երկու պատճառներով:

Առաջին պատճառը քեզ համար պարզ կդառնա իմ այս պատմության վերջում. իսկ երկրորդ պատճառն այն է, որ այդ հատկությունն արդեն, ինչպես ասում են, «միս ու արյուն է դարձել» Երկիր մոլորակի եռուղեղ էակների համար: Եվ եթե նրանց մոլորակում այդ խնդրով ոչինչ չեն կարողացել անել անցած դարաշրջանների էակները, որոնք, պատասխանատու էակներ դառնալով, այնուամենայնիվ Լինելիության առումով գոնե հասնում էին, այսպես կոչված, «ինքն իրեն հիշելուն», ապա առավել ևս ոչ մի արդյունավետ բան չեն կարող ձեռնարկել, մտածել և իրականացնել այնպիսի բանականություն ունեցող էակները, ինչպիսին ունեն այդ ժամանակակից ընկերության էակները,

որոնք Լինելիության առումով հասել են միայն այն աստիճանի կատարելության, որը մեր թանկագին մոլլա Նասրեդինը բնորոշում է հետևյալ բառերով. «Հապա տեսնե՛ք, նա արդեն մամային պապայից տարբերում է...»:

Այնուհանդերձ ես պետք է նշեմ, որ այդ կարևոր և իշխանավոր ժամանակակից էակները, որոնք դարձել են կամ կդառնան այդ ժամանակակից ընկերության անդամներ, իրենց այդ նոր ձեռնարկումով անձամբ իրենց համար կհասնեն մի «վերին աստիճանի անհատական» և «վերին աստիճանի օգտակար» արդյունքի. այն է՝ իրենց այդ «պաշտոնական ընկերության» շնորհիվ նրանք կունենան ևս մեկ, ինչպես ասում են, շատ ընդունելի առիթ, որով թող կփչեն իրենց, այսպես կոչված, «տիրուհու» աչքերին, ում դերում ժամանակակից իշխանավոր էակների համար հայտնվում են «կինը», «սիրուհին», «գորանչը» կամ, վերջապես, որևէ խոշոր խանութի «վաճառողուհին» և այլք:

Եվ ահա, իրենց այդ նոր պաշտոնական ընկերության շնորհիվ, նրանք հնարավորություն կստանան հանգիստ ժամանակ անցկացնելու իրենց ընկերների իրենց նման կարևոր ու իշխանավոր էակների հետ, և այդ պաշտոնական «ֆայվ-օ-քլոք»⁷⁶-ների ընթացքում, որոնք անկասկած հաճախ կհրավիրվեն արտաքնապես այն գործերով, որոնք իբր կապված են իրենց այդ կարևոր ընկերության նպատակների հետ, նրանք կկարողանան ժամանակ անցկացնել՝ խույս տալով իրենց «տիրուհիների» թեև լուռ, բայց ահեղ հայացքներից ու աչալուրջ հսկողությունից:

Իշխանավոր էակների նմանատիպ ընկերություններն այնտեղ սովորաբար կազմավորվում են փոխոչնչացման խոշորամասշտաբ գործընթացների ավարտի սկզբում: Եվ համարյա ամեն անգամ դրանք կազմավորվում են հետևյալ կերպ:

Հենց այդ իշխանավորներից մի քանիսը փոխոչնչացման իրենց վերջին գործընթացի ժամանակ այնպիսի «ծանր կորուստներ» են կրել (որոնց «ազդակի գործունեությունը» նրանց ընդհանուր ներկայություններում դեռևս չի ավարտվել և նրանց հոգեկառույցի ընդհանուր գործունեության մեջ որոշակի համակցություն է ծնել), որ նրանց համար արդեն սովորական դարձած «մեխանիկական գիտակցության» մեջ ակամա սկսել են մասնակցություն ունենալ «խիղճ» կոչվող *լինելիական ազդակի* ծագման՝ նրանց ենթագիտակցության մեջ առկա նախադրյալները. այսինքն՝ նրանց ընդհանուր հոգեկառույցում ակամա գոյացել է այնպիսի համակցություն, որն այդ չարաբաստիկ մոլորակի բոլոր եռուղեղ էակների ներսում երագում էր տեսնել Սրբազնագույն Աշիաթա Շիեմաշը:

Եվ ահա դրա շնորհիվ, գավա՛կս, երբ այդ իշխանավոր էակները հավաքվում և սկսում են եռանդուն կերպով քննարկել իրենց այդ ահավոր հատկությունը, նրանք աստիճանաբար սկսում են դա տեսնել համարյա իրական լույսի տակ. այնժամ նրանց ներսում իսկապես սկսում է անկեղծ ցանկություն ի հայտ գալ՝ անելու հնարավոր ամեն ինչ, որպեսզի հասնեն իրենց մոլորակում տեղի ունեցող այդ ճշացող ահավորությանը վերջ տալուն:

Այդպիսով, եթե այնպես է պատահում, որ, այսպես ասած, «հարություն առած խղճով» մի քանի երկրային իշխանավոր էակներ հանդիպում են իրար, և երկարատև փոխազդեցության շնորհիվ իրականությունը տեսնում ու զգում են համարյա ճշմարիտ լույսի ներքո, ապա միավորում են իրենց ջանքերը, որպեսզի համատեղ ուժերով որևէ հնարավորություն գտնեն իրենց այդ անկեղծ ցանկությունը կյանքի կոչելու համար:

Ահա այդ եղանակով են սովորաբար այնտեղ կազմավորվում այդ ընկերությունները:

Հնարավոր է, որ այդ էակները երբևէ կարողանային օգտակար արդյունքների հասնել, բայց ամբողջ դժբախտությունն այն է, որ, որպես կանոն, շատ շուտով այդ ընկերություններն են մուտք գործում ուրիշ կարևոր ու իշխանավոր էակներ և սկսում մասնակցել դրանց աշխատանքին:

Վերջիններս նման ընկերություններ են մուտք գործում և մասնակցում աշխատանքներին ոչ այն պատճառով, որ իրենց ներսում էլ է խիղճը սկսում արթնանալ. բնավ ոչ: Նրանք անդամակցում են սոսկ այն պատճառով, որ, համաձայն նույն այդ սովորական *լինելիական գոյատևման* հաստատված աննորմալ պայմանների, նրանք, լինելով կարևոր և իշխանավոր, ինքնին հասկանալի կերպով պետք է անդամակցեն բոլոր «կարևոր» ընկերություններին և իրենց մասնակցությունը բերեն դրանց աշխատանքին:

Երբ այդ լրացուցիչ երկրային կարևոր ու իշխանավոր էակները մուտք են գործում այդպիսի ընկերություն և սկսում մասնակցել դրա աշխատանքներին, ապա, հետապնդելով զուտ եսասիրական

⁷⁶ ուղիղ ժամը հինգին

ու փառասիրական նպատակներ, ոչ միայն շատ շուտով այդ ընկերության խնդիրներն ու «արթնացած խղճով» էակաների ամբողջ արածն, ինչպես ասում են, «ջուրն են գցում», այլ նաև, որպես կանոն և նույնպես շատ շուտով, սկսում են այդ ընկերության առաջին հիմնադիրների, ինչպես այնտեղ են ասում, «աշխատանքը խոչընդոտել»:

Ուստի և, էակաների այդ ընկերությունները, որոնք այնտեղ ստեղծվում են համամոլորակային բարօրություն հաստատելու նպատակով, շատ արագ մեռնում են. մեռնում են՝ ինչպես արդեն ասել եմ, նույնիսկ առանց «հոգեվարքի»:

Այդ բարի նախաձեռնությունների շնորհիվ ձեռք բերված արդյունքների արդյունավետության վերաբերյալ նույնպես մեր պատվարժան մոլլա Նասրեդինն ունի մի շատ իմաստուն ասույթ, որն այսպես է հնչում.

«Վերջին դարերը մեզ ցույց տվեցին, որ դարաբաղյան ավանակները երբեք չեն երգի սոխակի ձայնով և երբեք չեն հրաժարվի Շուշվա տատասկափուշ ծամելու իրենց ազնվաբարո հակվածությունից»:

Այստեղ, ի դեպ, տեղին կլինի, որ նաև իմանաս, որ Երկիր մոլորակի եռուղեղ էականերին ուշադիր դիտելուս երկար դարերի ընթացքում ես ոչ մի անգամ չեմ նկատել, որ մոլորակի լայն զանգվածների երջանիկ գոյատևումն ապահովելու նպատակով համատեղ միջոցներ մշակելու համար նրանց կազմավորած որևէ ընկերությանը (պատահում էր, որ ժամանակ առ ժամանակ այնտեղ այդպիսի ընկերություններ էլ էին լինում) երբևէ անդամակցեին այն էակաները, որոնք քիչ թե շատ օրբեկտիվ բանականությամբ են օժտված, որին, ինչպես արդեն ասել եմ քեզ, այնուամենայնիվ այնտեղ շատերն են հասել՝ ինքնակատարելագործման նպատակով համառ ջանքեր գործադրելով:

Վերջին անգամ այնտեղ լինելուս ընթացքում կատարած իմ դիտումներով, իմիջիայլոց, ես պարզեցի, որ օրբեկտիվ բանականությամբ օժտված էականերն այդ ընկերություններին չեն անդամակցում հետևյալ պատճառներով:

Բանն այն է, որ որպեսզի տվյալ էակը որևէ մի ընկերության անդամ դառնա, նա պետք է անպայման կարևոր էակ համարվի, իսկ այդպիսի էակ, կրկին այնտեղ հաստատված *սովորական գոյատևման* աննորմալ պայմանների պատճառով, կարող է ճանաչվել միայն նա, ով շատ փոքր ունի կամ էլ մյուս էակաների միջավայրում, ինչպես ասվում է, «հանրահայտ» է դարձել:

Եվ քանի որ, հատկապես վերջին ժամանակներում, այնտեղ հանրահայտ ու կարևոր կարող են դառնալ միայն այն էակաները, որոնց ներսում իսպառ բացակայում է հատկապես «*լինելիական խիղճ*» կոչվող հիշյալ սրբազան գործառույթը, ապա, այն բանի հետևանքով, որ այդ սրբազան գործառույթն էակաների ներկայություններում ընդհանրապես միշտ կապված է այն ամենի հետ, ինչը ներկայացնում է *օրբեկտիվ բանականությունը* և նույնանում է դրա հետ, ապա, իհարկե, *օրբեկտիվ բանականությամբ* օժտված էակաները նաև խիղճ են ունենում. հետևաբար, խիղճ ունեցող այդպիսի էակը երբեք չի կարող մյուսների աչքին «կարևոր» երևալ:

Ահա թե ինչու *մաքուր բանականությամբ* օժտված էականերն այնտեղ երբևէ հնարավորություն չեն ունեցել և և երբեք հնարավորություն չեն ունենա մասնակցելու այն ընկերությունների աշխատանքներին, որոնք կազմվում են կարևոր և իշխանավոր էականերից:

Այս հարցի կապակցությամբ այնտեղ հիմա այն վիճակն է տիրում, ինչը մի անգամ նկարագրեց մեր թանկագին մոլլա Նասրեդինը.

«Ա՛յ քեզ պատիժ. պոչը դուրս ես քաշում, քիթն է թաղվում. քիթն ես դուրս քաշում, պոչն է թաղվում»:

Ինչ էլ որ լինի, այնուամենայնիվ քո սիրելիները, ինչպես արդեն ասացի, ներկայումս կրկին ուզում են հնարավոր ուղիներ և միջոցներ գտնել, որպեսզի ձերբազատվեն իրենց այդ ահավոր հատկությունից, որն արդեն նրանց բնորոշ է դարձել և նրանց հոգեկառույցում ամրապնդվել նույնքան ուժեղ, որքան կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքները:

Եվ, իհարկե, «Ազգերի Լիգա» կոչվող այդ ժամանակակից ընկերության անդամները կփորձեն հասնել այդ ձերբազատմանը՝ դրա համար օգտագործելով իրենց իսկ հորինած ամեն տեսակի որոշումներն ու համաձայնագրերը, որոնց օգնությամբ նույն նպատակին փորձել են հասնել նաև այնտեղի հինավուրց էակաները. այսինքն՝ կօգտվեն նույն այն ուղիներից ու միջոցներից, որոնց միջոցով որևէ «արդյունավետ» բանի հասնելը, իմ կարծիքով, հիմա արդեն բացարձակապես հնարավոր չէ:

Քո սիրելիների այդ մտահղացումից գուցե թե հնարավոր կլինի որոշակի օգուտ ստանալ, և գուցե՝ ոչ քիչ, բայց միայն նրանց անխուսափելի թերթերի, սալոնային զրույցների և, իհարկե, երկրային, այսպես կոչված, «բորսայական խաղացողների» զանազան տհասամուսական մեքենայությունների համար:

Ներկայումս այդ ահավոր չարիքի հետ կապված գործերի վիճակն արդեն այնպիսին է, որ այդ մոլորակի մակերևույթից նրանց միս ու արյունը դարձած այդ, ես կասեի, նողկալի սովորության, իսպառ ոչնչացմանը հասնելը նրանց խղճուկ բանականության համար ոչ միայն անհմաստ, այլև ընդհանուր առմամբ համարյա անհնարին խնդիր է դարձել:

Սակայն, զավա՛կս, հնարավոր է, որ նույնիսկ այդ համամոլորակային «Ազգերի Լիգա» կոչվող ընկերության ժամանակակից էակները կկարողանային (չնայած այն բանին, որ նրանք զուրկ են անաչառ բանականությունից, ինչը հարկ է, որ ունենան պատասխանատու տարիքին հասած բոլոր եռուղեղ էակները) դրական արդյունքների հասնել իրենց առջև դրված հիմնական նպատակի շրջանակներում, եթե միայն այն հարցերի լուծմամբ ու իրագործմամբ զբաղվեին, որոնք իրենց իրավասության և ունակությունների շրջանակներում էին:

Քաջ գիտենալով նրանց, այսպես ասած, «սովորությունները»՝ ես կատարելապես վստահ եմ, որ նրանք չեն զբաղվի այն հարցերով, որոնք մատչելի են իրենց հասկացողությանը:

Նրանք կուզենային ամեն ինչ անել, և իսկապես ամեն ինչ անում են այն ուղղությամբ, որ փոխոչնչացման այդ գործընթացները դադարեցվեն անհապաղ և ընդմիջտ:

Եթե նրանք իսկապես իրենց ողջ էությամբ գիտակցեին այդ գործընթացների ամբողջ օբյեկտիվ ահավորությունը և իսկապես կամենային համատեղ ուժերով դրանք արմատախիլ անել իրենց մոլորակի մակերևույթից, ապա կամա-ակամա կթափանցեին այդ հարցի էության մեջ և կհասկանային, որ հարյուրավոր դարերի ընթացքում իրենց հոգեկառույցներում ամրապնդված այդ ժառանգությունը ոչ մի կերպ չի կարող ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում ապաքյուրեղացվել:

Եթե նրանք դա հասկանային, ապա ոչ թե կփորձեին իրենց ժամանակակիցների բարօրության համա՛ր այդ ուղղությամբ ինչ-որ բան լուծել կամ իրագործել, այլ իրենց ամբողջ ուշադրությունը կկենտրոնացնեին և կօգտագործեին իրենց բոլոր ունակություններն ու հնարավորությունները՝ նկատի ունենալով միայն ապագա սերունդների էակների բարօրությունը:

Օրինակ եթե ներկայումս խելքներին զոռ տալու կամ, ինչպես այնտեղ նաև ասում են, «դոնքիշոտություն» անելու փոխարեն, որոնք նպատակաուղղվում են իրենց այդ գործընթացների իսպառ դադարեցմանը հասնելուն զբաղվեին իրենց սովորական գոյատևման գործընթացում ամրապնդված այն համոզմունքն արմատախիլ անելու գործով, որը վերաբերում է նրանց ունեցած երկու հասկացությունների արժանավորությանը. այն է՝ եթե նրանք ձգտեին հասնել այդ գործընթացներին մասնակցած որոշ էակների «հերոսացնելու» և նրանց պատիվներով ու «շքանշաններով հավերժացնելու» սովորույթի վերացմանը, ինչպես նաև ձգտեին հասնել այն «փայլուն գիտություններից» գոնե մեկի վերացմանը, որը պատկանում է որոշ պզուկավոր էակների հորինած «տհասամուսական գիտությունների» խմբին, և որոնցում սառնասրտորեն ապացուցվում է, թե Երկրում փոխոչնչացման գործը շատ ու շատ պետքական բան է, քանի որ իբր առանց դրա անտանելի գերբակեցվածություն կառաջանար, որին էլ կհետևեին այնպիսի տնտեսական սարսափներ, որ մարդկային էակները կսկսեին իրար ուտել:

Եթե նրանք հասնեին արդեն իրենց սովորական գոյատևման գործընթացում ամրապնդված այդ երկու սովորույթների վերացմանը, ապա, դրանցից առաջինի վերացման շնորհիվ ընդմիջտ արմատախիլ կլինեին այն «մեխանիկական գործոնների» մեծ մասը, որոնք նաև աճող սերնդի էակների հոգեկառույցն են նախատրամադրում այդ առանձնահատուկ հատկությանը ենթակա դառնալուն, ինչի հետևանքով նրանք մշտապես հայտնվում են այն վիճակում, որի մեջ ընկնելն այդ գործընթացների ժամանակ նրանց համար արդեն սովորական բան է դարձել. իսկ երկրորդի վերացման շնորհիվ նրանք կնպաստեին այն բանին, որ հետագա դարաշրջանների էակներին չհասնի գոնե մեկը այնտեղ մշտապես ծագող և առանց այդ էլ բավական մեծաքանակ այն տխմար գաղափարներից, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ՝ որպես «ինչ-որ» օրինական ու անառարկելի բան, և որոնք բոլորն իրար հետ պատճառ են դառնում այնպիսի հատկությունների ձևավորման համար, որոնք վայել չեն մեր Մեծ Մեգալակոսմոսի եռուղեղ էակներին, և որոնց թվին է պատկանում նաև միայն իրենց բնորոշ

այն հատկությունը, որը նրանց ներսում «կասկածներ է ծնում նույնիսկ Աստվածության գոյության» նկատմամբ. և գլխավորապես նրանց ներկայություններում առկա հենց այդ կասկածների հետևանքով է նրանց ընդհանուր ներկայություններից իսպառ չքացել այն նախադրյալների կուտակման հնարավորությունը, որոնք անպայմանորեն պետք կուտակվեն բոլոր եռուղեղ էակների ներկայություններում, և որոնց համախմբությունը նրանց ներսում ծնում է մի ազդակ, որը կոչվում է որոշակի տիեզերական ճշմարտությունների «բնագդական զգացողություն», որոնք մշտապես զգում են նույնիսկ միաուղեղ և երկուղեղ էակները՝ համայն տիեզերքի որ կետում էլ նրանք գտնվելիս լինեն:

Բայց, ի դժբախտություն մնացած բոլոր քո սիրելիների, այդ իշխանավոր և կարևոր էակները, որոնք իրար գլխի են հավաքվում մոլորակի տարբեր ծագերից, այդ հարցերով չեն զբաղվում՝ դրանք իրենց ուշադրությանն անարժան համարելով:

Էլ ինչ կուզեիք... Այդպիսի «կարևոր ընկերության» այդպիսի «կարևոր անդամներ»՝ և հանկարծ սկսեին զբաղվել այդպիսի դատարկ գործերով...

Ընդհանուր առմամբ, այն բանի հետևանքով, որ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների մեծ մասի՝ հատկապես ժամանակակիցների մոտ արդեն իսպառ դադարել են անհատական դրսևորման ամեն տեսակի նախադրյալներ բյուրեղանալ, և նրանք իրենց դրսևորում են միայն կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների թելադրանքին համապատասխան, նրանք չեն սիրում զբաղվել իրենց բանականությանը և ուժերին մատչելի գործերով, այլ զբաղվում են այնպիսի հարցերի լուծմամբ, որոնք գերազանցում են իրենց բանականության հնարավորությունները:

Նրանց արտառոց հոգեկառույցի այդ «գծի» պատճառով վերջին քսան դարերի ընթացքում նրանց ներսում ձևավորվել է ևս մեկ յուրահատուկ և վերին աստիճանի արտառոց «հոգե-օրգանական պահանջմունք»:

Նրանց այդ հոգե-օրգանական պահանջմունքի գլխավոր արտահայտությունն այն է լինում, որ նրանցից յուրաքանչյուրը մյուսներին միշտ պետք է անպայման, ինչպես իրենք են ասում, «խելքի բերի» կամ «խրատելով ճիշտ ուղու վրա դնի»:

Գիտե՞ս ինչ, զավա՛կս, առանց բացառության նրանց բոլորին բնորոշ բնավորության այդ բացառիկ գծի հիշատակումը ինձ հանգեցրեց այն մտքին, որ այս պահին ցանկալի կլինի, որ քեզ ներկայացնելով նրանց տարօրինակ հոգեկառույցը նաև մի խորհուրդ տամ, ինչպես մի անգամ ծերուկ Ահունն արեց, երբ ես ավարտին հասցրի ժամանակակից երկրային «արվեստին» վերաբերող իմ բացատրությունները:

Ամեն ինչից զատ նա այն ժամանակ ասաց, որ եթե այս կամ այն պատճառով քեզ վիճակվի գոյատևել այնտեղ՝ Երկիր մոլորակում, և հաղորդակցվել այդ արտառոց եռուղեղ էակների հետ, ապա պետք է մշտապես շատ զգույշ լինես այնտեղի ժամանակակից այն տիպերի հետ, որոնք «արվեստի ներկայացուցիչներ» են կոչվում, և երբեք չվիրավորես նրանց, որպեսզի նրանց միջավայրում «կատաղի թշնամիներ» չվաստակես:

Այն ժամանակ մեր սիրելի Ահունը, թվարկելով նրանց անհաշիվ թուլությունները, ինչպիսիք են գոռոզությունը, սնապարծությունը, փառասիրությունը և այլն, ցույց տվեց քեզ, թե ո՞ր դեպքերում նրանց յուրօրինակ հատկություններից հատկապես ո՞ր մեկը պետք է, ինչպես Ահունն ասաց, «գրգռես»:

Նա այն ժամանակ նույնիսկ մանրամասն բացատրեց քեզ, թե ինչի մասին և ինչպես պետք խոսես նրանց հետ, որպեսզի նրանք միշտ լավ հարաբերություններ պահպանեն քեզ հետ, քեզ գովեն և միշտ լավն ասեն քո մասին:

Նրա այդ խորհրդի վերաբերյալ ես ոչ մի վատ բան չեմ կարող ասել. չի կարելի ժխտել, որ այն իդեալական կլինի հիշյալ տիպերի պարագայում:

Այնտեղի ժամանակակից արվեստի ներկայացուցիչներին բնորոշ առանձնահատկությունները, որոնք Ահունը թվարկեց, իսկապես այնտեղ շատ առատ են, և եթե ամեն համար առիթով դու «գրգռես» նրանց այդ առանձնահատկությունները, ապա նրաք իրոք քեզ «կաստվածացնեն» և բոլոր դեպքերում միշտ քո նկատմամբ իրենց կպահեն ոչ վատ, քան «ասկլանյան»⁷⁷ ստրուկները:

Բայց թեև նրա այդ խորհուրդը գերազանց է և նրանց միջավայրում գոյատևելու համար անհրաժեշտ, սակայն անձամբ ես այն ինձ համար գործնական չեմ համարում: Գործնական չէ նախ այն պատճառով, որ, քանի որ Երկրի ոչ բոլոր էակներն են արվեստի ներկայացուցիչներ, ապա այդ

⁷⁷ ռուս. տարբերակում՝ аскланских, անգլ. տարբերակում՝ Asklaian

խորհուրդը բոլոր էակների նկատմամբ ընդհանրապես կիրառելի չէ. և երկրորդ՝ քեզ հարմար չի լինի, որ անընդհատ ստիպված լինես հիշելու բոլոր այդ մեծաքանակ առանձնահատկությունները և ամեն անգամ մտածելու, թե ո՞ր դեպքում այդ բազմաթիվ թուլություններից հատկապես ո՞րը պետք է «գրգռես»:

Ես քեզ ուզում եմ ցույց տալ նրանց հոգեկառույցի մի մեծ «գաղտնիք», այն է՝ նրանց մի առանձնահատկությունը, որը եթե հմտորեն օգտագործես, ապա նրանցից յուրաքանչյուրից կստանաս դրսևորումների այն նույն արդյունքը, որի մասին Ահուհն էր ասում:

Եթե դու նրանց վրա ազդես այդ առանձնահատկության միջոցով, ապա ոչ միայն լավ հարաբերությունների մեջ կլինես բոլոր նրանց հետ, այլև, եթե ցանկանաս, ապա նրանց հոգեկառույցի այդ «գաղտնիքն» օգտագործելով՝ կարող ես քեզ համար լիովին երջանիկ ու խաղաղ գոյություն ապահովել ինչպես այնտեղ պարտադիր անհրաժեշտություն համարվող «դրամի» առումով, այնպես էլ ուրիշ հարմարավետությունների առումներով, որոնց հիասքանչ համն ու նշանակությունը մեր թանկագին Ուսուցիչն արտահայտել է հետևյալ բառերով. «Կյանք չէ, այլ հաճույք»:

Տղա՛ս, դու, անկասկած, գլխի ընկար, որ նրանց հոգեկառույցի այդ գաղտնիքն ասելով՝ ես ի նկատի ունեմ հենց իրենց այդ, ինչպես ես կոչեցի, «ուրիշներին խելք սովորեցնելու և ճիշտ ճանապարհի վրա դնելու» «հոգե-օրգանական պահանջմունքը»:

Նրանց հոգեկառույցում ձևավորված այդ յուրօրինակ հատկությունն, իհարկե, կրկին նրանց սովորական գոյատևման աննորմալ հաստատված պայմանների պատճառով, նրանց համար դառնում է (երբ նրանցից ամեն մեկը հասնում է իր պատասխանատու տարիքին), այսպես ասած, նրանց ներկայության պարտադիր մասը:

Այդ «հոգե-օրգանական պահանջմունքն» այնտեղ բոլորն ունեն՝ ջահել թե ծեր, տղամարդ թե կին և նույնիսկ նրանք, որոնց այնտեղ «օրապակաս» են անվանում:

Նշածս «յուրօրինակ պահանջմունքը» նրանց ներսում իր հերթին առաջանում է նրանց մի ուրիշ յուրօրինակ հատկության պատճառով, որը հետևյալն է. այն պահից սկսած, երբ նրանցից ամեն մեկը «թացը չորից ջոկելու» ունակություն է ձեռք բերում, այնպես է թևավորվում իր այդ նվաճմամբ, որ ընդմիշտ դադարում է իր սեփական աննորմալություններն ու թերությունները տեսնել ու նկատել, բայց այդ նույն աննորմալություններն ու թերությունները տեսնում ու նկատում է ուրիշների մոտ:

Ներկայումս այնտեղ արդեն սովորական բան է դարձել, որ քո բոլոր սիրելիներն իրենց նմաններին սովորեցնում են նույնիսկ այնպիսի բաներ, որոնց ըմբռնումն իրենք նույնիսկ երագում չեն տեսել. բայց ամենածիծաղելին այն է, որ եթե այդ ուրիշները չեն ուզում դա սովորել, կամ գոնե չեն ձևացնում, թե ուզում են, ապա նրանք ոչ միայն խիստ վիրավորվում են այդ ուրիշներից, այլև նույնիսկ շատ ուժեղ վրդովվում են իրենց ներսում. և, հակառակը, եթե այդ ուրիշներից որևէ մեկը նրանցից «խելք է սովորում» կամ նվազագույն դեպքում ձևացնում է, թե շատ է ուզում «խելքի գալ», ապա այդ էակները ոչ միայն «սիրում» ու «հարգում» են նրան, այլև հենց իրենք լրիվ բավարարված ու շատ երջանիկ են զգում իրենց:

Այստեղ հարկ նշել, որ միայն այդպիսի դեպքերում է, որ քո սիրելիները կարող են ուրիշների մասին խոսել առանց չարության ու քննադատության:

Ահա այդպես, գավա՛կս...

Ես շատ եմ խորհուրդ տալիս քեզ՝ եթե ինչ-որ պատճառով քեզ վիճակվի ապրել նրանց միջավայրում, ապա միշտ ձևացրու, թե ուզում ես նրանցից ինչ-որ բան սովորել: Նույն կերպ մոտեցիր նաև նրանց երեխաներին, և դու ոչ միայն գերազանց հարաբերություններ կունենաս նրանցիս յուրեքանչյուրի հետ, այլև ամբողջ ընտանիքով քեզ կհամարեն իրենց տան պատվելի բարեկամը:

Միշտ հիշիր, որ նրանցից ամեն մեկը, որքան էլ աննշան էակ լինի, արհամարհանքով է նայում (կրկին նույն մեծամտության պատճառով, որը բխում է այդ յուրօրինակ հատկությունից) ուրիշների վարքին ու արարքներին, հատկապես եթե այդ վարքն ու արարքները կտրուկ հակասում են իր սեփական սուրբեկտիվ հաստատված կարծիքին, և այդպիսի դեպքերում նա, ինչպես արդեն ասացի, սովորաբար անկեղծորեն նեղանում է ու ներքուստ վրդովվում:

Այստեղ պետք է նաև նկատել, որ քո սիրելիների՝ շրջապատում եղածների թերություններից մշտապես վրդովվելու այդ հատկության պատճառով նրանք իրենց գոյատևումը, որն առանց այդ էլ դժբախտ է ու աննորմալ, դարձնում են օրյեկտիվորեն անտանելի:

Այդ մշտական վրդովմունքի պատճառով այդ թշվառների սովորական *լինելիական գոյատևումը* համարյա միշտ ընթանում է անարդյունավետ, այսպես ասած, «բարոյական տառապանքներով», և նրանց այդ անօգուտ բարոյական տառապանքները, որպես կանոն, շատ երկար ժամանակ իներցիայով ազդում են նրանց հոգեկառույցի վրա, այսպես ասած, «սեմցեկցիոնալ»⁷⁸ ձևով, կամ, ինչպես կասեին քո այդ մոլորակում՝ «ճնշող»։ այսինքն՝ նրանք, իհարկե, առանց իրենց գիտակցության մասնակցության, ի վերջո դառնում են «ինստրուկարային»⁷⁹, կամ, ինչպես նրանք են ասում, «նյարդային»։

Եվ այդ դեպքում նրանք իրենց սովորական *լինելիական գոյատևման* գործընթացում դառնում են կատարելապես «անկառավարելի» նույնիսկ իրենց այնպիսի լինելիական դրսևորումներում, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն այն առաջնային պատճառների հետ, որոնք առաջացրել են այդ «ինստրուկարությունը» կամ «նյարդայնությունը»։

Հենց միայն այդ «ուրիշների թերություններից վրդովվելու» իրենց հատկության հետևանքով նրանց գոյատևումն աստիճանաբար դարձել է նույնիսկ գերտրագիկովիկական։

Ամեն քայլափոխի դու այնտեղ կհանդիպես, օրինակ, այսպիսի պատկերի։

Այդ այլանդակները, այսպես ասած, գրկվում են իրենց այն արտաքին դիմակից, որին նրանց մեծ մասը մանկությունից սկսած կամաց-կամաց վարժվել է՝ այնտեղ գոյություն ունեցող նույն այն չարանենգ միջոցի հետևանքով, որը «դաստիարակություն» է կոչվում, և որի շնորհիվ էլ նրանք շատ լավ կարողանում են մեկը մյուսից թաքցնել իրենց ներքին ու արտաքին ոչնչությունը և, հետևաբար, ստորացուցիչ կերպով դառնում են ուրիշների ստրուկները։ կամ իրենց ներքին ապրումների առումով նրանք ընկնում են որևէ մեկի, ինչպես իրենք են ասում, «կրնկի տակ», օրինակ՝ «կնոջ», «սիրուհու» կամ ուրիշ էլի ինչ-որ մեկի, որն ինչ-որ ձևով արդեն ճանաչել է տվյալ երկրային էակի ներքին ոչնչությունը, և այդպիսով վերջինս նրա համար գրկվել է իր արհեստական դիմակից։

Եվ ահա, ուրիշի կրկնկի տակ գտնվող հենց այդպիսի երկրային էակը, որպես կանոն, ավելի շատ է վրդովվում իրենց մոլորակի մյուս բոլոր էակների նման վարքից, օրինակ՝ երբ լսում է որևէ թագավորի մասին, որն այս կամ այն պատճառով չի կարողանում բուրդ հավաքել տասնյակ կամ հարյուր հազարավոր իր հպատակներին։ Եվ ուրիշի կրկնկի տակ գտնվող հենց այդպիսի երկրային էակներն են, որ զանազան ուղեցույցներ են գրում, որոնցում մանրամասնորեն նկարագրում են, թե ինչ և ինչպես պետք է անել ուրիշներին լավ «կառավարելու» համար։

Կամ մի ուրիշ բան. երբ այդ արտառոց մոլորակի որևէ ժամանակակից էակ, որի «չոքերը վախից թուլանում են», ինչպես նրանք են ասում, երբ կողքով, ասենք, մուկ է վագում, հանկարծ իմանում է, որ այսինչը մի թեթև իրեն կորցրել է վագրի հանդիպելուց, ապա մեր այդ «հերոսը» ներքուստ չափազանց վրդովվում է, իսկ ընկերների հետ զրույցի ժամանակ «փրփուրը բերանին» սկսում է վատաբանել այդ մեկին և բոլորին ապացուցել, որ նա ստոր ու հանցավոր «վախկոտ» է, եթե վախեցել է «ինչ-որ մի» վագրից։

Այնուհանդերձ այդ «*մկան առաջ չդողացող հերոսներն*» այնտեղ զանազան գրքեր և ուղեցույցներ են գրում առ այն, թե ինչ և ինչպես պետք է անել վագրի կամ նմանատիպ մի ուրիշ էակի հանդիպելիս։

Կամ, ասենք, ինչ որ մեկը, որը տառապում է տասնյակ տարբեր, ինչպես այնտեղ են ասում, «խրոնիկական հիվանդություններով», որոնց պատճառով նրա ստամոքսը երբեմն ամբողջ շաբաթներով չի գործում և ամբողջ մարմինը ծածկվում է ամեն տեսակի չարորակ պզուկներով, որոնց երեսից նա, իհարկե, օր ու արև չունի, կարճ ասած, մի էակ, որը երկար տարիներ այդ մոլորակում գոյություն ունեցող բոլոր հիվանդությունների իսկական «քայլող անատոմիական թանգարան» է եղել, բոլորից շատ է վրդովվում, եթե, ասենք, ինչ-որ մեկն անփութության պատճառով հարբուխ է ձեռք բերում։

Եվ այնտեղի այդ քայլող անատոմիական թանգարանները մշտապես մեծ անձնապաստանությամբ խրատում են ուրիշներին, թե ինչպես բուժվել հարբուխից, և հենց նրանք են այնտեղ զանազան գրքեր ու ուղեցույցներ գրում զանազան ուրիշ հիվանդությունների մասին և ամենայն մանրամասնությամբ նկարագրում, թե ինչպես զերծ մնալ և ազատվել այդ հիվանդություններից։

⁷⁸ ռուս. տարբերակում՝ семцеклонально, անգլ. տարբերակում՝ semtzeztzionally

⁷⁹ ռուս. տարբերակում՝ инструарными, անգլ. տարբերակում՝ instruarnian

Ամեն քայլափոխի այնտեղ կարելի է հանդիպել նաև այսպիսի անհեթեթության. նրանցից մեկը, որը նույնիսկ չգիտի, թե ինչ տեսք ունի իրեն հաճախ խայթող և «լու» կոչվող սովորական պատիկ էակը, մի «հսկա հատոր» կամ հատուկ, այսպես կոչված, «հանրամատչելի դասախոսություն» է գրում այն մասին, որ այն լուսն, որի խայթոցի հետևանքով ուռել է ուն պատմական թագավոր Նաբու խանի վիզը, իր ձախ թաթի վրա ունեցել է «նարնջա-ազնվամորու գույնի, անսովոր ու տարօրինակ ձև ունեցող հսկայական ուռուցք»:

Եվ այսպես, եթե այնտեղի այդ վաբանության մասնագետը գրի իր ծավալուն աշխատությունը կամ մի ամբողջ երեկո դասախոսություն կարդա հիշյալ լվի այդ «նարնջա-ազնվամորազույն ուռուցքի» մասին, ապա եթե ներկաներից որևէ մեկը նրան չհավատա և երեսին հայտնի իր կասկածը, նա ոչ միայն կնեղանա, այլև շատ ուժեղ կվրդովվի. կվրդովվի գլխավորապես այն պատճառով, որ այդ կասկած հայտնողն այնքան, այսպես կոչված, «տգետ» է, որ նույնիսկ ոչինչ չի լսել այն «ճշմարտությունների» մասին, որոնք ինքը հայտնում է՝ որպես «այդ գործի մասնագետ»:

Վերը նշածս պատճառներով պայմանավորված՝ տրագիկոմոկական պատկերներն այդ արտառոց եռուղեղ էակների գոյատևման ընթացքում այնտեղ՝ քո այդ մոլորակում, հանդիպում են ամեն քայլափոխի, այնպես որ, դրանք դիտելով ու ուսումնասիրելով՝ այնտեղի ամեն մի նորմալ գոյատևող էակ, եթե իրոք ուզում է հասկանալ և ուսումնասիրել նրանց ընկալումները, կարող է ամբողջությամբ յուրացնել ընդհանուր Օբյեկտիվ Գիտության բոլոր բնագավառները:

Քո սիրելիների նշածս զարմանալի արտառոց պահանջմունքի բավարարման համար, որպեսզի նրանք, ինչպես այնտեղ են ասում, չտառապեն, նրանք միշտ պետք խելք սովորեցնելու համար գոնե մի «գոհ» ունենան. բայց որոշները, որոնք իրենց դրսևորումներով այս կամ այն պատճառով մյուսների աչքում որոշակի հեղինակություն են վաստակել և այդ սովորության ավելի մեծ լինելու հետևանքով ավելի են լկտիացել, այնպիսի մեծ ախորժակ են ունենում, որ ավելի ու ավելի շատ են այդպիսի «գոհեր» ձեռք բերում:

Այո՛, զավակս, երբ դու գոյատևելիս լինես նրանց միջավայրում և վկա դառնաս նրանց անհեթեթ *լինելիական դրսևորումներին*, ապա, չնայած այն բանին, որ գիտես այդ անհեթեթությունների պատճառը, չես կարողանա քեզ զսպել, որ, ինչպես նրանք են ասում, «մտքում չծիծաղես», և միաժամանակ ամբողջ քո էությանը կխղճաս այդ թշվառներին՝ քո «մտքում ծիծաղին» աստիճանաբար ակամա ավելացնելով, այսպես կոչված, «Էաբուխ-պալնասություն»⁸⁰ վիշտ»:

Այնտեղի եռուղեղ էակների այդ առանձնահատկությունն առանձնապես ուժեղ է զարգացած այն խավին պատկանող էակների ներսում, որը նրանք «ինտելիգենցիա» են կոչում:

Ինտելիգենցիա բառն այնտեղ համարյա նույն նշանակությունն ունի, ինչ մենք արտահայտում ենք «ներքին ուժ» ասելով:

Սակայն, թեև այդ ինտելիգենցիա բառն իր էությանը այնտեղ համարյա նույն իմաստն ունի, այնուհանդերձ այնտեղի էակները, հատկապես ժամանակակիցները, չգիտես ինչու այդ բառը կպցնում են հենց այն էակներին, որոնք այդ բառի իմաստի ուղիղ հակառակն են ներկայացնում:

Ինտելիգենցիա բառը ևս վերցված է հին հունարենից:

Հետաքրքիր է նշել, որ այդ նույն բառից օգտվել են նաև հռոմեացիները. սակայն այդ բառը փոխառելով ոչ թե ըստ իմաստի, այլ ըստ հնչողության՝ նրանք ավելի ուշ երևակայեցին, թե այդ բառի արմատները պատկանում են իրենց սեփական լեզվին:

Հին հույներն այդ բառով ի նկատի ունեին այնպիսի կատարյալ էակի, որն արդեն կարող է իր ցանկությամբ ուղղորդել իր գործառնությունները, այլ ոչ թե այնպես, ինչպես, օրինակ, տեղի է ունենում ամեն մի, այսպես կոչված, անշունչ տիեզերական գոյացության հետ, որի բոլոր գործողություններն ունեն իրենց արտաքին պատճառները:

Այդ բառի իմաստին մոտավորապես համապատասխանող էակներ անկասկած այնտեղ՝ քո այդ մոլորակում էլ են հանդիպում, բայց միայն Երկիր մոլորակի այն ժամանակակից էակների միջավայրում, որոնք, ըստ այնտեղի էակների մեծամասնության հասկացողության, «ոչ-ինտելիգենտներ» են համարվում:

Իմ կարծիքով, եթե այնտեղ ինտելիգենցիա համարվող էակներին, հատկապես ժամանակակիցներին, պարզապես «մեխանոգենցիա» անվանեին, ապա ավելի ճիշտ կլիներ:

⁸⁰ ռուս. տարբերակում՝ палнасурное, անգլ. տարբերակում՝ palnassoorian

Ավելի ճիշտ կլիներ այն պատճառով, որ այնտեղի ժամանակակից ինտելիգենցիայի ներկայացուցիչները ոչ միայն բացարձակապես ունակ չեն ուղղություն տալու իրենց *լինելիական գործառնություններին*, այլև նրանց ներսում վերջնականապես հետաձգ են ապրել իրենց առօրեական *լինելիական գոյատևման* էաբուխ նախաձեռնությունների համար անհրաժեշտ ազդակների նույնիսկ այն նախադրյալները, որոնք Մեծ Բնությունը մշտապես էակների ներսում տեղադրում է նրանց ծննդյան պահին:

Այնտեղի այդ ինտելիգենտ էակներն իրենց պատասխանատու գոյատևման ընթացքում միշտ գործում կամ իրենց դրսևորում են միայն այնժամ, երբ դրսից համապատասխան խթաններ են ստանում, և այդ արտաքին խթանները նրանց համապատասխան հնարավորություն են տալիս աշխուժանալու և ապրումներ ունենալու միայն մի շարք նախկին համապատասխան մեխանիկական ընկալումների ակտիվացման միջոցով, որոնք նրանց ներսում արդեն կան և բացարձակապես կախված չեն նրանց սեփական ցանկությունից ու կամքից. իսկ այդ արտաքին խթանների դերում սովորաբար հանդես են գալիս նախ՝ անշունչ կամ շնչավոր այն առարկաները, որոնք պատահաբար հայտնվում են նրանց տեսողական զգայարանի ընկալման տիրույթում, երկրորդ՝ նրանց հանդիպած տարբեր էակները, երրորդ՝ այն հնչյուններն ու բառերը, որոնք հնչում են նրանց գտնվելու վայրում, չորրորդ՝ այն հոտերը, որոնք պատահաբար հասնում են իրենց հոտառության զգայարանին, և վերջապես՝ այն սովորական զգացողությունները, որոնք ժամանակ առ ժամանակ առաջանում են նրանց մոլորակային մարմնի կամ, ինչպես նրանք են ասում, «օրգանիզմի» գործունեության ընթացքում, և այլն:

Բայց ո՛չ ընդհանրապես նրանց արտաքին դրսևորումները, ո՛չ էլ նրանց այն ներքին լինելիական ազդակները, որոնք պետք է ուղղորդվեին իրենց լինելիական «Ես»-ի կողմից, երբեք չեն դրսևորվում նրանց ընդհանուր ներկայությունից բխող սեփական ցանկությամբ:

Այստեղ հարկավոր է նաև ասել, որ այդ երկրային «ինտելիգենտներից» ոմանց, որոնց ներսում զանազան պատճառների բերումով պատասխանատու գոյատևման ընթացքում վերջնականապես փոխվել են ներքին գործունեության որոշ արդեն հաստատում գտած ձևերը, մյուս երկրային էակներն այլևս «ինտելիգենտներ» չեն կոչում, այլ ուրիշ անվանումներ են տալիս, որոնք կազմված են տարբեր բառերից, կամ, ավելի ճիշտ, հին հունարեն բառերի արմատներից:

Այդպիսիներին նրանք անվանում են՝

«բյուրոկրատներ»,

«պլուտոկրատներ»,

«թեոկրատներ»,

«դեմոկրատներ»,

«գելլոկրատներ»,

«արիստոկրատներ» և այլն:

Թվարկվածներից առաջինով՝ «բյուրոկրատներ» անվանումով, նրանք կոչում են այն ինտելիգենտներին, որոնց ներսում ապրումներ ծնող սովորական մեխանիկական նմանազգացողությունների ամբողջ շարքն արդեն սահմանափակ է, այսինքն՝ որքան էլ տարաբնույթ լինեն դրսից եկող խթանները, այդ բյուրոկրատների ներսում նմանազգացողություններն առաջանում են միշտ միևնույն ապրումներով, որոնք հաճախակի կրկնվելու հետևանքով ձեռք են բերում առանձնահատուկ բնույթ և դրսևորվում կատարելապես ինքնուրույն՝ առանց նրանց ընդհանուր ներկայության որևէ առանձին ոգեկոչված *լինելիական մասի* մասնակցության:

Ինչ վերաբերում է թվարկված վիճակներից երկրորդի էակներին, այսինքն՝ նրանց, որոնց հոգեկառույցի որոշակի փոխակերպումից հետո մյուս էակները «պլուտոկրատներ» են կոչում, ապա այդ անունի տեր են դառնում այն ինտելիգենտները, որոնք իրենց պատասխանատու գոյատևման նախկին շրջանում շատ ճարպկորեն կարողացել են իրենց իշխանության տակ առնել հանդիպած բոլոր ազնիվ, այսինքն՝ «միամիտ» հայրենակիցներին, որի շնորհիվ էլ տեր են դարձել, այսպես կոչված, «փողի ու ստրուկների» մեծ քանակի:

Ի դեպ, հիշի՛ր, որ հենց այդպիսի երկրային էակներից են ստացվում ամենաշատ *տհասնամուսական անհատականություններ*:

Երբ ես ինձ հետաքրքրող հարցերը պարզելու նպատակով այնտեղ էի գտնվում, պատահաբար իմացա այդ «պլուտոկրատ» բառի ծագման գաղտնիքը:

Ինչպես արդեն ասել եմ, վերջին քսանհինգ դարերի ընթացքում այնտեղի ամեն մի կասկածելի հասկացություն և ամեն տեսակի կասկածելի իր, չգիտես ինչու, հին հունարեն բառերով են կոչվել. դրանց շարքից են նաև այդ բյուրոկրատ, արխատոկրատ, դեմոկրատ և այլ բառերը, որոնք նույնպես կասկածելի հասկացություններ են ներկայացնում՝ կազմված լինելով երկուական հին հունական բառերից:

Օրինակ՝ «բյուրոկրատ»-ը բաղկացած է երկու բառերից՝ «բյուրո», որը «գրասենյակ է նշանակում», և «կրատ», որը նշանակում է «ունենալ» կամ «պահել»:

Իսկ այդ երկու բառերի միացությունը նշանակում է՝ «մեկը, որ գրասենյակ է պահում»:

Իսկ ինչ վերաբերում է «պլուտոկրատ» բառին, ապա դրա ծագման պատմությունը մի փոքր այլ է և հետավոր անցյալից չի գալիս:

Այդ բառն առաջացել է նրանց ժամանակով ընդամենը յոթ կամ ութ դար առաջ:

Չնայած այդ տիպերից արդեն կային Հին Հունաստանում, բայց այն ժամանակ նրանց անվանում էին «պլուսիոկրատներ»⁸¹:

Սակայն մի քանի դար առաջ, երբ այնտեղ այդ տիպերը շատացան, և պարզ դարձավ, որ Երկրի մնացած էակները նրանց ինչ-որ կոչումներ պետք է տան, այն էակները, որոնք զբաղվում էին այդպիսի հարցերով, նրանց համար հորինեցին «պլուտոկրատ» բառը:

Ամենայն հավանականությամբ նրանք այն ժամանակ շատ երկար են խելքներին գոռ տվել, թե ինչ անունով պատվեն այդ տիպերին: Խելքներին շատ երկար են գոռ տվել այն պատճառով, որ արդեն շատ լավ էին հասկանում, որ իրենց մոլորակի այդ տիպերը բացահայտ սրիկաներ են՝ մինչև ուղնուծուծը ներծծված ամեն տեսակի տհասամամուսական բաներով:

Սկզբում այդ տիպերին մեծաբելու համար նրանք ուզում էին հորինել որևէ «թունդ» բառ, որը կհամապատասխաներ նրանց ներքին նշանակությանը. բայց հետո վախեցել են դա անելուց, քանի որ այդ երկրային տիպերը, շնորհիվ, այսպես կոչված, «անազնիվ միջոցներով ձեռք բերված» եկամուտների, արդեն այն ժամանակ գուցե թե անհամեմատ ավելի մեծ «ուժ» ու «իշխանություն» ունեին, քան թագավորները: Եվ նրանք վախենում էին, որ եթե նրանց մեծարեն այդպիսի թունդ բառով, որը կբնութագրեր այդ տիպերի իսկական նշանակությունը, ապա վերջիններս կարող էին շատ վիրավորվել ու կսկսեին ավելի մեծ վնասներ պատճառել մնացած էակներին. ուստի և նրանք ի վերջո որոշել են խորամանկել և հորինել այնպիսի բառ, որով և՛ կարտահայտեին նրանց իսկական նշանակությունը, և՛ կարծես թե «հարգալից կմեծաբեին» նրանց:

Այն ժամանակվա այդ էակները դրան հասել են հետևյալ կերպ:

Քանի որ այդ երկրային տիպերի անունը նույնպես, իհարկե, պետք է կազմվեր երկու հին հունական բառերի կցումով, և քանի որ նմանատիպ անվանումների երկրորդ կեսը հին հունական «կրատ» բառը պետք է լիներ, ապա, որպեսզի այդ նոր կազմվող բառն առանձնապես աչք ծակող չլինի ոչ մեկի համար, այդ հին հունական վերջավորությունը թողեցին իր տեղում:

Իսկ նոր բառի առաջին կեսն ընտրվել է ոչ թե հին հունարենից, ինչպես սովորաբար արվում էր, այլ, այսպես կոչված, «ռուսերեն լեզվից», այն է՝ նրանք օգտվել են ռուսերեն «պլուտ» բառից, որը խաբեբա է նշանակում, և արդյունքում ստացվել է «պլուտոկրատ»:

Այդ երկրային էակներն այն ժամանակ իրոք հասել են իրենց նպատակին, քանի որ ներկայումս այնտեղ՝ քո այդ մոլորակում, ինչպես երկրային այդ մակաբույծները, այնպես էլ Երկրի մնացած էակները լրիվ գոհ են այդ «կոչումից»:

Այդ երկրային հրեշներն այնքան են գոհ իրենց անվանումով, որ սնապարծությունից նույնիսկ լի օրերին են ցիլինդրներ կրում:

Իսկ մյուս երկրային էակները գոհ են այնքանով, որ այդ «այլանդակներին» իրենց իսկական անունով են կոչում, և դրանից այդ տիպերը ոչ միայն չեն չարանում, այլև նույնիսկ քայլում են «հնդկահավերի» պես:

Ինչ վերաբերում է իմ թվարկած երրորդ անվանմանը՝ թեոկրատին, ապա դրան արժանացնում են այն «ինտելիգենտներին», որոնց ընդհանուր ներկայություններում հոգե-օրգանական իմաստով տեղի են ունենում համարյա նույնպիսի «խոտորումներ», ինչպիսիք տեղի են ունենում նրանց ներսում, ովքեր դարձել են պլուտոկրատներ:

⁸¹ ռուս. տարբերակում՝ плюсиократ, անգլ. տարբերակում՝ plusiocrats

Պլուտոկրատների և թեոկրատների տարբերությունը միայն այն է, որ առաջիններն իրենց սեփական տհասամամուսական պահանջմունքները բավարարելու նպատակով շրջապատի վրա ազդում են «վստահություն» կոչվող գործառույթի միջոցով, իսկ երկրորդներն ազդում են այն գործառույթի միջոցով, որով աստիճանաբար քո սիրելիների ներսում փոխարինվել է այն սրբազան գործառույթը, որը բոլոր եռուղեղ էակների համար ինքնակատարելագործման երեք սրբազան ուղիներից մեկն է և այնտեղ «հավատ» է կոչվում:

Որպեսզի դու առավել լիարժեք պատկերացում ստանաս այդ թեոկրատների մասին, բավարար կլինի, եթե քեզ ներկայացնեմ մեր պատվարժան մոլլա Նասրեդինի մի ասացվածքը: Այնտեղի այդ թեոկրատների վերաբերյալ մի անգամ նա արտաբերեց մի բավական տարօրինակ նախադասություն:

Նա ասաց.

«Խեղճ ճանճերի համար մեկ չէ՞, թե իրենց ինչպես կսպանեն՝ կոտորավոր սատանաների սմբակների հարվածներով, թե՞ աստվածային հրեշտակների թևաբախությամբ»:

Իսկ այնտեղի այն տիպերի վերաբերյալ, որոնց բոլոր մյուսները դեմոկրատ են անվանում, նախ և առաջ պետք է ասել, որ այդ տիպերը ոչ միշտ են դուրս գալիս, այսպես ասած, «ժառանգական ինտելիգենտների» ծոցից. մեծ մասամբ նրանք սկզբում լինում են սովորական երկրային էակներ, և միայն հետո, երբ նրանց վիճակվում է «խիղճ» կոչվող սրբազան գործառույթից չբխող գործառույթներ ունեցող ինտելիգենտ դառնալ, նրանց հետ համարյա նույն բանն է կատարվում, ինչ ապագա պլուտոկրատների և թեոկրատների հետ. նրանք փոխակերպվում են դեմոկրատների:

Ի դեպ, երբ այդ դեմոկրատներից ոմանք ինչ-որ պատճառով պատահաբար զբաղեցնում են իշխանավոր էակների տեղը, ապա նրանց այդ գործողության հետևանքով երբեմն տեղի է ունենում շատ ու շատ հազվադեպ մի տիեզերական երևույթ, որը մեր մոլլա Նասրեդինը բնորոշում է հետևյալ կերպ. «Նույնիսկ կոշտուկներն են վերածվում ոտնահարդարանքի»:

Իմ կարծիքով, այդ հազվագյուտ երևույթը տեղի է ունենում այն պատճառով, որ երբ դեմոկրատները զբաղեցնում են իշխանավորների տեղը, ապա, ուրիշերին բնագոյով ղեկավարելու ժառանգական ունակությունից ամբողջովին զուրկ լինելով, արդյունքում բոլորովին չեն կարողանում ղեկավարել իրենց իշխանության տակ հայտնված էակների գոյատևումը:

Մեր անգին Ուսուցիչ մոլլա Նասրեդինը երկրային այդ տիպերի վերաբերյալ ևս ունի համապատասխան արտահայտություն. ամեն անգամ, երբ նա այդ արտահայտությունն արտաբերում է, սկզբում ձեռքերը Երկինք է կարկառում, որից հետո մեծ ոգեշնչվածությամբ ասում է հետևյալը.

«Երախտապա րտ ենք Քեզ, ո վ, Մեծ ու Արդար ԱՐԱՐԻՉ, որ Քո մեծ ու արդար ողորմածությամբ կովերին թույլ չես տալիս, որ թոչեն սիրունիկ թոչնիկների պես...»:

Այժմ, գավա կս, ինձ մնաց, որ քեզ պատմեմ իմ թվարկած ինտելիգենտներից միայն այն երկրային տիպերի մասին, որոնց մնացած էակները զեվրոկրատներ և արիստոկրատներ են կոչում, և որոնք իրարից տարբերվում են այնպիսի հավելյալ կոչումներով, ինչպիսիք են «Էմիրը», «խանը», «իշխանը», «մելիքը», «կոմսը», «բարոնը» և այլն, որոնց հնչողությունն ինչ-որ պատճառով չափազանց հաճելի ձևով է ազդում քո սիրելիների այն գործառույթի վրա, որը նրանց միջավայրում շատ ուժեղ է արտահայտված, պահպանվում է մինչ ի մահ և կոչվում է «սնափառություն»:

Եվ ես հիմա պետք է անկեղծորեն խոստովանեմ, որ այնտեղի այդ տիպերին նկարագրելը շատ դժվար է ոչ միայն սովորական խոսքով, այլև մեր իմաստնագույն մոլլա Նասրեդինի լեզվով:

Առավելագույնը ինչ նրանց մասին կարելի է ասել՝ այն կլինի, որ նրանք պարզապես «բնության անհեթեթ երևույթ» են:

Մակայն պետք է ասել, որ թեև քո սիրելիների այդ երկու տիպերն այնտեղ տարբեր անվանումներ ունեն, բայց այդ արիստոկրատներն ու զեվրոկրատները բոլոր առումներով նման են իրար և ունեն կատարելապես միանման ներքին հատկություններ:

Հիշու՜մ ես, ես քեզ արդեն ասել եմ, որ քո այդ մոլորակի տարբեր հանրություններում գոյություն ունեն երկու տեսակի, ինչպես այնտեղ են ասում, «պետական կառույցներ»:

Դրանցից մեկը «միապետական» է կոչվում, իսկ մյուսը՝ «հանրապետական»:

Այն հանրություններում, որտեղ հանրապետական պետական կարգ է հաստատված, նշածս տիպերը զեվրոկրատներ են կոչվում. իսկ այն հանրություններում, որտեղ պետական կառույցը միապետական է արիստոկրատներ:

Որպեսզի դու գոնե մի փոքր պատկերացում ստանաս այդ երկրային տիպերի մասին, կարծում եմ, ամենալավն այն կլինի, որ քեզ պատմեմ մի տարակուսանք մասին, որն իմ ներսում ամեն անգամ ծագում էր, երբ քո այդ մոլորակում գտնվելուս ընթացքում ինձ վիճակվում էր պատահաբար հանդիպել այդ «թյուրիմացությունների» հետ: Այդ պատահական հանդիպումների ժամանակ ինձ գլխավորապես զարմացնում էր հետևյալը. ինչպե՞ս է կարողանում այդ երկրային եռուղեղ տիպը քո այդ յուրօրինակ մոլորակի վրա գոյատևել համարյա այնքան, որքան այնտեղի մյուս եռուղեղ էակները:

Նույնպիսի հարց իմ ներսում առաջացնում էին նաև այնտեղի բյուրոկրատների խավին պատկանող էակները, թեև նրանց պարագայում գոնե ինչ-որ բացատրություն կարելի է գտնել. թեև նրանց ապրումների շարքը նույնպես շատ սահմանափակ է, բայց ամեն դեպքում նրանք դրանցից իրականում ունենում են՝ ծայրահեղ դեպքում ցերեկվա ու գիշերվա ամեն ժամի:

Իսկ այնտեղի արիստոկրատների ու զեվրոկրատների բոլոր ապրումները, համաձայն իմ դիտումների, կարելի է բաժանել սոսկ երեք շարքի:

Առաջինը կերակուրների հետ է առնչվում, երկրորդի մեջ այն հիշողություններն են, որոնք կապված են նրանց սեռական օրգանների անցյալ գործունեության հետ, իսկ երրորդում տեղ են գտնում իրենց առաջին դայակի մասին հիշողությունները:

Իսկ թե ինչպե՞ս է, որ ապրումների միայն երեք շարք ունեցող էակը գոյատևման նույն տևողությունը կարող է ունենալ, որքան ունեն քո այդ մոլորակի մակերևույթով քայլող մնացած էակները՝ ինձ համար միշտ կմնա անլուծելի խնդիր:

Ասում են, թե այդ խնդրահարույց հարցի շուրջ, այսինքն՝ այն մասին, թե այդ երկրային տիպերն ինչպե՞ս են հաջողեցնում այդքան երկար ապրել, մի անգամ սկսել է մտորել նույնիսկ մեծագույն խորամանկ Լյուցիֆերը, և այնքան թունդ է մտորել, որ պոչի ծայրի մագերը սպիտակել են:

Այսպես ասած, «բնության այդ անհեթեթ երևույթների» վերաբերյալ ինձ մնում է միայն փորձել քեզ բացատրել, թե ինչու՝ այդպիսի մեծ տարբերություն գոյություն ունի միևնույն տեսակին պատկանող էակների անվանումների միջև:

Ես ասացի՝ «փորձեմ», քանի որ ես ինքս էլ ճշգրիտ չգիտեմ դրա պատճառները, սակայն, իմանալով երկու բառերի արմատները, որոնցից գոյացել են այդ երկու անվանումները՝ կարելի է մեծ վստահությամբ ենթադրել, որ դա տեղի է ունեցել այնտեղի մի սովորույթի շնորհիվ:

Պետք է ասեմ, որ քո սիրելիները, չգիտես ինչու, այնտեղ շատ են սիրում երբեմն, այսպես կոչված, «տիկնիկային թատրոններ» բեմադրել:

Չգիտես ինչու, նրանց նաև դուր է գալիս, որ այդ նույն զեվրոկրատներն ու արիստոկրատները ևս մասնակցություն ունենան իրենց այդ «տիկնիկային կատակերգություններում», ուստի և նրանց ներգրավում են այդ «տիկնիկային բեմադրություններում»:

Քանի որ այնտեղի այդ էակներն արդեն ինքնին կատարելապես դատարկ են և, հետևաբար, թույլ, ապա այդ «տիկնիկային բեմադրությունների» ժամանակ տվյալ հանրության մյուս էակները ստիպված են լինում նրանց օժանդակություն ցուցաբերել:

Եվ պարզապես այդ օժանդակության եղանակից ելնելով, այսինքն՝ թե հատկապես ո՞ր ձևերով են օժանդակում, առաջանում է այդ անվանումների տարբերությունը. այսպես՝ այն հանրություններում, որտեղ «միապետական կարգ» է հաստատված, վաղուց արդեն սովորույթ է դարձել աջ ձեռքով օժանդակելը, և հետևաբար այդպիսի հանրություններում այդպիսի տիպերին արիստոկրատ են անվանում:

Իսկ այն հանրություններում, որոնց պետական կառույցը «հանրապետական» է, օժանդակում են ձախ ձեռքով, և հետևաբար այդ տիպերին զեվրոկրատ են կոչում:

Ընդհանրապես, երկրային էակների անվանումներում այնտեղ գոյություն ունեցող տարբերությունների հետ կապված, մտաբերեցի մեր իմաստուն մոլլա Նասրեդինի մի հրաշալի արտահայտությունը, որը մի անգամ նա ասաց անձամբ ինձ:

Մի անգամ մենք գրուցում էինք թուրքական ու պարսկական «ղազիների», այսինքն՝ դատավորների զանազան իրավաբանական արարողությունների ու դատավճիռների թեմայով, և նա այդ դատավորների արդարադատության նույնականության առնչությամբ այդ ժամանակ ասաց.

«Է՛հ, իմ սիրելի ընկե՛ր, Երկրում որևէ տեղ կա՞րդյոք այնպիսի մի բան, ինչպիսին մարդու մեղավորության իմաստուն իրավաբանական դատաքննությունն է:

Ղազին ամեն տեղ դազի է, միայն նրանց տեղանուններն են տարբեր: Պարսկաստանում նրանք պարսկական դազի են, Թուրքիայում՝ թուրքական:

Երկրում ամեն ինչն է այդպես. էշերն ամեն տեղ նույնն են, միայն տարբեր անուններ ունեն: Օրինակ՝ Կովկասում բազմացող էշը «դարաբաղյան» է կոչվում, իսկ Թուրքեստանում բազմացող էշը՝ «խորասանյան»:

Այդ իմաստուն խոսքն, այն ժամանակից սկսած, ընդմիջտ տպավորված է մնում իմ ուղեղում. և քո այդ մոլորակում իմ գոյատևելու ընթացքում ես միշտ հիշում էի այն, երբ հարկ էր լինում ինչ-որ համեմատություն կատարել:

Թող հավերժ փառաբանվի՝ նրա անունը քո այդ մոլորակում, որտեղ նա ծնվել ու կազմավորվել է...

Ահա այդպես, զավա՛կս...

Կրկնեմ ևս մեկ անգամ. եթե ինչ-որ պատճառով քեզ վիճակվի լինել այդ մոլորակում, ապա միշտ ի նկատի ունեցիր, որ այն թուլությունը, որի մասին քեզ պատմեցի, ամենաշատը զարգացած է ամենասովորական ինտելիգենտների և նրանց ներսում, որոնք ծագել են նրանցից և պատկանում են իմ թվարկած խավերից որևէ մեկին, որոնց անվանումները վերջանում են «կրատ»-ով:

Իսկ այժմ, զավա՛կս, թեմայից քո օգտին արված իմ այս շեղումից հետո կրկին վերադառնանք մեր շոշափած լուրջ հարցին. ես կսկսեմ քեզ խոստացածս այն պատմությունից, թե ինչպես կազմվեց և փլուզվեց երկրային էակների այն ընկերությունը, որն իր համար ընտրել էր «*Երկիրը պատկանում է Աստծուն, և այն հավասարապես ազատ է բոլորի համար*» նշանաբանը: Բանն այն է, որ դրա վերաբերյալ տեղեկատվությունը քեզ հնարավորություն կտա, որ տեղը տեղին հասկանաս այն բանի առաջին ու գլխավոր պատճառը, թե ինչու է այնտեղ՝ քո այդ մոլորակում, մեր Մեծ Մեգալակոսմոսին պատկանող այդ թշվառ եռուղեղ էակների պարբերաբար իրար ոչնչացնելու այդ ահավոր գործընթացը համարյա անխուսափելի դարձել:

Դու նաև կիմանաս, թե, այսպես ասած, տեղական Բնությունն ինչպես է հարմարվում իրավիճակին, երբ ինչ-որ չնախատեսված բան խանգարում է համատիեզերական Տրոգոավտոէգոկրատի նպատակներով նրա ճիշտ գործունեությանը, որպեսզի իր արգասիքները համապատասխան ձևով համակցվեն այդ տիեզերական մեծագույն օրենքի հետ:

Երկրային մարդկային էակների հիշյալ ընկերությունը կազմավորվեց, ինչպես արդեն ասել եմ, վեց թե յոթ դար առաջ Ասիա աշխարհամասի մի քաղաքում, որն այն ժամանակ գոյություն ուներ «Մոսուլոպոլիս» անունով:

Այդ ընկերությունը կազմավորվեց հետևյալ պատճառներով:

Նշածս փոխոչնչացման գործընթացներն այդ ժամանակահատվածում հատկապես հաճախ էին տեղի ունենում հենց այդ աշխարհամասում:

Այդ գործընթացները մասամբ տեղի էին ունենում տարբեր հանրությունների միջև, մասամբ էլ՝ միևնույն հանրության ներսում: Վերջիններս հետագայում սկսեցին կոչվել «քաղաքացիական պատերազմներ»:

Ասիա աշխարհամասում ինչպես հանրությունների միջև, այնպես էլ դրանց ներսում ծագող այդ գործընթացների հաճախակիացման գլխավոր պատճառներից մեկն այդ ժամանակահատվածում եղավ այն նոր ծագած կրոնը, որը ֆանտաստիկ ձևով հիմնվեց ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ Ճշմարիտ Առաքյալ Մուրբ Մուհամեդի ուսմունքի վրա:

Նշած ընկերության հիմքն առաջին անգամ դրեցին մի համայնքի եղբայրները, որն այն ժամանակ Կենտրոնական Ասիայում գոյություն ուներ «Ձեռնադրյալների ընկերություն» անունով:

Այստեղ հարկ է նշել, որ այդ օրերին այդ համայնքի եղբայրներն այնպիսի էակներ էին, որոնք վայելում էին շրջապատի և համարյա ամբողջ մոլորակի եռուղեղ էակների խորին հարգանքը, ուստի և նրանց եղբայրությունը երբեմն նաև կոչում էին «*Երկրի բոլոր կենդանի սրբերի ընկերություն*»:

Երկրային եռուղեղ էակների այդ եղբայրությունը վաղուց էր կազմավորվել այնպիսի էակներից, որոնք իրենց ներսում նկատել էին կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքները և միավորվել էին, որպեսզի համատեղ ուժերով ձեռքբազատվեն այդ հատկություններից:

Այսպիսով, երբ Ասիա աշխարհամասում փոխոչնչացման այդ ահավոր գործընթացները չափից դուրս հաճախակի դարձան, հիշյալ ընկերության որոշ անդամներ, հարգարժան եղբայր

Օլմանտաբուորի⁸² գլխավորությամբ՝ առաջին անգամ որոշեցին փորձել, որ ինչ-որ եղանակ գտնեն, որպեսզի, եթե անգամ ամբողջովին չոչնչացնեն իրենց մոլորակում տեղի ունեցող այդ ահավոր երևույթը, ապա գոնե նվազեցնեն այդ ճշագող չարիքը:

Ամբողջովին նվիրվելով իրենց այդ որոշման իրականացմանը՝ նրանք սկսեցին շրջել Ասիա աշխարհամասի տարբեր երկրներում և ամենուրեք շատ հուզիչ քարոզներ կարդալ մարդկանց այդ գործողությունների վիթխարի հանցավորության և մեղսականության մասին, և այդ եղանակով շատ ջերմ կողմնակիցներ գտան:

Նրանց բոլոր անաչառ ու հիքավի մարդասիրական ջանքերի արդյունքում Մոսուլոպոլիս քաղաքում կազմավորվեց մարդկային էակների հիշյալ մեծ ու լուրջ ընկերությունը՝ «*Երկիրը պատկանում է Աստծուն և հավասարապես ազատ է բոլորի համար*» նշնաբանով:

Հենց ամենասկզբում մարդկային էակների այդ ընկերության անդամներն այդ նպատակով այնքան բան իրականացրին, որքան չեն կարողացել իրականացնել Երկրի էակները ո՛չ մինչ այդ ընկերության հիմնումը, ո՛չ էլ դրանից հետո:

Իսկ նրանք այդքանը կարողացան անել միայն այն պատճառով, որ հենց սկզբից ծրագիրը շատ լավ էր կազմված՝ այնտեղ գոյություն ունեցող պայմաններում դրա իրականանալիության առումով:

Իմիջիայլոց, այդ ընկերության հիմնական ծրագրում, այն է՝ աստիճանաբար գործել այնպիսի ուղղությամբ, որը հնարավորություն է տալիս արդյունքի հասնելու, մտնում էր այն, որ նախ՝ Ասիա աշխարհամասի բոլոր էակների համար հաստատվի մեկ ընդհանուր կրոն, որը նրանք ցանկանում էին հիմնել, այսպես կոչված, «փարսերի» աղանդի վրա՝ այն թեթևակի փոփոխելով, երկրորդ՝ ընդունվի մեկ ընդհանուր լեզու՝ «թուրքերենը», որը նրանք համարում էին բոլորի համար ընդունելի, քանի որ դա Ասիա աշխարհամասի ամենահին լեզուն է, և դրա արմատներն արդեն մտել են ասիական շատ լեզուների մեջ, երրորդ՝ այդ ընկերության հիմնական ծրագրում՝ որպես ամփոփում, մտել էր այն, որ Ասիայի կենտրոնում գտնվող Մարգելան քաղաքում՝ այսպես կոչված, «Ֆերգանայի խանության» մայրաքաղաքում, կենտրոնացնեն բոլոր ասիական երկրների միասնական կառավարության գլխավոր ու հիմնական կազմակերպությունը՝ «Ավագների խորհուրդը», որի անդամներ պետք է դառնային բոլոր ասիական հանրությունների հարգարժան էակները:

Այդ կազմակերպությունն այդպես պետք է կոչվեր այն պատճառով, որ դրա անդամներ կարող էին դառնալ ամենատարեց և ամենաշատ հարգանքի արժանի էակները:

Նրանց ըմբռնմամբ՝ իրենց մոլորակի միայն այդպիսի էակները կարող էին անաչառ ու արդարամիտ լինել Երկիր մոլորակի մյուս էակների նկատմամբ՝ անկախ դավանանքից ու ազգային պատկանելությունից:

Մոսուլոպոլիս քաղաքի այդ ընկերությանն արդեն անդամակցում էին ասիական համարյա բոլոր հանրություններից եկած էակներ:

Նրանց մեջ կային «մոնղոլներ», «արաբներ», «դրդրգներ», «վրացիներ», «մալորոսներ», «թամիլներ» և նույնիսկ այն ժամանակ հայտնի զավթիչ Թամերլանի անձնական ներկայացուցիչը:

Նրանց եռանդուն և իսկապես անաչառ ու անշահախնդիր գործունեության շնորհիվ Ասիա աշխարհամասում մոլեգնող պատերազմներն ու քաղաքացիական առճակատումները սկսեցին քչանալ, և ակնկալվում էր, որ այդ նպատակով դեռ շատ բաներ կարելի կլինի անել:

Բայց, հենց այդ ժամանակ տեղի ունեցավ մի բան, որը պատակտում առաջացրեց նաև այդ անօրինակ մոլորակի այդ գործունյա մարդկային էակների ընկերությունում:

Հետագա ամեն ինչի վրա ազդեցին այն ժամանակ շատ հայտնի փիլիսոփա Աթարնադն⁸³ ու նրա տեսությունը, որը նա շարադրել էր «Ինչու են Երկրի վրա պատերազմներ լինում» վերնագրով տրակտատում:

Երբ այդ փիլիսոփան հայտնվեց այդ ընկերության անդամների շարքում, նրանց բոլոր հասկացությունները խառնվեցին:

Ինձ շատ լավ հայտնի է նաև այդ փիլիսոփա Աթարնադի պատմությունը, քանի որ Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշի գործունեության հետևանքներն ուսումնասիրելուս ընթացքում հարկ եղավ նաև մանրամասներ իմանալ այդ փիլիսոփայի գործունեության և անձամբ իր մասին:

⁸² ռուս. տարբերակում՝ Олмантабур, անգլ. տարբերակում՝ Olmantaboor

⁸³ ռուս. տարբերակում՝ Атарнах, անգլ. տարբերակում՝ Atarnakh

Այդ փիլիսոփա Աթարնադը ծնվել էր հենց այդ Մոսուլոպոլիս քաղաքում, այսպես կոչված, «քրդական» ընտանիքում:

Հասնելով իր պատասխանատու տարիքին՝ նա շատ մեծ գիտուն էակ դարձավ Երկիր մոլորակի համար:

Ամենասկզբում այդ քուրդ Աթարնադը մի քանի երկրային տարիների ընթացքում ջանադիր կերպով զբաղվում էր ամեն տեսակի հարցերով, որոնք, իր կարծիքով, պետք է պատասխանեին հետևյալ հարցին. «Ո՞րն է ընդհանրապես մարդու գոյատևման իմաստը», և այդ հարցերով զբաղվելու ընթացքում, հավանաբար, ինչ-որ եղանակով նրա ձեռքն է ընկնում մի շատ հին, բայց լավ պահպանված, այսպես կոչված, «շումերական ձեռագիր մատյան»:

Այդ ձեռագիր-մատյանը լավ էր պահպանվել այն պատճառով, որ «չիրման⁸⁴» կոչվող էակի արյամբ գրի էր առնվել «քալիանջեքս⁸⁵» կոչվող օձի կաշվի վրա:

Ինչպես ցույց տվեցին իմ հետազոտությունները, ինչ-որ հինավուրց էակի կողմից գրված այդ ձեռագիր մատյանի բովանդակությունը չափազանց հետաքրքրել է փիլիսոփա Աթարնադին, որին ապշեցրել են հատկապես դրա այն հատվածները, որոնցում այդ հինավուրց գիտուն էակն այսպիսի մի ենթադրություն էր արել.

«Ամենայն հավանականությամբ աշխարհում գործում է գոյություն ունեցող ամեն ինչի փոխօգնության մի օրենք: Հավանաբար նաև մեր կյանքերն են Աշխարհում ծառայում ինչ-որ ավելի մեծ կամ ավելի փոքր բան պահպանելու համար»:

Այդ հինավուրց ձեռագիր մատյանում գրի առնված այդ գաղափարն այնպես է գրավել փիլիսոփա Աթարնադին, որ նա իր հետագա գործունեությունն ամբողջությամբ նվիրել է իրեն հետաքրքրած հարցի հենց այդ կողմի հետազոտությանը:

Այդ գաղափարը հիմք է ծառայել նրա հետագա ճշմարտանման ամբողջ տեսության համար, որը երկարամյա մանրագին հետազոտություններից ու սեփական եզրակացությունների բարդ փորձարարական ստուգումներից հետո նա շարադրել է «Ինչու են Երկրի վրա պատերազմներ լինում» վերնագրով աշխատության մեջ:

Ես ծանոթացա նաև նրա այդ տեսությանը:

Այն իսկապես մոտ էր իրականությանը:

Քուրդ Աթարնադի բոլոր ենթադրությունները շատ նման էին մեր Տիեզերքում գործող հիմնական մեծ տիեզերական Տրոգոստոնեզոկրատ օրենքին, որը ես քեզ համար քիչ թե շատ մանրամասն լուսաբանեցի, երբ խոսում էի սուրբ Քավարան մոլորակի մասին:

Փիլիսոփա Աթարնադի այդ տեսության մեջ համոզիչ կերպով ապացուցվում էր, որ անկասկած գոյություն ունի «*համայն գոյի փոխօժանդակման*» օրենք, և այդ փոխօժանդակությանը ծառայում են որոշակի քիմիական նյութեր, որոնց օգնությամբ իրականացվում է էակների շնչավորումը, այսինքն՝ «կյանք ներարկելը»։ Իսկ այդ քիմիական նյութերն սկսում են ծառայել համայն գոյի օժանդակության գործին միայն տվյալ կյանքի ավարտից հետո, այսինքն՝ երբ տվյալ էակը մահանում է:

Բազմաթիվ պարզաբանիչ տրամաբանական համադրությունների միջոցով Աթարնադն իր տեսության մեջ ապացուցում էր նաև, որ Երկրում որոշակի ժամանակահատվածներում անպայման այնքան մահեր պետք է լինեն, որ դրանց համախմբությունը կարողանա «որոշակի աստիճանի հզորություն» ունեցող թրթիռներ առաջացնել:

Մի անգամ, երբ «Քրդստան» կոչվող երկրի բնակչության կողմից ներկայացուցիչ ընտրված այդ անսովոր եռուղեղ էակն իր գործընկերների խնդրանքով շատ գեղեցիկ և մանրամասն շարադրեց իր այդ տեսությունը «*Երկիրը պատկանում է Աստծուն և հավասարապես ազատ է բոլորի համար*» նշանաբանով ընկերության էակների ընդհանուր ժողովի ժամանակ, ընկերության անդամների մեջ ծայր առավ ուժեղ իրարանցում և շփոթմունք:

Նրանք այնքան ապշած էին այդ տեսությամբ, որ սկզբում որոշ ժամանակ, ինչպես այնտեղ են ասում, «գերեզմանային լռություն» տիրեց. բոլոր այնպես էին քարացել, որ նույնիսկ շարժվել չէին կարողանում, և միայն բավական երկար ժամանակ անցնելուց հետո այնպիսի աղմուկ ու ժխոր

⁸⁴ ռուս. տարբերակում՝ чирман, անգլ. տարբերակում՝ chairman

⁸⁵ ռուս. տարբերակում՝ калианджеш, անգլ. տարբերակում՝ kaliandjeks

բարձրացավ, կարծես նրանց կյանքը գրգռվածության ու արտաքին դրսևորումների աստիճանից կախված լիներ:

Այդ ամենի արդյունքը եղավ այն, որ նույն օրվա ուշ երեկոյան նրանք միաձայն որոշեցին իրենց միջից ընտրել մի քանի գիտուն էակների, որպեսզի համատեղ ուժերով մանրակրկիտ կերպով ուսումնասիրեն իրենց զարմանք պատճառած այդ տեսությունը, որից հետո ընդհանուր ժողովում մանրամասն զեկույց կարդան դրա վերաբերյալ:

Հենց հաջորդ օրվանից *«Երկիրը պատկանում է Աստծուն և հավասարապես ազատ է բոլորի համար»* ընկերության ընտրյալ անդամները մեծ ջանասիրությամբ ձեռնամուխ եղան այդ Աթարնադի ներկայացրած տեսությանը ծանոթանալու գործին:

Սակայն ի դժբախտություն այդ չարաղետ մոլորակում ապագայում ծնված բոլոր եռուղեղ էակների՝ պարզվեց, որ չնայած ընտրված բոլոր գիտուն այրերն արդեն տարիքն առած մարդիկ էին, և Երկրի էակների Լինելիությունն, այսպես ասած, «նախանձոտ» ու «ագահ» դարձնող չարանենգ գործառույթները նրանց ներսում համարյա արդեն վերացած էին, այնուհանդերձ տարբեր պատճառներով և գլխավորապես աննորմալ դաստիարակություն ստացած լինելու պատճառով նրանցից ոմանք հավանաբար դեռ բավականաչափ առաջացած չէին, որպեսզի համոզված լինեին իրենց երազանքների անիրագործելիության մեջ (որի համար նրանք պարտական էին իրենց վատահամբավ աննորմալ դաստիարակությանը), ուստի և իրենց պատրանքներից չէին զրկվել այնքան, որ լինեին ամբողջովին անաչառ ու արդարամիտ:

Դրա հետևանքով, հենց այդ նույն օրը, երբ սկսեցին աստիճանաբար ծանոթանալ այդ զարմանալի տեսության մանրամասներին, նրանք սկսեցին ընկնել Երկրի էակներին բնորոշ վիճակի մեջ. այն է՝ նրանք սկսեցին մոռացության մատնել այդ տեսության մեջ հիշատակված և իրենց ապշեցրած զարմանալի հիպոթեզի մասին և աստիճանաբար, ինչպես բնորոշ է այնտեղի եռուղեղ էակներին, սկսեցին վերադառնալ իրենց նախկին, տիպիկ սուբյեկտիվ և այդ պատճառով միշտ անկայուն համոզմունքներին, ապա և պառակտվեցին երկու իրար հակադիր կուսակցությունների:

Նրանց ոմանք, առանց որևէ տրմաբանական գործառույթուն ունենալու, սկսեցին համոզված կերպով պաշտպանել այդ տեսության մեջ արտահայտված վարկածների ամեն մի բառը. մյուսներն էլ հետ չմնացին, որ, ինչպես ընդհանրապես բնորոշ է Երկրի գիտուն էակների մեծ մասին, խոսեն ու ապացուցեն այդ վարկածներին կատարելապես հակադիր բաներ, որի արդյունքում թշնամաբար տրամադրվեցին ոչ միայն Աթարնադի բուն տեսության, այլ նաև անձամբ այդ տեսության հեղինակի նկատմամբ:

Կարճ ասած, զավա՛կս, Աթարնադի տեսությանը մանրամասն ծանոթանալու նպատակով ընտրված գիտուն էակները, փոխանակ իրենց ընկերության մյուս անդամներին օգնելու, որ ձերբագատվեն շփոթ ու խառնակ վիճակից և կարգավորեն իրենց վեճերը, արդյունքում ավելի շատ խառնեցին նրանց պատկերացումները, և աստիճանաբար այդ լուրջ ընկերության ամեն մի առանձին անդամի ընդհանուր ներկայության մեջ մեխանիկորեն սկսեցին տվյալներ կուտակվել երկու կատարելապես իրար հակադիր համոզմունքների համար:

Առաջին համոզմունքն այն էր, որ աշխարհում ամեն ինչ տեղի է ունենում փիլիսոփա Աթարնադի ներկայացրած տեսությանը ճշտորեն համապատասխան, այսինքն՝ Երկրի վրա անխուսափելիորեն պետք է լինեն «պատերազմներ» և «քաղաքացիական պատերազմներ», որոնք կատարելապես անկախ են մարդկանց անձնական գիտակցությունից. իսկ երկրորդ համոզմունքն այն էր, որն արդեն իսկ նախքան այդ ունեին ընկերության բոլոր անդամները, այն է՝ եթե հաջողվի ընկերության կողմից իրենց առջև դրված ծրագիրն իրագործել, ապա իրենց մոլորակում առկա այդ չարիքը կարող է արմատախիլ արվել, և ամեն ինչ կընթանա հալած յուղի պես:

Հենց այդ ժամանակից սկսած՝ ընկերության բոլոր անդամների միջև ծայր առան բուռն քննարկումներ, վեճեր և հուզումներ. և այդ դեպքում ևս, ինչպես արդեն ցույց եմ տվել, կրկին տեղի ունեցավ նույն բանը, ինչն արդեն վաղուց այնտեղ սովորական բան է դարձել. այդ վեճերն ու հուզումներն աստիճանաբար տարածվեցին նաև այնտեղի սովորական էակների միջավայրում, տվյալ դեպքում՝ Մոսուլոպոլիսի քաղաքացիների շրջանում, և նրանց աննորմալ հոգեկառույցի գրգռման պատճառ դարձան:

Չգիտեմ էլ, թե այդ ամենն ինչով կվերջանար, եթե հենց այդ ժամանակ այնտեղ չժամանեին «Ձեռնադրյալների Ընկերության» եղբայրները և չխառնվեին այդ գործին:

Նրանց միջամտության շնորհիվ այդ լուրջ ընկերության բոլոր անդամները հետզհետե հանդարտվեցին և կրկին խաղաղ ու լրջորեն սկսեցին մտածել ու քննարկել, թե ինչ անեն հետո:

Բոլոր այդ լուրջ քննարկումներից ու խորհրդածություններից հետո նրանք միաձայն որոշեցին Աթարնադին ընտրել գլխավոր ղեկավար և խնդրել նրան, որ օգնի՝ ելք գտնելու ստեղծված կացությունից:

Քուրդ փիլիսոփա Աթարնադի անմիջական ղեկավարությամբ կայացած մի քանի հավաքներից հետո նրանք միահամուռ հանգեցին հետևյալ վերջնական եզրակացությանը:

Համաձայն Բնության օրենքների՝ մարդկանց կամքից անկախ, Երկրի վրա միշտ պետք է տեղի ունենան «պատերազմներ» և «քաղաքացիական պատերազմներ», քանի որ որոշակի ժամանակահատվածներում Բնությունը մեծ քանակությամբ մահերի պահանջ է զգում: Ուստի և մենք բոլորս խորին ափսոսանքով, բայց անխուսափելիության ներքին գիտակցումով ստիպված ենք համաձայնել այն մտքին, որ մարդկային մտքի ոչ մի վճիռ չի կարող վերջ տալ պետությունների միջև և դրանց ներսում տեղի ունեցող արյունահեղություններին. այդ իսկ պատճառով մենք միաձայն որոշում ենք դադարեցնել մեր ընկերության ընթացիկ գործերը, ցրվել մեր տները և այնտեղ յուրաքանչյուրս մեր ուսերին կրել «կյանքի անխուսափելի բեռը»:

Եվ միայն այն բանից հետո, երբ առաջարկվեց այդ վերջնական հայտարարագիրը, և այդ իսկապես ծանրակշիռ ընկերության բոլոր անդամներն անխտիր նույն օրը սկսեցին կասեցնել իրենց բոլոր գործերը, այդ թեև գոռոզ ու ինքնահավան, բայց այնտեղ տիրող կարծիքով իսկական գիտնական քուրդ Աթարնադը բարձրացավ ամբիոն և ասաց.

«Ո՛վ, իմ հարգարժան գործընկերներ... Ես անկեղծորեն խիստ վշտացած եմ, որ ականա պատճառ դարձա այս հիբալի մեծ մարդասիրական ձեռնարկի լուծարմանը, որում դուք՝ Երկրի բոլոր ծագերի ամենախմաստուն ու պատվարժան մարդիկ, մի քանի տարում ավելի շատ անաչառ ու անշահախնդիր ջանքեր էիք ներդրել հանուն մնացած, բոլորովին անծանոթ ու անտարբեր մարդկանց բարօրության, քան Երկրի մարդիկ կարողացել էին դա անել անցյալում, կամ երբևէ հնարավորություն կունենան անելու ապագայում:

Մի քանի տարի դուք անխոնջ աշխատեցիք, որ մարդկային զանգվածների համար անհրաժեշտ բարիք ստեղծեք. ես ինքս նույնպես շատ տարիներ կորցրի իմ տեսության վրա և նույնպես հանուն ինձ անծանոթ մարդկանց բարօրության: Այնուհանդերձ, հենց իմ իմ տեսությունը պատճառ դարձավ, որ ձեր բոլոր անխոնջ աշխատանքներն ու բարի նկրտումները ջուրն ընկնեն:

Այն բանի գիտակցումը, որ հավանաբար ես եմ մեղավոր ձեր միջև ծագած տարաձայնությունների համար, այս վերջին օրերին ինձ հանգիստ չէր տալիս, և ամբողջ այս ընթացքում ես մտածում ու խորհրդածում էի այն մասին, թե չե՞մ կարող արդյոք ինչ-որ կերպ քավել իմ ականա գործած մեղքը:

Այսպիսով, ո՛վ, իմ իմաստուն գործընկերներ, որ եկել էք Երկրի տարբեր ծագերից, ես ուզում եմ ձեզ հետ կիսել իմ այն եզրակացությունը, որին հանգել եմ իմ մտորումների արդյունքում:

Թեև իմ բացահայտած համաշխարհային օրենքները հակադրվում են այն միջոցներին, որոնք, ինչպես դուք էիք ակնկալում, կարող էին մարդկությանը որոշակի երջանկություն բերել, այնուամենայնիվ, որքան էլ առաջին հայացքից ձեզ տարօրինակ թվա, եթե այդ օրենքները կիրառվեն մի փոքր այլ կերպ, ապա դրանք կարող են նպաստավոր լինել այն նպատակին հասնելու համար, որը դրել էիք ձեր առջև:

Այժմ լսեք, թե ինչ պետք է անենք այդ նպատակին հասնելու համար: Իմ բոլոր հետազոտությունների արդյունքները հստակորեն ցույց են տալիս, որ Բնությունը պահանջ ունի, որ որոշակի ժամանակահատվածներում որոշակի քանակությամբ մահեր լինեն. միևնույն ժամանակ, ինչպես ինձ հաջողվեց պարզել, Բնության համար միևնույնն է, թե դրանք ինչ մահեր կլինեն. մարդի՞կ կմեռնեն, թե՞ ուրիշ տեսակի ինչ-որ էակներ:

Այստեղից հետևում է, որ եթե Բնության պահանջած մահերը լրացվեն երկրային կյանքի այլ ձև ունեցող տեսակների մահերով, ապա, ակներևաբար, բուն մարդկանցից պահանջվող մահերի քանակը համապատասխան չափով ինքնըստիքյան կպակասի:

Իսկ դրան հասնելը լիովին հնարավոր կդառնա, եթե մեր ընկերության բոլոր անդամները շարունակեն նույն եռանդով աշխատել նույն մտադրությամբ՝ միայն թե ոչ թե նախորդ ծրագիրն իրագործելու ուղղությամբ, այլ որ Երկրում նախկինից ավելի մեծ չափերով վերսկսվի աստվածներին ու սրբերին կյանքի այլ ձևեր ունեցող երկրային էակներ զոհաբերելու հինավուրց սովորույթը»:

Երբ այդ հպարտ քուրդն ավարտեց իր ճառը, «*Երկիրը պատկանում է Աստծուն և հավասարապես ազատ է բոլորի համար*» ընկերության անդամների զարմանքն ու հուզմունքն ավելի պակաս չեղավ, քան այն ժամանակ, երբ նա առաջին անգամ ներկայացրեց իր նշանավոր տեսությունը:

Այդ հիշարժան օրվանից հետո համարյա երեք օր ու գիշեր նրանք համարյա ոչ մի ընդմիջում չարին, իսկ այն դահլիճներից, որոնք Մոսուլոպոլիսի քաղաքացիները բարեհաճորեն տրամադրել էին մարդկային էակների այդ համամոլորակային ընկերությանը, անընդհատ բանավեճերի ու քննարկումների զվվոց էր լսվում. չորրորդ օրը վերջապես ընդհանուր ազգային ժողով կազմվեց, որն էլ ընդհանուր համաձայնությամբ մի հայտարարագիր ընդունեց՝ այսուհետև վարվել ճիշտ այնպես, ինչպես կասի մեծն քուրդ փիլիսոփա Աթարնաղը:

Եվ այդ նույն օրն էլ փոխվեց ընկերության նշանաբանը:

Մի քանի օր հետո այդ ընկերության անդամները, որի նշանաբանն արդեն դարձել էր «*Երկիրը միայն մարդկանց համար է*», Մոսուլոպոլիսից ցրվեցին դեպի իրենց հայրենի եզերքները, որտեղ, ըստ փիլիսոփա Աթարնաղի ցուցումների, ամենքը հասան այն բանին, որ Ասիա աշխարհամասի բնակիչների միջավայրում կրկին ամրացավ ու արմատներ ձգեց աստվածներին ու կուռքերին սիրաշահելու գաղափարը, որը պահանջում էր սպանել զանազան տեսակի էակներ:

Եվ իսկապես, երբ նրանք սկսեցին գործանականում կիրառել իրենց այդ ծրագիրը, շատ շուտով Ասիա աշխարհամասի էակների միջավայրում սկսեց վերականգնվել իրենց երևակայական «սրբերին» գոհեր մատուցելու սովորույթը, որն ի կատար էր ածվում տվյալ վայրում ապրող զանազան թույլ ու հիմար միառուղեղ և երկուղեղ էակների գոյությանը վերջ տալու եղանակով:

«*Երկիրը միայն մարդկանց համար է*» նոր ընկերության անդամներն ամենասկզբից ի վեր իրենց այդ խնդրին լուծում էին տալիս այն կրոնի, այսպես կոչված, «հոգևորականության» միջոցով, որն ստեղծվել էր Սուրբ Մուհամեդի ուսմունքի հիման վրա և այն ժամանակ լայնորեն տարածված էր Ասիա աշխարհամասում:

Հիմա արդեն այդ սովորույթն ավելի մեծ մասշտաբներ էր ընդգրկել, քան նախկինում, երբ Լույսոս հրեշտակի խնդրանքով ես վայրէջք կատարեցի այնտեղ, որպեսզի եռուղեղ էակների միջից արմատախիլ անեմ նույն այդ սովորույթը, որն այն ժամանակ Նորին Համապատասխանությանն անցանկալի էր թվում ավելի մեծ տիեզերական երևույթի վերածվելու առումով, քանի որ ամբողջ այդ ընթացքում քո սիրելիների թվաքանակը խիստ աճել էր, հետևաբար աճել էր նաև հորինովի կուռքերին «հաճոյանալ» ցանկացողների թիվը:

Ուրիշ տեսակի էակների գոյատևմանը վերջ տալու գործը նոր թափ առավ ոչ միայն տներում՝ առանձին ընտանիքներում, այլև հրապարակային հատուկ վայրերում:

Բայց հիմա այդ հատուկ վայրերը գլխավորապես կապվում էին Սուրբ Մուհամեդի և նրա մերձավոր շրջապատի անդամների հիշատակի հետ:

Տարեցտարի այդ սպանությունների քանակն այնքան աճեց, որ, «*Երկիրը պատկանում է միայն մարդկանց*» ընկերության ստեղծումից նրանց ժամանակով ընդամենը մոտավորապես հարյուր տարի հետո միայն մեկ վայրում մի տարվա ընթացքում գոհաբերված «ցուլերի», «ոչխարների», «ուղտերի» և այլ կենդանիների քանակը հասնում էր հարյուր հազարի:

Վերջին երկու դարերում այդպիսի հատուկ սիրված վայրեր էին Մեքքա և Մեդինա քաղաքներն Արաբիայում, Բաղդադի մոտ գտնվող Մեշիեղ քաղաքը, Թուրքեստանի Յենի-դշլադի արվարձանները և մի շարք այլ տեղեր...

Մի խոսքով, Ասիա աշխարհամասում կրկին «արյան գետեր էին հոսում»:

Այդ գոհամատուցումներն առավել հաճախ տեղի էին ունենում մահմեդական տոների ընթացքում, ինչպիսիք են՝ «Բայրամը», «Կուրբանը», իսկ քրիստոնեական տոներից՝ «Բարեկենդանը», «Սուրբ Գևորգի օրը» և այլն:

Այսպիսով, զավա՛կս, դրանից հետո, երբ «*Երկիրը միայն մարդկանց համար է*» ընկերության անդամները ներդրեցին իրենց եռանդուն ջանքերը, որպեսզի այնտեղի եռուղեղ էակների միջավայրում նորից վերականգնվի այդ աննորմալությունը, փոխոչնչացման ահավոր գործընթացներն իրոք այնքան էլ հաճախ չէին լինում և ավելի փոքր մասշտաբներ էին ընդգրկում, և դրա շնորհիվ համեմատաբար մեծ թիվ կազմող բռնի, այսպես կոչված, «մահացությունը» քչացավ, սակայն դրանից եռուղեղ էակների ընդհանուր «մահացության» թիվը ոչ միայն չպակասեց, այլև ավելացավ, քանի որ նրանց լինելիական գոյատևման անընդհատ զարգացման միտում ունեցող վատացման հետևանքով, ինչպես նաև նրանց

գոյատևման ընթացքում Բնության պահանջով նրանցից ճառագվող թրթիռների որակի վատացման արդյունքում մի կողմից՝ նրանց կյանքի տևողությունն ավելի էր կարճանում, իսկ մյուս կողմից՝ աճում էր նրանց, այսպես կոչված, «ծնելիությունը»:

Այդպես շարունակվեց այնքան, մինչև որ ում Ասադուլլա Իբրահիմ օղլի՝ նշանավոր պարսիկ մի դերվիշ, որը ծնվել ու պատասխանատու էակ էր դարձել նույն այդ աշխարհամասում, ամեն ինչին այլ ուղղություն տվեց:

Դերվիշ Ասադուլլա Իբրահիմ օղլին այնտեղ իր գործունեությունը սկսել է ընդամենը երեսուն կամ քառասուն երկրային տարի առաջ:

Սոսկ մահմեդական մոլեռանդ կրոնավոր լինելով և չտիրապետելով քուրդ Աթարնադի ունեցած լուրջ ու խոր գիտելիքներին՝ նա զոհամատուցման այդ սովորույթի մեջ տեսնում էր միայն ուրիշ տեսակի էակների նկատմամբ մարդկանց ցուցաբերած անհավոր անարդար վերաբերմունքը և իր գոյատևման նպատակն էր դրել, որ ամեն գնով Երկրի երեսից վերացնի, իր կարծիքով, կրոնի համար անընդունելի այդ սովորույթը:

Դրանից հետո սկսելով ձամփորդել Ասիա աշխարհամասում՝ գլխավորապես այն երկրներում, որտեղ եռուղեղ էակների մեծ մասը մահմեդական կրոնի հետևորդներ էին, նա սկսեց աշխատանք տանել հիմնականում իր նմանների՝ դերվիշների միջոցով, որոնցից այնտեղ՝ Ասիա աշխարհամասում, կան համարյա բոլոր հանրություններում:

Այդ հնարամիտ ու եռանդուն պարսիկ դերվիշ Ասադուլլա Իբրահիմ օղլին ամենուրեք շատ խելացի կերպով մյուս դերվիշներին համոզում էր իր գաղափարի «ճշմարտացիության» մեջ, իսկ վերջիններս էլ իրենց հերթին ամենուրեք Ասիա աշխարհամասի սովորական էակներին էին համոզում, որ Աստծուն ոչ միայն հաճելի չէ այլ տեսակի էակներին ոչնչացնելը, այլև այդ ոչնչացնողներն «այն աշխարհում» դժոխքում կրկնակի պատիժ են կրելու. առաջինը՝ իրենց սեփական, այսպես կոչված, «մեղքերի համար», իսկ մյուսը՝ իրենց ոչնչացրած էակների մեղքերի համար և այլն:

Եվ դերվիշների՝ «այն աշխարհին» վերաբերող այդպիսի քարոզների շնորհիվ (իսկ դերվիշներն այդ բնագավառում մեծ հեղինակություն են վայելում) ասիացի էակներն իրոք տարեցտարի պակասեցնում էին իրենց զոհամատուցումները:

Կարճ ասած, այդ «բարի» պարսիկ դերվիշի գործունեության արդյունքն այն եղավ, որ այնտեղ տեղի ունեցավ փոխադարձ ոչնչացման վերջին խոշոր գործընթացը, կամ, ինչպես քո սիրելիներն են անվանում, «Առաջին համաշխարհային պատերազմը»:

Այսպիսով, զավա՛կս, թեև այդ անսովոր գիտնական քուրդ Աթարնադի տեսության մեջ առաջ քաշված վարկածը, ինչպես արդեն ասել եմ, շատ մոտ էր իրականությանը, սակայն նա չէր հասկացել ամենակարևորը՝ այն, որ Բնության պահանջած թրթիռները, որոնք ինչպես գոյատևման, այնպես էլ Ռասկուարնոյի գործընթացի ժամանակ գոյանում են էակներից բխող ճառագայթումներից, ոչ թե քանակական, այլ միայն որակական նշանակություն ունեն:

Հնարավոր է, որ այդ քուրդ Աթարնադը, լինելով անսովոր երկրային էակ, հասկանալի դա, եթե իմանար այն արդյունքների մանրամասները, որոնք ստացվել էին այն բանից հետո, երբ այդ մոլորակում արդեն քիչ թե շատ տանելի *լինելիական գոյատևման* պայմաններ էին հաստատվել, որոնք հատուկ այնտեղի եռուղեղ էակների համար իր Սրբազան Աշխատանքներով մտցրել էր «Էաբուխ-սիրող» Սրբազնագույն Աշխաթա Շիեմաշը:

Այդ ժամանակաշրջանում ոչ միայն «մահացությունն էր սկսել նվազել», այլ նաև, այսպես կոչված, «ծնելիությունը»:

Ծնելիությունը նվազել էր այն պատճառով, որ երբ այնտեղ եռուղեղ էակները գոյատևում էին եռուղեղ էակներին քիչ թե շատ վայել ձևով, և նրանցից բխող ճառագայթումներից գոյացած թրթիռները մոտ էին ստացվում ինչպես ընդհանրապես Մեծագույն Տրոգավտոեզոկրատին, այնպես էլ մասնավորապես Լուսնին ու Անուլիոսին օժանդակելու համար Բնության պահանջած թրթիռներին, այնժամ Մեծ Բնությունը առիթը բաց չթողեց՝ հարմարվելու ծնելիության նվազեցման հետ՝ առավել ևս, որ Լուսնի պահպանման համար անհրաժեշտ նշված թրթիռների պահանջմունքը վերջին ժամանակներում պետք է նվազեր:

Քո սիրելիների գոյատևման իմաստին ու նպատակին վերաբերող հիմնական հարցի այդ կողմն այնքան կարևոր է Երկրում տեղի ունեցող շատ բաներ հասկանալու համար (իմիջիայլոց, նաև

պատերազմների պատճառներին առնչվող հարցի առումով), որ ես անհրաժեշտ եմ համարում դրան անդրադառնալ ևս մեկ անգամ:

Առաջին անգամ այն մասին, որ քո այդ մոլորակում կազմավորվող էակների առաքելությունը գլխավորապես այն է, որ իրենց գոյատևման ընթացքում թրթիռներ առաջացնեն, որպեսզի դրանցով Բնությունը կարողանա պահպանել այդ մոլորակի նախկին մաս հանդիսացող Լուսինն ու Անուլիոսը, ես իմացա այն ժամանակ, երբ, հիշում եմ, բախտ ունեցա երկրորդ անգամ անձամբ գրուցելու Նորին Համապատասխանության հետ, որն այն ժամանակ դեռ միայն հրեշտակ էր, իսկ հիմա՝ Հրեշտակապետ Լույսու անունն է կրում:

Այն ժամանակ Նորին Համապատասխանությունն ինձ ասաց, որ թեև Երկիր մոլորակի նախկին երկու մասերի շարժումն արդեն վերջնականապես համապատասխանեցվել է ընդհանուր ներդաշնակ շարժման հետ, և մոտակա ապագայում որևէ անսպասելի բանից զգուշանալու բացարձակ կարիք չկա, այնուհանդերձ հեռավոր ապագայում հնարավոր բարդացումներից խուսափելու համար Բարձրագույն Սրբազան Անհատականությունները հստակ որոշում են կայացրել այդ մոլորակում «համապատասխան» պայմաններ ապահովել, այսպես կոչված, սրբազան ասկոկինի կազմավորման համար, որպեսզի մոլորակից պոկված մասերի պահպանման համար անհրաժեշտ այդ սրբազան տիեզերական սուբստանցիան կարողանա անընդհատ արձակվել այդ մոլորակից:

Այնուհետև Նորին Բարձրությունը նաև բացատրեց ինձ, որ այդ սրբազան ասկոկին կոչվող տիեզերական սուբստանցիան Տիեզերքում ընդհանրապես գոյություն ունի գլխավորապես «ապրուստոդոնիս⁸⁶» և «խելքոդոնիս⁸⁷» սրբազան սուբստանցիաների հետ միացած վիճակում, և, հետևաբար, որպեսզի այդ սրբազան սուբստանցիա ասկոկինը կենսատու լինի նման պահպանիչ գործունեության համար, պետք է նախապես առանձնանա այդ սրբազան ապրուստոդոնիս և խելքոդոնիս կոչվող սուբստանցիաներից:

Ճիշտն ասած, զավա՛կս, ես միանգամից չհասկացա այն ամենը, ինչ նա այն ժամանակ ասաց, այլ ինձ համար պարզեցի ավելի ուշ, երբ հիմնական տիեզերական օրենքներն ուսումնասիրելուս ընթացքում իմացա, որ այդ ապրուստոդոնիս և խելքոդոնիս սրբազան սուբստանցիաները հենց այն սուբստանցիաներն են, որոնցով կազմավորվում և կատարելության են հասնում եռուղեղ էակների բարձրագույն *լինելիական մարմինները*՝ կեսջան մարմինն ու հոգու մարմինը. և երբ ես իմացա, որ սրբազան ասկոկինի առանձնացումն այդ սրբազան սուբստանցիաներից ընդհանրապես տեղի է ունենում, երբ էակները, անկախ այն բանից, թե ո՞ր մոլորակում են ապրում՝ իրենց գիտակցական ջանքերով և կամավոր տառապանքներով իրենց ներսում նախագոյացնում են ապրուստոդոնիս և խելքոդոնիս սրբազան սուբստանցիաները, որպեսզի դրանցով կազմավորվեն և կատարելագործվեն իրենց մարմինները:

Իս երբ հետաքրքրվեցի քո սիրելիներով և սկսեցի դիտել ու հետազոտել նրանց արտառոց հոգեկառույցը, այդ ժամանակ միայն վերջապես հասկացա, թե ինչ նպատակով են այնտեղ Մեծ Բնությունն ու Բարձրագույն Սրբազան Անհատականությունները միշտ ամեն ինչին համբերատար կերպով հարմարվում, և այդ առնչությամբ ես հանգեցի հետևյալ անձնական կարծիքին:

Եթե քո սիրելիները գոնե հարկ եղած չափով մտորեին դրա շուրջ և այդ առումով ազնվորեն ծառայեին Բնությանը, ապա հնարավոր է, որ նրանց *լինելիական ինքնակատարելագործումը* դրա հետևանքով տեղի չունենար ինքնաբերաբար և նույնիսկ առանց նրանց գիտակցության մասնակցության, և ամեն դեպքում նրանց չարաղետ մոլորակի խեղճ Բնությունը ստիպված չէր լինի «դեսուդեն ընկնելու», որպեսզի նրանց հետ հարմարվի՝ համատիեզերական ներդաշնակության շրջանակներում մնալու համար:

Սակայն, ի դժբախտություն Մեգալակոսմոսի համայն գոյի, քո սիրելիներն ազնվություն չունեն նույնիսկ Բնության նկատմամբ իրենց պարտքը կատարելու առումով. ես այդ կապակցությամբ հիմա հիշեցի մեր աննման ուսուցիչ մոլլա Նասրեդինի մի շատ իմաստուն ասույթը, որը տվյալ դեպքում արդարացնում է իր գաղտնի իմաստը:

Մի անգամ նա ասաց հետևյալը.

⁸⁶ ռուս. տարբերակում՝ абрустдонис, անգլ. տարբերակում՝ abrustdonis

⁸⁷ ռուս. տարբերակում՝ хелкдонис, անգլ. տարբերակում՝ helkdonis

«Ամեն դեպքում ժանտախտն ու խոլերան պակաս ստոր են, քան մարդկային ազնվությունը, քանի որ խիղճ ունեցող մարդիկ ծայրահեղ դեպքում կարողանում են դրանց հետ յուր գնալ»:

Այսպիսով, իմ սիրելի Հասեհ՝ն, երբ պարզվեց, որ քո սիրելիների հոգեկառույցներից վերջնականապես չքացել է գիտակցական ջանքի և կամավոր տառապանքի բնագոյական պահանջը, որն անհրաժեշտ է, որպեսզի իրենց ներսում ընդունեն ու փոխակերպեն ապրուստդունիս և խելքդունիս սրբազան սուրստանցիաները և դրանով իսկ սրբազան ասկոկին ճառագեն Լուսնի և Անուլիոսի պահպանության համար, Մեծ Բնությունն ինքը ստիպված եղավ հարմարվել և այդ սրբազան սուրստանցիան գոյացնել այլ միջոցներով, որոնցից մեկն էլ հենց փոխոչնչացման այդ ահավոր պարբերական գործընթացներն են:

Այստեղ, քո ներկայիս սիրելիներին ճիշտ գնահատական տալու համար, տեղին կլինի քեզ հիշեցնել, որ քո այդ մոլորակի եռուղեղ էակներից կունդաբուֆեր օրգանի ազդեցությունն ի չիք դարձնելուց հետո առաջին սերունդները շատ շուտով իմացան, որ իրենց միջոցով պետք է կազմավորվի ինչ-որ մի տիեզերական սուրստանցիա, և որ այդ փոխակերպությանը նպաստելն իրենց գլխավոր *լինելիական պարտականություններից* մեկն է:

Հիշում ես, ես քեզ պատմեցի, որ Ատլանտիդա աշխարհամասի էակները նույնիսկ իրենց այդ *լինելիական պարտականությունը* սրբազան էին համարում և դրան տվել էին «համարլուս⁸⁸» անունը, ինչը նրանց լեզվով նշանակում էր «օգնություն Լուսնին»:

Ատլանտիդա աշխարհամասի այն ժամանակվա եռուղեղ էակները, այսինքն՝ «սամլիոսյան *քաղաքակրթության*» ներկայացուցիչները, նույնիսկ հաստատել և շատ խիստ պահպանում էին որոշ սովորույթներ, որոնք նպաստում էին այդ *լինելիական պարտականությունների* հնարավորին չափ արդյունավետ կատարմանը:

Ատլանտիդա աշխարհամասի էակները նույնիսկ հորինել էին այդ երկու *լինելիական պարտականությունների* (բարձրագույն մարմինների կատարելագործման և Մեծագույն տիեզերական Տրոգովտոեգոկրատին ծառայելու) կատարման շատ իմաստուն ու նպատակահարմար ձև. այդ երկուսը նրանք միացնում էին իրար և կատարում միաժամանակ:

Այդ միավորումը նրանք կազմակերպում էին հետևյալ կերպ:

Ամեն մի մեծ բնակավայրում և նույնիսկ դրանց առանձին շրջաններում նրանք անպայման կառուցում էին երեքական շատ ամուր հատուկ շենքեր:

Դրանցից առաջինը հատկացվում էր արական սեռի էակներին և կոչվում էր «ագուռոխրոստինի⁸⁹»:

Երկրորդը հատկացվում էր իգական սեռի էակներին և կոչվում էր «գինեկոխրոստինի⁹⁰»:

Իսկ երրորդն այն էակներին էր հատկացվում, որոնք այն ժամանակ «միջին սեռի» ներկայացուցիչներ էին կոչվում. նրանց հատկացված սրբազան շինությունը կոչվում էր «անորոպարիոնիկիմա⁹¹»:

Այդ ամուր շինություններից առաջին երկուսն այն ժամանակ Ատլանտիդա աշխարհամասի էակները սրբազան էին համարում, և դրանք նրանց համար նույնն էին, ինչ Երկրի ժամանակակից էակների համար «տաճարները», «եկեղեցիները», «մատուռները» և մյուս սրբազան վայրերն են:

Երբ ես առաջին անգամ վայրէջք կատարեցի այդ մոլորակի վրա և գտնվում էի Ատլանտիդա աշխարհամասում, այդ ժամանակ ինքս եղա այդ շինություններից մի քանիսում և շատ լավ ծանոթացա դրանց նշանակությանը:

Տղամարդկանց տաճարներում՝ ագուռոխրոստինիներում, տվյալ բնակավայրի կամ շրջանի արական սեռի էակներն ընկնում էին «ինքնահիշում» կոչվող հատուկ վիճակի մեջ և հերթով կատարում համապատասխան «գաղտնածեսերը»:

Ատլանտիդա աշխարհամասի էակները հստակ պատկերացում ունեին այն մասին, որ արական սեռի էակներն ակտիվ դրսևորումների աղբյուրներ են, այդ պատճառով իրենց ագուռոխրոստինիներում մշտապես տրվում էին ակտիվ ու գիտակցական խորհրդածությունների և

⁸⁸ ռուս. տարբերակում՝ амарлус, անգլ. տարբերակում՝ amarloos

⁸⁹ ռուս. տարբերակում՝ агурохростини, անգլ. տարբերակում՝ agoorokhrostini

⁹⁰ ռուս. տարբերակում՝ гинекохростини, անգլ. տարբերակում՝ gynekokhrostini

⁹¹ ռուս. տարբերակում՝ аноропарионикима, անգլ. տարբերակում՝ anoroparionikima

այդ վիճակում համապատասխան գաղտնաձեռներ էին կատարում, որպեսզի իրենց ներսում նախագոյանան ապրուստդունիս և խելքդունիս սրբազան սուբստանցիաները:

Նրանք դա անում էին միտումնավոր և լիովին գիտակցված ձևով, որպեսզի այդ որոշակի սրբազան սուբստանցիան, որն իրենց ներսում արտագատվում և ապա նրանց ճառագայթումներով իրենց միջից դուրս էր հորդում, իր հետագա կենսատվության համար ակտիվ մասը դառնար այն սրբազան օրենքի, որը կոչվում է «Սուրբ Երրորդություն»:

Սրբազան գինեկոխրոստինիներում, որոնք կառուցված էին իգական սեռի էակների համար, նրանցից ամեն մեկը պետք է որոշակի ժամանակահատվածների ընթացքում, որոնց ներկայիս էակները «դաշտանային շրջան» են անվանում, մնային առանց այդ կառույցներից դուրս գալու: Դեռ ավելին՝ գիտակցելով որ իրենք պասսիվ էակներ են, նրանք ամբողջ այդ ժամանակի ընթացքում պետք է միայն պասսիվ մնային, որպեսզի իրենց ճառագայթումից առաջացող թրթիռները որպես պասսիվ մաս ծառայեին հետագա կենսականության համար անհրաժեշտ սրբազան օրենքի համար:

Ուստի և նրանք այդ ամբողջ ժամանակն անց էին կացնում այդ գինեկոխրոստինիներում լիակատար պասսիվության վիճակում՝ գիտակցաբար ջանալով չմտածել ոչ մի բանի մասին:

Այդ նպատակով նրանք իրենց ամսականի շրջանում աշխատում էին ակտիվ ապրումներ չունենալ, իսկ որպեսզի նմանագագությամբ ընթացող մտքերը նրանց չխանգարեն կենտրոնանալ, ամեն ինչ կառուցված էր այնպես, որ նրանց բոլոր մտքերն ամբողջ այդ ընթացքում ուղղված լինեն իրենց արդեն ունեցած կամ հետագայում ունենալիք երեխաներին բարին կամենալու կողմը:

Ինչ վերաբերում է այն ժամանակվա երրորդ տեսակի շինություններին, որոնք, ինչպես արդեն ասացի, անորոպարիոնիկիմա էին կոչվում և նախատեսված էին, ինչպես այն ժամանակ էին ասում, «երրորդ սեռի» համար, ապա նախ ասեմ, որ վերջիններիս մեր մոլլա Նասրեդինը կրնորոշեր որպես «թյուրիմացություններ», կամ էակներ, որոնք «ոչ այս են, ոչ այն»:

Այդ միջին սեռի էակների շարքում կային ինչպես արական, այնպես էլ իգական սեռին պատկանող էակներ:

Դրանք այն էակներն էին, որոնք այս կամ այն պատճառով հնարավորություն չունեին ո՛չ կատարելագործվելու, ո՛չ էլ Բնությանը ծառայելու. նրանք այնպիսին էին, ինչպես կրկին մեր մոլլա Նասրեդինի մի ասացվածքում է ասվում՝ «ոչ աստծու համար մոմ են, ոչ սատանայի համար կրակխառնիչ»:

Այդ շինություններում որոշակի ժամանակով տեղավորվում էին արական սեռի այն էակները, որոնք այս կամ այն պատճառով արդեն կատարելապես զրկված էին երբևէ գիտակցորեն մտորելու կարողությունից. իսկ իգական սեռից այն էակներին էին այնտեղ տեղավորում, որոնք կա՛մ ընդհանրապես «դաշտանային շրջան» չէին ունենում, կա՛մ այդ շրջանն աննորմալ ընթացք էր ունենում. նաև այնպիսիներին էին տեղավորում այնտեղ, որոնք որոշակի ժամանակահատվածներում իրենց սեռական ցանկությունների առումով վերածվում էին, ինչպես այնտեղ են ասում «խանեոմենների»⁹², կամ, ինչպես կասեր մեր թանկագին մոլլա Նասրեդինը, «գարնանը գծված զամբիկների»:

Ատլանտիդա աշխարհամասի էակներն այն ժամանակ գիտեին մի քանի որոշակի, շատ առանձնահատուկ ախտանշաններ, որոնցից ելնելով՝ այդպիսի էակներին տեղավորում էին անորոպարիոնիկիմում:

Դրանք հետևյալներն էին.

- 1) եթե էակը հավատում էր ամեն մի «տխմարության».
- 2) եթե էակը սկսում էր ուրիշներին ապացուցել մի բան, որի վերաբերյալ ինքը ոչինչ չգիտեր կամ վստահ չէր իր իմացածում.
- 3) եթե էակն իր խոսքի տերը չէր լինում կամ դատարկ երդումներ էր տալիս.
- 4) և, վերջապես, եթե էակը հակումներ էր ցուցաբերում ուրիշներին լրտեսելու կամ զբաղվելու «տուկ-սու-քեֆ»⁹³-ով:

Բայց ամենավճռորոշ կանխանշանը համարվում էր մի հայտանիշ, որն այն ժամանակ «մոյասուլ»⁹⁴ էր կոչվում, իսկ ներկայիս էակները հիվանդություն են համարում և կոչում են «թուրք»:

⁹² ռուս. տարբերակում՝ ханеомени, անգլ. տարբերակում՝ khaneomenis

⁹³ ռուս. տարբերակում՝ тул-су-кеф, անգլ. տարբերակում՝ took-soo-kef

Այդպիսի էակներն առանց դուրս գալու իրավունքի պարտավոր էին շրջապատի էակների սահմանած ժամկետի ամբողջ ընթացքում մնալու անորոպարիոնիկիմաներում, բայց պարտավոր չէին դրանցում ինչ-որ որոշակի գործ անելու, այլ գոյատևում էին իրենց ուզածի պես: Նրանց հետ կապված միայն մեկ նպատակ էր հետապնդվում, այն է՝ որ նրանք չհանդիպեն և չխոսեն տվյալ բնակավայրի նորմալ էակների հետ:

Այդպիսի էակներն այն ժամանակ այդ շինություններում կալանավորվում էին այն պատճառով, որ, համաձայն այն ժամանակվա ըմբռնումների, նրանք ամսվա որոշակի շրջաններում իրենց այդ «արատների» պատճառով իրենց ճառագայթումներով խանգարում էին շրջապատի էակների հանդարտ ու ճիշտ գոյատևմանը:

Ահա այդպիսի բաներ, սիրելի գավա՛կս...

Ատլանտիդայի գոյության ուշ շրջանում այնտեղի էակներն արդեն նորմալ *լինելիական գոյատևման* բազմաթիվ լավ սովորույթներ ունեին. իսկ ինչ վերաբերում է քո այդ մոլորակի ներկայիս էակներին, ապա նրանց միայն կարելի է խղճալ, քանի որ այդ չարաղետ մոլորակի երկրորդ մեծ աղետի պատճառով նշված աշխարհամասն իր վրա եղած ամեն ինչով սուզվեց մոլորակի ընդերքը, և դրա հետ մեկտեղ չքացան սովորական գոյատևման բոլոր լավ սովորույթները, որոնք բազմաթիվ դարերի ընթացքում հաստատվել էին նրանց սովորական գոյատևման մեջ:

Ատլանտիդա աշխարհամասի կործանումից հետո այնտեղի առավել ուշ շրջանի էակների միջավայրում սովորական գոյատևման գործընթացի համար համարյա թե կրկին վերականգնվեց հատուկ շինություններ ունենալու սովորույթը, որոնք նման էին հենց նոր իմ նկարագրածին:

Կրկին գիտակցեցին հատուկ շինություններ ունենալու անհրաժեշտությունը, և դրանք իրականություն դարձրեց Մոդոմոն անունով մի շատ խելացի հին հրեական թագավոր:

Շինությունը, որն ամենից առաջ որոշեց կառուցել այդ խելացի հին հրեական թագավորը, և որն էլ երկար ժամանակ ծառայեց նրա հպատակներին, կոչվում էր «տակ-չանեն⁹⁴»:

Այն որոշ չափով հիշեցնում էր Ատլանտիդայի գինեկոխրիստինիները, և դրանում նույնպես տեղավորվում էին իգական սեռի էակներ, որոնք այնտեղ պետք է մնային դաշտանային շրջանի ամբողջ ընթացքում:

Մոդոմոն թագավորը շտապել էր մտցնել այդ սովորույթը, քանի որ նա իր իմաստուն կառավարման ժամանակ հաճախ էր փաստում, որ երբ իգական սեռի էակները գտվում էին դաշտանային շրջանում, նրանց բնավորությունը ոչ միայն անտանելի էր դառնում շրջապատի էակների՝, հատկապես ամուսինների համար, այլև իրենց նման մյուսների հետ ունեցած այդ «անհետևողական հարաբերությունների ու վերաբերմունքի» իմաստով՝ նույնիսկ հոգե-օրգանապես վնասակար են. ուստի և նա առանց հապաղելու որոշեց իր հպատակների համար խիստ օրենք մտցնել, համաձայն որի՝ ամեն մի բնակավայրի շրջակայքում անպայման պետք է կառուցվեն հատուկ մեկուսացված շինություններ, որոնցում պետք է կալանվեին հիշյալ վիճակում գտնվող իգական սեռի էակները:

Ինձ նույնիսկ վիճակվեց կարդալ նրա մտցրած այդ օրենքը:

Այդ օրենքում իմիջիայլոց նաև ասվում էր, որ կանայք իրենց դաշտանային շրջանում սրբության իմաստով մաքուր չեն, և այդ ժամանակահատվածում նրանց հետ ոչ միայն շփվելը, այլև խոսելը մյուսների, հատկապես՝ ամուսինների կողմից մեծագույն սրբապղծություն է ու հանցանք:

Պիղծ ուժը կամ չար ոգին կմտնի նրանց ամուսինների և ընդհանրապես ամեն մի տղամարդու մեջ, որոնք կշփվեն կամ թեկուզ կխոսեն նրանց հետ այդ շրջանում, և դրա արդյունքում տղամարդկանց առօրյա հարաբերություններում ծայր կառնեն թյուրիմացությունները, վեճերն ու թշնամանքը:

«Երկրային իմաստուն» արքա Մոդոմոնի այդ վերջին պնդումն այսօր էլ է անառարկելի ճշմարտություն մնում:

Եվ իրոք, ներկայումս դա մեկն է այն բազմաթիվ պատճառներից, որոնց համախմբությունը քո այդ մոլորակի էակների սովորական գոյատևումը դարձրել է արդեն վերին աստիճանի անհեթեթ:

Ներկայիս իգական սեռի «երկրային էակների» այդ վիճակում ավելի է ուժեղանում այն առանձնահատուկ հատկությունը, որը նրանք ձեռք են բերել վերջին դարերում, և կոչվում է

⁹⁴ ռուս. տարբերակում՝ мойясул, անգլ. տարբերակում՝ moyasul

⁹⁵ ռուս. տարբերակում՝ так-чан-нан, անգլ. տարբերակում՝ tak-tschan-nan

«հիստերիա». և այդ վիճակում գտնվելու ժամանակ նրանք իրենց շրջապատի էակներին, հատկապես ամուսիններին, դարձնում են այնտեղի այն էակների պես, որոնց վերաբերյալ մեր մեծ մոլլա Նասրեդինն ասում է.

«Նրանց գոյատևման նպատակը տգրուկների բաժին դառնալն է»:

Եվ իսկապես, միայն այն պատճառով, իգական սեռի ժամանակակից էակներն իրենց դաշտանային շրջանում ազատորեն «թրև են գալիս», ժամանակակից արական սեռի շատ էակներ ոչ միայն երբեք չեն կարողանա իրար հետ լավ ու բարի հարաբերություններ ունենալ, այլև դրա պատճառով շատ հաճախ վերածվում են իսկական, այսպես կոչված, «»զագրախոսների, և ապա հետո զոջում իրենց ասածների համար:

Իմաստուն Սողոմոն թագավորի մտցրած այդ բարի սովորույթը հին հրեաները բավական երկար պահպանեցին, և, իհարկե, այն կտարածվեր նաև ամբողջ Երկրում, եթե չլիներ այնտեղի էակների այն յուրօրինակ հատկությունը, որի մասին ես քեզ արդեն մի անգամ պատմել եմ:

Այն է՝ երբ այդ հին հրեական ժողովուրդը, ինչպես այնտեղ են ասում, անկում ապրեց, նրա մեծության և հզորության օրոք նրան ատողները (քո այդ մոլորակի էակներին արդեն բնորոշ դարձած՝ բոլոր իրենցից վեր կանգնածների նկատմամբ խանդ ու նախանձ տածելու ազդակների պատճառով) սկսեցին արհամարհել ու հալածել այդ ժողովրդին և դրա հետ մեկտեղ սկսեցին արհամարհել նաև նրա երբևէ ունեցած բոլոր իսկապես լավ սովորույթները:

Ահա թե ինչու այդ լավ սովորույթը ոչ միայն այլևս չտարածվեց, այլև աստիճանաբար (նաև նրանց բնորոշ այլ հատկությունների պատճառով, որոնց մասին ես արդեն բավականաչափ պատմել եմ քեզ. օրինակ՝ այն պատճառով, որ այդ հին հրեական ժողովուրդն ինքը ընկավ մեծ դարձած ուրիշ հանրությունների ազդեցության տակ և հետևեց նրանց օրինակին) հենց իրենք՝ այդ սովորույթի հիմնադիրները, սկսեցին արհամարհել այդ լավ սովորույթը և վերջիվերջո մոռացության մատնեցին այն:

Ներկայումս այնտեղ այդ սովորույթը գործում է միայն կովկասյան լեռներում գտնվող մի փոքրիկ հանրությունում, որի բնակիչները կոչվում են «խեսուրներ⁹⁶», հենց այն խեսուրները, որոնց հանրության ծագման խնդիրը հանգիստ չի տալիս այնտեղի գիտնականներին:

Իսկ ինչ վերաբերում է սովորական գոյատևման համար նրանց նախնիների ձեռք բերած և նրանց մոլորակում արդեն գոյություն ունեցած լավ սովորույթների ոչնչացմանը քո սիրելիների կողմից, ապա, ուզես թե չուզես, ստիպված ես լինում քո ցավակցությունը հայտնել այնտեղի խեղճ Բնությանը, որն անընդհատ ստիպված է լինում նրանց հարմարվելու և վերահարմարվելու:

Իսկ նրանց Բնության այդ ձախորդության առթիվ ևս մեր ամենապատվելի Ուսուցիչը՝ անսման մոլլա Նասրեդինը, շատ լավ ասություններ ունի:

Օրինակ՝ այդպիսի դժբախտ դեպքերում նա երբեմն ասում է. «Է՛հ, մեկ որ կյանքում բախտդ չի բանում, ապա նույնիսկ կնքամորից կարելի է վարակվել վեներական հիվանդությամբ»:

Կամ՝ հետևյալ խոսքն է ասում. «Ո՛վ, դժբախտ, երևի մայրդ հայկական երգ է երգել քեզ ծնելիս»:

Նույնիսկ ռուսական իմաստության մեկնիչ Կոզմա Պրոտկովը լավ ասություններ ունի այդպիսի դեպքի համար. «Մեր մեջ ամենաձախորդը եղնու կոնն է, քանի որ ընկնում է ամեն մի Մակարի ոտի տակ»:

Կրկնում եմ՝ որպեսզի Երկիր մոլորակի դժբախտ Բնությունը մնա համատիեզերական ներդաշնակության շրջանակներում, առանց շունչ քաշելու պետք է անընդհատ դեսուդեն ընկնի Ինքնահարմարվելու համար:

Որպեսզի դու պատկերացնես և հարկ եղածին պես հասկանաս, թե ինչպես է այդ դժբախտ Բնությունն այնտեղ հարմարվում, որպեսզի, այսպես կոչված, «հավասարակշիռ թրթռանք» ունենա, որն այդ մոլորակից պահանջում է համատիեզերական ներդաշնակությունը, ես քեզ կպատմեմ միայն մեկ փաստի մասին, որն այնտեղ տեղի է ունենում հենց հիմա, այսինքն՝ նրանց այն գործընթացից հետո, որն իրենք «համաշխարհային պատերազմ» են անվանում:

Պարզապես այն պատճառով, որ հիշյալ գործընթացի ժամանակ «գերմանացի» կոչվող էակները հորինեցին, այսպես կոչված, «թունավոր գազը», իսկ «անգլիացի» կոչվողները՝ այսպես կոչված, «արագագործ գնդացիները», այդ դեպքում գոյացավ Բնության կողմից չնախատեսված

⁹⁶ ռուս. տարբերակում՝ хевсурь, անգլ. տարբերակում՝ Khevsoors

Ռասկուարնոյի կամ մահերի անհամեմատ ավելի մեծ քանակություն, քան Նա պահանջում էր, կամ, ինչպես կասեին այնտեղի տհասամտություն թեկնածուները՝ առուծախով զբաղվողները, տեղի է ունեցել եռուղեղ էակների մահերի «գերարտադրություն»:

Դրա արդյունքում, այդ պահից սկսած, Բնությունն այնտեղ կրկին ստիպած է դեսուդեն ընկնել և, ինչպես այնտեղ են ասում, «կաշվից դուրս գալ», որպեսզի շտկի այդ չկանխատեսված բանը և համապատասխան ձևով հարմարվի:

Այս մի դեպքում, ելնելով ինչպես այն ամենից, ինչ ես ինքս ճշգրիտ իմացա վերջին անգամ այնտեղ գտնվելուս ընթացքում, այնպես էլ եթերագրով ինձ հասած տեղեկատվությունից, Մեծ Բնությունն այնտեղ հավանաբար պատրաստվում է հետագա ժամանակի համար ավելացնել այնտեղի ուրիշ տեսակի էակների ծնելիությունը:

Պետրոգրադ և Թիֆլիս կոչվող քաղաքներում, որոնք գտնվում են Ռուսաստան կոչվող մեծ հանրությունում, որից նրանց այդ համաշխարհային պատերազմի ժամանակ ավելի շատ էակներ զոհվեցին, քան որևէ այլ հանրությունից, ես նկատեցի, որ չորքոտանի էակների այն տեսակը, որն այդ վայրերում երբեք չէր հայտնվում, այսինքն՝ չորքոտանի այն էակները, որոնք ատում են մարդկանց և վերջիններիս կողմից «գայլեր» են կոչվում, արդեն թափառում են այդ քաղաքների փողոցներում:

Եթերագրով ինձ հասած տեղեկատվության մեջ իմիջիայլոց ասվում էր, որ նույն այդ Ռուսաստան կոչվող մեծ հանրությունում կրծողների դասին պատկանող այն էակների ծնելիությունը, որոնք այնտեղ «մկներ» և «առնետներ» են կոչվում, այնպիսի չտեսնված չափերի է հասել, որ ներկայումս դրանք խժոռում են այդ հանրության էակների պահուստային մթերքների մեծ մասը:

Այնուհետև այդ եթերագրում ասվում էր, որ Ռուսաստան կոչվող հանրության իշխանավոր էակները խնդրանքով դիմել են եվրոպական մի ուրիշ հանրության էակներին, որ օգնեն ոչնչացնելու իրենց մոտ բազմացող այդ ոչ մեծ էակներին՝ մկներին ու առնետներին, և դրա դիմաց խոստացել են այնքան դրամ տալ, որքան կարծենա այդ գործը:

Թեև այդ խեղճ առնետների ու մկների քանակը կարող է ժամանակավորապես պակասել զանազան միջոցներով, որոնք կան ուրիշների գոյատևմանը վերջ տվող այդ մասնագետների տրամադրության տակ, այնուհանդերձ մյուս հանրությունների էակները հազիվ թե համաձայնեն մատուցել այդ «ծառայությունը»: Եվ Ռուսաստան կոչվող հանրության էակներն էլ, իհարկե, չեն կարողանա դրամով փոխհատուցել այդ ծառայության դիմաց, քանի որ դրա ծախսերն անհամեմատ ավելի մեծ կլինեն, քան նրանց վերջին պատերազմինը:

Իսկ ինչ վերաբերում է այն նույն աղբյուրներից փող կորզելուն, որոնցից կորզում էին այդ մեծ գործընթացի ժամանակ, ապա, ինչպես ասում է մեր թանկագին մոլլա Նասրեդինը, «Դրանից ոչինչ դուրս չի գա... Նույնիսկ ավանակին է հասկանալի, որ խաղաղ ժամանակ գյուղացու միսը ոչինչ չարժե»:

Այս ասելուց հետո Բեհեդգերուղը լռեց և սպասողական հայացքը հառեց թոռանը, որը, կարծես ինքն իրեն դիմելով, շատ տխուր ու վհատությամբ լի ձայնով ասաց.

– Ինչո՞վ կավարտվի այդ ամենը... Միթե՞ իրոք ոչ մի ելք չկա...

Միթե՞ այդ տարաբախտ մոլորակում ձևավորվող այդ թշվառ հոգիներն իրոք պետք է հավերժ մնան անկատար, անվերջ զանազան մոլորակային մարմիններով հանդերձավորվեն և հավերժորեն տքնեն այդ անիծյալ կունդաբուֆեր օրգանի հատկությունների հետևանքների տակ, որն իրենց բոլորովին օտար մի պատճառով ժամանակին կցվել է այդ չարաղետ մոլորակի առաջին եռուղեղ էակների մոլորակային մարմիններին:

Իսկ ու՞ր է այն հենասյունը, որի վրա հենվում է, այսպես ասած, մեր ամբողջ Մեգալակոսմոսը, և որը Արդարություն է կոչվում...

Ո՛չ, այդպես չի՝ կարող լինել... Այդտեղ ինչ որ բան այն չէ, քանի որ իմ ամբողջ գոյատևման ընթացքում ես որևէ կասկածի հետք անգամ չեմ ունեցել Օբյեկտիվ Արդարության գոյության վերաբերյալ:

Ես միայն պետք է պարզեմ ու հասկանամ... Ինչու՞, ինչու՞...

Ամեն դեպքում՝ այս պահից սկսած, իմ կյանքի նպատակը կդառնա հստակ հասկանալ, թե ինչու՞ են այդ երկրային եռուղեղ էակների հոգիները գտնվում այդպիսի անհավանական ու ահավոր վիճակում...

Այսքանն ասելուց հետո խեղճ Հասեինը, թախիծով համակված, կախեց գլուխը և տխուր մտածմունքների մեջ ընկավ:

Իսկ Բեհեղգեբուղը նրան էր նայում շատ տարօրինակ հայացքով. տարօրինակ այն պատճառով, որ այդ հայացքում հստակ երևում էր Հասեինի նկատմամբ սերը, և միաժամանակ զգացվում էր, որ նա, այնուամենայնիվ, շատ ուրախ է, որ իր թոռն այդպիսի ճնշված վիճակում է հայտնվել:

Լռությունը բավական երկար տևեց: Վերջապես Բեհեղգեբուղը խոր հառաչեց, այսպես ասած, իր ողջ էությանը և թոռանը դիմեց հետևյալ բառերով.

«Է՛հ, իմ սիրելի Հասեին...

Իհարկե, այստեղ ինչ որ բան այնքան էլ ճիշտ չէ:

Բայց եթե քո այդ մոլորակի էակների համար ոչինչ չի կարողացել անել այն էակը, որը ներկայումս արդեն սուրբ «Պաղկուլադի» բանականությանն է հասել և ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ առաջին օգնականներից մեկն է Աշխարհը կառավարելու գծով, նույն ինքը՝ Գերսրբազնագույն Աշխաթա Շիեմաշը, ապա ի՞նչ կարող ենք անել մենք, որ համարյա սովորական էակների բանականություն ունենք:

Հիշո՞ւմ ես՝ Գերսրբազնագույն Աշխաթա Շիեմաշն իր «Իրավիճակի ահավորություն» վերնագրով խորհրդածություններում ասել էր.

«Եթե դեռևս հնարավոր է փրկել Երկրի էակներին, ապա դա կարող է անել միայն Ժամանակը»:

Մենք միայն այդ նույն բանը կարող ենք կրկնել նրանց այն ահավոր հատկության կապակցությամբ, որի մասին հենց նոր խոսում էի. այն է՝ փոխադարձաբար իրար ոչնչացնելու պարբերական գործընթացների կապակցությամբ:

Այժմ մենք միայն կարող ենք ասել, որ եթե երկրային էակների այդ հատկությունը վերանա այդ դժբախտ մոլորակից, ապա դա կլինի միայն Ժամանակի բերումով՝ կա՛մ շատ բարձր բանականությամբ օժտված ինչ-որ մի էակի առաջնորդության, կա՛մ էլ ինչ-որ բացառիկ տիեզերական իրադարձության շնորհիվ»:

Այսքանն ասելով՝ Բեհեղգեբուղը կրկին նույն տարօրինակ հայացքը հառեց Հասեինին:

ԳԼՈՒԽ ԽԴ

Ըստ Բեհեղգեբուղի կարծիքի՝ արդարության մասին մարդկային պատկերացումը՝ մարդկության համար օբյեկտիվ իմաստով նգովյալ տեսլախաբկանք է

Ժպտալով և շարունակելով քնքշությամբ նայել իր թոռ Հասեինին՝ Բեհեղգեբուղն ասաց.

«Միայն այսքան բանը քեզ պատմելուց հետո, ո՛վ, իմ սիրելի ապագա տեղակալ, և այն ամենից հետո, ինչ այս ամբողջ ընթացքում դու հասկացել ես Երկիր մոլորակի եռուղեղ էակների հետ կապված, ես տեղին եմ համարում քեզ պատմել այն երկրային «հարցի» մասին, որին խոստացել էի անդրադառնալ իմ այս պատմությունների վերջնամասում:

Խոսքս վերաբերում է նրանց միջավայրում տարածում գտած այն չարանենգ գաղափարին, որը (եթե հիշում ես, ես այդ մասին նշեցի, երբ պատմում էի նրանց հոգեկառույցի գլխավոր «խեղման»՝ այն յուրօրինակ «հավատվերնողների», կամ, ինչպես նրանք են անվանում, «կրոնների» մասին) նրանք հիմք են դարձրել բոլոր իրենց կրոնների համար և անվանել «բարին ու չարը»:

Այն ժամանակ ես նաև քեզ ասացի, որ երկրային եռուղեղ էակների այդ վնասակար գաղափարի պատճառով վերջերս սուրբ Քավարան մոլորակում մեծ իրադարձություններ, կամ, քո սիրելիների բառերով ասած, «աղմկոտ վեճեր» տեղի ունեցան, իսկ դրանց սկզբի համար ականա պատճառ դարձան քո «հերնասջինսի»⁹⁷, կամ, քո սիրելիների ասած՝ «տոհմածառի» որոշ անդամներ:

⁹⁷ ռուս. տարբերակում՝ харнасджинси, անգլ. տարբերակում՝ hernasdjinsa

Որպեսզի դու ավելի լավ պատկերացնես և ավելի հեշտ յուրացնես այն ամենը, ինչ մտադիր եմ քեզ բացատրել, իմ կարծիքով, նախ և առաջ որոշ բաներ պետք է պատմեմ որոշ հեռավոր իրադարձություններից, որոնք առաջին հայացքից որևէ կապ չունեն այդ գաղափարի հետ:

Այսպես, ուրեմն... Ես մի անգամ արդեն քեզ պատմել եմ, որ երբ հինգերորդ անգամ վայրէջք կատարեցի քո այդ մոլորակի մակերևույթին, այնտեղ երկար չմնացի և շատ շուտով վերդարձա Մարս մոլորակի իմ տունը:

Դրա պատճառն այն էր, որ այն ժամանակ Կենտրոնից իմ ընկերներն ինձ տեղեկացրին, որ մոտ ապագայում Մարս մոլորակ կժամանի ՆՈՐԻՆ ՀԱՄԸՆԴԳՐԿՈՒՆ ԱՆՍԱՀՄԱՆԻ մերձավոր քերովբեներից մեկը, որն ինձ վերաբերող ինչ-որ հանձնարարական կունենա:

Մարս մոլորակում որոշ ժամանակ մնալուցս հետո, շուտով իսկապես հայտնվեց հիշյալ քերովբեն, իսկ Վերնից նրան տրված ինձ վերաբերող հանձնարարականն այն մասին էր, որ համատիեզերական բարօրության նպատակներով արդյունքների հասնելու իմ գիտակցական ջանքերի շնորհիվ, այսինքն՝ շնորհիվ այն բանի, որ քո այդ մոլորակի եռուղեղ էակների միջավայրում ինձ հաջողվել էր վերացնել «գոհամատուցման» գործառությունը, ինչպես նաև շնորհիվ Նորին Համապատասխանություն հրեշտակ Լույսոսի՝ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐ առջև անձնական բարեխոսության՝ իմ գործած մեղքի համար սահմանված պատիժը մեղմվել էր այն առումով, որ այն այլևս չէր առնչվելու իմ հետնորդներին:

Այնպես որ, այդ ժամանակից սկսած, իմ երեխաները՝ քո հայրն ու հորեղբայր Թույլանն արդեն կարող էին իրենց ուզած ժամանակ վերադառնալ Կենտրոն և այնտեղ կատարել մեր ՀԱՄԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀՈՐ անհաշիվ արարումների նկատմամբ հարկ եղած պարտականությունները:

Մեր ընտանիքի համար այդ մեծ իրադարձությունից հետո իմ երեխաներն իսկապես լքեցին Մարս մոլորակը և վերադարձան Կենտրոն, որտեղ էլ նրանց տեղ հասնելուն պես տվեցին (քանի որ նրանք արդեն օբյեկտիվ իմացության որոշակի ոլորտներում մեծ իմաստուններ էին դարձել և կարողանում էին դրա օրենքներին գործնական կիրառություն տալ) արժանի պատասխանատու պաշտոններ:

Քո հայրը, ինչպես արդեն ասել եմ, անմիջապես նշանակվեց մեր սիրելի Քարատակ մոլորակի մակերևույթի մասերից մեկի «զբոլիկի» պաշտոնում, որից հետո աստիճանաբար արժանացավ մեր մոլորակում բազմացող բոլոր եռուղեղ էակների գլխավոր «զբոլիկի» պատասխանատու պաշտոնին և մինչև այժմ զբաղեցնում է այդ պաշտոնը:

Իսկ քո հորեղբայր Թույլանը, ինչպես կրկին արդեն քեզ պատմել եմ, այն ժամանակ նշանակվեց սուրբ Քավարան մոլորակի եթերագրային կայանի տնօրենի օգնականներից մեկի պաշտոնում: Այդ կայանն ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա «եթերագրային կայան» մեջ է մեր Մեծ Տիեզերքի համարյա բոլոր մոլորակների հետ:

Ավելի ուշ նա արժանացավ այդ կայանի գլխավոր տնօրենի պաշտոնին և մինչև հիմա այդ պաշտոնն է զբաղեցնում:

Ես նաև այն պետք է քեզ բացատրեմ, զավա՛կս, թե ինչու Կենտրոն հասնելուն պես իմ պտուղները, կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, «որդիները» անիջապես արժանացան այդպիսի պատասխանատու պաշտոնների:

Որպեսզի դա քեզ համար հասկանալի լինի, պետք է ասել, որ ինձ հետ ամենասկզբում արքայազնների թվում էր նաև մեր Քարատակ մոլորակի գլխավոր «զբոլիկը»՝ այն ժամանակ դեռ երիտասարդ, բայց արդեն շատ գիտուն Փուլուճիշտյուսը⁹⁸, որն ամենաողորմած ներումից հետո արժանացավ լինելու և հիմա էլ մնում է Մեզալակոսմոսի բոլոր կենտրոնացումների շարժումների Մեծն Դիտորդ, Նորին Ինքնապահպանություն Սերովբեապետ Քշելտարնի⁹⁹ օգնականը:

Եվ ահա, երբ Մարս մոլորակի վրա ես սկսեցի հիմնադրել իմ աստղադիտարանը, այդ նույն Փուլուճիշտյուսն առաջարկեց, որ իրեն նշանակեմ իմ այդ նոր ձեռնարկության վերահսկիչի և կառավարչի պաշտոնում:

Իհարկե, ես այն ժամանակ անմիջապես համաձայնեցի նրա առաջարկին, քանի որ նա շատ մեծ հեղինակություն էր ինչպես բոլոր մեծ ու փոքր տիեզերական կենտրոնացումների տեղադրության,

⁹⁸ ռուս. տարբերակում՝ Пулуджистиус, անգլ. տարբերակում՝ Pooloodjistus

⁹⁹ ռուս. տարբերակում՝ Кшетарна, անգլ. տարբերակում՝ Ksheltarna

այնպես էլ դրանց փոխապահականության օրենքների իմացության բնագավառներում, և այդ ժամանակից սկսած, այդ մեծ գիտնական Փուլուճիշտյուսը սկսեց գոյատևել Մարս մոլորակի իմ տանը:

Հետո, երբ ծնունդ առան իմ ակտիվ սկզբունքի պտուղները և կազմավորվելով հասան համապատասխան տարիքի, ես մի անգամ խնդրեցի այդ գիտնական Փուլուճիշտյուսին, որ ստանձնի նաև իմ երեխաների «ոսկիհանոցների», կամ, ինչպես կասեին քո սիրելիները, «դաստիարակի» պարտականությունը. և նա իմ առաջարկն ընդունեց մեծ պատրաստակամությամբ, քանի որ գոյատևելով այնտեղի անհարմար պայմաններում՝ անբավարարվածություն էր զգում՝ հնարավորություն չունենալով, կիրառելու իր բազմակողմանի գիտությունը, մինչդեռ իմ այդ առաջարկն այդ առումով նրա առջև բացում էր, ինչպես ասում են, «գործունեության լայն ասպարեզ»:

Այդ ժամանակից սկսած՝ իր անմիջական պարտականությունները կատարելուց բացի, որոնք սկզբում նրա համար այնքան էլ հոգնեցուցիչ չէին, նա սկսեց ամբողջովին նվիրվել համապատասխան ներքին ու արտաքին պայմաններ ստեղծելու գործին, որպեսզի իմ որդիները յուրացնեն ստացած տպավորությունները՝ իրենց ներսում եռուղեղ էակներին վայել և պատասխանատու գոյատևման համար անհրաժեշտ *լինելիական նախադրյալներ* բյուրեղացնելու նպատակով:

Իմ որդիները շուտով նրա հետ այնքան կապվեցին, որ նրանից չէին հեռանում նույնիսկ աստղադիտարանի հետ կապված նրա անմիջական պարտականությունները կատարելու ընթացքում, և նույնիսկ այդ պայմաններում բարի Փուլուճիշտյուսն անընդհատ լուսավորում էր նրանց բանականությունը և գործնական բացատրություններ տալիս կենտրոնացումների բոլոր դիտումների, նրանց փոխազդեցության հետազոտման մեթոդների և այդ երևույթների բուն իմաստի վերաբերյալ:

Նա իմ որդիներին բացատրում էր, թե ինչու և ինչ նպատակով է այս կամ այն տիեզերական կենտրոնացումը զբաղեցնում հատկապես տվյալ տեղը, և նրանց հայտնում էր համատիեզերական տրոգոավտեզոկրատական գործընթացում այդ կենտրոնացումների փոխազդեցության առանձնահատկությունները:

Այդպիսով, այդ հրաշալի գիտնականի ղեկավարությամբ իմ պտուղների ընդհանուր ներկայություններում բյուրեղացվեցին ոչ միայն այն նախադրյալները, որոնք անհրաժեշտ են ամեն մի պատասխանատու եռուղեղ էակի, այլ նաև բազմաթիվ տվյալներ՝ կապված տիեզերական կենտրոնացումներին և նրանց գործառնություններին վերաբերող ճշմարիտ տեղեկությունների լիակատար իմացության ու ըմբռնման հետ:

Ի դեպ, հենց այդ ժամանակահատվածում էր, որ իմ երկու որդիներն իրենց ներսում կազմավորեցին դիտումների և ուսումնասիրությունների իրենց սուբյեկտիվ սիրելի առարկաները:

Այսպես՝ քո հայրը սիրում էր դիտել և ուսումնասիրել այն տիեզերական կենտրոնացումների փոխազդեցությունն ու փոխօժանդակությունը, որոնք տեղաբաշխված են Առաջնային Աղբյուրի՝ Սրբազնագույն Բացարձակ Արևի մոտակա ոլորտներում, իսկ Թույլան հորեղբայրդ հետաքրքրություն էր ցուցաբերում Երկիր մոլորակի՝ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների լինելիական գոյատևման գործընթացի նկատմամբ: Երբ ես զբաղված էի լինում ինչ-որ ուրիշ գործով, հաճախ նրան հանձնարարում էի գրառումներ կատարել այնտեղ տեղի ունեցող բոլոր փոփոխությունների վերաբերյալ:

Երբ իմ որդիները պատրաստ էին ընդմիջտ լքելու Մարս մոլորակը, քո հորեղբայր Թույլանը խնդրեց ինձ, որ պարբերաբար իրեն ուղարկեմ երկրային էակների՝ իմ դիտումների արդյունքները, ինչը, իհարկե, ես խոստացա անել. և նրանք Մարսից թռան Կենտրոն՝ Մեր Տիրոջն ավելի մոտ:

Երբ նրանք տեղ հասան, և պարզվեց, որ շատ լավ տեղեկացված են տիեզերական կենտրոնացումների դիրքերի, դրանց հատկությունների և առանձնահատկությունների վերաբերյալ, ինչպես նաև գործնականում տեղյակ են նրանց փոխազդեցությունների համախմբության ոլորտից, այդ ամենի շնորհիվ նրանք անմիջապես նշանակվեցին այդ պատասխանատու պաշտոններում:

Եվ այսպես, երբ ես իմացա նրանց մշտական բնակության վայրերի և շնորհված պաշտոնների մասին, այդ պահից սկսած մեր տարվա ամեն մի քառորդում, համաձայն իմ խոստման, սկսեցի Թույլանին ուղարկել իմ այն դիտումների համառոտագրությունների ճշգրիտ պատճենները, որոնք շարունակում էի իրականացնել: Բավական շատ տարիներ են անցել այն ժամանակից, երբ ես սկսեցի այդ եթերագրերն ուղարկել Թույլանին՝ ինքս չիմանալով, թե ինչ է կատարվում դրանց հետ, մինչև որ տեղեկություն ստացա Քավարան մոլորակում տեղի ունեցող այդ բուռն իրադարձությունների մասին: Պարզվեց, որ սուրբ Քավարան մոլորակի մեծ Կառավարիչը՝ Նորին Քառատիրություն Քերովբեապետ

Խելքիմոտիուսը, մի անգամ պատահաբար իմանալով, որ եթերագրային կայանի տնօրենի օգնականներից մեկը՝ Թույլանը, իր հորից շատ երկար եթերագրեր է ստանում Արգ արևային համակարգի վերաբերյալ, ցանկություն է հայտնել ծանոթանալու դրանց բովանդակությանը, և ծանոթանալուց հետո ոչ միայն ինքն էլ է հետաքրքրվել դրանցով, այլև Թույլան հորեղբորդ հրամայել է այդ եթերագրերի բովանդակությունը միշտ վերածել համամոլորակային «տուլուխտերզինեկի»¹⁰⁰ (ինչը որոշ իմաստով նման է երկրային «ռադիոհաղորդում» կոչվածին), որպեսզի սուրբ մոլորակի վրա բնակվող «բարձրագույն լինելիական մարմինները» ցանկության դեպքում կարողանան զվարճանքի կարգով ծանոթանալ Մեգալակոսմոսի շատ հեռավոր մի անկյունում բազմացող յուրօրինակ եռուղեղ էակների հոգեկառույցին:

Քո հորեղբայր Թույլանը դրանից հետո միշտ այդպես է վարվել: Ինձնից ստանալով եթերագրերը՝ նա միշտ դրանց բովանդակությունը հեռարձակել է համամոլորակային տուլուխտերզինեկով, և այդ եղանակով այդ սուրբ մոլորակում բնակվող բոլոր բարեպաշտ հոգիները տեղեկություններ են ստացել այդ էակների արտառոց հոգեկառույցին առնչվող իմ բոլոր դիտումների ու հետազոտությունների վերաբերյալ:

Այդ ժամանակից սկսած՝ այդ սուրբ մոլորակի որոշ բարեպաշտ բարձրագույն լինելիական մարմիններ ոչ միայն ուշադրությամբ հետևել են իմ բոլոր դիտումներին, այլև սկսել են մտորել այդ էակների հոգեկառույցի տարօրինակության շուրջ:

Այդ մտորումների արդյունքում երանելի բարձրագույն լինելիական մարմինները սկսել են հասկանալ, որ Երկիր մոլորակի այդ եռուղեղ էակների հոգեկառույցում ինչ-որ բան այն չէ, և նույնիսկ «ինչ-որ կասակածելի բան» են գտել այդ «ինչ-որ բանի» պատճառի մեջ. ի վերջո նրանցից շատերը սկսել են լրջորեն վրդովվել այն բանից, ինչը սկզբում նրանց թվացել է Վերնից եկած, այսպես ասած, անարդարություն:

Որքան ավելի շատ էին այդ վրդովված հոգիներն ուրիշների հետ կիսել իրենց տպավորությունները, այնքան նրանց քանակը շատացել էր, այնպես որ կամաց-կամաց այդ սուրբ մոլորակի բոլոր «զարուարիաներում»¹⁰¹, որոնք համարժեք են Երկրի քաղաքներին ու գյուղերին, ամենուրեք սկսել են մտածել դրա մասին ու իրար հետ քննարկել միայն այդ հարցը:

Այդ ամենի արդյունքը եղել է այն, որ սուրբ մոլորակի բոլոր բնակիչներն իրենց միջից ընտրել են հիսուն բարեպաշտ հոգիների, որպեսզի համատեղ ուժերով հետազոտեն ու պարզեն ճշմարիտ պատճառը, թե Երկիր մոլորակի եռուղեղ էակների հոգեկառույցներում ինչու այդպիսի անհեթեթություն գոյություն ունի, որն անհնարին է դարձնում բարձրագույն լինելիական մարմնի ինքնակատարելագործումը, ինչը տարբեր պատճառներով ի հայտ է գալիս նրանցից որոշների ներկայություններում:

Այդ ընտրյալ հիսուն կրոնասեր հոգիները եղել են հենց նրանք, որոնք արդեն արժանացել էին Համայն Գոյի Գերսրբազնագույն Աղբյուրի մոտ անցնելու թեկնածությանը:

Նորին Քառատիրություն Խելքիմոտիուսը՝ սուրբ մոլորակի Կառավարիչը, ոչ միայն պաշտոնապես հավանություն է տվել այդ հիսուն երանելի հոգիների ընտրությանը, այլև Իր սեփական ամենաբարեհաճ որոշմամբ ցանկություն է հայտնել ամեն կերպ նպաստելու այդ նախաձեռնության իրականացմանը:

Այդպիսով, զավա՛կս, երբ Բացարձակ Արև մուտք գործելու այդ հիսուն թեկնածուները սկսել են իրենց հետազոտությունները, ապա երկարատև ու բարդ փնտրտուքներից հետո նրանց համար պարզ է դարձել, որ այդ մոլորակում կազմավորվող եռուղեղ էակների հոգեկառույցի ամբողջ աննորմալության հիմնական պատճառը եղել է մի որոշակի կարծիքի ծագումն ու գոյատևումը, թե իբր էակների էությունից դուրս կան երկու տրամագծորեն հակադիր գործոններ՝ «բարու» և «չարի» աղբյուրներ, որոնք իրենց բոլոր լավ և վատ դրսևորումների դրդիչներն են:

Այնուհետև նրանք բացահայտել են, որ այնտեղ ամենուրեք տարածված այդ գաղափարը, որի համար այդ էակներից յուրաքանչյուրի ներսում աստիճանաբար տվյալներ են բյուրեղացվում նրանց նախապատրաստական տարիքի ընթացքում, պատասխանատու տարիքում արդեն նրանց ընդհանուր հոգեկառույցում գերիշխող է լինում, և մի կողմից՝ դառնում է նրանց բոլոր դրսևորումների

¹⁰⁰ ռուս. տարբերակում՝ тулукхтерзине́к, անգլ. տարբերակում՝ toolookhtertzinek

¹⁰¹ ռուս. տարբերակում՝ заруа́риях, անգլ. տարբերակում՝ zarooariakhs

հանգստացնողն ու արդարացնողը, իսկ մյուս կողմից՝ այն հիմնական գործոնը, որը նրանցից ոմանց գրկում է իրենց «բարձրագույն *լինելիական մասմի*» ինքնակատարելագործման հնարավորությունից:

Երբ սուրբ մոլորակի բարեպաշտ բնակիչներն այդ ամենը պարզել են, դրանից հետո սկսել են դատել ու միջոց փնտրել այդ վիճակից դուրս գալու և իրենց անելիքը որոշելու համար:

Ինչպես հետո ինձ պատմեցին, նրանք սկսել են ամենուրեք իրենց զարուարիաներում ժողովներ ու գիտաժողովներ կազմակերպել՝ ձգտելով համատեղ ինչ-որ մի որոշման հանգել. երկարատև քննարկումներից ու առանձին զարուարիաների բարեպաշտ հոգիների, այսպես կոչված, «քվեարկություններից» հետո ի վերջո նրանք համարյա միաձայն ընդունել են հետևյալ բանաձևը:

Նախ և առաջ խնդրանք դնել մեր ՍՏԵՂԾԱՐԱՐ ԱՐԱՐԶԻ առջև, որ ՆԱ ԻՐ Նախախնամությամբ Երկիր մոլորակի եռուղեղ էակների մոտ Վերևից այնպիսի տվյալներով մի Առաքյալ ուղարկի, որոնք համապատասխանում են այնպիսի բանականությանը, որով հնարավոր կլինի հենց տեղում մի հնար գտնել այդ վնասակար գաղափարն արմատախիլ անելու համար. երկրորդ՝ հաշվի առնելով այն, որ այդ մոլորակի մակերևույթին նման վնասակար գաղափարի իրականացումը հիմա էլ է գլխավոր պատճառ հանդիսանում այնտեղ կազմավորվող սրբազան բարձրագույն *լինելիական մասերի* բոլոր ահասարսուռ դժբախտությունների համար, հանդգնել խոնարհաբար խնդրելու մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐԸ, որ թույլ չտա, որպեսզի այն երկրային եռուղեղ էակի բարձրագույն *լինելիական մասը*, որը պատճառ է դարձել այնտեղ այդ վնասակար գաղափարի ծագմանը, բերվի սուրբ մոլորակ, եթե նույնիսկ այդ բարձրագույն *լինելիական մասը* կատարելագործվելով հասած լինի սրբազան բանականության պահանջվող աստիճանին, այլ նրան դատապարտի հավերժորեն Խղճի Խայթ մոլորակում գոյատևելուն:

Եվ ահա այն ժամանակից ի վեր, գավա՛կս, երբ սուրբ մոլորակի բնակիչները հավանություն տվեցին այդ բանաձևին, այնտեղ այնպիսի, ինչպես ես բնորոշեցի, «աղմկոտ իրադարձություններ» ծավալվեցին, որ այդ հերոսապատումին ծանոթ ոչ մի Սրբազան Անհատականություն մինչև այժմ չի կարող այդ մասին հիշել՝ առանց, այսպես ասած, «ցնցվելու»:

Այդ աղմկոտ իրադարձությունները սկիզբ առան հետևյալ կերպ: Այդ բանաձևն ընդունելուց հետո շատ շուտով Բացարձակ Արև մուտք գործելու բոլոր հիսուն թեկնածուների նախաձեռնությամբ սկսել են պարզել, թե այդ ո՞ր երկրային եռուղեղ էակն է (հնարավոր է՝ արդեն ձևավորված բարձրագույն *լինելիական մասով*), որ քո այդ մոլորակում պատճառ է դարձել այդպիսի վնասակար գաղափարի ծագման համար:

Եվ այդ փնտրտուքի արդյունքում պարզվել է, որ այն եռուղեղ էակը, որն առաջին անգամ սկզբնավորել է այդ վնասակար գաղափարի բյուրեղացումը, եղել է ոմն Մակար Կրոնբերնկզիոն¹⁰², որի բանականության պահանջվող աստիճանին հասած բարձրագույն *լինելիական մասը* ոչ միայն արժանացել էր սուրբ մոլորակ անցում կատարելուն, այլ նաև համարվում էր Սրբազնագույն Բացարձակ Արև անցում կատարելու առաջին թեկնածուներից մեկը:

Ինչպես հետո ինձ պատմեցին, երբ դա հայտնի է դարձել, ամբողջ սուրբ մոլորակի վրա, այսպես ասած, «ծանր տնքոց» է նստել, և այնտեղ չի եղել ոչ մի բարեպաշտ հոգի, որ կարողանար առանց ցավակցության մտածել այդ ահավոր փաստի մասին:

Համարյա քառորդ տարի նրանք միայն «ոտ ու ձեռ ընկած» քննարկել են այդ աննախադեպ աղմկոտ իրադարձությունը, որից հետո կրկին ամեն մի զարուարիայում ամեն տեսակի հանձնաժողովներ ու ենթահանձնաժողովներ են կազմել, որպեսզի լուծում տան ծագած արտակարգ իրավիճակին:

Այդ ամենի արդյունքը եղել է այն, որ այս անգամ ընդունել են հետևյալ բանաձևը.

«Ժամանակավորապես չեղյալ հայտարարել Մակար Կրոնբերնկզիոնի բարձրագույն լինելիական մասի նկատմամբ կայացրած համամոլորակային դատավճիռը և ՆՈՐԻՆ ԳԵՐԱՄԵՆԱԲԱՐԵԳՈՒԹ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆԸ սուրբ մոլորակի բոլոր բնակիչների անունից խնդրանք ներկայացնել, որ մեղմի այդ ահավոր դատավճիռը»:

Ուստի, ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱԲԱՐԵԳՈՒԹ ԱՆՍԱՀՄԱՆ ԱՐԱՐԶԻ՝ այդ մոլորակ կատարած ամենավերջին այցի ժամանակ այդ խնդրանքը դրվել է ՆՐԱ առջև:

¹⁰² ռուս. տարբերակում՝ Кронбернкцион, անգլ. տարբերակում՝ Kronbernkzion

Այնժամ մեր ԱՄԵՆԱԲԱՐԵԳՈՒԹ ԱՐԱՐԻՉԸ, ինչպես ասում են, առանց երկար մտածելու, բարեհաճել է հրահանգել, որ այդ արժանի հոգին շարունակի սուրբ մոլորակում իր գոյատևելը, մինչև որ ի հայտ գան նրա չար գործի հետագա արգասիքները:

Չնայած այն բանին, որ այդ լիովին կազմավորված բարձրագույն *լինելիական մասը* հիմնական պատճառն էր եղել, որ անհնարին էր դարձել այդ մոլորակի որոշ եռուղեղ էակների ներկայություններում բարձրագույն լինելիական մարմինների կազմավորումն ու լրիվ կատարելագործումը, մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԸ այդ բարեգութ հրահանգը տվել է հավանաբար այն պատճառով, որ հույս է ունեցել, որ այդ եռուղեղ էակները վերջիվերջո գուցե ինքնուրույն տեսնեն իրենց սխալները և սկսեն գոյատևել եռուղեղ էակներին վայել ձևով: Եվ այդ դեպքում կարիք չէր զգացվի ահավոր պատիժ տալու այն էակի բարձրագույն մասին, որը, չենթարկվելով իրենից կախում չունեցող արտաքին և իր հնարավորությունները զգալիորեն գերազանցող անբարենպաստ պայմաններին, ինչպես նաև անգիջում պայքար մղելով իր իսկ անխուսափելի բացասող սկզբունքի հետ, կարողացել է ինքնակատարելագործվել մինչև այն աստիճան, որի շնորհիվ հնարավորություն է ձեռք բերել հասնելու Տիեզերքի համայն գոյի հիմքի շեմին:

Մեր ԱՄԵՆԱԲԱՐԵԳՈՒԹ ԱՐԱՐԻՉԻ հիշյալ հրահանգի շնորհիվ՝ այդ խեղճ Մակար Կրոնբերնցգիոնի բարձրագույն մասը մինչև հիմա գոյատևում է սուրբ մոլորակում, իսկ նրա ապագան բացառապես կախված է միայն քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակներից»:

Բեհեղգեբուղը մի փոքր լռեց, ապա իր խոսքը շարունակեց այսպես.

«Սուրբ մոլորակում տեղի ունեցած այդ իրադարձությունների մասին տեղեկությունները ինձ հասան հենց այն ժամանակ, երբ վեցերորդ անգամ անձամբ վայրէջք էի կատարել քո այդ մոլորակի մակերևույթին, և, իհարկե, այդ ամենով շատ հետաքրքրվելով, սկսեցի իմ կողմից ևս տեղում մանրամասն հետազոտել այդ ցավալի պատմությունը, որը կապված էր քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների հետ:

Նախ և առաջ, գավա՛կս, ես անհրաժեշտ եմ գտնում անկեղծորեն ասել քեզ, հենց քեզ՝ իմ անմիջական փոխանորդին, որ թեև սուրբ մոլորակի բոլոր բարեպաշտ բնակիչները տարբեր և միաժամանակ խիստ բժախնդիր կերպով ընտրված միջոցներով պարզել էին, որ քո հետաքրքրությունը շարժած այդ եռուղեղ էակների հոգեկառույցի բոլոր աննորմալությունների հիմնական պատճառը եղել և մինչև հիմա էլ մնում է սուսկ այդ վնասակար գաղափարը, այնուհանդերձ ես չեմ կարող վերջնականապես հաստատել դա:

Իհարկե, չի կարելի ժխտել, որ այդ ֆանտաստիկ գաղափարը մեծ դեր է խաղացել այդ դժբախտների հոգեկառույցի աստիճանական, այսպես ասած, «թուլացման» առումով:

Ես շատ տպավորություններ ունեցա, և իմ ներսում տվյալներ բյուրեղացան սուբյեկտիվ կարծիք կազմելու համար, երբ, այդ պատմությամբ հետաքրքրված լինելով, ես սկսեցի կատարել իմ հետազոտությունները և ամեն ինչից գատ նաև պարզեցի հենց այդ Մակար Կրոնբերնցգիոնի ծագման ու կազմավորման պատմությունը:

Ահա իմ հենց այդ հատուկ հետազոտություններն էլ ինձ համար պարզ դարձրին ու ապացուցեցին, որ թեև նա իրոք առաջինն է օգտագործել այդ «բարի» և «չար» բառերը, այնուհանդերձ նա մեղավոր չի եղել, որ հետագայում՝ բոլոր հաջորդ սերունդների էակների գոյատևման գործընթացում, այդ բառերը ձեռք են բերել քո սիրելիների համար այդպիսի վնասակար իմաստ:

Եթե հիմա, գավա՛կս, ես քեզ ծանոթացնեմ այն ամենին, ինչ իմացա այդ Մակար Կրոնբերնցգիոնի ծագման ու գոյատևման ընթացքի մասին, ապա հավանաբար քո ներսում համապատասխան տվյալներ կբյուրեղանան, որպեսզի մոտավոր պատկերացում կազմես երկրային այդ փաստի վերաբերյալ:

Սկսեմ նրանից, որ երբ ես որոշեցի այնտեղ զբաղվել այդ հարցով ապա, այդ պահից սկսած, երբ հանդիպում էի որևէ հարմար անհատի, հարցեր էի տալիս այն ամենի մասին, ինչն ընդհանուր առմամբ կարող էր լույս սփռել այդ Մակար Կրոնբերնցգիոնի անհատականության այս կամ այն կողմի վրա:

Հավանաբար քեզ համար հետաքրքիր կլինի իմանալ, որ առաջինը պատահած այն անհատների շարքում, որոնք կարող էին ինձ որոշակի տեղեկություններ հաղորդել վերոհիշյալ հարցով, շատ օգտակար եղավ իմ հանդիպումը մեր ցեղի մի շատ ծեր էակի հետ: Մեր զրույցի ընթացքում նա ինձ

համար շատ բաներ պարզեց և նշեց մի քանի շատ լավ աղբյուրներ, որոնցից հետո ես բավական օգտակար ու մանրամասն տեղեկություններ քաղեցի:

Այդ ծեր էակը, որի մասին հիմա ես խոսում եմ, ոչ այլ ոք էր, քան մեր ցեղի այն երիտասարդ էակի քեռին, որի պատճառով ես առաջին անգամ վայրէջք կատարեցի քո այդ մոլորակի վրա, և որը հետագայում դարձավ Արգ համակարգ աքստրված մեր ցեղակից բոլոր էակների պարագլուխը:

Քո մոլորակում ապրող նշած ծեր էակն այնտեղ գոյատևել էր հենց Ատլանտիդա աշխարհամասում և հենց այն ժամանակահատվածում, երբ այնտեղ գոյատևում էր նաև այդ Մակար Կրոնբերնզգիոնը:

Համաձայն իմ ստացած տեղեկությունների և շնորհիվ իմ հետազոտությունների մյուս բոլոր հատուկ մեթոդների՝ պարզ դարձավ, որ Մակար Կրոնբերնզգիոն անունը կրող այդ երկրային եռուղեղ էակը Ատլանտիդա աշխարհամասում ծնվել և սկսել է գոյատևել այն սրբազան «Էլմուարնոյի» գործընթացի արդյունքում, որը տեղի է ունեցել հենց նոր պատասխանատու տարիքին հասած և տարբեր սեռերի պատկանող երկու երկրային էակների միջև:

Շնորհիվ այն բանի, որ բոլոր առումներով այդ զույգն առողջ ժառանգականություն ուներ, իսկ սովորական *լինելիական գոյատևման* արտաքին պայմաններն այնտեղ համեմատաբար նորմալ էին և այդ զույգի համար հատկապես բարենպաստ, նրանց այդ սրբազան գործընթացի պտուղը, այսինքն՝ նրանց «որդին»՝ ապագա Մակար Կրոնբերնզգիոնը, կազմավորման հենց սկզբից և իր գոյատևման վաղ շրջանում իր ներկայության մեջ ապագա պատասխանատու Լինելիության համար ստացել էր համարյա հենց այն նախադրյալները, որոնք կազմավորման համար պետք է ունենա մեր Մեծ Մեգալակոսմոսի ցանկացած մոլորակի ամեն մի կեսչափմարդական եռուղեղ էակ. և քանի որ նրա արտադրողները, կամ, ինչպես այնտեղ են ասում, «ծնողները» ցանկություն են ունեցել իրենց պտղին նախապատրաստել «գիտական առաջխաղացման» համար, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ այդ գործի համար հաջող ղեկավարներ գտնելու հարցում նրանց բախտը բանեց, ապա նրանց պտուղը, հասնելով պատասխանատու տարիքի, դարձավ շատ լավ «գիտնական», իհարկե, Երկիր մոլորակի համար շատ լավը:

Շուտով նա իր գիտական նվաճումների շնորհիվ նույնիսկ արժանացավ դառնալու Ախալդան ընկերության լիիրավ անդամ:

Գիտության բնագավառում իր պատասխանատու գոյության գործընթացում նա մի անգամ պարզորոշ տեսավ իր իսկական գինը և անկեղծորեն գիտակցեց սեփական «ոչնչությունը»:

Դրանից ապշահար եղած՝ այդ պահից նա սկսեց լրջորեն մտորել իր գիտակցածի շուրջ, և նրա այդ մտորումների արդյունքում նրա ընդհանուր ներկայության ամեն մի մասում աստիճանաբար սկսեց հույս ծագել, որն էլ ի վերջո ամրացավ որպես համոզմունք առ այն, որ գիտակցական ջանքերն ու կամավոր տառապանքը կարող են իրեն ոչնչությունից վերածել «ինչ-որ բանի»:

Այնժամ նա, իր բացասող մասի նկատմամբ լիակատար անխղճություն դրսևորելով, սկսեց գիտակցական ջանքեր գործադրել և իր բացասող մասի համար ստեղծել անհանգիստ պայմաններ:

Դեռ ավելին, նա սկսեց իր այդ գիտակցական ջանքերն ու միտումնավոր ստեղծած պայմաններն ի կատար ածել բացառապես որպես պատասխանատու էակ իր վրա վերցրած պարտականությունների ոլորտի դրսևորումներում և ընկալումներում, այսինքն՝ գիտական հետազոտությունների գործում:

Իր գոյատևման հենց այդ շրջանում նա հասկացավ որոշ տիեզերական ճշմարտություններ:

Եվ քանի որ այդ ժամանակաշրջանի եռուղեղ էակների մեծ մասի պես նրա ներսում դեռևս նախադրյալներ էին գոյանում «սեր մերձավորի նկատմամբ» կոչվող *լինելիական ազդակի* առաջացման համար, ապա, որպեսզի մոլորակի՝ իր շրջապատում ապրող իր նման էակները ևս իմանան իր իմացած այդ ճշմարտությունների մասին, նա մարմարից մի «բուլմարշանո¹⁰³» պատրաստեց, որի վերնագիրն էր՝ «Հաստատող և ժխտող ազդեցությունները մարդու վրա»:

Ատլանտիդա աշխարհամասում բուլմարշանո էր կոչվում այն, ինչն այնտեղի ժամանակակից էակները փոխարինեցին, այսպես կոչված, գրքերով:

¹⁰³ ռուս. տարբերակում՝ булмаршано, անգլ. տարբերակում՝ boolmarshano

Ավելի ուշ՝ այնտեղ կատարած իմ վեցերորդ այցի ժամանակ, ինձ վիճակվեց տեսնել հիշյալ բուլմարշանողի ճշգրիտ պատճենը, որը պատրաստված էր, այսպես կոչված, «չիռնիանողի»¹⁰⁴ ժանիքներից, և բավական մանրամասն վերծանել այն:

Քանի որ քեզ համար ուսանելի և հետաքրքիր կլինի իմանալ, թե ինչպես է եղել, որ Մակար Կրոնբերնզգիոնի սեփական ձեռքով փորագրված բուլմարշանողի ճշգրիտ պատճենը, որը ես բախտ ունեցա վերծանելու քո այդ մոլորակում վեցերորդ անգամ լինելուս ընթացքում, անվնաս էր մնացել և հասել մինչև ժամանակակից դարաշրջանը, ես հիմա քեզ համառոտ կպատմեմ դրա մասին:

Երբ այդ բուլմարշանողի բնօրինակը ստեղծվել և անկեղծ հիացմունք է պատճառել Ախալդան ընկերության մյուս գիտուն անդամներին ու արժանացել նրանց հավանությանը, այն տեղադրել են այնտեղի էակների՝ այդ ընկերությանը պատկանող կենտրոնական, այսպես կոչված, «տաճարում»:

Քանի որ հիշյալ բուլմարշանողի բովանդակությամբ դրանից հետո սկսել են հետաքրքրվել այն ժամանակաշրջանի ավելի ու ավելի շատ էակներ, ապա հիշյալ ընկերության ղեկավարները որոշել են ստեղծել դրա մի քանի պատճեններ, որպեսզի նույն կերպ դրանք տեղադրեն ինչպես Եկեղեցու՝ Ատլանտիդա աշխարհամասի մյուս քաղաքների բաժանմունքներում, այնպես էլ մյուս աշխարհամասերում:

Այդ նպատակով, հիշյալ չիռնիանողի ժանիքներից պատրաստել են յոթ ճշգրիտ պատճեններ:

Պատճեններից մեկը, ինչպես ցույց տվեցին իմ, այսպես կոչված, «սպիսիչունայլան»¹⁰⁵ *հետազոտությունները*», նախատեսված է եղել Եկեղեցու այն բաժանմունքի համար, որը գտնվում էր «Մինկրագա»¹⁰⁶ անունով փոքրիկ աշխարհամասի վրա՝ այն ժամանակ դեռևս Գրաբոնցի կոչվող աշխարհամասի մոտակայքում:

Այդ չարաղետ մոլորակի երկրորդ տրանսպալյան խոտորման արդյունքում այդ ոչ մեծ աշխարհամաս Մինկրագան Ատլանտիդա աշխարհամասի հետ միասին իր ամբողջ եղած-չեղածով սուզվեց մոլորակի ընդերքը:

Իսկ ինչ վերաբերում է Գրաբոնցի աշխարհամասին, որին հիմա «Աֆրիկա» են անվանում, ապա պետք է նկատել, որ թեև այդ աշխարհամասն այն ժամանակ ամբողջությամբ չսուզվեց մոլորակի ընդերքը, սակայն նրա հետ տեղի ունեցավ նույն բանը, ինչ տեղի ունեցավ այն ժամանակ գոյություն ունեցող մյուս աշխարհամասերի, ինչպես օրինակ՝ Ասիայի հետ. այն է՝ նրա որոշ հատվածներ սուզվեցին ընդերքը, իսկ դրանց փոխարեն ջրերից վեր բարձրացան ուրիշ հատվածներ, որոնք, միանալով մնացած մասերին, դարձան այնպիսին, ինչպիսին կան ներկայումս:

Ամենայն հավանականությամբ, հենց այն ժամանակ, երբ հիշյալ պատճենը բերել են Գրաբոնցի աշխարհամաս, որպեսզի այնտեղից էլ ուղարկեն ավելի հեռու, այդ չարաղետ մոլորակի հետ տեղի է ունեցել այդ երկրորդ մեծ արհավիրքը, և, շնորհիվ այն բանի, որ Գրաբոնցի աշխարհամասի այն հատվածը, որտեղ գտնվել է այդ պատճենը, պատահաբար անվնաս է մնացել, այն չի սուզվել մոլորակի ընդերքը:

Այդ ահավոր իրադարձությունից հետո, ապագա սուրբ Մակար Կրոնբերնզգիոնի այդ ստեղծագործությունը երկար ժամանակ մնացել է ավերակների տակ և աստիճանաբար ծածկվել «քաշումանհունով». և միայն մոտավորապես երեսուն դար հետո, երբ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակները կրկին բազմացել էին, և հենց այդ վայրերում հերթական փոխոչնչացման գործընթացն էր ընթանում այդ ժամանակվա երկու հանրությունների՝ «Ֆիլնուանցիայի»¹⁰⁷ և «Փլիտագուրայի»¹⁰⁸ միջև, Ֆիլնուանցիա հանրության էակները որպեսզի իրենց և ուղտերի համար խմելու ջուր հանելու նպատակով փոս փորելու ժամանակ դեմ են առնում այդ պատճենին և հողի տակից հանում են այն:

Իսկ երբ դրանից հետո այդ երկու հանրությունների էակները միմյանց միջև սովորականի պես հաստատեցին, այսպես կոչված, «բարեկամական հարաբերություններ» և սկսեցին այնտեղ սովորական դարձած տարբեր եղանակներով իրար մեջ կիսել այդ գործընթացի ժամանակ ամբողջ

¹⁰⁴ ռուս. տարբերակում՝ чирниано, անգլ. տարբերակում՝ chirniano

¹⁰⁵ ռուս. տարբերակում՝ спипсихунальные, անգլ. տարբերակում՝ spipsychoonalnian

¹⁰⁶ ռուս. տարբերակում՝ Синкрага, անգլ. տարբերակում՝ Sinkraga

¹⁰⁷ ռուս. տարբերակում՝ Филнуанцы, անգլ. տարբերակում՝ Filnooanzy

¹⁰⁸ ռուս. տարբերակում՝ Плитацурали, անգլ. տարբերակում՝ Plitazoorali

ձեռքբերածը՝ դրանք կնքելով «ռազմավար», «դիակապություն», «վերաբաշխում», «ռազմատուգանք» և այլ անուններով, ապա այդ գտածոն ևս, որն այդ ժամանակվա երկրային էակների պատկերացմամբ արժեքավոր էր միայն որպես նյութ, նույնպես երկու մասի բաժանեցին, և այդ երկու ինքնություն հանրությունների էակներն իրենց մոտ պահեցին հիշյալ մեծ ստեղծագործության կիսված մասերը:

Այդ պատճենի մի կեսը, զանազան պատճառներով փոխանցվելով մի խմբավորումից մյուսին, յոթ դար հետո ի վերջո հանգրվան գտավ, այսպես կոչված, «եգիպտական բարձրագույն քրմերի» մոտ:

Մի քանի ժանիքների այդ տարօրինակ ու յուրահատուկ համակցությունը, որն արդեն անհասկանալի էր նրանց համար, վերածվեց սրբազան մասունքի և այդ կարգավիճակով այնտեղ դիմացավ այնքան, մինչև որ իր հրոսակախմբերով այնտեղ հայտնվեց պարսից թագավորը և, ինչպես ասում են, այդ դժբախտ Եգիպտոսի «հաշիվը մաքրեց»:

Դրանից հետո բուլմարշանողի պատճենի այդ կեսն այս անգամ հայտնվել է Ասիա աշխարհամասում և, կրկին ձեռքից-ձեռք անցնելով, մոտավորապես իմ վեցերորդ այցի կեսերին, պապից ժառանգաբար անցել է հենց այն այստրյան¹⁰⁹ քրմին, որի մոտ առաջին անգամ ես դա տեսա:

Ինչ վերաբերում է այդ աննախադեպ ու անկրկնելի ստեղծագործության երկրորդ կեսին, ապա դա նույնպես, տարբեր պատճառներով ձեռքից ձեռք անցնելով, ի վերջո հայտնվել է Ասիայի կենտրոնական հանրություններից մեկում, որից հետո այնտեղ տեղի ունեցած երկրաշարժի պատճառով թաղվել է գետնի տակ, թեև ոչ շատ խոր:

Այստեղ, ի դեպ պետք է ասել նաև այն մասին, թե այնտեղ կատարած իմ վեցերորդ վայրէջքի ժամանակ ես ինչպես եմ իմացել այդ ամենի և էլի ուրիշ վաղուց տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Ես արդեն քեզ ասել եմ, որ այդ վեցերորդ այցիս ընթացքում ես արհեստավարժ մասնագետ դարձա՝ «հիպնոսող բժիշկ», և որ ուսումնասիրում էի քո սիրելիների արտառոց հոգեկառույցը նաև «հիպնոսի» միջոցով՝ այն հատուկ յուրօրինակ հատկության, որը ձեռք էր բերել նրանց հոգեկառույցը:

Իմ այդ գործունեության ընթացքում ես հատուկ նրանցից ումանց նախապատրաստեցի որոշակի ձևով, որպեսզի նրանք դառնան այնպիսի սուբյեկտներ, որոնց անցյալ դարաշրջաններում «այլութիա» էին կոչում, իսկ ժամանակակից էակները կոչում են «հոգեհմաներ (մեղիումներ)»:

Պյութիա կամ հոգեհմա են դառնում այնտեղի այնպիսի էակները, որոնց ներսում կա՝մ ինքնաբերաբար՝ սոսկ պատահաբար դասավորված պայմանների շնորհիվ, կա՝մ ուրիշ մեկի՝ գիտակցական դրդումով մոլորակային մարմնի ներքին գործունեությունը շատ լավ է արձագանքում՝ ներքին ընդհանուր հոգեկառույցի՝ արյան շրջանառության մեջ տեղի ունեցած անսպասելի փոփոխություններով պայմանավորված ամեն մի փոփոխությանը, ինչի հետևանքով այդպիսի սուբյեկտների մոտ հեշտությամբ է ընթանում գիտակցաբար կամ անգիտակցաբար դրսից ուղղորդում ստացած՝ նրանց ընդհանուր հոգեկառույցի զանազան յուրահատկությունների ազատ գործունեությունը, ինչպես նաև իսկական *լինելիական գիտակցության*՝ նրանց ներսում առկա գլխավոր ինքնաբերական նախադրյալների գործունեությունը, որոնց համակցությունը նրանք «ենթագիտակցություն» են անվանում:

Ահա նրանց հենց այդ ենթագիտակցության մեջ, նրանց ներսում ձևավորված տարբեր պատճառների բերումով, պատահաբար պահպանվել է եռուղեղ էակների ընդհանուր հոգեկառույցի այն առանձնահատկությունը, որն ընդհանրապես կարող է դրսևորվել որոշակի պայմաններում և կոչվում է «տեսնել և զգալ այն, ինչ տեղի է ունեցել հեռավոր անցյալում»:

Այսպիսով, զավակս, երբ իմ վեցերորդ վայրէջքի ժամանակ ես իմացա այնտեղ՝ քո այդ մոլորակում, տեղի ունեցած այդ համատիեզերական ցավալի պատմության սկզբի մասին և այնտեղ լինելուս ընթացքում սկսեցի հենց տեղում ուսումնասիրել դա, ինչպես նաև ինձ համար տեղեկություններ հայթայթել այդ Մակար Կրոնբերնզգիոնի անհատականության վերաբերյալ, ապա, ելնելով այն բանից, որ այդ իրադարձությունից հետո շատ երկար ժամանակ էր անցել, և նույնիսկ իսպառ չքացել էին այդ դեպքի մեղավոր էակի բոլոր «կալցանուարյան»¹¹⁰ հետքերը, ես որոշեցի հետազոտման սովորական մեթոդներից զատ օգտագործել նաև «եսիմփսիխոանալյան»¹¹¹ միջոցները:

¹⁰⁹ ռուս. տարբերակում՝ айсорскому, անգլ. տարբերակում՝ Aisorian

¹¹⁰ ռուս. տարբերակում՝ калъданыарные, անգլ. տարբերակում՝ kaltzanooarnian

¹¹¹ ռուս. տարբերակում՝ симпсихоанальным, անգլ. տարբերակում՝ spipsychoonalian

Եսիմփսիխտանայան միջոցներից կիրառեցի նաև, այսպես կոչված, «հոգեհմայությունը», այսինքն՝ օգտագործեցի իմ կողմից հատուկ նախապատրաստված հիշյալ հոգեհմաների հիշյալ յուրօրինակ հատկությունը:

Երբ այդ Մակար Կրոնֆերնգցիոն կոչված անձի ու նրա գործունեության հետ կապված իմ ուսումնասիրություններն էի կատարում, ինձ հավանական թվաց, որ այդ մոլորակի մակերևութին դեռևս մնացել է «ինչ-որ բան», որը սերտ կապ ունի նրա հետ. ուստի և այդ «ինչ-որ բանը» սկսեցի փնտրել վերը նշածս եղանակով:

Ահա այդպես իմանալով, որ վերոհիշյալ այսորյան քրմի մոտ պահվում է իմ հիշատակած և Մակար Կրոնֆերնգցիոնի ստեղծած բուլմարշանողի բնօրինակի պատճենի կեսը, ինչպես նաև տեղեկանալով, որ այսորյան քուրմը գոյատևում է Ասիա աշխարհամասի այն վայրում, որը «Ուրմիա» է կոչվում, ես մեկնեցի այնտեղ և նրան գտնելուց հետո շուտով պարզեցի, որ նրա մոտ իրոք կա շատ հին և, ինչպես ինքն ասաց, «փղոսկրի մեծ, տձև մի բեկոր», որն ինքը շատ հին ու արժեքավոր է համարում:

Թեև որոշ բանակցություններից հետո նա համաձայնեց ցույց տալ ինձ դա, բայց ոչ մի գնով չցանկացավ վաճառել. այնուհանդերձ, իմ գրույցների ու հորդորների արդյունքում, որոնք տևեցին մի քանի օր, նա թույլ տվեց, որ ես դրանից ակերասորե պատճեն պատրաստեմ և տանեմ ինձ հետ:

Ինչ վերաբերում է երկրորդ կեսին, ապա իմ որոնումների մեթոդի շնորհիվ ես շուտով իմացա, թե որտեղ է այն գտնվում, սակայն մեծ ջանքեր ու հոգսեր պահանջվեցին, որ կարողանամ ձեռք բերել և անմիջականորեն վերծանել դրա բովանդակությունը:

Թեև ասացի, որ այդ երկրորդ կեսը այնքան էլ շատ խոր չէր թաղված այդ մոլորակի ընդերքում, այնուամենայնիվ այդ խորությունն այնքան էր, որ հնարավոր չէր հանել սովորական մեթոդներով:

Բայց իմ գլխավոր դժվարությունն այն ժամանակ այն էր, որ դրա գտնվելու վայրը քո սիրելիների բնակավայրի մոտ էր գտնվում, ուստի ստիպված եղա ամեն ինչ նախօրոք նախապատրաստել և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որ նրանցից ոչ մեկը որևէ բան չիմանա և անգամ չկասկածի որևէ բան:

Ձեռնարկածս միջոցներից մեկն այն էր, օրինակ, որ հարկ եղավ այդ բնակավայրի մերձակայքում հողամասեր գնել զանազան մանր ու մեծ հողատերերից. իսկ պեղումները կատարեցի բացառապես արտասահմանյան աշխատուժի միջոցով՝ դրան տալով այն տեսքը, թե իբր հորատանցքեր ենք բացում, այսպես կոչված, պղնձի հանքավայրի համար:

Ահա այդպես, գավա՛կս... Այն բանից հետո, երբ վերոհիշյալ եղանակով գտա ապագա սուրբ Մակար Կրոնֆերնգցիոնի ստեղծագործության պատճենի երկու կեսերը և դրանք հետո տարա ներկայումս «Թուրքեստան» կոչվող երկրի այն քաղաքը, որն այդ ժամանակահատվածում իմ մշտական բնակության գլխավոր վայր էի ընտրել, ես ձեռնամուխ եղա Մակար Կրոնֆերնգցիոնի «Հաստատող և ժխտող ազդեցությունները մարդու վրա» անունը կրող բուլմարշանողի գիտական դրույթների գրառումների ու փորագրությունների վերծանությանը:

Երբ մենք տուն հասնենք, ես կաշխատեմ հիշել և հնարավորինս բառ առ բառ քեզ վերապատմել այդ եռուդեղ էակի բանականության և, ինչպես ասում են, «ձեռքի գործ» այդ մեծ ստեղծագործության ամբողջ բովանդակությունը, իսկ առայժմ ուզում եմ քեզ համար շարադրել դրա հենց այն հատվածը, որում Մակար Կրոնֆերնգցիոնն առաջին անգամ օգտագործել է «բարու և չարի» հասկացությունները՝ այդ բառերի տակ հասկանալով այն ուժերը, որոնք հենց հիմք են ծառայում ամեն մի առանձին, հարաբերականորեն անկախ տիեզերական գոյացության և, իհարկե, նաև ամեն մի էակի ներկայության, ինչպես նաև դրա ընթացիկ վիճակի ձևավորման համար:

Եթե այդ բուլմարշանողում գրառված հասկացությունները թարգմանենք սովորական լեզվի, ապա դրանք կարտահայտվեն հետևյալ կերպ.

«Ակներևաբար մենք՝ մարդիկս, ինչպես նաև Աշխարհում գոյություն ունեցող բոլոր միավորները ձևավորվում և մշտապես կազմված ենք լինում միևնույն երեք ինքնուրույն Համաշխարհային ուժերից, որոնց միջոցով տեղի է ունենում համայն գոյի փոխապահպանության գործընթացը:

Այդ ուժերից առաջինը մշտապես առաջանում է բուն Սկզբնաղբյուրում զարգացող պատճառներից, և նոր կազմավորումների ճնշման ազդեցությամբ իմպուլսային ձևով դուրս է հորդում Սկզբնաղբյուրից:

Երկրորդ Համաշխարհային ուժն այն է, որին վերաձվում է առաջին ուժը, երբ ստացած իմպուլսի սպառվելուց հետո կրկին ձգտում է միաձուլվել իր առաջացման աղբյուրի հետ՝ համաձայն

Համաշխարհային օրենքի, որն ասում է. «Պատճառի հետևանքները պետք է միշտ կրկին վերադառնան այդ պատճառին»:

Փոխպահպանության ընդհանուր գործընթացում այդ երկու ուժերը կատարելապես ինքնուրույն են և իրենց դրսևորումներում միշտ և ամեն ինչում ունեն իրենց սեփական հատկանիշներն ու առանանձնահատկությունները:

Այդ երկու հիմնարար ուժերից առաջինը՝ այն, որն անհաղթահարելի պատճառներով միշտ դրսևորվում է իր սկզբնավորման աղբյուրից դուրս, պետք է անընդհատ ինվոյուցիա ապրի. իսկ երկրորդ ուժն, ընդհակառակը, ձգտելով միաձուլվել իր սկզբնավորման պատճառի հետ, անընդհատ պետք է ամեն ինչով էվոյուցիա ապրի:

Հաշվի առնելով այն, որ նշված երեք ինքնուրույն ուժերից առաջինն առաջանում է համայն գոյի պատճառի բուն հիմքում ընթացող կենսատու գործողություններից, և դրա շնորհիվ իր ներկայության մեջ ստանում է կենսականություն դրսևորելու հնարավորության սաղմ, ապա կարելի է դա «բարի» համարել, այսինքն՝ այն հետադարձ հետևանքների իրականացման գործոն, որոնք այդ առաջին ուժի նկատմամբ կարող են և պետք է դիտվեն որպես «չար»:

Բացի այդ, քանի որ այդ ուժերից առաջինը գոյանում է բուն Սկզբնաղբյուրում դրսևորվող անխուսափելի ու անհաղթահարելի պատճառներով, ապա հենց այդ տեսակետից կարող է պասսիվ համարվել: Իսկ երկրորդը՝ հետադարձ ուժը, քանի որ պետք է մշտապես դիմադրություն հաղթահարի, որպեսզի կարողանա հետ թափանցել կամ թեկուզ գոնե դիմագրավել հակառակ ուղղությամբ ընթացող և Սկզբնաղբյուրում առկա պատճառներից իմպուլս ստացած պասսիվ ուժին, պետք է համարել ակտիվ:

Իսկ ինչ վերաբերում է երրորդ անկախ Համաշխարհային ուժին, ապա դա ոչ այլ ինչ է, եթե ոչ ամենուրեք և ամեն ինչում այդ առաջին երկու հիմնարար ուժերի՝ անկման և վերելքի անկախ ուժերի, փոխադարձ բախման արդյունք:

Թեև այդ երրորդ անկախ ուժն ընդամենը առաջին երկու հիմնարար ուժերի արդյունքն է, այնուամենայնիվ այն ամեն մի Տիեզերական Գոյացության ոգեկոչման ու հաշտեցման աղբյուրն է:

Եվ այն բոլոր Տիեզերական Գոյացությունների ոգեկոչման աղբյուր է այն պատճառով, որ ծագում և միշտ պետք է ներկա լինի դրանցում, քանի դեռ կան այն նախադրյալները, որոնք առաջանում են հիշյալ երկու հիմնարար ուժերի միջև տեղի ունեցող տարբեր անսովոր փոխադարձ դիմադրություններից:

Այսպիսով, զավա՛կս, ահա հենց այդ իմաստով ու նշանակությամբ է այդ դժբախտ Մակար Կրոնբերնցգիոնն առաջին անգամ օգտագործել «բարի» և «չար» բառերը:

Ինչպես այդ վերոհիշյալ բուլմարշանողի, այնպես էլ հենց տեղում պարզաժս տվյալների շնորհիվ իմ ներսում ինչպես այդ Մակար Կրոնբերնցգիոնի, այնպես էլ մնացած ամեն ինչի նկատմամբ բյուրեղացավ սեփական հատուկ կարծիք, որը լրիվ տարբեր էր այն կարծիքից, որն իրենց թեև իմաստուն, բայց ոչ իրավացի հետազոտությունների արդյունքում արտահայտել էին սուրբ մոլորակի բնակիչները:

Կրկնում եմ՝ թեև «արտաքին բարու ու չարի» գաղափարն այնտեղ առաջին անգամ ծագել է այդ Մակար Կրոնբերնցգիոնի անհատականության շնորհիվ, այնուհանդերձ, իմ կարծիքով, նա մեղավոր չէ, որ այն այդպիսի վնասակար ձև է ստացել:

Ինչ էլ որ եղած լինի, զավա՛կս, հիրավի, այդ ամենի հենց տեղում կատարած իմ մանրամասն ու անաչառ հետազոտություններն ինձ համար վերջականորեն պարզ դարձրին հետևյալը:

Երբ այդ գաղափարն այնտեղ աստիճանաբար այդպիսի որոշակի տեսք է ստացել և քո սիրելիների հոգեկառույցների համար դարձել, այսպես կոչված, «իրական գործոն», որպեսզի նրանց ընդհանուր ներկայություններում նախադրյալներ բյուրեղանան այն երևակայական ըմբռնման համար, թե իբր իրենցից դուրս գոյություն ունեն իրենց էության վրա ազդող «բարու» ու «չարի», այսպես ասած, օբյեկտիվ աղբյուրներ, ապա, այդ ժամանակից սկսած, նրանցից յուրաքանչյուրի ընդհանուր հոգեկառույցում սկսել են բյուրեղանալ (սկզբում՝ ինքնաբերաբար, իսկ հետո՝ նրանց արտառոց գիտակցության միջոցով) ուրիշ յուրատեսակ նախադրյալներ, որոնք *լինելիական նմանագագայությունների* հետևանքով այնպիսի համոզմունք են ծնում, թե իբր իրենց բոլոր թե՛ լավ, թե՛ վատ դրսևորումների պատճառները ոչ թե հենց իրենք ու իրենց սեփական հանցավոր եսասիրությունն

են, այլ այս կամ այն արտաքին կողմնակի ազդեցությունները, որոնք բացարձակապես իրենցից կախված չեն:

Այդ երևակայական գաղափարի բերած հիմնական չարիքը բոլոր այդ թշվառների համար ստացվել է գլխավորապես այն պատճառով, որ դեռևս դրանից շատ առաջ (իհարկե, կրկին սովորական *լինելիական գոյատևման* իրենց իսկ հաստատած նույն այդ պայմանների պատճառով) նրանց ներսում դադարել էին նախադրյալներ բյուրեղանալ, այսպես կոչված, «աշխարհայացքի տարբեր *լինելիական ասպեկտներ*» առաջացման համար, և հիմա դրա փոխարեն նրանց մոտ ձևավորվում է այնպիսի «աշխարհայացք», որը բացառապես հիմնված է արտաքին բարու ու չարի հետ կապված այդ վնասակար գաղափարի վրա:

Եվ իսկապես, ներկայումս այնտեղ քո սիրելիներն առանց բացառության բոլոր հարցերը՝ ինչպես սովորական *լինելիական գոյատևման*, այնպես էլ ինքնակատարելագործման, ինչպես նաև «զանազան փիլիսոփայությունները», այնտեղ եղած «գիտությունները» և, իհարկե, իրենց անհաշիվ «կրոնական ուսմունքներն» ու նույնիսկ իրենց տխրահռչակ, այսպես կոչված, «բարոյախոսությունը», «քաղաքականությունը», «օրենքները», «բարոյականությունը» և այլն, արդեն հիմնում են բացառապես այդ երևակայական և օբյեկտիվ իմաստով իրենց համար շատ վնասակար գաղափարի վրա:

Եթե հիմա, զավա՛կս, ի լրումն այն ամենի, ինչ քեզ պատմեցի այդ վնասակար գաղափարի մասին, նաև պատմեմ, թե այդ յուրօրինակ մոլորակն աքսորված մեր ցեղի էակներն ինչպես են մի ծիծաղաշարժ պատմության ականա մասնակիցները դարձել, ապա վստահ եմ, որ դրանից հետո դու համարյա իրական պատկերացում կկազմես «բարու» ու «չարի» վերաբերյալ քո սիրելիների ունեցած անհեթեթ ըմբռնման մասին:

Մեր ցեղակիցներն այդ արտառոց եռուղեղ էակների սովորական գոյատևման գործընթացում այդ ծիծաղաշարժ պատմության լիակատար ամրապնդման ականա պատճառն են դարձել հետևյալ կերպ:

Ես մի անգամ արդեն քեզ ասել եմ, որ սկզբնական շրջանում մեր ցեղի շատ էակներ էին այնտեղ գոյատևում, շփվում քո սիրելիների նախնիների հետ և նույնիսկ նրանցից ոմանց հետ ընկերական հարաբերություններ հաստատում:

Պետք է ասել, որ երբ մեր ցեղի ներկայացուցիչներն իսկապես գոյատևում էին նրանց միջավայրում, բացարձակապես ոչինչ տեղի չի ունեցել, որը որևէ կապ ունենար այն ողբերգա-ծիծաղաշարժ պատմության հետ, որը հիմա ես քեզ կպատմեմ, բացառությամբ մի բանի, որ երբ մեր ցեղը վերջնականապես լքել է այդ մոլորակը, այնտեղի որոշ էակներ՝ միայն հատկապես շատ միամիտները, այնպիսի համոզմունք են ունեցել, թե իբր մենք «անմահներ» ենք:

Եվ հավանաբար այդ համոզմունքն այնտեղ ծագել է այն պատճառով, որ մեր ցեղի էակների գոյատևման տևողությունն անհամեմատ ավելի մեծ է, քան իրենցը, դրա համար էլ սրբազան «Ռասկոլնիկ» դեպքերը մեր ցեղի ներսում հազվադեպ են լինում, ուստի և նույնիսկ կարող էր այնպես եղած լինել, որ այն ժամանակներում այդ սրբազան գործընթացը մեր ցեղակիցներից ոչ մեկի հետ այնտեղ տեղի ունեցած չլիներ:

Կրկնում եմ՝ բացի վերն ասվածից՝ նրանց միջավայրում մեր ցեղակիցները գոյատևման ժամանակահատվածում ուրիշ ոչ մի նմանատիպ պատճառ չի եղել:

Միայն հետագայում, երբ որոշ նկատառումներով Վերնից ցանկություն է արտահայտվել, որ այդ մոլորակում, որքան հնարավոր է, քիչ լինեն մեր ցեղակիցներից, և այդ պատճառով մերոնց մեծ մասը տեղափոխվել է այդ նույն համակարգության մյուս մոլորակները, ինչի հետևանքով նրանց միջավայրում մեզնից համարյա ոչ մեկը չի մնացել, սկիզբ է առել վերոհիշյալ ծիծաղաշարժ պատմությունը, որում մինչև այժմ խառնված են մեր ցեղի որոշ էակների իրական անունները:

Դեպքերը, որոնք պատճառ դարձան այդ յուրահատուկ զուգահիշությանը, այսինքն՝ որ այդ արտառոց եռուղեղ էակները մեր ցեղի որոշ էակների անունները կապեն այդ երևակայական գաղափարի հետ, տեղի ունեցան հետևյալ պատճառով:

Այն բանից կարճ ժամանակ անց, երբ մերոնք լքեցին այդ մոլորակը, ոմն Արմանաթուրգա¹¹², որն ապրում էր թիքլյամիշյան քաղաքակրթության ծաղկման շրջանում և մասնագիտությամբ քուրմ էր, բայց՝ «գիտունների» թվից, առաջինը եղավ, որ այդ վնասակար գաղափարի վրա հիմնված մի ամբողջ «կրոնական ուսմունք» կառուցեց:

¹¹² ռուս. տարբերակում՝ Арманатурга, անգլ. տարբերակում՝ Armanatoorga

Իր այդ «կրոնական ուսմունքում» նա, իմիջիայլոց, առաջին անգամ բացատրեց, որ իրենց միջավայրում ապրող ինչ-որ անտեսանելի հոգիներ տարածում են արտաքին «բարի ու չար» բաներ և ստիպում, որ մարդիկ վերցնեն և դրսևորեն այդ «բարին ու չարը». և որ «բարին» տարածողները «հրեշտակներ» են կոչվում, իսկ «չարը» տարածողները՝ «սատանաներ»:

Հրեշտակները, որոնք ամենաբարձր և ամենաաստվածային «բարու» կրողներն ու տարածողներն են, իրենք էլ են բարձր ու աստվածային, ուստի մարդիկ երբեք չեն կարող նրանց տեսնել կամ զգալ:

Իսկ սատանաներին, որոնք ամենաստոր ծագումն ունեն, այսինքն՝ «ներքններից» են դուրս գալիս, մարդիկ, ընդհակառակը, կարող են տեսնել:

Եվ եթե մարդիկ իրականում չեն տեսնում սատանաներին, ապա դա նրանց «ներշնչանքի» արդյունքն է, հետևաբար սատանաների տեսանելիության մարդկային տեսողական ընկալումն ուղիղ համեմատական ձևով աճում է՝ կախված մարդկանց «բարեպաշտության» աճից:

Երբ այդ նոր կրոնական ուսմունքն այնտեղ լայնորեն տարածվեց, նրանցից ոմանց մոտ իրենց նախնիներից ստացած վկայություններ հայտնվեցին, որ հին ժամանակներում իրենց հետ ապրելիս են եղել անմահ էակներ, որոնք հանկարծակի անհետացել են: Հենց այդ որոշ վկայություններ ունեցող էակներն էլ որոշեցին տարածել մի ենթադրություն, թե հավանաբար դրանք հենց այն սատանաներն են եղել, որոնք, կանխատեսելով ճշմարիտ կրոնական ուսմունքի ծագումը, վախեցել են, թե մարդիկ կարող են դրա միջոցով «մերկացնել» իրենց և դարձել են անտեսանելի՝ իրականում շարունակելով գոյատևել մարդկանց միջավայրում:

Եվ ահա այդ ժամանակ երևան եկան մեր ցեղակիցներից շատերի անունները, որոնք նույն եղանակով հասել էին այն ժամանակվա էակներին, երբ ստեղծվեց այդ նոր կրոնական ուսմունքը. այդ անունները ձեռք բերեցին որոշակի իմաստ և, սերնդեսերունդ փոխանցվելով, հասան նույնիսկ ներկայիս քո սիրելիներին:

Այդ անուններին նրանք մինչև այժմ վերագրում են երևակայական «դերեր», որոնք, նրանց պատկերացմամբ, պետք է առկա լինեն սատանայական էակների բազմության մեջ, որոնց իբր հատուկ նպատակով ստեղծել է մեր ԱՐԱՐԻԶԸ, որ հետո նրանց ուղարկի Երկիր մոլորակն ու ծաղրի իրենց:

Կարճ ասած, մեր Մեգալակոսմոսի այդ եռուղեղ այանդակների պատկերացմամբ՝ սատանան իրենց միջավայրում ապրող անտեսանելի «մեկն» է, որը մեր ԱՄԵՆԱԿԱԼ ԱՐԱՐԶԻ հրահանգով բնակվում է իրենց մոլորակում, որպեսզի իրականան ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱԿԱԼԻ որոշակի նպատակները:

Իբր այդ սատանաներն ամեն տեսակ սուտ ու ճշտով մարդկային էակներին ներշնչում ու ստիպում են, որ նրանք ամեն քայլափոխի գործեն այն անհաշիվ «ստորությունները», որոնք արդեն դարձել են, այսպես ասած նրանց էության հատկանիշը:

Իհարկե, նրանցից ոչ ոք նույնիսկ չի էլ կասկածում, որ եթե ընդհանրապես իրենց միջավայրում ամեն տեսակի ստորություններ են տեղի ունենում, ապա նրանք այդ ստորություններն ի կատար են ածում բացառապես այն պատճառով, որ ոչ ճիշտ գոյատևելով՝ թույլ են տալիս, որ իրենց ներսում ձևավորվի այն ներքին «չար աստվածը», որին մի անգամ ես «Ինքնասպիտփանք» անվանեցի, և որը լիովին իշխում է նրանց հոգեկառույցին և միակն է, որին օղի ու ջրի պես պետք է «արտաքին բարու ու չարի» այդ գաղափարը:

Ամեն դեպքում, այդ երևակայական գաղափարի պատճառով և գովաբանության ու փառաբանության արդյունքում շատ մեծ հոչակ ձեռք բերեց մեր Աննման Լյուցիֆերի անունը, քանի որ համայն Տիեզերքում ուրիշ ոչ մի տեղ նրա կարողություններն այնպես չեն գովաբանում ու փառաբանում, ինչպես դա անում են քո սիրելիները:

Բեհեդգերուդի պատմության այս մասում, Քարնակ տիեզերանավի այն հատվածում, որտեղ ընթանում էր այս գրույցը, հայտնվեց նավի ծառայողներից մեկը, որն էլ Բեհեդգերուդին հանձնեց հենց նոր ստացված և նրան հասցեագրված մի «լեյտուչանքոս». իսկ հեռանալիս նա հանկարծ շրջվեց ներկաների կողմը և ուրախ բացականչեց, որ արդեն տեսանելի են Քարատակ մոլորակի ոլորտների արտացոլանքները:

ԳԼՈՒԽ ԽԵ
Բեհեղգերուղի կարծիքով՝
մարդու կողմից բնությունից էլեկտրականություն կորզումն
ու օգտագործման ընթացքում դրա ոչնչացումը
մարդու կյանքի տևողության կրճատման
գլխավոր պատճառներից մեկն է

Լեյտուչանբրոսի բովանդակությունը լսելուց և այն «սոնորուսի»¹¹³– եզրին դնելուց հետո, որը մեր գրադարակի պես ինչ-որ բան էր, Բեհեղգերուղը կրկին խոր թառանչ քաշեց և շարունակեց պատմել.

«Մեր համայն Մեգալակոսմոսի համար կես դժբախտություն կլիներ, եթե քո այդ մոլորակի եռուղեղ էակների սովորական գոյատևման աննորմալությունները զանազան վատ հետևանքներ ունենային միայն հենց նրանց, այսինքն՝ իրենց նման եռուղեղ էակների համար, և բարձրագույն մարմիններով ինքակատարելագործվող ինչպես այն էակների, որոնք մեծագույն դժբախտություն են ունեցել նրանց միջավայրում կազմավորվելու, այնպես էլ այն էակների համար, որոնք այնտեղ կկազմավորվեն ապագայում:

Սակայն հիմա ամենաահավորն այն է, որ նրանց աննորմալ գոյատևումն արդեն սկսում է հետևանքներ թողնել և վնասակար ազդեցություն ունենալ այն եռուղեղ էակների նորմալ գոյատևման վրա, որոնք բազմանում են բոլորովին ուրիշ, թեև նույն արևային համակարգին պատկանող մոլորակներում, ինչպես նաև վնասակար է ազդում նրանց ընդհանուր ներկայություններով հանդերձավորված բարձրագույն *լինելիական մասերի* նորմալ ինքնակատարելագործման հնարավորության վրա:

Համատիեզերական բնույթ կրող այդ ցավալի փաստի մասին ինձ վիճակվեց իմանալ այդ արևային Արգ համակարգը ընդմիջտ լքելուցս անմիջապես առաջ:

Քեզ համար ամենահետաքրքիրն այդ բոլոր իրադարձություններից, որոնք հիմք ծառայեցին իմ ընդհանուր ներկայության մեջ «անանց» *լինելիական նախադրյալները* հստակ փաստելու և լիովին բյուրեղացնելու համար, որպեսզի առանց որևէ կասկածի համոզված լինեմ այդպիսի համատիեզերական բնույթ կրող ցավալի փաստում, հնարավոր է, որ կլինի այն տեղեկությունը, որ այդ գործում ինձ օգնեց ոչ այլ ոք, քան իմ էաբուխ ընկեր գոռնադառ Ղառղառի պտուղը, կամ, ինչպես կասեին քո սիրելիները, որդին՝ երիտասարդ գիտակից անհատ գոռնադառ Ռադառը, որն իր արտադրողի նման իր ամբողջ գոյատևումը նվիրել էր տիեզերական Ամենաթափանց Ոգիդնողի հատկությունների մանրակրկիտ ուսումնասիրմանը և նմանապես արժանացել էր «բարձր կարգի» համատիեզերական գիտուն եռուղեղ էակի կոչմանը:

Գիտե՞ս ինչ, զավա՛կս, քանի որ բոլոր իրադարձություններն ու զրույցները, որոնք հիմք են ծառայել, որ աստիճանաբար պարզեմ և իմ ներսում տվյալներ բյուրեղացնեմ առանց որևէ կասկածի համոզված լինելու համար այդպիսի համատիեզերական բնույթ կրող ցավալի փաստում, ընդհանրապես շատ հետաքրքիր են և կարող են քեզ համար բավական ուսանելի լինել, և քանի որ դեռևս երևում են մեր սիրելի Քարատակի ոլորտների միայն արտացոլանքները, ապա ես այդ ամենի մասին նույնպես կպատմեմ մի փոքր ավելի մանրամասնորեն:

Որպեսզի դու ավելի ամբողջական պատկերացում կազմես այն մասին, թե ինչու են իմ Էության մեջ նախադրյալներ բյուրեղացվել դրա փաստման և սպառիչ ընկալման համար, ես ըստ հերթականության քեզ կպատմեմ եղածի մասին և կսկսեմ այն պահից, երբ, դեռևս քո այդ մոլորակի վրա գտնվելով, ես առաջին անգամ լսեցի ինձ լիակատար ներում շնորհելու լուրը:

Հենց որ ես լսեցի իմ նկատմամբ դրսևորված բարեգթության այդ հատուկ հիասքանչ գործողության մասին, ես, իհարկե, անմիջապես որոշեցի առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառնալ իմ սկզբնավորման սիրելի էաբուխ վայրը:

Իսկ դրա համար ինձ անհրաժեշտ էր նախ վերադառնալ Մարս մոլորակ, որպեսզի հավուր պատշաճի պատրաստվեմ այդ երկարատև ճամփորդությանը:

¹¹³ ռուս. տարբերակում՝ *синурь*, անգլ. տարբերակում՝ *sonorous*

Քո այդ մոլորակն ընդմիշտ լքելուցս մի քանի օր անց ես, ինչպես միշտ, նույն մեր «Պատահար» տիեզերանավով վայրէջք կատարեցի Մարս մոլորակի վրա:

Մարս հասնելուց հետո մենք շուտով Վերնից հրահանգ ստացանք, որ ես և մեր ցեղի բոլոր այն անդամները, որոնք ցանկանում են վերադառնալ իրենց սկզբնավորման վայրը, «Պատահար» տիեզերանավով հավաքվենք Սատուրն մոլորակում, որտեղից էլ միջհամակարգային «Ամենաթափանց» կոչվող տիեզերանավը մեզ կհասցնէր մեր վերջնական հանգրվանին:

Բայց ես որոշ ժամանակ դեռ պետք է մնայի Մարս մոլորակում, որպեսզի լուծարեմ իմ բոլոր անձնական գործերը և բազմաթիվ հանձնարարություններ տամ այնտեղ մնացող մեր ցեղակիցներին: Եվ հենց այդ ժամանակ ինձ հայտնեցին, որ ինձ հետ շատ է ուզում հանդիպել այնտեղի «թուֆ-նեֆ-թեֆ»¹¹⁴:

Մարս մոլորակում թուֆ-նեֆ-թեֆ են կոչում այն էակին, որն այդ մոլորակում բազմացող եռուղեղ էակների գլխավորն է. այդ էակը նման է նրան, որը քո այդ մոլորակում, նույնպիսի դիրք ունենալով, «թագավոր» է կոչվում:

Ես այդ թուֆ-նեֆ-թեֆին կամ թագավորին ճանաչում էի դեռևս նրա երիտասարդ տարիներից, երբ նա դեռ «փլեֆ-փերֆ-նուֆ»¹¹⁵ էր, իսկ այդ փլեֆ-փերֆ-նուֆը նույնն է, ինչ մեր զբոլիկը կամ քո Երկիր մոլորակի «բժիշկը»:

Ի դեպ, պետք է ասեմ, որ ինչպես մեր Մեծ Տիեզերքի համարյա բոլոր մոլորակներում, այնպես էլ այդ արևային համակարգի մյուս մոլորակներում, ըստ իրենց արժանիքների, գլխավոր էակներ են դառնում հենց այն էակների շարքից, որոնք նախկինում եղել են փլեֆ-փերֆ-նուֆ, կամ բժիշկ:

Մարսյան թուֆ-նեֆ-թուֆի հետ իմ առաջին հանդիպումը կայացավ այն ժամանակ, երբ մենք առաջին անգամ հայտնվեցինք այդ արևային համակարգում և բնակություն հաստատեցինք Մարս մոլորակում: Նա այն ժամանակ Մարս մոլորակի հենց այն հատվածի փլեֆ-փերֆ-նուֆն էր, որտեղ սկսեցինք բնակվել ես և ինձ հետ եկածները:

Մեր այդ առաջին հանդիպումից հետո, Մարս մոլորակի մակերևույթի տարբեր մասերում գոյատևելով որպես փլեֆ-փերֆ-նուֆ, նա արժանացել էր այդ մոլորակում բազմացող բոլոր էակների գլխավորը լինելու պատվին. իսկ երբ մոտեցել էր սրբազան *հիշմեջի* վիճակին, կամեցել էր վերադառնալ իր մոլորակի մակերևույթի հենց այն մասը, որտեղ անցկացրել էր իր երիտասարդությունը: Ահա թե ինչու էր այդ նախկին փլեֆ-փերֆ-նուֆն ու ներկայիս թուֆ-նեֆ-թեֆն այդ ժամանակ հայտնվել Մարսի իմ բնակության վայրի մոտակայքում:

Մարսյան այդ թուֆ-նեֆ-թեֆը, քո սիրելիների պատկերացումներով, արդեն չափազանց ծեր էակ էր. Մարսի ժամանակով նա արդեն տասներկու հազար տարեկան էր, որն ընդամենը մի քիչ է պակաս երկրային տարիների հաշվարկից:

Այստեղ հարկ է նաև ասել, որ Մարս մոլորակում ընդհանրապես էակների գոյատևման տևողությունը համարյա այնքան է, որքան մեր Մեզալակոսմոսի մնացած բոլոր մոլորակների եռուղեղ էակներին՝ բացառությամբ, իհարկե այն էակների, որոնք անմիջականորեն ծագում են առաջնային Տետարդակոսմոսներից. նրանց գոյատևման տևողությունը կարող էրեք անգամ ավելի մեծ լինել:

Մարս մոլորակում սկզբնավորվող ու գոյատևող եռուղեղ էակները, ինչպես և մեր Մեզալակոսմոսի այն բոլոր մոլորակների եռուղեղ էակները, որոնցում եռուղեղ էակների գոյատևումը նորմալ ձևով է ընթանում, լիակատար հնարավորություն ունեն հասնելու *հիշմեջի* վիճակին, այսինքն՝ այն *լինելիական վիճակին*, երբ, Մեծագույն տիեզերական իրանիքանումանգալի առումով, էակների գոյատևումն արդեն սկսում է կախված լինել միայն այն նյութերից, որոնք անմիջականորեն առաջանում են Գերսրբազնագույն Սկզբնաղբյուրի դրսևորումներից, այլ ոչ թե այնպես, ինչպես մնացած էակների դեպքում է, որոնց գոյատևումը կախված է այն նյութերից, որոնք առաջանում են համատիեզերական հիմնական Անսամբլուհազարի բոլոր համապատասխան ծանրակենտրոն խտացումների արգասիքների միջոցով:

Երբ նրանք հասնում են այդ սրբազան *հիշմեջի* վիճակին, և նրանց բարձրագույն մասի բանականությունն արդեն ինքնակատարելագործումով հասել է բանականության սրբազան չափի պահանջված աստիճանին, ապա, նախ՝ նրանց սրբազան Ռասկուարնոյի գործընթացը կարող է տեղի

¹¹⁴ ռուս. տարբերակում՝ туф-неф-теф, անգլ. տարբերակում՝ toof-nef-tef

¹¹⁵ ռուս. տարբերակում՝ плэф-перф-нуф, անգլ. տարբերակում՝ plef-perf-noof

ունենալ միայն իրենց ցանկությամբ, և երկրորդ՝ նրանց բարձրագույն լինելիական մարմինը գնում է ուղիղ սուրբ Քավարան մոլորակ:

Այսպիսով, երբ Երկիր մոլորակից ես վերադարձա Մարս մոլորակ և հապճեպորեն այնտեղ լուծարեցի իմ բոլոր գործերը, ինձ հայտնեցին, որ մոլորակի թուֆ-նեֆ-թեֆն ուզում է անձամբ հանդիպել ինձ հետ:

Մեծապատիվ թուֆ-նեֆ-թեֆի այդ խնդրանքն Ահունն ինձ փոխանցեց, այսպես կոչված, «քելեհ-է-օֆու»¹¹⁶-ի միջոցով, որը Երկիր մոլորակում «գրություն» է կոչվում:

Այդ քելեհ-է-օֆու-ի բովանդակությունը հետևյալն էր.

«Ես իմացա, որ Դուք, Ձե՛րդ Գերապատվություն, Ձեր երիտասարդ տարիներին գործած մեղքի համար լիակատար ներման եք արժանացել մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԱՐԻՉ ՀՈՐ կողմից, և հիմա ընդմիջտ լքում եք իմ հայրենիքը: Ուստի և ես՝ ծեր արարածս, շատ եմ ուզում Ձեզ տեսնել, անձամբ օրհնել Ձեզ վերջին անգամ և միաժամանակ հանձնել Ձեզ՝ երախտագիտությունս հայտնել Ձեր բոլոր ցեղակիցներին, որոնք այսքան երկար տարիների ընթացքում իմ հայրենիքի էակների հետ անխախտ կերպով լավ հարաբերություններ են պահպանել»:

Այդ քելեհ-է-օֆուն վերջում ուներ նաև այսպիսի հետգրություն.

«Ես ինքս կգալի Ձեր տունը, բայց, ինչպես Դուք գիտեք, իմ մոլորակային մարմնի չափսերը ոչ մի կերպ թույլ չեն տալիս դա անել, ուստի և ստիպված եմ խնդրելու Ձեզ, որ չմերժեք գալ իմ «ֆալ-ֆեհ-ֆուֆը»¹¹⁷»:

Այդ ֆալ-ֆեհ-ֆուֆը, գավա՛կս, մարսյան էակների լեզվով «կացարանի» իմաստն ունի:

Հարկ է նշել, որ Մարս մոլորակի եռուղեղ էակները հենց սկզբից գիտեին մեր իսկական բնույթը, ինչպես նաև այն իրական պատճառը, թե ինչու ենք ստիպված բնակություն հաստատել իրենց մոլորակում, ինչը չի կարելի ասել քո այդ մոլորակի եռուղեղ էակների մասին, որոնք երբեք ոչինչ չեն իմացել և նույնիսկ երբեք որևէ կասկած չեն ունեցել առ այն, թե ինչու ենք մենք գոյատևում իրենց մոլորակում:

Այսպիսով, գավա՛կս, ստանալով մեծապատիվ թուֆ-նեֆ-թեֆից հիշյալ հրավերը՝ ես, իհարկե, անմիջապես որոշեցի առանց հապաղելու այցելել նրան. երբ հասա նրա կացարանը, բառիս լիակատար իմաստով մեծ թուֆ-նեֆ-թեֆը, պահանջված ձևականություններից ու փոխադարձ սիրալիրություններից հետո գրույցի ընթացքում ինձ դիմեց մի խնդրանքով, որն էլ պատճառ դարձավ, որ իմ ներսում համապատասխան նախադրյալներ գոյանան հետագայում այնպիսի անվերապահ համոզմունք բյուրեղացնելու համար, ըստ որի՝ քո այդ մոլորակի եռուղեղ էակների աննորմալ գոյատևման արդյունքներն արդեն սկսել են վնասակար ազդեցություն ունենալ նաև Մարս մոլորակում սկզբնավորվող ու գոյատևող եռուղեղ էակների սովորական գոյատևման վրա՝ բոլոր եռուղեղ էակներին վայել ձևով ինքնակատարելագործվելու նրանց «ներուժի» առումով:

Ես կաշխատեմ մեր լեզվով համարյա բառացի կրկրնել մեծ թուֆ-նեֆ-թեֆի այդ խնդրանքի բովանդակությունը:

Նա ասաց հետևյալը.

«Ձե՛րդ Գերապատվություն... Վերևից շնորհված ամենաողորմածագույն ներման շնորհիվ Դուք կրկին ձեռք բերեցիք Ձեր արդար վաստակած ցանկություններն իրականացնելու իրավունք: Եվ այդ համընդգրկուն ողորմածության շնորհիվ Դուք կրկին բոլոր հնարավորություններն ունեք դառնալու այն, ինչ վաղուց կարող էիք դառնալ՝ շնորհիվ բանականության առումով նախկինում Ձեր ձեռք բերած արժանիքների. և, իհարկե, այս պահից սկսած, Դուք, Ձե՛րդ Գերապատվություն, անկասկած կհանդիպեք Բանականության բարձրագույն աստիճանների հասած տարբեր Անհատականությունների հետ, որոնք համապատասխանում են Ձեր բանականությանը:

Ուստի և ես հանդգնում եմ դիմել Ձեզ, որպես հին ընկերոջս՝ խնդրանքով, որ այդ Անհատականությունների հետ հանդիպելիս հիշեք ինձ՝ ծեր էակիս, և չմոռանաք նրանց կարծիքը հարցնել առ այն, ինչը վերջին տարիների ընթացքում միշտ խթան է հանդիսացել իմ բոլոր ոգեկոչված մասերում տազնապալից նմանազգացությունների առաջացման համար, և նրանց կարծիքներն իմանալուց հետո չհրաժարվեք այդ կարծիքները որևէ հարմար պահի որևէ կերպ ինձ հաղորդելուց»:

¹¹⁶ ռուս. տարբերակում՝ келли-э-офу, անգլ. տարբերակում՝ kelleh-e-oofo

¹¹⁷ ռուս. տարբերակում՝ фал-фе-фуф, անգլ. տարբերակում՝ fal-feh-foof

Հետո նա շարունակեց.

«Բանն այն է, որ վերջին մի քանի «ֆթոֆու»¹¹⁸–ների ընթացքում ես շատ որոշակիորեն տեսնում եմ, որ ամեն մի «ֆթոֆու» հետ մեր մոլորակի էակների մոտ մեծանում է «նուրֆուֆտաֆաֆը»¹¹⁹, և ես նկատել եմ նաև, որ դրան գուցահեռ համամասնորեն փոքրանում է նրանց ակտիվ մտածողության հնարավորության ներուժը:

Երբ առաջին անգամ նկատեցի մեր մոլորակի էակների համար այդքան ողբալի փաստը և այդ պահից սկսած սկսեցի եռանդուն մտորել ու փնտրել դրա պատճառը, որպեսզի ի վիճակի լինեմ ինձ վստահված էակներին տալու համապատասխան ցուցումներ և օգնելու նրանց ընդհանուր ներկայություններում վերջերս հայտնված այդ ողբալի գործոնը արմատախիլ անելու իրենց ձգտման մեջ, ապա, չնայած շատ երկար ու հաճախ էի մտածում մշտապես ինձ հուզող այդ հարցի շուրջ, մինչև հիմա չեմ կարողացել թեկուզ մոտավոր կերպով ինձ համար պարզել, թե բանն ինչ է և ինչ միջոցներ պետք է ձեռնարկել, որպեսզի ոչնչացվի այդ չարիքը»:

Այդպես ավարտեց իր խնդրանքը Մարս մոլորակի մեծապատիվ թուֆ–նեֆ–թեֆը, և ես, զավա՛կս, իհարկե անմիջապես խոստացա իմ այդ հինավուրց ընկերոջը, որ համապատասխան Անհատականության հետ ունենալիք հենց առաջին իմ հանդիպման ժամանակ հարցուփորձ կանեմ այդ մասին և պատասխանն անպայման կհաղորդեմ իրեն:

Այդ գրույցից մարսյան մի քանի օր անց մենք ընդմիշտ լքեցինք այդ հյուրընկալ մոլորակը և բարձրացանք Մատուրն մոլորակ:

Հազիվ էինք ոտք դրել Մատուրն մոլորակի վրա, երբ անմիջապես մեզ մոտեցավ այնտեղ բնակվող մեր ցեղակիցների պարագլուխը և մեզ հաղորդեց հենց նոր ստացված եթերազրի բովանդակությունը, որում ասվում էր, որ «Ամենաթափանց» միջհամակարգային մեծ տիեզերանավը վայրէջք կկատարի Մատուրն մոլորակի վրա միայն «դռեհ–դռի–դռա»¹²⁰–ի սկզբում:

Ղռեհ–դռի–դռան այնտեղ այն ժամանակահատվածի անունն է, երբ այդ մոլորակի որոշակի դիրք է գրաված լինում մի կողմից՝ այդ համակարգի արևի, և մյուս կողմից՝ այդ նույն համակարգի մեկ այլ մոլորակի նկատմամբ, որը Նեպտուն է կոչվում:

Այնտեղ՝ Մատուրն մոլորակում, տարին ունի այդպիսի յոթ ժամանակահատվածներ, որոնցից յուրաքանչյուրն իր առանձին անունն ունի:

Քանի որ մարսյան ժամանակով մինչև այդ դռեհ–դռի–դռայի սկիզբը համարյա կես «ֆուգա» կար, կամ, քո սիրելիների տոմարով, մոտ մեկուկես ամիս, մենք որոշեցինք այնտեղ մեր սովորական գոյատևումը կազմակերպել քիչ թե շատ մեզ համապատասխան ձևով:

Մեր էակներից ոմանք մնացին «Պատահար» տիեզերանավում, մյուսները տեղավորվեցին Մատուրն մոլորակի էակների կողմից բարեհաճորեն հատկացված վայրերում, իսկ ես ու Ահունը մեկնեցինք Ռիռո՝ այնտեղի էակների խոշոր բնակավայրերից մեկը, որտեղ գոյատևում էր իմ ընկեր գոռնաղառ Ղառղառը:

Մեր անտեղ հասնելու օրվա երեկոյան ընկերական գրույցի ընթացքում ես, իմիջիայլոց, հարցրի իմ այդ էաբուխ ընկերոջը, թե ինչպես է գոյատևում նրա ժառանգը՝ իմ սիրելի *«ինձնից առանձին կեսջանական պտուղը»*, կամ, ինչպես քո սիրելիներն են ասում, սանիկս՝ գոռնաղառ Ռադուռը:

Նա շնորհակալություն հայտնեց և ասաց, որ Ռադուռը լիովին լավ է գոյատևում. նա արդեն բոլոր առումներով իր ժառանգորդն է և նա նույնպես գոյատևման նպատակ է դարձրել Ամենափաթանց Ոգիդնող նախանյութը մանրամասն ուսումնասիրելու գործը, ինչպես ինքն էր ժամանակին դա իր պատասխանատու գոյատևման նպատակը դարձրել:

Մի փոքր լուռ մնալուց հետո նա ավելացրեց, որ տիեզերական Ոգիդնող նախանյութի հարցին վերաբերող գիտելիքների առումով իր ժառանգորդն արդեն հասցրել է, ինչպես նա արտահայտվեց, *«դրա բուն էության հոտն առնել»*:

Այնուհետև նա ասաց, որ իր ժառանգորդի գիտական նվաճումների արդյունքում իր էության մեջ ոչ միայն լրիվ ապաբյուրեղացվել են իր համոզմունքներին հանգեցրած բոլոր տվյալները, որոնք իր ներսում բյուրեղացվել էին երկարամյա համառ աշխատանքներով, այլ նաև լրիվ ոչնչացրել է իր բոլոր

¹¹⁸ ռուս. տարբերակում՝ фтофу, անգլ. տարբերակում՝ ftofoos

¹¹⁹ ռուս. տարբերակում՝ нурфуфтафаф, անգլ. տարբերակում՝ noorfooftafaf - կամազրկություն

¹²⁰ ռուս. տարբերակում՝ крех-хри-хра, անգլ. տարբերակում՝ khreh-khree-khra

այն գյուտերը, որոնք կապված էին այդ ամենաթափանց տիեզերական նախանյութի հետազոտությունների հետ, այդ թվում նաև իր նշանավոր «չճառագայթող լամպը»։ հետո նա խոր հառաչեց և իր խոսքն ավարտեց այսպես։

«Ես հիմա լրիվ համաձայն եմ *«իմ ամբողջության պտղի»* կարծիքին, որ ինձ համար մեծագույն դժբախտություն էր այդքան երկար զբաղվելը այդ, օբյեկտիվ իմաստով կատարելապես «անքավելի մեղքով»»։

Տարբեր պատահական թեմաների շուրջ շարունակելով մեր զրույցը՝ մենք, համաձայն *լինելիական մտածողության* նմանազգացական հոսքի, խոսեցինք նաև Երկիր մոլորակում բազմացող եռուղեղ էակների մասին։

Հիշում ես, ես քեզ արդեն ասել եմ, որ իմ ընկեր գոռնաղառ Ղառղառը մշտապես տեղյակ էր լինում նրանց արտառոց հոգեկառույցին վերաբերող իմ դիտարկումների արդյունքներին, նույնիսկ իմ որոշ գրառումների պատճեններին, որոնք ես ուղարկում էի ինչպես նրան, այնպես էլ քո հորեղբայր Թույլանին։

Եվ ահա, երբ մենք խոսում էինք քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների մասին, գոռնաղառ Ղառղառը խոսքի արանքում հարցրեց ինձ։

Ասա՛ ինձ խնդրեմ, ընկեր իմ, հնարավոր է արդյոք, որ այդ դժբախտների գոյատևման տևողությունը դեռ էլի շարունակելիս լինի նվազել»։

Հենց այն ժամանակ, երբ ես սկսեցի նրան բացատրել այդ հարցի առնչությամբ ներկայումս այնտեղ եղած գործերի վիճակը և ներկայացրի այնտեղի այդ աննորմալությանը վերաբերող իմ պարզած նոր տվյալները, այն սենյակ, որտեղ մենք էինք գտնվում, ներս մտավ ինքը՝ գոռնաղառ Ռադուռը՝ գոռնաղառ Ղառղառի «պտուղը»։

Թեև ներս մտնողը ճշգրիտ նույն արտաքինն ուներ, ինչ իր «արտադրողը», բայց նրա տեսքից կաթում էին արիությունն ու պատանեկան եռանդը։

Թառի վրա գրավելով իր տեղը, ինչպես հատուկ է այդ մոլորակի եռուղեղ էակներին, նա պատշաճ կարգով ինձ ողջունեց իր «հրեշտակային մեղեդային ձայնով»՝ կամենալով ինձ բարիք ու ինքնաբավարարման *լինելիական զգացողություն*։

Ապա վերջում հուզմունքով ասաց։

«Թեև Դուք միայն իմ «կեսջանական հայրն» եք, սակայն, քանի որ իմ նկատմամբ վերցրած Ձեր աստվածային պարտավորությունն իմ «ղառ-դիռ»-ի ժամանակ Դուք, անկասկած, կատարել եք լիակատար ու խոր ըմբռնման զգացումով, ապա իմ ընդհանուր ներկայության մեջ Ձեր նկատմամբ բյուրեղացվել են այնպիսի տվյալներ, ինչպիսիք հարկ է, որ լինեն ամեն մի եռուղեղ էակի ընդհանուր ներկայությունում իր սեփական արտադրողի նկատմամբ, և անկասկած, հենց դա է պատճառը, որ ես շատ հաճախ եմ Ձեզ հիշում և ամեն անգամ մտովի Ձեզ կամենում եմ, որ մշտապես ունենաք այնպիսի հետագա հանգամանքներ, որոնք ընդհանրապես օբյեկտիվ իմաստով կարող են Ձեզ համար ապահովել լավ ու երջանիկ ապագա»։

Սատուրն մոլորակի էակները «ղառ-դիռ» են կոչում այն սրբազան արարողությունը, որին Երկրի էակները «կնունք» անունն են տվել։

Չավա՛կս, գուցե դու գլխի չընկա՞ր, թե ես ինչ ի նկատի ունեի, երբ ասացի, թե գոռնաղառ Ռադուռը տեղ զբաղեցրեց թառի վրա։

Բանն այն է, որ այդ մոլորակի եռուղեղ էակները, ելնելով իրենց արտաքին հանդերձավորումից, աստիճանաբար սովորություն են ձեռք բերում հանգստանալու միայն այնպիսի դիրքով, երբ, որոշակի ձևով կույճ գալով, նրանք իրենց մոլորակային մարմնի ամբողջ ծանրությունը տեղափոխում են ստորին վերջույթների վրա. և հանգստի այդպիսի եղանակի համար աստիճանաբար անհրաժեշտ է դարձել, որ նրանք գտնվեն գետնից որոշակի բարձրության վրա. այդ նպատակով նրանք ընդունված ձև են դարձրել այն սենյակներում, որտեղ գոյատևում են, որոշակի բարձրության վրա հանգստի համար նախատեսված հատուկ փայտածոդ ամրացնելը, որն իրենք թառ են կոչվում։

Իմիջայլոց, իրենց այդ թառերը նրանք զարդարում են զանազան իրերով կամ տարբեր փորագրություններ են անում դրանց վրա, ինչպես քո սիրելիները, երբ նույնպիսի թուլություն են ցուցաբերում իրենց, այսպես կոչված, «կահույքի» նկատմամբ։

Եվ այսպես, թառի վրա իր տեղը զբաղեցնելուց և իր բարի կամեցողությունն արտահայտելուց հետո իմ սիրելի *«ինձնից դուրս գտնվող կեսջանական պտուղը»*, կամ սանիկս՝ գոռնաղառ Ռադուռը, մասնակից դարձավ իմ ու գոռնաղառ Ղառառի զրույցին:

Եվ ահա, զավակս, երբ զանազան թեմաների շուրջ մեր սովորական զրույցի ժամանակ ես իմիջիայլոց հարցրի իմ սանիկին, թե ի՞նչ պատճառով են նրա ներկայության մեջ նախադրյալներ բյուրեղացել այն ազդակի առաջացման համար, որ նա սկսել է լրջորեն հետաքրքրվել Ամենաթափանց Ոգիդնող տիեզերական նախանյութի մանրամասները պարզելու բնագավառով, որի շնորհիվ էլ նա իր արտադրողի պես բախտ է ունեցել որոշ խոշոր տիեզերական հայտնագործություններ անելու, ապա երիտասարդ Ռադուռի տված մանրակրկիտ բացատրությամբ պատասխանից ինձ համար պարզ դարձավ, որ քո սիրելիների աննորմալ գոյատևումն արդեն սկսել է վնասակար ազդեցություն թողնել Մարս մոլորակում բազմացող էակների նորմալ գոյատևման և գիտակցական ինքնակատարելագործման վրա. և միևնույն ժամանակնրա գիտականորեն հիմնավորված մանրակրկիտ պատասխանի շնորհիվ ես նաև տվյալներ ստացա այն հարցի պարզաբանման համար, որով ինձ դիմեց իմ ծեր մարսեցի ընկերը՝ մեծն թուֆ-նեֆ-թեֆը:

Ես հիմա կաշխատեմ, զավակս, նրա պատասխանում եղած գաղափարները մեր լեզվով հնարավորինս մանրամասն ներկայացնել քեզ:

Իմ տված հարցի շուրջ մի փոքր մտածելուց հետո գոռնաղառ Ռադուռըն ամենայն լրջությամբ պատասխանեց.

«Իմ գոյատևման սկզբում՝ այն տարիքում, երբ դեռ նոր էի պատրաստվում պատասխանատու էակ դառնալ, ինչպես վայել է այդ տարիքի բոլոր եռուղեղ էակներին, իմ ժամանակի մեծ մասը ես ծախսում էի *«ակտիվ ու երկար խորհրդածելու»* կարողությունս մարզելու վրա. և ինքնին այնպես էր ստացվել, որ անհրաժեշտ հանգստին հատկացված ընդմիջումներին սովորություն էի ձեռք բերել զբաղվելու ինձ արտադրողի ստեղծած զանազան փորձարարական սարքավորումներով:

Եվ ահա այդ ժամանակ՝ իմ գոյատևման այդ շրջանում, ես բազմիցս նկատեցի, որ իմ ակտիվ մտածողության ուժն ու աստիճանը հատկապես նվազում են որոշակի օրերի:

Այն, ինչ ես այդպես փաստեցի, իմ ներսում սուբյեկտիվ հետաքրքրություն արթնացրեց, որն էլ աղբյուր հանդիսացավ իմ ներկայությունում ազդակ առաջացնելու համար, որն անհրաժեշտ էր սպառնիչ ձևով այդ փաստի պատճառները հասկանալու համար. այդ պահից սկսած, ես սկսեցի ուշադրություն դարձնել ինչպես ինձ վրա, այնպես էլ իմ շուրջը տեղի ունեցող ամեն ինչի վրա, որպեսզի գտնեմ դրա պատճառը: Մեկ «դրի»¹²¹ անցնելուց հետո ես վերջնականապես համոզվեցի, որ այդ անցանկալի վիճակում ես հայտնվում եմ հենց այն օրերին, երբ աշխատում է մեր մեծ «կենսաչաղանը»՝ դինամոմեքենան:

Հենց այդ շրջանում առաջին անգամ իմ արձանագրած այդ փաստն էլ պատճառ դարձավ, որ այդ ժամանակից ի վեր սկսեցի լրջորեն հետաքրքրվել այդ ամենաթափանց տիեզերական նախանյութով և խորապես կլանվեցի դրա մանրամասներն ուսումնասիրելու գործով:

Արդյունքում, դեռևս իմ հետագա փորձարարական հետազոտությունների ամենասկզբում ես անհաշիվ բազմությամբ ամենատարբեր ապացույցներ ստացա, որոնք բացատրում էին և ինձ, և՛ ուրիշներին, որ Ամենաթափանց Ոգիդնող նախանյութն ինչպես մեր, այնպես էլ, հավանաբար, մյուս մոլորակների մթնոլորտի ընդհանուր ներկայության այնպիսի մասնիկ է, որը մասնակցություն է ունենում ինչպես ներմոլորակային ու վերմոլորակային գոյացությունների (դրանց շարքում, իհարկե, նաև ամեն մի էակի «դոափողալիդոդային»¹²² մասի) կազմավորման, այնպես էլ դրանց գոյատևմանն օժանդակելու գործում:

Իմ հետագա փորձարարական հետազոտությունների արդյունքում ես նաև ամենայն վստահությամբ հասկացա, որ թեև մեր արևային համակարգը Մեծ Տիեզերքի բոլոր արևային համակարգերի պես ունի իր սեփական Անսամբլուհագարը, և նրա ամեն մի մոլորակն էլ, իր մթնոլորտով հանդերձ, հատուկ վայր է տվյալ համակարգային Անսամբլուհագարի այս կամ այն դասի տիեզերական նյութերի խտացման համար, այնուհանդերձ Ոգիդնող տիեզերական նախանյութն ամեն մի մոլորակի ներկայության անհրաժեշտ ու գերակշիռ մասն է կազմում:

¹²¹ ռուս. տարբերակում՝ рхи, անգլ. տարբերակում՝ khree

¹²² ռուս. տարբերակում՝ храпрхалихрехная, անգլ. տարբերակում՝ khraprkhalikhrokhnian

Դրանից հետո իմ փորձերը ինձ համար պարզ դարձրին նաև, որ այդ տիեզերական նախանյութը, ընդհանուր համաշխարհային հավասարակշռության հետևանքով, յուրաքանչյուր համակարգում խտանում է խիստ համապատասխան չափաբաժիններով և տվյալ արևային համակարգի մոլորակների մթնոլորտների միջև բաշխվում է նույնպես խիստ որոշակի չափաբաժիններով. և երբ ընդհանուր մթնոլորտային տարածության որևէ վայրում այդ տիեզերական նախանյութը պատահաբար կամ միտումնավոր կերպով սպառվում է, այն անպայման պետք է կրկին լրացվի տվյալ մթնոլորտի ընդհանուր համամասնությունը հավասարակշռության բերելու նպատակով, և դա տեղի է ունենում ուրիշ տեղերից կատարվող ներհոսքի միջոցով. և Ոգիդնոդի՝ այդ եղանակով հավասարակշռություն հաստատող տեղաշարժը պետք է տեղի ունենա ոչ միայն մի մթնոլորտի մի մասից մյուսին անցնելով, այլ նաև մի մոլորակի մթնոլորտից մի ուրիշ մոլորակի մթնոլորտ անցնելով, եթե այդ ուրիշ մոլորակում այս կամ այն պատճառով հաստատված նորմայից ավելի ծախս է տեղի ունեցել:

Վերջապես, ես նաև շատ որոշակի ու համակողմանիորեն իմ բանականության համար պարզեցի և ուրիշներին ապացուցեցի, որ մեր մթնոլորտում գտնվող և մշտապես լրացվող Ամենաթափանց Ոգիդնոդ տիեզերական նախանյութը ոչ միայն անհրաժեշտություն է մեր մոլորակի ընդհանուր ներկայության համար և խիստ կարևոր՝ ամեն մի կազմավորման ու գոյատևման պահպանման համար, այլև այդ նախանյութից են կախված ինչպես ամեն մի ներմոլորակային ու վերմոլորակային «հարաբերականորեն ինքնուրույն» գոյացության», այնպես էլ բոլոր ուղեղային համակարգեր և արտաքին հանդերձավորում ունեցող էակների էությունները. և դեռ ավելին՝ բացառապես դրանից են կախված եռուղեղ էակների կատարելագործման և ի վերջո համայն գոյի Սկզբնաղբյուրի հետ միաձուլվելու հանարավորությունները:

Կրկնում եմ՝ իմ բոլոր փորձարարական հետազոտությունների միջոցով ես ինքս որոշակիորեն հասու դարձա և ձեռք բերեցի անկասկածելի տվյալներ, որպեսզի հնարավորություն ունենամ շրջապատում եղած ինձ նման էակներին համակողմանիորեն ապացուցելու, որ մոլորակի և նրա մթնոլորտի ներկայություններում Ամենաթափանց Ոգիդնոդ տիեզերական նախանյութի ոչնչացումը համարյա նույն բանն է, ինչ համայն գոյի Սուրբ-Սկզբնաղբյուրի բոլոր ջանքերի ու արդյունքների գիտակցաբար ոչնչացումը»:

Այս բառերով էլ շարադրանքի թեմայով կլանված իմ սիրելի սանիկը՝ ջահել ու կրակոտ գոռնաղառ Ռադուոդն ավարտեց իր բացատրությունը:

Գոռնաղառ Ռադուոդի բացատրությունները լսելուս ընթացքում, որոնք վերաբերում էին Ամենաթափանց Ոգիդնոդ տիեզերական նախանյութի հիշյալ հատկություններին և քո այդ մոլորակի ընդհանուր ներկայությունից այն դուրս հանելու և ոչնչացնելու անխուսափելի հետևանքներին, իմ ներսում կասկածներ առաջացան, և իմ հիշողության մեջ աստիճանաբար սկսեցին վեր հառնել քո սիրելիների միջավայրում անձամբ լինելուս և Մարս մոլորակում գոյատևելուս ընթացքում նրանց գոյատևումը դիտելուս ժամանակահատվածներում ունեցած իմ նախկին ընկալումներից զանազան պատկերներ, թե տարբեր դարաշրջաններում ինչպես էին նրանք բազմիցս այդ նախանյութը կամ դրա առանձին մասերը ստանում իրենց մոլորակից և այն օգտագործում իրենց տարբեր միամիտ-եսասիրական նպատակներով:

Եվ երբ գոռնաղառ Ռադուոդի հետագա բացատրությունների ընթացքում ես նմանազգացությամբ հիշեցի մեծն թուֆ-նեֆ-թեֆի խնդրանքը, ապա ամբողջ իմ էությամբ առանց որևէ կասկածի գիտակցեցի քո այդ մոլորակի եռուղեղ էակների այդ դրսևորումների ամբողջ չարաղետությունը:

Նրանք հենց իրենց համար սրբազան այդ նախանյութի ամբողջությունը կամ առանձին մասերը տարբեր դարաշրջաններում տարբեր կերպ էին անվանում, իսկ ներկայումս այդ նախանյութի երկու մասերի միախառնման և փոխոչնչացման արդյունքը «էլեկտրականություն» են անվանում:

Եվ իսկապես, նախորդ դարաշրջաններում նրանք արդեն մի քանի անգամ իմացել են (իհարկե, միշտ էլ պատահական հանգամանքների բերումով), թե ինչպես տարբեր եղանակներով իրենց մոլորակի բնությունից դուրս կորզեն և իրենց տարբեր, ինչպես ասացի, «միամիտ-եսասիրական» նպատակներով օգտագործեն այդ ամենաթափանց նախանյութի առանձին մասերը, որը բացարձակ անհրաժեշտություն է տիեզերական գործընթացների նորմալ ընթացքի համար. սակայն երբեք այդ նախանյութը նրանք այնքան շատ չէին ոչնչացրել, որքան վերջին ժամանակներում:

Այսպիսով, իմ «*ինձնից առանձին կեսջանական պտղի*» բացատրությունների շնորհիվ, նախ՝ ինձ համար կատարելապես պարզ դարձավ, որ քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների աննորմալ սովորական *լինելիական գոյատևման* արդյունքների վնասակար ազդեցությունն արդեն սկսվել է, և երկրորդ՝ ինքնաբերաբար լուծում ստացավ իմ ծեր ընկերոջ տագնապահարույց հարցը, թե վերջին ժամանակներում Մարս մոլորակի եռուղեղ էակների կատարելագործվելն ինչու՞ է ավելի ու ավելի դժվարանում:

Թե ինչու այդ հարցը լուծում ստացավ նման եղանակով՝ կարելի է ասել, որ ստացվեց ճիշտ այնպես, ինչպես նման դեպքերի վերաբերյալ ասվում է մեր հարգարժան մոլլա Նասրեդինի շատ հազվագյուտ օգտագործվող ասույթներից մեկում, որը նա ձևակերպել է հետևյալ բառերով.

«Երբեք չես իմանա, թե քեզ ով կօգնի, որ էշը ցեխից հանես»:

Բանն այդպես եղավ այն պատճառով, որ իմ զառամյալ ընկերը նկատի ուներ բոլորովին այլ տվյալներ ու հնարավորություններ ունեցող անհատականությունների, քան ունեին Մատուրնի իմ այդ ընկերները՝ ընդամենը սովորական եռուղեղ էակներ. Այդ զառամյալ ընկերս երևի չէր էլ կասկածում, որ դեպքերի մեծ մասում այդ հարցերին ավելի քաջատեղյակ կարող են լինել հենց այդ սովորական եռուղեղ էակները, որոնք ամեն տեսակի ճշմարիտ տիեզերական փաստերի մասին տեղեկություններ են քաղում բացառապես իրենց *լինելիական պարտք-պարտականության* շնորհիվ, իսկ բոլոր այդ պատրաստի Լինելիությամբ հրեշտակներն ու քերովբեները, թեև իրենց բանականությունը կատարելագործելով հասցրել են բարձրագույն աստիճանների, սակայն գործնականում կարող են սոսկ այնպիսի անհատականություններ դուրս գալ, որոնց մասին կրկին մեր հարգարժան մոլլա Նասրեդինն ասում էր.

«Ընկերոջ տառապանքները երբեք չի հասկանա նա, ով ինքը չի ապրել դրանք՝ անգամ եթե օժտված լինի և՛ աստվածային բանականությամբ, և՛ իսկական սատանայի բնույթով»:

Բեհեդգեբուղի պատմության այս մասում Քարնակ տիեզերանավի ամբողջ ներքին համակարգում տարածվեցին արհեստական ծագմամբ թրթիռներ, որոնք օժտված էին բոլոր ուղևորների ընդհանուր ներկայությունների մեջ թափանցելու և նրանց ստամոքսների, այսպես կոչված, «խաղացկուն նյարդերի» վրա ազդելու կարողությամբ:

Այդ արհեստական ծագում ունեցող երևույթն ուղևորներին հայտնում էր, որ ժամն է հավաքվելու ընդհանուր, այսպես կոչված, «ջամիչունատրայում»¹²³, ինչը նման է երկրային «վանական սեղանատան», որտեղ նրանք համատեղ երկրորդ *լինելիական սնունդ* են ընդունում:

ԳԼՈՒԽ ԽԶ

Բեհեդգեբուղը թոռանը բացատրում է մարդկանց վերաբերյալ տեղեկատվության շարադրանքի հերթականության իր ընտրած ձևի իմաստը

Երկրորդ *լինելիական սննդի* ընդունման գործընթացից հետո Բեհեդգեբուղն անմիջապես չվերադարձավ այն տեղը, որտեղ սովորաբար գրույց էր վարում, այլ նախ գնաց իր «կեսշահը»¹²⁴:

«Կեսշահը» տիեզերանավի այն բաժանմունքներից է, որոնց երկրային շոգենավերում «նավախուց» են ասում:

Բեհեդգեբուղը նախ իր կեսշահը գնաց, որպեսզի այնտեղ ինչ-որ հեղուկով մի փոքր զովացնի իր չափազանց զառամյալ պոչը, մի բան, որ ժամանակ առ ժամանակ նա պետք է աներ ծերության պատճառով:

Երբ նա իր կեսշահից վերադարձավ և լուռ մտավ այն տեղը, որտեղ սովորաբար ժամանակ էին անցկացնում, հանկարծ իր համար անսովոր մի վիճակ տեսավ. նրա սիրելի թոռ Հասեինը դեմքով դեպի պատը կանգնած էր անկյունում և աչքերը ձեռքերով ծածկած՝ լաց էր լինում:

¹²³ ռուս. տարբերակում՝ *джамичунатре*, անգլ. տարբերակում՝ *djameechoonatra*

¹²⁴ ռուս. տարբերակում՝ *кесшах*, անգլ. տարբերակում՝ *kesshah*

Խիստ հուզված Բեհեզգեբուղն արագ մոտեցավ Հասեինին և անհանգստությամբ լի ձայնով հարցրեց.

– Ի՞նչ է պատահել, սիրելի՛ զավակս, դու իսկապե՞ս լաց ես լինում...

Հասեինն ուզեց պատասխանել, բայց երևում էր, որ նրա մոլորակային մարմնի հեկեկոցները թույլ չէին տալիս նրան խոսել:

Միայն որոշ ժամանակ անց, երբ Հասեինի մոլորակային մարմինը մի փոքր հանդարտվեց, նա պապին նայեց շատ տխուր աչքերով, բայց սիրող ժպիտով ասաց.

– Մի՛ անհանգստացիր ինձ համար, սիրելի՛ պապիկ, իմ այս վիճակը շուտով կանցնի: Հավանաբար վերջին դիոնոսկի ընթացքում ես շատ եմ ակտիվ խորհրդածել, և, ամենայն հավանականությամբ, այդ «նոր ռիթմով» ընթացած անսովոր գործունեության պատճառով իմ ամբողջ ընդհանուր ներկայության գործունեության ընդհանուր ռիթմը խախտվել է:

Եվ հիմա, երբ իմ մտածողության այդ նոր ռիթմը դեռևս չի ներդաշնակվել իմ ընդհանուր գործունեության արդեն հաստատված մյուս ռիթմերի հետ, ես հավանաբար էլի այնպիսի աննորմալություններ կունենամ, ինչպես այս արցունքներն են:

Ես պետք է խոստովանեմ, սիրելի՛ պապիկ, որ իմ ընդհանուր ներկայությունում այսպիսի վիճակի առաջացման հիմնական պատճառն այն է, որ իմ մտածողության մեջ նմանազգացորեն վեր հառնեց այն չարաֆախտ բարձագույն *լինելիական մարմինների* դիրքի ու վիճակի պատկերը, որոնք տարբեր պատահականությունների բերումով սկզբնավորվում և կիսով չափ կազմավորվում են երկրային եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում:

Այդ նմանազգացական մտքերը, իմ ներսում աճելով թախծի ազդակին համապատասխան, սկիզբ առան դեռևս ջամիչունատրայում, երկրորդ *լինելիական սնունդ* կլանելու սրբազան արարողության ժամանակ. նրանց մասին միտքը իմ մտածողության մեջ ծագեց նմանազգացորեն, երբ ես ուրախությամբ էի համակված այնտեղ տեղի ունեցող ամեն ինչով:

Իմ ներսում մտածմունքներ սկսվեցին այդ չարանենգ եռուղեղ էակների մասին, որոնց վերաբերյալ վերջին ժամանակներում դու ինձ այնքա՛ն շատ տեղեկություններ հաղորդեցիր... Հենց միայն նրանց համար նգովյալ այդ «ինչ-որ բանի» հատկությունների հետևանքների պատճառով, որը նրանց նախնիների ընդհանուր ներկայություններում ներդրվել էր նրանց էություններից անկախ պատճառներով, բացառապես սոսկ որոշ Բարձրագույն Սրբազան Անհատականությունների անհեռատեսությամբ, ոչ միայն նրանց հանդերձավորվող բարձրագույն *լինելիական մարմինները*, այլև հենց իրենք՝ այդ սովորական էակները, ընդմիջտ զրկված են երանություն ապրելու հնարավորությունից, որն ամեն մի հարաբերականորեն ինքնուրույն անհատ ունենում է երկրորդ *լինելիական սնունդ* կլանման այնպիսի սրբազան արարողության ժամանակ, որին քիչ առաջ մենք մասնակցեցինք:

Հասեինի խոսել սկսելու պահից Բեհեզգեբուղը երկար ու ակնդետ նայում էր նրա աչքերի մեջ, այնուհետև սիրո *լինելիական ազդակ* արտահայտող ժպիտով ասաց հետևյալը.

– Հիմա ես տեսնում եմ, որ վերջին դիոնոսկի ընթացքում իսկապես ակտիվ խորհրդածություններ շատ ես ունեցել, կամ, ինչպես կարտահայտվեին ժամանակակից քո սիրելիներից ոմանք, «այդ ժամանակի ընթացքում ներքնապես քնած չես եղել»: Իսկ այժմ նստենք մեր սովորական տեղերում և զրուցենք մի թեմայի շուրջ, որին մի անգամ ես արդեն խոստացել էի անդրադառնալ, և որն էլ միանգամայն հարմար կլինի տվյալ դեպքին:

Երբ նրանք արդեն նստել էին, և Ահունը ևս եկավ, Բեհեզգեբուղը սկսեց խոսել.

«Նախ և առաջ ես կսկսեմ իմ ընդհանուր ներկայությունից բխող քեզնով ուրախանալուս ազդակին արտաքին բառային տեսք տալուց: Անձամբ ես շատ ու շատ ուրախ եմ քո ներսում կայացած և դեռևս շարունակվող ճգնաժամային վիճակի համար: Ուրախ եմ գլխավորապես այն պատճառով, որ քո անկեղծ արցունքները, որոնք ես տեսա, և որոնք ի հայտ եկան քո գոյատևման հատկապես ներկայիս ժամանակահատվածում, երբ դու, համաձայն Մեծն Հերոպասի օրենքների, գտնվում ես պատասխանատու էակի Լինելիության շեմին՝ հենց այն տարիքում, երբ ընդհանուր գործունեության մեջ բյուրեղանում և ներդաշնակ ռիթմ են ստանում հնարավոր ամեն տեսակի նախադրյալներ, որոնք ամեն մի եռուղեղ էակի պատասխանատու գոյատևման ընթացքում կազմավորում են նրա անհատականությունը. քո այդ արցունքներն ինձ վստահություն են ներշնչում, որ առաջին հայացքից անտրամաբանական իմ այս *լինելիական ուրախության* մոտավոր իմացությունը կամ թեկուզ, այսպես

ասած, «համը» զգալը քո պատասխանատու գոյատևման ժամանակաշրջանում շատ ցանկալի և նույնիսկ անհրաժեշտ է ինչպես քեզ, այնպես էլ պատասխանատու տարիքին հասած բոլոր եռուղեղ էակների համար: Ուստի և ես քեզ նախ հենց դա կբացատրեմ:

Քո այդ արցունքներն ինձ վստահություն են ներշնչում նաև այն առումով, որ քո գալիք պատասխանատու գոյատևման ընթացքում քո ընդհանուր ներկայությունում կլինեն այնպիսի *լինելիական նախադրյալներ*, որոնք Աստվածային Բանականության յուրաքանչյուր կրողի էության հիմքն են կազմում, և որոնք նույնիսկ մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԸ ձևակերպել և սուրբ Քավարան մոլորակի գլխավոր մուտքի վերևում ամրագրել է հետևյալ բառերով.

**«ԱՅՍՏԵՂ ԿԱՐՈՂ Է ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ՄԻԱՅՆ ՆԱ,
ՈՎ Ի ՎԻՃԱԿԻ Է ՄՏՆԵԼՈՒ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՅՈՒՄ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ»**

Ահա հենց դա՝ արտահայտեց քո էությունը սույն դեպքում, երբ ինքդ երանության մեջ էիր և պատահաբար, նմանազգացությամբ հիշելով, որ ուրիշները զրկված են դրանից, դու քո ամբողջ էությամբ անկեղծ արտասվեցիր:

Առավել ևս ուրախանում եմ քեզ համար հատկապես այն պատճառով, որ էակների համար անհրաժեշտ նշած նախադրյալները քո ներսում սկսում են գործել հենց այն ժամանակ, երբ քո մեջ բյուրեղանում և կազմավորվում են բոլոր այն լինելիական նախադրյալները, որոնց բյուրեղացումը կախված է ոչ թե տվյալ էակի սեփական բանականությունից, այլ բացառապես շրջապատում եղած էակներից, արտաքին պայմաններից և Մեծագույն համատիեզերական իրանիրանումանգալից:

Դե, իսկ այժմ կարող ենք վերադառնալ մեր նախատեսած թեմային, թե այս տիեզերանավով մեր ամբողջ ճամփորդության ընթացքում ես ինչու եմ նման հաջորդականությամբ և այսքան շատ քեզ պատմում Երկիր մոլորակում բազմացող եռուղեղ էակների մասին:

Բանն այն է, որ երբ վերադարձա մեր սիրելի Քարատակ մոլորակը, միանգամայն ազատ լինելով այլևայլ *լինելիական պարտականություններից*, ես կամավորապես ինձ վրա վերցրեցի պատասխանատու էակի Լինելության հասնելու քո արդեն ավարտին հասնող ոսկիանողի ղեկավարման պատասխանատվությունը, կամ, ինչպես կասեին քո սիրելիները, «քո դաստիարակության գործը»: Եվ քանի որ ներկայումս դու քո գոյատևման այն շրջանում ես, երբ եռուղեղ էակների ներսում ընդհանրապես ներդաշնակացվում են նրանց ունեցած բոլոր այն գործառույթները, որոնց համակցությամբ պատասխանատու գոյատևման ընթացքում իրականանում է, այսպես կոչված, «առողջ մտածողությունը», ապա, երբ Քարնակ տիեզերանավով պետք է սկսեինք այս ճամփորդությունը, ես մտածեցի օգտվել այդ ժամանակից և օգնել քեզ, որ քո գործառույթների ներդաշնակացումն ու դրանցից կախված՝ քո ապագա ակտիվ մտածողության ձևավորումն ընթանան հենց այն կարգով, որի ճշմարտացիության մեջ իմ ամբողջ երկարատև անձնական գոյատևման ընթացքում ես համոզվել եմ իմ ամբողջ ներկայությամբ:

Երբ մեր ճամփորդության սկզբում ես նկատեցի, որ դու շատ ես հետաքրքրվում Երկիր մոլորակի եռուղեղ էակներով, որոշեցի քո այդ հետաքրքրությունը բավարարելու պատրվակով նրանց մասին քեզ պատմել այնպես, որ քո ապագա *լինելիական նմանազգացությունների* համար անհրաժեշտ, այսպես կոչված, «էգզալաստիկությունները» քո մեջ բյուրեղանան առանց կասկածի որևէ նշույլի:

Այդ նպատակով, իմ բոլոր պատմությունների ընթացքում, ես խստորեն առաջնորդվում էի հետևյալ երկու սկզբունքներով:

Առաջին՝ ոչինչ չներկայացնել որպես իմ սեփական կարծիք, որպեսզի քո սեփական համոզմունքների համար անհրաժեշտ նախադրյալները քո ներսում պատրաստի ձևով չբյուրեղանան ուրիշի կարծիքին համապատասխան:

Եվ, համաձայն երկրորդ սկզբունքի, երբ քեզ պատմում էի Երկիր մոլորակում տեղի ունեցած իրադարձությունների մասին, որոնք կապված էին քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների սովորական *լինելիական գոյատևման* գործընթացում աստիճանաբար աճող ներքին ու արտաքին աննորմալությունների հետ, որոնց համակցությամբ նրանք իրենց հասցրել են ներկայիս թշվառ և համարյա անխուսափելի վիճակին, ես ընտրեցի շարադրանքի հատկապես այնպիսի կարգ և այնպիսի նախապես մտածված հաջորդականություն, որ դու կարողանաս, միայն իմ պատմած փաստերի հիման վրա, բոլոր պատճառների քո սեփական սուրբեկտիվ բացատրությունն ունենալ:

Ես որոշեցի այդպես վարվել, որպեսզի քո ապագա տրամաբանական համադրումների համար քո ընդհանուր ներկայության համապատասխան տեղայնացումներում բյուրեղանան հնարավորինս շատ տարաբնույթ «էգոպլաստիկություններ», և որպեսզի քո ակտիվ մտածողությունից քո ներսում հնարավորինս եռանդուն ընթանա սրբազան ապրուստոդունիս և խելքդունիս նախանյութերի հարկ եղած մշակումը, ինչն անհրաժեշտ է քո երկու բարձրագույն *լինելիական մասերի* հանդերձավորման ու կատարելագործման համար:

Իսկ հիմա, զավակս, որպեսզի ասվածը քեզ համար ավելի հասկանալի դառնա, հարկ եմ համարում մի ուրիշ, ավելի որոշակի ձևով մեկ անգամ ևս ասել իմ կողմից զանազան այլ առիթներով հիշատակված այն տարբերության մասին, որ եռուղեղ էակների մոտ ընդհանրապես գոյություն ունի, այսպես կոչված, «գիտելիքի» և «ըմբռնման» միջև:

Որպեսզի այդ տարբերությունն առավել պարզ դառնա, ես որպես օրինակ կդիտարկեմ քո սիրելիների սովորական բանականությունը:

Եթե այն, ինչ նրանք «գիտակցական բանականություն» են անվանում, և որը ժամանակակից էակների պարագայում կատարյալ անշարժ վիճակում է, համեմատենք ընդհանրապես մեր Մեծ Մեզալակոսմոսի ուրիշ մոլորակներում բազմացող եռուղեղ էակների բանականության հետ, ապա առաջինը կարող ենք կոչել *«գիտելիքի բանականություն»*, իսկ երկրորդը՝ *«ըմբռնման բանականություն»*:

Գիտակցական *ըմբռնման բանականությունը*, ինչը հարկ է հարկ է, որ ունենան ընդհանրապես բոլոր եռուղեղ էակները, մի «բան» է, որը միախառնվում է նրանց ընդհանուր ներկայությանը, ուստի և այդպիսի բանականությամբ ստացված տեղեկությունն ընդմիշտ դառնում է նրանց անբաժանելի մասը:

Նման բանականությամբ ձեռք բերված տեղեկությունը, կամ այն արդյունքները, որոնք ստացվում են նախկինում ձեռք բերված տեղեկությունների *լինելիական կշռադատման* շնորհիվ, ինչպիսի փոփոխություններ էլ որ կրի էակը, և ինչպիսի փոփոխություններ էլ որ տեղի ունենան նրա շրջակա ոլորտներում, միշտ կմնա նրա էության մի մասը:

Իսկ ինչ վերաբերում է քո սիրելիների մեծամասնության համար սովորական դարձած բանականությանը, որ ես *գիտելիքի բանականություն* անվանեցի, ապա ամեն մի նոր տպավորություն, որն ընկալվում է նրանց բանականության միջոցով, ինչպես նաև նախկինում ստացված տպավորությունների ցանկացած միտումնավոր կամ ուղղակի մեքենայաբար ստացված արդյունքները միայն ժամանակավոր են լինում նրանց էության համար և նրանց ներսում կարող են դրսևորվել միայն շրջապատի որոշակի պայմանների առկայության դեպքում և այն պայմանով, որ նրանց էության հիմքում ընկած տեղեկատվության ամբողջականությունն անպայման, ժամանակ առ ժամանակ, այսպես ասած, «թարմացի» ու «կրկնվի». այլապես նախկինում ընկալված տպավորություններն ինքնուրույնաբար փոփոխվում են և նույնիսկ, այսպես ասած, «ցնդում են» այդ եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններից:

Թեև, Սրբազան Եռամասիկապողի առումով, *լինելիական բանականության* այդ երկու տեսակների կազմավորման գործընթաները միատեսակ են ընթանում, սակայն դրա երեք առանձին սուրբ ուժերի իրացնող գործոնները տարբեր են այդ տեսակների համար: Այսպես, *գիտելիքի բանականության* կազմավորման դեպքում, եռուղեղ էակների ներկայություններում առկա երեք տեղայնացումներից յուրաքանչյուրում բյուրեղացված՝ նախկինում ընկալված հակասական տպավորությունները ծառայում են որպես հաստատող և ժխտող գործոններ, իսկ դրսից եկող նոր տպավորություններն այդ դեպքում ծառայում են որպես երրորդ գործոն:

Իսկ ինչ վերաբերում է *բանականությանը*, ապա այդ գործոնները հետևյալներն են. առաջինը՝ *«սուրբ հաստատողը»*, ցանկացած տեղայնացման ընկալված թարմ տպավորություններն են, որոնք տվյալ պահին ունենում են, այսպես կոչված, *«ծանրակենտրոն գործունեություն»*. Երկրորդը՝ *«սուրբ ժխտողը»*, մյուս տեղայնացումներում այդ պահին առկա համապատասխան տվյալներն են. և երրորդը՝ այսպես կոչված, *«լինելիական ավտոկոլիցիկները»¹²⁵*, կամ, ինպես նաև անվանում են,

¹²⁵ ռուս. տարբերակում՝ автоколичественны, անգլ. տարբերակում՝ autokolitzikners

«հուղազրադվողներն»¹²⁶ են, ինչը նշանակում է «սեփական անահատականությունը դրսևորելու համար ձգտումների իրականացման արդյունքներ»:

Իմիջիայլոց, քեզ համար վնաս չի լինի մի անգամ էլ լսել, եթե նույնիսկ գիտես, այն մասին, որ եռուղեղ էակների ներկայությունների բոլոր երեք տեղայնացումներում հիշյալ *լինելիական ավտոկոլիցիկներն* ընդհանրապես գոյանում են միայն և միայն *լինելիական պարտք-պարտականության* կատարման արգասիքներից, այսինքն՝ այն գործոնների շնորհիվ, որոնք եռուղեղ էակների ծագման ամենասկզբում մեր ԱՄԵՆԱԹԱՓԱՆՅ ՀԱՄԱԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՐԸ նախատեսել է, որ լինեն ինքնակատարելագործման միջոցներ:

Եռուղեղ էակների ընդհանուր ներկայություններում հենց այդ գոյացություններն են ներկայանում որպես Սրբազան Եռամասիկապողի երրորդ սուրբ ուժ, որպեսզի կազմավորվի *ըմբռնողական բանականությունը*:

Միայն այդ գործոնի շնորհիվ է, որ եռուղեղ էակների ներկայություններում ամեն տեսակի թարմ ընկալված տպավորությունների գործընթացում, Սրբազան Եռամասի կապողի հիման վրա, միայն տվյալ էակին հատուկ նախադրյալներ են գոյանում նրանց սեփական գիտելիքների և ըմբռնման համար. և դեռ ավելին՝ եռուղեղ էակների ներկայություններում գիտակցության համար նախադրյալների բյուրեղացման միայն և միայն այդպիսի գործընթացների ժամանակ է, որ տեղի է ունենում, այսպես կոչված, «*զեռնոֆուկայան*»¹²⁷ շփում», գլխավորապես որի շնորհիվ նրանց ներսում բարձրագույն մասերի հանդերձավորման և կատարելագործման համար գոյանում են սրբազան ապրուստդունիս և խելքդունիս նախանյութերը:

Այստեղ հարկ է նշել, որ միայն հիշյալ կարգով բյուրեղացված և էակների գիտակցական մտածողությամբ նոր առաջացած ու թարմ ընկալված տպավորություններն են, որ էակների տեղայնացումներում տեղավորվում են նախկինում ամրապնդված նախադրյալների հենց այն շարքերում, որոնք համահունչ են այդ տպավորություններին և համապատասխանում են դրանց:

Իսկ այն նոր տպավորությունները, որոնք բյուրեղացվում են այլ կերպ, այսինքն՝ *գիտելիքի բանականության* միջոցով, *լինելիական տեղայնացումներում* տեղավորվում են ինչպես պատահի՝ կատարելապես առանց որևէ, այսպես ասած, «դասակարգման»: Բոլոր այդպիսի նոր տպավորությունները տեղավորվում են նախկին տպավորությունների շարքերում:

Եվ ահա գլխավորապես հենց այդ պատճառով միայն *գիտելիքի բանականությունն* ունեցող եռուղեղ էակների ներկայություններում այդ ամենը տեղավորվելով մշտապես սոսկ տեղեկություններ է մնում՝ առանց նրանց կողմից որևէ լինելիական գիտակցման:

Ուստի և ցանկացած նոր նախադրյալ, որ եռուղեղ էակների ներկայություններում այդ եղանակով կազմավորվում և ամրապնդվում է, նրանց հետագա գոյատևման համար որպես բարիք օգտագործվելու առումով բացարձակապես ոչ մի նշանակություն չի ունենում: Դեռ ավելին՝ այդպիսի արդեն ամրապնդված տպավորությունների ապաբյուրեղացման տևողությունը կախված է տվյալ էակի ներսում ծագող ազդակների որակից ու քանակից: Ինչ վերաբերում է այս վերջին փաստին, որը հետևանք է եռուղեղ էակին բնորոշ բանականության գործունեության այլասերմանը, ինչն արդեն առկա է քո սիրելիների մեծ մասի ներկայություններում, ապա նմանազգացությամբ ես հիշեցի մեր հարգարժան ուսուցիչ մոլլա Նասրեդինի նույնպես շատ հազվադեպ օգտագործվող մի արտահայտությունը, որ նա ձևակերպում էր հետևյալ բառերով.

«Հենց որ ինչ-որ բան է պետք գալիս, հանկարծ պարզվում է, որ այդ բանը կեղտոտ է ու մկների կրծած»:

Թեև քո սիրելիների ամեն մի՝ իրենց ներկայությունների մեջ այդ եղանակով ձեռք բերած, այսպես կոչված, «գիտելիքը» նույնպես սուբյեկտիվ է, սակայն այն ոչ մի ընդհանուր բան չի ունենում, այսպես կոչված, «Օբյեկտիվ Գիտելիքի» հետ:

Եվ ահա, զավա՛կս, որպեսզի էակների ներսում ստացվի հիշյալ *զեռնոֆուկայան* շփումը, և միաժամանակ *ըմբռնողական բանականության* համար նոր ընկալումներ բյուրեղեցվեն, ես (արդեն շատ լավ իմանալով «*տեղայնացումներում զադափարների ամրապնդման ու թուլացման օրենքները*», որոնց մանրամասները, ի դեպ ասած, ես նույնպես իմացել եմ քեզ դուր եկած էակների միջավայրում

¹²⁶ ռուս. տարբերակում՝ худацбабогнари, անգլ. տարբերակում՝ hoodatzbabognari

¹²⁷ ռուս. տարբերակում՝ зернофукальное, անգլ. տարբերակում՝ zernofookalnian

գտնվելուս ընթացքում, երբ աշխատում էի որպես «արհեստավարժ հիպնոտոլ», իմ պատմությունների ընթացքում, արտաքին կառավարման միջոցով նոր տեղեկությունների ընթացիկ ընկալմանը վերաբերող բազմաթիվ անհրաժեշտ սկզբունքների հետ մեկտեղ, միշտ աշխատում էի առաջնորդվել նաև այն հանգամանակից կանոնով, որ, այսպես կոչված, «տեղեկությունների քվինտեսենցիայի» աստիճանական ավելացումը տեղի ունենա քո ներսում «վրդովմունքի», «վիրավորվածության», «գրգռվածության» և այլ *լինելիական ազդակների* լիակատար բացակայության պայմաններում:

Իմ շարադրանքի հաջորդականության և քո էաբուխ ըմբռնման արդյունքների վերաբերյալ պետք է նաև ասել, որ եթե ես, առաջին անգամ նկատելով Երկիր մոլորակում կազմավորվող եռուղեղ էակների նկատմամբ քո հետաքրքրությունը, հենց սկզբից ամեն մի իրադարձության առթիվ արտահայտելի միայն իմ անձնական համոզվածությունն ու նրանց մասին ունեցած կարծիքս, որն ամրապնդվել էր իմ դիտումների ամբողջ ժամանակահատվածում, և միայն դրանից հետո սկսելի քեզ մատուցել առատ ու բազմակողմանի այն «տեղեկությունների համախմբությունը», որն արդեն պատմել եմ, ապա շարադրված բոլոր փաստերը դու կընկալելիր առանց սեփական լինելիական-տրամաբանական համադրության, և այդ տեղեկատվությունից բյուրեղացած նախադրյալները քո համապատասխան տեղայնացումներում կտեղավորվեին սոսկ որպես տեղեկություններ, որոնք քո ներսում իրական *լինելիական ըմբռնման* չեն ենթարկվել:

Ահա թե ինչու Երկիր մոլորակում բազմացող եռուղեղ էակներին վերաբերող իմ բոլոր պատմություններում ես առաջնորդվում էի այն բանով, որ, մի կողմից՝ քո ընդհանուր ներկայության համապատասխան տեղայնացումներում բյուրեղանան քո ապագա *լինելիական նմանազգացությունների* համար անհրաժեշտ շատ բազմազան նախադրյալներ, որոնք առնչվում են Օբյեկտիվ Գիտելիքի բոլոր «համախմբություններին» կամ «բնագավառներին», և մյուս կողմից՝ որ քո ընդհանուր ներկայության մեջ գեոնոֆուկայան շփման գործընթացը տեղի ունենա առավել երանդուն կերպով, և ստացվի այն արդյունքը, որը ես հենց նոր տեսա, երբ դու պատասխանեցիր իմ «Ինչու՞ ես լաց լինում» հարցին:

Եվ այսպես, զավա՛կս, քանի որ ես արդեն քիչ թե շատ համոզվեցի, որ իզուր չեմ ժամանակ ծախսել, և քո այդ մոլորակում բազմացող ու քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների մասին իմ պատմություններն իմ սպասածի պես քեզ օգտակար եղան, ապա կարծում եմ, որ մենք կարող ենք և դադարեցնել նրանց մասին խոսելը, որ այլևս քո ներսում ակտիվ մտածողություն ծայր չառնի. բացի այդ՝ քիչ ժամանակ է մնացել, քանի որ շուտով մենք կհասնենք մեր հարազատ մոլորակը:

Այնուհանդերձ այժմ ես պետք է համառոտ քեզ բացատրեմ և խստորեն պատվիրեմ, որ, քանի դեռ մեր ճամփորդությունը շարունակվում է, և մենք դեռ շարունակում ենք խոսել Երկիր մոլորակի եռուղեղ էակների մասին, դու քո ներսում առկա բանականությամբ պետք է ձգտես այնպես անել, որ քո ներսում ընթացող որոշ գործառույթներ, որոնք ընդհանրապես եռուղեղ էակներին ակտիվ մտածելու հնարավորություն են տալիս, մնան անգործ վիճակում, կամ, ինչպես ասում են, «հանգստանան». այսինքն՝ քո ներսում պետք է հանգստանան այն գործառույթները, որոնք այս ամբողջ ընթացքում սովորականից ավելի եռանդուն են մասնակցել քո ակտիվ մտածողությանը, որի գործունեությունը կախված է ոչ թե էակի էությունից, այլ բացառապես, այսպես կոչված, «համատիեզերական ռիթմի ներդաշնակությունից»:

Իմիջիայլոց, դու պետք է միշտ հիշես, որ ցանկացած էակի բանականությունը և այդ բանականության գործունեության ինտենսիվությունը կախված են այդ էակի ամբողջ ներկայության բոլոր առանձին մասերի ճիշտ գործունեությունից:

Օրինակ՝ «մոլորակային մարմնի» ամբողջ գործունեությունը և հենց ինքը՝ մարմինը, էակի գլխավոր մասերն են, բայց առանձին մասերի գործունեությունը, ինչպես և ինքը՝ մարմինը, առանց էակի մյուս ոգեկոչված մասերի սոսկ ոչինչ չհասկացող ոչ ինքնուրույն տիեզերական գոյացություններ են, ուստի և, այն բանի հիման վրա, որը դու մի անգամ անվանեցիր «ընդհանուր համաշխարհային Արդարության հենապուն», էակի ամեն մի ոգեկոչված մաս պետք է միշտ արդար լինի այդ ոչ ինքնուրույն ու անգիտակից մասերի նկատմամբ և ավելին չպահանջի, քան դրանք ի վիճակի են տալու:

Ինչպես և Մեգալակոսմոսի մնացած ամեն ինչը, որպեսզի «մոլորակային մարմինը» ճիշտ ծառայի իր գլխավոր մասին, այսինքն՝ ամբողջական էակի լրացուցիչ մասը հարկ եղած ձևով ծառայի նրա բուն

էութեանը, այդ էությունը պետք մշտապես արդար լինի և այդ մասին ներկայացնի միայն դրա հնարավորություններին համապատասխանող պահանջներ:

Արդարության այդ հարցից զատ, էակի անգիտակից մասի նկատմամբ պետք է վերաբերվել այնպես, որ ժամանակ առ ժամանակ որոշ գործառնություններ մնան անգործ վիճակում, որպեսզի այդ անգիտակից մասը հնարավորություն ունենա աստիճանաբար ու հարկ եղած ժամանակ իր ձեռք բերած նոր սուբյեկտիվ «ռիթմերը» միախառնելու մեր ընդհանուր Մեգալակոսմոսի օբյեկտիվ «ռիթմերի» հետ:

Հարկ է ի նկատի ունենալ, որ Մեգալակոսմոսում ռիթմերի միախառնումը տեղի է ունենում միայն «կացնուկիցներնային»¹²⁸ ձևով, այսինքն, ինչպես կասեին քո սիրելիները, «օրինաչափ աստիճանականությամբ»:

Այսպիսով, եթե դու ուզում ես, որ քո հետագա պատասխանատու գոյատևման ընթացքում քո «ակտիվ մտածողությունն» ընթանա ճիշտ և արդյունավետ, ապա հիմա պետք է (եթե այդպիսի մտածողությունը քո ներսում արդեն սկսվել է, և այդպիսի ներքին գործընթացն անցանկալի հետևանքներ է թողնում քո մոլորակային մարմնի վրա) որոշ ժամանակ, որքան էլ ուզենաս և որքան էլ դա քեզ համար հետաքրքիր լինի, չգրադվես այդպիսի մտածողությամբ. այլապես քո ներսում կառաջանա «դեզոնաքուսած»¹²⁹, ասինքն՝ քո ամբողջ ներկայության միայն մի մասը ձեռք կբերի ուրիշ ռիթմ, և հետևաբար դու կրկին կդառնաս, ինչպես կասեին քո սիրելիները, «ծուկոկոկ»:

Իմիջիայլոց, քո սիրելիների մեծ մասը, հատկապես ժամանակակիցները, երբ պատասխանատու են դառնում, հենց այդպիսի ծուկոկոկ էակներ են լինում:

Կարճ ասած՝ միայն ամբողջի մասի ռիթմի աստիճանական փոփոխությամբ է հնարավոր փոխել այդ ամբողջի ռիթմը՝ նրան վնաս չպատճառելով:

Ես անհրաժեշտ եմ համարում կրկնել, որ «ակտիվ մտածողությունն» ու այդպիսի մտածողության օգտակար արդյունքներն իրապես ի հայտ են գալիս միայն էակների ներկայություններում առկա ոգեկոչված արգասիքների հավասարաչափ աստիճանական գործունեությամբ նրա երեք տեղայնացումներում՝ որոնք համապատասխանաբար կոչվում են «մտածողական կենտրոն», «զգայական կենտրոն» և «հենաշարժողական կենտրոն»:

Գլուխ ԽԷ

Անաչառ մտածողության անխուսափելի արդյունքը

Բեհեդգերուդը պատրաստվում էր էլի ինչ-որ բան ասել, երբ հանկարծ չորսբոլորը լուսավորվեց «բաց-երկնագույն ինչ-որ բանով»: Այդ պահից սկսած՝ Քարնակ տիեզերանավի անկման արագությունն սկսեց աննկատելիորեն նվազել:

Այդ ամենից հետևում էր, որ Քարնակ տիեզերանավին, ուր որ է, կկառանվի տիեզերական մեծ «իզոլիոնօպտիա»¹³⁰–ներից մեկը:

Եվ իսկապես, Քարնակ տիեզերանավի արտաքին թափանցիկ մասերից շուտով սկսեց երևալ այդ «բաց-երկնագույն ինչ-որ բանի» աղբյուրը, որը լուսավորում էր ոչ միայն Քարնակ տիեզերանավի ներսը, այլև այդ մեծ էզոլիոնօպտիան ընդգրկող տիեզերական ամբողջ տարածությունը, որ էակների սովորական տեսողությանը կարող էր մատչելի լինել:

Տիեզերքում այդ մեծ էզոլիոնօպտիաներն ընդամենը չորսն են, և դրանցից յուրաքանչյուրը համապատասխանաբար գտնվում է Տիեզերքի չորս Քառատիրակալներից որևէ մեկի իրավասության տիրույթում:

¹²⁸ ռուս. տարբերակում՝ кацнукицкернально, անգլ. տարբերակում՝ katznookitzkernally

¹²⁹ ռուս. տարբերակում՝ дезонакуасанц, անգլ. տարբերակում՝ dezonakooasanz

¹³⁰ ռուս. տարբերակում՝ эголинооптий, անգլ. տարբերակում՝ egolionopties

Տիեզերանավի բոլոր ուղևորների միջավայրում սկսեցին տիրել շտապողականություն, հուզում և իրարանցում. շուտով նրանք նավի ղեկավար կազմի հետ հավաքվեցին գլխավոր դահլիճում, որը գտնվում էր նավի կենտրոնական մասում:

Նրանցից յուրաքանչյուրը մի ձեռքով մրտենու ձյուղ էր բռնել, իսկ մյուսով՝ «դեժեկաշե»¹³¹:

Երբ այդ տիեզերական մեծ էգոլիոնոպտիան մերձեցավ Քարնակ տիեզերանավին, վերջինիս որոշակի մասերը հատուկ ձևով հեռացան իրարից, և էգոլիոնոպտիայից նավի գլխավոր դահլիճ մտավ մի թափոր, որի կազմում կային մի քանի հրեշտակապետներ, բազմաթիվ հրեշտակներ, քերովբեներ և սերովբեներ. նրանց ձեռքին նույնպես ձյուղեր կային, բայց՝ արմավենու:

Շքախմբի առջևից ընթանում էր մի գերապատիվ հրեշտակապետ, որին հանդիսավորապես հետևում էին երկու քերովբեներ, որոնք բերում էին մի արկղիկ, որն ինչ-որ լույս էր ճառագում, բայց այս անգամ՝ նարնջագույն:

Իսկ Քարնակ տիեզերանավի գլխավոր դահլիճում հավաքվածների ամենաառջևում կանգնած էր Բեհեդգեբուղը, որի հետևում շարվել էին նրա ազգականները. նավապետն ու բոլոր մյուսները կանգնել էին նրանցից պատշաճ հեռավորության վրա:

Բեհեդգեբուղի ցեղատեսակին պատկանող էակների սպասողական խմբին մոտենալով՝ էգոլիոնոպտիայից եկած հիշյալ շքախումբը կանգ առավ. ապա երկու կողմերը՝ տարաբնույթ բոլոր եռուղեղ էակները, միասին երգեցին «ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ Օրհներգը», որը նման դեպքերում համայն Տիեզերքում երգում են տարբեր բնույթի բոլոր էակները՝ անկախ իրենց ունեցած արտաքին հանդերձանքի ձևից:

Օրհներգում հնչում են հետևյալ խոսքերը.

*«Ո՛վ, Համայն շնչավորների հար համբերատար ԱՐԱՐԻԶ,
Ո՛վ, Համայն գոյի Սիրով գերլեցուն ՊԱՏԱՌ,
Ո՛վ, Անգութ Հերոպասի Միակ ՀԱՂԹՈՂ,
Մեր Փառաբանության հնչուններով այսօր
Ուրախացի՛ր Քո Աստվածային Երանության մեջ.
Դու՛ ես Սկիզբ տվել մեր ծագմանը
Արարումներով Քո Անօրինակ,
Հերոպասի նկատմամբ Քո Հաղթանակով
Հնարավորություն ես ընձեռել մեզ կատարելագործվելու
Մինչև Սուրբ Անկլաղի աստիճան,
Իսկ այժմ հանգի՛ստ առ Քո վաստակով,
Իսկ մենք Երախտագիտությամբ կպահենք
Այն ամենը, ինչ Դու արարեցիր,
Եվ միշտ ու ամենայնում հավերժ Փառք կտանք Քեզ,
Հավերժ Փառք Քեզ, ԱՐԱՐԻՉ ԱՍՏՎԱԾ:
Դու՛ ես բոլոր Վերջերի ՄԿԻԶԲԸ,
Դու՛ ես Ծագումն ԱՆՍԱՀՄԱՆԻՑ
Եվ Վերջն ամենայնի կրում ես Քո մեջ,
Ո՛վ, ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ:*

Երբ Օրհներգի վերջին դողանջները մարեցին, գերապատիվ հրեշտակապետը մոտեցավ Բեհեդգեբուղին և հանդիսավորապես արտաբերեց.

«Ցուցմամբն Նորին Քառապահպանություն Քերովբեապետ Փեշտվողի և կրելով Նրա սրբազան գավազանը՝ ահա կանգնած ենք Ձեր առաջ, Ձե՛րդ Գերապատվություն, որպեսզի, համաձայն Վերնից Ձեզ շնորհված ներման և ի պարգևատրումն Ձեր որոշակի վաստակի՝ Ձեզ վերադարձնենք այն, ինչը կորցրել էիք Ձեր աքսորի ժամանակ՝ Ձեր Եղջուրները»:

Այսքանն արտաբերելուց հետո գերապատիվ հրեշտակապետը շրջվեց քերովբեների բերած արկղիկի կողմը և խորին հարգանքով դրա միջից հանեց սրբազան գավազանը:

Այդ ընթացքում բոլոր ներկաներն իջան մի ծնկի, իսկ հրեշտակներն ու քերովբեները հավուր պատշաճի սրբազան հիմներ երգեցին:

¹³¹ ռուս. տարբերակում՝ дежелкаше, անգլ. տարբերակում՝ dezhekasheh

Սրբազան գավազանը ձեռքն առնելով՝ հրեշտակապետը կրկին շրջվեց Բեհեդգեբուդի կողմը և բեհեդգեբուդյան ցեղատեսակին պատկանող էակներին դիմեց հետևյալ խոսքերով.

«Ո՛վ, էակներ, որ ստեղծված եք մեր միևնույն ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱԹԱՓԱՆՑ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ կողմից, Ո՛վ ներում շնորհեց մի անգամ մեղք գործած էակ Բեհեդգեբուդին, որը մեր ԱՐԱՐԶԻ անսահման ողորմածության շնորհիվ կրկին կգոյատևի ձեր միջավայրում, որ նման եք Իրեն...

Քանի որ ձեր բնույթն ունեցող էակների բանականության տարատեսակությունն ու աստիճանը որոշվում են ձեր գլուխների վրա եղած եղջյուրներով, ապա մենք, Նորին Քառապահպանության թույլտվությամբ, ինչպես նաև ձեր օգնությամբ պետք է վերականգնենք Բեհեդգեբուդի կորցրած եղջյուրները:

Ո՛վ մեր ՀԱՄԱԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐ կողմից ստեղծված էակներ, ձեր օգնությունն այս պահին այն կլինի, որ ձեզնից յուրաքանչյուրը համաձայնի հրաժարվել իր սեփական եղջյուրների մի մասնիկից՝ հանուն Բեհեդգեբուդի վաստակած ներումն ի կատար ածելու գործի:

Այնպես որ, ձեզնից ամեն ոք, ով կամենում է դա անել, թող մոտենա մեր սրբազան գավազանին և հպվի դրա կոթին. այդ հպման տևողությունից էլ հենց կախված կլինի այն ակտիվ տարրերի քանակությունը, որոնք ձեր եղջյուրներից կանցնեն ու կծառայեն ներման արժանացած ձեզ նման էակի համապատասխան եղջյուրների կազմավորման գործին»:

Իր հանդիսավոր ճառն ավարտելուց հետո գերապատիվ հրեշտակապետը սրբազան գավազանի գլխավոր ծայրը, այսինքն՝ գունդը, պահեց մի ծնկին իջած Բեհեդգեբուդի գլխավերևում, իսկ կոթը շրջեց հավաքածների կողմը, որպեսզի կամեցողները կարողանան հպվել դրան:

Գերապատիվ հրեշտակապետի ճառից հետո բեհեդգեբուդյան ցեղին պատկանող էակների շարքերը մեծապես խառնվեցին, քանի որ նրանցից ամեն ոք կամենում էր առաջինը մոտենալով հպվել սրբազան գավազանի կոթին և հնարավորին չափ երկար մնալ այդ վիճակում:

Սակայն շատ շուտով պատշաճ կարգ հաստատվեց, որի արդյունքում նրանցից յուրաքանչյուրն իր հերթին մոտենում ու բռնում էր կոթը և այն իր ձեռքերով պահում այնքան ժամանակ, որքան թույլ էր տալիս տիեզերանավի նավապետը, որն իր վրա էր վերցրել պատշաճ կարգ սահմանելու գործը:

Այդ սրբազան արարողության ժամանակ Բեհեդգեբուդի գլխին կամաց-կամաց սկսեցին եղջյուրներ աճել:

Սկզբնական շրջանում, երբ միայն հասարակ եղջյուրներ էին աճում, ներկաների միջավայրում սոսկ կենտրոնացված հանդիսավոր լրություն էր տիրում: Բայց երբ եղջյուրները սկսեցին ճյուղավորումներ տալ, բոլորը սկսեցին լարված հետաքրքրություն և հիացական ուշադրություն դրսևորել: Այդ վիճակը պահպանվում էր այն պատճառով, որ բոլորն ուզում էին իմանալ, թե Բեհեդգեբուդի եղջյուրները քանի հատ ճյուղավորումներ կտան, քանի որ, ըստ սրբազան Բանականության չափանիշի, դրանցով էր որոշվելու Բեհեդգեբուդի նվաճած բանականության աստիճանը:

Սկզբում մեկ ճյուղավորում առաջացավ, հետո՝ մյուսը, հետո՝ երրորդը, և ամեն մի նոր ճյուղավորման առաջացման հետ՝ ներկաները խանդավառվում ու անթաքույց բավականություն էին ստանում:

Երբ եղջյուրների վրա սկսեց գոյանալ չորրորդ ճյուղավորումը, ներկաների շարքերում լարվածությունը հասավ իր գագաթնակետին, քանի որ եղջյուրների վրա չորրորդ ճյուղավորման առաջացումը համարժեք էր այն բանին, որ Բեհեդգեբուդի բանականության կատարելագործումն արդեն հասել է սուրբ Տերնունադդի¹³² աստիճանին, իսկ դրանից հետևում էր, որ Բեհեդգեբուդին ընդամենը երկու աստիճան է մնացել, որպեսզի նա հասնի սուրբ Անկլադի աստիճանին:

Երբ այդ ամբողջ անսովոր ծիսակատարությունը մոտեցել էր իր ավարտին, և ներկաները դեռ չէին հասցրել ուշքի գալ իրենց ուրախ գրգռվածությունից, Բեհեդգեբուդի եղջյուրների վրա հանկարծակի սկսեց երևալ ներկաներին հայտնի հատուկ ձևն ունեցող հինգերորդ լիովին ինքնուրույն ճյուղավորումը:

Այստեղ արդեն առանց բացառության բոլորը՝ նույնիսկ գերապատիվ հրեշտակապետը, բերանքսիվայր փովեցին Բեհեդգեբուդի առջև, որն այդ պահին ոտքի կանգնեց, կերպարանափոխվեց

¹³² ռուս. տարբերակում՝ Тернуальда, անգլ. տարբերակում՝ Ternoonald

ու վեհաշուք տեսք ստացավ՝ շնորհիվ հիրավի հոյակերտ եղջյուրների, որոնք վեր էին հառնել նրա գլխի վրա:

Բեհեզգեբուղի առջև բոլորը բերանքսիվայր փռվեցին այն պատճառով, որ նրա եղջյուրների վրայի հինգերորդ ճյուղավորումը ցուցանում էր, որ նրա բանականությունն արդեն հասել սուրբ Փոխանկլադի¹³³, այսինքն՝ սուրբ Անկլադի բանականությանը նախորդող վերջին աստիճանին:

Սուրբ Անկլադի բանականությունն այն ամենաբարձր աստիճանն է, որին ընդհանրապես կարող է հասնել որևէ էակ, քանի որ այն թվով երրորդն է՝ հաշված ԲՈՒՆ ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ Բացարձակ Բանականությունից:

Եվ քանի որ սուրբ Փոխանկլադի բանականությունը, մինչև որը ինքնակատարելագործվել էր Բեհեզգեբուղը, նույնպես շատ հազվադեպ է Տիեզերքում ապա նույնիսկ գերապատիվ հրեշտակապետը փռվեց Բեհեզգեբուղի առջև, որովհետև նա դեռ միայն Դեղինդադի¹³⁴ աստիճան ուներ, որը երեք աստիճանով ցածր էր սուրբ Անկլադի Բանականությունից:

Երբ բոլորը վերջապես ոտքի կանգնեցին, գերապատիվ հրեշտակապետը հավաքված տարաբնույթ էակներին դիմեց հետևյալ խոսքերով.

«Ո՛վ, էական է ր, որ արարվել եք Միասնական ԱՐԱՐՉԻ կողմից, մենք հենց նոր արժանացանք վկա լինելու նրա արտաքինի ավարտական ձևավորմանը, որը ինչպես այստեղ ներկա գտնվողների, այնպես էլ մեր մեծ Մեզալակոսմոսի ընդհանրապես բոլոր էակների նվիրական երազանքի առարկան է:

Ցնծանք և ուրախանա՛նք բոլորս միասին այսպիսի արժանիքի առթիվ, որը շատ կենարար խթան է մեր սեփական բացասական աղբյուրի դեմ պայքարելու այն ունակության համար, միայն որն էլ կարող է մեզ հասցնել սուրբ Փոխկուլադի աստիճանին, որին հասավ մեր ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐ գավակներից մեկը, որը թեև երիտասարդության շրջանում մեղանչել էր, բայց հետո, կարողացավ իր գիտակցական ջանքերի ու կամավոր տառապանքների շնորհիվ արժանանալ էականորեն դառնալու մեր Մեծ Տիեզերքի ամենահազվագյուտ Սրբազան Անհատականություններից մեկը»:

Հրեշտակապետի այս ոգեշունչ ճառից հետո Քարնակ տիեզերանավում գտնվող բոլոր էակներն առանց բացառության երգեցին նման դեպքերի համար նախատեսված «Ցնծում եմ...» հիմնը:

Երբ այդ սրբազան հիմնը երգվեց-վերջացավ, բոլոր հրեշտակներն ու քերովբեները գերապատիվ հրեշտակապետի գլխավորությամբ վերադարձան տիեզերական էգոլիոնոպտիայի մեջ, որը լքեց Քարնակ տիեզերանավը և աստիճանաբար չքացավ տարածության մեջ. դրանից հետո նավի ուղևորներն ու դեկավար կազմը սկսեցին ցրվել իրենց տեղերը, Քարնակ տիեզերանավը վերականգնեց իր անկումը դեպի վերջանական հանգրվան:

Վերը նկարագրված Համաշխարհային Մեծագույն Հանդիսության ավարտից հետո Բեհեզգեբուղն Իր թոռան և զառամյալ ծառա Ահուրնի հետ, որոնք Քարնակ տիեզերանավում տեղի ունեցած այդ անսպասելի իրադարձության արդյունքում մնացած ուղևորներից ոչ պակաս հուզված էին, վերադարձավ տիեզերանավի այն հատվածը, որտեղ կայացել էին Երկիր մոլորակում սկզբնավորվող և գոյատևող մարդկային էակներին վերաբերող իրենց բոլոր գրույցները:

Երբ արդեն Իր արժանիքներին համապատասխանող և բոլորի համար տեսանելի կերպարանափոխված տեսքով Բեհեզգեբուղը զբաղեցրեց իր սովորական տեղը, Ահուրն՝ Նրա զառամյալ ընկերը, որը միշտ Նրա կողքին էր եղել Նրա համարյա ամբողջ գոյատևման ընթացքում, հանկարծ բերանքսիվայր փռվեց Նրա առջև և հուզումնալից տոնով ասաց հետևյալը.

«Ո՛վ, սուրբ Փոխանկլադդ մեր Մեծ Մեզալակոսմոսի... Ողորմեա՛ և ներեա՛ զիս՝ տարաբախտ սովորական եռուղեղ էակիս, անցյալի իմ այն ոչ հարգալից դրսևորումների համար, որոնք կամա թե ակամա պատահեալ են առ Սուրբ Էություն Քո...»

Ողորմեա՛ և ներեա՛ զիս՝ եռուղեղ էակիս, որը թեև շա՛տ երկար է գոյատևել, սակայն, ի դժբախտություն իրեն, միայն այն պատճառով, որ նախապատրաստական տարիքում նրան ոչ ոք չի օգնել, որ նրա ներկայության մեջ նախադրյալներ բյուրեղանան եռանդուն կերպով *լինելիական պարտք-պարտականության կատարման* ունակություն զարգացնելու համար, մինչև այժմ այնքան կարճատև է մնացել, որ չի կարողացել իրականությունը տեսնել արտաքին ծածկույթի տակ, որով,

¹³³ ռուս. տարբերակում՝ Подкулад, անգլ. տարբերակում՝ Podkoolad

¹³⁴ ռուս. տարբերակում՝ Дегиндада, անգլ. տարբերակում՝ Degindad

համաձայն համատիեզերական Տրոգովտոնեգոկրատի, ծածկվում են Մեգալակոսմոսում գոյություն ունեցող և նոր կազմավորվող բոլոր առանձին միավորները, որոնք հարկ է, որ իրենց ներկայության մեջ ունենան այն սուրբ «ինչ-որ բանը», որը Բանականություն է կոչվում»:

Այսբանն ասելուց հետո Ահունը սառեց լուռ սպասողական վիճակում:

Իսկ Բեհեդգերուդը, նույնպես լուռ մնալով, նրան նայեց սիրով ու ներումով լի հայացքով, սակայն այդ հայացքում զգացվում էր նաև Նրա *Հաբուխ թախիծն* ու անփոփոխ խոնարհությունը:

Վերը նկարագրված տեսարանի ընթացքում Հասեինը մի կողմ քաշված կանգնել էր մի դիրքով, որն ամենուրեք կոչվում է Կերմակշան¹³⁵ մոլորակի Խառնածորութթառարան¹³⁶ անունով «նշանավոր համաշխարհային ճգնավորի դիրք»:

Եվ երբ որոշ ժամանակ անց Բեհեդգերուդն իր հայացքը դիտարձրեց Իր թոռան վրա և նրան տեսավ այդ դիրքով, շրջվեց նրա կողմը և հարցրեց.

– Այդ ի՞նչ է, զավա՛կս, միթե՞ քո ներկայության մեջ էլ է տեղի ունենում նույն բանը, ինչ մեր ծերուկ Ահունի ներկայությունում...

Բեհեդգերուդի այդ հարցին Հասեինն իր համար անսովոր անվստահ տոնով ամոթխածորեն պատասխանեց հետևյալը.

«Համարյա նույնը... Ո՛վ, Սուրբ Փոխանկլադդ մեր Մեծ Մեգալակոսմոսի. միայն այն տարբերությամբ, որ այս պահին ինչպես մեր Ահունի, այնպես էլ Երկիր մոլորակի եռուղեղ էակներին նկատմամբ սիրո ազդակը իմ ներսում ավելի ուժեղ է գործում:

Այդ սիրո ազդակն իմ ներսում ուժեղացել է հավանաբար այն պատճառով, որ ինձ թվում է, որ ինչպես Ահունը, այնպես էլ Երկիր մոլորակի եռուղեղ էակներն օգնեցին ինձ վերջերս վկան դառնալու Նրա Հաղթությանը, Ով իմ ծագման պատճառի պատճառն է, Որին մինչև հիմա սիրելի պապիկ էի անվանում, Որն արդեն բոլորի համար տեսանելի կերպով դարձավ մեր Մեծ Մեգալակոսմոսի սուրբ Փոխանկլադներին մեկը, Որի առջև բոլորը կխոնարհվեն և Որի առաջ կանգնած լինելու երջանկությունն ունեմ ես այս պահին»:

– Հա՛յ, հա՛յ, հա՛յ,– բացականչեց Բեհեդգերուդը և, Իր դեմքին այնպիսի արտահայտություն տալով, ինչպիսին Նա սովորաբար ունենում էր Երկրում Իր գտնվելու ընթացքում, ասաց.

«Նախ ես ուզում եմ նկատողություն անել Ահունի խոսքերի հետ կապված, որոնք իրեն հեշ բնորոշ չէին, և նրա բռնած դիրքի հետ կապված, որը նրա համար միանգամայն անսովոր է, ապա իմ ներսում ծագած միտքը ես կարտահայտեմ իմ կողմից հատուկ հարգված մոլլա Նասրեդինի ոճով: Մեր սիրելի ուսուցիչը նման դեպքում կասեր. «Իզուր տեղն արցունք մի՛ թափիր այն կոկորդիլոսի պես, որը քիչ էր մնացել բռնեք ձկնորսի ներքևի ձախ կեսը, բայց վրիպել է»:

Իսկ հիմա նստեք ամենքդ ձեր սովորական տեղում, և մի քիչ էլ զրուցենք:

Թեև մեր տիեզերանավն այժմ մուտք է գործում մեր Քարատակ մոլորակի մատույցները, սակայն, ինչպես սովորաբար լինում է, տիեզերանավերը նախ պետք է սպառեն ձեռք բերված իներցիան. ուրեմն դեռ շատ ժամանակ ունենք, մինչև որ այն կանգ կառնի իր վերջանական կայանատեղում»:

Հասեինն ու Ահունն անմիջապես լռելյայն հետևեցին Բեհեդգերուդի առաջարկին, թեև նրանց շարժումներից ու կիսաթափանցիկ ներքին հոգեկառույցներից ակներևաբար երևում էր, որ Բեհեդգերուդի անձի նկատմամբ նրանց հարաբերություններում նկատելի փոփոխություն է տեղի ունեցել վերը նկարագրված Համաշխարհային Ընդհանրական Իրադարձությունից հետո:

Երբ նրանք զբաղեցրին իրենց տեղերը, այնպես անկաշկանդ չնստեցին, ինչպես դա լինում էր նախկինում:

Այնուհետև Բեհեդգերուդը շրջվեց Հասեինի կողմը և ասաց.

«Նախ և առաջ, զավա՛կս, քեզ խոստանում եմ, որ երբ տուն վերադառնանք (եթե, իհարկե, դրան չխանգարի մեր Էությունից անկախ արտաքին պատճառներով տեղի ունեցած մի որևէ իրադարձություն), քո հետաքրքրությունը շարժած եռուղեղ էակների մասին ես քեզ կպատմեմ այն ամենը, ինչ Քարնակ տիեզերանավով մեր ճամփորդության ընթացքում քեզ խոստացել էի պատմել, բայց այս կամ այն պատճառով թողեցի չլուսաբանված:

¹³⁵ ռուս. տարբերակում՝ Кирманкшана, անգլ. տարբերակում՝ Kirmankshana

¹³⁶ ռուս. տարբերակում՝ Харнатулкпарарана, անգլ. տարբերակում՝ Harnatoolkpararana

Իսկ առայժմ, եթե հիմա այնպիսի հարց ունես, որի բացատրման կարիքը զգում ես, կարող ես հարցնել:

Մակայն նախազգուշացնում եմ, որ մենք բավականաչափ ժամանակ չունենք, որպեսզի ես պատասխանեմ այնպես, ինչպես սովորական էր դարձել անցած այս ամբողջ ժամանակի ընթացքում. ուստի հարցդ ձևակերպիր այնպես, որ իմ պատասխանը ևս հնարավորինս համառոտ լինի:

Նման հարց տալով՝ դու նույնիսկ կարող ես, ի դեպ, մեկ անգամ ևս ցույց տալ ինձ, թե որքան է աճել քո տրամաբանական մտածողությունը այն ամբողջ ընթացքում, երբ ես քեզ պատմում էի Երկիր մոլորակում սկզբնավորվող և գոյատևող եռուղեղ էակների արտառոց հոգեկառույցի մասին»:

Իր պապի այդ առաջարկի շուրջ Հասեինը խոր ու երկար մտածեց, որից հետո ոգևորությամբ ասաց հետևյալը.

«Ո՛վ սուրբ Փոխանկլադ և իմ ծագման պատճառի հիմնական պատճառ...

Քիչ առաջ տեղի ունեցած հանդիսությունից հետո, երբ Քո Սուրբ Էությունը հանդերձավորվեց համապատասխան տեսանելի հանդերձով, և դրանով իսկ բոլոր եռուղեղ էակների համար անիմանալին հստակ դարձավ և նույնիսկ ինձ համար զգալի, ինչպես և ցանկացած ուրիշ տիեզերական առանձին միավորի համար, բացի հենց Քեզնից, Քո արտաբերած ամեն մի խոսքը և Քո տված ամեն մի խորհուրդը ես ընկալում եմ որպես օրենք:

Ուստի ես իմ ամբողջ ներկայությամբ պետք է ձգտեմ կատարել այն, ինչ Դու ինձ հիմա առաջարկեցիր, և կջանամ որքան հանրավոր է լավ ու կարճ ձևակերպել իմ հարցը:

Ո՛վ, սուրբ Փոխանկլադ և իմ ծագման պատճառի ակտիվ պատճառ...

Որպեսզի այն համոզմունքները, որոնք իմ ներսում այս ամբողջ ընթացքում կազամավորվեցին Երկրում տեղի ունեցող անտրամալությունների վերաբերյալ Քո պատմածների շնորհիվ, կարողանան իմ ներսում ճշգրտորեն բյուրեղանալ, ես շատ եմ ուզում այս անգամ լսել նաև Քո անձնական ու անկեղծ կարծիքը հետևյալի մասին. Դու ի՞նչ պատասխան կտայիր, եթե, ասենք, ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱԹԱՓԱՆՑ ԱՐԱՐԻԶԸ Քեզ կանչեր ԻՐ մոտ և այսպիսի հարց տար Քեզ.

«Բեհեղգեբու՛ղ... Դու, որպես իմ բոլոր արարածների մեջ ամենականիսատեսված ու արագացված պտուղներից մեկը, արագորեն ի մի բեր Երկիր մոլորակում սկզբնավորվող եռուղեղ էակների հոգեկառույցի վերաբերյալ քո բազմադարյան անաչառ դիտումների և ուսումնասիրությունների հանրագումարը և պատասխան տուր ինձ. հնարավո՞ր է արդյոք ինչ-որ եղանակով փրկել նրանց և ուղղորդել հարկ եղած ուղով»...»:

Այսքանն ասելուց հետո Հասեինը տեղից վեր կացավ և, հարգալից դիրք ընդունելով, սպասողական հայացքը հառեց Բեհեղգեբուղին:

Ահունը նույնպես ոտքի ելավ:

Բեհեղգեբուղը սիրով լի ժպիտով սկզբում Հասեին այդ հարցի կապակցությամբ ասաց, որ Ինքն արդեն կատարելապես համոզված է, որ Իր պատմությունները Հասեինի համար ցանկալի արդյունքներ են տվել, որից հետո լուրջ տոնով ասաց, որ եթե մեր ՆՈՐԻՆ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱԹԱՓԱՆՑ ԱՐԱՐԻԶԸ Իրեն իսկապես կանչեր ԻՐ մոտ, ապա ՆՐԱ այդ հարցին Ինքը կպատասխաներ:

Հետո Բեհեղգեբուղը ևս հանկարծ անսպասելիորեն ոտքի կանգնեց և Իր աջ ձեռքը առաջ մեկնելով, իսկ ձախը՝ հետ, Իր հայացքն ուղղեց հեռավոր ինչ-որ տեղ. այնպիսի տպավորություն էր, թե Նա Իր այդ հայացքով թափանցում է տարածության խորքը:

Միաժամանակ «ինչ-որ բաց-դեղնավուն բան» սկսեց ուրվագծվել Բեհեղգեբուղի շուրջը և պարուրել Նրան. հնարավոր չէր հասկանալ կամ նկատել, թե որտեղից է առաջանում այդ ինչ-որ բանը. ոչ այն է՝ հենց Բեհեղգեբուղից, ոչ այն է՝ տարածության՝ Նրանից դուրս եղած աղբյուրներից:

Հայտնվելով բոլոր եռուղեղ էակների համար անըմնելի այդ տիեզերական գոյացության մեջ՝ Բեհեղգեբուղը, Իրեն ոչ բնորոշ բարձր ձայնով, չափազանց հուզումնալից ու երգային տոնով արտաբերեց հետևյալ խոսքը.

– Ո՛վ, իմ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆՆ ԱՄԵՆԱՅՆԻՎ... Այժմ Երկիր մոլորակի էակներին փրկելու միակ եղանակն այն կլինի, որ նրանց ներկայություններում ներդրվի նոր օրգան՝ կունդաբուֆերի նման, բայց այս անգամ այնպիսի հատկություններով, որ այդ դժբախտներից յուրաքանչյուրն իր գոյատևման ընթացքում մշտապես զգա ու գիտակցի իր սեփական մահվան

անխուսափելիությունը, ինչպես նաև բոլոր նրանց մահվան անխուսափելիությունը, որոնց վրա կանգ կառնի նրա հայացքը կամ ուշադրությունը:

Միայն այդպիսի զգացումը և այդպիսի գիտակցությունը կարող են հիմա ոչնչացնել ամբողջությամբ բյուրեղացված և նրանց ամբողջ էությունը կլանող եսասիրությունը և դրանից բխող ուրիշներին ատելու հակումը, որի վրա կառուցված են այնտեղ գոյություն ունեցող փոխհարաբերությունները, որոնք էլ այն բոլոր աննորմալությունների գլխավոր պատճառն են, աննորմալություններ, որոնք սազական չեն եռուղեղ էակներին և վնասակար են ինչպես հենց իրենց, այնպես էլ համայն Տիեզերքի համար:

ԲԵՇԵՂԵԲՈՒՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋԸ

Գլուխ ԽԸ Հեղինակի կողմից

Սեփական անձիս նկատմամբ անխնա վեցամյա աշխատանքից և համարյա անընդհատ լարված մտածողությունից հետո, երեկ վերջապես թղթի վրա ավարտեցի, իմ կարծիքով, ամենքին մատչելի այս շարադրանքը՝ նախապես կշռադատված և վեց տարի առաջ սկսած գրքերի երեք մասերից առաջինը, որոնցով մտադրվել էի զարգացող գաղափարների համակցության միջոցով, սկզբում՝ տեսականորեն, ապա՝ գործնականում, նմանապես նախատեսված և նախապատրաստված եղանակով, իրականություն դարձնել երեք էական խնդիրներ, որ դրել էի իմ առաջ. դրանք են՝ առաջին մասով մարդկանց ներսում ոչնչացնել նրանց սխալ պատկերացումն առ այն, ինչը կարծես թե գոյություն ունի իրականում, կամ, այլ խոսքերով ասած, «անխղճորեն դուրս թափել այն ամբողջ աղբը, որը դարերով կուտկվել է մարդկային մտածողության մեջ». երկրորդ մասով՝ նախապատրաստել, այսպես ասած, «նոր շինանյութ», և երրորդ մասով՝ «կառուցել նոր աշխարհ»:

Այժմ, ավարտելով գրքերիս առաջին մասը և հետևելով Երկրում վաղուց հաստատում գտած գործառությանը՝ երբեք ավարտին հասած ոչ մի մեծ, ինչպես ասում են, «ձեռնարկ» չթողնել առանց այն բանի, որը ոմանք վերջաբան են ասում, մյուսները՝ հետգրություն, երրորդները՝ «հեղինակի կողմից» և այլն՝ ես նույնպես մտադիր եմ նման մի բան գրի առնել այստեղ:

Դրա հետ կապված՝ այսօր առավոտյան ես շատ ուշադիր վերընթերցեցի վեց տարի առաջ գրած «Մտածողության արթանացում» վերնագրով իմ «նախաբանը», որպեսզի այնտեղից համապատասխան գաղափարներ քաղեմ, այսպես ասած, «տրամաբանորեն իրար կապելու» համար այնտեղի սկիզբն այստեղի վերջի հետ, ինչը հիմա մտադիր եմ գրել:

Այդ առաջին գլուխը կարդալիս, որը թեև գրել էի ընդամենը վեց տարի առաջ, բայց հիմա թվում էր, թե գրել եմ շատ վաղուց, իմ ներկայիս զգացողությամբ, որն ակներևաբար իմ ընդհանուր ներկայության մեջ հիմա ծագել է այն պատճառով, որ ամբողջ այս ընթացքում ստիպված եմ եղել լարված մտածել և նույնիսկ, կարելի է ասել, «վերապրել» այն ամբողջ նյութը, որը պահանջվում էր գետեղել ութ ստվարածավալ հատորներում (չէ՞ որ հինավուրց ժամանակներից մեզ հասած և ժամանակակից մարդկանցից ընդամենը մի քանիսին հայտնի ճշմարիտ գիտության այն բնագավառում, որն անվանվել է «մարդկային մտածողության նմանազգացական օրենքներ», իզուր չէ ասված, որ «ժամանակի հոսքի զգացողությունը ուղիղ համեմատական է մտքերի հոսքի որակին ու քանակին»), ինչպես արդեն ասացի, այդ առաջին գլուխը վերընթերցելիս ես այն համակողմանիորեն կշռադատեցի ու վերապրեցի բացառապես իմ «ես»-ից սեփական կամքով հրաժարվելու ազդեցության տակ, ընդ որում, դեռ ավելին, ես դա գրել էի մի այնպիսի ժամանակ, երբ իմ ամբողջականի գործունեությունը, որն ընդհանրապես մարդու ներսում ծնում է, այսպես կոչված, «սեփական նախաձեռնությամբ ինքնադսևորվելու կարողություն», ամբողջովին ապաներդաշնակացված էր, այսինքն՝ այնպիսի մի ժամանակ, երբ ես դեռևս ինձ չափազանց տկար էի զգում դրանից ոչ շատ

վաղուց ինձ հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով (իմ մեքենան, լրիվ արագությամբ սուրալով, «խոյահարել էր» աշխարհի մայրաքաղաք Փարիզն ու Ֆոնտենբլո քաղաքն իրար կապող պատմական ճանապարհին լուռումունջ կանգնած ծառը, որը կարծես լինե՞ր դարի անկանոն ռիթմով իր շուրջը կատարվող ամեն ինչի դիտորդի դերում (մի «խոյահարում», որը մարդկային առողջ հասկացողությամբ պետք է որ վերջ տար իմ կյանքին)), այդ առաջին գլուխը վերընթերցելիս իմ ներսում ծագեց միանգամայն որոշակի մի վճիռ:

Այդ գլուխը գրելու ժամանակ ունեցած իմ վիճակը հիշելով՝ ես չեմ կարող այստեղ չավելացնել (ևս մի փոքրիկ թուլության պատճառով, որ ես միշտ ներքին բավարարվածություն եմ զգում, հենց որ, այսպես կոչված, «ճշգրիտ գիտության ներկայացուցիչների» դեմքերին տեսնում եմ այն առանձնահատուկ, միայն իրենց բնորոշ ժպիտը), որ թեև իմ մարմինն այդ դժբախտ պատահարից հետո դարձել էր, ինչպես ասում են, «այնքան ջարդարված, և նրանում ամեն ինչ այնպես էր խառնշտորված», որ երկար ամիսներով այն նմանվում էր ամբողջական նկարի մի դրվագի, որը կարելի էր անվանել «կենդանի մսի կտոր մաքուր անկողնում», այնուհանդերձ, չնայած այդ վիճակին՝ իմ խիստ օրինապահ ու կարգապահ, ինչպես ասում են, «հոգին» նույնիսկ մարմնիս այդպիսի ֆիզիկական վիճակում բոլորովին ընկճված չէր, ինչպիսին պիտի լինե՞ր ըստ նրանց հասկացողության, այլ, ընդհակառակը՝ նրա ուժը նույնիսկ աճել էր վերընթաց խոյանքով, որն իմ ներսում ծագել էր այդ դժբախտ պատահարից անմիջապես առաջ, մարդկանցից, հատկապես, ինչպես ասում են, «գիտության նվիրյալներից» բազմաթիվ անգամ հիասթափվելուս, ինչպես նաև իմ մեջ մինչ այդ եղած այն գաղափարներից հիասթափվելուս պատճառով, որոնք իմ ընդհանուր ներկայության մեջ աստիճանաբար ձևավորվել էին՝ գլխավորապես շնորհիվ մանկությանս տարիներին դրսից ինձ հասած այն պատվիրանի, որը բարբառում է, թե «մարդու կյանքի բարձրագույն նպատակն ու իմաստը մերձավորի համար բարիք ստեղծելուն ձգտելն է», և թե դա հնարավոր է բացառապես միայն սեփական բարիքից գիտակցաբար հրաժարվելու գնով:

Եվ այսպես, այն բանից հետո, երբ ես շատ ուշադիր վերընթերցեցի առաջին մասի՝ հիշյալ պայմաններում գրված այդ ներածական գլուխը, և իմ հիշողության մեջ նմանազգացորեն վեր հանեցին հաջորդ մի շարք գլուխների հատվածները, որոնք, իմ համոզմամբ, ընթերցողի գիտակցության վրա պիտի անսովոր տպավորություն թողնեին՝ իրենց հերթին մշտապես, ինչպես ասում են, «տալով էական պտուղներ», ապա ես (կամ, ավելի ճիշտ, իմ ընդհանուր ներկայության այն գերիշխող մասը, որն այժմ ներկայանում է որպես այն արդյունքների հանրագումար, որոնք գոյացել են իմ կյանքի ընթացքում բյուրեղացված այն նախադրյալներից, որոնք ամեն ինչից զատ մարդու մեջ, որն ընդհանրապես իր առջև նպատակ է դրել իր պատասխանատու գոյատևման ընթացքում, այսպես ասած, «մտածել ակտիվ ու անաչառ», ծնում են տարբեր տեսակի մարդկանց հոգեկառույցների մեջ թափանցելու և դրանք հասկանալու կարողություն) որոշեցի, միաժամանակ դրդված լինելով իմ ներսում ծագած այն ազդակից, որը կոչվում է «սեր իր նմանների նկատմամբ», այս վերջաբանում այլևս ոչինչ չգրել առաջին մասի ընդհանուր նպատակի վերաբերյալ, այլ սահմանափակվել մեծ քանակ կազմող այն դասախոսություններից առաջինն այստեղ տեղաադրելով, որոնց պատճենները հիմա ինձ մոտ են և կարդացվել են իմ հիմնադրած «Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտ» կոչվող, հաստատության գոյության ընթացքում:

Այդ հաստատությունն, իմիջիայլոց, այլևս գոյություն չունի, և, որպեսզի հանգստացնեմ տարբեր երկրների որոշ տիպերի, ինչպես անհրաժեշտ, այնպես էլ տեղին եմ համարում հենց այստեղ մի անբեկանելի հայտարարություն անել առ այն, որ ես այն լուծարել եմ ամբողջովին և ընդմիշտ:

Որոշելով լուծարել այդ հաստատությունը և այն ամենը, ինչը կազմակերպվել և մանրակրկիտ նախապատրաստվել էր, որպեսզի հաջորդ տարում տարբեր երկրներում բացվեն դրա տասնութ բաժանմունքները, կարճ ասած՝ այն ամենը, ինչը նախկինում ես ստեղծել էի համարյա գերմարդկային ջանքերով, ես ինձ ճնշված էի զգում անպատմելի վշտի ու ընկճվածության ազդակով գլխավորապես այն պատճառով, որ հիշյալ դժբախտ պատահարից շատ չանցած՝ ընդամենը երեք ամիս անց, երբ իմ մտածողության նախկին սովորական գործունեությունն արդեն քիչ թե շատ վերականգնվել էր (թեև մարմնապես ես դեռ միանգամայն անուժ էի) ես հանգեցի այն մտքին, որ այդ հաստատության հետագա պահպանման փորձը (իմ կողքին իսկական մարդկանց բացակայությունից և առանց ինձ անհրաժեշտ նյութական միջոցներ հայթայթելու անհնարիությունից ելնելով) անխուսափելորեն կհանգեցնի աղետի, որի արդյունքը, ամեն ինչից զատ, ինչպես ասում են, ծերության տարիքում

«անբովանդակ կյանքը» կլինի ինչպես ինձ, այնպես էլ ամբողջովին ինձնից կախման մեջ գտնվող մյուսների համար:

Դասախոսությունը, որը մտադիր եմ որպես վերջաբան ներդնել այս առաջին մասի վերջում, մի անգամ չէ, որ կարդացել են իմ, ինչպես այն ժամանակ էին կոչվում, «առաջին կարգի աշակերտները», երբ հիշյալ հաստատությունը դեռ գործում էր: Իմիջիայլոց, ի անկեղծ դառնություն ինձ՝ հետագայում պարզվեց, որ նրանցից ոմանք իրենց էության մեջ հակում ունեն իրենց հոգեկառույցն արագորեն վերածելու տհասնամուսական կոչվող հոգեկառույցի. դա արտահայտվեց և միանգամայն ակնհայտ դարձավ նրանց շրջապատում եղած բոլոր քիչ թե շատ նորմալ մարդկանց համար, երբ հիշյալ դժբախտ պատահարի պատճառով հուսահատական ճգնաժամ առաջացավ նախկինում իմ ամբողջ ստեղծածում. նրանք, ինչպես ասում են, «դողալով իրենց կաշվի համար», այսինքն՝ վախենալով զրկվել անձնական բարեկեցությունից, որն, ի դեպ, ես էի ստեղծել նրանց համար, լքեցին ընդհանուր աշխատանքը և պոչները քաշելով փախան իրենց բները, որտեղ, օգտվելով իմ, այսպես ասած, «գաղափարական սեղանից» թոցրած փշրանքներից՝ բացեցին իրենց, ինչպես ես կասեի, «խաբեբայական կրպակները» և թաքուն հույսի ու, հանրավոր է, նույնիսկ ուրախության զգացումով, որ արագորեն ու ամբողջովին ազատվում են իմ մշտարթուն հսկողությունից, սկսեցին զանազան դժբախտ ու միամիտ մարդկանցից «գժանոցի թեկնածուներ» պատրաստել:

Ես հենց այս դասախոսությունն եմ այստեղ տեղադրում նախ և առաջ այն պատճառով, որ իմ կողմից կյանք ստացած գաղափարների տարածման ամենասկզբում այն հատուկ նախապատրաստվել էր այստեղ՝ Եվրոպա աշխարհամասում, որպեսզի որպես ներածություն կամ, այսպես ասած, նախադրու հանդիսանար հետագա դասախոսությունների ամբողջ շարքի համար, միայն որոնց համակցությամբ հնարավոր կլիներ բոլորի համար մատչելի ձևով պարզաբանել այն անառարկելի ճշմարտությունների գործնական կիրառության անհրաժեշտությունն ու նույնիսկ անխուսափելիությունը, որոնց բացահայտման ու հաստատման համար կես դար օր ու գիշեր աշխատել էի, ինչպես նաև ապացուցել մարդանց բարօրության համար այդ ճշմարտությունների կիրառման իրական հնարավորությունը. Իսկ երկրորդ պատճառն այն է, որ երբ այն հրապարակորեն վերջին անգամ կարդացվում էր, և ինձ բախտ էր վիճակվել ներկա լինելու այդ բազմամարդ հավաքությին, ես մի լրացում արեցի, որը, լրիվ համահունչ լինելով պարոն Բեհեդզեբուրդի արտահայտած այն թաքուն մտքին, որը դրված էր նրա, այսպես ասած, «ամփոփիչ ակորդում», և միաժամանակ մեկ անգամ ևս լուսաբանելով այդ մեծագույն ճշմարտությունը, իմ կարծիքով, հնարավորություն կտա, որ ընթերցողը ճիշտ ընկալի և յուրացնի այդ ճշմարտությունը, ինչպես վայել է այն էակին, որն իրեն ստեղծված է համարում «ըստ Աստծո պատկերի և նմանության»:

ԱՌԱՋԻՆ ԴԱՍՏԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մարդկային անհատականության դրսևորման

օրինաչափ բազմազանությունը

*(վերջին անգամ կարդացվել է Նյու-Յորքում,
Neighborhood Playhouse – ում, 1924 թ. -ի հունվար ամսին)*

Համաձայն անցած դարերի շատ գիտնականների հետազոտությունների և այն տվյալների, որոնք ներկայումս ստացված են Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտում պարոն Գյուրջինի համակարգով իրականացված կատարելապես բացառիկ հետազոտությունների արդյունքում, յուրաքանչյուր մարդու ամբողջ անհատականությունը (մարդկանց կյանքի ընթացքի այն օրենքներին ու պայմաններին համապատասխան, որոնք ի սկզբանե հաստատվել և ապա աստիճանաբար ամրապնդվել են Երկրում), ինչպիսի ժառանգականության արդյունք էլ որ նա լինի, և ինչպիսի պատահական շրջակա պայմաններով էլ նա շրջապատված լինի իր ծագման ու զարգացման ընթացքում, (միայն այն պայմանով, որ դրանք իրապես համապատասխան լինեն որպես մարդու, այլ ոչ թե պարզապես անասունի այդ գոյության իմաստին ու առաքելությանը), իր պատասխանատու գոյության հենց սկզբից անպայմանորեն պետք է բաղկացած լինի որոշակի չորս առանձին անձերից:

Այդ չորս ինքնուրույն անձերից առաջինը ոչ այլ ինչ է, եթե ոչ այն ինքնաբերական գործունեության համակցությունը, որը բնորոշ է ինչպես մարդուն, այնպես էլ բոլոր կենդանիներին, որոնց համար նախադրյալներ են ծառայում, նախ և առաջ՝ շրջապատի ամբողջ իրականությունից նախկինում ընկալված, ինչպես և միտումնավոր կերպով նրանց մեջ արհեստականորեն ներմուծված արդյունքների հանրագումարային տվյալները, և երկրորդ՝ նույնպես ամեն մի կենդանու բնորոշ, այսպես կոչված, «երազանքային» գործընթացի արդյունքները: Եվ մարդկանց մեծ մասն այդպիսի ինքնաբերական գործունեության այդ համակցությունն անվանում է «գիտակցություն» կամ, լավագույն դեպքում՝ «մտածողություն»:

Նշված չորս անձերից երկրորդը, որը մեծ մասամբ գործում է առաջինից անկախ, բաղկացած է մի կողմ դրված և ամրապնդված այն նախադրյալների արգասիքների հանրագումարից, որոնք ամեն մի կենդանու ընդհանուր ներկայությունն ընկալում է վեց զգայարաններով, որոնք կոչվում են «տարաբնույթ թրթիռների ընդունիչներ» և գործում են նոր ընկալված տպավորություններին համապատասխան, իսկ դրանց զգայությունը կախված է տվյալ անհատի ստացած ժառանգությունից և պատասխանատու գոյատևման նախապատրաստական կազմավորման պայմաններից:

Ամբողջ էակի երրորդ ինքնուրույն մասը նրա օրգանիզմի առաջնային գործունեությունն է, ինչպես նաև, այսպես կոչված, «*օրգանիզմում տեղի ունեցող շարժա-ռեֆլեկտորային փոխազդող դրսևորումները*», իսկ այդ դրսևորումների որակը նույնպես կախված է վերոհիշյալ ժառանգական արդյունքներից և նախապատրաստական կազմավորման հանգամանքներից:

Վերջապես, չորրորդ անձը, որը նույնպես ամբողջ անհատականության առանձին մասն է, ոչ այլ ինչ է, եթե ոչ թվարկված նախորդ երեք անձերի արդեն ինքնաբերական գործունեության այն արդյունքների համակցության դրսևորումը, որոնք նրա ներսում առանձին ձևավորում և ինքնուրույն դաստիարակվում են. այլ կերպ ասած՝ դա այն մասն է, որն էակի «ես» է կոչվում:

Մարդու ընդհանուր ներկայության մեջ նրա ամբողջությունը կազմող թվարկված երեք առանձին ձևավորված մասերի ոգեշնչման ու դրսևորման համար գոյություն ունեն ինքնուրույն, այսպես կոչված, «*ծանրակենտրոն տեղայնացումներ*». այդ ծանրակենտրոն տեղայնացումներից յուրաքանչյուրն իր սեփական համակարգով հանդերձ՝ իր ընդհանուր դրսևորման համար ունի իր սեփական առանձնահատկություններն ու նախատրամադրվածությունները, որոնք բնորոշ են միայն իրեն: Այդ իսկ պատճառով, որպեսզի հնարավոր լինի մարդու համակողմանի կատարելագործումը, բացարձակ պարտադիր է այնպիսի ճիշտ դաստիարակությունը, որը հատուկ համապատասխանում է այդ երեք մասերից յուրաքանչյուրին, այլ ոչ թե այնպիսի «մշակումը», ինչպիսին տրվում է մեր օրերում և նույնպես անվանվում «դաստիարակություն»:

Միայն այդ դեպքում է, որ «ես»-ը, որը մարդը պետք է ունենա, կարող է լինել նրա սեփական «ես»-ը:

Համաձայն արդեն նշածս լրջորեն կազմակերպված փորձարարական հետազոտությունների, որոնք անցկացվել են երկար տարիների ընթացքում, ասենք, համաձայն նույնիսկ ամեն մի ժամանակակից մարդու առողջ ու անկողմնակալ խորհրդածությունների (հատկապես այնպիսի մարդու, որն այս կամ այն պատճառով հավակնում է համարվել ոչ թե պարզապես սովորական մարդ, այլ, այսպես կոչված, «ինտելիգենտ»՝ այդ բառի ճշմարիտ իմաստով)՝ «ես»-ը անխուսափելիորեն պետք է բաղկացած լինի ոչ միայն թվարկված չորս, լիովին որոշակի առանձին անձերից, այլ նաև նրանցից յուրաքանչյուրն անպայման պետք է համապատասխան զարգացածություն ունենա, որպեսզի մարդու պատասխանատու գոյատևման շրջանում նրա ընդհանուր դրսևորումներին մասնակցող բոլոր առանձին մասերը հարկ եղած չափով ներդաշնակվեն իրար հետ:

Որպեսզի սպառիչ ու ակնհայտ ձևով լուսաբանվեն մարդու ընդհանուր կառույցում ի հայտ եկող անձանց ծագման տարբեր աղբյուրներն ու տարբեր որակները, ինչպես նաև այն տարբերությունը, որ կա այն, այսպես կոչված, «ես»-ի, որ պետք է լինի մարդու ընդհանուր կառույցում, և այն, այսպես կոչված, «ես»-ի միջև, որ պետք է լինի «*առանց չակերտների մարդու*» ընդհանուր ներկայության մեջ, այսինքն՝ իրական մարդու և, ինչպես ասվում է, «կեղծ ես»-ի միջև, որոնք մարդիկ սխալմամբ նույնացնում են, լավ կլինի մի համեմատական օրինակ ներկայացնենք: Չնայած ներկայացվող օրինակը ներկայիս սպիրիտուալիստները, թեոսոֆներն ու «պղտոր ջրերում ձուկ որսացող» մյուս նմանատիպ մասնագետներն, ինչպես ասում են, «մաշեցրել են մինչև վերջին թելը» այսպես կոչված, «մենտալ», «աստրալ» և այլ մարմինների մասին իրենց խոսակցություններով, որոնք իբր թե մարդիկ

ունեն, այնուհանդերձ բերվող օրինակը լիովին հարմար կգա, որպեսզի լույս սփռի քննարկվող հարցի վրա:

Մարդը՝ որպես ամբողջություն, իր բոլոր առանձին կենտրոնացված ու գործող տեղայնացումներով, այսինքն՝ իր բոլոր ձևավորված ու դաստիարակված «անձերով», համարյա տառացիորեն նման է ուղևորներ տեղափոխող այն կառույցին, որը բաղկացած է կառքից, ձիուց և կառապանից:

Նախ և առաջ պետք է նշել, որ սեփական «Ես» ունեցող իրական մարդու և սեփական «Ես» չունեցող մարդու միջև եղած տարբերությունը մեր բերած օրինակում արտահայտվում է կառքի մեջ նստած ուղևորի միջոցով: Առաջին դեպքում, այսինքն՝ երբ գործ ունենք իրական մարդու հետ, ուղևորը կառքի տերն է, իսկ երկրորդ դեպքում գործ ունենք պարզապես պատահական անցորդի հետ, որը ժամանակավոր է նստած կառքում, «կառք է վարձել» և շուտով իր տեղը կգիջի ուրիշին:

Մարդու մարմինն իր բոլոր շարժա-ռեֆլեկտորային դրսևորումներով համապատասխանում է կառքին, մարդու զգացմունքային ամբողջ գործունեությունն ու դրսևորումները համապատասխանում են ձիուն, կառքը լծողն ու այն քշող կառապանը, որն, իր նստատեղին նստած, ղեկավարում է ձիուն. մարդու մեջ այն է, որը մարդիկ գիտակցություն կամ մտածողություն են անվանում, և վերջապես, կառք նստած ուղևորը, որը հրամաններ է տալիս կառապանին՝ հենց այն է, որն անվանվում է «Ես»:

Ժամանակակից մարդկանց հիմնական դժբախտությունը գլխավորապես այն է, որ աճող սերնդի դաստիարակության արդեն արմատացած ու լայնորեն տարածված աննորմալ մեթոդների պատճառով այդ չորրորդ անձը, որը պետք է առկա լինի պատասխանատու տարիքին հասած յուրաքանչյուրի ներսում, լրիվ բացակայում է, և համարյա բոլորը բաղկացած են լինում միայն թվարկված երեք մասերից, դրան գումարած և այն, որ այդ մասերը ձևավորվում են իրենք իրենց համար կամայականորեն և ինչպես պատահի: Այլ կերպ ասած՝ պատասխանատու տարիքին հասած համարյա բոլոր ժամանակակից մարդիկ, ոչ ավել, ոչ պակաս, պարզապես «վարձու կառք» են, ընդ որում՝ հետևյալ կառույցով. «լավ օրերն անցած» ու ջարդրտված կառք, յաբու, իսկ նստատեղի վրա՝ թոկից փախած, կիսաքուն-կիսահարբած կառապան, որը Մայր Բնության կողմից ինքնակատարելագործման համար հատկացված ժամանակը վատնում է՝ երևակայական երազանքներին տրվելով, քանի դեռ սպասում է, թե անկյունից ինչ-որ պատահական ուղևոր կհայտնվի: Առաջին իսկ ուղևորը, որին վիճակվում է կողքով անցնել, իր ուզածի պես վարձում ու բաց է թողնում նրան, և ոչ միայն նրան, այլ նաև նրան ենթակա ամեն ինչը:

Շարունակելով ժամանակակից տիպական մարդուն և նրա մտքերը, զգացմունքներն ու մարմինը համեմատել վարձու կառքի ձիու և կառապանի հետ՝ մենք հստակ տեսնում ենք, որ այդ երկու կառույցները կազմող ամեն մի առանձին մասում պետք է ձևավորվեն ու առկա լինեն սեփական առանձին կարիքները, սովորությունները, ճաշակը և այլն, որոնք հատուկ են միայն իրեն: Նրանց ծագման տարբերությունների և ձևավորման իրարից տարբեր պայմանների պատճառով նրանցից ամեն մեկում անխուսափելիորեն պետք է ձևավորվեն, օրինակ՝ սեփական հոգեկառույց, սեփական հասկացողություն, սեփական սուբյեկտիվ հենակետեր, սեփական տեսակետներ և այլն՝ իրենց փոփոխվող հնարավորություններին համապատասխան:

Մարդկային մտածողության դրսևորումների ամբողջ համակցությունը՝ այդ գործունեությանը բնորոշ բոլոր հատկանիշներով և բոլոր առանձնակի յուրահատկություններով, բոլոր առումներով համարյա տառացիորեն համապատասխանում է տիպական վարձու կառապանի էությանն ու դրսևորումներին:

Ինչպես բոլոր վարձու կառապանները, դա մի տիպ է, որին կարելի է «սայլորդ» անվանել: Նա այնքան էլ անգրագետ չէ, քանի որ, համաձայն իր երկրում գործող «համընդհանուր տարրական կրթության մասին» օրենքի, մանուկ հասակում ստիպված է եղել հաճախել, այսպես կոչված, «եկեղեցական ծխական դպրոցը»:

Թեև գյուղից է դուրս եկել և մնացել է նույնքան տգետ, որքան իր համագյուղացիները, սակայն իր մասնագիտության բերումով շփվելով տարբեր դիրք ու դաստիարակություն ունեցող մարդկանց հետ և նրանցից փոխառնելով մի քանի տարբեր հասկացությունների արտահայտություններ՝ նա հիմա սկսել է գյուղական ամեն ինչին նայել վերևից ու արհամարհանքով՝ երեսը վրդովմունքով շրջելով այդ ամբողջ «տգիտությունից»:

Կարճ ասած՝ դա մի տիպ է, որին շատ հարմար է գալիս հետևյալ բնորոշումը. «Ագռավներից փախավ, սիրամարգներին չհասավ»:

Նա իրեն գիտակ է համարում կրոնի, քաղաքականության և սոցիոլոգիայի հարցերում, իրեն հավասարների հետ սիրում է վիճել, իրենից ցածրերին՝ խելք սովորացնել, իրենից բարձրներին հաճկատարորեն քծնել, նրանց առջև, ինչպես ասում են, «գլուխ ծռել»:

Նրա գլխավոր թուլություններից մեկը հարևան խոհարարուհիների ու սպասուհիների շուրջը պտտվելն է, բայց ամենից շատ նա սիրում է լավ ու կուշտ ուտել և մի երկու բաժակ գլուխը քաշել, որպեսզի մի լավ կշտանալուց հետո քունը գլխին երազանքների գիրկն ընկնի:

Իր այդ թուլությունները բավարարելու համար նա միշտ յուրացնում է այն փողի մի մասը, որը տեղը տալիս է, որպեսզի ձիերի համար կեր գնի:

Ինչպես ամեն մի «սայլորդ», նա միշտ աշխատում է, ինչպես ասում են, «ճիպոտի տակ», և եթե անգամ պատահաբար ինչ-որ բան անում է ոչ ստիպողաբար, ապա միայն թեյավճար ստանալու հույսով:

Թեյավճար ստանալու ցանկությունն աստիճանաբար նրան սովորեցրել է որոշ թուլություններ տեսնել այն մարդկանց մոտ, որոնց հետ գործ է ունենում, և դրանցից օգտվելով՝ նա ինքնաբերաբար սովորել է խորամանկել, քծնել, այսպես ասած, «յուղել» մարդկանց և ընդհանրապես խաբել:

Ամեն մի հարմար առիթով կամ ազատ ընկալելով նա թոչնու է խորտկարան կամ գարեջրատուն, որտեղ մի բաժակ գարեջրի շուրջ ժամերով երազում կամ զրուցում է իր նման որևէ տիպի հետ կամ էլ պարզապես թերթ է կարդում:

Նա ուզում է ազդեցիկ երևալ. մորուք է պահում և, եթե նիհար է, մարմնի շուրջը բարձիկներ է դնում, որպեսզի ավելի կարևոր անձ թվա:

Մարդու զգացմունքների տեղայնացման դրսևորումների համակցությունն ու դրա գործունեության ամբողջ համակարգը մեր բերած օրինակում համապատասխանում է վարձու կառքի ձիուն:

Ի դեպ, ձիու և մարդու զգացմունքային կառույցի այս համեմատությունը կօգնի, որ առանձնապես հստակ երևա աճող սերնդի ժամանակակից դաստիարակության սխալականությունն ու միակողմանիությունը:

Ձին՝ որպես ամբողջություն, երիտասարդ տարիներին արհամարհված և մշտապես միայնակ լինելու պատճառով ասես փակվել է իր ներսում. այսինքն՝ այսպես ասած, «ներքին կյանքը» դեպի ներս է քշվել, և արտաքին դրսևորումների համար նա ոչինչ չունի՝ բացի իներցիայից:

Շրջապատի աննորմալ պայմանների բերումով, ձին երբեք ոչ մի հատուկ դաստիարակություն չի ստացել, այլ կազմավորվել է բացառապես մշտական ծեծի ու կեղտոտ հայիոյանքների ազդեցության տակ:

Նրան միշտ կապված են պահել. իսկ ինչ վերաբերում է կերին, ապա վարսակի ու խոտի փոխարեն նրան միայն ծղոտ են տալիս, ինչը բոլորովին չի բավարարում նրա իրական պահանջմունքները:

Երբեք իր նկատմամբ մի քիչ սեր կամ բարյացակամություն չտեսնելով՝ ձին հիմա պատրաստ է ամբողջությամբ տրվելու ցանկացածին, ով իրեն մի փոքր կփաղաքշի:

Այդ ամենի հետևանքը այն է, որ ցանկացած հետաքրքրություններից ու ձգտումներից զրկված ձիու բոլոր հակումներն անխուսափելիորեն կենտրոնանում են միայն կերի, ջրի և հակառակ սեռի ինքնաբերական քաշող ուժի վրա, ուստի և նա անխուսափելիորեն շրջվում է դեպի այն կողմը, որտեղ դրանցից որևէ մեկը կարող ստանալ: Եթե, օրինակ, նրա աչքով է ընկնում այն տեղը, որտեղ մի երկու անգամ նա բավարարել է թվարկված պահանջմունքներից որևէ մեկը, ապա հարմար առիթ է փնտրում, որ անմիջապես վազի այդ տեղի ուղղությամբ:

Այնուհետև հարկ է ավելացնել, որ թեն կառապանը շատ թույլ պատկերացումներ ունի իր պարտականությունների վերաբերյալ, այնուհանդերձ կարող է թեկուզ մի քիչ տրամաբանելով մտածել, և, մտածելով վաղվա օրվա մասին, նա կամ աշխատանքը կորցնելու վախից, կամ պարզևստորում ստանալու ցանկությամբ երբեմն հետաքրքրություն է ցուցաբերում տիրոջ համար առանց ստիպելու ինչ-որ բան անելու նկատմամբ. բայց ձին այն բանի հետևանքով, որ հարկ եղած ժամանակ նրա ներսում, համապատասխան հատուկ դաստիարակություն չստանալու պատճառով, ընդհարապես ոչ մի նախադրյալ չի ձևավորվել պատասխանատու գոյատևման համար անհրաժեշտ ձգտումներ դրսևորելու համար, իհարկե, չի հասկանում (ըստ էության, նման բանի ակնկալիք չենք

կարող ունենալ), թե ինչու ընդհանրապես այս կամ այն բանը պետք է անի. հետևաբար նա իր պարտականությունները կատարում է բացառապես անտարբեր և միայն ծեծ ուտելու վախից:

Ինչ վերաբերում է որպես փոխադրամիջոց ծառայող կառքին, որը մեր օրինակում համապատասխանում է մարմնին՝ առանց մարդու ընդհանուր ներկայության մնացած բոլոր ինքնությունը ձևավորված մասերի, ապա վիճակն այստեղ ավելի վատ է:

Այդ սայլը բոլոր սայլերի պես պատրաստված է տարբեր նյութերից, և, դրան գումարած, ունի շատ բարդ կառուցվածք:

Այն նախատեսված է եղել, ինչպես ակնհայտ է ցանկացած առողջ դատող մարդու համար, որ տարատեսակ բեռներ տեղափոխի, այլ ոչ թե այն նպատակով, որով այն օգտագործում են ժամանակակից մարդիկ՝ ծառայացնելով միայն ուղևորներ փոխադրելու գործին:

Դրա հետ կապ ունեցող զանազան թյուրիմացությունների գլխավոր պատճառը ծագել է այն բանից, որ այդ սայլի համակարգը ստեղծողներն այն նախատեսել են գյուղամիջյան ճանապարհներով քշելու համար, և, հետևաբար, դրա ընդհանուր կառուցվածքի մի քանի ներքին դետալներ հեռատեսորեն այնպես են սարքել, որ հարմարվեն հենց այդ նպատակին:

Վերցնենք, ասենք, յուղման սկզբունքը՝ տարբեր նյութերից պատրաստված այդպիսի կառուցվածքի գլխավոր պահանջներից մեկը., որը մշակվել է այնպես, որ այդպիսի ճանապարհներին անխուսափելի ցնցումներից առաջացած թափահարումից յուղվեն փոխադրամիջոցի բոլոր մետաղական մասերը, մինչդեռ գյուղամերձ ճանապարհների համար նախատեսված այդ փոխադրամիջոցը հիմա վերածվել է քաղաքային և ընթանում է հարթ, ասֆալտապատ ճանապարհներով:

Այդպիսի ճանապարհների վրա ցնցումների իսպառ բացակայության պատճառով փոխադրամիջոցի բոլոր մասերի հավասարաչափ յուղում տեղի չի ունենում, և, հետևաբար, դրանցից որոշներն անխուսափելիորեն ժանգոտվում և դադարում են ծառայել իրենց համար նախատեսված գործին:

Որպես կանոն՝ սայլը հեշտ է ընթանում, եթե դրա շարժական մասերը հարկ եղած չափով յուղվում են: Երբ յուղը չափազանց քիչ է լինում, այդ մասերը տաքանում ու շիկանում են՝ հասնելով կարմրելու աստիճանին, և այդպիսով փչանում են մնացած մասերը. մյուս կողմից՝ եթե ինչ-որ մասում յուղը շատ է լինում, ապա դա խանգարում է սայլի ընդհանուր շարժմանը. երկու դեպքում էլ ձիու համար դժվարանում է այն իր հետևից քաշելը:

Ժամանակակից կառապանը, «սայլորդ» լինելով, չգիտի և չի էլ կասկածում, որ սայլը պետք է յուղել, և եթե անգամ յուղում է, ապա դա անում է առանց հարկ եղած գիտելիքի՝ ուղղակի լսածով, կուրորեն հետևելով առաջին պատահածի ցուցումներին:

Ահա թե ինչու այդպ սայլը, որն արդեն քիչ թե շատ հարմարեցվել է հարթ ճանապարհներին և այս կամ այն պատճառով ստիպված է լինում շարժվել որևէ գյուղամիջյան ճանապարհով, միշտ ինչ-որ վատ բանի է ռաստ գալիս. կա մ ամենեկն է տեղից թռչում, կա մ հեղույսն է ծովում, կա մ էլի ինչ-որ մաս է տեղահան լինում. և այդպիսի ճանապարհներով երթևեկելու փորձից հետո սայլը հազվադեպ է փրկվում քիչ թե շատ նշանակալից վերանորոգման ենթարկվելուց:

Ամեն դեպքում, այլևս հնարավոր չէ անվտանգ օգտվել այդ սայլից այն նպատակներով, որոնց համար այն ստեղծվել է: Եթե սկսվի վերանորոգման գործը, ապա հարկ կլինի ամբողջ սայլը քանդել, զննել բոլոր մասերը և, ինչպես նման դեպքերում արվում է, դրանք լվանալ կերոսինի մեջ, մաքրել ու նորից հավաքել. շատ հաճախ պարզ է դառնում, որ պետք է անհապաղ փոխել ինչ-որ մաս: Եթե դա էժան մաս է, էլի բան է, բայց երբեմն դա կարող է ավելի թանկ նստել, քան նոր սայլ գնելը:

Այսպիսով, վարձու կառքի առանձին մասերի վերաբերյալ ամբողջ ասվածը լրիվ կիրառելի է նաև մարդու ընդհանուր ներկայության ամբողջ կառույցի նկատմամբ:

Քանի որ ժամանակակից մարդիկ գուրկ են գիտելիքներից և հարկ եղած ձևով աճող սերնդին իր պատասխանատու գոյատևմանը հատուկ նախապատրաստելու կարողությունից՝ նրանց ընդհանուր ներկայության բոլոր առանձին մասերը դաստիարակելու առումով, ապա ժամանակակից մարդը իրենից ներկայացնում է ինչ-որ խառնակ ու չափազանց անհեթեթ մի բան, և եթե օգտվենք մեր վերցրած օրինակից, ապա այսպիսի պատկեր ենք ունենում:

Գործարանից հենց նոր դուրս է եկել ամենավերջին մակնիշի մի կառք, որին փայլ են հաղորդել Բարմեն քաղաքի իսկական գերմանացի վարպետները, իսկ նրան լծվել է Անդրկովկաս կոչվող վայրից

բերված «Տկլոզի ձի»¹³⁷ (Տկլոզը այն հայի անունն է, որը մասնագիտացել է լրիվ հալից ընկած ձիեր առնելու և նրանց կաշին քերթելու գործում):

Այդ նորաձև կառքի նստիքին նստած է անթրաշ, փնթի ու քնահարամ կառապան-սայլորդը, որն ուսերին է գցել աղբակույտի միջից գտած, արդեն քրքրված մի քուրք, որը, որպես լրիվ անպետք բան, աղբանոց է նետել խոհարարուհի Մանուշկան: Գլխին վեր է գցվել նոր, ասեղի ծայրից հենց նոր թռած մի ցիլինդր՝ ճիշտ Ռոկֆելլերի ունեցածի պես, իսկ լամբակը զարդարում է մի խոշոր քրիզանթեմ:

Ժամանակակից մարդու այս նկարագիրը, չնայած իր ամբողջ անհեթեթությանը, անխուսափելի արդյունք է գլխավորապես այն պատճառով, որ ժամանակակից մարդու ծագման ու կազմավորման հենց առաջին օրից նրա ներսում ձևավորվող այդ երեք մասերը (թեև դրանք ունեն ծագման տարբեր պատճառներ և տարբեր որակային հատկություններ, այնուհանդերձ նրա պատասխանատու գոյության ընթացքում պարտավոր լինելով միասնական մի նպատակի հասնելու՝ այդ երեքը միասին կազմում են նրա ամբողջությունը) սկսում են, այսպես ասած, «ապրել» և իրենց առանձնահատուկ դրսևորումներով ամրապնդել իրարից առանձին, քանի որ երեքը նրանց չեն ասել ո՛չ ինքնաբերական փոխօժանդակության անհրաժեշտության, ո՛չ փոխօգնության, ո՛չ էլ գոնե մոտավոր փոխըմբռնման մասին, այնպես որ, երբ հետագայում համաձայնեցված դրսևորումների կարիք է զգացվում, դրանք ի հայտ չեն գալիս:

Այսպես կոչված, «աճող սերնդի դաստիարակության համակարգի» շնորհիվ, որն արդեն ամբողջովին ամրապնդվել է ժամանակակից մարդու կյանքում՝ բաղկացած լինելով ընդամենը այն բանից, որ աշակերտներին «գիտակցությունը կորցնելու աստիճան» անընդհատ կրկնելու միջոցով սովորեցնում են հասկանալ զանազան իմաստագուրկ բառեր ու արտահայտություններ և դրանց հնչողության սոսկ մեկ տարբերությամբ ճանաչել այն իրականությունը, որն իբր նշանակում են այդ բառերն ու արտահայտությունները, կառապանը դեռևս ի վիճակի է ինչ-որ կերպ բացատրելու իր ներսում առաջացած տարբեր ցանկությունները, բայց միայն այն տիպերին, որոնց ընդհանուր ներկայության արտաքին տեսքը նման է իր ունեցածին, և երբեմն էլ նույնիսկ կարողանում է մի կերպ հասկանալ ուրիշներին:

Մեր այս կառապան-սայլորդը, ուղևորի սպասելու ընթացքում բամբասելով ուրիշ կառապանների հետ և երբեմն էլ, ինչպես ասում են, դարպասի մոտ «սիրաբանելով» հարևանի սպասուհու հետ , նույնիսկ ինչ-որ չափով, այսպես կոչված, «վարվեցողություն» է սովորում:

Իմիջիայլոց, ընդհանրապես կառապանների կյանքի արտաքին պայմաններին համապատասխան՝ նա նաև աստիճանաբար մեքենայացվում է այնքան, որ փողոցներն իրարից տարբերում է, և, օրինակ, երբ որևէ փողոց վերանորոգվում է, նա կարողանում է «գցել-բռնել», թե պետք եղած փողոցն ինչպես հասնի մի ուրիշ կողմից:

Բայց ինչ վերաբերում է ձիուն, ապա թեև ժամանակակից մարդկանց՝ դաստիարակություն կոչված կործանարար գյուտը նրա ձևավորման վրա չի տարածվում, և հետևաբար ժառանգաբար ստացած նրա հնարավորությունները հետո՞ւ չեն ապրում, այնուհանդերձ այն պատճառով, որ այդ ձևավորումն ընթանում է մարդկանց սովորական գոյատևման գործընթացի հաստատված աննորմալ պայմաններում, ձին մեծանում է բոլորի կողմից անտեսված որբի պես, դեռ ավելին՝ մի որբի պես, որին բոլորը հալածում են, և ձեռք չի բերում ոչ մի բան, որ համապատասխաներ կառապանի կայացած հոգեկառույցին, և չի սովորում նրա իմացածից որևէ բան. ուստի և նա բոլորովին անտեղյակ է փոխհարաբերությունների այն բոլոր ձևերին, որոնք սովորական են դարձել կառապանի համար, և այդ ամենի արդյունքում նրանց միջև իրար հասկանալու որևէ կապ չի հաստատվում:

Հնարավոր է, սակայն, որ ձին իր փակ կյանքի ընթացքում վարժվի կառապանի հետ հարաբերության ինչ-որ մի ձևի. հնարավոր է նույնիսկ, որ դրա համար նրան հայտնի է ինչ-որ մի «լեզու». բայց ամբողջ դժբախտությունն այն է, որ կառապանը դա չգիտի և նույնիսկ կասկածներ չունի այդպիսի հնարավորության վերաբերյալ:

Այն բանից զատ, որ հիշյալ աննորմալ պայմանների բերումով ձիու և կառապանի միջև որևէ նախադրյալ չի գոյանում գոնե մոտավոր կերպով իրար հասկանալու համար, կան նաև նրանցից կախում չունեցող ուրիշ շատ արտաքին պատճառներ, որոնք նրանց հնարավորություն չեն տալիս

¹³⁷ ռուս. տարբերակում՝ дгложидзи, անգլ. տարբերակում՝ dglozidzi

համատեղ իրականացնելու այն միասնական նպատակը, որի համար նախատեսված են այդ երկուսն էլ:

Բանն այն է, որ ճիշտ այնպես, ինչպես իրար են միացված «վարձու կառքի» առանձին մասերը, այն է՝ կառքը ձիու հետ՝ առեղներով, իսկ ձին կառապանի հետ՝ սանձով, նույն կերպ էլ իրար են միացված մարդու զգացմունքների ընդհանուր կառույցի առանձին մասերը՝ արյունով, իսկ զգացմունքների կառույցը մտածողության կամ գիտակցության գործունեությունն ապահովող կառույցի հետ՝, այսպես կոչված, «համբարձոյնի» միջոցով, այսինքն՝ այն նախանյութի միջոցով, որը մարդու ընդհանուր ներկայության մեջ առաջանում է նրա բոլոր միտումնավոր կերպով գործադրած *լինելիական ճիգերի* արդյունքում:

Ներկայումս գոյություն ունեցող դաստիարակության ոչ ճիշտ համակարգը հանգեցրել է այն բանին, որ կառապանը դադարել է որևէ ազդեցություն ունենալ իր ձիու վրա, եթե չհաշվենք այն, որ սանձերը ձգելու միջոցով նա ձիու գիտակցության մեջ կարողանում է ընդամենը երեք գաղափար խցկել՝ աջ թեքվել, ձախ թեքվել և կանգ առնել:

Խստորեն ասած, նա նույնիսկ դա՝ չի կարողանում միշտ անել, քանի որ սանձերը սովորաբար այնպիսի նյութերից են պատրաստված լինում, որոնք արձագանքում են զանազան մթնոլորտային երևույթներին. օրինակ՝ հորդառատ անձրևից հետո դրանք ուռչում են, իսկ շոգ եղանակին, ընդհակառակը, սկսում՝ դրանով իսկ փոխելով իրենց ազդեցությունը ձիու ընկալումների ինքնաբերական զգայնության վրա:

Միջին մարդու ընդհանուր կառույցում նույն բանն է տեղի ունենում ամեն անգամ, երբ այս կամ այն տպավորության ազդեցությամբ նրա ներսում համբարձոյնի, այսպես ասած, «խտությունն ու ռիթմը» փոխվում են, և երբ նրա մտքերն ամբողջությամբ կորցնում են զգացմունքային կառուցվածքի վրա ազդելու ամեն մի հնարավորություն:

Այսպիսով, ամփոփելով ամբողջ ասվածը՝ ստիպված ենք լինում կամա-ակամա ընդունելու, որ ամեն մարդ պետք է ձգտի ունենալ իր սեփական «Ես»-ը. այլապես նա միշտ կլինի այն վարձու կառքի պես, որը կարող է վարձել ցանկացած ուղևոր և այն տնօրինել այնպես, ինչպես խելքին կփչի:

Եվ այստեղ անտեղի չի լինինշել, որ պարոն Գյուրջիևի համակարգով կազմակերպված՝ Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտի հիմնական խնդիրների շարքում խնդիր է դրված նաև մի կողմից՝ համապատասխանաբար դաստիարակել աշակերտների ինչպես վերը թվարկված ինքնուրույն անձերն առանձին-առանձին, այնպես էլ դրանց ընդհանուր փոխհարաբերությունները, և մյուս կողմից՝ ամեն մի աշակերտի ներսում ծնեցնել և աճեցնել այն, ինչը հարկ է, որ ունենա «առանց չակերտների մարդ» կոչվող յուրաքանչյուր ոք՝ սեփական «Ես»-ը:

Որպեսզի առավել ճշգրիտ, այսպես ասած, գիտականորեն որոշվի այն տարբերությունը, որը կա իսկական մարդու և այնպիսի մարդու միջև, որին մենք անվանեցինք «չակերտավոր մարդ» և ինչպիսին դարձել են համարյա բոլոր ժամանակակից մարդիկ, տեղին կլինի կրկնել այն, ինչ մի անգամ այդ մասին ասել է ինքը՝ պարոն Գյուրջիևը, իր «գրույց-դասախոսություններից» մեկի ժամանակ.

«Մեր տեսանկյունով դիտարկվող մարդու բնորոշումը տալու պարագայում նրա մարդակազմական, ֆիզիոլոգիական կամ հոգեբանական հայտանիշներին վերաբերող ժամանակակից գիտելիքներին տիրապետելը մեզ օգնել չի կարող, քանի որ դրանք այս կամ այն չափով հատուկ են բոլոր մարդկանց, և, հետևաբար, հավասարապես կիրառելի են բոլորի նկատմամբ: Ուստի դրանք մեզ հնարավորություն չեն տալիս ճշգրիտ տեսնելու մարդկանց միջև առկա այն տարբերությունը, որը մենք ուզում ենք բնորոշել: Այդ տարբերությունը կարող է ձևակերպվել միայն հետևյալ կերպ.

«Մարդը մի էակ է, որը կարող է ինչ-որ բան «անել», իսկ «անել»՝ նշանակում է գործել գիտակցաբար և սեփական նախաձեռնությամբ»:

Եվ իսկապես, ամեն մի քիչ թե շատ առողջ մտածողության տեր մարդ, որն ունակ է թեկուզ մի փոքր օբյեկտիվ լինելու, պետք է ընդունի, որ մինչև հիմա չի եղել և չի էլ կարող լինել դրանից ավելի ամբողջական բնորոշում:

Եթե մենք այդ բնորոշումը մենք ընդունենք թեկուզ պայմանականորեն, ապա անխուսափելիորեն կծագի հետևյալ հարցը. «Ժամանակակից քաղաքակրթության պտուղ հանդիսացող մարդը կարո՞ղ է արդյոք գիտակցորեն և իր կամքով ինչ-որ բան անել»:

Այդ հարցին մենք անմիջապես պատասխանում ենք՝ ոչ:

Ինչու՞ ...

Այն միակ պատճառով, որ, ինչպես փորձերի հիման վրա համոզիչ կերպով ապացուցվել է Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտում, ժամանակակից մարդու պարագայում ամենայն ինչը՝ սկզբից մինչև վերջ, արվում է, իսկ ինքը՝ ժամանակակից մարդը, բացարձակապես ոչինչ չի անում:

Անձնական, ընտանեկան, հասարակական կյանքում, քաղաքականության, գիտության, արվեստի, փիլիսոփայության, կրոնի, կարճ ասած՝ բոլոր բնագավառներում, որոնք ժամանակակից մարդու սովորական կյանքի գործընթացի մաս են կազմում՝ սկզբից մինչև վերջ ամեն ինչը արվում է, իսկ «ժամանակակից քաղաքակրթության գոհերից» և ոչ մեկը որևէ բան «անել» ուղղակի չի կարող:

Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտում փորձնականորեն ապացուցված այս կտրուկ պնդումը, որ սովորական մարդը ոչինչ անել չի կարող, և ամեն ինչը արվում է նրա ներսում և նրա միջոցով՝ հաստատում է ժամանակակից «ճշգրիտ պոզիտիվ գիտությունը»:

Ժամանակակից «ճշգրիտ պոզիտիվ գիտությունը» պնդում է, որ մարդը շատ բարդ օրգանիզմ է, որն էվոյուցիայով զարգացել է պարզագույն օրգանիզմներից և հիմա ունակ է դարձել շատ բարդ կերպով արձագանքելու արտաքին տպավորություններին: Մարդու արձագանքելու այդ ունակությունն այնքան բարդ է, իսկ նրա պատասխան քայլերն էլ կարող են այնքան հեռու լինել դրանք ծնող ու պայմանավորող պատճառներից, որ մարդու գործողությունները, կամ, ծայրահեղ դեպքում, դրանց մի մասը, միամիտ դիտողին կարող են թվալ կատարելապես կամայական:

Իսկ համաձայն պարոն Գյուրջինի գաղափարների՝ միջին մարդն իրականում ունակ չէ ոչ մի, թեկուզ փոքր, ինքնուրույն կամ ինքնակամ գործողության կամ բառի: Նա ամբողջովին ընդամենը արտաքին ազդեցության արդյունք է: Մարդն ընդամենը փոխակերպող մեքենա է՝ յուրատեսակ ուժավոխանցիչ կայան:

Այսպիսով, պարոն Գյուրջինի գաղափարների համակցության տեսանկյունից, ինչպես նաև համաձայն ժամանակակից «ճշգրիտ պոզիտիվ գիտության» պնդումների՝ մարդը կենդանիներից տարբերվում է միայն արտաքին տպավորությունների նկատմամբ իր արձագանքների ավելի մեծ բարդությամբ և համապատասխան բարդ կառույցով, որով ընկալում է այդ տպավորությունները և արձագանքում դրանց:

Իսկ ինչ վերաբերում է մարդուն վերագրվող, այսպես կոչված, «կամքին», ապա պարոն Գյուրջինը լրիվ բացառում է միջին մարդու ընդհանուր ներկայությունում դրա առկայության հնարավորությունը:

Կամքը որոշակի հատկությունների արդյունքների որոշակի համակցություն է, որը հատուկ մշակվում է այն մարդկանց ներսում, որոնք կարող են ինչ-որ բան անել:

Իսկ միջին մարդկանց ներկայություններում առկա այն, ինչ կամք է ավանվում, բացառապես սոսկ ցանկությունների վերջնական արգասիքն է:

Իրական կամքը շատ բարձր աստիճանի Լինելիության նշան է, եթե համեմատելու լինենք սովորական մարդու Լինելիության հետ: Եվ ինչ-որ բան անել կարող են միայն այն մարդիկ, որոնք օժտված են այդպիսի Լինելիությամբ:

Մնացած բոլոր մարդիկ պարզապես արտաքին ուժերով շարժման մեջ դրվող ավտոմատներ են՝ մեքենաներ կամ մեխանիկական խաղալիքներ, որոնք գործում են այնքան ժամանակ, քանի դեռ լարված է շրջակա պատահական պայմանների կողմից նրանց ներսում տեղադրված «գսպանակը», որը չի կարող ո՛չ երկարել, ո՛չ կարճանալ, ո՛չ էլ ուրիշ ինչ-որ կերպ փոփոխության ենթարկվել սեփական նախաձեռնությամբ:

Եվ այսպես, ընդունելով, որ մարդը հսկայական հնարավորությունների է տիրապետում, մենք ժխտում ենք որպես ինքնուրույն միավորի նրա արժեքավորությունը, քանի դեռ նա կմնա այնպիսին, ինչպիսին ներկայումս կա:

Միջին մարդու ներսում կամքի լիակատար բացակայության փաստը հաստատելու նպատակով ես այստեղ կավելացնեմ հենց իր՝ պարոն Գյուրջինի մի ուրիշ դասախոսությունից մի հատված, որտեղ նա գունդ կերպով նկարագրում է մարդու ներսում այդ նշանավոր, իբր թե՛ կամքի դրսևորման մի օրինակ:

Դիմելով ներկաներին՝ պարոն Գյուրջինն այն ժամանակ ասաց.

«Դուք շատ փող ունեք, գոյատևման ճոխ պայմաններ և վայելում եք համընդհանուր հարգանք ու պատիվ: Ձեր բարգավաճող կոնցեռնները գլխավորում են կատարելապես հուսալի և ձեզ հավատարիմ մարդիկ. մի խոսքով՝ ձեր կյանքն «ուղղակի հաճույք է»:

Ձեր ժամանակը դուք տնօրինում եք ձեզ հարմար ձևով, դուք հովանավորում եք արվեստները, սուրճի սեղանի շուրջ լուծում եք համաշխարհային պրոբլեմներ և անգամ հետաքրքրվում եք մարդու հոգևոր ներուժի զարգացման հարցերով: Հոգևոր պահանջմունքները խորթ չեն ձեզ, և դուք լավ գլուխ եք հանում փիլիսոփայական հարցերից: Դուք կիրթ եք ու շատ կարդացած: Ձեր բազմագիտական շնորհիվ դուք ձեռք եք բերել խելոք մարդու համբավ, որը մի շարք բնագավառներում իրեն զգում է, ինչպես ձուկը ջրում: Դուք ներկա կուլտուրայի նմուշներն եք:

Ձեզ ճանաչող բոլոր մարդիկ համարում են, որ դուք մեծ կամքի տեր եք, և նույնիսկ նրանց մեծ մասը կարծում է, որ ձեր բոլոր առավելությունները ձեր այդ կամքի դրսևորման արդյունքն են:

Կարճ ասած՝ բոլոր առումներով դուք լիովին արժանի եք, որ ձեզնից օրինակ վերցնեն, և դուք այն մարդն եք, որին կարելի է նախանձել:

Եվ ահա մի առավոտ դուք արթնանում եք ինչ-որ մի ծանր երազի տպավորության տակ:

Ձեր մի փոքր ճնշված վիճակը, որն սկսում է ցրվել արթնանալուց հետո, այնուամենայնիվ իր հետքն է թողնում՝ որոշ ընկճվածության և շարժումների անվստահության տեսքով:

Դուք մոտենում եք հայելուն, որպեսզի սանրվեք, և ակամա ցած եք գցում խոզանակը. կռանում ու վերցնում եք, նորից է ցած ընկնում: Այնժամ դուք դա վերցնում եք արդեն վրդովմունքի նրբերանգով, և դրա արդյունքում այն ցած է ընկնում երրորդ անգամ. փորձում եք օդում բռնել, բայց ձեր ձեռքի անզգույշ շարժման պատճառով այն թռչում է ուղիղ հայելու կողմը. իզուր եք փորձում կանխել ճը՛րթ... և ձեր այդ հինավուրց հայելու վրա, որով այդքան հպարտանում էիք, ճաքերով աստղ է նկարվում:

Թու՛, սատանան տանի... Եվ դուք արդեն պահանջ եք զգում ձեր միջից դուրս թափելու գրգռվածության նոր ալիքը. եվ երբ առավոտվա սուրճի սեղանի վրա չեք տեսնում օրվա թարմ թերթը, քանի որ ձեր ծառան մոռացել էր դնել, ձեր համբերության բաժակը լցվում է, և դուք որոշում եք այլևս չհանդուրժել նրան ձեր տանը:

Ահա և տնից դուրս գալու ժամանակն է: Քանի որ եղանակը հաճելի է, և հեռու գնալու կարիք չկա, դուք որոշում եք ոտքով տեղ հասնել: Ձեր հետևից դանդաղ սահում է վերջին մակնիշի ձեր նոր ավտոմեքենան:

Արևի պայծառ լույսը մի փոքր հանգստացնում է ձեզ, բայց ձեր ուշադրությունը գրավում է անկյունում հավաքված ամբոխը:

Դուք մոտենում եք և տեսնում, որ ամբոխի կենտրոնում, մայթի վրա գիտակցությունը կորցրած մի մարդ է ընկած: Ոստիկանը մի քանի, այսպես կոչված «անբանների» օգնությամբ փորձում է նրան տեղավորել տաքսու մեջ, որ ուղարկի հիվանդանոց:

Հենց միայն վարորդի և այն հարբած մարդու դեմքերի՝ ձեր զարմանքը շարժած նմանության պատճառով, որին անցյալ տարի դուք վրաերթի էիք ենթարկել, երբ մի փոքր հարբած վերադառնում էիք ադմլոտ անվանակոչությունից, ձեր մտքով անցնում է, որ փողոցի անկյունի այդ դժբախտ պատահարը ձեր նմանագրություններում անբացատրելիորեն կապված է այն ձվակարկանդակի հետ, որը դուք համտեսել էիք այդ անվանակոչության ժամանակ:

Ա՛յ, թե ձվակարկանդակ էր, հա՛...

Ձեր լրագիրը մոռացած այդ ծառան փչացրեց ձեր առավոտյան սուրճը. ինչու՞ տեղը չհանել հենց հիմա...

Ահա և մոդայիկ մի սրճարան, որտեղ երբեմն նստում եք ձեր ընկերների հետ:

Բայց ինչի՞ց ծառային հիշեցիք... Չէ՞ որ առավոտվա գրգռվածությունն արդեն համարյա լրիվ մոռացվել էր: Ամեն դեպքում՝ շա՛տ համեղ բան է այս ձվակարկանդակ կոչվածը սուրճի հետ:

Մի տես է՞... Կողքի սեղանին երկու օրիորդներ են նստած. որքա՛ն հմայիչ է այս շիկահերը...

Դուք լսում եք, որ ձեզ վրա հայացք նետելուց հետո նա շշնջում է իր ընկերուհու ականջին. «Ա՛յ, սա իմ ճաշակի տղամարդ է...»:

Համաձայնեք, որ պատահաբար ձեր ականջին հասած այդ խոսքերը, որոնք գուցե դիտմամբ մի փոքր բարձր էին հնչել, ձեր ներսում, ինչպես ասում են, «ներքին ցնծություն» են առաջ բերում:

Եթե այդ պահին ձեզ հարցնեին՝ արժե՞ր արդյոք հուզվել և ափերից դուրս գալ այդ առավոտվա տհաճ անկարգության պատճառով, դուք, իհարկե, բացասական կպատասխանեիք և ինքներդ ձեզ խոսք կտալիք, որ նման բան այլևս երբեք չի կրկնվի:

Կարիք կա՞ արդյոք պատմելու ձեզ, թե ինչպես փոխվեց ձեր տրամադրությունը, երբ ծանոթություն հաստատեցիք այդ հմայիչ շիկահերի հետ, որն ինքն էլ էր ձեզնով հետաքրքրված, և ինչպիսին էր այն ամբողջ ընթացքում, երբ նրա հետ ժամանակ էիք անցկացնում...

Դուք տուն եք վերադառնում՝ քթի տակ ինչ-որ մեղեդի մոմոռալով, և նույնիսկ ճաքած հայելին միայն ձեր ժպիտն է շարժում: Բայց չէ՞ որ այսօր առավոտյան տնից դուրս եկաք ինչ-որ գործով... Միայն հիմա եք հիշում այդ մասին: Ա՛յ քեզ հիմարի գլուխ... Լա՛վ, կարելի է զանգելով գործը հարթել:

Դուք մոտենում եք հեռախոսին, բայց կապավորուհին ձեզ ուրիշ համարի հետ է կապում:

Դուք մի անգամ էլ եք զանգում, և էլի նույն տեղն եք ընկնում: Ինչ-որ մեկը ձեզ հայտնում է, որ դուք իրեն անհանգստացնում եք, դուք պատասխանում եք, որ դա ձեր մեղքը չէ, խոսքը խոսք է բերում և, ի զարմանս ձեզ, իմանում եք, որ դուք սրիկա եք և ապուշ, և որ եթե մի անգամ էլ զանգեք, ապա...

Գորգը, չգիտես ինչու, սկսում է սահել ձեր ոտքի տակ՝ առաջացնելով ձեր բուռն վրդովմունքը, և պետք է լսելիք, թե ի՞նչ տոնով էիք դուք խոսում ձեր ծառայի վրա, որը ձեզ նամակ էր բերել, նամակ մի մարդուց, որին հարգում եք և միշտ բարձր գնահատում նրա կարծիքը:

Նամակի բովանդակությունն այնպես է շոյում ձեզ, որ այն կարդալու ընթացքում ձեր վրդովմունքն աստիճանաբար անցնում և փոխարինվում է այն մարդու «հաճելի շփոթմունքով», որն իր մասին գովասանական խոսք է լսում: Նամակի ընթերցանությունը դուք ավարտում եք հրաշալի տրամադրությամբ:

Ես կարող էի էլի՝ շարունակել ձեր մի օրվա այս նկարագրությունը... Է՛հ, դուք, «ազա՛տ մարդ»...

Գուցե մտածեք, թե ես չափազանցում մ եմ:

Ո՛չ, դա ձեր կյանքի նկարն է՝ լուսանկարչական ճշգրտությամբ»:

* * *

Խոսելով մարդու կամքի և դրա իբր անկախ դրսևորումների տարբեր կողմերի մասին, որոնք ժամանակակից, այսպես կոչված, «փնտրող», բայց մեր կարծիքով՝ «միամիտ ուղեղների» համար նյութ են ծառայում իմաստակելու և ինքնահրապուրանքի համար, վնաս չի լինի, եթե մեջբերենք պարոն Գյուրջինի ասածները մի ուրիշ «գրույց-դասախոսության» ընթացքում, քանի որ դրանք կարող են լույս սփռել այն կամքի պատրանքայնության վրա, որից իբր գուրկ չէ ցանկացած մարդ:

Պարոն Գյուրջինն ասել է հետևյալը.

«Աշխարհ եկած մարդը նմանվում է թղթի մաքուր թերթի, որը շրջապատում եղածները սկսում են իրար հերթ չտալով մրոտել՝ լցնելով դաստիարակությամբ, բարոյախոսությամբ, մի տեղեկատվությամբ, որը մենք գիտելիք ենք անվանում, պարտքի, պատվի, խղճի ամենատարբեր զգացմունքներով և այլն, և այլն:

Եվ բոլորն առանց բացառության պնդում են այն մեթոդների անհրաժեշտության ու անսխալականության մասին, որոնք նրանք կիրառում են, որպեսզի այդ ճյուղերը պատվաստեն մարդկային անձ կոչվող բնի վրա:

Թղթի թերթն աստիճանաբար կեղտոտվում է, և որքան այն ավելի կեղտոտ է դառնում, այսինքն՝ որքան ավելի շատ է մարդը այդ պարտքի, պատվի և այլնի՝ ուրիշների կողմից իր մեջ խցկած այդ հավակնոտ տեղեկություններով լցվում, այնքան ավելի «խելոք» և ավելի արժանապատիվ է համարվում նա շրջապատի կողմից:

Ապա տեսնելով, որ իր վրա եղած «կեղտը» մարդիկ գնահատում են որպես արժանիք, նա ինքն էլ է սկսում իր կեղտոտված թուղթը համարել հենց այդպիսին:

Այդպիսին է այն էակի կերպարը, որին մենք մարդ ենք անվանում՝ հաճախ այդ անվան կողքին դնելով այնպիսի բառեր, ինչպես, օրինակ՝ «տաղանդ» կամ «հանճար»:

Իսկ մեր այդ «տաղանդի» տրամադրությունը մի ամբողջ օր փչացած է մնում, եթե նա, առավոտյան արթնանալով, մահճակալի կողքին չի գտնում իր մաշիկները:

Մովորական մարդն ազատ չէ իր դրսևորումներում, իր կյանքում, իր տրամադրության հարցում:

Նա չի կարող լինել այն, ինչ կուզենար լինել. և նա այն չէ, ինչ ինքն իրեն համարում է:

Մա րդ... Որքա՛ն վեհ է հնչում... Բուն «մարդ» բառը նշանակում է Արարչության պսակ. սակայն... Ինչպե՞ս է այդ անունը համապատասխանում ժամանակակից մարդուն...

Միևնույն ժամանակ, մարդն իսկապես պետք է Արարչության պսակ լինի, քանի որ նա ստեղծված է բոլոր հնարավորություններով՝ այն բոլոր նախադրյալները ձեռք բերելու համար, որոնք Համայն Տիեզերքում ունի ՀԱՄԱՅՆ ԳՈՅԻՆ ԿՅԱՆՔ ՏՎՈՂԸ»:

Մարդ կոչվելու իրավունք ունենալու համար պետք է մարդ լինել:

Իսկ մարդ լինելու համար նախ և առաջ պետք է անխոնջ համառությամբ և ցանկության անմար ազդակով, որը բխում է մարդու ընդհանուր ներկայությունը կազմող բոլոր առանձին ու անկախ մասերից՝ մտածողությունից, զգացմունքներից և օրգանական բնագոյից, աշխատել համակողմանի ինքնաճանաչման վրա (միաժամանակ անընդհատ պայքարելով սեփական սուրբեկտիվ թուլությունների դեմ), որից հետո, հենվելով միայն սեփական գիտակցությամբ ձեռք բերված արդյունքների վրա, ի հակակշիռ սուրբեկտիվության մեջ ամրապնդված թերությունների, ինչպես նաև բացահայտված այն միջոցների վրա, որոնք հնարավորություն են տալիս պայքարելու դրանց դեմ, ձգտել, առանց սեփական անձի նկատմամբ որևէ խղճահարություն դրսևորելու, արմատախիլ անել դրանք:

Եթե խոսենք անկեղծ ու լիակատար անաչառությամբ, ապա ժամանակակից մարդը, ինչպիսին մենք նրան գիտենք, ոչ ավել, ոչ պակաս մի սովորական ժամացույցի մեխանիզմ է, թեև ունի շատ բարդ կառուցվածք:

Մարդն անպայման պետք է շատ խոր, համակրմանի ու լիակատար անաչառությամբ մտածի իր մեքենայական լինելու մասին և շատ լավ հասկանա այն, որպեսզի կարողանա լիարժեք գնահատել, թե այդ մեքենայականությունն ու դրա հետ կապված հետևանքներն ու արդյունքներն ինչ նշանակություն կարող են ունենալ ինչպես իր հետագա կյանքի, այնպես էլ իր սկզբնավորման ու գոյատևման իմաստի ու նպատակի արդարացման համար:

Նրա համար, ով ուզում է ընդհանրապես ուսումնասիրել և իր համար պարզ դարձնել, թե ինչ բան է մարդկային մեքենայականությունը, ուսումնասիրման լավագույն օբյեկտ կարող է լինել հենց ինքը՝ իր սեփական մեքենայականությամբ. իսկ որպեսզի դա գործնականում ուսումնասիրելը և բանական ճանապարհով, ողջ էությամբ, այլ ոչ թե «հոգեգարությամբ», այսինքն՝ ընդհանուր ներկայության միայն մեկ մասով հասկանալը կարող է հնարավոր դառնալ միայն ճիշտ կերպով իրականացված ինքնադիտման արդյունքում:

Իսկ ինչ վերաբերում է այդ ինքնադիտումը ճիշտ ձևով կատարելուն՝ առանց կործանարար հետևանքներ առաջացնելու վտանգի, ինչը մեկ անգամ չէ, որ դիտվել է առանց հարկ եղած գիտելիքների նման քայլի գնացած մարդկանց պարագայում, ապա չափազանց ջանադիր վերաբերմունքից խուսափելու համար, պետք է զգուշացնել, որ մեր փորձը, որը հիմնված է մեծածավալ ու ճշգրիտ տվյալների վրա, ցույց է տվել, որ դա այնքան էլ հեշտ գործ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից: Ահա թե ինչու ենք մենք ճիշտ ինքնադիտման համար հիմք վերցնում ժամանակակից մարդու մեքենայականության ուսումնասիրումը:

Նախքան այդ մեքենայականության և ճիշտ ձևով տարվող ինքնադիտման բոլոր սկզբունքների ուսումնասիրությունը սկսելը մարդն առաջին հերթին մեկընդմիջտ պետք է վճիռ կայացնի, որ անվերապահորեն միշտ անկեղծ է լինելու ինքն իր հետ, ոչ մի բան չի անտեսելու, չի խուսափելու որևէ արդյունքից, ուր էլ որ դրանք տանելու լինեն, չի երկյուղելու որևէ եզրակացությունից և կաշկանդված չի լինելու նախկինում ունեցած որևէ ինքնասահմանափակմամբ. և երկրորդ՝ որպեսզի այդ սկզբունքների բացատրությունը ճիշտ ընկալվի և նախադրյալներից այս նոր ուսմունքի հետևորդների կողմից, պետք է ընդունվի համապատասխան «լեզու», քանի որ գոյություն ունեցող լեզուն մենք բոլորովին պիտանի չենք համարում այդ բացատրությունների համար:

Առաջին պայմանի հետ կապված՝ պետք է հենց սկզբից նախազգուշացնել, որ եթե մեկը սովոր չէ մտածել ու վարվել այնպես, ինչպես պահանջում են ինքնադիտման սկզբունքները, ապա նա պետք է օժտված լինի մեծ արիությամբ, որ կարողանա անկեղծորեն ընդունել ստացված հետևությունները և միաժամանակ հոգեպես չընկճվել. ապա դրանց հետ հաշտվելով՝ հետագայում շարունակի այդ սկզբունքները պահպանել աճող համառությամբ, որն այդ գործի համար անպայման անհրաժեշտ է:

Այդ հետևությունները կարող են, ինչպես ասում են, «գլխիվայր շուռ տալ» նախկինում մարդու ներսում խորապես արմատներ ձգած հավատքային համոզմունքները, ինչպես նաև նրա սովորական մտածողության ամբողջ կարգը. և այդ դեպքում հնարավոր է, որ նա ընդմիջտ զրկվի իր համար

հաճելի, այսպես կոչված, «սրտին մոտ» այն արժեքներից, որոնք մինչ այդ նրա հանդարտ ու անվրդով կյանքն են կազմել:

Ճիշտ անցկացվող ինքնադիտման շնորհիվ մարդն առաջին իսկ օրերից հստակ կհասկանա և անվիճելիորեն կընդունի իր լիակատար անգործությունն ու անօգնականությունը տառացիորեն ամբողջ շրջապատի դեմ հանդիման:

Իր ամբողջ էությամբ նա կհամոզվի, որ ամենայնը ղեկավարում է իրեն: Իսկ ինքը բացարձակապես ոչինչ չի ղեկավարում և չի կառավարում:

Նրան գրավում կամ վանում են ոչ միան ամբողջ շնչավորը, որն ունակ է ազդելու նրա ներսում այս կամ այն նմանազգացության առաջացման վրա, այլև նույնիսկ ամենայն ինքնուրույն անշունչը:

Առանց որևէ ինքնաերևակայման կամ ինքնասփոփանքի (ազդակներ, որոնք անբաժան են դարձել ժամանակակից մարդկանցից)՝ նա կիմանա, որ իր ամբողջ կյանքը ոչ այլ ինչ է, քան հիշյալ գրավող կամ վանող բաներին կուրորեն արձագանքելը:

Նա հստակ կտեսնի, թե ինչպես են դուրս նետվում իր այսպես կոչված, աշխարհայացքը, տեսակետները, ճաշակը և այլն, կարճ ասած, այն ամենը, ինչով ձևավորվել է իր անհատականությունը և ինչի ազդեցությամբ դրա առանձին մասերը փոխվելու հակում ունեն:

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ պարտադիր պայմանին՝ ճիշտ լեզվից օգտվելուն, ապա դա պարտադիր է այն պատճառով, որ մեր միայն վերջերս հաստատում գտած լեզուն, որն, այսպես ասած, «քաղաքացիության իրավունք» է ստացել, և որով մենք խոսում ենք, ուրիշներին փոխանցում մեր գիտելիքներն ու պատկերացումները և գրքեր գրում, մեր կարծիքով, արդեն դարձել է այնպիսին, որ բոլորովին կիրառելի չէ կարծիքների քիչ թե շատ ճշգրիտ փոխանակման համար:

Բառերը, որոնցից բաղկացած է մեր ժամանակակից լեզուն, և որոնց մեջ մարդիկ իրենց կամայական մտքերն են խցկել, փոխանցում են անորոշ ու հարաբերական հասկացություններ և այդ պատճառով սովորական մարդիկ դրանք «առաձգական» են ընկալում:

Այն բանում, որ մարդկանց կյանքը հատկապես այդպիսի աննորմալություն է ձեռք բերել, մեր կարծիքով դեր է խաղացել նույն այդ՝ աճող սերնդի դաստիարակության գործում հաստատված աննորմալ համակարգը:

Եվ դա այդպիսի դեր է խաղացել այն պատճառով, որ, ինչպես արդեն ասացինք, գլխավորապես հիմնված լինելով այն բանի վրա, որ երիտասարդությանը ստիպեն «մեքենայաբար անգիր անելու» հնարավորին չափ շատ բառեր (որոնք իրարից տարբերվում են միայն իրենց հնչողությամբ առաջացած տպավորություններով, այլ ոչ թե իրենց մեջ ներդրված իմաստի բուն էությամբ), դաստիարակության այդ համակարգն արդյունքում հանգեցրել է այն բանին, որ աստիճանաբար մարդիկ կորցրել են իրենց ասածներն ու լսածները կշռադատելու և իմաստավորելու կարողությունը:

Այդ կարողության կորստի պատճառով, և միաժամանակ ելնելով իրենց մտքերն ուրիշներին քիչ թե շատ ճշգրիտ հաղորդելու անհրաժեշտությունից՝ նրանք ստիպված են լինում, չնայած բոլոր ժամանակակից լեզուներից յուրաքանչյուրում արդեն գոյություն ունեցող անհաշիվ քանակությամբ բառերին, ուրիշ լեզուներից փոխառնել կամ հորինել ավելի ու ավելի շատ բառեր. իսկ դա ի վերջո հանգեցրել է այն բանին, որ երբ ժամանակակից մարդը կամենում է ինչ-որ միտք արտահայտել, որի արտահայտման համար նա կարծես թե ունի հարմար շատ բառեր, և այդ միտքն արտահայտում է հենց այն բառով, որն, իր դատողությամբ, թվում է ամենահարմարը՝ այնուհանդերձ նա բնագոյաբար որոշ անվստահություն է զգում իր կատարած ընտրության նկատմամբ և անգիտակցաբար այդ բառին տալիս է իր սեփական, սուբյեկտիվ իմաստը:

Մի կողմից՝ արդեն մեքենայական դարձած այդ կիրառության և մյուս կողմից՝ քիչ թե շատ երկար ժամանակով իր ակտիվ ուշադրությունը կենտրոնացնելու ունակության կորստի պատճառով, միջին մարդը, արտաբերելով կամ լսելով որևէ բառ, ակամա առանձնացնում և ընդգծում է այդ բառով արտահայտվող հասկացության այս կամ այն կողմը՝ անփոփոխ կերպով այդ բառի ամբողջ իմաստը կենտրոնացնելով դրա արտահայտած հասկացության մի կողմի վրա. այսինքն՝ նրա համար այդ բառն արտահայտում է ոչ թե տվյալ գաղափարի բոլոր իմաստները, այլ սոսկ այն առաջին պատահական իմաստը, որը կախված է նրա ներսում ինքնաբերաբար ընթացող նմանազգացություններից կազմավորված մտքերից: Ուստի ամեն անգամ, երբ ժամանակակից մարդը գրույցի ընթացքում լսում և արտաբերում է միևնույն բառը, նա դրան տալիս է մի ուրիշ իմաստ, որը երբեմն այդ բառի արտահայտած իրական իմաստի լիովին հակառակն է լինում:

Ինչ-որ չափով դա գիտակցած և քիչ թե շատ դիտել սովորած ցանկացած մարդու համար այդ «ողբերգածիծաղաշարժ հնչյունային խրախճանքը» հատկապես ցայտուն կերպով նկատելի ու ակներև է դառնում, երբ երկու ժամանակակից մարդկանց զրույցին խառնվում են ուրիշները:

Հիշյալ, այսպես ասած, «անբովանդակ բառերի համանվագում» ծանրակենտրոն դարձած բառերից յուրաքանչյուրի մեջ այդ զրույցին մասնակցողներից ամեն մեկը ներդնում է իր իմացած սուբյեկտիվ իմաստը, և անկողմնակալ դիտորդի համար այդ ամենն ընկալվում է միայն այն բանի պես, ինչը հինավուրց սինոլուպյան «Հազար ու մեկ գիշերվա» հեքիաթներում անվանվում է «ժխտրային-երևակայական բարբաջանք»:

Այդ կերպ զրուցելով՝ ժամանակակից մարդիկ այնուամենայնիվ երևակայում են, թե իրար հասկանում են, և համոզված են լինում, թե մեկմեկու իրենց մտքերն են փոխանցում:

Իսկ մենք, ընդհակառակը, հենվելով բազմաթիվ անվիճելի փաստերի վրա, որոնք հաստատվել են հոգե-ֆիզիկա-քիմիական փորձերով, պնդում ենք, որ քանի դեռ ժամանակակից մարդիկ մնում են այնպիսին, ինչպիսին կան՝ «սովորական մարդիկ», ապա ինչի մասին էլ որ նրանք խոսեն իրար հետ, մանավանդ այն դեպքում, երբ զրույցը վերացական բաների շուրջն է, նրանք երբեք միևնույն բառերի տակ միևնույն բաները չեն հասկանա, ուստի և իրապես չեն հասկանա մեկը մյուսին:

Ահա թե ինչու ժամանակակից սովորական մարդու ցանկացած ներքին և անգամ տանջալից ապրումը, որը մտածմունք է ծնում և հասցնում տրամաբանական արդյունքների, որոնք այլ պայմաններում կարող էին շատ օգտակար լինել շրջապատում եղածների համար, արտաքինապես չի դրսևորվում, այլ միայն վերածվում է հենց իր համար, այսպես ասած, «ստրկացուցիչ գործոնի»:

Այդ պատճառով ամեն մի առանձին մարդու ներքին կյանքի այդ մեկուսացվածությունը, նույնիսկ մեծանում է, և, որպես դրա հետևանք՝ ավելի ու ավելի է ոչնչացվում, այսպես կոչված, «փոխուսուցումը», որն այնքա՛ն անհրաժեշտ մարդկանց է համատեղ գոյակցության համար:

Կշռադատելու և իմաստավորելու կարողության կորստի հետևանքով՝ երբ ժամանակակից մարդը զրույցի ընթացքում լսում կամ կիրառում է որևէ բառ, որն իրեն ծանոթ է միայն հնչողությամբ, չի խորհում, և նույնիսկ նրա ներսում հարց չի ծագում, թե այդ բառը հատկապես ինչ է նշանակում, քանի որ նա արդեն մեկընդմիշտ որոշել է, որ թե՛ ինքը և թե՛ ուրիշներն արդեն գիտեն դա:

Այնուհանդերձ նրա ներսում երբեմն նման հարց է ծագում, երբ առաջին անգամ ինչ-որ անձանոթ բառ է լսում. բայց այդ դեպքում նա բավարարվում է պարզապես նրանով, որ այդ անձանոթ բառի տեղ մի ուրիշ ծանոթ հնչողությամբ բառ է դնում և երևակայում, թե արդեն հասկացավ այդ նոր բառի իմաստը:

Ասվածն ավելի հստակեցնելու համար կարելի է մի բառի հրաշալի օրինակ բերել, որը ժամանակակից մարդիկ շատ հաճախ են օգտագործում՝ «աշխարհ»:

Եթե մարդիկ կարողանային իրենք իրենց համար պարզաբանել, թե ինչ է տեղի ունենում իրենց մտքերում, երբ իրենք լսում կամ արտաբերում են այդ «աշխարհ» բառը, ապա նրանց մեծ մասը ստիպված կլիներ խոստովանելու (եթե, իհարկե, մտադրվել են անկեղծ լինել), որ այդ բառի հետ կապված ոչ մի ճշգրիտ հասկացություն չկա: Լսողությամբ պարզապես որսալով այդ բառի հնչողությունը, որի իմաստը ենթադրում են, թե իրենց հայտնի է, նրանք կարծես ներքուստ այսպես են ասում. «Հա՛, «աշխարհ», ես գիտեմ, թե դա ինչ է նշանակում», որից հետո անվրդով շարունակում են իրենց մտածելու գործը:

Եթե միտումնավոր կերպով նրանց ուշադրությունը կանգնեցվի այդ բառի վրա, և հիմտորեն գնվեն այդ մարդիկ, որպեսզի պարզվի, թե նրանք ինչ են հասկանում այդ բառի տակ, ապա նրանք սկզբում ուղղակի, այսպես ասած, «ամոթահար կլինեն», որից հետո, արագորեն «ուշքի գալով», այսինքն՝ խաբելով իրենք իրենց և հիշելով այդ բառի՝ առաջինը մտքին եկած որոշակի բացատրությունը, դա կներկայացնեն որպես իրենցը, թեև իրականում այդ մասին նախօրոք չէին էլ մտածել:

Եթե որևէ մեկն իշխանություն ունենար ժամանակակից անգամ, այսպես ասած, «լավ կրթություն են ստացած» մարդկանց խմբին ստիպելու, որ նրանք ճշգրիտ ասեն, թե ամեն անգամ ինչ են հասկանում այդ «աշխարհ» բառն ասելով, ապա նրանք բոլորն այնպես «դեսուդեն կրնկնեին», որ այդ հարց տվողն ակամա անգամ գերչակի ձեթի մասին քնքշությամբ կհիշեր: Օրինակ՝ նրանցից մեկը, որն ամեն ինչից զատ նաև աստղագիտությանը վերաբերող մի քանի գիրք է կարդացել, կասեր, որ «աշխարհը» հսկայական քանակությամբ արևներ են, որոնք շրջապատված են իրարից վիթխարի հեռավորության վրա դասավորված մոլորակներով, և այդ ամբողջն իրար հետ կազմում է այն, ինչին

մենք «Ծիր Կաթին» ենք ասում. իսկ դրանից այն կողմ՝ անասելի հեռու և մեր տեսողությանը հասանելի տարածությունից դուրս, կան այլ համաստեղություններ և այլ «աշխարհներ»:

Մի ուրշը, որը հետաքրքրվում է ժամանակակից ֆիզիկայով, կասեր, որ «աշխարհը» դա նյութի համակարգված էվոյուցիան է՝ ատոմից սկսած, վերջացրած այնպիսի խոշոր միացություններով, ինչպիսիք մոլորակներն ու արևներն են. հնարավոր է, որ նա կհիշատակեր նաև ատոմների «աշխարհի» և արևների ու մոլորակների «աշխարհի» նմանության մասին և այդ ոգով էլի շատ բաներ:

Երրորդը, որն այս կամ այն պատճառով տարվել է փիլիսոփայությամբ և ընթերցել այդ առարկայի հետ կապված ամբողջ խառնաշփոթը, կասեր, որ «աշխարհը» ընդամենը մեր սուբյեկտիվ պատկերացումների և երևակայության արդյունքն է, օրինակ՝ մեր Երկիրը, իր բոլոր լեռներով ու ծովերով, բուսական ու կենդանական թագավորություններով հանդերձ՝ ընդամենը թվացյալ պատրանքային «աշխարհ» է:

Նա, ով ծանոթ է բազմաչափ տարածության նորագույն տեսություններին, կասեր, որ «աշխարհը» սովորաբար համարվում է անսահման եռաչափ մի գունդ, բայց իրականում այդպիսի եռաչափ «աշխարհ» չի կարող գոյություն ունենալ, այլ դա միայն երևակայական հատույթն է քառաչափ «աշխարհի», որից գալիս և դեպի որը գնում է մեր շուրջը տեղի ունեցող ամեն ինչը:

Նա, ում աշխարհայացքը հիմնված է կրոնական դրույթների վրա, կասեր, որ «աշխարհը» համայն գոյություն ունեցողն է՝ լինի դա տեսանելի, թե անտեսանելի, որն ստեղծված է Աստծո կողմից և կախված է Նրա Կամքից: Տեսանելի «աշխարհում» մեր կյանքը կարճ է, բայց անտեսանելի «աշխարհում», որտեղ մարդը հատուցում է ստանում տեսանելի «աշխարհում» գործած իր բոլոր արարքների դիմաց, կյանքը հավերժ է:

Հոգեհարցությամբ տարվածը կասեր, որ տեսանելի «աշխարհից» բացի կա նաև «հանդերձյալ» «աշխարհ», և որ արդեն կապ է հաստատվել այդ երկու «աշխարհների» էակների միջև:

Թեոսոֆիայի ջատագովն ավելի հեռուն կգնար՝ ասելով, որ գոյություն ունեն յոթ «աշխարհներ», որոնք փոխներթափանցված են մեկը մյուսի մեջ. ընդ որում՝ որքան վեր ենք բարձրանում, այնքան նյութի խտությունն ավելի ու ավելի է փոքրանում և այլն, և այլն:

Կարճ ասած՝ այդ ժամանակակից մարդկանցից ոչ մեկը չէր կարողանա բերել որևէ որոշակի հասկացություն, որը ճշգրիտ համապատասխաներ «աշխարհ» բառի բոլոր ընդունված կիրառություններին:

Սովորական մարդու հոգեկան ամբողջ ներքին կյանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախկինում ընկալված տպավորությունների նմանազգացությունների երկու կամ երեք շարքի «ինքնաբերական միացում», որոնք նրա մեջ ժամանակին ծագած ազդակներով ամրապնդվել են նրա ներսում եղած բոլոր երեք տարատեսակ տեղայնացումներում կամ «ուղեղներում»: Երբ այդ նմանազգացությունները սկսում են կրկին գործել, այսինքն՝ երբ տեղի է ունենում համապատասխան տպավորությունների կրկնություն, ապա նրանք որևէ ներքին կամ արտաքին խթանի ազդեցությամբ սկսում են փաստել, որ իրենց մի ուրիշ տեղայնացման մեջ սկսում են կրկնվել դրանցով գրգռված միատեսակ տպավորություններ:

Սովորական մարդու աշխարհայացքի բոլոր առանձնահատկություններն ու նրա անհատականության բնութագրիչ գծերը բխում են (և կախված են) այն ազդակի հետևանքներից, որը նոր տպավորությունների ընկալման պահին գործում է իրենց ներսում, ինչպես նաև այդ տպավորությունների կրկնողության գործընթացի ծագման հաստատված ինքնաբերականությունից:

Եվ հենց դրանով է բացատրվում այն անհամապատասխանությունը (որը նույնիսկ սովորական մարդն է նկատում իր պասսիվ վիճակում), որ նրա ներսում միաժամանակ ընթանում են իրար հետ ոչ մի կապ չունեցող մի քանի նմանազգացություններ:

Մարդու ընդհանուր ներկայությունում հիշյալ տպավորություններն ընկալվում են երեք, այսպես ասած, սարքերի շնորհիվ (որոնք կան ինչպես նրա, այնպես էլ ընդհանրապես ցանկացած կենդանու ներսում), որոնք որպես ընդունիչներ են ծառայում բոլոր յոթ, այսպես կոչված, «*մոլորակային ծանրակենտրոն թրթիռների*» ընդունման համար:

Այդ ընկալիչ սարքերի կառուցվածքը նույնն է մեխանիզմի բոլոր մասերում:

Դրանք կազմված են այնպիսի հարմարանքներից, որոնք հիշեցնում են մաքուր մոմե ձայնագրման սկավառակներ. այդ սկավառակներում կամ, այլ կերպ ասած, «կոճերում» գրառվում են մարդու ստացած բոլոր տպավորությունները՝ սկսած նրա աշխարհի գալու, և դեռ ավելի վաղ՝ մոր արգանդում նրա սաղմնավորվելու առաջին օրերից:

Իսկ այդ ընդհանուր մեխանիզմը կազմող որոշ սարքեր ունեն նաև ավտոմատ գործող մի հարմարանք, որի շնորհիվ նոր ստացվող տպավորությունները, այն բանից զատ, որ գրառվում են նմանատիպ տպավորությունների կողքին, գրառվում են ժամանակագրական կարգով:

Այդպիսով, ամեն մի ապրված տպավորություն գրառվում է միանգամից մի քանի տեղերում և մի քանի կոճերի մեջ, որոնցում պահպանվում է անփոփոխ կերպով:

Այդ տպված տպավորություններն օժտված են այնպիսի յուրահատկությամբ, որ, առնչվելով նույն որակի միատեսակ թրթիռների հետ, դրանք, այսպես ասած, «գրգռվում են», և այնժամ նրանց ներսում կրկնվում է մի գործողություն, որը նման է առաջին անգամ ծագածին:

Նախկինում ընկալված տպավորությունների հենց այդ կրկնությունը, որը ծնում է այն, ինչը նմանագագացություն է կոչվում, ինչպես նաև այդ կրկնության այն մասերը, որոնք հայտնվում են մարդու ուշադրության դաշտում, միասին կազմավորում են այն, ինչը «հիշողություն» է անվանվում:

Եթե սովորական մարդու հիշողությունը համեմատենք ներդաշնակ զարգացած մարդու հիշողության հետ, ապա առաջինն իր նախկինում ընկալված տպավորությունների պահուստի օգտագործման առումով շատ ու շատ անկատար հարմարանք է նրա պատասխանատու կյանքի ընթացքում:

Սովորական մարդն իր հիշողության միջոցով կարող է օգտագործել իր նախկինում ընկալված տպավորությունների պահուստի շատ փոքր մասը միայն և, այսպես ասած, քաջատեղյակ լինել դրանց. մինչդեռ իրական մարդուն բնորոշ հիշողությունը քաջատեղյակ է լինում առանց բացառության բոլոր տպավորություններին՝ երբ էլ դրանք ընկալված լինեն:

Շատ փորձերով անվիճելի ճշգրտությամբ հաստատվել է, որ որոշակի վիճակներում, ինչպես օրինակ, հիպնոսի որոշակի փուլում, ցանկացած մարդ կարող է ամենայն մանրամասնությամբ հիշել այն ամենը, ինչ երբևէ պատահել է իր հետ. նա կարող է հիշել շրջակա իրադրության բոլոր մանրամասները, շրջապատում եղած մարդկանց դեմքերն ու ձայները նույնիսկ իր կյանքի ամենաառաջին օրերից, երբ նա դեռ, ըստ մարդկանց պատկերացրածի, անգիտակից էակ էր:

Երբ մարդը գտնվում է այդպիսի վիճակներից որևէ մեկում, կարելի է արհեստականորեն գործի գցել նույնիսկ այն կոճերը, որոնք թաքնված են մեխանիզմի ամենախոր անկյուններում. բայց հաճախ այնպես է պատահում, որ այդ կոճերն ինքնուրույնաբար սկսում են գործել բացահայտ կամ թաքուն մի խթանի ազդեցությամբ, որն առաջանում է ինչ-որ ապրումից. դրանից հետո մարդու առջև հառնում են վաղուց մոռացված իրադարձություններ, պատկերներ, դեմքեր և այլն:

Այստեղ ես ընդհատեցի դասախոսին և տեղին համարեցի զետեղել հետևյալ հավելվածը.

ՀԱՎԵԼՎԱԾ

Ահա այդպիսին է սովորական միջին մարդը՝ իր սեփական անհատականությանը խորթ համաշխարհային նպատակներին ամբողջովին ծառայող անգիտակից մի ստրուկ:

Նա կարող է իր կյանքի բոլոր տարիներն ապրել այնպիսին, ինչպիսին կա, և վերջնականապես ոչնչանալ:

Բայց միաժամանակ Մեծ Բնությունը նրան հնարավորություն է տվել՝ չլինելու սոսկ գործիք՝ համաշխարհային օբյեկտիվ նպատակներին ծառայելու համար, այլ ծառայելով Նրան և իրականացնելով իր առաքելությունը, ինչը ամեն մի կենդանի էակի կյանքի գործն է, միաժամանակ աշխատելու նաև իր համար՝ սեփական անձնական անհատականության համար:

Այդ հնարավորությունը տրվել է նաև ընդհանուր նպատակին ծառայելու համար՝ այն բանի հետևանքով, որ այդ օբյեկտիվ օրենքների հավասարակշռման համար այդպիսի հարաբերականորեն ազատագրված մարդիկ նույնպես պետք է լինեն:

Թեև հիշյալ ազատագրումը հնարավոր է, այնուհանդերձ դժվար է ասել՝ որևէ կոնկրետ մարդ հնարավորություն ունի՞ արդյոք դրան հասնելու:

Բազմաթիվ պատճառներ կան, որոնք թույլ չեն տալիս դրան հասնել, ընդ որում դեպքերի մեծ մասում դրանք կախված են ոչ թե անձամբ մեզնից, ոչ թե մեծ օրենքներից, այլ սոսկ մեր ծագման ու կազմավորման տարբեր պատահական պայմաններից, որոնցից գլխավորները ժառանգականությունն

ու այն պայմաններն են, որոնցում ընթանում է մեր «նախապատրաստական տարիքի» գործընթացը: Հենց այդ անվերահսկելի պայմաններն էլ կարող են թույլ չտալ, որպեսզի իրականանա այդ ազատագրումը:

Լիակատար ստրկությունից ազատագրվելու ուղու գլխավոր դժվարությունն այն է, որ անհրաժեշտ է սեփական նախաձեռնությունից ու համառությունից բխող և սեփական ջանքերով ամրապնդված մտադրությամբ, այսինքն՝ ոչ թե ուրիշի, այլ սեփական կամքով հասնել ինչպես մեր ներկայության մեջ արդեն արմատներ ձգած այն օրգանի որոշակի հատկությունների հետևանքներն արմատախիլ անելուն, որն ունեցել են մեր նախնիները և կոչվել է կունդաբուֆեր, այնպես էլ այդ հետևանքների նկատմամբ նախատրամադրվածությունները վերացնելուն, որոնք կարող են նորից ծագել:

Որպեսզի թեկուզ մոտավոր պատկերացում կազմեք այդ տարօրինակ օրգանի և դրա հատկությունների, ինչպես նաև այդ հատկությունների՝ մեր ներսում դրսևորվող հետևանքների մասին, մենք պետք է մի փոքր կանգ առնենք այդ հարցի վրա և դրա մասին խոսենք ավելի մանրամասն:

Մեծ Բնությունն իր շրջահայացությամբ և մի շարք կարևոր պատճառներից ելնելով (դրանց վերաբերյալ հետագա դասախոսություններում կտրվեն տեսական բացատրություններ)՝ ստիպված է եղել մեր հեռավոր նախնիների ընդհանուր ներկայություններում ներդնել մի օրգան, որի ծնած հատկությունների շնորհիվ նրանք գրկվել են ամեն ինչ այնպես տեսնելու և զգալու հնարավորությունից, ինչպես տեղի է ունենում իրականության մեջ:

Թեև այդ օրգանը հետագայում Մեծ Բնությունը հեռացրել է մեր նախնիների ընդհանուր ներկայություններից, սակայն, ըստ այն տիեզերական օրենքի, որը կոչվում է «հաճախ կրկնվող գործողությունների արդյունքների առնմանում» (որոշակի պայմաններում միևնույն գործողության հաճախակի կրկնությունը տիեզերական ամեն մի խտացման մեջ նախատրամադրվածություն է առաջացնում կրկին տալու նման արդյունքներ)՝ մեր նախնիների միջավայրում որոշակի օրինաչափ նախատրամադրվածություն է առաջացել, որը ժառանգաբար փոխանցվել է մի սերնդից մյուսին. և երբ նրանց հետևորդներն իրենց սովորական գոյատևման գործընթացում ստեղծել են բազմաթիվ այնպիսի պայմաններ, որոնք բարենպաստ են եղել հիշյալ օրինաչափության կրկնվելու համար, ապա այդ ժամանակներից սկսած, նրանց ներսում սկսել են ի հայտ գալ արդեն հեռացված օրգանի տարբեր հատկությունների հետևանքները, որոնք էլ, սերնդեսերունդ փոխանցվելու շնորհիվ յուրացվելով, ձեռք են բերել համարյա այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք ունեցել են նրանց նախնիները:

Մեր ներսում այդ հետևանքների դրսևորման մոտավոր ըմբռնումը կարելի է ստանալ հետևյալ փաստից, որը լիովին հասկանալի է մեր բանականության համար և ոչ մի կասկած չի հարուցում:

Մենք բոլորս մահկանացու ենք, և ամեն մարդ կարող է մահանալ ցանկացած պահի:

Հիմա այսպիսի մի հարց. կարո՞ղ է արդյոք մարդն իր համար իրապես նկարագրել կամ իր գիտակցության մեջ, այսպես ասած, «վերապրել» իր սեփական մահվան գործընթացը:

Ո՛չ: Սեփական մահն ու այդ գործընթացի ապրումները մարդը, որքան էլ ուզենա, չի կարող պատկերացնել:

Ժամանակակից սովորական մարդը կարող է պատկերացնել ուրիշի մահը, սակայն նույնիսկ դա՝ ոչ ամբողջությամբ:

Օրինակ՝ նա կարող է պատկերացնել, որ ոմն Փանոս դուրս է եկել թատրոնի շենքից և փողոցն անցնելու ընթացքում ենթարկվել մահացու վրաերթի:

Կամ ասենք՝ ուժեղ քամին ցուցանակը գցել է պատահաբար դրա մոտով անցնող Փիլիպոսի գլխին և տեղնուտեղը սպանել նրան:

Կամ թե՛ Կիրակոսի կերած սունկը պատահաբար թունավոր է դուրս եկել, նրան ոչ ոք չի կարողացել փրկել, և հաջորդ օրը նա մահացել է:

Ամեն ոք կարող է նման բաները հեշտությամբ պատկերացնել: Բայց կարո՞ղ է արդյոք սովորական մարդը նման բանը հավանական համարել նաև իր համար, ինչպես հնարավոր է համարում Փանոսի, Փիլիպոսի և Կիրակոսի պարագայում. զգալ ու վիատության բոլոր ապրումներն ունենալ այն մտքից, որ այդ ամենը կարող էր և իր հետ պատահած լինել:

Հապա մտածե՛ք. ի՞նչ կկատարվի այն մարդու հետ, ով հստակ պատկերացնում և ապրում է իր սեփական մահվան անխուսափելիությունը:

Եթե նա լրջորեն մտածի և իրոք օժտված լինի այդ հարցում խորանալու և իր սեփական մահն իմանալու ունակությամբ, ապա դրանից ահավոր էլ ի՞նչ կարող է լինել նրա համար:

Բացի այն փաստից, որ մահն անխուսափելի է և անդառնալիորեն պետք է մեզ հետ տեղի ունենա, մարդկանց սովորական կյանքում, հատկապես՝ վերջին ժամանակներում, նմանատիպ շատ բաներ կան, որոնց հենց միայն ապրումների հնարավորության իրական պատկերացումը պետք է որ առաջացնի անասելի տառապանքների զգացողություն:

Եթե ժամանակակից այնպիսի մարդիկ, որոնք արդեն իսպառ կորցրել են ապագայի նկատմամբ որևէ իրական օբյեկտիվ հույս ունենալու հնարավորությունը (այսինքն՝ նրանք, ովքեր իրենց պատասխանատու կյանքի ընթացքում ոչինչ չեն «ցանել» և, հետևաբար, ապագա կյանքում «հնձելու» ոչինչ չունեն), իմանալին իրենց մոտակա մահվան անխուսափելիությունը, ապա նրանք կկախվեին հենց միայն իրենց մտքերում դրա առաջացրած ապրումների պատճառով:

Մարդկանց ընդհանուր հոգեկառույցի վրա հիշյալ օրգանի հատկությունների հետևանքների ազդեցության առանձնահատկությունը հենց այն է, որ դրա շնորհիվ ժամանակակից մարդկանց մեծամասնության ընդհանուր ներկայություններում (այդ եռուղեղ էակների, որոնց հետ իր բոլոր հույսերն ու սպասումներն է կապել մեր ԱՐԱՐԻՉԸ՝ որպես բարձրագույն նպատակների հնարավոր սպասավորների) չեն առաջանում այդ իրական սարսափները, և բացի դրանից՝ այդ առանձնահատկությունը նրանց հնարավորություն է տալիս հանգիստ գոյատևելու՝ անգիտակցորեն կատարելով կանխորոշվածը, բայց սոսկ ծառայելով Բնության մոտակա անմիջական նպատակներին, քանի որ նրանք իրենց ոչ վայել աննորմալ կյանքի պատճառով այդ ընթացքում կորցրել են բարձրագույն նպատակներին ծառայելու ամեն մի հնարավորություն:

Այդ հետևանքների շնորհիվ այդպիսի մարդկանց հոգեկառույցում ոչ միայն տեղ չեն գտնում այդ սարսափների իմացությունները, այլ նաև ինքնասփոփման նպատակով նրանք նույնիսկ հորինում են հնարավոր ամեն տեսակի երևակայական, բայց իրենց միամիտ տրամաբանության տեսակետից ճշմարտանման բացատրություններ ինչպես այն ամենի համար, ինչ իրենք իսկապես գիտակցում են, այնպես էլ այն ամենի համար, ինչը բոլորովին չեն գիտակցում:

Օրինակ՝ եթե բազմաթիվ հնարավոր իսկական սարսափներն իրապես գիտակցելու մեր անկարողության հարցի լուծումը, մասնավորապես՝ սեփական մահվան սարսափի գիտակցման առումով, դառնար, այսպես ասած, «օրվա հրատապ հարց» (ինչը պատահում է մարդկանց ժամանակակից կյանքի որոշ հարցերի հետ), ապա ամենայն հավանականությամբ բոլոր ժամանակակից մարդիկ՝ և՛ սովորական մահկանացուները, և՛, այսպես կոչված, «գիտունները», վստահորեն կառաջարկեին մի լուծում, որում ոչ մի կասկածի նշույլ չէին արտահայտի և, ինչպես ասում են, «փրփուրը բերանին» կսկսեին ապացուցել, թե իբր իրականում այդպիսի սարսափներ ապրելուց մարդկանց փրկում է նրանց սեփական «կամքը»:

Բայց եթե դա ընդունենք, այդ դեպքում ինչու՞ նույն այդ ենթադրյալ կամքը մեզ չի պաշտպանում բոլոր այն մանր վախերից, որոնք մենք զգում ենք ամեն քայլափոխի:

Որպեսզի գիտակցեք և հասկանաք այն, ինչ հիմա ես ասում եմ, ընդ որում՝ ամբողջ էությամբ, այլ ոչ թե այնպիսի, այսպես ասած, «մտամոլորությամբ», որը, ի դժբախտություն մեր հետնորդների, արդեն գերակշռող հատկություն է դարձել ժամանակակից մարդկանց համար, պատկերացրեք թեկուզև հետևյալը:

Այսօր՝ այս դասախոսությունից հետո, դուք վերադառնում եք տուն, հանվում և պառկում եք անկողնում, բայց հենց այն պահին, երբ ուզում եք ծածկվել վերմակով, ձեր բարձի տակից դուրս է պրծնում մի մուկ, որը ձեր մարմնի վրայով անցնելով թաքնվում է վերմակի ծալքերի մեջ:

Հապա անկեղծորեն խոստովանե՛ք. հենց միայն այդպիսի հնարավորության մտքից ձեր մարմնով սարսուռ չանցա՞վ...

Այդպե՞ս է, թե՛ ոչ...

Իսկ հիմա, խնդրում եմ, ձեզ հետ տեղի ունենալիք այդ դեպքի հնարավորության մասին աշխատեք մտածել միայն ձեր մտածողությամբ՝ բացառելով ձեր մեջ արմատացած ամեն տեսակի, այսպես ասած, «սուբյեկտիվ հուզականություն», և դուք ինքներդ կգարմանաք դրա նկատմամբ ձեր արձագանքի վրա:

Ի՞նչ մի սարսափելի բան կա դրանում...

Չէ՞ որ դա ընդամենը սովորական տնային մուկ է՝ անվնաս ու անշատ մի կենդանի:

Եվ ահա ես հարցնում եմ ձեզ՝ ինչպե՞ս ասվածը մեկնաբանել այն կամքի տեսանկյունից, որ իբր ամեն մարդ ունի:

Ինչպե՞ս է հնարավոր համատեղել այն, որ մարդը սարսափ է ապրում մի խեղճ մկան տեսքից՝ բոլոր արարածներից ամենավախկոտից, ինչպես նաև հազարավոր դրա նման դատարկ բաներից, որոնք հնարավոր է, որ նրա հետ երբեք էլ տեղի չեն ունենալու, և այդքանից հետո նա հանկարծ սարսափ չի ապրում իր սեփական մահվան անխուսափելիությունից:

Ամեն դեպքում՝ այդ ակնհայտ հակասությունը մարդու նշանավոր կամքի ազդեցությամբ բացատրել հնարավոր չէ:

Երբ այդ հակասությունը քննարկվում է բաց կերպով՝ առանց որևէ կանխակալության, այսինքն՝ առանց ամեն տեսակի պատրաստի հասկացությունների, որոնք փոխ են առնվում տարբեր, այսպես կոչված, «հեղինակությունների» իմաստակություններից, որոնք մեծ մասամբ այդպիսին են դառնում մարդկանց միամտության ու «հոտային բնագոյի», ինչպես նաև մեր մտածողության մեջ ծագող աննորմալ դաստիարակության արդյունքներից հետևանքով ապա ակնհայտ է դառնում, որ բոլոր այդ սարսափները, որոնք, ինչպես արդեն ասացինք, մարդու մեջ կախվելու ազդակ չեն ծնում, Բուն Բնության կողմից թույլատրվում են այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են մեր սովորական գոյատևման գործընթացի համար:

Եվ իսկապես, առանց դրանց՝ առանց այդ բոլոր օբյեկտիվ իմաստով, ինչպես ասում են, «լվերի խայթոցների», որոնք սակայն մեզ «անհավատալի սարսափներ» են թվում, մեր ներսում չէինք կարող ընդհանրապես ունենալ որևէ ապրում՝ ո՛չ ուրախություն, ո՛չ վիշտ, ո՛չ հույս, ո՛չ հիասթափություն և այլն. չէինք կարող ունենալ նաև բոլոր այն հոգսերը, շարժառիթները, ձգտումները և ընհանրապես զանազան այն ազդակները, որոնք մեզ դրդում են գործել, ինչ-որ բանի հասնել, ինչ-որ մի նպատակի ձգտել:

Շենց մարդու ներսում ծագող և ընթացող այդ բոլոր ինքնաբերական, կարելի է ասել՝ «երեխայական ապրումներն» են, որ մի կողմից՝ կազմավորում ու շարունակում են նրա կյանքը, իսկ մյուս կողմից՝ նրան հնարավորություն և ժամանակ չեն տալիս տեսնելու և զգալու իրականությունը:

Եթե ժամանակակից սովորական մարդուն հնարավորություն տան թեկուզ միայն մտովի գիտակցելու և հիշելու այն մասին, որ որոշակի մի ժամկետի, օրինակ՝ վաղը, մի շաբաթ, մի ամիս կամ թեկուզ մեկ կամ երկու տարի հետո նա մեռնելու է, և մեռնելու է հաստատ, ապա այդ դեպքում, հարց է ծագում՝ ի՞նչ է մնում այն ամենից, ինչով լցվել ու ինչից կազմված էր նրա ամբողջ կյանքը:

Նրա համար ամեն ինչ կկորցնեք իր իմաստն ու նշանակալիությունը: Այլևս ի՞նչ իմաստ կունենար նրա համար, ասենք, երեկվա ստացած շքանշանը լավ ծառայության դիմաց, որը նրան այդքան ուրախություն էր պարգևել, կամ՝ վերջերս նրա նկատած «մի կնոջ խոստումնալից հայացքը», որը երկար ժամանակ եղել էր նրա մշտական ու բավարարություն չստացած ցանկությունների օբյեկտը, կամ՝ թերթերը առավոտյան սուրճի ժամին, կամ՝ աստիճանների վրա հարևանի տված հարգալից ողջույնը, կամ՝ երեկոյան թատրոնը, հանգիստն ու քունը. ի՞նչ արժեք կունենար այդ ամենը նրա համար:

Այդ բաներն այլևս նրա համար չէին ունենա այն արժեքը, ինչ ստանում էին նախկինում, նույնիսկ եթե մարդը գիտենար, որ իր մահը վրա է հասնելու միայն հինգ կամ վեց տարի հետո:

Կարճ ասած՝ սովորական մարդն իր սեփական մահվան «երեսին», ինչպես ասում են, նայել չի կարող, և պետք էլ չէ. դա նրա համար, ինչպես ասում են, «ուժերից վեր» կլինեք, և նրա առաջ հստակորեն կհառնեք հետևյալ հարցը. «Հանուն ինչի՞ ապրել, աշխատել ու տառապել»:

Հատկապես այն բանի համար, որ այդպիսի հարց չծագի, Մեծ Բնությունը, համոզվելով, որ մարդկանց մեծ մասի ընդհանուր ներկայություններում արդեն դադարել են գոյություն ունենալ եռուղեղ էակներին սազական ու արժանավայել դրսևորումների գործոնները, բարեբախտաբար իմաստուն կերպով պաշտպանել է նրանց՝ թույլ տալով, որ նրանց ներսում առաջանան եռուղեղ էակներին ոչ սազական այն անարժան հատկությունների հետևանքները, որոնք հարկ եղած ձևով չիրականանալու դեպքում հանգեցնում են նրան, որնրանք դադարում են ընկալել ու գիտակցել ռեալ իրականությունը:

Եվ Մեծ Բնությունը ստիպված էր հարմարվելու այդ, օբյեկտիվ իմաստով, աննորմալությանը, քանի որ հենց մարդկանց կողմից հաստատված սովորական կյանքի աննորմալ պայմանների հետևանքով Համատեղեցիական Բարձրագույն Նպատակների համար անհրաժեշտ նրանց ճառագայթումների

որակի վատացումը համառոտ են պահանջում էր, որ հավասարակշռություն պահպանելու համար մեծանա այդ կյանքերի սկզբնավորումների և գոյատևումների քանակը:

Այստեղից հետևում է, որ ընդհանրապես կյանքը մարդկանց տրվում է ոչ թե հենց իրենց համար, այլ այդ կյանքն անհրաժեշտ է հիշյալ Բարձրագույն Տիեզերական Նպատակների համար, և ըստ այդմ Մեծ Բնությունն այդ կյանքն այնպես է պահպանում, որ այն ընթանա քիչ թե շատ տանելի կերպով, և հոգ է տանում, որ այն վաղաժամ չընդհատվի:

Մի՞թե հենց մենք, մարդիկ, նույն կերպ չենք կերակրում, պահպանում ու խնամում մեր ոչխարներին ու խոզերին և նրանց կյանքը հնարավորին չափ հարմարավետ չենք դարձնում:

Մի՞թե մենք այդ ամենն անում ենք այն պատճառով, որ գնահատում ենք նրանց կյանքը հանուն նրանց կյանքի:

Ո՛չ: Մենք այդ ամենն անում ենք, որ մի գեղեցիկ օր նրանց մորթենք և մեզ անհրաժեշտ, առավելագույնս ճարպոտ միսն ստանանք:

Նույն կերպ էլ Բնությունն է ձեռնարկում բոլոր միջոցները, որ մենք ապրենք առանց սարսափների, չկախվենք և երկար ապրենք. իսկ հետո, երբ հարկ է լինում, Նա մորթում է մեզ:

Մարդկանց սովորական կյանքի հաստատված պայմաններում դա արդեն հիմա դարձել է Բնության անխախտելի օրենք:

Մեր կյանքում կա մի որոշակի շատ մեծ նպատակ, և մենք պարտավոր են ծառայելու այդ Ընդհանուր Մեծ Նպատակին. հենց դա է մեր կյանքի ամբողջ իմաստն ու նշանակությունը:

Առանց բացառության բոլոր մարդիկ այդ «Մեծ» բանի ստրուկներն են, և բոլորն ստիպված են կամա-ակամա ենթարկվելու և, առանց նախապայմանների ու փոխզիջումների, կատարելու մեզնից յուրաքանչյուրի համար նախասահմանվածը, որ ստացել ենք ժառանգաբար ու ձեռք ենք բերել Լինելիությամբ:

Իսկ այժմ, ամբողջ ասվածից հետո վերադառնալով այսօր այստեղ կարդացվող դասախոսության գլխավոր թեմային, ես ուզում եմ ձեր հիշողության մեջ թաքցնել այն, ինչը մի քանի անգամ հիշատակեցի, երբ սահմանում էի «իսկական մարդ» և «չակերտավոր մարդ» հասկացությունները, և որպես վերջաբան ասել հետևյալը:

Թեև ինչպես սեփական «Ես» ունեցող իսկական մարդը, այնպես էլ դա չունեցող չակերտավոր մարդը հավասարապես նշաձու «Մեծի» ստրուկներն են, սակայն, ինչպես արդեն ասել եմ, նրանց միջև տարբերությունն այն է, որ, քանի որ առաջինն իր ստրկությանը գիտակցորեն է նայում, ապա հնարավորություն է ձեռք բերում համաշխարհային իրականացմանը ծառայելու հետ միաժամանակ, համաձայն Մեծ Բնության նախատեսածի, իր դրսևորումների մի մասն օգտագործելու, որպեսզի հասնի «անանց Լինելիության» մինչդեռ երկրորդը, որը չի գիտակցում իր ստրկությունը, իր գոյատևման ամբողջ գործընթացում բացառապես միայն որպես իր է ծառայում, որը հենց որ այլևս պետք չի լինում, անհետ կորչում է:

Որպեսզի ասվածը դառնա առվել հականալի ու որոշակի, օգտակար կլինի մարդկության կյանքն ընդհանրապես համեմատել գետի հետ, որը սնվում է տարբեր ակունքներից և հոսում մեր մոլորակի մակերևույթով, իսկ առանձին մարդու կյանքը դիտել՝ որպես այդ կյանքի գետի ջրի մի կաթիլը:

Սկզբում այդ գետը՝ որպես ամբողջություն, հոսում է համեմատաբար հարթ դաշտով, իսկ այն մասում, որտեղ Բնությունն կրել է, այսպես կոչված «անօրինաչափ արհավիրք», գետը բաժանվում երկու առանձին վտակների, կամ, ինչպես երբեմն ասում են, գետը «ջրբաժանի» է հանդիպում:

Վտակներից մեկի ջուրն այդ տեղն անցնելուց հետո հոսում է էլ ավելի հարթ դաշտով, որտեղ նրան այլևս չի շրջապատում, այսպես կոչված, «վեհաշուք ու գեղատեսիլ» բնապատկերը, և ի վերջ անարգել թափվում է անսահման օվկիանոսը:

Երկրորդ վտակը, շարունակելով շրջանցել այն վայրը, որն առաջացել է հիշյալ «անօրինաչափ արհավիրքի» հետևանքով, ի վերջո լցվում է գետնի մեջ այդ արհավիրքի առաջացրած ճեղքվածքների մեջ և ապա ներծծվում Երկրի ընդերքը:

Թեև ջրբաժանն անցնելուց հետո այդ երկու վտակների ջրերն իրարից անկախ են հոսում և այլևս չեն խառնվում իրար, սակայն, հետագա ամբողջ ճանապարհի ընթացքում նրանք հաճախ այնքան են մոտենում իրար, որ նրանց հոսքի առաջացրած արդյունքները միախառնվում են, երբեմն էլ նույնիսկ, մթնոլորտային ուժեղ երևույթների ժամանակ, ինչպիսիք են փոթորիկը, քամիները և այլն՝ ջրացայտերն ու առանձին կաթիլներ անցնում են մի վտակից մյուսին:

Ամեն մի առանձին մարդու կյանքը մինչև պատասխանատու տարիքին հասնելը համապատասխանում է գետի նախնական հոսանքի ջրի կաթիլին, իսկ այն տեղը, որտեղ ջրբաժանն է, համապատասխանում է այն ժամանակին, երբ նա չափահաս է դառնում:

Այդ ջրբաժանից հետո, ինչպես այդ գետի, այնպես էլ այդ շարժման բոլոր մանր մասնավորությունների հետագա ամեն մի նշանակալից ու օրինաչափ շարժումը՝ հանուն ամբողջ այդ գետի համար նախանշվածի իրականացման, հավասարապես վերաբերում է նաև ամեն մի առանձին կաթիլին, քանի որ այն պատկանում է տվյալ գետի ամբողջությանը:

Բուն կաթիլի համար նրա բոլոր սեփական տեղաշարժերը, նրա դիրքի տարբերություններով առաջացած ուղղություններն ու վիճակները, շրջապատի պայմաններից ծագած նրա շարժման տեմպի զանազան պատահական արագացումներն ու դանդաղեցումները միշտ ունեն կատարելապես պատահական բնույթ:

Կաթիլները չունեն անձնական ճակատագրի որոշակի կանխորոշվածություն. ճակատագրի այդպիսի կանխորոշվածություն ունի միայն ամբողջ գետը:

Գետի հոսանքի սկզբնամասում կաթիլներն ապրում են մի պահ այստեղ, մի պահ այնտեղ, իսկ հաջորդ պահին նրանք ոչ այստեղ են, ոչ այնտեղ. նրանք կարող են դուրս ցայտել գետից և գոլորշիանալ:

Այսպիսով, երբ մարդկանց կյանքի անվայելության պատճառով Մեծ Բնությունը ստիպված եղավ ինչ-որ անվայել բան դնել նրանց ընդհանուր ներկայություններում, այդ ժամանակից սկսած՝ համայն գոյի ընդհանրական իրականացումների նպատակներով սահմանվել է, որ մարդկության կյանքը Երկրում ընթանա երկու վտակներով. և Մեծ Բնությունը նախատեսել և Իր ընդհանուր իրականացումների մասնավորություններում աստիճանաբար ամրապնդել է այնպիսի օրինաչափություն, որ կյանքի գետի սկզբնական հոսանքին պատկանող ջրի կաթիլներում, որոնք ունեն համապատասխան ներքին սուբյեկտիվ, այսպես կոչված, «սեփական ինքնաբացասման ջանքեր», կարողանա կամ չկարողանա առաջանալ այն «ինչ-որ բանը», որի շնորհիվ ձեռք են բերվում որոշակի հատկություններ, որոնք հնարավորություն են տալիս կյանքի գետի ջրբաժանի տեղում մտնել կամ մի վտակի մեջ, կամ մյուս:

Այդ «ինչ-որ բանը», որը կաթիլի ընդհանուր ներկայությունում այն գործոնն է, որը նրան տալիս է մեկ կամ մյուս վտակին համապատասխանող հատկություն, պատասխանատու տարիքին հասած ամեն մի մարդու ընդհանուր ներկայությունում հենց այն «ես»-ն է, որի մասին խոսք գնաց այսօրվա դասախոսության ընթացքում:

Մարդը, որն իր ընդհանուր ներկայության մեջ ունի իր սեփական «ես»-ը, կյանքի գետի մի վտակին է պատկանում, իսկ սեփական «ես» չունեցողը՝ մյուս վտակին:

Կյանքի ընդհանուր գետի ամեն մի կաթիլի հետագա ճակատագիրը որոշվում է ջրբաժանում՝ կախված այն բանից, թե ո՞ր վտակի մեջ կհայտնվի տվյալ կաթիլը:

Եվ դա որոշվում է, ինչպես ասացի, այն բանով, որ այդ վտակներից մեկը վերջիվերջո հասնում է օվկիանոսին՝ ընդհանուր Բնության այն ոլորտին, որում հաճախ տեղի է ունենում «խոշոր տիեզերական խտացումների բազմակի նյութափոխանակություն», որն իրականացվում է, այսպես կոչված, «փոխտալիսեսաճանչա¹³⁸»-ի գործընթացի միջոցով (այդ գործընթացի մի մասը, իմիջայլոց, ժամանակակից մարդիկ «ցիկլոն» են կոչում), ինչի արդյունքում ջրի տվյալ կաթիլն էվոյուցիա ապրելու հնարավորություն է ստանում դեպի հաջորդ, այսպես ասած, ավելի բարձր խտացում: Իսկ մյուս վտակը՝ ջրբաժանից հետո, ինչպես ասվեց, ճեղքվածքներով հայտնվում է Երկրի ընդերքում, որտեղ մասնակցում է մոլորակի ներսում անընդհատ ընթացող, այսպես կոչված, «ինվոյուցիոն շինարարության» գործընթացին՝ վերածվելով գոլորշու և բաշխվելով նոր կազմավորումների համապատասխան ոլորտներում: Ջրբաժանից հետո արտաքին շարժման հետագա մեծ ու փոքր օրինաչափություններն ու մասնակիությունները, որոնց նպատակնայդ երկու վտակների համար նախանշվածի իրականացումն է, նույնպես բխում են նույն այդ տիեզերական օրենքներից, միայն թե դրանցից բխած արդյունքներն ամեն մի վտակի համար, այսպես ասած, «սուբյեկտիվացվում են», և թեև սկսում են գործել ինքնուրույնաբար, սակայն մշտապես իրար օգնում ու փոխօժանդակում են: Տիեզերական հիմնական օրենքներից բխած այդ սուբյեկտիվացված երկրորդական արդյունքները

երբեմն գործում են կողք կողքի, երբեմն բախվում կամ հատվում են, բայց երբեք չեն խառնվում իրար: Որոշակի շրջակա պայմանների դեպքում այդ սուբյեկտիվացված երկրորդական արդյունքները երբեմն կարող են տարածվել նաև առանձին կաթիլների վրա:

Մեր՝ ժամանակակից մարդկանց գլխավոր դժբախտությունն այն է, որ մենք (մեր սովորական գոյատևման մեր իսկ կողմից հաստատված բազմաթիվ պայմանների, գլխավորապես՝ աննորմալ, այսպես կոչված, «դաստիարակության» պատճառով), հասնելով մեր պատասխանատու տարիքին և ձեռք բերելով այնպիսի ներկայություն, որը համապատասխանում է միայն կյանքի գետի այն վտակին, որն ի վերջո կորչում է «գեհենում»՝ մտնում ենք դրա մեջ, և դա մեզ քշում է ուր ասես, իսկ մենք, հետևանքների մասին չմտածելով, մնում ենք պասսիվ վիճակում և լողում ու լողում ենք՝ հոսանքին ենթարկվելով:

Քանի դեռ պասսիվ կմնանք, ոչ միայն ստիպված կլինենք անխուսափելիորեն սուկ գործիք ծառայելու Բնության «ինվոյուցիոն և էվոյուցիոն շինարարության» համար, այլև մեր ամբողջ հետագա կյանքում մեզ կվիճակվի ստրկաբար ենթարկվելու կույր իրադրաժությունների ցանկացած քմահաճույքին:

Քանի որ ներկա ունկնդիրների մեծամասնությունն արդեն, ինչպես ասում են, «անցել է» իր պատասխանատու տարիքին և անկեղծորեն գիտակցում է, որ մինչև այժմ դեռ ձեռք չի բերել իր սեփական «ես»-ը, և միաժամանակ, ելնելով այստեղ ամբողջ ասվածի էությունից, առանձնապես ոչ մի բարենպաստ հեռանկար չի տեսնում իր համար, ապա որպեսզի դուք (հատկապես դուք, որ գիտակցում եք դա), ինչպես ասում են, շատ ուժեղ «չվիստվեք» և չընկնեք սովորական, այսպես կոչված, «հոռետեսության գիրկը», ինչը շատ տարածված է մարդկանց ժամանակակից աննորմալ կյանքում, ահա ասում եմ լիովին անկեղծ, առանց որևէ հետին մտքի, որ իմ համոզմամբ, որը գոյացել է շնորհիվ իմ երկարամյա հետազոտությունների և ամրապնդվել բազմաթիվ, միանգամայն բացառիկ փորձերի արդյունքներով, որոնց հիման վրա էլ ես ստեղծեցի Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտը, նույնիսկ ձեզ համար դեռ չափազանց ուշ չէ:

Բանն այն է, որ հիշյալ հետազոտություններն ու փորձերը շատ հստակ ու որոշակիորեն ինձ ցույց տվեցին, որ Մայր Բնության հոգածությամբ՝ էակների համար հնարավորություն է կանխատեսված, որ նույնիսկ պատասխանատու տարիքին հասնելուց հետո կարողանան ձեռք բերել իրենց էության միջուկը՝ սեփական «ես»-ը:

Արդար Մայր Բնության շրջահայացությունը տվյալ դեպքում արտահայտվել է նրանով, որ մեզ հնարավորություն է տրվում որոշակի ներքին ու արտաքին պայմանների բավարարման դեպքում մի վտակից անցում կատարելու մյուսին:

Հինավուրց ժամանակներից մեզ հասած «մարդու առաջին ազատագրություն» արտահայտությունը հենց այդ հնարավորությանն է վերաբերում՝ գեհենում անհետացող վտակից անցնելու այն վտակին, որը գնում և հասնում է անսահման օվկիանոսի անընդգրելի տարածությանը:

Մի վտակից մյուսին անցնելն այնքան էլ հեշտ գործ չէ՝ ուզեցինք և անցանք: Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է ինքդ քո մեջ նախադրյալների գիտակցական բյուրեղացում իրականացնել, որպեսզի սեփական ընդհանուր ներկայության մեջ այդպիսի անցում կատարելու մշտական ու անմար ցանկության ազդակ ծնվի, և դրանից հետո ի կատար ածել երկարատև համապատասխան նախապատրաստություն:

Այդ անցումը կատարելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հրաժարվել այն ամենից, ինչը կյանքի այդ վտակում ձեզ «բարիք» է թվում, բայց իրականում ինքնաբերական, ստրկորեն ձեռք բերված սովորություններ են: Այլ կերպ ասած, պետք է մեռնել այն ամենի համար, ինչը ձեզ համար սովորական կյանք է դարձել:

Հատկապես այդ մահվան մասին է խոսվում բոլոր կրոններում: Հենց դա է նկատի առնված հետափոր անցյալից մեզ հասած խոսքում, որն ասում է. «Եթե չմեռնես, հարություն չես առնի»:

Մահը, որի մասին խոսվում է այստեղ, մարմնական մահը չէ, քանի որ այդպիսի մահվան դեպքում այլևս հարության կարիք չկա:

Քանզի եթե հոգի գոյություն ունի և, դեռ ավելին՝ հոգին անմահ է, ապա այն կարող է յուր զնալ նաև առանց մարմնի հարության:

Հարության անհրաժեշտությունը չկա նաև նրա համար, որ կանգնենք Տեր Աստծո Ահեղ Դատաստանի առաջ, ինչպես մեզ սովորեցնում են Եկեղեցու հայրերը:

Ո՛չ: Նույնիսկ Հիսուս Քրիստոսը և Վերսից ուղարկված բոլոր մյուս մարգարեները խոսել են այնպիսի մահվան մասին, որը կարող է տեղի ունենալ կյանքի ընթացքում. այսինքն՝ այն «բռնակալի» մահվան մասին, որը մեզ ստրկացնում է մեր կյանքի ընթացքում. միայն դրանից ազատագրվելն էլ հենց մարդու առաջին գլխավոր ազատագրությունն է:

Ամփոփելով ամբողջ ասվածը (մտքերը, որոնք լսեցիք այս դասախոսության ընթացքում և այն ինչ ավելացրի այսօր ժամանակակից մարդկանց երկու տեսակների մասին, որոնք ներքին բովանդակության առումով իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեն, և ասածս այն ողբալի փաստը, որը որոշ չափով լուսաբանվեց իմ հավելյալ բացատրությամբ՝ առ այն, որ վերջին ժամանակներում մարդկանց ընդհանուր ներկայություններում, մեր իսկ կողմից հաստատված սովորական կյանքի պայմանների էլ ավելի վատացման և հատկապես մատաղ սերնդի դաստիարակության ոչ ճիշտ համակարգի պատճառով, կունդաբուֆեր օրգանի հատկությունների շատ հետևանքներ սկսել են ավելի եռանդուն դրսևորվել)՝ ես անհրաժեշտ եմ համարում ասել և ընդգծել ևս մեկ անգամ, որ առանց բացառության բոլոր թյուրիմացությունները, որոնք ծագում են մեր համատեղ կյանքի գործընթացում, հատկապես՝ փոխհարաբերությունների առումով, ինչպես նաև բոլոր տարաձայնությունները, վեճերը, հաշիվ մաքրելը և հապճեպ որոշումներ կայացնելը, որոնցից հետո մեր ներսում ծագում «խղճի խայթի» է երկարատև գործընթաց, դրանց գումարած նույնիսկ այնպիսի խոշոր իրադարձությունները, ինչպիսիք են պատերազմները քաղաքացիական պատերազմներն ու դրանց նման ընդհանուր բնույթի դժբախտությունները, տեղի են ունենում սոսկ երբևէ իրենք իրենց վրա չաշխատած սովորական մարդկանց ներկայություններում առկա այն հատկության պատճառով, որն այս անգամ ևս ես կկոչեի *«գիտակցության մեջ իրականության գլխիվայր շրջված արտացոլանք»*:

Յուրաքանչյուր մարդ, ով թեկուզ մի փոքր լուրջ մտածելու կարողություն ունի, այսպես ասած, «չնույնանալով» իր կրքերի հետ և ուշադրություն դարձնելով հենց միայն մեր կյանքի ընթացքում հաճախ կրկնվող այն փաստի վրա, որ մեր բոլոր ապրումներն իրենց սկզբնական շրջանում մեզ անասելի սարսափներ են թվում, ապա չնչին ժամանակ անցնելուց հետո, երբ դրանք արդեն փոխվել են ու հանկարծակի նորից են հիշվում, իսկ մենք, ըստ մեր տրամաբանական դատողության, արդեն ուրիշ տրամադրություն ունենք, կհամաձայնի, որ դրանք, ինչպես ասում են, «գրոշ չարժեն»:

Սովորական մարդու մտածողությունն ու զգացողությունները հաճախ հանգեցնում են այնպիսի վիճակի, երբ, ինչպես ասում են, «լուսն ուղտ է դառնում, իսկ ուղտը՝ լուսն»:

Նշված մարդկանց ընդհանուր ներկայություններում այդ կործանարար հատկությունը եռանդուն կերպով ի հայտ է գալիս այնպիսի իրադարձությունների ժամանակ, ինչպիսիք են պատերազմները, հեղափոխությունները, քաղաքացիական պատերազմները և այլն:

Հենց այդպիսի իրադարձությունների ժամանակ է առավել ցայտուն կերպով դրսևորվում նույնիսկ նրանց կողմից փաստված այն վիճակը, որի ազդեցությամբ նրանք բոլորը (աննշան բացառություններով) հայտնվում են իրենց ասած «զանգվածային հոգեզարության» մեջ:

Այդ վիճակի էությունն այն է, որ սովորական մարդիկ իրենց թույլ մտածողության մեջ (որն էլ ավելի է թուլանում նման իրադարձությունների ժամանակ) ցնցումներ են ստանում այս կամ այն խելագարի մասին հանցավոր պատմություններից, և, բառիս բուն իմաստով դառնալով այդ չարանենգ պատմությունների գոհերը, իրենց պահում են կատարելապես մեքենայական ձևով:

Այն ընթացքում, երբ նրանք հայտնվում են այդպիսի աղետի ազդեցության տակ (ինչն արդեն դարձել սովորական մարդկանց անբաժանելի հատկությունը), նրանց ընդհանուր ներկայություններում իսպառ դադարում է գործել այն սուրբ «ինչ-որ բանը», որը «խիղճ» է կոչվում, և որը Մեծ Բնությունը նրանց պարզնել է այնպիսի նախադրյալներ ձեռք բերելու հնարավորության համար, որ նրանք տարբերվեն հասարակ կենդանիներից և դառնան աստվածանման էակներ:

Գիտակ մարդիկ անկեղծ ցավ են զգում ժամանակակից մարդկանց այդ հատկության համար, քանզի համաձայն պատմական և անցյալ դարաշրջաններում ապրած ճշմարիտ շատ գիտնականների փորձառարական տվյալների՝ Մեծ Բնությունն Իր հավասարակշռության համար վաղուց արդեն զանգվածային հոգեզարության պես երևույթի կարիք չի զգում: Ավելի շուտ, ընդհակառակն է՝ մարդկանց մոտ պարբերաբար երևացող այդ հատկությունը Նրան ստիպում է կրկին ու կրկին հարմարվելու միջոցներ փնտրել, ինչպես օրինակ՝ մեծացնել ծնելիությունը, փոխել, այսպես կոչված, «ընդհանրական հոգեկառույցի դիմը» և այլն, և այլն:

Այսքանը շարադրելուց հետո ես անհրաժեշտ եմ համարում ասել և նույնիսկ կրկին ընդգծել, որ ժամանակակից մարդկանց հասած և ինձ նույնպես հայտնի դարձած պատմական տվյալներն այն մասին, ինչ անցյալ ժամանակներում մարդկանց կյանքում իրապես է տեղի ունեցել (այլ ոչ թե հորինվել է ժամանակակից, այսպես կոչված, գիտուն էակաների, հատկապես գերմանացիների կողմից, որոնցով Երկիր մոլորակում ամենուրեք լցնում են մատաղ սերնդի գլուխները), պարզորոշ ցույց են տալիս, որ անցած դարաշրջաններում մարդիկ բաժանված չէին կյանքի երկու վտակների, այլ բոլորը հոսում էին միևնույն գետում:

Մարդկության ընդհանրական կյանքը երկու վտակի է բաժանվել սկսած, այսպես կոչված, «թիքշյամիշյան քաղաքակրթության» ժամանակներից, որը գոյություն է ունեցել անմիջապես բաբելոնյան քաղաքակրթությունից առաջ:

Հենց այդ ժամանակներից է սկսել աստիճանաբար հաստատվել և ի վերջո վերջնականապես ամրապնդվել է մարդկության կյանքի այն կառուցվածքը, որը, ինչպես կարող է փաստել ցանկացած առողջ մտածող մարդ, ներկայումս քիչ թե շատ տանելի կերպով կարող է ընթանալ միայն այն պայմանով, որ մարդիկ բաժանված լինեն տերերի ու ստրուկների:

Թեև ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՐ գավակների համար, ինչպիսին մենք ենք, վայել բան չէ համատեղ գոյատևման ընթացքում տեր կամ ստրուկ լինելը, սակայն ներկայումս գոյություն ունեցող այն պայմանների բերումով, որոնք արդեն ամուրի նստած են մարդկանց համատեղ կյանքի գործընթացում, և որոնց աղբյուրը հեռավոր անցյալում է գտնվում, մենք պետք է հաշտվենք դրա հետ և համաձայնենք այնպիսի փոխզիջման, որը, համաձայն անաչառ դատողության, պետք է համաձայնեցվի մեր անձնական բարօրության հետ և միաժամանակ չհակասի այն պատվիրաններին, որոնք *«Համայն Գոյի Սկզբնաղբյուրից»* հատուկ ուղարկվում են մեզ՝ մարդ կոչվողներին:

Կարծում եմ՝ այդպիսի փոխզիջման գնալը հնարավոր է, եթե որոշ մարդիկ իրենց գոյատևման գլխավոր նպատակը դարձնեն իրենց ներկայություններում բոլոր այն նախադրյալները ձեռք բերելը, որոնք թույլ են տալիս տերեր դառնալ իրենց նմանների միջավայրում:

Ելնելով դրանից և գործելով հնուց եկած այն իմաստուն խոսքին համաձայն, որը պնդում է, թե «իսկապես արդարամիտ և մարդասեր լինելու համար նախ և առաջ պետք է լինել կատարյալ եսասեր», ինչպես նաև օգտվելով Մեծ Բնության կողմից մեզ տրված առողջ դատողությունից՝ մեզինքն ամեն ոք պետք է իր գլխավոր նպատակը դարձնի այն, որ համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերի տիրոջ կարգավիճակ:

Բայց «տեր» բառը պետք է հասկանալ ոչ այն իմաստով, ինչպես դա հասկանում են ժամանակակից մարդիկ. տերը նա չէ, ով շատ ստրուկներ ու շատ փող ունի, ինչը մեծ մասամբ ժառանգություն են ստանում, այլ նա, ով, շնորհիվ շրջապատում եղած մարդկանց նկատմամբ ունեցած իր օբյեկտիվ իմաստով բարեպաշտ արարքների, որոնք նա գործում է միայն իր *մաքուր բանականության* դրդմամբ, այսինքն՝ առանց այնպիսի ազդակների մասնակցության, որոնք ինչպես իր, այնպես էլ մյուս մարդկանց ներկայություններում ծնվում են հիշյալ կունդաբուֆեր կոչված կործանարար օրգանի հատկությունների հետևանքներից, և դրա արդյունքում ձեռք է բերում մի բան, որն ինքնին նրա շրջապատում եղած բոլոր մարդկանց ստիպում է խոնարհվել նրա առաջ և կատարել նրա հրամանները:

Այժմ ես իմ շարադրանքների առաջին մասը համարում եմ ավարտված և կարծում եմ, որ այս տեսքով այն նույնիսկ ինձ է բավարարում:

Ամեն դեպքում խոսք եմ տալիս, որ, վաղվանից սկսած, այս առաջին մասին անգամ հինգ րոպե չեմ հատկացնի իմ ժամանակից:

Իսկ հիմա՝ նախքան իմ գրվածքների երկրորդ մասին անցնելս, որպեսզի դրան տամ իմ պատկերացրած հանրամատչելի տեսքը, ես պատրաստվում եմ մի ամբողջ ամիս հանգստանալ, բոլորովին ոչինչ չգրել, և մինչև վերջ հոգնատանջ եղած իմ օրգանիզմին դան-դա-դո-րեն խթանել դեռևս մնացած տասնհինգ շիշ այն *«գերհիասքանչ նեկտարով»*, որը ներկայումս Երկիր մոլորակում «հին կավադոս» է կոչվում:

Իմիջայլոց, այդ հին կավադոսը (քսանյոթ շիշ, որոնք ծածկված էին կրի, ավազի ու ծղոտի խառնուրդով) ես մի քանի տարի առաջ պատահաբար գտա, երբ ինձ վիճակվեց մուտք գործել իմ ներկայիս գլխավոր բնակության վայրի նկուղներից մեկում հոր էի փորում՝ ձմռանը գազար պահելու համար:

Աստվածային հեղուկով լի այդ շշերն ամենայն հավանականությամբ այդտեղ թաղել էին մոտերքում ապրող և աշխարհիկ հրապուրանքներից հեռու մնացող վանականները, որպեսզի փրկեն իրենց հոգիները:

Չգիտեմ ինչու հիմա ինձ թվում է, թե նրանք այդ շշերը հորել էին ոչ առանց հետին մտքի, և որ շնորհիվ նրանց, այսպես կոչված, «ներգգայական խորաթափանցության» (պետք է ենթադրել, որ նրանց այդ առանձնահատկության նախադրյաները նրանց ներսում գոյացել էին աստվածավախ կյանքի շնորհիվ) նրանք կանխատեսել էին, որ իրենց հորած աստվածային հեղուկի այդ շշերն այնպիսի մեկի ձեռքը կընկնեն, ով ունակ է գնահատելու նման բաները. և հիմա իսկապես այդ հեղուկն այս ձեռքերի տիրոջը խթանում է արժանավայել կերպով պահպանելու այն իդեալները, որոնց վրա խարխսված էր այդ վանականների համագործակցությունը, և նպաստելու, որպեսզի այդ իդեալների իմաստը լավագույնս փոխանցվի հաջորդ սերնդին:

Բոլոր տեսակետներից լիովին վաստակած այդ հանգստիս ընթացքում ես ուզում եմ խմել այդ հրաշալի հեղուկից, միայն որի շնորհիվ վերջին տարիներին ես կարողացա համբերությամբ տանել իմ կողքին գտնվող և ինձ նմանվող անասունների գոյությունը և նրանցից լսել նոր խնդուկներ, նորերի չեղած դեպքում՝ նաև հները, եթե, իհարկե, պատմողը հմուտ էր լինում:

Այժմ կեսօրվա ժամ է, և քանի որ ինքս ինձ խոսք տվեցի այս առաջին մասի համար ոչինչ այլևս չգրել վաղվանից սկսած, ապա դեռևս ժամանակ ունեմ և մաքուր խղճով իմ այդ խոսքը խախտած չեմ լինի, եթե ավելացնեմ, որ մեկ թե երկու տարի առաջ ես վերջանականապես որոշել էի հանրամատչելի դարձնել իմ հրատարակած գրվածքների միայն առաջին մասը. իսկ ինչ վերաբերում է երկրորդ և երրորդ մասերին, ապա դրանք հանրամատչելի չդարձնել, այլ միայն կազմակերպել դրանց բաշխումը, որպեսզի, իմիջայլոց, դրանց միջոցով իրականացնեմ էաբուխ երդումով իմ առջև դրված հիմնական խնդիրներից մեկը. այդ խնդիրն այն է, որ վերջիվերջո բոլոր իմ ժամանակակիցներին անպայման ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում ապացուցեմ նրանց բնորոշ պատկերացումներում առկա այն գաղափարի անհեթեթությունը, թե իբր գոյություն ունի «այն աշխարհը»՝ իր նշանավոր ու հիասքանչ «դրախտով» և այդքան զգվելի «դժոխքով» հանդերձ. և միաժամանակ տեսականորեն ապացուցեմ (հետագայում անպայման գործնականում ցույց տալու պայմանով, և որ նույնիսկ ժամանակակից դաստիարակության ամեն մի «անդառնալի գոհ» առանց ցնցում ապրելու հասկանա և իմանա), որ դժոխքն ու դրախտն իրապես գոյություն ունեն, բայց ոչ այնտեղ՝ «այնկողմնային աշխարհում», այլ հենց այստեղ՝ մեր կողքին, Երկիր մոլորակում:

Այն բանից հետո, երբ կհրատարակվեն առաջին մասի բոլոր գրքերը, ես մտադիր եմ երկրորդ մասի բովանդակության տարածման նպատակով մի շարք մեծ կենտրոններում միաժամանակ կազմակերպել բոլորին մատչելի հրապարակային դասախոսություններ:

Իսկ ինչ վերաբերում է անվիճելիորեն հասանելի ու անեղծ այն օբյեկտիվ ճշմարտություններին, որոնք ես կլուսաբանեմ երրորդ մասում, ապա ես մտադիր եմ դրանք մատչելի դարձնել բացառապես միայն հատուկ պատրաստություն անցած մարդկանց համար, որոնք իմ կազմած ցուցումներով կընտրվեն գրվածքներիս երկրորդ մասի ունկնդիրների թվից:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

